

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

II



Նվիրվում է

**Վանցյանների գերդաստանի
արժանավոր ներկայացուցիչներ,**

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ՝

Գրիգոր Պարույրի Վանցյանի

**(ծնվ. 25.12.1922թ., գ. Բեժանո,
մասնագիտությամբ՝ մեխանիկ)**

և

Լորենց Պարույրի Վանցյանի

**(ծնվ. 28.04.1924թ., գ. Բեժանո,
մասնագիտությամբ՝ պանրագործ,**

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր,

**ԽՍՀՄ Ժողովրդական ցուցահանդեսի
ոսկե և արծաթե բազմակի մեդալակիր)**

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻՆ

Посвящается

ЮБИЛЕЯМ

Достойных представителей семьи Ванцянов,

Участников Великой отечественной войны

Григора Паруйровича Ванцяна

(родился 25.12.1922г., с.Бежано, механик по профессии)

и

Лоренца Паруйровича Ванцяна

(родился 28.04.1924г., с. Бежано, сыродел по профессии,

**орденоносец Трудового Красного Знамени СССР,
золотой и серебрянный многократный медалист**

Выставки достижений народного хозяйства СССР)

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ**

ФОНД “ПОДДЕРЖКА ДЖАВАХКУ”

**ЛИТЕРАТУРНЫЙ ФОНД
“БРАТЬЯ АРМЕН И ТАТУЛ ГАРСЛЯНЫ”**

ГРИГОР ВАНЦЯН

**СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
В ДВУХ ТОМАХ**

**II
ТОМ**



ЕРЕВАН 2016

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

«ՁԱՎԱԽՔԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**«ԱՐՄԵՆ ԵՎ ԹԱԹՈՒԼ ՂԱՐՍԼՅԱՆ ԵՂԱՅՐՆԵՐ»
ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅՅԱՆ

**ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ**

II

ՀԱՏՈՐ



ԵՐԵՎԱՆ 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Սեյրան Վանցյան

Վահագն Սարգսյան
Բանասիրական գիտությունների թեկնածու

Վահե Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Ашот Мелконян
Академик НАН РА

Сейран Ванцян

Ваагн Саркисян
Кандидат филологических наук

Ваге Саркисян
Кандидат исторических наук

Գիրքը հրատարակվում է
«Արմեն և Թաթուլ Ղարսլյան եղբայրներ»
գրական հիմնադրամի
(բարերար՝ Արմեն Ղարսլյան)
և
«Ջալալիքին աջակցություն» հիմնադրամի
(բարերար՝ Սերգեյ Վանցյան)
նյութական միջոցներով

Книга издается финансовыми средствами
Литературного фонда
“Братья Армен и Татул Гарсляны”
(благодетель Армен Гарслян)
и
Фонда “Поддержка Джавахку”
(благодетель Сергей Ванцян)

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Վ 228

**Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

**Книга издается по рекомендации научного совета
Института истории НАН РА**

**Ժողովածուն կազմել և հրատարակության է պատրաստել
Վահե Սարգսյանը**

**Сборник составил и подготовил к изданию
Ваге Саркисян**

Վանցյան Գրիգոր

Վ 228 Երկերի ժողովածու երկու հատորով: Հատոր II/ Գրիգոր Վանցյան:
Վազմ. Վ. Սարգսյան.- Եր.: «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան»
հրատ.), 2016, 568 էջ:

Григор Ванцян: Собрание сочинений в двух томах, том II:
/Составитель: В.Саркисян Ер.: ЗАО “Гракан айренник” (изд.
“Айастан”), 2016, 568 стр:

Հատորում ամփոփված են անվանի լեզվաբան, հայագետ **Գրիգոր Վանցյանի (1870-1908 թթ.)** «Պատմական քերականություն արեւելահայ լեզուի» (1906), «Դպրոցական քերականություն» (1906), «Գրպանի ուղղագրություն» (1914), «Հայոց պատմություն» (պատկերազարդ) (1908), «Հայ-լեզու պատկերազարդ այբբենարան» (1907) գրքերը: Հեղինակի գործերի առաջին համահավաք ժողովածուն է: Նախատեսված է պատմաբան-ազգագրագետների, լեզվաբանների, ինչպես նաև ընթերցասեր լայն շրջանների համար:

В томе обобщены следующие книги известного лингвиста, армяноведа **Григора Ванцяна (1870-1908):** “Историческая грамматика восточно-армянского языка” (1906), “Школьная грамматика” (1906), “Карманное правописание” (1914), “История Армении” (иллюстрированная) (1908), “Армянский язык” (иллюстрированный букварь) (1907). Первое целостное собрание трудов автора предназначено для историков-этнографов, лингвистов, а также широких кругов любителей чтения.

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-540-02371-9

© «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ,
«Արմեն և Թաթուլ Վարսյան եղբայրներ» գրական հիմնադրամ, 2016
© Фонд “Поддержка Джавахку”, литературный фонд
“Братья Армен и Татул Гарсляны” 2016
© Վահե Սարգսյան, կազմ., Ваге Саркисян, составитель, 2016

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԼԵԶՈՒԻ

Աւետարանից ԳԲ. ՎԱՆՅԵԱՆ

Nichts zeigt deutlicher, dass ein Volk in eine schöpferische Periode eintritt und etwas Ursprüngliches zu leisten vermag, als der Umstand, dass es seine Sprache reformirt.

Ոչ մի բան այնպէս որոշ չի ցոյց տալիս, թէ մի ժողովուրդ ստեղծագործման շրջանն է մտնում և մի հիմնական բան պիտի ստեղծագործի, քան այն, որ նա սկսում է իր լեզուն մշակել:

Björson Björnsterne

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպ. Մ. Վարդանյանի Գան. փ. № 3 || Тип. М. Варданянъ Там. ул. № 3

1906

Дозволено цензурою. Тифлисъ 10-го Апрѣля 1906 г.

ԱՌԱՋ ԱՅԵՆԻ ՏԵՂ

Նախ քան ընդարձակ քերականութիւն հրատարակելը, մենք կարեւոր համարեցինք հասարակութեան առաջ պարզել մի քանի խոշոր սկզբունքային հարցեր. թէ ի՞նչ է լեզուն, ի՞նչն է լաւը կամ վատը, ուղիղը կամ սխալը, դուրեկանն ու անդուրեկանը լեզուի մէջ. դրա համար համեմատութեան առանք գրաբարը, արեւելեան և արեւմտեան աշխարհաբարները, շօշափեցինք այս կամ այն բարբառի նշանակութիւնը, պարզելու համար սկզբունքային այս կամ այն հարցը և այդ ամենը, կարելոյն չափ պարզ ու մատչելի ձևով, որպէս զի սա կարդացուի գրասէր հասարակութեան լայն խաւերում: Այդ իսկ պատճառով շատ տեղեր մենք անցել ենք համառօտ ու կարճ, շատ ա՛լ տեղեր երկար ու ընդարձակ, որ պիտի յինէր հակառակը, եթէ սա գրուած լինէր նեղ-մասնագէտների համար, որոնց մենք կը խնդրէինք այս գործը դիտել իբրև ժամանակաւոր սուղաբան ապագայ ընդարձակ քերականութեան: Մեր փոքրիկ ու միանգամայն հակիրճ «Համառօտ դպրոցական քերականութիւնն» արդէն լոյս տեսաւ սրա հետ, յատկապէս ծխական դպրոցների համար:

Առանց պ. Մամիկոն Գէորգեանի ինքնաբոլիս աջակցութեան և հրաւերին այսպիսի ծանր ժամանակներում ես անկարող էի այս գործն հրատարակելու: Շնորհակալութիւն իմ բարեկամին, որ առիթ և յանձնառու եղաւ գրքիս տըպագրութեան:

Ժամանակները շատ ծանր և աննպաստ են մի այս-

պիսի գործ կանոնաւոր հրատարակելու համար, և ես նախօրօք ներումն պիտի խնդրեմ գրքիս տպագրութեան թերութիւնների համար, որոնք առաջացան անկախ իմ ձեռք առած միջոցներից, որ պատուական տպարանափէրը վերագրում է յեղափոխութեան լայնածաւալ յորձանքներին:

Այս գրքի մի քանի գլուխները լոյս են տեսել «Մուրճ»-ում 1896—1890 թ., «Հանդէս Ամսօրեայ» 1897—1901 թ., «Zeitschrift für Armenische Philologie» և այլուր:

ԳԼ. I

ՄԱՐԳԱՆՅԻՆ ԼՅՁՈՒՄ ԾԱԴՈՒՄԸ.

Երբ մարդ փորում է աղբիւրի աղը, գտնելու համար այն ջրամբարը, որից բղխում է նա, շատ անգամ ոչինչ չի գտնում և աղբիւրի պարզ ու գեղեցիկ ընթացքը դրանից շատ անգամ խափանւում, աղբիւրը չքանում է. որովհետեւ ըստ մեծի մասին մի որոշ և հաստատ ջրամբար չէ աղբիւրի հիմքը, այլ հողի շերտերի բազմաթիւ երակներ, որոնց միջից ջուրը կաթիլ-կաթիլ թորալով, ծորում է միասին և դուրս բխում որպէս աղբիւր:—Դրա նման է և լեզուն. փլի-խտփանելի, հոգեբանների և մանաւանդ լեզուաբանների ջանքերը, գտնելու լեզուի ծագման աղը, մնացել են գրեթէ ձեռնուռնայն, որովհետեւ որքան խորն է մտնում մարդ լեզուի ծագման էութեան մէջ, այնքան լեզուն դադարում է լեզու լինելուց. մնում են միայն որոշ հետքեր, աղբիւրի թորակների նման, որոնք էական դեր կատարելով հանդերձ լեզուի ծագման և զարգացման մէջ, դեռ լեզու չեն այն մտքով, ինչ մտքով մենք ենք հասկանում այդ: Դա բղխում է բուն լեզուի էութիւնից. դա մի կայուն և հաստատուն էութիւն չէ քանի որ կենդանի է, այլ յարաշարժ. միշտ im werden begriffen, միշտ հոսանուտ:

Մեզ համար, որ ծնունել ու մեծացել ենք բանաւոր և խօսուէն արարածների մէջ՝ լեզուն մի շատ առօրեայ և հասարակ բան է երևում:—Իրօք դա մի սքանչելիք, մի հրաշք է, որի նմանը քիչ կարելի է հանդիպել երկրիս երեսին:—Շատ անգամ մարդ ինքն իրան, իր մէջ կատարուած յոյգերն ու մտքերը չի կարողանում հասկանալ ու բացատրել, այն ինչ, լեզուի միջոցով մենք հասկանում ենք ուրիշի հոգին, կարողում ենք այլոց մտքերը, խօսում ենք հին յոյների և եգիպտացիների, հեռաւորների և մօտաւորների հետ: Նայեցէք մեզ շրջապատող կենդանիներին ու անասուններին, որոնք ոչինչ չունին մտաւոր հաղորդակցութեան համար. փորձեցէք խօսել և պատասխան ստանալ հաւից, կովից, կատուից ու շանից և այն ժամանակ միայն կիմանաք, որ լեզուն է մեզ մարդ շինողը: Այդ լեզուն կազմելու համար հարկաւոր էին երկու էական վայրկեաններ. առաջին, որ մարդը կարենար մի որ և է միտք կապել ձայների հետ:—Նրեխան, քանի որ կրկնչում և բացականչում է աո՛ւ, աո՛ւ, ո՛չ մի միտք չի կապում այդ ձայների հետ. երկրորդ՝ որ գիմացի արարածը հասկանար այդ ձայների կամ հնչիւնների միտքը.—Այս վերջինը հեշտ հասկանալի է, երբ մենք ի նկատի ունենանք մի որ և է օտար, մեզ անհասկանալի լեզու: Մենք արդէն խօսում ենք, գիտենք մի կամ մի քանի լեզու, գիտենք ձայներից բխող միտքն ըմբռնել, բայց մի օտարականի, մի գերմանացու, ռուսի և կամ ֆրանսիացու լեզուն դեռ չենք հասկանում. դրա համար մենք պէտք է գործադրենք անագին ժամանակ ու ջանք՝ մինչև հասկանալ կարենանք օտար լեզուն, մինչև որ հնչիւնների մէջ կարդանք

այն միտքը, որ յայտնել ուզեց օտարականը:— Ի՞նչպէս հապա նախնական մարդը, որ դեռ ինքը լեզու չունէր և դեռ ուրիշի լեզուի մասին գաղափար չունէր՝ կարողացաւ և՛ խօսել և՛ հասկանալ և՛ հասկանալի եղաւ: Ի՞նչպէս հնչիւնը դառաւ միտք և հասկացուեցաւ: Այս է ահա ամենամեծ հարցը լեզուի ծագման խնդրում...

Ենթադրել, թէ մարդիկ հնարեցին լեզուն միմեանց հետ հաղորդակցելու համար, ուրեմն մի դիտաւորեալ նպատակ դնել նրա ծագման մէջ, անկարելի է, որովհետեւ լեզուի գոյութիւնից առաջ անասուն մարդը երբէք գաղափար անգամ չէր կարող ունենալ մի չեղած էութեան և նրա հրաշալի յատկութիւնների մասին: Արդ՝ ի՞նչ կերպ, ի՞նչ հանգամանքներում առաջացաւ հասկանալու հնարաւորութիւնը, որից անշուշտ աստիճանաբար առաջ եկաւ և զարգացաւ մեր ներկայի լեզուն:

Այդ երևոյթը բացատրելու համար մենք պիտի դիմենք կենդանական աշխարհին, որը, ինչքան էլ հեռու լինի կանգնած մարդուց, առանց մի կապող միջին օղակի, այնուամենայնիւ միակ տարրն է, որ մեզ մի աղօտ պատկեր պիտի տայ մարդկային լեզուի անցած ճամբու մասին: Միմեանց հասկանալու ընդունակութիւնը բացառիկ և միայն մարդու յատկանիշը չէ:—

Երբ վարուժանը մրցակիցներին կռուից յաղթանակով դուրս եկած մոնչում է և կամ գոռում, էլլը հասկանում է նրա մոռնչը — գոռոցը, որ թռչունների մօտ հասել է բարձր զարգացման և դառել է մի գեղունի ու դայլայիկ երգ. — Երբ արածող հօ-

տը կամ որսի զնացած կապիկներին վոհմակը պահապան դրած փորձառու աւագի ձայնն է լսում, զգուշացման ձայնը, ամբողջ հօտը միանուագ հասկանում է այդ նշանը և մի վայրկեանում կամ փախուստ է տալիս և կամ կռուի դուրս գալիս: Երբ ուրուրը բարձր երկնքից ցած է թռչում հաւի ճուտերին կլանելու, մայրը լալահառաչ կրկյում է և ճուտերը հասկանում են մօր ձայնը և փախուստ տալիս ազատուելու համար: Երբ նոյն մայրը, աւելի խաղաղ ու հանգիստ ձայնով մի համեղ պատառ է գտնում ճուտերին բաժանելու, նրանք ամենքը կրկին հասկանում են մօր ձայնը և զնում են այդ անուշ պատառը վայելելու, և ոչ միայն հասկանում են, այլև զանազանում են վտանգի ձայնը կերակրի կանչած ձայնից, հասկանում են աքլորի ձայնը և զանազանում են մօր ձայնից:—Այդ՝ ամենն իր էութեամբ մի-մի միտքէ, որ հասկացում է և արտայայտում է ձայների միջոցով. այդ է կենդանիների լեզուն, որ առաջ է գալիս հոգեկան խոշոր յուզումների ժամանակ. նոյնն է և մարդկային լեզուի հիմքը: Նրա ծագման շարժառիթը մարդանման արարածի հոգեկան յոյզերն էին: Դեռ մինչև այսօր պահուած են նախնական լեզուի այդ նշանները, որոնք ընդհանուր—համամարդկային են. ախ, ժի, հա և քերականութեան մէջ կոչւում են միջարկներ (междометіе): Նախամարդը ապրում էր խմբովին. գտնելով մեր հեռաւոր ազգական կապիկներից և կիսավայրենի մարդկանցից, նա վերին աստիճանի շարժուն, դիւրաբորբոք և ապաւորուն մի արարած էր: Արտաքին երևոյթները, մանաւանդ վտանգն ու վախը, խանդն

ու սէրը, զաւակն ու ծնողը, վիշտն ու դառնութիւնըն արդէն կազմել էին նրա մէջ մի շարք արտայայտութիւններ, որ միատեսակ հասկանալի էր ամենին. դրանք կազմակերպուած բառեր ու նախադասութիւններ չէին, այլ կենդանիների մէջ սովորական ձայներից մի աստիճան բարձր և հասկանալի բացականչութիւններ:

Ահա նախամարդը վայրենի սիրով գուրգուրում և իազում է իր զաւակի հետ, զաւակն էլ իր կողմից բացականչում է ա, ա, աւ, մա, մա, մա, և տհա կազմուեցաւ առաջին բառը, որ մայրը վերագրում է իրան: Անուհետև, ժամանակի ընթացքում, այդ բառը դառնում է արտայայտիչ ամենամօտիկ և ամենասիրելի առարկայի համար, որ մայրն է... Մօտակայ դիւրին հնչիւնը, որ արտայայտել է կարենում մանուկը է. *պա-պա-պա*, առանց կապելու այդ հնչիւնների հետ մի մտապատկեր, որ շրջապատող երկրորդ ամենամօտ արարածը—հայրը, վերագրում է իրան: Մանուկը, որ ստեղծողն էր այդ բառերի, ապագայում հասունանալով, իր աւանդածը սովորում է արդէն հօրից ու մօրից, որպէս երկու յայտնի առարկաների անուն: Մա առաջին մօմենտն էր միմեանց հասկանալու. դրանք դեռ բառեր ու նախադասութիւններ չեն, այլ հասկանալի բացականչեր, որ կազմակերպւում է ընտանեկան նեղ շրջանում: Դեռ այսօր, անխօս մանուկներն իրանց որոշ *պիտոյներն* յայտնում և *կարկացնում* են ծնողներին որոշ նպատակի եւ գաղափարի հետ կապւած *ձայներով*, առանց բառերի:

Երկրորդ մօմենտը կարելի է ներկայացնել հետեւեալ կերպով. նախամարդկանց խումբը գնացել է

որսի և բռնել է մի շուն. մի քանիսը առաջ ընկած ուրախ ետ են դառնում և, օրինակի համար, սկսում են հաչել շան նման վա՛հ, վա՛հ. հեռուից էլ երևում են միւսները, որ ուսին դրած շունն են բերում. բացակայ եղողներն հասկանում են, որ մի որս է գալիս— մի վա՛հ, վա՛հ— Հետևեալ օրը մի նոր խումբ է գնում, կէսը նախորդ որսորդներից, կէսն էլ բացականերից և յանկարծ պատահում են մի այլ շան: Շան պատկերը բացակաների մէջ իսկոյն ծնեցնում է «վահ-վահ» դադափարը և նրանք վազում են որսալու: Երեկուայ որսորդը, որ վահ-վահ էր ասել առանց մի դիտաւորեալ նպատակի, իսկոյն հասկանում է ընկերոջ միտքը և գնում են շունը որսալու. տուն են գալիս և ձեռներով, շարժումներով դարձեալ «վահ-վահ» են ասում. և որովհետեւ առանց որսի են եկել, որսից բացակայ եղողներն հասկանում են ընկերների միտքը. «վահ-վահ»-ի են հանդիպել, առանց որսալ կարենալու»:

Տանը մնացածներից մի քանիսը, առաւել խելօքներն ու փորձառուները անդրադառնում են,— գլխի են ընկնում.— յիշում են երեկուայ—«վահ-վահ»-ը որ բացակայէր և եկաւ, այնինչ այսօր նա չկայ: Երեկուայ ուրախ տրամադրութիւնը և կուշտ որսը այսօրուայ տխրութեան և սովի հետ, նրանց ուղեղի մէջ առաջ են բերում թերեւ չկայի—գտադափարը, որ առաւել պնդանում է հետևեալ օրուայ աշոգութեամբ.— Այստեղ էլ, առանց որեւէ դիտաւորեալ նպատակի, առանց կռահելու անգամ կատարւած իրողութեան ահագին նշանակութիւնը, մարդկութեան մի որոշ խմբի մէջ առաջ եկաւ, ինքնա-

բերաբար ծագեց վահ-վահ գաղափարը. առարկայից անկախ և հեռու նա արտայայտուեց և հասկանալի եղաւ: Նու դարձաւ մի վերացական զաղարիւտ, մի բառ:

Վայրենի նախամարդկանց խումբը կրկին վերադառնում է որսից, այս անգամ ոչ աջողակ և ուրախ, այլ տխուր ու ծանր բացականչութիւններով. մի պատահարի զոհ է գնացել նրանց ամենափորձառու անդամը. իրանց բնակութեան այլն հասնելիս՝ մտապատկերների զուգորդութեամբ և դէպքի թարմ ազդեցութեան տակ եկողները որոշ ձայնն տրձակում. ոչ թէ յայտնելու համար մնացեալներին, յայտնելու գաղափարն ու հնարաւորութիւնը նրանց անյայտէր դեռ, այլ հանդիպած սոսկալի տեսարանը յիշելով: Տանը մնացածների վրայ, անշուշտ, դա պէտք է թողնէր որոշ ապաւորութիւն, մանաւանդ խոշորագոյն անդամի բացակայութիւնը: Հետեւեալ օրը դէպքի տեղը գնում է միևնոյն խումբը՝ նոր անդամների հետ և զտնում կորած անդամի մի ոտը, մի ձեռք, կամ գլուխը, որ լափում է մի, ասե՛նք, առիւծ, նոր ու նման բացականչներ, որ երէկ եղել էին պատահաբար, առանց որեւէ կանխանապատկի, այսօր շատ նորեկների կողմից կապում են «առիւծ»-ի հետ, որ կռուի մէջ փախչում է նրանցից և ազատւում... Մի քանի օրից յետոյ, նոյն խմբի անդամներից մինը հեռուից տեսնում է նոյն առիւծին և արդէն բնագոյաբար յիշում է իր արդէն լսած ու կրկնած բացականչը առիւծի մասին, թերեւ նմանեցնելով հէնց նրա ձայնին... Մի քանի սյուլալիսի հանդիպումներ ու կրկնումներ զանազան պարագա-

ներում և հանգամանքներում, բացակայութիւն և ներկայութիւն զանազան անդամները՝ արդէն անորոշ և աննպատակ բացականչութեանը «Առիւծ» նշանակութիւնն են տալիս. պատահաբար բացականչած նմանաձայնութիւնն հետզհետէ զուում, պարզւում և ստանում է մի որոշ և գրեթէ ամենին հասկանալի նշանակութիւն: Խումբն անցնում է ծառոտ, կասկածելի և վտանգաւոր տեղով. մինը լսում է խշշոց և գոռում է «առիւծ»—բոլորը պատրաստւում են փախչելու կամ յարձակուելու և դուրս է գալիս, որ վճանգաւոր քշնամին չէ, այլ մի շուն, «վահ-վահ»—գոռում են մի քանիսը, և ահա գրեթէ հասկանալի եղաւ, որ «տեսածը առիւծ չէ, այլ շուն է»: Երկու դադափարներ, պատահաբար առաջացած, համեմատուեցան և պարզեցին միմեանց, շուն և առիւծ, կամ առիւծ ու շուն...

Այդ ամենի հետ ի նկատի պէտք է ունենանք, որ նախամարդը մի երգող անասուն էր. ուրախութիւնը, էզին զրուելու տենչը, նրան առիթ էին տալիս անորոշ ձայների միջոցով, որոնք սակայն հասկացւում էին մի որոշ թէև ընդհանուր մտքով՝ երգելու...

Ծանր և տխուր դէպքերում նա ընդունակ էր լալու, որ նոյնպէս հասկացւում էր նման անհատներից որպէս հոգեկան վշտի արտայայտութիւն: Այս հոգեկան յոյզերի շնորհիւ ահա, մօր յարաբերութիւնը զաւակի հետ, անդամների յարաբերութիւնը հօր-դայի մէջ, զանազան կենդանիների ձայնին նման ձայներ հանելու ընդունակութիւնը, սէրը, վիշտը, փորձառութիւնն ու պատահական դէպքերից, պատահական ձայների միջոցով ազատուելու հնարաւորու-

թիւնն ինքնաբերաբար ստեղծեցին ձայներով միտք արտայայտելու և այն հասկանալու հնարովթը:

Այնուհետև գոյութեան կռուին էր պատկանում այդ ամենը զտելու, պարզելու և զարգացնելու գերը, քանի որ այդ կռուի մէջ անհրաժեշտօրէն պիտի յարատեւէին այն անհատներն, որոնք աւելի ընդունակ էին այդպիսի պատահական ձայները *հասկանալու*: Նա, որ զգուշացման ձայնին աւելի ուշադիր էր, նա որ հոգեկան յոյզերով ու երգերով աւելի ընդունակ էր էգին գրաւելու և ֆիզիքսպէս աւելի ժիր հակառակորդին տապալելու, նա, որ իր լսածներն աւելի աջող և շնորհքով էր անդրադարձնում իրայիններին վտանգից ազատելու, անշուշտ, նա էլ հնար ունէր աւելի սերունդ աճեցնելու և իր սերունդը պահպանելու, որ մի աստիճան աւելի ժիր, ընդունակ պիտի լինէր իր նմաններից, քանի որ ժառանգել էր մի որոշ առաւելութիւն, որ ժառանգօրէն պիտի աճէր ու զարգանար:

Երբ մարդանման արարածի ուղեղի մէջ կազմուել էր ձայներով միտք արտայայտելու առաջին դէպքը, այնուհետև զարերի, հազարաւոր տարիների կռիւն ու փորձը աստիճանաբար զարգացրին և առաջ բերին առանց մի մեծ ճիգերի ու ջանքերի, լոկ պատահաբար, այն հրաշալի, կարելի է ասել աստուածային միջոցը հաղորդակցութեան, որ լեզու է կոչւում, և որի շնորհիւ մարդն էապէս զանազանւում է մնացեալ՝ ցեղով և արիւնով իրան հարազատ կենդանական աշխարհից:

Ինչպէս որ թռչունի երգը զարգացել ու առաջ է եկել նրա հոգեկան յոյզերի շնորհիւ, առանց մի

ներքին զիտակցութեան ու ջանքի թուշուններ ի կողմից, ինչպէս հողի շերտերում ամբարտաճ ջուրը առաջին յարմար ընկնէն դուրս է թուշում աղբււրանալով, լոկ իր ներքին, ֆիզիքական յատկանիշների շնորհիւ, ճիշտ այդպէս էլ մարդկային հոգու յոյգերը դուրս պիտի թորային և երևան գային բացականչների և երգերի, զգուշացման ձայների և համանողութեան մէջ, որոնք բաղդաւոր զուգադիպութեամբ սկսան հասկացուիլ նման անհատների կողմից և հիմք դառնան լեզուի զարգացման: Լեզուն ուրեմն արդիւնք է մարդկային հոգու, ուրեմն մի հոգեբանական երեւոյթ է:

Դեռ այսօր կան բազմաթիւ անհատներ կանոնաւոր և ուղիղ խօսող՝ կուլտուրայի բարձրագոյն պատուհները վայելած, իր ծագումն ու ծնունդը Աստուածային մի առանձին շնորհների վերագրող, որ զաղափար անգամ չունին այն լեզուների բարդ ու կանոնաւոր քերականութեան մասին, որ նրանք գործ են ածում լոկ սովորոյթով. գիրը, գրականութիւնը և լեզուաբանութիւնն էր, որ բաց արաւ այս բնագոյական դարձած երևոյթի էութիւնը, առանց որին անկարելի է երեակայել որ և է մարդկային կուլտուրա, և առաջադիմութիւն:

Զուր չէ, որ մարդը իրան ջոկ է համարում աշատուններից լեզուի շնորհիւ. և մարդկութեան մէջ էլ, ազգութեան իսկական հիմքը՝ լեզուն է համարւում:

ԳԼ. II

ՀՆԳԵՐՈՊԱՆԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ ԵՒ ՆԱԽԱՀԱՅԵՐԷՆ

Տասնութերորդ դարում անգլիացիք տիրելով Հնդկաստանին, ծանոթացան բրահմինների լեզուին ու գրականութեանը, որ Սանսկրիտ է կոչուում: Քերականութեան կազմը, արմատների և բազմաթիւ բառերի նմանութիւնը հին յունարէնին և լատիներէնին, ավիշեցրեց լեզուաբան գիտնականներին: Ի՞նչպէս և ի՞նչ կերպ բացատրել այդ զարմանալի երևոյթը: Որևէ խնամութեան կամ ազգակցութեան չկար պատմական ոչ մի հիմք. Հնդկաստանը շատ էր հեռու, և որևէ յարաբերութեամբ բացատրելն անհնարին: Եւրոպայում այդպիսի մի երևոյթ բացատրուած էր արդէն շատ գիւրութեամբ: Հիւսիսային Գերմանիայում ապրում է մի փոքրիկ ազգ. Լիտուան կամ լիտովցի, որի լեզուն իր քերականութեամբ, բառերով ու արմատներով խիստ նման է լատիներէնին. գիտնականներն այնպէս բացատրեցին, որ հնումը, մի խումբ հոռմէացի նաւաբեկեալ դուրս են եկել լիտուանական ափը, բնակութիւն հաստատել մնացել. ուրեմն լիտուաներէնի նմանութեան պատճառը

լատիններէնին այն է, որ լիտուանացիք սերում են հռոմայեցիներից:

Մի այդպիսի ենթադրութեամբ բացատրել և Սանսկրիտի նմանութիւնը անհնար էր, որովհետև հազարաւոր մղոններով հեռու ընկած Հնդկաստանը որևէ ծովային կամ ցամաքային յարաբերութիւն չէր ունեցել և չէր կարող ունենալ Հռոմի հետ, սակայն լեզուների նմանութիւնն ակներև էր:

Մնում էր ենթադրել, որ այդ նմանութիւնը պատահական չէ այլ ցեղական է: Ծանօթութիւնն հին պարսկերէնի հետ, որ զարմանալի նման էր Սանսկրիտին, և ուշի ուշոյ համեմատութիւնը հին յունարէնի, լատիններէնի, Սանսկրիտի, պարսկերէնի, հայերէն զրաբարի, սլաւերէն և հին գերմաներէնի ցոյց տուին, որ դրանք բոլորը մի մայր-արմատական լեզուի դուստրներն են առաւել կամ պակաս չափով միմեանցից հեռացած... Այդ լեզուն անուանուեցաւ «Հնդեւրոպական մայր-լեզու», և այսօր գրեթէ պարզուած է, որ մի ժամանակ, մի ժողովուրդ, ինչպէս երևում է լեզուի արմատական բառերից հաւանօրէն դեռ հովիւ ու խաշնարած, որ ապրում էր նահապետական կեանքով, ցրեց իր անդամները ամբողջ Եւրոպա, միջին ու փոքր Ասիա, Պարսկաստան և Հնդկաստան: Իր զարմանալի ընդունակութիւններով նա Եւրոպայում թէ Ասիայում, ուր հնար ունէր, ստեղծեց ամենաբարձր և ամենակատարեալ կուլտուրան, որին երբևիցէ հասել էր մարդկութիւնը և այդ կուլտուրայի շնորհիւ էր, որ Հիւսիսի պաղարիւն ու սառն անգլիացին Գանգէսի տօթակէզ հովիտներում գտաւ ու ճանաչեց իր ապուպայերի թողած ու մո-

ռացած բրամանների սերունդի մէջ իր հոգեհարա-
զատ եղբայրներին: Այնուհետև պարզուեց, որ
Հնդկորոպական pitar, matar, լատիններէն pater,
mater, իտալերէն padre madre, պարսկերէն pe-
der, mader, նախնի հայերէն, հասր մհասր, հին
ֆրանսերէն paire, maire, հին հայերէն, հայր
մայր, նոր ֆրանսերէն père mère, նոր հայերէն հեր
մեր. միևնոյն ծագումն ունին, միևնոյն աղբիւրից են
բխում, որ տարբեր կլիմաների ու տարբեր ազգե-
ցութիւնների տակ ձևափոխուել, զարգացել և ստա-
ցել են նորանոր ձևեր ու կերպարանքներ, պահելով
արմատների ու բերականութեան մէջ մի ընդհանուր
անուրանալի կնիք արեւակից ազգակցութեան:

Այսպէս.

Սլաւ	հին հայերէն
бер-ом	բեր-եմ
бер-еши	բեր-ես
бер-еѣ	բեր-է
бер-емъ	բեր-եմք
бер-ете	բեր-էք
бер-онѣ	բեր-են*)

Այսօր մի շարք տաղանդաւոր զինանականների
մանրագնին և հմտալի ուսուցիչների շնորհիւ պարզուեց
ոչ միայն այս լեզուների ընդհանուր ծագումը, այլև
նրանց հեռաւոր կամ մօտաւոր ազգակցութիւնը մի-
մեանց հետ:

Հայերէնը մի ժամանակ համարուում էր աստուա-
ծային լեզու. ի նկատի ունենալով որ դրախտը Հայ-

*) Մալխասեան. Գրաբարի համաձայնութիւնը:

աստանուճան է եղել և ջրհեղեղից յետոյ Հայաստանը երկրորդ անգամ մարդկութեան որրանը դարձաւ, բնական էր կարծել, որ Ադամի և Նւայի լեզուն պիտի ֆնար ու յարատեւէր Հայաստանում. ապացոյց, երևան, որ նշանակում է թէ երեւում էր—Նոյին Մասիսի կատարից: Նախիջևան—Նոյի առաջին իշխանը: Ակուռի—արկ-ռռի. Նոյը առաջին անգամ հազոդի որթը տնկեց: Այս, հայերի ազգասիրական բացատրութիւնն էր, որ ի հարկէ քննադատութեան չէր կարող դիմանալ: Քանի որ եւրոպացիք լաւ ծանօթ չէին մեր լեզուին, կարծիքները բազմաթիւ ու զանազան էին: Մի ժամանակ հայերէնն համարում էին ազգակից խոսերէնի, ապա համարեցին արիւնակից սեմիտ լեզուների, վերջն անկախ մի կովկասեն լեզու: Պետերմանն առաջինն էր, որ ցոյց տուաւ հայերէնի ազգակցութիւնը հնդեւրոպական լեզուներին, որ վաւերացաւ Պօտտի հեղինակաւոր ընդունելութեամբ:

Հայերէնի հնդեւրոպական ծագումն ընդունելուց յետոյ պէտք էր որոշել նրա տեղը ազգակից լեզուների շարքում, որ հեշտ չէր, շնորհիւ հայերէնի կատարած զարմանալի ձեւափոխութիւնների և այն հանգամանքի, որ նրա հնագոյն շրջանից մեր ձեռք ոչինչ չի հասած: Սկիզբները կարծում էին, որ նա մօտիկ ազգական է պարսկերէնին, ուրեմն մի իրանական լեզու է: Սակայն պարսկերէն բառերի զտումն և աւելի մանրակրկիտ ուսոյթները ցոյց տուին, որ հայերէնը շատ բաներով աւելի մօտ է եւրոպական՝ քան արիական ճիւղին: Ներկայումս նա համարւում է մի ան-

կախ անդամ հնդեւրոպական լեզուների, որ բռնում է սլավո-լիտուան լեզուների մէջ տեղը:

Թէ ինչ էր հայերէնի պատկերը գրաբարից առաջ, մենք այսօր ընդհանուր՝ լեզուաբանական օրէնքներով միայն պիտի եզրակացնենք: Գրեթէ հաստատապէս կարող ենք ասել, որ նախահայերէնն էլ իր ցեղակից լեզուների նման հաւանօրէն ունեցել է մի բարդ քերականութիւն. երեք սեռ իր քերականական համաձայնութիւններով, երկակի թիւ, ածական աստիճանների այլ կազմութիւն, որոնք լեզուի զարգացման ընթացքում կորան, ոմանք տեղի տալով այլ ձևերի, ոմանք իսպառ անհետանալով:

Գրաբարը, որ մեզ հասել է Ե. դարուց, համեմատելով պարսիկ, սանսկրիտ և յոյն լեզուների հետ, համեմատաբար մի մանուկ է թէ տարիքով և թէ ձևերով: Քերականութեամբ նա շատ առաջացած, ձևափոխուած ու մաշուած է, որ լեզուների զարգացման յատուկ մի օրէնք է:

Թէ նա ինչպէս ծագեց ու զարգացաւ, մենք կը տեսնինք յետոյ, թէպէտ պատմական ոչ մի հաստատ փաստ չունինք: Այն, ինչ որ մեզ է հասած, մինչուրբ ու կատարեալ, հարուստ ու բազմազան լեզու է, որ ամեն մի բանիմաց անհատի հիացմունք ու պատկառանք է ներշնչում:

Գրերի գիւտից յետոյ անմիջապէս, գրաբարն առաջ է գալիս որպէս մի կազմ ու պատրաստ լեզու, և ներկայումս չկան որ և է մատենագրական փաստեր, որով մենք ղիտել կարենայինք այդ լեզուի զարգացումը, ինչպէս պարզօրէն ղիտելի է նրա անկումը սկսած հէնց եօթերորդ դարուց: Այս հանգա-

մանքը և՛ զարմանալի է և՛ տարօրինակ, որովհետև նախագրաբարեան զրականութեան մասին գրեթէ վկայութիւն չունինք, այնինչ գրերի գիւտի հետ զուգընթաց երևան է գալիս մի լեզու, որ ենթադրել է տալիս «Մի բարձր մտաւոր վիճակ» և մի պատկառելի կուլտուրա: Այդ լեզուի հարստութեան մասին մի մօտաւոր գաղափար կարող է տալ այն հանգամանքը, որ անա կէս դար է թէ մենք և թէ արեւմտեան հայերը հարստահարում ենք զբաբարի զանձերն և դեռ շատ հեռու ենք այն սպառելու կարողութիւնից, ուրիշ խօսքով կուլտուրապէս դեռ շատ ցածր ենք մեր հեռավոր նախնիներին:

Աշխարհաբար աստուածաշունչը, որ թարգմանած է արեւմտեան լեզուով, համեմատուել անկարող է զրաբար աստուածաշունչի հետ և այս յիսուն տարիների կուլտուրական ճիգերով մենք արտադրել չկարողացանք մի բան, որ իր մեծութեամբ ու փառահեղութեամբ համեմատուել կարենար հին Աստուածաշունչի հետ: Հինգերորդ դարում Հայաստանը բաժան-բաժան էր եղած բազմաթիւ նախարարութիւնների մէջ, որոնցից ոմանք գրեթէ մի-մի կիսով չափ անկախ թագաւորութիւններ էին ներկայացնում: Դա առաջ էր եկել երկրի անմատչելի լեռների շնորհիւ, որոնք մի կողմից խանգարում էին ազատ հաղորդակցութեանն ու յարաբերութիւններին, միւս կողմից յարմարութիւն էին տալիս թէ առանձնանալու և թէ դիւրութեամբ պաշտպանուելու մի կենդրոնական իշխանութեան յարձակումներից ու ճնշումներից. կլիմայի զանազանակերպութիւնը, տեղային և պարապմունքի տարբերանքը միացած հարեան զանազան ազ-

գերի ազդեցութիւններին աւելի ևս մեծացնում ու խտացնում էին հայ կենցաղի հետ նաև լեզուի տարբերութիւնը զանազան գաւառներում: Այս ամենը պիտի արդիւնէր զանազան-բարբառներ Հայաստանի զանազան մասերում: Ներկայումս քիչ լեզուներ կան, որ բարբառների առատութեամբ մրցել կարենան հայերէնի հետ: Միայն Կովկասում, այսօր կարելի է հաշուել հինգ խոշոր-բարբառ. Արարատեան, Ղարաբաղի, զօկերի, Թիֆլիզի, Ախալցխայի, Հաշուած դըրանց ենթաբարբառները, որոնք մի տասնեակից աւելի են:

Ի՞նչ էր արդեօք Հայերէնի վիճակը հնումը. Ունէր նա արդեօք որևէ բարբառ, հաստատ վկայութիւն չունինք:—Թէպէտ ընդհանուր լեզուաբանական օրէնքով և ներկայի դեղուկցիայով դա անկասկածելի է թուում և Կորիւնի խօսքերը գրեթէ հաստատում են այդ եզրակացութիւնը. «Հրաման առեալ ի թագաւորէն սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց, որք... վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին զժուարամատոյցք էին... առեալ պարզախօսս, հռետորաբանս կըթեալս... կացուցանէին ..»

Այդպիսի բարբառների գոյութիւնը որքան անկասկած, նոյնքան էլ ցաւալի է, որ ոչինչ չէ հասած հնութիւնից մեր ձեռը գրական լեզուից դուրս, որ մի գաղափար տար ժամանակակից սր և է բարբառի մասին: Ներկայ բարբառներումն էլ, ինչպէս հմտօրէն ցոյց է տուել Այտընեանն իր քերականութեան մէջ՝ չկայ մի ձև, որ իր սկիզբը չունենար գրաբարում:

Հայ բարբառների նորագոյն ուսոյթները սակայն՝ ցոյց տուին, որ այդ կածիքը լիովին ճիշտ չէ: Առա-

ջին անգամ մենք մատնանիշ արինք մի այդպիսի երևոյթ զօկերէնում, որ չէր կարող զրաբարից ելած լինել *):

Այսպէս՝ յայտնի է, որ զրաբարի այ երկբարբառը կենդանի բարբառներում երևան է գալիս. ա, է, կամ ի ձևով. այս-աս, էս, էսիկ, իսիկ՝ գայլ, գալ, գել, (գիլո) ալլ, ալ, էլ. սալլ, սալ. հալլ, հաւ, հէր և այլն:

Զօկերէնն այդ կանոնին չի ենթարկուել և այ՝ պահել է զրաբարի անարատութեամբ. ինչպէս օր. մայր, հայր, և այլն... Իսկ մի շարք այլ բառերում նոյն իսկ զրաբարի կարճ և ամփոփ ձևը նրանում լայնացել, երկարացել է. ճեր—զօկերէն տայր, միս—մայս, սպիտակ—սպալտակ, սիրել—սայրիլ, և այլն:

Ենթադրել, թէ զօկերէնը միւս բարբառներին հակառակ զարգացման ընթացք է ունեցել, անկարելի է, որովհետև նրա մնացեալ տարրերում ամփոփման կանոնը կատարելապէս պահպանել է իր զօրութիւնը, այն էլ շատ ազդու կերպով. գնալ—դարձել է նոյն լեզուի զարգացման ընթացքի համեմատ, այն ինչ քիթ—դարձել է խալիք, նոյն ընթացքին հակառակ:

Ո՞րն է սրանցից հինը. քիթ—հին ձևից չէր կարող դուրս գալ խալիք, ընդհակառակը քայնթ ձևից—քանթ, քէնթ—քէթ քինթ **)

*) «Հանդէս Ամսօրեայ» 1899. № 5. 1901 թ. № 5, 6. «Նախահայերէնի հետքեր զօկերէնում»

**) Քէթ պահուած է Ղարաբաղի բարբառում, քինթ—Թիֆլիզի բարբառում:

դիւրութեամբ: Ուրեմն զօկերէնն աւելի հին է քան զբաբարը:

Որպէս զի մեր ասածն առանց տարակոյսի հաստատել կարենանք, հարկաւոր է նաև զբաբարի վկայութիւնը: Տէր բառը զբաբարում զարտուղի հոլովում ունի: Տե—առն, ի տե—առնէ, տե—արք և այլն: Այս հոլովներէց երևում է, որ սա մի պարզ բառ չէ, այլ կազմուած է *սե* կամ *սի*, մասնիկից և *ալ* (առն—արք) բառից, ինչպէս *սի-կին*, *սի-եղերք* բառերը *): Արդ՝ այս հոլովներէց պարզ է եզրակացնել, որ *տե-ի* նախնական ձևը պիտի լինէր *սիալ* կամ *սալ*: Զօկերենում հէնց այսօր էլ պահուած է այս վերջինն անարատ, որից ամփոփուելով ծագել է նորագոյն զբաբար ձևը՝ *սալ*—*սար*—*տե-ի*: Այս ձևի հընումբիւնը զօկերէնում ենթադրութիւն չէ, այլ հէնց զբաբարից վկայուած մի իրողութիւն: Ելլ վկայութիւնն աւելի ամրանում է նրանով, որ Ղարաբաղի և Թիֆլիզի բարբառներն էլ, պահել են այդ ձևերի միջին աստիճանը:

Օրինակ.

1) Զօկ.	2) Ղարաբաղ.	3) Գրաբար.
տայկ	տէկ	տիկ
մայս	մէս	միս
(սալրտ) սարտ	սէրտ	սիրտ
մայտք	մէտք	միտք
ծայծ	ծէծ	ծիծ

*) Տի մասնիկն ինչպէս երևում է, նշանակում էր մեծ, զօրաւոր, տի-կին=մեծ կին—իշխանուհի—Թագուհի, տիալը=մեծ-մարդ, իշխան—տէր, տի-եղերք=մեծ եղերք, անեղերք:

կնայկ	կնէգ	կնիկ *)
կծայկ	կծէկ	կծիկ **)
քայնթ, քինթ (թիֆլ.)	քէթ	քիթ

Այսպէս հին են. մայրութիւն—միւրութիւն (էրզրութիւն)—մօրութիւն, մայրին—միջին. (ուրեմն մէջ—մայջ) հայնգ—հինգ. մտայկ—մտիկ, կռայկ—կռիւ. պղայնձ—պղինձ, պայտք—պէտք, սպայտակ—սպիտակ, թայն—թի, հայն—հին. և այլն.—

Այստեղից ծագող եզրակացութիւնները խիստ հարցասիրական են. մենք տեսնում ենք, որ գրաբար և մեր մնացեալ բարբառների է և ի համապատասխանում են նախահայերէնն այն երկբարբառին. օր. գաւառական խէր-խիթել, ենթադրում է մի նախորդ որ է, ի, հնչիւնների տեղ այն պիտի ունենար. խաչք-խաչքել. իրօք, այդ բառերը պահուած են գրաբարում իրանց նախնի նշանակութեամբ:

Գրաբարի տէր—տեսանք ծագում է սայր, բառից, իսկ Տիրել, անտարակոյս ենթադրում է մի սայրել նախորդ, որն աւելի ամփոփ գտնում ենք գաւառական տարեւ (տարեցի, gagner-gewinnen էրզրութիւն բարբառ) բայի մէջ: Զօկերէնի սայրելը, հարկաւ, ենթադրում է մի սայր գոյական, որից ելած է սէր, ծայծ-ծիծ—ծծել, ենթադրում է և մի նախորդ ծայծել:

Գրաբ. կին—պէտք է լինէր. կայն, որ երևում է յոգնակի—կանայք ձևից:

*) **) Այս երկու բառերից էլ երևում է, որ իկ և ակ փաղաքշական մասնիկը մի և նոյն ծագումն ունին և նախնի այլ մասնիկի ամփոփումն են:

Հետևաբար՝ դէտ կամ դիտել, գէտ—գիտենալ, երևի ելած են, դայտ-դայտել, գայտ-գայտենալ ձևերից... Ուստի և մեր էական բայի երրորդ դէմքը, և դուրս պիտի լինի եկած մի նախնական լայ ձևից, որ պահպանուած է Արարատեան, զօկերէն և Ղարաբաղի բարբառներում ա ձևով. թէ դա վերջը յ— պիտի ունենար, անկասկած է. 1. որովհետև երրորդ դէմքում մեր բայերը վերջանում են յ-ով. գայ, տայ, գնայ, և այլն. 2. Հնդեւորպական լեզուներում երրորդ դէմքը վերջանում է և, որը հայերէն փոխուած է յ.—

Իրաւ, Զաքարիա Աղուեցիին իր օրագրի մէջ 17 դարում և Շրէօգերն իր քերականութեան մէջ գրում են ալ (aŋ) որ երևի այն ժամանակ ամբողջովին հնչւում էր. դա ապացուցւում է հետևեալ ուսմիկ տոնմաբանութիւնից. «Ուրբելեանց ցեղն ալ» *) 1744 ին գրուած, այն ինչ Սաչատուր Աբովեանը գրում է միայն ա, գնումա, գալիս ա և այլն... Նմանութեան օրէնքով եզրակացնել պէտք է, որ յոգնակի երկրորդ դէմքն էլ (էք) ալի նախորդ պիտի ունենայ. Դրան ապացոյց «Զուղայեցւոց Ողբը» (Քնար Հայկական եր. 134) գրուած 1605 թ. գնաման-ալ, մոռանում-ալ, ողջ-ալ, ումն-ալ թողման **) և այլն...

Սա արդէն մի հատիկ բառ չէ, այլ մի քերականական ձև՝ այնէլ իբրև էական բայի երրորդ դէմքը, վերին աստիճանի կարևոր ու էական, որ Ղարա-

*) Ալիշան. «Միտական» երես 97.:

**) Անկատար էի, էիր և այլն, անկասկած եղել է այի, այիր, այր և այլն

բաղի, զօկերէն և Արարատեան բարբառում՝ աւելի
հին է քան գրաբարում:

Մի ակնբերևնախազրաբարեան երևոյթ է և՛ անդէմ
«պիտոյ է» բայի խոնարհումն յիշեալ բարբառնե-
րում.

պտեմ, պտես, պտի,
պտենք, պտէք, պտեն,
պտէի, պտէիր, պտէր
պտէինք պտէիք պտէին.

Անկասկած հին են արգելական հրամայականը.
գնալ մի, աւել մի, գրել մի, կամ նայիլ մե՛ք, վախիլ մե՛ք
սլտիլ մե՛ք. և վերջնիւթեր բացասականը. առաւ ոչ,
կերաւ ոչ, էլաւ ոչ, մեռնիս ոչ և այլն... որոնք
«բարձրագոյն հնութեան մը մնացորդ կը համարի»—
Այտընեան, ի նկատի ունենալով գրաբար «եղև իսկ
ոչ» ձևը:— Գրաբարում այդ ոչ-ը առաջ ընկաւ,
իսկ բարբառներում կորցնելով ո-մնաց միայն յ.
նախնի «է ոչ» գրաբար դարձաւ «ոչ է», ապա «'չէ»
չի և չը:

«Մի՛» արգելականը զօկերէնում հնչում է մա. յոգ-
նակի մ'ե՛ք ձևից երևում է, որ դա կազմուած է մ-
մասնակից և էական բայի երկրորդ դէմքից.

Խորին հնութեան կնիք են կրում նաև աղծ=օծ
գաղտի=գօտի, կաղց=կաթ, կըղազ=կորիզ, գեառ-
նուկ=գորտ. զօկերէն բառերը.

Աղծ գառել է անշուշտ նախ օղծ և ապա—օծ

Գաղտի » » Գօղտի » Գօտի,

Թէ ան կարող է օ դառնալ, դա զօկերէնում
մի հասարակ օրէնք է, որի հետքերը մենք կարող
ենք ցոյց տալ և գրաբարում.

Այսպէս՝.

ամաչել	ամօթ
աղաչել	աղօթք
ճանաչել	ծանօթ
արածել	արօտ
մատչել	մօտ

Վերջինս—արդէն գաւառական:

Այս օ հնչիւնն անձանօթ էր հին լեզուին, դրա համար նա իսկի դիր էլ չունի զրաբարում. նրա ծագումը հազիւ—մի հազար տարուայ հնութիւն ունենայ *):

Բաւական բարդ է կըղաղ—բառի ստուգաբանութիւնը, որի ամեն մի հնչիւնը լեզուաբանական մի օրէնք է: Վան դա կոչւում է կողիւն, Ղաբաբաղ կորեզ, զրաբ, կորիզ. Վերեր տեսանք, որ ա, է կամ ի կրկնակ ձևերի մէջ ծագում են նախնի այ-ից: Ո զօկերէն սղուելով դառել է ղ. համեմատիր: կոտորել—կըտորել (զարաբ) կոտոր=կըտոր: Հետեաբար զօկերէնի նախորդ ձևը պիտի լինէր կողայզ, Ղ=ր. առաջ=աղաք կախաղան=կախաճան, երբայր=եղբայր, արբիւր=աղբիւր, ուրեմն. կողայզ=կորայզ. գիտենք, որ զ—դուրս է եկած նն. հնագոյն արմատից. *) օրինակ. Մնձուր=Մզուր (գաւառ), անձն=ազն (ան-

*) Աչքի է զարնում այն հանգամանքը, որ օ առաջ է գալիս մեծ մասամբ տ—և կամ թ—հնչիւնների հարևանութեամբ օր. արօտ, կարօտ, նարօտ, աղօտ, առաւօտ, ծնօտ, մ տ, հօտ, գօտի, օտար և կամ անօթ: ամօթ, աղօթք, ծաւնօթ, տօթ, բօթ, օթեան և այլն:

*) Նոր ձայնական օրէնք մը. նձ=զ. «Հանդէս ամսօրեայ». 1905 թ, № 10—11. Աճառեսն:

ձին, ազին), սինձ=սէզ. անձրե=արզէվ (Պօլիս) նախանձ=նախազ (Նխալքալաք) ուրեմն. կողայզ=կողայնձ=կորայնձ. դա է կորիզի հնագոյն արմատը, որից առանց դժւարութեան դուրս կարելի է բերել ներկայի բոլոր ձևերը. կըղազ (զօղ), կորէզ (Ղարաբ.) կողինձ (Վան), որոնց մէջ «կորիզ»—գրաբար ձևն ամենից կարճ ու գեղեցիկ, ապացոյց է, որ գրաբարը կենդանի շրթունքների և ամենօրեայ կերպարների հետքեր է կրում, ինչպէս այդ երևում է սէզ-սինձ կրկնակներից, որոնք նոյն օրէնքով ելած են ռայնձ արմատից, որոնցից առաջինը թէպէտ կարճ և ամփոփ – մեռած է, այն ինչ վերջինը՝ թէպէտ ոչ այնքան մաշուած, կենդանի: Այդպէս նաև, գեառնուկ, որ ծագում է գեառնոնուկ, որտեղից գաւառական գորտնուկ և գրաբար գորտ բառը. ամփոփման ակընյայտնի նշաններով.

Սրանք են ահա այն տարրերը, որոնք հաստատապէս կրում են նախահայերէնի հետքեր. մի հիմնական գաղափար կազմելու համար հին լեզուի մասին որքան սակաւ ու չնչին, մի քանի կարևոր եզրակացութիւնների համար նրանք լիովին բաւարար են:—

I. Որ գրաբարին ժամանակակից կային այլ հայերէն բարբառներ. սա մի հաւանական ենթադրութիւն չէ՝ այլ փաստ է:

II. Որ ուրեմն գրաբարը մի մայր—նախալեզու չէր:

III. Որ Արարատեան, Ղարաբաղի և մանաւանդ զօկերէն բարբառն որոշ ձևերով այնքան հին են գրա-

բարից, որքան վերջինս մեր ներկայ այլ բարբառներից:

IV. Որ Արարատեան և առհասարակ արևելեան բարբառները չէին գրաբարի հիմնական լեզուն, քանի որ այդ բարբառների շեշտը, էական բայի երրորդ դեմքը, վերջնիվեր բացասականն ու արգելականը, պիտի դիմաւոր բայը, տարբեր են գրաբարից հիմնովին և անկասկած աւելի հին:

V. Ինչպէս երևում է, գրաբարն եղել է իր ժամանակի ամենից շատ ձևափոխուած ու զարգացած բարբառներից մինը և անկասկած կենդանի ու խօսուն, քանի որ հազարաւոր տարիներով կանխել է հէնց ներկայ կենդանի բարբառներից շատերին:

ԳԼ. III

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՆՈՒԿՈՒՄԸ

Մենք տեսանք, որ Արևելեան բարբառներից Արարատեանը, Զօկերէնը և Ղարաբաղինը աւելի հին ձևեր են պարունակում, քան զբարբառը. Հնայելով այդ հանդամանքին, այլ և Արարատեան բարբառի ազնիւ ու ընտրիւր ձևերին, նրանք մինչև 19 դարը մնացել են լիովին անյայտ և անմասն մեր գրականութեանը:

Այդ բարբառների ամենից բնորոշ տարրը ներդոյականի և սահմանակերտի ուժ մասնիկն է (դաշտ-ուժ, բակ-ուժ, ուտ-ուժ եւ, առ-ուժ եւ): Առաջին անգամ մենք այդ մասնիկը հանդիպում ենք ԺԲ. դարում, Վարդանի (զանձակեցու) պատմութեան մէջ և անկասկած նրա կիրառութիւնը ներկայ ձևով հազիւ թէ ԺԱ. դարուց վաղ լինի: Դրա ծագման հանգամանքը հետևեալն է: Գրաբարի անկման շրջանում, երբ սահմանականն ու ստորագասականը նոյնանալու վրայ էին, շփոթի ու խառնակութեան մեծ ասպարէզ կար: Դրա առաջն առնելու համար արևմտեան բարբառներում երևան եկաւ կոռ-կը մասնիկը, որ ԺԲ.

դարուց արդէն հաստատուն կիրառութեան մէջ էր, առանց սակայն ընդհանրանալու ամենուրեք: Արեւելեան բարբառները՝ նոյն ժամանակներում սահմանակներկան և անկատարը կազմելիս դիմում էին այլ միջոցներէ, ինչպէս կարելի է տեսնել Վարդանի տիեզերական պատմութիւնից *):

«Հրամայեաց թէ ի տրտումս դրի զքո խօսքդ: Ո՞նց է, որ զամէն զայն ասացեր, որ յիմ սիրտս կայր՝ որ ինձ դիւր թուեաց, Աստուած խօսեցեալ է ընդ քեզ, երեւալ է քեզ: Ասացաք՝ թէ չէ. մեք մեղաւոր մարդ ենք, ապա աստուածախօս մարդկանց պիւրքն կարգացել ենք...»

Ապա ասացաք, թէ առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դու, որ սուտ չկայ ի ներս: Հրամայեաց թէ առաջ Ասացի՝ թէ. զինչ քրիստոնեայ և արքաւուն կայ ընդ ծով և ընդ ցամաք, ամենու սիրտ հետ քեզ լաւ է և խղ աղօթի եւն առնում: Հրամայեաց՝ թէ (ի) հաւատալ եմ որ հանց է, ապա յԱստուծոյ ճանապարհը չեն արքաւունքն, ինձ ի՞նչ աղօթի առնեն, և եթէ առնեն Աստուած երբ լսէ... մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուիլ, որ մեր քրիստոնեայէն ենք և քրիստոնէութիւն կայ ի մեր տանս»:... Ուրիշ տեղեր պատահում ենք. «չորք են յառել. թէ շատ էք ի հարցանել, հայոց կանթեղն է ի վառել» և այլն, որի աւելի հնազոյն օրինակին պատահում ենք դեռ Յովհ. Մամիկոնեանի մօտ. «Յոյնք են ի գալ»:

*) Դ. Վ. Յովնանեան. «Հետազոտութիւնք նախնեաց Ռամկ. վրայ», մասն Ա. 1897:

Այս ընդձեռն օրինակներից հասկանալի է, որ ներգոյական հոլովի նախդիրները գործ էին ածուում նաև սահմանկ. ներկան կազմելու: Այնպես որ, եթե այդ նախդիրներին փոխարինէր մի այլ մասնիկ իբրև ներգոյական (օր. ում.) նոյնը, առանց մի դժուարութեան պիտի անցնիր նաև՝ բայերին, իբրև սահմանակերտ:

Մի այդպիսի ներգոյական, թէև սակաւածանօթ, բայց խորթ չէր զրաբարին. մենք ունինք. «ի միջի մերում, ի միում» և այլ օրինակներ զրաբարի հնագոյն շրջանից: Հարց է, թէ դա երբ ընդհանրացաւ և երբ մոտաք գործեց բայերի մէջ: Այս հարցերի պատասխանն էլ մեզ տալիս է Վարդանը նոյն այս հատուածի մէջ, ուր առաջին անգամ դնում է թէ ներգոյականի և թէ սահմանականի օրինակներ. «ի սրբառումս որի զի խօսի. զից աղօթք եւ առնում», սրանք մեզ հասած հնագոյն օրինակներն են ռամիկ զրականութեան մէջ, որոնք կարծես պատահամբ դուրս են թուել Վարդանի զրչից, աւետելու համար այժմեան սահմանակերտի զրեթէ ծնունդը:

Քանի որ այս մասնիկը հէնց առաջին անգամ զրուած ենք տեսնում առնել և ոչ միայլ բայի վրայ, ամենամեծ զրականն էր նրա ընդհանրանալուն, որովհետեւ դա մեր ամենագործնական բայերիցն է և այսօր զրեթէ մի տեղակ օժանդակի դեր է կատարում «անել» ձևով: Դրա էւօլիւցիան հետեւեալն է. ի (յ) ներգոյականի կազմիչ են. ում՝ նոյնպէս. ի (յ) սահմանականի կազմիչ է. ում-ը նոյնպէս դառնում է սահմանականի կազմիչ և իբրև աւելի որոշ ու հաստատուն, դուրս է վանում ի (յ) բռնելով նրա

տեղը և դառնում է ամենաբնորոշ տարրը մեր լեզուի և ամենամեծ բաժանարարը գրաբարից և արևմտեան լեզուից:

Թէև Վարդանից յետոյ մինչև 17 դարը գրաւոր ապացոյց չունինք, բայց կասկած չի կարող լինել, որ դարեր էին հարկաւոր մինչև ու՛մ մասնիկի ընդհանրանալն ու կատարեալ տիրապետութեան հասնելը: Ղարաբաղի մեղիքների թղթերում 1701-ից սկսած, երբ գրանք գրուած են հաւաքաբար կամ մի հոգեւորականի աջակցութեամբ, տիրող մասնիկը կոչ է: Իսկ երբ թուղթ գրողը մի մասնաւոր կամ աշխարհիկ անհատ է, ինչպէս մի Օրի, իսկոյն երևան է գալիս ում-ը թէ իբրև ներգոյական և թէ սահմանականի կազմիչ *):

Նշանակում է որ այդ դարում նա արդէն ժողովրդական էր: 18 դարում, ինչպէս երևում է Սայաթ Նովայի երգերից՝ Թիֆլիզում և Ագուլիսում (Շրէօդէր, Հայ, Քերակ.) այդ մասնիկն արդէն տիրապետող էր, որ 19 դարու կիսից մասնելով արևելեան գրականութեան մէջ. մեծամեծ նուաճումներ է անում մինչև հիմա:

Մի խօսքով, ում-ն իբրև սահմանակերտ ծագում է ներգոյականից հաւանօրէն Փ. ԺԲ. դարերում:

Ի՞նչ բան է հապա իւ մասնիկը, որ թէև սակաւ, բայց գործածական է մեր բայերից մի քանիսում

*) *Ско* Сношение Петра Великого съ армянскими народами.

իրը սահմանակերտ «լալիս եմ, դալիս եմ, ապիս ես» և այլն...

Եթէ, ինչպէս տեսանք, «ուսմ» ներգոյական է, շատ հաւանական է, որ «իս» մասնիկն էլ նոյն ծագումն ունենայ: Մենք տեսանք, որ ի նախդիրը գործ էր ածուում նաև ինչպէս սահմանականի կազմիչ. հաւանական է, որ դա ինքը թաւալմամբ անցել է բայի յետևը. մենք ունենք. ասելի եմ, գրել եմ, ուտելի ես և այլն ձևեր: Այդ դէպքում, գուցէ «ի» մտապատկերների գուգորգութեամբ ներս բերած լինի և գրաբար յոգնակի ներգոյական յ-ն, գալիս եմ, ասելիս եմ, և այլն, արտասանութեան դիւրութեան համար:

17 դարուց մեր ձեռն է հասել մի հետաքրքիր դոկումենտ, որ ժամանակակից քաղաքացիական լեզուի լաւագոյն նմուշը պէտք է համարել. Դա «Զաքարիա Ագուլեցու օրագիրն է», որ պարունակում է հեղինակի կեանքի գլխաւոր դէպքերն իր ձեռքով գրած, 1647 մինչև 1681. նա առևտրական գործերով շարունակ թափառել է Ագուլիսից Թիֆլիզ, Արզրում, Պոլիս, Իզմիր, Վենետիկ, Ամստերդամ և ապա յետադարձ ճամբով մինչև Թաւրիզ կրկին ու կրկին անգամ:— Լեզուն մի խառնուրդ է արևելեան և արևմտեան բարբառների և գրաբարի: Իր ձևով նախահայրն է մեր ներկայ գրական լեզուի: Նա գործ է ածում է և այ. կոռ և ում, բացասականի էն և ից մասնիկները միևնոյն մտքով, թէև իշխողն արևելեան բարբառն է իր բնորոշ գծերով, ինչպէս երևում է հետևեալ հատուածից:

«Հոկտեմբերի Ժէ (17) Ըստամբօլ, ի թագաւո-

րութեան Սուլթան Իբրահիմին, որ ժ. (10) էնգիչա-
րին ըսպահին կռիւ տվին ըստամբօլու միջումն. շատ
մարդ կոտորեցաւ ըսպահունանէ—այս պատճառէս,
որ ուզումին թէ թագաւորն սպանին, թէ զուլի ու-
լուֆայ չէ տալիս,...

«Ես Զաքարեայ հարց ու փորձով իմացայ իմ
հայր Աղամիրէն, մայր Սալգուլէն, որ թւին Ռէթ.
ումն՝ որ մօրէ ծնայ սուրբ Գէորգի կիրակի օրն, կէս
օրէն յեան. Դարձեալ կամիլն Աստուծոյ եկեալ հա-
սաք մինչև Ռէթ. (1647) յամն. կամիլն Աստուծո
ուսանել վաճառականութիւն...»

«Ոչ թէ մին օրի էր կռիվն, այլ մինչի ի (20)
օր աղմուկ կէր քաղաքումն: Ապա թագաւորն խեղ-
դեցին, աղէն նստաւ թագաւոր, անունն Սուլթան
Մահմադ *):»

Ինչ որ զարմանալի է և տարօրինակ, եղած
բարբառների մէջ ամենից մաքուրը, ամենից հարա-
զատն և անարատը հնչման և ստուգաբանութեան
կողմից՝ ամենից ուշ երևան եկաւ և ճանաչուեց զրա-
կանութեան մէջ: Սօսքս Արարատեան բարբառի մա-
սին է, որ ներկայ արեւելեան գրալեզուի հիմքն է
համարւում:

Ամենահին զոկումենտն այդ բարբառով, որ հա-
սել է մեր ձեռը, պատկանում է Թաղիաթեանի գրը-
չին, որ գրել է հեռաւոր Հնդկաստանից իր հայրե-
նակից Երևանցիներին: Դա համեմատաբար մի մօ-
տիկ անցեալի գործ է, գրուած 1828-ին: Ահա մի

*) Այս գիրքը մենք պարտական ենք պ. Ալ. Քալան-
թարի սիրալիւր աջակցութեան, որ չզլացաւ իր միակ օ-
րինակը մեր տրամագրութեան տակ դնել:

հմուշ այդ համակից, որ սակայն մաքուր Արարատեան բարբառով չէ, այլ անշուշտ ազդուել է Հնդկահայերի և նոյն իսկ Պօլսի բարբառից:

«Աչքներդ լոյս որ մեր քաղցր աշխարհքն պար-
«սից դառն չարչարանքիցն ազատուեց, Քրիստոսի
«Տէրութեան ներքոյ ընկաւ: Փանօք բարբերարին
«Աստուծոյ, որ այսուհետեւ աւել նեղութիւն չէք ու-
«նենալէց, ազատ քաղաքի քաղաքացի պիտիը *) ա-
«նուանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստութեան լուրն,
«և արուեստից յառաջագիմութիւնն բոլոր աշխարհ
«պիտիը տարածուին:

«Իմ լաւ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի
«որ դուք էք պատահել, կարծեմ, որ մեր նախնիքն
«ևս Արշակունի թագաւորութեան ժամանակումն էլ
«չէին պատահել, դերս թէպէտ և թագաւորութիւնն
«իւրեանցն էր, սակայն բարբարոսութիւն և զուլումն
«պակաս չէր: Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղօթս առնէք
«որ Աստուած Ամենաողորմած Կայսերն Նիկողայոսի
«Աթոռն միշտ հաստատ սրահի, սուրն կտրուկ և ամին
«թշնամեաց վերայ յաղթող: Ապա՝ աղաչեցէք, որ նոյն
«Աստուածն մեր ազգին սէր միաբանութիւն տայ, եր-
«կար կեանք և բարի յաջողութիւն, որ կարենան ճա-
«նաչել թէ ի՞նչ է լաւն, և հետեւել նմին **):»:

Այտրնեանը Արարատեան բարբառի մասին հե-
տեւան է ասում... Ամեն ուրիշ ցեղերէն (բարբառ-
ներէն) աւելի զարդարուն կարգ և շարժուն ընթացք
մ'առած է այս արևելեան գաւառականը՝ բաղադրեալ

*) Պիտոր—Պօլսի ոճ:

**) Մկրեան. Մեորոպ Թագիաթեանի կենսագրութիւնը

բայերուն կամ ոճերուն անհամար յաճախութեամբ, որուն մէջ ամէնէն հարուստն է. և որով հին զբաւարին կերպով այլ և այլ շրջմունքներ բանեցընելու մեծ յարմարութիւն ունեցած է։... Այս ամենն իսկապէս նոր եւրոպացի լեզուաց նման վերլուծական նկարագիր մը տուած են այս հայերէնին—եւ անժխտելի է, որ այդ ամենը մէկանց յորդ աղբիւր մըն են եղած այս ցեղին մէջ՝ անհամար շրջմունքներու և զեղչմունքներու. զորօրինակ օժանդակ էական բայերը, բացասական մասնիկները և այլն մերթ կցելով գլխաւորին, մերթ բաժնելով, երբեմն ետ և առաջութեամբ, շատ անգամ զեղչելով։—Որով կրնայ առանձին շարժում մը և ոյժ ու կենդանութիւն տալ իւր բացատրութեանցը, որուն ուրիշ գաւառական մը դժուարաւ կարծենք թէ կարենայ հաւասարիլ։ (Քընսակ. քերակ. 210—213)

Օր. ցրիւ Տալ, ցրուիլ, դէմ-տալ, մտիկ տալ։

Թէ ինչպէս առաջ եկաւ այդ հանգամանքը, մենք տեսանք մասամբ. ում ներգոյակերտը երբ դարձաւ սահմանականի կազմիչ, դառաւ ամենամեծ յեղափոխիչն ու անշրպետը հին ու նոր լեզուների միջում։

Սրա հետևանքները պարզ են, իբրեւ վերջընթեր ներգոյակերտ, սա դուրս վանեց զբաբարի խոշոր յատկանիշներից մինը. նախդիր—ներգոյակերտը (ի—յ)։ Բայերի մէջ նա վերջընթեր չէր կարող դառնալ այլ մտաւ բայ-արմատի և խոնարհակերտի մէջ. գր-ում-եմ, գր-ում-ես, գր-ում-է. և վերջինս, որ էական բայն էր, բայարմատի հետ միացած ու քարացած, դարձաւ մի կենդանի օժանդակ։ Այսպիսով ում-

մասնիկը վերլուծեց սահմանականի ներկան և անկատարն այսպէս՝

Ն ա ի ն ի

Հաւատայի՝ դառաւ հաւատում-այլ^{*)} = հաւատում-էի
Հաւատայիլ՝ » հաւատում-այլը = հաւատում-էիր
Հաւատայր՝ » հաւատում-այր = հաւատում-էր

Այսպիսով բայերի մէջ անփոփոխ մասից անջատուեց փոփոխուող մասը: Երկրորդ՝ գրաբարի 18 տեսակ խոնարհմունքը ^{**)} այս երկու ժամանակներում հասաւ մի աներեւակայելի միատեսակութեան, գրեթէ մէկի. երրորդ, այս վերլուծութեամբ ձեռք բերուեցաւ գրաբարի դիմաց, դարձաւ մի կենդանի սնունդ, վերին աստիճանի շարժուն ու ղեկութեք, հնար ունենալով ուղած ժամանակ ընկնելու ետ, առաջ և կտր մէջը:

Համեմատեցէք օրինակ.

Գ ռ ա ռ ւ ր .

Ա շ ի ա ռ ւ .

անցուցանել

անցկացնել

անցուցանեմ

1) անցկացնում եմ

2) անց-եմ-կացնում,

3) անց-եմ-կաց-անում,

նշ անցուցանեմ: 1) չեմ անցկացնում

2) անց չեմ կացնում,

3) անցկացնում չեմ,

Մէկի փոխանակ երեք ձև, բառերի տարբեր դա-

*) Վերևի միւր հնթադրութիւնն էի—էիր—բայի ծագման մասին—է=այ, ապացուցւում է այստեղից:

**) Կոստանիան. գրաբար բայերի խոնարհումը:

ասաւորութեամբ: Աչքի է զարնում մանաւանդ շեշտի ելեւէջն ու շարժումը վերջին օրինակում նախ բառի սկզբին, ապա մէջ-տեղը և ապա նախավերջին վանկում:

Եթէ այս ամենն համեմատենք ներկայ արեւմրտեան ձևերի հետ, ապա ակներև է արեւելեանի գերազանցութիւնը: Այնտեղ ձևը քարացած է և զուրկ ճկունութիւնից. կ'անցկացընեմ չեմ անցկացընեմ (չեմ անցընեմ)—այլևս փոփոխել չի կարելի: Այդ կողմ, կը մասնիրը, որ արեւմտեանում փոխարինեց գրաբարի ի, յ նախդիրներին, մեր լեզուն վեր-առաւ մի աւելի նրբութիւն և ճշտութիւն մտցնելու համար, յատկացնելով ապառնիին և թէական—պատմանականին. (կը բերեմ, բերած կը լինեմ):

Այնուհետև նոր եւրոպական լեզուների նման օժանդակ՝ եմ, լինել և եղանիլ բայերի աջակցութեամբ կազմում է ժամանակների մի ահագին բազմութիւն.—զրած-եմ, զրածեմ եղել, զրած էի եղել, զրած կ'լինեմ, զրած կ'լինէի, զրած պիտի լինէի...

Վեերի վերլուծումն ու պարզութիւնը կատարեալ անելու հետ բազմազան է անում մի շարք բայեր գործածելով իբրև օժանդակ, օրինակ. անել, տալ, գալ, ընկնել.—պաշ-անել, մտիկ-անել, դէմ-անել, իմաց-անել, կուշուծիգ-անել քաշ-անել և այլն. իմաց-տալ, ծափ-տալ, զանգը-տալ, գլուխ-տալ, ոտնատակ-տալ, պահ-տալ, վազ-տալ, ուշուց-տալ, մտիկ-տալ, ժաժ-տալ, պտոյտ-տալ և այլն... ժաժ-գալ, փուլ-գալ, կուշ-գալ, դուրս-գալ, և այլն...

Դրանց առաւելութիւնը ամենին հասկանալի կը լին նորանով, որ փոխանակ բազմաթիւ բայերի, խո-

նարհում ենք միայն տալ, անել, գալ, որ արդէն կարճ
ու սովորական են և ընդունակ ամենի հետ միանա-
լու, բաժանուելու, ետ ու առաջ ընկնելու, շեշտն ու
ձայնի ելեէջը փոխելու, ըստ հաճոյս որոշ նրբու-
թիւններ յայտնելու. գրաբարը ինչպէս և մեր արե-
մտեան լեզուն զուլկ է այս առաւելութիւններից:

Միւս առաւելութիւնն այդ օժանդակ դարձած
բայերի, նրանց բազմազանութիւնն է, մի և նոյն
միտքը բազմազան անելու ընդունակութեամբ:

Իմաց-անել իմաց-տալ

քաշ-անել քաշ-տալ

մտիկ-անել մտիկ տալ

դէմ-անել դէմ-տալ

ցրիւ-սնել ցրիւ-տալ, ցրուել

կռիւ-անել կռիւ-տալ, կռուիլ

Երբեմն էլ այդ բայերը գործ են ածուում ըստ
հաճոյս. անկախ, միացեալ ու բարդուած. վերց-անել,

վերցընել, վեր-առնել

իմացընել, իմաց-անել

անցկացընել, անցկաց-անել:

Եթի լեզուին կեանքու հոգի տուողը բայն է, ապա
նա մեր լեզուում մի անզուգական դիւրաթեքութիւն և
աշխոյժ ունի, որը տարաբաղդաբար ոչ գնահատուած
և ոչ էլ ճանաչուած է: Այդպիսի բայերի ու ձևերի
շտեմարան Սաչատուր Աբովեանի երկն է:

Թէպէտ մեր գրական լեզուի հիմքը համարուում է
Արարատեան բարբառը, բայց այս երկուսի մէջ եղած
տարբերութիւնն այնքան մեծ է, որ հարկ է նախ ճա-
նաչել այդ բարբառի մի քանի բնորոշ յատկանիշները
գրական լեզուի հիմունքն աւելի լաւ ճանաչելու և նրանց
փոխադարձ առնչութիւնը որոշելու համար:

ԳԼ. IV

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ԳԱՆԻ ՑԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ,
ՀՆՁԻՐՆԵՐ.

Բառերի սկզբում եւ դառել է ե, օր. եկել, երկու, եթիմ, եփել, երազ, երեխայ, երես և այլն նոյնը և շատ անգամ բառերի մէջ. բերնի, կենալ, բերել, տեսանք, հանեցինք, ուտելիս և այլն:

ե և ա միջին վանկերում ի և յիւր պէս բառի վրայ վանկ աւելանալիս երբեմն կըճատուում են. օր. ցխի (ցեխի), բէրնի (բերանի), պակսել, սիպտրկել և այլն. այ. դարձել է ե. օր. էր—այր, երկենութիւն, վէրի, սէլ, հէր, մէր, երխեք, ծառէք և այլն... Մի դէպքում էլ՝ ի—իքի (այգի):

ոյ և իւ դառնում են ի օր. զրից, լիս, քիր, սին (սիւն), ալիր, արին, դիր (դիւր), դիրեկան:

և. դառնում է ժ. ֆորթ. ֆոտ, ֆոն, ֆոտած, ֆորս:

իւ. դառնում է ի. հաղալ, հաղ-ասել, հաւող (խաղող):

ր. հնչիւնը յ-ից, շ-ից և ս-ից առաջ դուրս է

ընկնում, աժեղ, ժաժ (շարժ) խաշել, քաշել, դասել, դուս և այլն...

և. և ր. հնչիւնների մէջ աւելանում է դ. ծուռոր, ծանոր, մանոր, սանոր և այլն...

ն, ժ, ց և յ հնչիւններից առաջ ն է աւելանում, անձող (ածուխ), մեկն և (մեկն), դեղըցունց, տանը-ցունց, ճանաւնչ, կանաւնչ, փողատիրունչ և այլն...

Քերականորիւն.

Մի՛ արդեւական մասնիկը, յոգնակի թւում, բայից առնելով յոգնակերտի վերջաւորութիւնը—ե՛ք, նրան տալիս է անորոշ եղանակի ձև. օր. մի՛ երևե՛ք, մի՛ ա-նե՛ք, մի՛ ասե՛ք, դառնում է. մե՛ք երևալ, մե՛ք անիլ, կամ, որ աւելի բնորոշ է. յետադաս՝ երևալ մե՛ք, անիլ մե՛ք, ասիլ մե՛ք, և այլն. Յետադաս մե՛ք-ը շեշտ չունի:

Բացասական չ մասնիկը, նմ՝ օժանդակի հետ նոյնպէս խոնարհւող բայից յետադաս է դործածւում. այսպէս. չեմ ուզում, չես ուզում, չի ուզում, զառ-նում է. ուզում չեմ, ուզում չես, ուզում չի, և կամ. ուզիլ չեմ, ուզիլ չես, ուզիլ չի, ուզիլ չենք, ուզիլ չեք և այլն...

Այդպէս յետադաս գործ է ածւում և ո՛ր բացա-սականը. օր. ուզեց ո՛ր:

Պէ՛տք է. բայը շատ անգամ դիմաւորէ և խոնար-ւում է սահմն. ներկայ և անկատար ժամանակներով. բայից նախադաս կամ յետադաս. օր. խօսիլ պտիմ, խօսիլ պտիս, խօսիլ պտի. խօսիլ պտինք, խօսիլ պտիք, խօսիլ պտին. խօսիլ պտէի, խօսիլ պտէիր, խօսիլ պտէր. խօսիլ պտէինք, և կամ սակաւ, պտիմ խօսիլ, պտէի խօսիլ, և այլն... յճիւղն իւր ամեն փոփոխութիւններով անշեշտ է մնում:

էս, էզ, էն—ածակ. ցուցական դերանուններն այսպէս են հորովւում.

սեռ, ըստուր, ըսուր, ընդուր—կամ էստուր, էտուր, էնդուր.

բաց. ըստուց, ըտուց, ընդուց—կամ էստուց, էտուց, էնդուց.

գործ. ըստով, ըտով, ընդով—էստով, էտով, էնդով.

յոգ. ուղղ. ըստոնք, ըտոնք, ընդոնք, - կամ էստոնք, էտոնք, էնդոնք.

սեռ. ըստոնց, ընտոնց, ընդոնց—կամ էստոնց.

բաց. ըստոնցից,—ցից—ցից, էստոնցից.

գործ. ըստոնցով—ցով—ցով, էստոնցով.

Առարկաների անունները շատ անգամ կրկնւում կամ յերկուրում են, ցոյց տալով հաւաք բաղադրական իմաստ. օր. կիտուկ-կիտուկ, ձար-ձոր, փալաս-փուլաս, աղքատ-ուղքուտ, ձէնը-ձոր կամ ձէնը ձուն, աման-չաման, հաց-մաց, հազալ-մաղալ, երես-մերես, սիրա-միրա: Ածակ. գերադրակ. աստիճ. արտայայտւում է, արմատի անփոփոխ կամ փոփոխ կրկնութեամբ. օր. տան—դարտակ կամ դանի—դարտակ (բոլորովին դատարկ), չիփ—չիփլաղ (բոլորովին մերկ) կամ սոսկ անուան շեշտելի ձայնաւորը երկարացնելով. օր. կակող (ամենափափուկ) սնո (ամենասառն): Յոգն. ներ. վերջաւորութիւնն աւելանալիս, որոշ դէպքերում ու դառնում է վ. օր. կատվոնք (կատունք), լիզվոնք (բայց տիրացրվեր). իկ—վերջաւորութեան ի սղւում է. օր. ծաղկւոնք, վառկւոնք և այլն *):

*) Տես. Խաչատուր Արովեանի երկերը, Ժամհարեանի հրատարակութեամբ. 1897 թ. Մոսկուա, երես 501—504.

Շեշտը բառերի վերջնութեւր վանկի վրայ է մեծ մասամբ. յոգնակի նկր վերջաւորութիւնն է, որ միշտ շեշտ ունի:—Մի պարզ ապացոյց այն հանգամանքի, որ այդ նկր-ը նորամուտ է և փոխ է առնուած արեւմտեան բարբառներէց,—այլապէս նա բոլորովին շեշտ պիտի չունենար ուղղականում:

Օժանդակ բայի երրորդ դէմքը. ա (այ) է:

Վաղարշապատում, անորոշ դերբայի գործիականը վերջանում է օն—փոխ. ուլ, օր. հարցնելօն —հարցնելով, ուտելօն, ուտելով, «մնում ա միտք անելօն»:

Այս ամենը աւել կամ պակաս չափերով յատուկ են և՛ մնացեալ արեւելեան բարբառներին. ամենաբնորոշ տարրը, որով Արարատեան բարբառը քերականօրէն տարբերում է մեր մնացեալ բոլոր բարբառներից, երկուս են. առաջին, որ սեռական հոլովը դիմորոշ յօդ լի առնում եզակի եւ յոգնակի և երկրորդ. բացառականի ից վերջաւորութիւնը եզակի եւ յոգնակի. —

Այս երկու բնորոշ տարրերը Արարատեան բարբառից անցան մեր ներկայ գրական լեզուին և դա է քերականօրէն շօշափելի ապացոյցը, որով Արարատեան բարբառն հիմք պէտք է ընդունել արեւելահայ գրականութիւն: Այս կամուրջի վրայով է ահա, որ մենք բարբառից պիտի անցնենք մեր արեւելահայ լեզուի պատմութեանը, ցոյց տալով նրա ածման ու պարզացման հանգամանքները:—

ԳԼ. V

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԼԵՁՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ.

Մի լեզու երբ զրի է առնւում, նշանակում է նա գոյութիւն է ունեցել. սա գրեթէ մի ակսիոմա է: Այլ խնդիր է՝ ի հարկէ, թէ նա որքան կենսունակ, որքան հարուստ և որքան ընդունակ պիտի լինի գրական դառնալու: Երբ նա ընդունւում է մտածող անհատների մեծամասնութեան կողմից, այնուհետև նա դադարում է քաղաքացի լինելուց և դառնում է լեզու, որովհետև բարբառը գրականութիւն չ'ունի լայն մտքով, և խօսւում է մի համեմատաբար փոքրաթիւ ու որոշ տեղի հետ կապուած հասարակութեան կողմից: Այն ինչ լեզուն կոչւում է բարբառներից այն, որ գրականութիւն ունի և նրա խօսողները անհրաժեշտօրէն չեն կապուած մի որոշ տեղի ու սահմանափակ շրջանի մէջ: Սովորաբար բարբառախօսներից շատերը, մանաւանդ կրթուածները անպայման զիտեն և խօսում են գրականը, որ բարբառի վերաբերմամբ մի քանի առտիճան բարձր, աւելի ընդհանուր, համազգային և աւելի տիրապետող դիրք է ստանում: Բարբառներից նա, որից ծագել է գրական լե-

գուն և որին համեմատաբար ամենամօտն է, կոչում է հիմք զրական լեզուի:

Անցեալ, 19 դարու սկզբին, Հայաստանն ակահատես եղաւ մեծամեծ անցքերի: Հիւսիսային մի մեծ պետութիւն կրկնակի պատերազմներ ունեցաւ Պարսկաստանի և Թիւրքիայի հետ: Քրիստոնեայ զօրքի յաղթական մուտքը դրդեց ու ցնցեց տեղական ազգերին: Հայերն ի մասնաւորի, որպէս ժիր ու աշխատասէր ժողովուրդ. հին ու կորած կուլտուրայի ստղմբեր խորը թազցրած իրանց սրտի ու հոգու մէջ. հալածական ու ստրկացած գրեթէ հազար տարի, անասելի եռանդով ու անձնուիրութեամբ յարեցան նոր պետութեան շահերին և Կովկասում առաջամարտիկներն եղան Ռուս կառավարութեան, որ նրանց խոստանում էր ոչ միայն կեանքի, գոյքի, կրօնի ու լեզուի ապահովութիւն, այլև, մինչև իսկ ծրագիրներ կային Ռուսաց արծուի հովանու տակ ստեղծել մի կիսով չափ անկախ Հայաստան: Կարծես մի կախարդական հարուածով ամեն բան ճնշող ու կործանող կիսալուսինը տեղի տուաւ լուսապայծառ խաչի առաջև, արեւելեան կիսամեռ ու քնէած հոգիներն արթնացան մի նոր կեանք շնչելու, մի աւելի բաղդաւոր ժամանակ ապրելու:

Հայ ազգի առաջ դրուած էր մի հսկայական հարց. կամ յարել նոր պետութեանն ու ոչնչանալ, հեշտ ու դիւրին ճանապարհ՝ և կամ նորոգուած ուժերով վերակենդանացնել ինքն իրան և նորէն ապրիլ, դառն ու դժուար ջանքերի շնորհիւ:

Երկունքն սկսուած էր. այդ երկունքի առաջին և ամենամեծ արտայայտութիւնը հայ մտքին էր

պատկանում. կամ արդեօք այդ միտքը, կենդանի՞ էր արդեօք նրա հոգին, ինչ ձև ի՞նչ գոյն պիտի ստանար այդ հոգու արտայայտությունը, այդ ամենը երևան պիտի գար և կերպարանաւորուէր մի նոր լեզուի մէջ: Հինը մեռած էր անդառնալի կերպով. նոր կեանքը, նոր քաղաքական ու տնտեսական պայմանները ծնեցրել և առաջ էին բերել նորանոր պահանջներ, որոնք պէտք է լցուէին և երևան գային մի նոր եզուի մէջ: Քանի որ գոյութիւն ունէր մի հին ուժ՝ փառաւոր լեզու, կոիւն ու պաշարն անհրաժեշտօրէն առաջ պիտի գային. հինը կար, նորը պիտի ստեղծուէր և եթէ կարող էր, պիտի տապալէր. հնի տեղը բռնելու համար:

Բացի քաղաքական և տնտեսական բարեյաջող պայմաններից, կային նաև արտաքին ու ներքին այլ ազդակներ, որոնք պիտի արդիւնէին մի նոր մտաւոր շարժում, որի հետևանքը բնականօրէն երևան պիտի գար նոր լեզուի մէջ:

Այդ ազդակներն էին նախ և առաջ արևմտեան հայերի, մասնաւորապէս Մխիթարեանների զբաղան ու քարոզչական գործունէութիւնը, որը թէ՛ նախանձ և թէ՛ մրցումն էր թելադրում լուսաւորչական հայերին: Բողոքական քարոզչութիւնը հէնց Կովկասի սահմաններում, որ բուն դրած Շուշի և Շամախի անջատել էր ձգտում հայութեան մի խոշոր հատուածը մայրենի եկեղեցու գրկից: Ռուս դպրոցների և կառավարութեան ջանքերը մասամբ քաղաքակրթելու, մասամբ ռուսացման նպատակներով: Նոր-նոր երևան եկող զբաղան վերածնունդը, թէկուզ գրաբար, պա-

բունակում էր արդէն նոր նիւթ. այն է թատրերգութիւններ, պօլեմիկա, նոր ստեղծագործութիւններ կեղծ կլասիկ կամ ազգասիրական բովանդակութեամբ, նոյն իսկ վէպէր, օրինակ Մ. Թաղիաթեանի:

Այս շարժման մէջ ինչպէս բնական է, գերազանց տեղ բռնեց և ամենամեծ յեղափոխիչն եղաւ հայ դպրոցը, որ և ստեղծողն ու կազմակերպողն եղաւ նորաստեղծ դրական լեզուի, ուստի և կրսկսենք դպրոցներին:

ԳԼ. VI

Ն Ե Ր Ս Ի Ս Ե Ա Ն Դ Պ Ե Ռ Յ

1824 թ. Թիլիզում առաջնորդ Ներսէսը բաց է անում մի դպրոց, ուր, հաւաքւում են զանազան գուլառներէից հայեր, ուսանելու և ուսուցանելու: Ըյդ դպրոցն հիմնուած էր յատկապէս Վրաստանի հայութեան մէջ մոռացուած ու կորած հայերէնը նորէն պատուաստելու և տարածելու:

Հեռատես ու տաղանդաւոր հիմնադիրը ոչ մի ջանք չէր խնայում գրաւելու ժամանակի առաջնակարգ ոյժերը դպրոցը պայծառացնելու և իր կոչման բարձրութեան վրայ պահելու համար:

Հէնց բացման տարին հրաւիրւում է Ալամգարեանը Լազարեան ճեմարանի ուսուցչութիւնից և նրան է յանձնւում դպրոցի տեսչութիւնը, որ տեւց 1824—1830, և այդ հէնց առաջին շրջանն այնքան արդիւնաւոր է եղել, որ կոչուել է «Ալամգարեանի շրջան»: Դպրոցում այդ ժամանակ ուսանելի առարկաներն էին. հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, գրականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, աստ-

ւածաբանութիւն, թուաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, ֆիզիկա, նկարչութիւն:

Ամիսը մի անգամ տեղի պիտի ունենային ժողովներ, խորհրդակցելու համար աշակերտների վարքի և ուսման մասին: Ժողովներին պէտք է մասնակցէին բացի ուսուցիչներից, նաև Թիֆլիզի 6 եկեղեցիների երեցփոխներ և ուրիշ հասկացող անձեր՝ քահանաների միջից: Դասաւուսութիւնը պէտք է տեւէր օրական 8 ժամ, կէսը մինչև ճաշ՝ կէսը ճաշից յետոյ:

Առաջին դասարանում ի միջի այլոց պէտք է աւանդուէր բառագիտութիւն գրաքարից աշխարհաքար եւ ոռսերէնից հայերէն:

Միւս դասարաններում ևս ըստ կարգին:

Բացման տարին Ներսիսեան դպրոցն ունէր 140 աշակերտ, որ 1826-ին հասաւ 360-ի, իսկ 1830-ին մօտ 400-ի:

Բացի տաղանդաւոր, կրթուած և բանաստեղծ Ալամգարեանից, որ ծնունդով Ասրախանցի էր և աւանդում էր հայերէն, ռուսերէն, վայելչագրութիւն և կատարում էր տեսչի պաշտօնը, կային և այլ հինգ ուսուցիչ. Պօղոս վարդապետ Ղաւրաքաղցին, Բեթղենէմ անունով պարսկաստանցի մի հայ, Ն. Արաւրատեան (անշուշտ Թիֆլիզցի) աւարտած Լազարեան ճեմարանը:

«Այս փոքրիկ խմբի վրայ հսկում, նրան խրախուսում և ախաջնորդում էր ինքը հիմնադիրը»: Այդ պատճառով 1825—27 թ. ապրիլը, ուսումնարանի ամենաեռանդուն և մերձակայ կառավարիչն համարուելու է ինքը հիմնադիր Ներսէսը: Արհին այդ մի-

Նոցում գրեթէ ամեն օր առաւօտ և ճաշից յետոյ ոտքով գալիս էր դպրոց, մտնում դասատուն և ժամերով մնում այնտեղ ու շատ անգամ խլելով վարժապետի բերանից դասաւանդութիւնը, ինքն էր շարունակում պարապել համբաւներէ հետ: Այնքան շատ էր 55—56 տարեկան ծերունւոյ եռանդը և ոգևորութիւնը, որ չնայելով իւր բազմաթիւ զբաղմունքներին՝ նա մինչև պատերազմ գնալը ինքն իւրեան նմանապէս հաշուել էր ի թիւս ուսուցչաց իւր զբաղմունքի, որով թէ՛ վերահսկում էր գործին և թէ՛ խրախուսում ու քաջալերում էր վարդապետաց և աշակերտաց» *):

Ինքը, Ներսէսը, յայտնի է որ Աշտարակցի էր, ուրեմն ամենամաքուր լեզու ունեցող մի գիւղից: Դպրոցի անդրանիկ և ազդեցիկ աշակերտներից էր և Խ. Աբովեանը, որոնց լեզուն, մասնաւորապէս Ներսիսին, որ հիմնադիրն ու հսկողն էր դպրոցի և սակասկած ամենից մաքուր հայերէն խօսողը, չէր կարող առանց ազդեցութեան մնալ և օրինակելի չդառնալ: Յայտնի է, որ Ներսիսի գլխաւոր նպատակներից մինն էր, դպրոցը հիմնելիս, Վրաստանում մոռացուած հայերէնը վերակենդանացնել դպրոցի և մանուկ սերնդի միջոցով:

Թէ որքան նախանձախնդիր Ներսէսը մայրենի լեզուին, ցոյց է տալիս հետեւեալ հանգամանքը:

«Ներսէս վարդապետը տեսնելով Սերոբէ Պատկանեանին անխնամ վիճակն, և նորա կնոջ միայնութիւնն, որ եթէ զաւակաց խնամք տանէր, տնտեսութիւնը կը մնար ան-

* Երիցեան, «Պատմութիւն Ներսիսեան դպրոցի»:

խնամ, եթէ տնտեսութեան միտ զնէր՝ զաւակունքն կը մնային անայցել, այն նորածին Գարբիէլ մանկան զառաւ տածիչ. կը գրկէր, գրկով կը շրջիւցանէր, օրօրոցէն կը հանէր, օրօրոց կը զնէր, և իւր խոպոտ ձայնով օրօր կերգէր. և երբ մայրն Մարիամն կըսկսէր ըստ տեղւոյն սովորութեանքն վրացերէն օրօր ասել, «Իաւնանօ, վարդօ նանօ, նանօ», Ներսէս սաստիկ կը բարկանար. առ զարոյթ սրտին ծաղրկանք, եւ անյաղար մեղադրանք կը խօսէր առ Սերոբէ Պասուկանեան, որ նա կը ներէ եւ թոյլ կուտայ՝ որ իւր զաւակաց ականջն վրացերէնի կը ընտելանայ ի վնաս հայերէնի. Այս պատճառաւ Սերոբէ վարդապետն՝ Մխիթար Աբբայի երգարանէն մէկ երգ որ անգիր գիտէր այնքան երգեց ի հաճոյս Ներսիսի, որ ոչ միայն Ներսէսն անգիր սերտեց, այլ և Սերոբէի անգրագէտ կիներն սովորեցաւ, և աշակերտներէն բազումք՝... Երբ Ներսէս իմանում է, որ սա Սեբաստացունէ այնքան տրտնջում է, որ բռնադատում է Սերոբէին մի նոր օրօրոցի երգ յօրինել նոր և այլ եղանակով, որովհետեւ «ննջեա որդեակն վրաց եղանակով եր»։ (Երկհարիւր ամիայ գրակ. գործունէութեան Մխիթարեանց. Բ. Սարգսեանց)

Այսպիսով Ներսիսեան զպրանոցի շուրջը նրա բացման օրից, այսինքն 1824-ից մինչև 1830 թուականները համախմբուած էին 400 հոգի, ուսանող և ուսուցանող. Ուսուցիչներն էին, ինչպէս տեսանք, Աստրախանից, Ղարաբաղից, Պարսկաստանից, Թիֆլիզից և Աշտարակից, իսկ աշակերտներն էին անխտիր բոլոր գաւառներից. օր. Աբովեանը Քանաքեռից, Նազարեանը Հաւլաբարից, Առաքել Արարատեանը (Թիֆլիզ). Գալուստ Շերմազեանը Թիֆլիզից, Յովհաննէս Յովհանեանը (Ախալքալաքից), Պետրոս Մաղաթեանը Ղարաբաղից և մնացեալն... Հայաստանի գրեթէ բոլոր գաւառներից։

Այս Թիֆլիզեցիները, Ղարաբաղեցիները, Աստրա-

խանցիներին, զօկերին, Պարսկաստանցիներին, Երևանցիներին՝ և կռօնների համախուժված օրական ութ ժամ պիտի խօսէր և հաղորդակցէր: Մեր բոլոր բարբառները Ներսիսի հովանու տակ եկել էին հանգիպելու միմեանց և մրցելու միմեանց հետ: Նրանք պարտական էին խօսելու և հասկանալու միմեանց. էնդոսի և էքսոգոսի օրէնքով այդ շորս հարիւր հոգին անպայման պիտի տային եւ առնէին: Այն, ինչ որ ընդհանուր էր, մեծամասնութեանը հաճելի և հասկանալի, պիտի հաստատուէր ու պնդանար խօսակցութեան ու վարժութեան մէջ: Այն, ինչ որ մասնաւոր ու գաւառական էր, խորթ ու անդուրեկան, պիտի հալածուէր ու մոռացուէր:

Գոյութեան կռիւը բարբառների մէջ և բնական ընտրութեան օրէնքն այստեղ լաւագոյն պայմաններն էին մի նոր լեզուի զարգացման համար:

Պէտք է նկատի ունենանք, որ այստեղ հաւաքուած էր մի նոր բացուող, նոր սովորող մատաղ սերունդ իր գաւառական քառաւանդի և գաւառական մշակութեաների պաշարով: Դրան առաջնորդում էր մի հին սերունդ, որ սովորական, գործածական գաւառականի հետ ունէր և մի իզէալ, որին նա ձգտում էր, որը պիտի աւանդուէր—դա գրաբարն էր:

Բաղդի բերմամբ թէ՛ սովորեցնողների և թէ՛ սովորողների համար դա մի խորթ, օտար լեզու էր և այդ լեզուի ուսուցումն էլ պէտք է անհրաժեշտօրէն կատարուէր և ինչպէս տեսանք՝ կատարւում էր աշխարհաբարի միջոցով: Քանի որ գրաբարը հարուստ էր ու ձկուն, մշակուած էր ու սրբազան, բնականօ-

րէն, աշակերտների նորանոր մտապատկերները պիտի լրացուէին փոխառութիւններով զրաբարից:

Գրաբարն ուրեմն բոլոր գաւառականների վերաբերմամբ ունէր գերագոյն և իշխող նշանակութիւն: Այս խառնակ մրցման մէջ պիտի յաղթանակէր այն ձևը, որ ձայների մեծամասնութիւնն ունէր. օրինակ, սահմանակերտի և ներգոյականի «ոռն»-ը քանի որ ընդհանուր էր թիֆլիզեցու, դարաբաղցու և երևանցու համար պիտի ընդունուէր և կամ.

Ախալցխացին ասում էր վաժպետ,

դարաբաղցին » վրժապետ,

թիֆլիզցին » վարժապետ.

երևանցին » վարժապետ.

զրաբար » վարժապետ.

Թուաբանօրէն կարելի է ապացուցանել, որ պիտի իշխէր վերջին ձևը, քանի որ երևանցին և զրաբարը միացած ձայների առաւելութիւնն իրանց կողմն ունէին:

Այսպիսով գաւառացի աշակերտի լեզուն իրերի բնական բերմունքով պիտի կորցնէր իր մասնակի, տեղական տարրերն, ընդունելով հանրամատչելին և հանրահասկանալին: Մեծ ու խոշոր տարբերութիւնները պիտի զտուէին, տեղի տալով միատեսակութեան և ընդունելով մի յայտարար. — մեծամասնութեան հասկանալի լինելը. խիստ խորթ ձևերը պիտի մոռացուէին, իսկ սովորական ձևերը կարող էին գործածուիլ խառն ու անկանոն, մինչև մէկի կամ միւսի յաղթանակէն, ինչպէս օր. նրա, նորա, նրանց, նոցա նորանց, որ ցարդ մնացեալ են մեր ներկայ զրակասութեան մէջ անզամ:

Մենք թուեցինք այն առարկաները, որոնք անցնում էին ներսխեսան դպրոցում, դրանց մեծ մասը պէտք է աւանդուէին մի նորաստեղծ լեզուով, որովհետեւ գրաբարը ոչ միայն անհասկանալի էր, այլ և նոյն իսկ իրանք, ուսուցիչները, որոշ առարկաներ, ինչպէս օր. թուաբանութիւն, հանրահաշիւ, պատմութիւն, ֆիզիքա, աշխարհագրութիւն, կրօն, չէին կարող գրաբար աւանդել: Անհրաժեշտօրէն դրանք պէտք է աւանդուէին մի այնպիսի լեզուով, որ ամենին հասկանալի և մատչելի լինէր:

Կարող ենք հաստատապէս ասել, որ մի տարուայ ընթացքում այդ չորս հարիւր հոգու մէջ կազմակերպուել էր մի լեզու, որ իր բառարանով, իր ոճերով ու հարստութեամբ, իր նորանոր արտայայտութիւններով անհամեմատ բարձր ու մաքուր էր քան յայտնի գաւառականները, անհամեմատ մօտ էր գրաբարին և անպայման աւելի հայ և հասկանալի ընդհանուր հայութեան, հիմք ունենալով արևելեան բոլոր բարբառներին ընդհանուր մի քերականութիւն— ի հարկէ, գրաբար փոխառութիւններով և օժանդակութեամբ: Մի տարուայ ընթացքում ուրեմն կազմակերպուեց մի լեզու, որ առաջ գոյութիւն չունէր, այնինչ այսօր ընդհ. սեփական էր:

Թէ այդ լեզուն միայն բանաւոր չէր, այլ գրաւոր էլ պիտի լինէր, բխում է հէնց իրերի էութիւնից և եթէ գրաւոր փաստ չ'ունինք, զոնէ վկայութիւն ունինք այդ մասին:

«Ուսուցիչները սրահաւորում էին իրանց անցնելիք դասը գրել տեսականերում, որեղից աշակերտները պէտք է արագրեին և իրանց արագրածի

վրայ սովորեին: Այս պարտաւորութիւնը դրուած էր՝ որովհետեւ դասագրքեր չ'կային այն ժամանակ, իսկ մի քանի եղածներն էլ այնքան խորին, դժուար հասկանալի էին, որ նրանցով աշակերտին անհնար էր դաս սովորել: Այս տետրակներն ուսուցիչները տարին երկու անգամ, մաքուր արտագրած պէ՛տք է ներկայացնէին հիմնադրի ֆենոթեան, որպէս զի եթէ նա գտնէր նրանց մէջ արժանաւորները՝ տպագրել տար և այդպիսով հետզհետէ տպագրուած դասագրքեր պատրաստուէին*):

Լեզուն ուրեմն, լաւ թէ վատ, ստեղծուեց ներսիսեան դպրոցում, ոչ միայն կենդանի ու բանաւոր, այլ նոյն իսկ գրաւոր, սակայն դա չէր ճանաչուած կրթուած դասակարգի շեղոյ, նա պաշտօնական ընդունելութեան չէր արժանացած, նա տպագրութեան և պաշտօնական յարաբերութիւնների լեզու չէր ճանաչուած, մի խօսքով նա քաղաքացիութիւն չէր ստացել:

Դեռ ոչ ոք իր մէջ հեղինակութիւն չէր զգում փարթամ ու փառաւոր գրաբարը թողած, աշխարհաբար մի որ և է բան գրել հասարակութեան համար. այլ բանէ մասնաւոր յարաբերութիւնների կամ աշակերտների համար գրածը. երբ հարցը գալիս էր իրան հաւասարների կամ իրանից մեծերի հետ գործ ունենալու, պաշտօնական լեզուն գրաբարն էր. այնպէս որ աշխարհաբար գրելու կարող և ընդունակ անձերն

*) Մալխասեան, «Համառօտ պատմութիւն ներսիսեան հոգևոր դպրոցի»:

անգամ, որպէս զի տգէտ և անուս չերևան, գրաբար պիտի գրէին:

Ներսէսական թուականներին Ներսիսեան դպրոցն արդէն կազմակերպել ու կրթել էր մի սերունդ, որ զգուժ ու մտածուժ էր այս մասին: Հէնց առաջին ծանօթութիւնը ֆրանսերէնին և ռուսերէնին նրանց այն միտքը պիտի թելադրէր, որ հայերէնն էլ կարիք ունի աշխարհիկ լեզու ունենալու, որ ժամանակ է թօթափելու գրաբարի ծանր ու կաշկանդիչ կապերը:

1826 և 1827 թուերին արդէն աւարտել էին դպրոցը Խ. Աբովեան, Ստ. Նազարեան, Առաքել Արարատեան, Գալուստ Շերմազանեան, Յովհ. Յոֆեանեան, Պետրոս Մաղաթեան, Ստ. քհ. Մանդինեան, որոնք եղան աշխարհաբարի առաջամարտիկները: Աշխարհաբարի ճանապարհը թէպէտ իսպառ չէր բացուած, բայց մի շաւիղ, մի պարզ ուղեցոյց նրանց առաջ մասամբ կար արդէն. արևմտեան հայերը, մասնաւորապէս Մխիթարեանները դեռ 19-րդ դարու սկիզբներին հրատարակել էին աշխարհաբար Աստուածաշունչ և մի քանի ժողովրդական գրքեր, ինչպիսի էին Ռօբինզօն, Պղնձէ քաղաքի պատմութիւնը, մի շարք աշխարհաբար դասագրքեր և այլն:

Այդ սերնդի զգացումները և գաղափարները, նրանց տենչն ու ցանկութիւնները ոչ ոք աւելի լաւ, աւելի բերեփ և աւելի զգայուն կերպով չի արտայայտել քան Խաչ. Աբովեանը:

Այն ինչ որ հաւաքուել ու դիզուել էր նրա հոգու մէջ դեռ Ներսիսեան դպրոցում, այն դժուարութիւնները, որ նա զգացել էր սովորելիս և ապա

սովորեցնելիս, այն ծանր ու դժուար կռիւը, որ նա սկսել էր հասարակութեան հետ նոր փաղափարի յաղթանակի համար, հիանալի կերպով դուրս է բերուած «Վէրք Հայաստանի»-ի առաջաբանում:

Քսան երեսուն տարուց աւելի ա, իմ ազիզ հէր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել էրում, փոթոթում ա, գիշեր ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցս, ախն ու ոխը իմ բերնիցս չի պակասում, այ իմ արիւնակից բարեկամք, որ մէկ միտքս ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի... բայց ախ, լեզուս փակիր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ... մեր զրքերն էլ զբաբար, մեր նոր լեզուն էլ անպատիւ, (ուշադրութիւն դարձրէք... անպատիւ) որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրայ չ'ծիծաղեն, չ'ասեն կոպիտ ա, յիմար ա,... ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցոյց տամ, որ ինձ վրայ զարմանան ու ինձ գովեն «թէ հայերէն շատ խորը տեղեակ եմ»: Ով մէկ լեզու գիտի, ես մէկ քանիսը գիտեմ, ի՞նչ զիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանել ու կիսատ թողել. ոտանաւոր, շարադրութիւն հօ էնքան եմ գրաբար գլխիցս դուս տուել, որ մէկ մեծ գիրք էլ էն կ'դառնայ:

էս միջոցներումը Աստուած ինձ մէկ քանի էրեխէք էլ հասցրեց, որ պէտք է կարդացնէի: սիրտս ուզում եր պատուի, որ էս էրեխէքանց ձեռքն էլ ինչ հայի գիրք տալիս էի, չէին հասկանում: Ռուսի, նէմեցի, ֆրանցուզի լեզուումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպէս բաները գիւր գալիս: Ուզում էի շատ անգամ մաղերս պոկեմ որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր... նրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է գրաւիլ, չունքի սրտի բաներ էին, ով չի սիրիլ... էսպէս բաները մտածելով օրս ու ումբս մաշուել էր: Շատ

անգամ ուզում էի գլուխս մահու տամ: Ձէի իմանում թէ սրա չարէն լինչ կըլի: Թող լսողը չհաւատայ, ա՛մա ես ցանկ եսպէս եր սիրտս առել, որ շատ անգամ գոռածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլի եդ սիրտս լիքը տուն գալիս... Բանը հէնց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թէ նստեմ, ինչքան խելքս կը բերի, մեր ազգին գովեմ, մեր երեւելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ, էլի մտածում էի, թէ ի՞նչ համար գրեմ, որ ազգը լեզուս չի հասկանալ... ես տեսնում էի, որ էս մեր կարգաւ չ'սիրող աղգը Ռապէնտոնի պատմութիւնը Պոլնոն քաղաքի յիմար գիրքը ձեռնէ ձեռ էր ման ածում: Էս էլ լաւ գիտէի, որ ինչ երեւելի ազգեր կան, բոլորն էլ էրկու լեզու ունին, ճիւն ու նոր... միտք արի, միտք արի, մէկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի քո բերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն ծալի՛ր, դրադ գիր ու մէկ աշըդ էլ դու դառ, ինչ կըլի, կըլի... Երեսուն տարուայ փակ բերանս Աղասին բաց արեց: Մէկ երես բան դեռ չէի գրել, որ հայազգի դօքտոր Աղաֆոն Սմբատեանը ներս մտաւ: Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի: Ինձ համար Աստուած էր նրան էն սհաթին զրկել՝ նրա ջանին մեռնեմ: Չօս արեց որ կարգամ, բարեկամիցը լինչ պէտք էր թաքցրած: Սիրտս դողում եր կարդալիս. մտքումս ասում էի՝ թէ հէնց հմիկ որդէ որա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի միւսներին նման ու իմ ակամախոսքեան վրայ մըտքումս էլա հօ կծիծաղի... Վերջացնելիս որ չասաց «թէ էդպէս կ'շարունակէք, շատ հիանալի բան կդառնայ», ուզում էի վրայ ընկնիմ, բերանը, էն քաղցր բերանը համբուրեմ:

Ո՛չ մի գրիչ և ո՛չ մի պատմութիւն այնքան պերճախօս չի ներկայացրել աշխարհաբարի երկունքն ու ծնունդը քան այս հանճարեղ ողբերգուն, որ յղացման, ներշնչման և զգացմունքի մարդ էր, որ ունէր ներքին կրակ ու կոշում, բայց թէօրեթիկոս չէր և ոչ էլ գործնական. նա «ուզում էր իրա գլու-

խը մահու տալ, իր մագերն էր պոկում» նոր լեզուի կարիքն և անհրաժեշտութիւնը ճանաչելով, սակայն լիովին զուրկ էր իր դադափարը գործով ցոյց տալու ընդունակութիւնից, չէր վիճում ու կռուում, չէր խրատում և յանդիմանում, այլ աղաչում էր ու պաղատում. չ'ճանաչելով իր ներքին կրակի ուժգնութիւնը և իր տաղանդի մեծութիւնը, նա կարօտ էր զգում մի խրախուսող ձայնի:

Գրելուց յետոյ էլ, նա չունեցաւ քաջութիւն տպելու այն և տարածելու, որովհետև դրանից առաջ հրատարակած աշխարհաբար այլեւարանը հանդիպել էր անաջողութեան և արգելուել էր դպրոցներում գործածելու: Ուստի այն, որ պիտի դառնար աշխարհիկ լեզուի հիմնաքարը, ուշացաւ իր ծնունդով, գրուած ու պատրաստ 1840-ին, նա մնաց անյայտ ու անծանօթ ամբողջ 18 տարի—մինչև 1858 թ. երբ արդէն ուրիշները կանխեցին ու անցան, հիմնելով ու տարածելով մի բոլորովին այլ աշխարհաբար—Աբովեանի երկը մի բարբառ է, երեանի բարբառը. նա իր շեշտով, արտայայտութիւններով ու քերականութիւնով մնում է իբրեւ մի առանձին գլուխ մեր գրականութեան և լեզուի մէջ... Ինչ էլ լինէր այդ գրքի վիճակը, թէկուզ նա ուշանար ոչ թէ 18 այլ 30 և յիսուն տարիներ, քանի որ նա չէր կորած, նշանակում է կանգուն էր աշխարհաբարի ամենամեծ կոթողը: Եւ Աբովեանն էլ այդ մի երկի շնորհիւ, որով հիմք դրեց աշխարհաբար լեզուին, աշխարհիկ գրականութեանը, աշխարհ հանեց առաջին անգամ հայ ժողովրդի կեանքը, մնում է և կ'մնայ հայ-ազգի ամենամեծ բարերարներից մինը, արդարապէս համարուե-

լով մեր լեզուի ամենամեծ և ամենատաղանդաւոր հիմնադիրներէից մինը:

1840-ին, երբ նա զրուժ էր իր վէպը, նման մտածողներ անշուշտ շատ ունէր, բայց նման տաղանդ և ներշնչում, նման մեծութիւն և թռիչք, ոճի նման հարստութիւն և ֆանտազիայի թափ՝ ոչ-ոք: Աբովեանն իբրև եւրոպական կրթութիւն ստացած անձն գիտէր, որ լեզուն պէտք է ունենայ միատեսակութիւն և մի պարզ ու որոշ քերականութիւն. դրա համար նա դիմեց իր մայրենի բարբառին: Այդքան հեռու և այդքան խորը չէին կարող մտածել նրա ընկերակիցները, որոնք միևնոյն պահանջն ու կարիքը արտայայտել են այն լեզուով ինչ որ իրանք լսել ու խօսել էին Ներսէս. դպրոցում: Այսպէս գալուստ Շերմազեանը, որ աւարտել էր Աբովեանի հետ Ներսիսեան դպրոցը, 1848-ին տպել տուաւ բաղմաւ վէպում «Սուգ-դասեր մեծի իշխանի» *) թատերաձև ոտանաւորը, մեր աշխարհիկ գրուածների մէջ անդրանիկներից մինը, ուր իշխողն արևելեան լեզուն է թէև, բայց արևմտեան ձևերն ու գրաբարն էլ հաւասար չափով կողք-կողքի առաջ են ընթանում, այսինքն այդտեղ երևում են այն ամեն ձևերն որ գործածական էին Ներս. դպրոցում: Լեզուի այս խառնակ և անորոշ պատկերը, ուր միաժամանակ գործ են ածում թէ գրաբար թէ արևելեան և թէ արևմտեան ձևեր, ներկայացնում է մեզ դարձեալ Ներս. դպրոցի անդրանիկ սաներից մինը, Ստ. քհ. Մանգլինեան: «Մեղու Հայաստանի» լրագրի և հայ թատրոնի հիմնադի-

*) Տես Քնար. Հայկ. 131 երես:

քը և աշխարհաբարի վետերաններից մինը: 1859 թ. նա Ներս. դպրոցում տպել տուաւ մի գիրք, «Հայելի դաստիարակութեան տղայոց», որի միայն երկրորդ կէսն է մեր ձեռը հասել: Դա պարունակում է խրատական պատմութիւններ մանուկների և նրանց դաստիարակութեան համար. թուականը թէպէտ մի քիչ ուշէ, և այդ ժամանակներն արդէն կային շատ մաքուր աշխարհաբարներ, բայց Մանգլինեանը երևում է այն մարդկանցից, որոնք ինչ որ լսել ու կարդացել են, առանց ընտրութեան և մշակման ներկայացնում են ընթերցողին, դառնալով իրանց ժամանակի ճշտագոյն հայելին... նա Ներսէս Ե-ի քարտուղարն էր:

Աբովեանի ընկերներից էր և Պետրոս Մաղաթեան Սէյազը, որ վերջը զինուորական դառաւ: Նա Նա ըստ ցանկութեան, գրում էր և՛ գրաբար և՛ զանազան բարբառներով. մաքուր գրած աշխարհաբարի մէջն էլ անպակաս չեն արեւմտեան ձևեր, որոնք կամ ոտքի համար են դրուած և կամ արդիւնք են այն լեզուին, որ նա սովորել էր Ներս. դպրոցում *):

Սրանց մէջ գերազանց գիրք ստացաւ և յայտնի դարձաւ Ստ. Նազարեանը, որը դպրոցից տարած գաղափարը թէպէտ ուշ, բայց արտայայտել սկսաւ ամենից եռանդուն, ամենից աւելի հեղինակօրէն: Դեռ իր ուսներէն և գրաբար գրքերի առաջաբանումն էր նա քարոզում աշխարհաբարի անհրաժեշտութիւնը. ապա 1853-ին նա տպեց աշխարհաբար «Վարդապետարան» և «առաջին հոգեղէն կերակուր» — աշխարհա-

*) Նրա ոտանաւորները տպուած են Քնար Հայկականում և մի քանի անգամ հրատարակուած առանձին:

բար դասագիրքը, իսկ 1857 հրատարակեց մի բազմահարուստ ժողովածու, «Հանգէս նոր հայախօսութեան» — ծայր է ի ծայր աշխարհաբար: Դա լեզուի կողմից մի քանի քայլ ետ էր մնացել, որովհետեւ Նազարեանը կեանքից կտրուած մի թէօրէթիկոս էր: Հայքենիքից հեռանալով դեռ 30 թուականներին նա հեռուից միայն ստեղծել էր ցանկանում այն լեզուն, որ արդէն կար, անհամեմատ թեթեւ ու ձկուն, քան իր գրածներն էին: Նրա լեզուն գրաբարի Թիֆլ. և Արաբատեան բարբառի մի անաջող խառնուրդն է: Մեր լեզուի զարգացման պատմութեան մէջ, սակայն, նրան է պատկանում ամենափայլուն էջերից մինը, որովհետեւ 1858-ից նա սկսաւ հրատարակել «Հիւսիսափայլ» ամսագիրը, որ ուր տարիների ընթացքում իր բազմաթիւ աշխատակիցներով, իր նիւթով ու ձևով, իր պարունակով թեամբ ու գաղափարներով նորանոր բառերի և արտայայտութիւնների մի շտեմարան էր, թէպէտ ո՛չ միշտ աջող հայաբան: Նազարեանն աշխարհիկ լեզուի համար ամենից շատ հրապարակով մարտնչողն է եղել, ուստի արժանապէս համարուում է մեր նոր լեզուի առաջին հիմնադիրներից մինը...

Մի նմուշ Նազարեանի լեզուից որ գրուած է Հիւսիսափայլից առաջ.

Կայիտս հոռմայեցի ասպետը գնացել էր Սերակոս, ոչ թէ դործի աղագաւ, այլ անգործ վայելչութիւն տեսանելու համար, ինչպէս և ինքը ասում էր: Այս տեղ և այնտեղ ծանուցումն արեց, թէ կամք ունեւմ մի փոքր այգի գնելու, ինչ տեղ կարող էի հրաւիրել եմ բարեկամները և զուարճանալ առանց խափանարկութեան» (հանգ. նոր հայախ. եր. 50.)

«Վեցանկիւնի բջիջները շտեմարանք էին կէս մի մեղր

պահելու համար, և կէս մի բոյներ շինելու ձագերի կամ գալոց սերունդի համար: Նոցա մէջ թագուհին, բոլոր ամառան միջոցումը, դնում է 30 մինչև 40 հազար ձու. նախ և յառաջ դնում է նա այն ձուերը որոնցից յառաջանում են աշխատաւոր մեղուք, ապա այն ձուերը, որոնցից պիտոյ է ծնանէին որձամեղուքը... (նոյն 267 երես):

Սրանք այն անհատներն էին, որոնք իրանց տաղանդի և ձերքերի շնորհիւ երևան հանեցին իրանց շրջանի և իրանց ժամանակի ոգին:—Աշխարհաբարին քաղաքացիութեան տալն էր նրանց ջանքը և նրա ընդունուիլը: Սրանք կոռուողներ, կարապետներ էին, որոնք իրանց յետևն ունէին համեմատաբար մի սըտուար բազմութիւն, մինչ 40-ական թուերն անշուշտ մի քանի հազար հոգի:

Ես բաղդ ունեցայ տեսնելու մի այդպիսի անհատ: Այս 1905 թ. ամառը գնալով Գօրու գաւառի Ախալքալաք աւանը, բնակուեցայ գիւղի քահանայ Տէր-Օհաննէս Տէր-Գալստեան Տէր-Աստուածատրեանի տանը:— Դա ինձ համար մի կատարեալ գիւտ էր. նա պատմեց, որ աւարտել է Ներսիսեան դպրոցն 1853-ին և անմիջապէս ձեռնադրուել է քահանայ հայրենի վիրախօս գիւղում, շատ քիչ անգամ առիթ ունենալով ենթարկուելու նոր զարգացող լեզուի ազդեցութեանը, որովհետև խօսել ու գործել է միշտ վրացերէն: Հայերէն նա առաջին անգամ լսել ու սովորել է Ներսիսեան դպրոցում, իր լեզուով ուրեմն նա մի կենդանի վկայ էր 40—50 թուականների լեզուին, որ խօսուում էր յիշեալ դպրոցում: Այն, ինչ որ նա էր խօսում, մեր պարզ ու մաքուր աշխարհաբարն էր մի քանի չնչին տարբերութեամբ. նա ասում էր, տուոց (տուեց) կարուց (կարեց) բերուց (բերեց),

ճիշտ այնպէս, ինչպէս խօսուած են Աշտարակ գիւղում, ուրեմն Առաջնորդ Ներսէսի լեզուն իշխողն է եղել Ներսիսեան դպրոցում 50-ական թուերին:

Բաղդի մի գուգադիպութեամբ մեզ հիւր է գալիս ծերունի Պերճ Պոռեանը, մեծ ուրախութիւն պատճառելով մասնաւորապէս ծերունի քահանային, որի դպրոցական ընկերն է եղել Պոռեանը: Այդ առթիւ Տէր-Հայրն յիշեց, որ պահած ունի Պերճի մի ձեռագիր տետրակը, իրան քահանային նուիրած և ուղեց մեր ներկայութեամբ կրկին մակագրել տալ, այժմ արդէն հանրածանօթ վիպասանի ձեռքով, նախնի անյայտ մի դպրոցաւարտի գիրը կրկին վաւերացնելու համար:

Բաց անելով տետրակը չենք կարողանում ծածկել մեր բուռն ծիծաղն ու քրքիջը ամենքս, ինկատի առնելով նրա վերին աստիճանի բնորոշ վերնագիրը:

Վերնագրից աւելին արդէն ինձ էր հետաքրքրական մասնաւորապէս իր ընտիր ու կոկ աշխարհաբար լեզուի պատճառով:

Դա այն դասագիրք տետրակներից էր, որոնք գործ էին անում Ներսիսեան դպրոցում և որոնցից ոմանք, ինչպէս յետոյ կըտեսնենք, տպագրուեցան էլ:

Այդ տետրակը կազմել է Գալուստ քհ. Փափազեանը յատկապէս Ներսիսեան դպրոցի աշակերտների համար, ուր նա ուսուցիչ էր: Դա մի քառածալ, մանրատառ տետրակ է, բաղկացած 157 երեսներից. դրաբար վերնագիրն է—«Նկեղեցական Պատմութիւն արարեալ ի Գալուստ քահանայէ Փափազեանց և արտագրեալ ի Յովհաննու Պրոշեանց Աշտարակեցոյ: Ըրժանապատիւ Յովհաննէս քահ. Տէր-Աստուածա-

տրեան նուէր խոնարհական: Ընկալլիք զայս ո՛վ հայր ի յիշատակ անմոռաց ցյաւիտեանս ժամանակաց: 1855-ի 18-ի ապրիլի Տփլիս յառաջնորդարանի հայոց: Խոնարհագոյն Ձեզ ծառայ Յովհ. Պրոշեանց Աշտա-րակեցի» *):

Կազմի տեղ ծառայող մի քանի անպէտք թղթե-րից յետոյ կայ և հետեեալ, ժամանակներն և մարդ-կանց բնորոշ ուսերէն վերնագիրը. «Церковная исто-рія Составленная священникомъ Галустомъ Папа-зовымъ, и переписанная Иваномъ Прошовымъ для священника Оганеза теръ-Асатурова въ память не выразыемой любви. Прими достопочтенный отецъ! этотъ малѣйшій подарокъ изъ глубины сердца мо-его».

Տեսրակը թէ՛ նիւթի և թէ՛ լեզուի կողմից հէնց այսօր էլ հնացած չի կարելի համարել. այնքան նա լաւ է կազմուած: Գաղափար տալու համար այդ լե-զուի մասին դնում ենք ահա մի նմուշ:

Գլուխ առաջին. Եկեղեցւոյ նիմուշիւր.

Քս. իւր սիրոյ գործը երկրիս վրայ կատարեց, իր կեան-քը շատերի փրկութեան համար զոհեց: Նրա մարմինը գերեզմանի մէջ դրուելով, մահուան կապերը խորտակեց.

Իւր փառաւոր յարութիւնիցը քառասուն օր յետոյ իւր հօր մօտ դարձաւ նրա աջակողմը նստելու համար: «Կնա-ցէք, ասում է իւր աշակերտներին, սովորեցրէք ամէն ազ-գերին, նոցա մկրտելով հօր որդւոյ և հոգոյն սրբոյ անու-

*) Տեսրակը գործադրուել է սրանց աշակերտութեան ժամանակ, մինչև 1853 թ. բայց արտագրուել է երկու տա-րով աւելի ուշ: Ուղղագրութիւնը թողնում ենք անփոփոխ:

նով»։ Ահա այս եղև նորա Աւետարանը՝ որն որ նոքա ժողովրդոց պիտի հաղորդեն, այս եղև նորա խաչը՝ որն որ նոքա կուսպաշտութեան աւերակների վրայ, սրանցմով ամբողջ աշխարհը ծածկուած էր, պիտի հաստատեն։ Բայց ի՞նչպէս պիտի արդիւնաւորեն նոքա էս տարապայման գործը, բաւական է նոցա լուկ պատուէրը Քրիստոսի. չէ պէտք նոցա մին երկնային լոյս, որպէս զի նոցա սիրտը նորոգէ և ճշմարտութիւնը ուսուցանէ, և նոցա մահուան դէմ չարչարանաց դէմ արշաւելու կարողանան։ Նա՛ որը որ նոցա ասել էր զնացէք, նոցա ասել էր նոյպէս, ինձի ամեն իշխանութիւնը տուած է երկնքի մէջ և երկրիս վրայ։

Հայր Յովհաննիսի արխիւիւն ենք պարտական այլ չորս հատ մեծ և փոքր տետրակներ, որոնք աւանդուել են Ներսիսեան դպրոցում՝ մինչև 1853 թ., դրանք բոլորն էլ աշխարհաբար են. երեքը կրօնական բովանդակութեամբ՝ իսկ չորրորդը ֆիզիքայի տետր է, ուր խօսուում է յատկապէս ջերմութեան մասին։

Բացման հետ, Ներսէսը մատակարարեց իր դըպրոցը նաև տպարանով, որ առաջին հայ տպարանն էր Թիֆլիզում։ Այդտեղ բացի այլ և այլ գրքերից, տըպուում էին նաև այն դասագրքերը, որոնք հաւանութիւն էին ստացել գործադրուելու Ներսիսեան դըպրոցում։ Բարեբաղդաբար մեր ձեռն են հասել այդպիսի երկու դասագիրք, որոնցից առաջինը հետեւեալ վերնագիրն ունի. — «Նոր այբենարան, կամ սկիզբն ընթերցանութեան հայոց. — գիրք առաջին. Թիֆլիզ 1855 թ. 'ի տպարանի Ներսիսեան հոգևոր դպրոցի»։ Այստեղ աշխարհաբար թեթև վարժութիւններից յետոյ աստիճանաբար անցնում է գրաբար աղօթքնե-

ըին... երկրորդ գիրքն որ աւելի կարեւոր ու նշանաւոր, աւելի խնամքով ու հոգածութեամբ է կազմած, հետեւեալ վերնագիրն ունի. «Բարոյական խրատք և *) հատուածք արձակք և չափաւորք ի պէտս ընթերցանութեան մանկանց. գիրք երկրորդ. 1855 թ. Թիֆլիզ, Ներսիսեան դպրոցի տպարանում»: Սա մանուկների համար կազմած մի դասագիրք է, որ աստիճանաբար, աշխարհաբարից տանում է դէպի գրաբարը. հեղինակի անուն չկայ, բայց երևում է խելք և հմտութիւն, ճշակ և գիտութիւն (Արդեօք Շանշեանի մատը չէ՞ որ մշակել ու դասաւորել է նիւթը):

Կարեւորն այն է, որ սա կոչւում է «Երկրորդ գիրք», ուրեմն ունեցել է և առաջինը.— Բովանդակութեանը նայելով, սա ուսուցման երրորդ տարուայ նիւթ պիտի եղած լինի:

Աշխարհաբարը, չեմ ասում այն ժամանակուայ, այլ նոյն իսկ ներկայիս համար կարող է օրինակելի

*) Սրանից առաջ և անհամեմատ աւելի հմուտ ու մանկավարժօրէն էր կազմուած Խ. Աբովեանի Այբենարանը, փոքրիկ խրատական անեկդոտներով և յօդուածներով. այդ գրքոյի մի հագուագիւտ օրինակն ամբողջովին մենք տեսել ենք մի պարոնի մօտ: Առաջաբանն, ուր Աբովեանը բացատրում է դասաւանդման եղանակը, գրաբար է, յօդուածներն աշխարհաբար (Արարատեան բարբառով) կան և մի քանի գրաբար աղօթքներ: Լեզուին նայելով, գիրքը գրուած պիտի լինի 1835-ից յետոյ, բայց ոչ ուշ 1840-ից, երբ գրուեց «Վէրք-Հայաստանի»-ն: Ինչպէս յայտնի է, այս դասագիրքը գործադրութիւն չգտաւ, որովհետեւ ժամանակի հոգևորականութիւնն արգելեց այն՝ իբրեւ ֆրասակար նորմութիւն:

համարել, այնքան նա կազմուած է խելացի, քերականօրէն և հմտօրէն, որ ընթերցողը կը տեսնի հետեւեալ հատուածից:

Ա Ղ Խ ա ր ճ ա բ ա Ր Ի ն մ ո յ Ղ

«Զարթիր, զարթիր սիրելի մանուկդ իմ, զարթիր և մտիկ տուր դէպի երկինքը: Ո՛հ, ի՜նչ գեղեցիկ տեսարան է. մտիկ արա արեգակի դուռ գալուն: Էս լուսափայլ մարմինը վեհ հսկայի պէս սկսում է իրա ընթացքը:

Մարդս արեգակի դուռ գալը տեսնելուց՝ կարծում է թէ աշխարհքս նոր է ստեղծւում: Հէնց իրա առաջին ճառագայթները ծագելուց՝ ամեն բանը նորոգւում է, ամեն բանը գեղեցկանում և պայծառանում է: Երկինքը կրակ է է կտրւում, լեռների գլուխները ռսկոյ գոյն են դառնում, անտառները զարդարւում են կանաչագեղ գուներով, դաշտերը կենդանանում են, ծաղիկները իրանց կոկոնները բանալով՝ սքանչելի անուշահոտութիւն են բուրում: Խոտի վրայ գիշերը վեր (վէր) եկած ցօղի հատերը՝ կարծես թէ մէկ-մէկ անդամանդ ընեն:

Թռչունքները իրանց քաղցր և գեղեցիկ երգերով հրնչեցնում են օդը: Ո՛հ, էն ժամանակը ի՜նչպէս սքանչելի է բնութիւնը: Աչքդ որ կողմն որ դարձնես՝ ամեն մէկ արարած՝ Արարչի մեծ վայելչութիւնն և փառքն է քարոզում, և որպէս թէ մեզ էլ հրաւիրում են որ իրանց հետ միանալով՝ Աստծուն գովենք և փառք տանք»:

Սա մի լեզու է, որ իր նմանը չունի հէնց ներկայում. աշխարհաբարի իսկական գտումն ու բիւրեղացումն է դա, ուստի և այս դասագիրքը աշխարհաբարի ամենամեծ հիմնաքարերից միւնը: Յ'արդ մեր լեզուի օրէնքներն ու ոգին ոչ ոք է հասկացել այնպէս հիմնաւոր, ինչպէս այդ հասկացել է այս դասագիրքի անյայտ յօրինողը: Գրաբարի ճշշող ազդեցու-

Թիւնը, արեւմտեան լեզուով երևան եկած մամուլն և արեւմտահայ ուսուցիչները ներսիսեան դպրոցում և այլուր, լեզուից տգէտ, բայց ազդեցիկ ու տաղանդաւոր անձինք չկարողացան ճանաչել այդ նոր-նոր գտնուած ու բիւրեղացած վտակը, որ կարկաչելու վրայ էր ներսիսեան դպրոցում և հէնց այնտեղ, բնում, ամեն ջանք թափեցին այդ վտակը պղտորելու և խառնակելու, որ ցոյց կարելի է տալ փաստօրէն. այսպէս՝ մեր ձեռն է հասել և մի պաշտօնական դօկումենտ. «Ակա կամ տարեկան հանգէս ներսիսեան հոգևոր դպրոցի հայոց Թիֆլիզոյ»—1853 թ. մարտի 17-ին կատարուած: Առաջին երեք թղթում գրաբար նկարագրում է հանգէսը, ապա գալիս է մի խրոխտ ոճով և առոյգ լեզուով գրած աշխարհաբար ճառ, որ կարդացել է «Վերին դասարանի աշակերտ Յարութիւն Միրիմանեանց»: Սրան յաջորդում է հոգաբարձութեան տուած հաշիւը, նոյնպէս աշխարհաբար: Յարութիւն Միրիմանեանցն իր ճառի մէջ յիշում է, որ *sարի ու կէս առաջ ուրեմն* 1851-ին ինքը կրկին խօսած է եղել հանդիսականների առաջ, անշուշտ կրկին մի այնպիսի հանդիսի ժամանակ:—Ահա մի հատուած այդ ճառից.

«Աստուածագումար ժողով.

Կարելի է ոմանց ականջներին ծանր թուի այս վսեմ աստուածագումար անունը առլ ներկայ ժողովոյս: Կարելի է ոմանք այս բառը սեպհական համարեն մի միայն եկեղեցական սուրբ ժողովների, որոնք ժամանակ ժամանակ հաւաքեցան կամ հաւատոյ մասանց քննութեան համար և կամ եկեղեցական բարեգործութեանց մասին: Այլ ես, որ հաստատ հաւատում եմ Քրիստոսի անսուտ խոստմանցը, իմանալի աչօք տեսնում եմ Քրիստոսին մեր մէջ, ըս-

տորում ինքը խոստացաւ՝ «Ուր ժողովեսցին երկու կամ երեք յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»։ Խնդացէք, տեարք, Քրիստոս մեր մէջն է։ Զօրացիք, եղբարք, մեղ հետ է նա... Բարձրացուցէք ձեր հոգւոյ աչքը և անհրկաթաբար կը տեսնէք Քրիստոսին բաղմեալ այս հանդիսիս գահազլուի։ Բացէք մարմնոյ և մտաց աչքերդ, և տեսէք Քրիստոսի եկեղեցւոյ աւանդապահը, սրբազնագոյն հայրապետս իր հայրական քաղցր ակնարկութեամբը պըսակ այս հանդիսիս. մտիկ տուէք նորա պատկառելի կերպարանքին, որ իբրեւ մեծ, բաշմաշխատ երկրագործ, արեան քրտինք թափելով, վարել, ցանել, հնձել և այս կալիս մէջ հաւաքել է իւր պատուական հունձը և այժմ մին ուրախական հանգստեամբ մտիկ է տալի, թէ որքան և որպիսի արդիւնք է բերել իւր բազմամեալ անքուն աշխատանքը։ Զեզանից շատերը, տեարք, տարի ու կիս ատաջ այս իմաստութեան տաճարիս մէջ հաւաքուած լսեցիք այն ճառը, որը որ ես կարդացի բնաբան դնելով Սողոմոնի բանը «սկիզբն իմաստութեան երկիրդ տեառն»... Քրիստոնէութիւնը և ազգութիւնը լինելով իմ ներկայ ճառիս նիւթը, ջանացի իմ և Ձեր հեշտութեան համար մէկ մէկուց բաժանել և ջուկ-ջուկ խօսել ամէն մին մասին վրայ. բայց որչափ աշխատեցայ բաժանել իրարից այս երկու անբաժանելի նիւթը, հնար չիլաւ, և գրեթէ, այս նիւթի վրա խորհելու ժամանակս մին ձայն հասաւ ականջս... և այլն»։

Առոյգ, հուժկու և գեղեցիկ լեզու է այս, բայց նախկինի համեմատութեամբ մեծապէս պղտոր, խառնակ, ու շիտիթ, որովհետեւ քերականօրէն սա ոչ կանոնաւոր աշխարհաբար է, ոչ գրաբար, այլ երկուսի մի խառնուրդը։—

Այս հանդէսն ու հաշուետուութիւնն էլ մի նոր ապացոյց է, որ ներսիսեան դպրոցը հասարակու-

Թեան հետ խօսում և հաղորդակցում էր աշխարհաբար: Այս գրքի 47-երեսներից 35-ը աշխարհաբար է գրուած: Ներսիսեան դպրոցում ստեղծուած էին նոյն իսկ լաւագոյն պայմաններ մի ինքնուրոյն լեզու մշակելու և ստեղծելու համար, դա—որդեգրութիւնն էր: 40-ի չափ որդեգիրներ, կիսով չափ կղզիացած, ապրում էին Ներսիսեան դպրոցում արդէն հեռու ընտանեկան ռամիկ լեզուից, մի տեսակ ուսումնական համայնքի կեանքով, որ դասարանում խօսած ու լրսածը պիտի դարձնէր առօրեայ լեզու: Մի բաղդաւոր հանգամանքի շնորհիւ այդ լեզուն փակ չէր հասարակութեան համար, այլ «ամեն կերակրի Ներսիսեան դպրոցի ընդունակ սաները քարոզ էին խօսում Թիֆլիզի զանազան եկեղեցիներում, քարոզչութեան մէջ վարժուելու համար:»

Մեր ձեռնէ հասել այդպիսի մի քարոզի օրինակ, որ Ներսիսեան դպրոցի աշակերտներից մինն ասել է եկեղեցում տասն պատուիրանների մասին. Դա մի սեագրութիւն է, որ քարոզողը նախապատրաստել է շատ բան աւելացնելով ու ջնջելով, մի թանկագին նմուշ այն լեզուի, որ Ներսիսեան դպրոցի սանը գործ էր ածում հասարակութեան հետ հաղորդակցելիս: Թէպէտ տետրակի վրայ թուագրութիւն չկայ, բայց գրուած է 1853-ից առաջ—որովհետեւ պատկանում է մի աշակերտի, որ աւարտել է Ներս. դպրոցը 1853-ին:

Ահա մի նմուշ այդ քարոզից:

«Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քո ի վրայ մոտեաց». էս պատուիրանքով՝ Աստուած արգելում է, որ իրա անունը ամէն բանի վրայ չդնենք, և նրանով չերդ-

նուր և ցոյց է տալիս որ Աստուծոյ անունը շատ զգուշութեամբ պէտք է մեր բերանից հանել, ինչպէս Աստուածաշնչումը տեսնում ենք օրինակը երբոր խորայեւացիք Աստուծոյ անունը տալիս էին որչափ դողում և սարսափում էին. հրամայում է նոյնպէս նրա անունը տալիս ժամանակ սրտի մէջ զգալ նրա մեծութիւնը և սրբութիւնը և չծիծաղել. և փուչ բաների վրէն չլիշել նրա անունը»...

Թէ Ներսիսեան դպրոցում միայն աշակերտները չէին աշխարհաբար խօսող, սովորող ու գրող, պարզ է ինքնին: Նրանք անպայման պիտի ազդէին ուսուցիչների վրայ և հին սերնդին էլ տանէին իրանց հետ դա բխում է հէնց իրերի բնական ընթացքից: Լաւագոյն ապացոյցը Յակոբ վարժապետ Կարիկեանն է. նա էրզրումցի էր և կրթուած Կարապետ եպիսկոպոսի դպրոցում. 1838-ին երբ վերջինս առաջնորդ էր Թիֆլիզում, Ախալցխայից բերաւ իր նախկին էրզրումցի սաներին Յ. Կարիկեանին, Հ. Շահնազարեանին, Գ. Տէր-Աղէքսանդրեանին և Գ. Տէր-Յովհաննիսեանին իբրև ուսուցիչ Ներսիսեան դպրոցը: *) Այս Տաճկաստանցի ուսուցիչների, արևմտեան լրագիրների և մանաւանդ 1840 թուականից հրատարակուող բազմավէպի ազդեցութեամբ պէտք է բացատրել արևմտեան ձևերի ազդեցութիւնն ու յաճախակի կիրառութիւնը ժամանակակից աշխարհաբարում:— Այդ ուսուցիչների մէջ ամենից եռանդոտն ու ազդեցիկը Յակոբ վարժապետն էր. գիտուն, խոհուն, ու ճարտար. նա երկար ժամանակ աւանդում էր հայերէն, թունդ գրաբարիկոս և ինչպէս գիտենք նրա

*) Մալխասեան. Ներս դպրոցի պատմութ. 57.

աշակերտների վկայութիւններէց, մինը, ազգեցիկ և ամենալաւ ուսուցիչներէց:

Արդ, այդ հասուն ու կազմակերպուած մարդը, որ բացի գրաբարէց, ունէր իր սեփական մայրենի արեւմտեան լեզուն, 1853 թ. թարգմանում և տպել է տալիս Ներսիսեան դպրոցի մի այլ ուսուցչի Միքայէլ Պատկանեանի հետ «Ինկուիզիցիայ ի գալլուայ» — երկու հատորանոց գործը աշխարհաբար, տպուած Ներսիսեան դպրոցի տպարանում: Սա այն մարդն է որ մի տասը տարի առաջ գրաբար պիեսներ էր եղբերեզում. «Ի մահն Աբելի և ի զենումն Իսահակայ» *): Սրանք երկուսով ապա հրատարակեցին Ինկուիզիցիայի պատմութիւնն էլ աշխարհաբար լեզուով: 1857 թ. նա աշխարհիկ լեզուով մի առաջաբան գրեց երեք կաթոլիկ վարդապետների դարձի առթիւ **) այնպէս թեթեւ ու պարզ, այնքան գողտր և հաճելի, որ կարծես ներկայի մի ֆելեետօնիստը լինի: Այնուհետեւ նրա հրատարակած գործերը, նոյն իսկ գրաբարի վերաբերեալ՝ աշխարհաբար են, օր. Խորենացու բաղդատութեան առաջաբանը, 1858 թ. Շուշանիկ թատրերգութիւնը, 1860-ին և այլն...

Կարինեանի գործակից և մտերիմ ընկերն էր Միքայէլ Պատկանեանը, նոյնպէս ուսուցիչ Ներսիսեան դպրոցի, որ հրատարակեց հետեւեալ գիրքը. «Պարզև Մանկանց, աշխատասիրեալ ի Միքայէլ Սերովբեան Պատկանեանց, երկրորդ տպագրութիւն, 1856,

*) Տպուած Մոսկուայում. 1841 թ..

**) Պատմութիւն և պատճառք վերադարձի երէց վարդապետաց, կրկին տպագրեալ 1857 ամի Թիֆլիզ:

Թիֆլիզ»։ 110 երեսներից բաղկացած մի գիրք է դա, կարծեմ թարգմանութիւն ռուս. «Другъ дѣтей» գործից, որ աստիճանաբար պատմում է և սովորեցնում, թէ աշակերտն ինչպէս պիտի պահի իրան տանը, ուսումնարանում և այլուր։ Դա մի այնպիսի գեղեցիկ և խրատական գրուածք է, որ նիւթի թէ լեզուի կողմից հէնց այսօր կարող է մեր անպէտք դասագրքերից շատերին փոխարինել։ Ի նկատի ունենալով որ մեր ձեռք հասածը Երկրորդ տպագրութիւնն է, առաջինը առ սակաւը պէտք է ենթագրել մի 5 տարի առաջ տպուած, ուրեմն 1850-ին կամ աւելի վաղ... Ինչ ասել կուզի որ սա նոյնպէս եղել է դասագիրք և ընթերցանութեան գիրք հաւանօրէն ուսման շրջանից ու հինգերորդ տարիներում և անշուշտ շարունակութիւնն է եղել այն դասագրքերի, որ մենք յիշեցինք վերևը։

Այսպէս՝ հիմնադրութեան օրից, Ներսիսեան դպրոցը եղել է մի մկրտութեան աւագան, ուր ամբողջ հայութիւնը անխտիր, Պարիզից, Պարսկաստանից, Ասորախանից ու Մոսկուայից մինչև Պօլիս և Հայաստանի խորքերը, կոչ է արել հաւաքելու և ի մի խմբելու այն ամեն մտաւոր ոյժերը, որոնք կարող էին ուսուցանել կամ ուսանել։ Թէ ուսուցիչների և թէ աշակերտների խումբը մի հաւաքածու էր ամբողջ հայութեան։ Այդ դպրոցը սովորում էր և սովորեցնում, ստեղծում էր ու տարածում, ունէր տպարան, ունէր կենդանի հաղորդակցութիւն հասարակութեան հետ, հանդէսներով ու ակտերով, հոգաբարձական ժողովներով և ընտրութիւններով, կուսակցական վիճերով ու կռիւներով, բանաւոր ու քրտ-

ւոր, տպած և անտիպ գրասագրքերով, ընթերցանութեան գրքերով, հաշուետուութեամբ և ճառերով, մինչև իսկ քարոզներով եկեղեցիներում. նա կամայ-ակամայ ջերմանոցն եղաւ այն ծաղկի, որ յետոյ երևան եկաւ նրա սաների մէջ որպէս նրանց մտքերի և գաղափարների արտայայտիչ. — աշխարհիկ լեզուն էր դա:

Կուլտուրայի պատմութիւնից յայտնի է, որ գաղափարները զարգանալու, տարածուելու և ընդհանրանալու համար հարկաւոր է առ սակաւը մի 20—25 տարի: Ի նկատի ունենալով որ Ներսիսեան դպրոցը բացուել էր 1824-ին և արեւելեան լեզուի առաջին սերմարանն էր, այդ լեզուն ծլելով ու զարգանալով 1850 թուականներին անհրաժեշտօրէն պիտի յայտնէր իր գոյութեան իրաւունքը: Այն սերունդը որ կը թուել ու մեծացել էր այդ լեզուի հետ, առաջին կարապետը պիտի հանդիսանար նրա իրաւունքների համար կռուող, և Աբովեան ու Նազարեան, Սէյադ ու Ստ. Մանդինեան, Կարինեան ու Միքայէլ Պատկանեան, Շերմազանեան ու Միրիմանեան անհրաժեշտօրէն, առանց նոյն իսկ իրանց խորին գիտակցութեան պիտի հիմնադիր դառնային այն լեզուին, աւելի ճիշտ, պտուղը պիտի դառնային այն սերմերի, որոնք ցանուած էին նրանց մէջ Ներսիսեան դպրոցում... Ժամանակի բերմամբ, ժամանակը և իրերի բերմունքն է որ հերոսների ծնում, ոչ ընդհակառակը: Աբովեանը, որ իր նեարդային բնաւորութեամբ և տաք ու կրակոտ տեմպերամենտի շնորհիւ մի 10 տարով ժամանակից առաջ սկսաւ կռիւը, չնայելով որ տաղանդի կողմից գրեթէ մրցակից չունէր ոչ ընկերակիցների, ոչ էլ մօտիկ յաջորդների մէջ, այնպէս տուժեց, որ իր

գործը մի տասը տարով ուշացաւ բուն ժամանակից...

Լեզուն ուրեմն պատրաստ էր, ժամանակը հասունացած և յարմարաւոր: Հարկաւոր էր մի տաղանդ, որ այդ ամենն ի մի հաւաքէր, լուսամբովի ապակու նման կենդրոնացնելով իր մէջ խտացնէր և դուրս ցայտէր հասարակութիւնից առածը հասարակութեանը մատուցանելու, զտելով և համախմբելով իր անհատական դրոշմի տակ: Արեւելեան լեզուն սպասում էր իր Գանտէին և Պետրարկային, նա ծնեց, ու առաջնութեան դափնին խլեց նոյն իսկ Խ. Սքովեանից. դա Ռ. Պատկանեանն էր:

Սակայն, նրան ճանաչելու և նրա առաջ դալը հասկանալու համար, պէտք է նախ բաց անենք մեր պարբերական մամուլի պատմութեան սկիզբը, ասլա մի այլ դալրոցի պատմութեան էջերը, որ հիմնուած էր հեռաւոր Հիւսիսում. դա Լազարեան ճեմարանն էր:

ԳԼ. VII

Մ Ա Մ Ո Ւ Ն

19 դարու աչքն ու բերանը, պարբերական մամուլը, չէր կարող առանց ազդեցութեան մնալ հայ կեանքի և մտքի վրայ: Նա վաղուց արդէն գոյութիւն ունէր հայի գաղթավայրերում, թէպէտ զրաբար: 1839 թ. բողոքական միաբնակարաններն սկսում են Զմիւռնիայում «Շտեմարան պիտանի գիտելեաց» աշխարհիկ լեզուով թերթը: Դրանից մի տարի յետոյ, նոյն տեղը լուսաւորչական հայերի ձեռքով հրատարակուել է սկսում և «Արշալոյս Արարատեան» նոյնպէս աշխարհիկ, որին մինը միւսի յետևից յաջորդում են «Ազգարար Բիւզանդիան» Պոլսում 1840, «Բազմավէպ», 1843-ին Վենետիկում, «Հայրենասէր» և այլն... Այս թերթերը չէին կարող առանց ազդեցութեան մնալ արևելեան հայերի վրայ:

1847-ին՝ Թիֆլիզում՝ իշխան Վօրօնցօվի զբոսով մամբ լոյս է տեսնում «Кавказъ» ռուսերէն թերթը: Իշխանը կամենում էր, որ նոյնը տպուի նաև հայերէն, վրացերէն ու թուրքերէն լեզուներով: Վրացերէնի և թուրքերէնի համար յարմար խմբագիրներ

չեն գտնում, իսկ հայերէնի խմբագրութիւնն յանձնում են Ներսիսեան զպրոցի երկու յայտնի ուսուցիչներին—Միքայէլ Պատկանեանին և Լկոբ վարժապետ Կարինեանին: Սա արեւելահայ առաջին թերթն էր, այն էլ զրաբար. խմբագրւում էր բաւական չոր ու ցամաք, աշխատակիցներից գլխաւորն էր Գարբ. քհն. Պատկանեանը: Գծի տակ միայն, երբեմն, լոյս էին տեսնում աշխարհիկ լեզուով կամ գաւառաբարբառով բաւական հետաքրքրաշարժ յօդուածներ, ըստ մեծի մասին. Մ. Զոհրաբեանի զրչից, որ հրատարակած ունի նաև մի քանի զրաբար զրքեր (ըստ մեծի մասին ոտանաւոր): Սրանք անգրանիկ յօդուածներն էին աշխարհիկ լեզուով: Այդ թերթի կեանքը, սակայն, երկու տարի տևելով դադարեց, մինչև որ վրա եռանդուն աշխատակից Գարբ. քհն. Պատկանեանը, սեփական տպարանում հրատարակել սկսաւ «Արարատ» թերթը 1850-ի սեպտեմբեր ամսից աշխարհաբար լեզուով: Սա թէ լեզուի և թէ նիւթի կողմից անհամեմատ մատչելի էր ժողովրդին քան զրաբար «Կովկասը»:— Այս թերթի նիւթը կրօնաբարոյական զրոյցներ էին, մատչելի յօդուածներ Հայոց պատմութիւնից, ոտանաւորներ և բանաստեղծութիւններ:

Գարբիէլ քահանան ծնուել էր Թիֆլիզ 1802 թ. ապա մեծացել և ուսել էր Աստրախանի ուսաց սեմինարիայում. քահանայ էր ձեռնադրուել 1832-ին և քահանայագործել է Նոր Նախիջևանում. 1845-ին եկաւ Թիֆլիզ և ինչպէս տեսանք, աշխատակցում էր «Կովկասին»: 1860-ին նա տեսուչ էր Ներսիսեան զպրոցում, արեւմտահայ թերթերը, Ներսիսեան զրպրոցում, գոյութիւն ունեցող աշխարհիկ լեզուն և եղ-

բօր թերթի անաշողոթիւնն, ինչպէս երևում է, այն համոզմանը բերին Գաբրիէլ քահանային, որ հարկաւոր է աշխարհաբար լրագիր հիմնել: Թերթը հրատարակելիս նա 48 տարեկան էր. մի հասակ, որ թոյլ չի տալիս ոգևորուելու և ոչ էլ դիւրութեամբ նոր համոզումների ենթարկուելու, սակայն, ծերութեան շէմքին կանգնած զրաբարագէտ քահանան խզեց զրաբարի կապերը, ժողովրդին նոր թերթի հետ նոր լեզու տալու համար:

Ահա թէ նա ինչ է գրում լեզուի մասին իր թերթի № 2-ում.

«Արարտեան երկիրն իր համար յատուկ լեզուն չունի այժմ. նորա յատուկ լեզուն այն է, որ Երևանայ գաւառումն կամ Էջմիածնի չորս կողմն կը խօսին: Բայց եթէ փոքր ինչ հեռանաս այս միջակէտէն, Վրաստանի հայոց լեզուն կ'լսես, կամ Քիւրդիստանի, կամ Օսմանցոց...: Բայց առ ժամանակ հնազանդվեցանք հասարակաց կամեցողութեան, և սկսանք այն լեզուաւ գրել, որն որ մերձաւոր է Վրաստանի և Ասորախանայ կամ Ռուսաստանի լեզուին»:

Կարծիքն ու մտադրութիւնն իր կարգին, բայց այս լեզուի նմուշը ցոյց է տալիս, որ սա ոչ Ասորախանի լեզու է, ոչ էլ Վրաստանի, այլ մի բարելոնեան խառնուրդ զրաբար, արեւմտեան և արեւելեան ձևերի առհասարակ:

Այս թերթումն էր, որ առաջին անգամ գրել սկսաւ խմբագրի որդին, Ռափայէլ Պատկանեանը, զրաբար և աշխարհաբար ոտանաւորներ ու յօդուածներ: Ռափայէլի գրտչին էր պատկանում այն գրաբար ձօնը, որ գրուած էր Լազարեան տոհմի վերջին արու գաւակի մահուան առթիւ, Այդ ձօնն առանց

Թոյլտուութեան առնուած էր սև շրջանակի մէջ, որ-
պէս խորին սուգի նշան, որի պատճառով և մեր
անդրանիկ աշխարհիկ թերթը դադարման ենթար-
կուեց 1851-ին:—Այդտեղ էր, ի միջի այլոց, որ
Ռափայէլը տպեց իր անդրանիկ պօէման «մահ Զար-
մայր նահապետին» և մի քանի այլ ոտանաւորներ:

Այնուհետև բաւական երկար ժամանակով մենք
զրկւում ենք պարբերական մամուլից, որ վերստին
սկսւում է միայն 1858-ին Թիֆլիզում «Մեղու Հա-
յաստանի» և «Կռունկ» իսկ Մոսկուայում «Հիւսիսա-
փայլ» և դրաբար «Ճոպաղ» պարբերական թերթե-
րով:

ԳԼ. VIII

Լ. Ս. Զ. Ս. Բ. Ե. Ս. Ն. Ճ. Ե. Մ. Ս. Բ. Ս. Ն.

Դեռ 1815 թ. Լազարեանների փառաւոր տոհմը, որ Ռուսահայոց համար Մեղիչիսներէ տոհմն է եղել. Մոսկուայում հիմնել էր Լազարեան ճեմարանը, Հայ մանուկներ կրթելու համար: Լեզուի վերաբերեալ այնտեղ էլ պէտք է լինէին նոյն պայմաններն ու հանգամանքները, ինչ որ Ներսիսեան դպրոցում, եթէ նա այքան հեռու և կտրուած չլինէր մայրենի հողից: Մենք տարաբաղդաբար ծանօթ չենք Լազարեան ճեմարանի պատմութեանը, սակայն, զիտենք, որ նա փոքր ու սահմանափակ չափերով պիտի կարենար անել այն, ինչ որ աշխարհիկ լեզուի վերաբերմամբ կատարում էր Ներսիսեան դպրոցը աւելի լայն ու ընդարձակ չափերով:

Մենք տեսնենք, նր Ներսիսեան դպրոցում չէր իշխում որևէ բարբառ, այլ գոյացել էր այդ բարբառներից մի խառնուրդ, այն ինչ, վկայութիւն ունինք, որ Լազարեան ճեմարանում տիրում էր Սատրախանի բարբառը:

Անկասկած, Լազարեան ճեմարանում կար աւելի

գլխավորումն ու թէօրիա, մինչ ներսխեան դպրոցում աւելի իրականութիւնն ու կեանք: Նա օտար հողի և օտար երկնքի տակ արհեստաբար խնամուող ջերմոցի մի ծաղիկ էր, ու ազատ ու բնական պայմաններէ, իր կլիմայի և իր հողի մէջ աճող մի բոյս: Մի նոր լեզու այնտեղ չէր կարող աճել ու զարգանալ հէնց այն պատճառով, որ դասաւանդման լեզուն, բացի կրօնից և հայերէնից, եղել է ռուսերէն և օտար տարրը միշտ գերիշխող: Եթէ նա չունէր ստեղծելու պայմանները, սակայն, իր լայն ծրագրով և հիմնաւոր ուսմամբ զարգացնում էր իր սաների միտքը և լայնացնում նրանց աշխարհայեացքը. իսկ մի զարգացած ու կրթուած մարդ, եթէ նրա մէջ չէր մեռած հայութեան հոգին, չէր կարող չզգալ աշխարհաբարի պահանջը, ի նկատի ունենալով հէնց իրան ընտանի և սովոր Ռուսերէն լեզուն: Եթէ Լազարեան ձեմարանը լեզու չէր տալիս, հող գոնէ պատրաստում էր նոր սերմերի համար իր սաների մէջ և խնամքը մայրենի լեզուն մշակելով, ազնուացնելու, անպակաս է եղել այդ դպրոցում. վկայութիւն ունինք, որ

«Վեհազնեայ Աղա Յովակիմի լեզուի և արտասանութեան ձևերով և հանգուցեալ Աղայ Մարգարայ խոջենցի պարզ հայերէն խօսակցութեամբ՝ այն երկոց մայրաքաղաքաց և մանաւանդ այժմեան ձեմարանի մէջ հասարակեալ հայերէն լեզուի հիմը դրին. և այն լեզուն կարելի է Արարատեան լեզու անուանել, որ հեռի է կոպիտ աշխարհաբանէն և շատ մերձաւոր գրոց լեզուին, բայց առանց խրթնութեան՝ իւրաքանչիւր բան իւր սահմանուոր նշանակութիւնն ունենալով:

Եւ սրա պատճառն այն էր, որ ամենայն երկիրներէ

այն ճեմարանը աշակերտք հաւաքուեցան: Վարժապետքն ուշադրութեամբ ականջ էին դնում աշակերտաց խօսակցութեան, և նոցա լեզուէն հեռացնում էին ամենայն խորթ և անճոռնի գաւառական բառերն ու արտասանութիւններն. և որն որ լինում էր ախորժ և ըստ կանոնի, այն էին թողնում. այս պատճառաւ շուտ ժամանակի մէջ աշակերտաց զանազան գաւառական պարզ հայերէն խօսակցութիւնիցն կազմուեցաւ մի պարզ հայերէն լեզու, որն որ այժմ հասկանալի է թէ օսմանցւոց, թէ պարսից, թէ քրդստանի և թէ Վրաստանի հայոց. և իւրեան յատկութեամբն՝ աւելի մերձաւոր լինելով Երևանցւոց հայերէն պարզ լեզուին, արժանապէս կասուի Արարատեան լեզու»:

Այսպէս է գրում Գաբրիէլ քահանան 1850-ին «Արարատ» թերթի № 2-ում *): Եթէ փաստերը ճիշտ են, ապա այդ լեզուն Արարատեան անուանելը միանգամայն սխալ: Որդին, Ռ. Պատկանեանը, իր յիշողութիւնների մէջ, որ վերաբերում է 1843—49 թուերին, երբ նա աշակերտել է Լազարեան ճեմարանում, հետեւեալն է գրում.

«Մինչև 1843 թ. ճեմարանի աշակերտաց հայկական բարբառը պանազան պատճառներով աստրախանական էր. մենք կարծում էինք, թէ շատ սիրուն դուրս է գալիս, երբ որ միամիտ-ասում էինք՝ զնացիմ, բերամ, տըւամ, կերեցիմ, տըւեցիմ, եաղուզ, քըթացամ... բիրդան, հուշաթ և այլն... Հէնց որ Մ. Էմինը առաջին անգամ ոտքը կոխեց մեր դասարան, մեր խօսակցութեան լեզուն օրէց օր սկսաւ մաքրուելու, կանոնաւորուելու կոկուելու, շատ կամ սակաւ դաշնակաւորութիւն ստանալու, և ստացաւ այն կերպարանքը, որն որ մենք այսօր տեսնում ենք անարդարապէս արարատեան կոջուած բարբառումն, որ ըստ

*) Հ. Բ. Սարգսեան. Երկհարիւրամեայ գործն. Մխիթարեան. եր. 157.

ամենայն իրաւանց և արդարութեան պէտք էր մեմարանական բարբառ, անուանելու և որի, եթէ ոչ ստեղծողը, գէթ կերպարանք և շքեղութիւն տուողը Մ. Էմինին ճանաչելու *)

Ինչպէս տեսնում էք, որդին, որ անկասկած հօրից աւելի իրազեկ էր գործին, հերքում է հօր գրածը: Էմինի նշանակութիւնն էլ աշխարհաբարի վերաբերմամբ նա յայտնապէս չափազանցում է. Էմինն էր և միշտ մնաց աշխարհաբարի թշնամի և թունդ գրաբարիկոս. թէպէտ իբրև հայկաբան ուսուցիչ, անկասկած հոգ պիտէ տարած լինէր աշակերտների մաքուր հայախօսութեան վրայ:

Թէ աշխարհաբարի վերաբերմամբ մինչև 40-ական թուերը Լազարեան ճեմարանը, չնայելով մասնաւոր անհատների ջանքերին, որևէ խոշոր հետեանքի չկարողացաւ հասնել, երևում է Գէորգ Ախվերդեանի լեզուից, Սայաթ-Նովայի առաջաբանում: Նա ծնաւ Թիֆլիս 1818-ին. 1830-ին նա արդէն Լազարեան ճեմ. սան էր. 1834-ին աւարտելով, մտաւ համալսարան և 1839-ին ստացաւ զինուորական բժշկի պաշտօն: 1846-ին հաստատուեց Թիֆլիս և 1848-ին հոգաբարձու էր Ներս. գալը:

Այդ ժամանակներն էր, որ նա հաւաքել սկսաւ հայ-աշուղների երգերը և կորուստից ազատեց Սայաթ-Նովային մի հիանալի հրատարակութեամբ 1852-ին, որ կարելի է ակադեմիական անուանել:

Ախվերդեանն իր ժամանակի ամենախոհեմ և բազմակողմանի զարգացած անձերից մինն է եղել: Նա

*) Ռ. Պատկանեան. Երկասիրութիւններ, III հ. 1905 թ. Ռօստով, եր. 11.

նչ միայն մասնագետ բժիշկ, այլև մի բանիբուն և հմուտ լեզուագետ էր. 1850-ին նա գրում է Սայաթ Նովային առաջաբան, ուր թէպէտ զգալի է թիֆլիզի բարբառի գերլիշխանութիւնը, բայց զերծ չէ զրաբար ու նոյն իսկ արևմտեան ձևերից:

Զարմանալի է նրա լեզուաբանական հմտութիւնը զրաբարի և ներկայ բարբառների մէջ: Հրմտութիւն, որի տակն հէնց այսօր ամեն մի լեզուաբան երկու ձեռքով կստորագրէ: Թիֆլիզի բարբառը նա գիտէ հիմնովին և տալիս է նրա քերականութիւնը, որ կազմուած է հմտօրէն:

Այս գրքով Ախվերդեանն առիթ տուաւ ուրիշներին էլ հրատարակելու մեր անուանի աշուղներէ գործերը, որ մենք յետոյ կտեսնենք ըստ կարգին:

Լազարեան ճեմարանի երկրորդ սանը, որին վիճակուած էր մեծ դեր խաղալու մեր լեզուի և զրականութեան պատմութեան մէջ, Ռափայէլ Պատկանեանն էր:

Նա ծնունդ էր մի այնպիսի ընտանիքի, որի նմանը մենք քիչ ենք ունեցել: Նա ծնաւ 1830 թ. Նոր-Նախիջևանում, աշակերտեց իր տաղանդաւոր հօր մօտ, ապա տասնամեայ ուղևորուեց Լազարեան ճեմարանը, ուր սովորեց մինչև 1849 թ. աշակերտելով հռչակաւոր էմինին:

Նոյն թուին, առանց աւարտելու Լազարեան ճեմարանը, նա զալիս է Թիֆլիզ, Ներսիսեան դպրոցն իբրև ուսուցիչ, ուր տեսուչ էր իր հայրը: 1850-ին, տեսանք, որ սկսաւ աշխատակցել հօր հրատարակած «Արարատ» աշխարհաբար թերթին, ուր երիտասարդ որդին տպագրեց ռուսերէնից թարգմանած անդրա-

նիկ ոտանաւորը, «Թռչնակ», գրաբար լեզուով: Այդ ոտանաւորի մէջ պէտք է տեսնել Լազարեան ճեմարանի ազդեցութիւնը, անհաւանական չէ մինչև անգամ, որ դա թարգմանուած լինէր նոյն իսկ աշակերտութեան ժամանակ Լազարեան ճեմարանում:

Թիֆլիզում այդ ժամանակ այլ հովեր էին տիրում. Ներսիսեան դպրոցում նա գտաւ մի կազմ ու պատրաստ լեզուի բոլոր տարրերը թէ՛ աշակերտների և թէ՛ ուսուցիչների մէջ: Նա պարտաւորաբար ալիտի սովորէր այդ լեզուն, աւանդելու համար իր դասերը: Նրան այնտեղ պաշտօնակից էին իր ազգական Միքայէլ Պատկանեանը և Յակոբ Կաբինեանը, որոնք «Կովկաս» գրաբար թերթը թողած, մտամտում էին աշխարհաբար սկսելու և զբաղուած էին աշխարհաբար թարգմանութիւններով և դասագրքեր հրատարակելով:

Հայրը, երեւի գրաբարիկոս, տեսանք, սկսել էր մի աշխատհարաւ թերթ: Ռափայէլը չէր կարող չենթարկուել նրա ազդեցութեան և թարգմանութիւնն ու գրաբարը թողած, անմիջապէս յարում է նոր-գաղափարին, աշխարհիկ լեզուի յաղթանակին:

Ունէր արդեօք նա կամք ու պատրաստութիւն, տաղանդ և ընդունակութիւն ծառայելու այն գաղափարին, որի առաջ գլուխ էր խոնարհել իր արդէն հասակաւոր ու փորձառու հայրը:

Այո, նրան ժամանակակից չկար մէկը, որ աւելի լաւ պայմաններում ծնուած ու դաստիարակուած լինէր այդ կռուի մէջ յաղթանակով դուրս գալու համար: Նա ծնունդով արեւմտահայ էր և մայրենի լեզուն արեւմտեան (Նոր-Նախիջևանի) բարբառ:

Լազարեան ճեմարանում նա լայն աշխարհիկ կրթութեան հետ ստացաւ և հիմնաւոր գիտութիւն գրաբար լեզուի. (մենք այդ տեսանք գրաբար գրած ոտանաւորից) և գործնական ծանօթութիւն Ասորա-խանի բարբառի: Թիֆլիզում նա ծանօթացաւ տիրող հովերի հետ և տեղական բարբառին ու նաև Հայաստանի այլ բարբառներին, որոնք միշտ մեծ թուով խօսողներ ունեցել են և ունին այդ կօսմօ-պօլիտ քաղաքում:

Առաջինը և ամենից շատ պիտի ազդէր նրա վրայ հայրը, և այդ ազդեցութիւնն էր պատճառը, որ Ռափայէլն հինգ այլ ոտանաւոր տպեց հօր թերթում, բոլորն էլ աշխարհաբար:

Ժամանակի ընդհանուր լեզուն մի խառնուրդ էր գրաբար, արևմտեան և արևելեան ձևերի, այս կամ այն բարբառի գերիշխանութեամբ, նայելով գրողի հայրենիքին. հայրն այդ ուղղութեան էր պատկա-նում, որդին զերծ չէր կարող լինել հօր և միջավայ-րի ճնշող ազդեցութիւնից, «Զարմայր-նահապետի» մէջ երևում են հետքերն արևմտեան լեզուի, այն ինչ, միւս ոտանաւորների մէջ, «Շինականի առաւօտեան երգը և Շինականի երեկոյեան երգը»—իշխողը արևե-լեան լեզուն է, արևմտեանի թեթև խառնուրդով: 1851—52-ին մենք Ռափայէլին տեսնում ենք Դու-պատում: Այդ քաղաքն էր իսկապէս, որ կռեց ու կո-փեց Ռափայէլի դեռ ևս տարտամ ու անորոշ գաղա-փարները, տալով նրան գոյն ու համոզում:

ԳԼ. IX

Պ Ո Ր Պ Ա Տ

Աբովեանի, Նազարեանի, Պատկանեանների և այլոց անուններն այնպէս սերտ կապուած են այդ հիւսիսային փոքրիկ քաղաքի հետ, որ առանց Դորպատ անուան անհասկանալի է մնում մեր վերածննդեան կարապետների կեանքն ու կոչումը, քանի որ այդ քաղաքն այն եղաւ մեզ համար, ինչ որ Աթէնքն ու Ադեքսանդրիան էին հնումը հայութեան համար: Ասիական խաւար ու կաշկանդիչ կապերից ազատուած մեր մատաղ սերնդի մարմինն ու հոգին, միտքն ու երեւակայութիւնը գերմանական համալսարանում գտաւ մի ընդարձակ ուկիիան գիտութեամբ յագեցնալու, մի վեհ ու բարոյական միջավայր քաղաքակրթութելու և չփչանալու, մի և նոյն ժամանակ մի չտեսնուած հիւրընկալութիւն և հիւրասիրութիւն, մի անօրինակ ուշադրութիւն ու խնամք, գերմանացի պրօֆեսօրների կողմից դէպի հայ-ազգի կիսակիրթ զաւակները:

Այդ համալսարանում ստեղծուած էին ամեն յարմարութիւն կղզիանալու, կենդրոնանալու, զարգանալու մտածելու և զուարճանալու, նորանոր

գաղափարներ իւրացնելու, յղանալու և մշակելու... և այդ ամենը ապա քարոզելու, գրելու կամ երգելու: Այնքան մեծ էր այդ միջավայրի ազդեցութիւնը Դորպատում կրթուածների վրայ գերմանական կուլտուրան տարածելու համար մեր մէջ, որ առաջին աւարտողները գերմանուհի կանայք առան մի տւելի ազնիւ և կուլտուրական սերունդ տալու համար հայ ազգին: Այդ ամենը շատ լաւ էր յայտնի Լազարեաններին, որոնք որոշեցին մի խումբ հայ ուսանողներ ուղարկել Դորպատ կատարելագործուելու, որ ապա ծառայեն ազգի լուսաւորութեան գործին:

Երբ Լազարեան ճեմարանի սաները հեղեղեցին Դորպատ, այնտեղ էին արդէն Աբովեանի անդրանիկ աշակերտները և երկու մկրտութեան աւագանները, Ներսիսեան դպրոց ու Լազարեան ճեմարան միացան Դորպատում, դեռ ևս մանուկ գաղափարները հասունացնելու, տարտամ ցնորները կենդանացնելու և ցանկութիւնները կամք, տենչանքներն իրականութիւն դարձնելու: Եւ որովհետեւ ժամանակակից մտքերի մագիստրալը պտտւում էր նոր-աշխարհիկ լեզուի շուրջը, Դորպատը ամենալաւ միջավայրն էր այդ մատաղ տունը հասունացնելու և այնտեղ էր, որ հասունացաւ ու կազմակերպուեց մեր ուրախ ուսանողական և վառվռուն ազգասիրական երգը: Մի անգամ էր որ դուրս եկան մի շարք բանաստեղծներ, հրապարակախօսներ, թարգմանիչներ, ուսուցիչներ և հասարակական գործիչներ, որոնք մի նոր կեանք և մի նոր գրականութիւն ստեղծեցին մեզ համար:

Դորպատի ուսանողներէց մինն այսպէս է գրում այդ շրջանի մասին.

«Սոսչատուր Աբովեանը և Ստեփաննոս Նազարեանը, որպէս Դորպատի առաջին ուսանողներ այնպէս էին ներգրծել հայ երիտասարդների վրայ առաջինը Կովկասում, երկրորդը Մոսկովում, այնպէս ոգևորել նոցա գերմանական ուսում և գիտութիւն ձեռք բերելու, որ դոքա գիմնազիաներից և Լազարեան ճեմարանից դուրս գալով դնում էին Դորպատ... Այդտեղ գերմանացոց ազդեցութեամբ սկսեց զարգանալ հայ ուսանողութեան մէջ ինքնաձանաչութեան զգացմունքը և հէնց այդ էր պատճառը, որ օտար լեզուները հետ գուզընթացաբար սկսեցին ուսանել հայերէնը և մշակել աշխարհաբար լեզուն... «Վէրք Հայաստանի» մի ձեռագիր օրինակը գտնուելով Գ. Աթիմեանի մօտ, որ Աբովեանի աշակերտներիցն էր, բնթերցանութեան եւ սգեւորութեան նիւթ էր տալիս ուսումնասիրելու լեզուն, վառուել հայրենեաց սիրով: Ամին մէկը ձգտում էր բանաստեղծական երկեր գրելու մորթուելու և ով որ տաղանդ ունէր, զարգացնում էր:

Կասկած չկայ, որ այդքան երիտասարդներ ժողովուած մի տեղ, միանման գաղափարներով վառուած, պէտք է օղը թնդացնէին երգելով «ով չգլխե հայերեհ, սգ ծանաջեկա (օրեկ)»... Սրանք հիմք էին դրել աշխարհիկ լեզուին Դորպատում և լայն ծաւալ տուին, ու մի օրինաւոր ոճ կազմակերպեցին իրանց համար, որով կարողանում էին մինչև անգամ գիտական հարցերի մասին հայերէն խօսել... Դրանից մի քանիսը լինելով Խ. Աբովեանի աշակերտներից, վառ սրտով ոգևորուած էին նրա գաղափարներով: Հաստատել էին գրական երեկոյթներ և շաբաթը մէկ անգամ ժողովում էին Գէորգ Աթիմեանի մօտ, կարդում էին իրանց թարգմանութիւններն, ինքնուրոյն գրուածքներն և վիճում էին դրանց մասին:

Որովհետեւ նորեկներից շատերը (Թիֆլիզիք) դժուարանում էին հայերէն խօսել, այս պատճառով էլ որոշեցին հայերէն խօսելը պարտադիր դարձնել, որ և սրբութեամբ կատարում էին:

Մի նիստում կարդացուեց «Վէրք Հայաստանին», որ

լեզուի և զգացմունքների վերաբերմամբ մի յեղաշրջում առաջ բերեց և մեծ զարկ տուեց ուսանողների ևս աշխարհիկ լեզուի կանոնաւորութեանը»...

Այս շրջանն ընկաւ անա Ռափայէլ Պատկանեանը:

Դորապատի հայ ուսանողութեան ոսկէ դարն էր դա. այնտեղ էին Դողոխեանը, Քերոբէ Պատկանեանը, Փափագեանը, Միրիմանեանը և այլն... Շրջանի ազդեցութիւնն այնքան մեծ էր, որ դրանք բոլորն էլ յայտնի դարձան զրեթէ ուսանողական նշատարանից և Ռափայէլն ընկնելով այդտեղ իր հասակի ամենավառվուռն շրջանում, երբ նա հազիւ թեւակոխել էր 20—22 տարիքը, պիտի վերցնէր այն ամենն, ինչոր հնարաւոր էր, և պիտի արտայայտէր այն ամենից շնորհալի կերպով, եթէ զուրկ չէր տաղանդից ու եռանդից: «Վէրք-Հայաստանի» *) ընթերցումն անշուշտ մեծ տպաւորութիւն պիտի թողնէր նրա վրայ տալով աշխարհիկ կենդանի լեզուի լաւագոյն ճաշակը:

Այսպէս ուրեմն, Ռափայէլն ի ծնէ, դաստիարակութեամբ և թափառական կեանքի շնորհիւ ծանօթ էր հին ու նոր հայերէնին և արեւելեան ու արեւմտեան բարբառներին հիմնովին:

Ոչ ոք աւելի պատրաստութիւն և աւելի յարմարութիւն չունէր մի հարուածով փլելու զբարբառ արդէն քայքայուած շէնքը և նորածին մանկանն ազատելու տասնեակ տարիների երկունքից:

*) Թէ Ռափայէլը ծանօթ էր այդ գրքին տպագրութիւնից առաջ, փաստ է, որովհետեւ դեռ 1856-ին նա հրատարակեց «Աղասու երգը» «Ազգային երգարանում» այն ինչ «Վէրք Հայաստանին» 10յս տեսաւ 1858-ին:

Մի փոքրիկ տաղանդ էր հարկաւոր դրա համար և այդ տաղանդն ի բնէ կար Ռափայելի արեան մէջ: Նա, սակայն, համարձակութիւն չունեցաւ կամ աւելի ճիշտ, խոհեմութիւն ունեցաւ դուրս գալու ոչ մենմենակ ալ խմբովին և այն էլ կեղծ անունով:

Աշխարհաբարով հարցասիրուած անձերին յայտնի էր, որ լեզուն շինողն ու հիմնողը բանաստեղծ պիտի լինի. 40 – 50 թուերին որոնում էին ահա այդ բանաստեղծին. 50 թուականին էր, որ երկու հոգի միաժամանակ և միմեանցից անկախ հին հայկական վէպի նմուշները գտան-էմբն և Գաթրճեան: Դրանից երկու տարի յետոյ լոյս տեսաւ Սայաթ-Նովան, որ թէպէտ մեծ ժողովրդական բանաստեղծ էր, բայց լինելով գաւառաբան, չէր կարող ազգային բանաստեղծի կոչման արժանանալ: Ազգային բանաստեղծին սպասում էին և որոնում:

Եւ ահա, 1856-ին Պետերբուրգում լոյս է տեսնում մի այսպիսի գիրք. «Ազգային երգարան Հայոց» ծաղկաքաղ հին և նոր գործածական երգերու կամ տաղերու:»

Հեղինակի անուն չկայ, որին փոխարինում է մի նոր ու տարօրինակ, անհասկանալի և անծանօթ «Գաւառ-Քարիւղ» անունը: Այդ երգերի հետ կային նաև եղանակները, եւրոպական նօտաներով:

Այս երգարանը պարունակում է մօտ հարիւր քառասուն երգ-լեզուին սակաւածանօթ անհատն անգամ՝ աչքէ անցկացնելով պիտի նկատէ, որ դա զանազան անհատների և անձերի ստեղծագործութիւն է և սլարունակում է այնպիսի երգեր, որ թէև այն ժամանակուայ համար նոր, բայց մինչև այսօր նրանք կեն-

դանի և ամենաժողովրդական երգերից են: Այդտեղ էր Ծիծեռնակը, Հայոց աղջիկները, Աղասու երգը, Արաքսի արտասուքը և Մեզնից շատ առաջը, Գուռնիկը, Ասում ես գիմացիրը և այլն, թեև 139 երգ:

Սա այն երգիչ-բանաստեղծն էր, որին սպասում էր ժողովուրդը որպէս աշխարհաբարի հիմնադիր, սա մի անհատ չէր, այլ ընդհակառակը, ի մի հաւաքած, միասին փնջած ծաղիկների մի հաւաքածու, բուրակտ ու գեղեցիկ եղանակներով զարդարուն երգերի մի փունջ:

Այստեղ ի մի էին հաւաքուած աշխարհիկ լեզուի գոհարները սկսած ժողովրդական: ու աշուղայինից, մինչև ուսանողական և խորին անհատական տաղանդների արդիւնքը:

Գամառ Քաթիպա կեղծ անուան տակ ուրեմն այս գիրքը հասարակութեանը ներկայացնում էր հայտաղանդի ամբողջութիւնը, ուր աշուղն ու ժողովուրդը, ուսանողն ու բանաստեղծը, ձեռք-ձեռքի տուած գալիս էին ներկայացնելու ամենից անհրաժեշտն ու ամենից կարևորը, ժամանակակից հայութեան աշխարհիկ լեզուի ծաղիկ փունջը:

Գամառ Քաթիպա ռսելով, ուրեմն, յիսունական թուերին պէտք էր հասկանալ հայ տաղանդի հաւաքական և միացեալ արքայութիւնը, որի մէջ անհատաբար վերև էին խոյանում երկու փառահեղ գրուիս—Խաչատուր Աբովեանն ու Ռաֆայէլը:

Այդ երգերի լեզուն պարզ ու մատչելի էր. նիւթըն ուրախ-ուսանողական և կամ վառվռուն հայրենասիրական. եղանակները գեղեցիկ և հաճելի: Հասարակութիւնն այն ընդունեց հիացմունքով: Լեզուն օ-

դից իջաւ կեանքի մէջ, ուղեղներից մտաւ սրտերի մէջ, նա դառաւ արտայայտիչ զգացմունքի, նա ըսկսուեց երգողիչ և յաղթանակն արգէն տարել էր:

Հարց է, թիւ էր այդ Գամառ-Քաթիպան:—Հասարակութիւնը շատ ուշ, տասնեակ տարիներ յետոյ միայն իմացաւ, որ զա մի հաւաքական անուն է, Ռափայէլի և իր ընկերներն ազգ-անուան տառերից կազմուած *), և որովհետեւ այդ ընկերներն մէջ ամենից եռանդունն ու ընդունակը, ամենից աւելի գործին նուիրուածն ու տաղանդաւորը Ռափայէլն էր, իրաւամբ, նա վերջն իրան սեփականեց այդ անունը. անուն, որի հիմնողը, կազմակերպողն ինքը Ռափայէլն էր, որի շուրջը նա համախմբել իմացաւ ժամանակի գրեթէ բոլոր յայտնի ուժերը, գլխին կանգնած լինելով ինքը, որպէս ամենից տաղանդաւորն, ընդունակն ու եռանդոտը: Հարցը լուծուած էր հիանալի կերպով և 30-ական թուերին սկսուած երկունքն ազատուեց մի բաւական տարօրինակ մանուկով:

Այդ երգերն մէջ ամենից լաւերը ներշնչման խո-

*) Այդ ընկերներն էին, Գ-էորդ ՔԱՆԱՆԿԱՆ,
ԲԺԻՂԼ Մ-ԻՆԱՍ ԹԻՄՈՒԵԱՆ,
Ռ-ՐԱՓԱՅԷԼ ՊԱՆԿԱՆԿԱՆ.

Անունների ինիցիալներն մէջ աւելացրին մի-մի ա և դուրս եկաւ ԳաՄաՌ. Իսկ ազգանուններից վերցրին առաջին վանկերը, որից կազմուեց ՔԱ-ԹԻ-ՊԱ.—Քանանեանն ու Թիմուրեանը մէջ էին բերուած գլխաւորապէս նիւթական օգնութեան և գրքերը տարածելու համար: Աչքի ընկնողն այն է, որ Ռափայէլի անունն տաւերը վերջին տեղն են բռնում հրկուս բառումն էր:

բուժեամբ, պատկերներն պայծառութեամբ և հայրենասիրական թափով պատկանում էին Ռափայելի գրչին, որոնցից մէկն արդէն բաւական էր իսպառ անմահացնելու Ռափայելի անունը: Դա «Մայր Աւրաքսին» էր. որի մէջ ի մի ձուլեց Ռափայելը մեր ներկայ լեզուի քերականութիւնն ամբողջովին իր առաւելութիւններով ու պակասութիւններով:

Լեզուի կողմից դա չի ներկայացնում անհատական ոչ մի խոշոր գիծ. ինչպէս երգերի մէջ Ռափայելը մի հաւաքող էր, լեզուի մէջ էլ, նա 'ի մանկութենէ լսածն ու որոնածը, տեսածն ու սովորածը, արեւմտեան ու արևելեան ձևեր խառն գրաբարի հետ, ի մի փնջեց, վարպետօրէն ի մի պաղաղեց: Նա իր տաղանդի աւելնով հիւսեց այդ ամենը «Աւրաքսի արցունք»-ների մէջ, հեշտ ու սահուն, թեթև ու գուրեկան, մինչ այն չը տեսնուած պարզութեամբ, և ներկայացրեց հասարակութեանը:

Նա արժանացաւ ժամանակակից հայագէտ Բրոսսէի և Դիւլօրէի ուշադրութեանը, Փարիզում անմիջապէս թարգմանուեց ֆրանսերէն և չհանդիպեց որևէ դիմադրութեան: Հոգն ուրեմն պատրաստ էր, ժամանակը նպաստաւոր, և աջողութիւնն ապահովուած:

Ռափայելը կռիւն սկսեց խմբով և յաղթութիւնը տարաւ մենակ խլելով առաջնութեան դափնին այն անհատներից, որոնք նրանից առաջ և նրա հետ հող էին պատրաստել աշխարհաբարի յաղթանակն ապահովելու:

Նա արժանացաւ «Ազգային երգիչ» փառաւոր տիտղոսին, որին մեր մէջ դեռ ոչ ոք չի արժանացել:

Թէ «Աւրաքսի Արտասուքը» ժամանակի խտացած

ողևորութեան արդիւնք էր և ոչ անհատական մի արժանիք, երևում է նրանից, որ 24 տարեկան զրելով այդ երգը, Ռափայէլն այնուհետև քառասուն տարիների ընթացքում չարտադրեց մի այլ բան, որ ներշնչմամբ ու ոճով, զգացումների խորութեամբ ու թափով գերազանցէր «Արաքսին»:

Եթէ վերլուծենք և անդամահատենք այդ երգը նւթի և լեզուի կողմից, կ'տեսնենք, որ շատ քիչ բան է մնում Ռափայէլի անհատական տաղանդին յատուկ ընդդէմ Արովեանի, որ ծայրէ ի ծայր օրիգինալ է և ինքնուրոյն: «Մայր Արաքսի ամերով» արտայայտութիւնը, նմանութիւն է ուսու ժողովրդական երգին «Внизъ по Матусикѣ по Волгѣ». Երկրորդ այնպիսի կոպիտ սխալ կայ, որ չի կարելի բանաստեղծական չափազանցութեամբ ներելի դարձնել, «Մշտադալար ուռիներ». ուռին երբէք մշտադալար չէ:

Լեզուի կողմից ասացինք դա մի խառնուրդ է այն ամենին, ինչոր Ռափայէլը լսել ու սովորել էր ի մանկութիւնէ: Իր կրած բոլոր ազդեցութիւնները, որ ընդհանուր էր ժամանակակիցների համար, նա ամփոփեց Արաքսի մէջ առանց որևէ հետևականութեան: Բառերի մեծ մասը և ստուգաբանութիւնը գրաբար է, իսկ քերականութիւնը գրաբար, արևելեան և արևմտեան աշխարհաբար միաժամանակ:

Ամենից առաջ «Արաքս» — այսօր ընդհանրացած և սովորական դարձած անունը, հայերէն չէ, այլ եւրոպական կոչումն է, որ Ռափայէլի շնորհիւ դուրս վանեց հին հայկական «Նրասիս» կամ ներկայ ժողովր-

դական «Արագ» անունը: Ի պատիւ Ռափայէլի պէտք է ստենք, որ դա մի ճաշակաւոր փոխարինութիւն էր հին—«Երասխ» անուան տեղ, որի ժողովրդական աւելի դուրեկան ու փափուկ կոչումը, «Արագ» երեւանծանօթ էր նրան:

Լեզուն մի կատարեալ մոզայիկ է, որ կարելի է տեսնել հետեւեալ համեմատութիւններից:

Այսպէս՝ «Հին-հին դարուց», (գրաբար) պիտի լինէր՝ դարերից

«Ալեաց»—գրաբար — ալիքների. պարում եմ— փնտրում եմ, որոնում եմ:

«Դարիւ-դարիւ». Ազաթանգեղոսից վերցրած մի ոճէ. պիտի լինէր—դարերով: Ձկանց=ձկների.

«Այդ հարազատ ափերից» «Փախչում էի ափերէս» —(արեւմտեան ձև)=ափերիցս.

Սուրբ Ակոբի աղբիւրին (արեւմտեան)=աղբիւրի. Իմ ատելի օտարին (արեւմտեան)=օտարի.

Իւր նամաղը կատար է (գրաբար)=իւր նամազն է կատարում:

Իր սուրբ ծոցէն Արարատ (արեւմտեան) ծոցից:

«Իր զարդերով, իւր նամաղը»—Էսպես խօսեց յատակից, Այսպես կումնան պանդուխտ»: Հովիւք հովիւներ. դարևոր=դարաւոր. ուռցուց (արեւմտ.)=ուռցրեց:

Ես վերցրի միայն մի քանի բնորոշը. չեմ ասում թէ զբանք վատ են. մի քանիսը մինչև անգամ գեղեցիկ են, բայց չեն բխում ոտանաւորի անհրաժեշտութիւնից, այսինքն չեն կազմուած ստիպօրէն ոտքի համար, այլ լոկ քմահաճօրէն կամ աւելի ճիշտ աւա-

մայ: Իր կրած ազդեցութիւններից նա կազմել է մի գեղեցիկ մոզայիկ և տուել հասարակութեանը:

Քերականօրէն նա շատ յետէ Աբովեանից ևս առաւել այն լեզուից որ տեսանք Ներսիսեան դպրոցասազրքերում:

Լեզուի կողմից այս գրքում Արաքսին գերազանցում է Դոդոխեանի «Ծիծեռնակը» — թէպէտ նա էլ, ազատ չէ տարօրինակութիւններից. օր. առ/ի՛ր որ չի բացուած թառամեցայ». այն ինչ մի քանի տուն վերելը գործ է ածուած «Ասա՛, թող նստի լա» և այլն — ինքէ Դոդոխեանը շարունակէր բանաստեղծութիւններ գրել և մի քիչ եռանդ փոխ առնէր Ռափայէլից, անշուշտ մեր լեզուի պատմութեան մէջ առաջնակարգ տեղերից մինը պիտի գրաւէր:

Ինչ էլ լինէր այս կամ այն երգի պակասութիւնը, ամբողջովին առած, «Ազգային երգարանն» աշխարհաբար լեզուի առաջին ամենամեծ կոթողն է, ուր միաժամանակ հանդէս է դրուած կենդանի հայերգը: Կարիք չկար որ նա կարգացուէր. այդ երգերը երգւում ու տարածում էին բերնէ բերան, ամսագիրներից, լրագիրներից ու դասագրքերից շատ աւելի դիւրին և աշող: Զարմանալին այն է, որ յիսուն տարուայ ընթացքում գորպատեան երգերը ոչ մոռացուել են, ոչ էլ հնացել, այլ հէնց այսօր ամենից աւելի են երգւում և ամենամիայունն են մեր երգերի մէջ:

Ինչպէս որ Ներսիսեան դպրոցում Աբովեանն ու Նազարեանը մենակ չէին, այնպէս էլ Լազարեան ձեմարանից Ռափայէլը մենակ չէր, այլ ունէր ընկեր-

ներ, որոնք տոգորուած էին նոյն գաղափարներով. նրանցից առաջինը հէնց իր հօրեղբօր որդին էր. Քերոբէն, որ 1851 թ. Դորպարտում գրեց «Անսօն» գողտըրը ու գեղեցիկ ոտանաւորը մի կոկ և սահուն լեզուով: Սրանց ընկերներից էին և գալուստ քհ. ապա վարդապետ Փափագեանը (պօլսեցի) որ Դորպասն աւարտելուց յետոյ ուսուցիչ դառաւ Ներսիսեան և ապա Շուշու դպրոցներում: Սրա ձեռագիր դասագիրքն էր, որի մասին մենք խօսեցանք նախօրէն: Միրիմանեանը (Թիֆլիզցի) որ երգեց Հայոց աղջիկները, Միանասրեանը, որ հրատարակեց «Քընար-Հայկականը», Սիմէօնեանը, որ վերջը խմբագրեց «Մեղու Հայաստանին» և երկար ժամանակ տեսուչ էր Ներսիսեան դպրոցում: Ձեմ յիշում այլևս միւսներին, որոնք եթէ ոչ գրական, գոնէ հասարակային և դպրոցական ասպարէզներում գործելով՝ մեծապէս նպաստել են մեր վերածննդեան, հետևաբար և լեզուի զարգացմանը:

Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ Լազարեան ճեմարանի սաները կամ հաւաքող են չափական բանաստեղծութիւնների. Ախվերդեան, Քաթիպա, Ոսկան Յովհաննիսեան Միանասրեան և կամ բանաստեղծներ մի քանի սերունդ շարունակ. այսպէս՝ Գամառ Քաթիպայից յետոյ գալիս են Սատաթեան, Շահաղիզ ապա Յովհ. Յովհաննիսեան մինչև Լ. Մանուէլեան: Դրանց ամենի վարժապետն էր հոգով բանաստեղծ էմինը, որ հին հայ վէպի առաջին գտնողն էր:

Ներսիսեան դպրոցի սաներն ու աշակերտներն ընդհակառակը կամ հրապարակախօս են, նազարեան, Ստեփ. քհ. Մանդինեան և կամ վիպասաններ, Աբո-

վեան, Պոռչեան, Աղայեան: Յովհ. Թումանեանը կարծեմ առաջին բանաստեղծն է Ներսիսեան դպրոցից:

Թատրոնն էլ, արևելեան հայոց մէջ սկսուել է Ներսիսեան դպրոցի սաների կամ ուսուցիչների ձեռքով. Աբովեան (Ֆէօդօրա.) Ստ. քհ. Մանդինեան, Յակոբ. վարժ. Կարինեան և այլն...

Այս համեմատութիւնից անմիջապէս աչքի է ընկնում այն հանգամանքը, որ Լազարեան ճեմարանն աւելի զբաղուած էր արուեստով, այնինչ Ներս. դպրոցը կեանքի առօրեայ պահանջով: Այնտեղ մշակուեց չափականը, այստեղ կենդանի և գրաւոր պրօզան թատրոնի, քարոզի, դասագրքերի և կենդանի խօսակցութեան շնորհիւ:

ԳԼ. X

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Տպուած գրքերից ու յօդուածներէից շատ առաջ աշխարհիկ լեզուն պիտի գործադրուէր ու մշակուէր նամակագրութեամբ:

Հասարակ ժողովուրդն իր առօրեայ պէտքերի համար ոչ գրաբար պիտի կարենար գրել, ոչ էլ եթէ նոյն իսկ գրէր, հասկանալի պիտի դառնար: Սա այնքան պարզ է, որ բացատրութեան կարիք անգամ չ'կայ: Մենք տեսանք Զաքարիա Ազուլեցու օրագիրը 17 դարուց, տեսանք մի նմուշ Թադիաթեանի նամակից, մի նմուշ էլ վեր առնենք Ռափայէլ Պատկանեանի նամակներէից, որոնք մեր ներկայ պրօզայի գեղեցիկ նախորդներն են և վերին աստիճանի հարցասիրական հէնց նիւթի կտորից, որովհետեւ կենդանօրէն ներկայացնում են այն հայեացքներն ու գաղափարները, որոնցով առաջնորդոււմ էր Ռափայէլը լեզու մշակելիս: Նրա նամակները գրուած են 1854 թուից *):

*) Տես «Մուրճ» 1905 թ. Ռափայէլ Պատկանեանի նամակները:

«Քու իլլիզլիաները արտաքոյ քու կարծեացը, ինձ խիստ սովորական և հնարաւոր, և եթէ կամենում ես, կարեւոր երեւցան, գրում էր Ռափայէլը Գէորգ Քանանեանին. — Գամառ-Քաթիպան պիտի լինի ճիշտ պարբերական, պիտի ունենայ արդիւնք, պիտի լինի պատճառ մեծ հետեւանքներու: Գամառ Քաթիպան անպատճառ պիտի ունենայ ուղղութիւն ներքին պարունակութեան կողմանէ: Նա պիտի լինի մեր օրերու, սեպնական մեր կարծիքների և մեր նուիրական խորհուրդների արձագանքը. նորա կարդացողները թող չի գտնեն մէջը այնպիսի հատուածներ, որոնք կարող են պատճառ լինել Հային անգործ կենցաղ սիրող լինել, թող չի անեն նոցա կրօնասէր քրիստոնեայ, զաւակասէր կամ ընտանեւէր ծնող, այլ ամեն մի դուրս մէջ պարունակած յօդուածը թող կարողանայ արծարծել նոցա սրտի մէջ, եթէ ոչ ուղղակի կերպով հայրենասիրութիւնը, գտնէ թող յիշեցնեն նոցա կորցրած երջանկութիւնը. թող կամաց-կամաց սովորի պաղարիւն նայել այն մահուան վրայ, որ նա կարող է ստանալ գոհելով անձը ազգի ազատութեանը: Մէկ խօսքով այն զգացմունքները, որոնք խորը տպաւորուել են մեր մէջ, որ մենք չենք համարձակում հրապարակաւ քարոզել և որնոր հային ըստ մեծի մտաւն անյայտ է, թող անգգամ կերպով սերմանուի նոցա սրտի և հոգւոյ մէջ: Ուստի՝ մենք պիտի աշխատենք մուծանել Գամառ-Քաթիպայի մէջ վարք երեւելի արանց ինչպէս որ էին Գուստաւ Ադօլֆը, Վիլգէլմ Թէլը, Բօցարիսը, Դիմիտրի Դօնսկոյը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենեացը»:

«Ընդհակառակն եթէ մենք կտեղաւորենք այնպի-

սի շարադրութիւններ, որտեղ որ ապստամբութիւնը (ազգասիրական) համարւում է յանցանք, կսովորացնենք հային խաղաղ, առտնին կեանք վայելել՝ այն ժամանակ ինչի՞ պիտի նմանին նորա. ո՞չ ապաքէն այն ատելի հայերուն, որոնցմով առատ են մանաւանդ ներկայ դարումս Մոսկով, Պետերբուրգ, Ղզլար, Յաշտարխան: Իմ կարծիքով՝ աւել լաւ է նկարագրել ապստամբ աւազակների կեանքը, զոր օրինակ Պուգաչովի, Ստենկա-Ռազինի, Օտրեպիեւի, քան թէ դերմանական կեանքից առած մեղը ու կարագով ծեփած և սիրով կոկած էռնէսաներու, Վոյլդէմառներու և Դիւվայներու: Երգերս թող պարունակեն իրանց մէջ յուսահատութիւն, կասկածանք (սկեպտիցիզմ)՝ կեանքից զզւումն՝ քան թէ բնութեան և Աստուծոյ ողորմութիւնը, բարոյականութեան յաղթանակը... Տեսա՞ր, իմ օգակառոյց ամրոցները աւել խելացնոր են, քան թէ քոները: Եթէ երեք հոգի ինձ համաձայնել են, կարեկից են եղել կարգալով Ազգասէրը, հայ և հայութիւնը, Արաքսի արտասունքը, Հայրենիքը, Օրօրոցի երգը Հայաստանին՝ *) ես կիսով չափ հասել եմ նպատակիս:»

Այսպէս շարունակելով իր պլաններն ու ծրագիրները, Ռափայէլն առաջարկում է ձեռք բերել մի անկախ տպարան, ծրագիրներն իրագործելու և ազգի մէջ տարածելու համար:

Հարցասիրական է Ռափայէլի կարծիքը լեզուի մշակման մասին: «Դու կուր գկուրայն հեռուում ես

*) Այս բոլորը Ռափայէլի երգերն են, որ տպուած էին Գամառ Քաթիպայի առաջին դրքում:

ստրկանում ես պր. Նազարեանցի քերականութեանը, որ միանգամայն հսկառակ է հայոց աշխարհաբառ լեզուի օրենքներուն, որ գուցէ մօտի սովորութիւն և ստանայ քաղաքականութիւն, բայց դորա փնասները խիստ մեծ են. Նազարեանցը լեզուագէտ է, կամ աւել լաւ ասել՝ բառագէտ է, բայց մեծ սխալ կլինի անուանել նորան լեզուաշէն կամ հեղինակ. նորա լեզուն ղժուարաշարժ խորակ է. կենդանութիւն, խաղ, զարմոնիա մի պահանջիլ նորա անարուեստ և կոպտատաշ գրիչից։... Եթէ ուզում ես իմ խորհուրդը լսել, ես քեզ կասեմ, որ թարգմանելու կամ գրելու ժամանակ դու երևակայէ, որ առաջդ կանգնած կամ նստած է մի անուսում հայ վաճառական, որին պէտքէ յայտնել մտքիդ խորհուրդները. եթէ այդ կանոնին ճիշտ հետևելը՝ հաւանական է, որ այս պարբերութիւնը այսպէս չէիր յայտնիլ։

Ապա Ռափայէլը մի քանի գեղեցիկ օրինակներով կոկում և ուղղում է իր ընկերոջ սխալ թարգմանութիւնը և շարունակում է. «Մենք պեճք չենք լեզու, լեզուն կայ եւ այնքան պարսաւսած եւ կոկած է ազգի բերնումը, որ առանց դժուարութեան կարող է մեր գաղափարները յայտնելու. ինչպէս որ ճարտարագետի գործն է, պատրաստ նիւթերից մի շինուած կանգնեցնել, և ոչ նոր ի նորոյ քար տաշել, ծառ տնկել, որ բռնի և ատաղձ ստացուի, այնպէս էլ մենք գրողներս ջանք պիտի դնենք հաւաքել ծախ ու ծուկերից, ազգային, կենդանի, խաղարկուն պարբերութիւնները և նոցանով կամ նոցա կազմութեանը հետևելով շինել ամբողջ յօդուածներ, գրքեր։ Ձգիտեմ ձի, բայց խիստ լաւ ստաց մինը, աւել հեշտ է

երեսի վրայ ձգած սեպհական պարտեզը վերանորոգել, քան թէ անարատ դաշտումը նոր պարտեզ շինել...»

Այսպէս էր դատում և այսպէս էր գրում Ռաֆայէլը 1855 թ.:

Մի տարի դորանից յետոյ, 1856-ին, տպարան հաստատելու, Գամառ-ի միւս գրքոյկներն հրատարակելու, տպածը տարածելու, ուսանելու, թարգմանելու և իր ու ընկերների թարգմանածները սրբագրելու և տպագրելու հոգսերի մէջ, առանց որևէ նիւթական ապահովութեան, առանց նոյն իսկ ուսանողական համազգեստ ունենալու հնարաւորութեան, նա մի նախանձելի եռանդով և առանց յուսահատութեան աշխատում է և գրում... «Գէորգ ջան, մի՛ մոռանալ որ միմեանց ապսպրած խօսքը պիտի անհրաժեշտ օրէնք լինի իրերաց համար. մի՛ մոռանալ, որ գրած նամակը պատասխան է պահանջում, ապա թէ ոչ՝ զօրութիւնը ակնկալութեան մէջ ի զուր կորցնում է իւր էներգիան, սխալում եմ: 2 Շաբաթից կստանաս մեր գեղեցիկ Ռօբինզօնը, որի издание-ն հազարապատիկ սուտեւ գերազանց է ոչ թէ ռուսից այլ և գաղղիացիից և գերմանացուց. կդարձնեն արդեօք հայերը իւրեանց ուշքը գրքի գեղեցկութեան վրայ. ներքին պարունակութեան եւ դատաւոր լինել չեմ կարող, բայց այնքան միայն կասեմ, որ ես ամեն տողը գրելիս առաջին ունէի ясность изложения, простота без приторной наготы և այլն. ես թարգմանութեան ժամանակ և առհասարակ հայերէն շարագրելու ժամանակ մի գաղտնիք ունեմ կամ совет. метода, որին ես կարծում եմ միակ հնար պարզ հայ-

Երէն գրելու, այսինքն ես միշտ երևակայում եմ ա-
 ռաջիս մի թիֆլիզեցի, մի նախիջևանցի, և մի յաժ-
 տարխանցի իբր թէ ամենս միասին մի հարկաւոր
 առարկայի վրայ խօսում ենք կամ թէ ես նոցա պատ-
 մում եմ, բոլոր գաղտնիքը சொсмомъ въ томъ чмъ-
 бы иривскаго макия фразы, которыми въ одно и-
 тоже время հասկանալի շինեին այդ երեքին: Ի
 հարկէ որ այդպիսի գրութիւնը խիստ դանդաղ է ա-
 ռաջանում, բայց բարոյական օգուտը այն է, որ ա-
 մենին հասկանալի է շինում: Այս օրէնքը ոչ ես եմ
 հնարել և ոչ ոք մեզանից, այդ վաղուցվայ օրէնք է,
 բայց մեր հայը, խոստովանելով և բարոգելով ինչպէս
 և ինքը Նազարեանցը ամենեին չէ հետևում և... շատ
 կորցնում է: Նորա կարծիքով գրելը կնշանակէ բարձ-
 րաձայն աղաղակով ամենին յայտնել, յիմարնէր, է-
 շեր, լսեցէք ինչպէս ես кудряво հնարել գիտեմ вы-
 чурная фразы, ես ձեզանից մինը չեմ, այդ պատճա-
 րաւ ինձ խիստ ամօթ է այնպէս խօսել, ինչպէս որ
 դուք էք խօսում. դուք ասում էք մի, ես կասեմ
 նոյն, դուք կասէք՝ ես զնացի տուն եւ կերայ ինձ
 համար պատրաստած ճաշը, ես կասեմ. ես ի կողմն
 իմ տան ոսկաշարժութիւն արարի եւ իմ մարմնինե-
 դեն գործարանը լցուցի մարմնակազդորդի նխքե-
 րով, և կարծում է թէ խիստ ազնիւ կերպով բանաս-
 տեղծեց: Ահա եղբայր սիրական, հանդէս հայախօ-
 սութեան *)»։

*) Ակնարկում է Ս. Նազարեանի «Հանդէս նոր հայա-
 խօսութեան», որի մասին մենք վերեր խօսեցանք։

ՓԼ. XI

Ա Շ ՈՒ Ղ Ն Ե Ր

Հայ կեանքը իր դառնութիւններն արձանագրելու համար զրաւանութեան մէջ միշտ ունեցել է իր պատմիչը, իսկ ժողովրդի մէջ իր երգիչը, որ յայտնի է «աշուղ» համեստ անունով: Ինտելիգենտ ի բնէ, միշտ մի քանի աստիճանով բարձր ժողովրդի միջին խաւերից, զգայուն ու դիտող, այդ «աշուղը» միշտ եղել է ժամանակի հոսանքներն արտայայտող մարդկանց առաջին շարքերում: Նա, դուրս գալով ժողովրդի միջից և մնալով ժողովրդի զաւակ, միայն նրա ցաւն ու ուրախութիւնը չէ, որ երգել ու մխիթարել, ծիծաղացրել կամ զուարճացրել է, այլ շատ անգամ նա եղել է խրատաբան ու քարոզիչ պրօպագանդիստ և առաջնորդող ժողովրդի:

Ժամանակի ձախորդ բերմունքով երբեմն մայրենի լեզուն թողած օտար լեզուով երգելիս անգամ, չի մոռացել զովել ս. Կարապետը, էջմիածինը և Լուսաւորչի սուրբ հաւատը: Նրա հայերէն երգածներն էլ, մնալով էութեամբ հաւատարիմ ժողովրդական կենդանի լեզուին, միշտ եղել են նրանից մի աստի-

ճան բարձր, գռեհկութիւնից խուսափող, զբաւարին մի աստիճան մօտիկ, կատարելութեան հետքերով մի քիչ աւելի զարգարուն, քան ռամիկ ժողովրդի լեզուն:

Այդպիսի մի ինտելիգենտ տարր չէր կարող անմասն մնալ նոր լեզուի ծագման մէջ. իրօք, նա այդ լեզուի կարապետներից մինն էր, իսկական հիմնադիրն ու կենդանացնողը, մաքուր և անարատ հայերէնի ժողովրդական դարձնողը, ազգի ամեն խաւերին անխտիր հաղորդողն ու տարածողը:

Բազդի արդեօք պատահական բերմամբ, թէ իրերի բնական ընթացքով այդ երգիչներից յայտնիները Արարատեան բարձառի հարազատներն էին, որ լոյս տեսան Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանի ձեռով:

Ներկայիս ծերունազարդ այդ Ոսկանը, աշխարհաբարի կենդանի մնացած վետերաններից կարծեմ միակն է: Նրան մենք գտանք Թիֆլիզի Սաղ կոչուած թաղում (Пески) մի խղճուկ և աղքատիկ բնակարանում: Նա հետեւեալն հաղորդեց. ծնել է Զրվէժ գիւղում 1828-ին (Երևանի դաւառ). շուտով, քահանայ հօր հետ տեղափոխուել է Երևան. 1842-ին ուղևորւել է Լազարեան ճեմարանը, ուր և աւարտել է 1847-ին, աշակերտելով Էմինին, Ռափայէլ և Քերոբէ Պատկանեանների հետ: 1848-ին Լազարեանների յանձնարարով գալիս է Թիֆլիզ և ապա Էմիլիածին, հին հայ ձեռագիրներ արտագրելու Լազարեան ճեմարանի համար: Նոյն ճեմարանի միջոցներով ուղևորուում է Պարսկաստան պարսկերէն ուսանելու: Երկու տարի Թէհրան մնալուց յետոյ վերադառնում է Մոսկուա,

հետը տանելով մեծ քանակութեամբ հայերէն և պարսկերէն գրքեր, Լազարեան ճեմարանի համար: Հայրենիք վերադարձին, Երևանում ժողովում է աշուղներին ան երգերը, որոնք ապա հրատարակեց ծանօթութիւններով եօթը գրքերում: Անհնարին եղաւ ձեռք բերել այդ գրքերից որևէ մէկը, նոյն իսկ ինքը հաւաքողը չունէր և ոչ մի օրինակ այդ գրքերից, որոնք ինչպէս հաղորդեց, նա հրատարակել է ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու դիտաւորութեամբ: Դրանք կարգով հետեւեալներն են:

ա). «Զանգան երգք հանգուցեալ Ագամայ Երևանցոյ-Ազբար մականուանելոյ, ի լոյս ընծայեաց Ոսկան Յովհաննիսեան Երևանեցի, Մոսկվա 1855 թ. 12 ծ. 28 եր»: Ազբարը ծնաւ Երևան 1816 թ. և մեռաւ 1846-ին. մի ժամանակ ուրեմն, երբ գրական լեզուն դեռ երկունքի մէջ էր: Մանուկ հասակում կարդալ-գրել սովորելուց յետոյ, նա իրան նուիրեց կօշկակարութեան և վերջը այդ արհեստի գուքան ունէր Երևանում: Ազատ ժամերը նա պարապում էր աշրդութեամբ և բանաստեղծութեամբ, որով շատ սիրելի էր դարձել իր հայրենակիցներին: Բացի հայերէնից նա երգում էր թաթարերէն ու պարսկերէն:

Նրա երգերին մենք ծանօթ ենք «Քնար Հայկականից»: Այդ երգերը մեծ մասով կարող են գրական լեզուի մաքուր և ընտիր նմուշներ համարուիլ: Նրանից մինը դեռ այսօր կենդանի է երգող ժողովրդի բերանում և անշուշտ շատերին ծանօթ.

«Ասում ես դիմացիր, ճնց դիմանամ, մի՞թէ ես
եմ քար, դարդիս արա մէկ ճար

«Կեանքս մաշել ես բոլորովին ամենը իսպառ, էս
ցաւն է դժուար:

«Էսքան նեղութիւնը ինձ մի տար անողորմաբար,
ով իմ սիրահար» և այլն... Հրատարակուելուց մի տարի
մետոյ այս երգը մտաւ Գամառ-Քաթիպայի երգարա-
նի մէջ:

բ) «Զանազան երգք պարոն Յովհաննիսի Շահ-
րամանեանց Նիրանի մականուանելոյ: Ի լոյս ընծա-
յեաց Ոսկան Յովհաննիսեանց. Մոսկվա, 1856 թ., 22 եր.»

Նիրանին ծնաւ Վաղարշապատ. 1822 թ., աշա-
կերտեց հռչակաւոր Թաղիաթեանին և ապա Յովհ.
Շահխաթունեանին: Նա ոսկերիչ էր. 1835 թ. ուսաւ
սազ անել և սկսաւ բանաստեղծել հայերէն ու թուր-
քերէն:

գ) Նոյն վերնագրով և նոյն 1856-ին Ոսկանը
հրատարակում է Շիրինի երգերը: Յովհաննէս Կարա-
պետեան-Շիրին—ծնաւ 1827-ին Կողբ, ժողովրդական
երգերի բնավայրը. երկու տարեկան կուրացաւ ծաղ-
կից, վեց տարեկան՝ որբացաւ մօրից: Աշղղութիւն
սովորեց Ալեքսանդրօպօլ, աշուղների հայրենիքում,
և ապա Կարին: Այնտեղից եկաւ Թիֆլիզ 1839 թ.
Այստեղ Գ. Ախվերդեանի և Բերոյեանի յորդորով նա
սկսաւ երգել հայերէն և դարձաւ մինն իր ժամանա-
կի հռչակաւոր աշուղներից: Յարգ չի մոռացուել նրա
անունը:

Շիրին աւելի խրատաբան, բարոյախօս է, քան
բանաստեղծ: Լեզուի վերաբերեալ նրա նշանակու-
թիւնը շատ մեծ է: Լինելով կոյր, նա կարգալ չէր կա-
րող, ուրեմն իր բառերի պաշարը ամբողջովին պիտի
քաղէր կենդանի շուրթերից, այնպէս որ Շիրինի լե-

գուն ժամանակակից 40-ական թուերի մեր կրթուած դասի ճիշտ ցոլապատկերն է, լեզուի կողմից:

Որքան էլ մեծ տեղ տալու լինինք նրա անհատական տաղանդին, անկասկած է, որ նա իր գործածած բոլոր բառերը շնորհիվ պիտի սովորէր. իսկ Շիրինի լեզուի մաքրութիւնը և բառերի հարուստ պաշարը, որ հասնում է շատ անգամ ձուռումբեան, դերադանցել է գուցէ միայն Սեյադը, կրթուած և աւարտած Ներսիսեան դպրոցը, պետական պաշտօնեայ և բեղմնաւոր—բանաստեղծ—աշուղ:

դ) Սեյադի երգերն էլ լոյս տեսան 1857-ին Ոսկանի ձեռով, դարձեալ Մոսկուա: 87 եր. 12 ծ. Սեյեադի մասին՝ (Պետրոս Տէր-Յովսեփեան Մատաղեանց) մենք արդէն խօսեցանք, որպէս Ներս. դպր. աշակերտի մասին:

ե) «Երկասիրութիւնը ազգային երգչաց. ի լոյս բնծայեաց Ոսկան. Տ. Գ. Յովհաննիսեան Մոսկվա 1858 թ. 117 եր. 12 ծ.»—Ոսկանի մնացեալ երկու հրատարակութիւնների մասին մենք ճիշտ տեղեկութիւն չունինք:—Յիշեալ աշուղների երգերի մասին տեղեկանալ կամեցողը թող կարդայ Միանսարեանի «Քնար-Հայկականը» որ ազգային հին ու նոր, ժողովրդական, աշուղային, անհատ-բանաստեղծների ստեղծագործութեան ստուար ու լիակատար մի հատոր է, տպւած 1868-ին. Ս. Պետերբուրգ:

Ախվերդեանի, Գամառի, Ոսկանի և Միանսարեանի, որոնք չորսն էլ Լազարեան ճեմ. սան էին, հրատարակութիւններից երեւում է, որ այդ ճեմարանում որոնում էին ազգային բանաստեղծութիւն ու բանաստեղծ: Յիրաւի նրանք թէ՛ դասն ու հրատա-

ըսակեցին և թէ՛ իրանց միջից ծնան ու առաջ բերին
խակական բանաստեղծութիւններ և բանաստեղծներ:—
Թէ որքան գիտակցութիւն կար այդ ձգտումի մէջ,
այդ այլ հարցէ: Ինչպէս երևաց իմ հարց ու փորձից,
Ոսկանն իսկի չի էլ հասկացել ու գիտակցել իր հրա-
տարակութիւնների արժէքն ու նշանակութիւնը: Մի
զարմանալի օրինակ այն երևոյթի, որ մարդիկ գոր-
ծիք են ժամանակակից հոսանքների, գաղափարների
և իդէալների, առանց խորապէս գիտակցելու իրանց
գործիք լինելը:—

ԳԼ. XII

ԿՐԹՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթերցողը կարող է երևակայել մեր զարմանքը, երբ այս ամենը գրելուց յետոյ, մենք ստիպուած ենք լինում գրեթէ տակն ու վրայ անել մեր աշխատութիւնը մի անսակնկալ գիւտով մեր ձեռն է ընկնում մի գրքոյկ, որ տպուած է 1840-ին, պարզ ու մաքուր աշխարհիկ լեզուով: Այդ զարմանքն էլ աւելի մեծանում է, երբ կարդում ենք զրքի վրայ երկրորդ տպագրութիւն: Յետագայ խուզարկութեամբ այդպիսի գրքերի թիւն հասնում է երեփ, բոլորն էլ երկրորդ տպագրութեամբ: Մի աչքի զարնող հանգամանքն էլ այն է, որ ոչ մինի վրայ հեղինակի կամ թարգմանչի անուն չկայ, որ զրքերին տալիս է աւելի խորհրդաւորութիւն, գրքեր, որոնց մասին մեր գրականութեան մէջ ոչինչ չկայ և որոնք աշխարհիկ լեզուի անպրանկ երկերն են, Աբովեանի ու Պատկանեանի դափնին խող:

Երեքն էլ տպուած են Մոսկուա, Լազարեան ձեռնարանի տպարանում 1840-ին. երեքն էլ արեւելեան աշխարհիկ լեզուով: Առաջինի վերնագիրն է: «Երեք խօսակցութիւնք սին քահանայի սին աշխարհական

մարդոյ հեան: Փրկութեան ճանապարհի համար. թարգմանութիւն: Երկրորդ *սյազրուքիւն*»:

Երկրորդիւնը՝ «Աւետարանի զօրութիւն կամ մին Արաբ ծառայի պատմութիւն, որ Քրիստոսի հաւատքովն երանելի էլաւ: Թարգմանութիւն. Երկրորդ *սյազրուքիւն*»:

Երրորդ՝ «Ժամանակի վերջն. թարգմանութիւն: Երկրորդ *սյազրուքիւն*»: Սրանք տալազրուած հնագոյն աշխարհաբար գրքերն են արեւելեան լեզուով: Սրանց լեզուն մաքուր և անխառն. հետեւական ու մտածուած, բուն արեւելեան առանց ռամկանայութեան և առանց արեւմտեան ձևերի: Գաւառական թուրք թարգմար բառերի տեղ գրաբարից բառեր միայն, առանց գրաբար ձևերի:

Թէպէտ լեզուն մի քիչ պաղ ու սառն, գուրկ գոյներից ու բուրմունքից, բայց երևում է մի լուրջ ու խոհեմ գլուխ, որ այն խառնակ և շփոթ ժամանակներում գիտեցել է ընտրել, ջոկել և հաստատել մի պարզ ու հասկանալի, մաքուր ու գեղեցիկ լեզու, քերականօրէն լիովին կանոնաւոր ու հետեւական, հաւատարիմ աշխարհաբարի օրէնքներին: Նս այն ժամանակներում չեմ ճանաչում մի հայ, որին պատկանէր այդ լեզուն ստեղծելու պատիւը: Ինչպէս ասացինք, գրքերի հեղինակ չկայ. կան սակայն մի քանի բնորոշ կէտեր, որոնք անմիջապէս մատնում են հեղինակին. առաջին, երբն էլ թարգմանութիւն է. ի՞նչ լեզուից, անյայտ է: Երեքի բովանդակութիւնն էլ կոտակակն, երբն էլ Երկրորդ *սյազրուքիւն*ը: Եթէ ի նկատի ունենանք, որ այն ժամանակներն այնքան էլ հեշտ չէին կարող գրքերը տարածուել և ըս-

պառուելի, դրանց առաջին տպագրութիւնը պիտի ենթադրենք քիչը-քիչ մի 10—15 տարի առաջ, ուրեմն 1825 թ.: Այդ թուականներին արդէն ոչ մի հայ, այն էլ կրօնաւոր, չէր թարգմանի աշխարհաբար կրօնական գրքեր մի օտար լեզուից և թարգմանելուց յետոյ էլ չէր թագցնի իր անունը և առանց հայրապետական թոյլտուութեան չէր տրպի որևէ գիրք:—Սրանք անպայման օտարազգի—եւրոպացու գործեր են, յատկապէս բողոքական միսիօնարներին, որ իրանց անունը և նպատակները թագցրել են հայ ժողովրդին և կրօնաւորներին չխրտնացնելու համար:

Միայն եւրոպացի ուսումնականը կարող էր այդ աստիճան ճիշտ և հմտօրէն ուսումնասիրել աշխարհաբարի քերականութիւնը և մի լեզու ստեղծել, որ ժամանակից մի 20—30 տարի առաջ է ծնել: Եթէ հայի մասն էլ կայ այդ գրքերի մէջ, եւրոպացու աշակցութիւնն և օգնութիւնն անկասկած է:

Մենք ձեռք բերինք բարեբաղդաբար այս գրքերի նախատիպը. մի փոքրիկ ութածալ գրքոյկ, բաղկացած 58 երեսներից, հետևեալ վերնագրով: «Պարճառօս աղօթքներ շաբաթի առէն մէկ օրին հաւատքարգւանուքիւն ի հայրապետութեան Տեառն Յովհաննու Կարբեցւոյ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց, Հրամանաւ տեառն Բաղդասարայ իշխանազնի Ջալալեան սրբազան արքեպիսկոպոսի և մետրապօլիի հայոց համայն Աղուանից ի Շուշի յամի տեառն 1822»։ Սրա ձեռք, լեզուն, և ուղղագրութիւնն ու տառերը, նոյնն են, ինչոր վերևի գրքերինը իրանց բնորոշ յատկանիշներով. այն է՝ սեռականը վերջանում է միշտ ի (օրի, շաբաթի) մին (փոխ. մէկ կամ մի),

և եկի, եկին (եկայ, եկան) Ղարաբաղի բարբառից առած:

Այս գրքոյկի թուականից երևում է, որ վերոյիշեալ գրքերի առաջին տպագրութիւնն էլ հաւանօրէն նոյն 1822—25 թուին պիտի լինի եղած և անկասկած Շուշի:

Թէ սրանք բողոքական միութեանարի գործ են, երևում է հետևեալից.

«Թէև էս աղօթքներս, որ էս գրքիս մէջն գրւած են, էնպէս են կարգւած՝ որ խնդրօղն ոչ թէ մենակ, բայց ընկերութեան մէջ աղօթէ. բայց նորանք էն անձին որ մենակ է՝ օգտակար կը լինեն. միայն թէ քիչ փոփոխութիւն անէ. ինչպէս որ ևս՝ զընելով մենք բառի տեղակ: և ինն՝ զնելով մեզ բառի տեղակ»: Ահա և մի այլ նմուշ 1822-ին տպած գրքոյկից».

«Կիրակի առաւօտուն համար (աղօթք)»

«Ո՛վ Տէր, որ դու երկինքըն և երկիրս ստեղծելունցն ետև եօթերրորդ օրումն քո ամեն գործքերիցն հանգիստ առիր և մեզ էլ, քո ստեղծվածներիս պատուիրանք տուիր, որ մեր ժամանակի եօթներրորդ մասըն մանաւանդ ջոկենք և սուրբ պահենք, քեզ յատուկ պաշտօն կատարելոյ համար. խոնարհութենով աղաչում ենք քեզ, օգնիր մեզ, որ քո էս սուրբ պատուիրանքին հնազանդվենք և էս օրըս քո փառաց համար սուրբ պահենք»:

Այսպէս ընկերաբար աղօթում են միայն բողոքականները և այն էլ է յայտնի, որ անցեալ դարում, Ռուսաց տիրապետութիւնից անմիջապէս յետոյ բո-

դոքական քարոզիչներն հաստատուեցան Շուշի^{*)}, բաց արին դպրոց ու տպարան և գրով ու խօսքով սկսեցին «Աստուծոյ բանը» տարածել հայոց մէջ: Սա պրօպագանդայի առաջին գրիչն էր. նրանք սոյն այս լեզուով թարգմանեցին և՛ նոր կտակարանը, որ լոյս տեսաւ 1834-ին, Մոսկուա, հետեւեալ վերնագրով. — «Նոր Կտակաբան Տեառն մերոյ Յ. Ի. Ք. սի. աշխարհաբար. Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Արժաննատիր Կաթողիկոսի ամենայն Հայոց և Ասպետի: Յառաջնորդութեան Ռուսիաբնակ հայոց առաքելաշաւիղ Տեառն ներսիսի սրբ. արքեպ. և Ասպետի: Հրամայեաց տպագրել դատաքննիչ գրոց Միքայէլ ծայրագոյն վարդապետ Սալլաթեանց նուիրակ սրբոյ Էջմիածնի 1833 Մոսկով»:

Այս և նման գրքերի թիւը փոքր չէր. բողոքական միսիօնարներն, ինչպէս երևում է, սկսել էին մի այնպիսի եռանդուն գործունէութիւն, որ պիտի յեղափոխէին մեր կեանքը, մեր սեփական ինքնուրոյն շարժումից շատ առաջ, եթէ հայ հոգևորականութիւնը ռուս կառավարութեան աջակցութեամբ նրանց առաջը չառնէր և հալածելով չ'հեռացնէր Շուշուց: 1830-ին նրանց ունեցած և հրատարակած հայերէն գրքերի թիւը հասնում էր 11,679 օրինակի: Պատկառելի մի քանակ և սկսած գործն էլ խելօք հիմքերի վրայ՝ սակայն նրանց ազդեցութիւնն հայ գրականութեան և լեզուի վրայ հաւասար է գրեթէ զէրօի, որովհետեւ դա չի երևում ո՛չ մի տեղ և ո՛չ

^{*)} Հ. Ղուկասեան «Բողոքականութիւնը Կովկասու հայոց մէջ», Թիֆլիզ, 1886 թ.

մի հայ գրողի վրայ: Իբրև օտար աղբիւրի արդիւնք, բողոքականների մշակած լեզուն, չնայելով իր մաքրութեանն ու կանոնաւորութեանը, մնաց խորթ և առանց որևէ ազդեցութեան մեր մտաւոր շրջանների վրայ, նոյնիսկ չկտրաց առաջ բերել մրցում և հակառակ հրատարակութիւն: Պատճառն այն էր երևի, որ հայ հոգեւորականութեան զրգմամբ ուսւ կառավարութիւնը 1831-ին արգելեց նրանց քարոզչութիւնը, որ տեւեց հազիւ 8—9 տարի և նրանք ստիպուած էին փակելու իրանց տպարանը, դպրոցները և հեռանալ Շուշուց:

Ապարդիւն անցնելուց զատ, նրանց գործունէութիւնն հայ գրականութեան և լեզուի համար եղաւ յայտնապէս փնասակար, որովհետեւ հայ հասարակութիւնն ու կղերն այնուհետեւ ամեն մի աշխարհաբար զրքի և զերմանական ուսում ստացած անձի վրայ սկսան նայիլ կասկածանքով: Այդ կասկածին էր, որ զոհ գնաց Աբովեանը, մերժուելով հայ դպրոցներից, զոհ գնաց նրա աշխարհաբար այբենարանը, և՛ ինչպէս տեսանք, մասամբ նաև «Վէրք-Հայաստանին», զրուելուց յետոյ մնալով անտիպ ամբողջ 18 տարի:

Մի այլ պատճառ, որ արգելք եղաւ միաիօնարների ազդեցութիւնը տարածելու, նրանց ընտրած նիւթն էր.—կրօնական պրօպագանդան:

Կեանքի նոր հոսանքը նոր իդէալ և նոր գաղափարներ էր պահանջում, որ ոչ մի դէպքում կրօնական չէր կարող լինել:

Սա երկրորդ գէպքն էր մեր պատմութեան մէջ ունիթորներից յետոյ, որ Լրոպացիների ջանքերով հիմնուած մի կրօնա-կուլտուրական գործ անաջողու-

թեան էր հանդիպում ի դերև հանելով նոյնիսկ այնպիսի անհրաժեշտ և կարևոր մի հանգամանք, որպիսին էր աշխարհիկ լեզուի հիմնելն ու տարածելը:

Կրօնական հոգը և հոգևոր ասպարէզը, որի վրայ յենած նրանք գործում էին, շատ էր ուժասպառ և յոգնած: Հայի հոգին ու միտքը հազարաւոր տարիների աղօթքներից էլ յուրացած ու լիացած էր. հարկաւոր էր այլ հոսանք, այլ իդէալ... Բողոքականութիւնն այդ չէր կարող տալ. և թէպէտ նա արտայայտութեան նոր ձևը, լեզուն, ստեղծեց, բայց այդ անօթը հայի համար մի խորթ նիւթով լեցուն էր թւում, ուստի նրանց մի անգամ արդէն հարթած ճամբան հայն ինքնին, նորէն և անկախօրէն բանալու էր հարկադրուած...

Քողոքական պրօպօգանդան Շուշում շատ կարճատև եղաւ. աւելի ճարտար և աւելի երկարատև նա քարոզուեցաւ Շամախի, արդէն հայերի ձեռով և Շուշում մշակուած լեզուն էլ տեղափոխուեց Շամախի: Նրանց գրաւոր լեզուի մասին գաղափար կարող է տալ հետևեալ նմուշը, գրուած 1855 թ.

«Ձէ՞ որ հաւատը լսելիցն է, և լսելն Աստուծոյ խօսքերից. իրանք չունին տեղեկութիւն Ս. Գրքից և սէր խօսելուց, խօսողների վերայ էլ չար նախանձով լցուած բամբասում են... մենք ո՞նց ենք, որ Աստուծոյ սուրբ խօսքը մեզանից լսուի. աւետարանի պաշտօնեայ չե՞ն սօքա. ինչո՞ւ չեն մեզ իրանց թեքի տակն առնում, իրանք սովորացնում մեզ՝ թէ ինչ է բարին և հաճելին և կատարեալն» *)...

Սա արդէն մեր գրական լեզուն է. բուն թողո-

*) Բողոքականութիւն Կովկ. հայոց մէջ. հր. 71.

խակաւ լեզուն որ ստեղծեցին աւետարանական հայերը, գեղեցիկ երևում այն հոգևոր երգերի մէջ, որ նրանք մշակեցին ինքնուրոյն կամ թարգմանաբար մինչև 1860 թուականները, մի փոքրիկ ու բնորոշ նմուշ այդ երգերի, տալիս է մեզ Ղուկասեանը իր գրքի 96 երեսում».

Օրհնեալ լինես դու,
Սիրելի Փրկիչ,
Քո անունիդ փառք,
Որ մեղաց համար,
Երկնաւոր Հօրդ
Նշար պատարագ
Այլ եկաւ Յուդան,
Կորստի որդին
Քեզ՝ Տէրիդ մասնեց.

Անուն և Տէր հռովմած են անունի եւ Տէրի, փոխանակ անուան և տիրոջ... Ճշտութեան ու կանոնաւորութեան հետ այս լեզուն մի զարմանալի պաղ, սառն և կենազուրկ արտայայտութիւն ունի, նման մի բոյսի, որ աճել է ստուերի մէջ առանց արևի երես տեսնելու:

Թէպէտ բողոքականները իրանց լեզուին հիմք ունէին Ղարաբաղի բարբառը, իհարկէ, գրաբարի մաղով անցրած, բայց արդիւնքը գրեթէ այն դուրս եկաւ, ինչ որ Ներսիսեան դպրոցում: Բողոքականներն էլ իրանց գործունէութեան առաջին շրջանում կանգնած էին այն առողջ հիմքերի վրայ, աշխարհաբարի էական իրաւունքները ճանաչելու վերաբերմամբ, — ինչպէս և Ներսիսեան դպրոցը: Տեսանք, որ Երևանեան աշուղների լեզուն էլ էական գծերով նոյն այս հե-

տեանքին հասաւ: Լազարեան ճեմարանն ու Դորպատի ուսանողութիւնը, սակայն, կտրուած ժողովրդից ու կեանքից, բանը մի բիշ այլ կերպ էին հասկանում, որ և առաւելութիւն ստանալով, գրաբարի իրաւունքները լայնեցին, ի վնաս աշխարհիկ լեզուի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այսպէս՝ մինը միւսից անկախ, բայց գրեթէ միաժամանակ, մենք տեսնում ենք լեզուի կազմուելուն և զարգանալուն նպաստող մի քանի խոշոր տարրեր, որոնք ապա խտանում են այս կամ այն տաղանդաւոր անհատների մէջ:

Բուն ինքը, այդ լեզուն ստեղծողն ու կազմողը ժողովուրդն է, ազգի կենդանի քաղմութիւնը, որովհետեւ առանց այդ ժողովրդին չի կարելի երեակայել որեւէ լեզու:

Արեւելահայ լեզուն, որեւմն, արդիւնք էր արեւելիան հայերի մշաւոր շարժման, որ իր հերթին հետեւանք է նոր քաղաքական ու քաղաքական սրայմանների—(ոռւաց սիրապետութիւնը եւ հայերի գաղթն ու խնամքը Կովկասի սահմաններում):

Եթէ այնուհետեւ ժողովրդին ներկայացնենք որպէս արմատ, ապա աշուղները, դպրոցները, եկեղեցին, վաճառականութիւնն ու նամակագրութիւնը, միսիօնարական քաղոգութիւնն ու զբօսըրը, ևրոպական համալսարանն ու օտարազգի ազգեցութիւնները, մեր արեւմտեան լեզուով հրատարակուող պարբերականներն ու զբօսըրը այն տարրերն էին, որոնք անհրաժեշտօրէն պիտի արգիւնէին նոր լեզուի երեւն գալն:

աւ հաստատուին այդ արմատի վրայ անխուսափ, որ մենք տեսանք իրականօրէն առաջ եկած Թիֆլիզ, Շուշի, Երևան, Շամախի, մինչև իսկ Մոսկուա և Դորպատ:

Սա մի բնորոշ հանգամանք է. ժամանակներն այնպէս էին, որ մի նոր լեզու պիտի ստեղծուէր: Եթէ զպրոցները չկանխէին, ինքը հասարակութիւնը, իսկ եթէ սա էլ ուշանար, Եւրոպան պիտի ստեղծէր ու մշակէր մեզ համար լեզու: Արեւմտեան հայերէնի նորագոյն վերածնունդն էլ նախ՝ հայ-կաթոլիկների, ապա ամերիկացի միսիօնարների ձեռով սկսուեց. և մաքուր ու ընտիր գործը, առաջինն իր տեսակի մէջ, Աստուածաշնչի թարգմանութիւնն այդ լեզուով կաթոլիկ հայերի, ապա բողոքական միսիօնարների գործըն էր:

Մեր լեզուի կազմն էլ, ազդող տարրերի շնորհիւ մի քանի ուղղութիւն ստացաւ. ոմանք այդ լեզուին որպէս հիմք ուզում էին ճանաչել միայն Արարատեան բարբառը (Աբովեան, մասամբ Ոսկան) ուրիշները մըտմըտում էին Մշու բարբառի մասին, միայն զրաբարի մաղով անցըրած. բողոքականներն այդ լեզուին հիմք ընդունեցին Ղարաբաղի բարբառը. նազարեանն ուզում էր հիմք ընդունել Աստրախանի բարբառը, զրաբարով ոսկեջրած: Այլք գործ էին ածում արեւմտեան, արեւելեան և զրաբար ձևեր միաժամանակ և խառը: Այս ուղղութեան նիրկայացուն էր Պատկանեան տոհմը: Յաղթանակով դուրս եկաւ մի միջին, ձև, երբ լեզուն մի կողմից սկսաւ աւելի և աւելի մօտենալ զրաբարին և Արարատեան բար-

բառին, միևս կողմից զգալի կերպով հեռանալ արևմտեան ձևերից:

Այս լեզուին իբրև նիւթ ծառայել են գրաբարն իր ստուգաբանութեամբ և բառերի աճողին քանակով, արևմտեան լեզուն սրան տուել է իր շեշտը, արևելեան գրեթէ բոլոր բարբառները (բացի զօկերէնից) եռանդուն մասնակցութիւն են ունեցել սրա շինութեան մէջ, ուստի միակ ճիշտ և արժանաւոր անունն այս լեզուի այն է, որ մենք գործ ենք ածել շարունակ *ւերելեանայ լեզու* *): *Կեանքանի բարբառներից սրան ամենից ամէնի նիւթ մնասկարարող եւ ամենամօտ է Արարեսեանը, որ արդարապէս այս լեզուի հիմք է ձանաչում: Դրա շօշափելի ապացոյցն են սեռական և բացառական հոլովները, որոնք ընդունւած են մեր գրականութեան մէջ այս բարբառի բացառիկ յատկանիշներով:*

Ներսիսեան դպրոցը այդ լեզուի առաջին ջերմանոցն ու սերմարանն էր. նրա սաներն ու վարժապետներն առաջինն էին, որ գրի առան, մշակեցին ու տարածեցին այդ լեզուն, իրանց յետևից տանելով նաև միևս դպրոցներն ու նրանց սաներին:

Կենդանի խօսակցութիւն և գրաւոր-պրօզա-ըստեղծողը Ներսիսեան դպրոցն էր: Նրան աջակից հանդիսացաւ Լազարեան ճեմարանը, որ ստեղծեց երգի և ոտանաւորի լեզուն:

Մասնաւոր անհատներից առաջին դասինն պատ-

*) Թէ զարգացման ընթացքում ուրիշ ինչ տարրեր են ազդել սրա վրայ յետագայում, կը տեսնենք սրա համաձայնութիւնը ուսումնասիրելիս:

կանում է Աբովեանին և ապա Պատկանեան ընտանիքին, որ չորս տաղանդաւոր անդամները (Երկուսերունդ. Գաբրիէլ ու Միքայէլ, ապա Քերորէ և Ռափայէլ) միջոցով կռիւ է մղել և տաղանդ է մաշել նոր լեզուի յաղթանակի համար:

Մամուլը լրացրեց ու վերջացրեց այն, որ սկսել էին հիմնարկութիւններն ու մասնաւոր անհատները: 1820—1840 թ. արեւելահայ լեզուի յղացման շրջանն էր. 1840—1850 երկունքը. 1850—1858 ծնունդը: Այդ ծննդեան իսկական վկաներն են. Ներսիսեան դպրոցի դասագիրքը 1855 թ. «Ազգային երգարանը» 1856-ին, Ոսկանի հրատարակութիւնները 1855—58 թ. Աբովեանի Վէրք Հայաստանին (1858), «Հիւսիսափայլը» և «Մեղու Հայաստանին» (1858):

1860 թ. մեր լեզուի մկրտութեան և անուանակոչման տարին պէտք է համարել, որովհետեւ այդ թուականից նրա յաղթանակն ապահովուած և ամեն տեղ քաղաքացիութիւն ստացած մի լեզու է ճանաչուում:

ԳԼ. XIII

ԳՐԱԲԱՐԻ ՆՈՒՄԱՐ

Գրաբարի ծագումից առաջ մենք արևելահայ լեզուի ծագման պատմութիւնը տուինք, որովհետեւ ներկայ իրականութեամբ պարզուում է նաեւ շատ տեսակէտներով անցեալի մշուշը: Մենք տեսանք այն ազգականներն ու գործօնները, որոնք առաջ բերին աշխարհիկ լեզուն: Ժողովրդի անտեսական և մտաւոր շարժում առհասարակ, դպրոցներ, գրքեր, մամուլ, համալսարան, միսիօնար քարոզչութիւն և օտարազգի ազդեցութիւններ: Կարճ ճանապարհով առհասարակ նոյն տարրերը ենթադրել գրաբարի ծագման ժամանակ: Նոյնն էին արդեօք լեզուի պայմանները մեզանից 1500 տարիներ առաջ:

Եթէ պատճառներն ու պայմանները հանել կամենանք արդիւնքից, պիտի այդ պատճառները գերազանցօրէն նպաստաւոր համարենք գրաբարի ծագման ժամանակ, որովհետեւ նրանք արդիւնեցին մի պերճ ու կլասիկ լեզու:

Ներկայի մեր պայմաններն անասելի աննպաստ են եղել մեր զոյգ լեզուների զարգացման համար:

Եթէ մի ազգի լեզուն կապուած պիտի լինի նոյն ազգի հողի և հայրենիքի հետ, ապա զարմանալի է մեր ժողովրդի հոգեկան կորույր, մտաւոր ճիգն ու ջանքը, կուլտուրական եռանդի թափն ու թռիչքը, որ խորտակելով ամեն արգելք, կարողացել է լեզու ստեղծել Եւրոպայի հեռավոր անկիւններում. Վենետիկ, Վեննա, Դորպատ, Մոսկուա, հետգհետէ կենդրոնանալով և ամրանալով մի կողմից Պոլիս, միւս կողմից Թիֆլիզ, դարձեալ հայրենիքից դուրս: Եթէ կայ առհասարակ մի զարմանալու բան մեր ազգի կեանքում, դա այս երկու յեղուկների ըստեղծագործորթիւնն է հայրենիքից դուրս:

Զկայ մի այլ ազգ, որ այդպիսի պայմաններում իրան համար լեզու լինէր ստեղծած, այն էլ հազարամեայ անկումից յետոյ կուլտուրապէս և հազարամեայ ըստրկուլթիւնից յետոյ քաղաքականապէս:

Թէ դա, այդ մտաւոր վերածնունդը էապէս արդիւնք է մեր հոգեկան կորույրի և ոչ արտաքին ազդակների, ապացուցւում է մեր լեզուների երկուութեակ լինելուց, որոնցից մինը ծաղկել սկսաւ հարաւում, Իտալիայի գեղածիծաղ երկնի տակ, միւսն, ընդհակառակը, հիւսիսի ցուրտի և սառնամանիքի մէջ. Մոսկուա, Դորպատ:

Պայմանների այս ծայրահեղ տարբերութեան մէջ աշխատողը հայի տառապող հոգին էր, կուլտուրայի ծարաւ, որ Մխիթար Սեբաստացուն տարագրում էր Ատրիատիքի ծոցը, Սալաստուր Արովեանին Բալթիկ ծովի եզերքը և Մեսրոպ Թադիաթեանին Հնդիկ ովկիանոսի և Գանգէսի սրբազան օվերը, հայի համար լեզու ստեղծելու:

Մեր լեզուի ստեղծման մի բնորոշ հանգամանքն էլ այն է, որ նա առաջ եկաւ ծագումով մի բուն գիւղացիների, քահանաների և կամ քահանաների որդոց ջանքերի շնորհիւ: Կիրթ ու ճաշակաւոր արիստոկրատեա, պերճ ու փարթամ ազնուականութիւն, կամ մի ստուար ու խիտ քաղաքացի դասակարգ յենակէտ չէ՝ եղել այդ լեզուին: Մի Արովեան իր տաղանդի ամբողջ թուիչքով ու թափով այնուամենայնիւ ճաշակի կողմից մի գիւղացի է:

Երբորդ բացասական ու պակասաւոր կողմը մեր ներկայ լեզուների այն է եղել, որ մեր վերածննդեան ջանքերը առաջ են դնացել ցան ու ցրիւ ճանապարհով: Վերջին երկու հարիւր տարիների ընթացքում, սկսած Միլիթարից, մենք աշխատել և ստեղծել ենք իսկապէս ոչ թէ երկու, այլ երեք լեզու:

18 դարն ամբողջովին մինչև 19-ի երկրորդ կէսը մեր բոլոր ջանքերը նուիրուած են եղել զրաբարը վերականգնելու նանիր ցնորքին. և Զամէանների, Բագրատունիների, Ալիշանների ու մինչև իսկ Պէշիկթաշեանների հոյակապ գործերը զրուել են կեղծ կլասիկ զրաբարով, որ ստեղծել էինք մենք սեփական աշխարհիկը ետ մղելու, նոյն իսկ մոռանալու յաւակնութեամբ...

Այս ամենը թուեցինք նրա համար, որ ցոյց տանք թէ որքան նպաստաւոր պայմաններում առաջ եկաւ զրաբարը մեր ներկայ լեզուների համեմատութեամբ: Նա ծլեց ու ծաղկեց սեփական հողի, սեփական հայրենիքի մէջ. ամբողջ ազգը, մի կուռ և հոծ բազմութիւն, իր բոլոր դասակարգերով մասնակից էր այդ յիշակ լեզուի կազմակերպութեանը: Մեր լեզուն

ստեղծելու էին աշխատում մի երկու պաշտօնագուրկ վարժապետ և մի խումբ սովալլուկ ուսանողներ, գրաբարի համար աշխատողներն էին Վռամշապուհ թագաւորը, Սահակի Պարթևի պէս կաթողիկոսը և Մեսրոպի պէս պալատի դիւանապետը: Աւելի ծայրահեղ տարբերութիւն լեզու զարգացնելու և ստեղծելու համար չի կարելի երևակայել, թէկուզ աշխատողների տաղանդն ու եռանդը ենթադրենք հաւասար:

Թէպէտ Մեսրոպի, Սահակի և Վռամշապուհի ջանքերն ուղղուած են երևում գլխաւորապէս գրերի գիւտին, որ համապատասխանում է մեր ներկայի լեզուին, բայց իրողութիւնն այն է, որ Աբովեանի դասագիրքը հալածուեց ու չընդունուեց ժամանակակիցների կողմից, մինչ գրերի գիւտի լոկ խորհուրդը համակրանքի և խրախուսանքի հանդիպեց թէ պալատի և թէ վեհարանի կողմից:

Այս այսպէս լինելով հանդերձ, հարկ է մի քիչ մօտից քննել գրաբարի ծագման հանգամանքները:

Որպէս զի մի ազգ հասնի զրի գործածութեանը և ստեղծէ լեզու, հարկաւոր են կուտուրական որոշ պայմաններ: Մենք ստիպուած ենք երկու խօսքով յիշել այն կուտուրական մղիչները, որոնք արդիւնեցին գրաբարի ծագումն ու զարգացումը:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով մի միջազգային կամուրջ է եղել շարունակ թէ մեծ կուտուրական և թէ բարբարոս արշաւանքների առաջ: Թէպէտ ինքը ժամանակ ու յարմարութիւն չէ ունեցել լիովին վայելելու կուտուրայի պտուղները, սակայն առիթ է ունեցել միշտ իրազեկ մնալու համաշ-

խաբճային ղէպքերին և հաղորդակից լինելու ամեն մի խոշոր կուլտուրական շարժման: Պատերազմներով ու զաջնակցութեամբ, յաղթութիւններով ու պարտութեամբ, նա միշտ յարարերութեան մէջ է եղել ժամանակակից առաջնակարգ քաղաքակիրթ պետութիւնների հետ, ուստի դարմանալու բան չէ, և շատ հասկանալի է, որ հայ պալատը գրեթէ յունացած էր, և դեռ Բրիտտոսից առաջ, ըստ Պլուտարքի հեղինակաւոր վկայութեան, Արտաւազդ իշխաւ՝ յունարէն ողբերգութիւններ էր զրուժ: Այդ յունացման լաւադոյն ապացոյցներից մինն են Արշակունի զրաֆները, որոնք յոյն տառերով էին տպւում: Պալատի հետ եթէ ոչ համահաւասար, գէթ զուգահեռաբար ընթանալու էր ազնուականութիւնն ու նախարարութիւնները, հարկաւ, աւելի պարսիկ սովորոյթով ու կենցաղով: Բրիտտոնէութիւնից առաջ և յետոյ Հայաստանում իշխող տարրը մի որոշ աստիճանի կուլտուրայի հասած էր արդէն: Այդ կուլտուրան ոչ պարծենալու, չափ բարձր էր, ոչ արհամարհելու չափ ստոր *):

Այս ամենն այնքան մշակել ու տաշել էր մրտքերը, այն աստիճան մեղմել բարքերը, որ չորրորդ

*) Ե. դարու կիսից մեզ է հասել այդ նախարարական տների կանանց նկարագիրը Եզիշէի ձեռքով, ուր կենցաղի այնպիսի նրբութիւն ու նազանք է կրկում, պահանջների այնպիսի առատութիւն ու պերճանք, որ անհրեակայելի է ներկայ Հայաստանում:

Պակաս կարեւոր չէ Արարատեան դաշտի նկարագիրը, որ տալիս է Փարպեցին: Այնտեղ մի այնպիսի հարստութիւն ենք տեսնում բուսական, հանքային, կենդանական,

դարու հէնց սկզբից հնարաւոր դարձրեց քրիստոնէութեան մուտքը Հայաստան:

Քրիստոնէութիւնը մուտքից առաջ անկարող էր հայ ժողովրդի վրայ ազդել, այդ պիտի լինէր ապագայում. մինչև այդ բարձր ու մարդասիրական կրօն ընդունելը՝ հողը պատրաստուած և մտաւոր ու բարոյական վիճակը հայ ժողովրդի բաւականաչափ հասունացած էր մի այդպիսի կրօն թէկուզ վեր ի վերոյ հասկանալու և ըմբռնելու: Սա հայ-կուլտուրական վիճակի և նրա համեմատական բարձրութեան լաւագոյն ապացոյցն է:

Հեթանոս Հայաստանը, դիտենք, ունէր թագաւոր, ոստան և մեծ ու փարթամ ազնուականութիւն: Պալատն անկասկած ունէր իր դիւանը, ինչպէս և մեծ նախարարական տները. Սիւնեաց, Արծրունեաց, Բազրատունեաց, Մամիկոնեան և այլն *):

Ի՞նչ լեզուով էր կատարուում գրութիւնը, — հաստատ չգիտենք. հաւանօրէն յունարէն կամ պարսկերէն և կամ երկուսն էլ միաժամանակ: Սակայն, երբ

ջրային թէ ցամաքային, թռչուն թէ չորքոտանի, դեղօրայքի և որսի, արհեստների և պերճութեան, որի հետք անգամ հազիւ կարելի է գտնել ներկայ Արարատեան դաշտում:

Եթէ ի նկատի ունենանք, որ Վրաստանն ու Աղուանից աշխարհը թէ միսիօնարութիւն և թէ դպրութիւն Հայաստանից ստացան, որ երևում է վրացերէնում փոխ առած բազմաթիւ կուլտուրական հայ բառերից. ապա հայերի քաղաքակրթութեան աստիճանը ոչ մի դէպքում արհամարհելի չի կարելի համարել:

*) Գիտենք, որ թէպէտ մի քիչ ուշ, Մեօրոպը թագաւորի քարտուղարն էր, իսկ Եղիշէն Վարդան Մամիկոնեանի:

գրագրութիւնը հայերի հետն էր և հայերի համար, պարտադիր չէր անպատճառ օտար լեզուներով լինելու, այլ ծանօթ զրերով, նրանք շատ յաճախ առիթ պիտի ունենային գործածելու *) նաև հայ լեզուն, թէկուզ թարգմանութիւնների, մասնաւոր նամակներէ, և պետական թղթերն ու գաղտնիքն ուրիշներին չմատնելու համար:

Այսպիսով հիմք էր դրում և կազմակերպում էր մի գրական լեզուի նախնական պայմանները:

Մի շատ կարևոր հանգամանք, որ գրաբարի ծագման ինչդրում էրբէք ի նկատի չէ առնուած, դա քուրմերի դասակարգն է:

Քրմութիւնը Հայաստանում թէպէտ չհասաւ բարձրը զարգացման, բայց այնքան էլ աննշան չէր, որ շուենար իր դերն և ազդեցութիւնը, դրա հետ միասին իր դասային լեզուն, որ իբրև մտաւոր դասակարգ աւելի մշակած և աւելի կոկած պիտի լինէր քան նոյն իսկ պալատն ու ազնուականութիւնը, որի հետ նա շատ անգամ արեւակից, ամենամօտ յարաբերութեան մէջ էր: Ի՞նչ լեզու էր գործ ածում նա աղօթելիս և ի՞նչ կրօնական զրքեր ունէր.—հաստատու ռչինչ չզիտենք, սակայն նրա առօրեայ լեզուն հայերէն էր և անկասկած նրբացած և բաւականաչափ մշակուած: Այնպէս որ խորենացու խօսքերը Ուղիւպ

*) Հէնց այսօր մի ամբողջ գրականութիւն և լրագրութիւն կայ հայ տառերով և թուրք բառերով: Պ. Իս. Յարութիւնեանը գրեթէ ապացուցանում է, որ Մեարոպից առաջ էլ հայերը զրեր են ունեցել: Տես նրա «Հայոց գիրը»:

քուրմի մասին, որ զրեց Արտաշէսի և Դարեհի պատմութիւնը, հազիւ թէ դատարկ բառեր լինին: *)

Քրմութիւնը ամուրի դասակարգ չէր, այլ կային և քրմուհիներ, որոնք կամ քրմերի կանայք էին և կամ կրօնուհի:—Դա մի ամբողջ դասակարգ էր, բաւական բազմաթիւ, բաւականաչափ հարուստ և լիովին նուիրուած կրօնական գործերի, համախմբուած մեհենանների շուրջը: Այդ մեհենաններն էին որ տարեց տարի գրաւում էին «աշխարհաժողով» բազմութիւնն ամբողջ Հայաստանից, ուր գալիս էր թագաւորն իր «չորս բիւր» (40,000) և նախարարներն իւրանց «ութ բիւր» (80,000 զօրքով). «300 գաւառատեարք և 400 գահակալ իշխանք», զուարճանալու «ծխանի ծխով և նաւասարգի առաւօտեան եղնիկների վագելով և եղջերուների վագելով»... Այդ «նաւաշխարհակալ» տօներին, ուր բազմութիւնն հաւնում էր մի քանի հարիւր հազար հոգու, որ կատարւում էր ամեն տարի, ուր երգը, ուրախութիւնը, ծէսը, կրօնական և զինուորական հանդէսները միախառնուած զուարճացնում էին ժողովրդին, չէր կարող չըզոյանալ մի լեզու և այդ լեզուի ղեկն անկասկած պիտի հանգչէր այն դասակարգի ձեռին, որ այդ հանդէսների կազմողն և նրանցից օգտուողն էր — քրմութիւնը:

Ազատ որևէ պարապմունքից, զինուորական կամ քաղաքացիական, նա տնտեսապէս սպասուած էր

*) Այս ամենը մեզ պատմում է Անիի Ուղիւս քուրմը, մեհենական պատմութեանց գրողը և ուրիշ շատ բաներ, որ առաջիկայում պիտի ասենք, որ վկայում են պարսից մատենաներն ու հայ վիպասանաց երգերը»... Խալեկնացի

լիովին և կամաց կամաց պիտի նուիրուէր մտաւոր
զբաղման ու պիտի մշակէր մի լեզու:

Իրանք քրմերը և նրանց որդիք յամառ դիմա-
դրութիւնից յետոյ, խելօք ու հեռատես Լուսաւորչի
ձեռքով դարձան քրիստոնեայ պաշտօնեաներ. «Ոմանց
քուրմերի որդիներից վերցնելով, Լուսաւորիչը առա-
ջին խնամքի առարկան էր դարձնում. *) և որոնք
եպիսկոպոսութեան էին արժանի, ձեռնադրութիւն
էին ստանում նրանից. առաջինը, Ալբրանոս անու-
նով եփրատ գետի կողմերն էր լինում վերակացու-
կրկորդը, Եւտաղիոս, Բասենի կողմերը, երրորդը՝
Բասոս, չորրորդը Մովսէս **), և այլն այսպէս 12 հո-
գի յայտնիներից, քուրմերի որդիք կարգւում են «ա-
ճեցնելու քարոզութիւնը»։—Սրանց հետ միասին Լու-
սաւորիչը կարողեց չորս-հարիւր եպիսկոպոս և ան-
համար բաղմութիւն քահանաների ու սարկաւազների:

Տրդատ թագաւորն անգամ, հարկաւ Լուսաւորչի
դրդմամբ, դպրոցներ է բաց անում և հրաման տալիս
«ի գաւառաց բաղմութիւն մանկըստոյ ածել յա-
րուեստ դպրութեան... առաւել զազգս պղծագործ
քրմացն, զմանկունս նոցա ի նոյն ժողովել զումարել
յարժանաւոր տեղիս դասս-դասս և դարման ռոճկաց
կարգել: Եւ զնոսս յերկուս բաժանեալ, զոմանս յա-
սորի դպրութիւն կարգեալ և զոմանս ի հելլեն»...

Հոգևորականների այս ստուար բաղմութիւնը
նոր կրօնը պիտի քարոզէր հայ ժողովրդին և կամայ

*) «Զառաջառունս ձերբասունս առնէր:»

**) Աղաթանազեղոս. այս անունները քրիստոնէական
կնիք են կրում, հաւանօրէն հները փոխուած են ձեռնա-
դրութեան ժամանակ:

ակամայ պիտի մշակէր ու զարգացնէր մի լեզու, եթէ շունէր արդէն, փոխ առնելով պալատից, զլուսններից և կամ ամենահաւանականն է, քուրմերից: Այս վերջինների լեզուն ամենից աւելի պիտի լինէր մշակուած և սրանց սերունդն էր, որ դառնալով քրիստոնեայ եկեղեցու պաշտօնեայ, իր հետ պիտի տանէր իր արդէն կոկ ու պատրաստ, կրօնական ծէսներին և արտայայտութիւններին քաջածանօթ մի լեզու: Եթէ Լուսաւորիչը հեթանոս տօներն ու մեհեանները փոխարինեց քրիստոնէական տօների ու եկեղեցիների՝ քուրմերին ձեռնադրեց քահանայ, բայց հեթանոս լեզուն ու զաղափարները նա չէր կարող իսպառ ջնջել, որ նրանից մի երկու դար յետոյ այնպէս գեղեցիկ և ինքնաբոլի դուրս ցոլացին շարականների մէջ. «արեգակն արդար», «ճառագայթ ճշմարիտ», «լոյս ի լուսոյ» և այլն համեմատութիւններով, որոնք հեթանոս մտքի և հեթանոս երեւակայութեան ու լեզուի ցոլքերն էին, քրիստոնէութեանը պատուաստած:

Ինչպէս ներկայում, այնպէս էլ հեռավոր անցեալում հայերը մենակ չէին իրանց մտաւոր շարժման մէջ. այն ժամանակ օտարազգի քարոզչութիւնը կարելի է ասել աւելի զօրաւոր էր քան հիմա: Քրիստոնէութեան աղբիւրները երկուս էին այն ժամանակ. ա. Ասորիքը, որ անկասկած առաքելութեան առաջին կազմակերպողն էր դէպի Հայաստան և մեր եկեղեցական աւանդութիւնն էլ, Թադէոս ու Բարդուղիմէոս առաքեալների մասին, պարզ ապացոյց են դրան. Ասորի Դանիէլ եպիսկոպոսի մօտ էր, որ Մեսրոպն առաջին անգամ ուսաւ հայ տառերը, որ միսիօնարները ձե-

ուով էր հնարւած՝ Հայաստանում՝ քրիստոնէութիւն տարածելու համար... Մեր ձեռն է հասել Ասորի դպրոցի երկերից Զենոբ-Գլակ և Ղերուբնա կամ Աբգարի թուղթը: Դրանք երկուսն էլ թէպէտ կեղծած ու խմբագրուած վերջերը, պահում են սակայն իրանց մէջ հին միսիօնար դպրոցի խմորը բացայայտ:

Երկրորդ միսիօնարական դպրոցը յունականն էր, որ վերջնապէս հաստատեց քրիստոնէութիւնն Հայաստանում:

Սա հակադիր էր առաջինին և կռիւ էր մղում նրա դէմ: Այս միսիօնարութեան զրաւոր երկը Ագաթանգեղոսն է և կամ նրա նախնական աղբիւրը. «Դրիգորի վկայութիւնը»: Յայտնի է, որ Ագաթանգեղոսի հայ կամ յոյն լեզուով գրուած լինելը մեծ վէճերի առարկայ էր, չնայելով նրա ընտիր հայկաբանութեանը:

Այս երկու դպրոցներն էլ ունէին մի ընդհանուր թշնամի, — հեթանոսութիւնը, որի հետ նրանք պիտի կռուէին նախնի քրիստոնէութեան միակ զէնքով, որ խօսքն էր և քարոզը: Տեսանք, ներկայ լեզուի կազմակերպութեան մէջ Ներս. դպրոցի աշակերտների քարոզները. նոյնը շորքորդ դարում տեղի պիտի ունենար գերագանցօրէն, հեթանոս ուղեղները համոզելու և քրիստ. տարածելու համար ամբողջ Հայաստանում:

Յոյն միսիօնարութիւնն ունէր և յոյն քաղաքականութեան աջակցութիւնը. հեթանոսութիւնն ամենագօրեղ օգնութիւն և աջակցութիւն գտնում էր Պարսկաստանից: Այդ մրցման մէջ հայ միտքը մի ամբողջ դար դեգերելուց յետոյ, հասունացաւ, զարգացաւ և մտածեց սեփական դպրոց ունենալ, կան-

գնել սեփական ոտերի վրայ: Դրա համար նա պիտի ունենար սեփական գիր: Յոյներին դա դուր չեկաւ և իրանց բաժնուժ արգելեցին հայ-դպրոցներ բանալը, առարկելով թէ ի՞նչու Մեսրոպը գիմել էր ասորիներին: Հարկ եղաւ հաւատացնելու, որ գրերը գրտնուած էին Աստուածային շնորհով: Պարսիկներն ուրախ էին մասամբ, որ հայ գրերի շնորհիւ կը թուլանար յոյն ազդեցութիւնն Հայաստանում: Շուտով սակայն երևան եկաւ, որ սեփական ոտերի վրայ կանգնած այս մանուկը մի անընկճելի ներքին ոյժ ունէր, որ ջախջախեց և՛ ասորի, և՛ յոյն դպրոցները, և՛ պարսիկ ու ներքին հեթանոս տարրերը, ազգայնացնելով եկեղեցին, ստեղծելով սեփական գիր ու դպրութիւն և քաղաքական մեղկ ու թոյլ իշխանութեան անկման հետ հաստատելով մի մտաւոր և բարոյական իդէալ, որ գրեթէ յաւիտենաբար թափանցեց հայի արեան և հոգու մէջ: Դա հայացած, ազգայնացած քրիստոնէութիւնն էր:

Հազարեան ճամարանը հիմնուելով 1815 թ. մի որեւէ 35 տարուայ ընթացքում այն է 1850-ին ստեղծել էր իր լեզուն. Ներսիսեան դպրոցը նոյնն ստեղծեց 25 տարիների ընթացքում:

Եթէ մեր ասածները հայ պալատի և քրմութեան, հայ նախարարութիւնների և ազնուականութեան մասին, իբրեւ լեզու ստեղծողների լոկ ենթադրութիւններ են, ապա միսիօնարական դպրոցները Հայաստանում և հայ ժողովրդի մէջ 100 և աւելի տարիների ընթացքում անհնարին է որ չստեղծէին մի լեզու:

Ինչպէս ներկայում աշուղները, այնպէս էլ ան-

ցեալում ազնուականութեան ականջը շոյող «գուսանական» երգեր կային, որոնց մեզ հասած մի քանի բեկորները նուրբ ճաշակ, բարձր դեղարուեցտական արտայայտութիւն և հոմերական երգերին զուգահաւասար արժանիք ունին: Ըստ իս, ապացուցուած է, որ «Մնացորդաց» գրքի հնագոյն թարգմանութիւնը կատարել է Խորեցին *) և շատ ոճեր ու ձևեր այնտեղ առնուած են ուղղակի Գողթան երգերից («կուել-կոփել, համն առնուլ» և այլն), թէ հեթանոս աւանդութիւններն իսպառ մոռացութեան չէր մատնուում, կարելի է տեսնել և «Հայկի» անունից, որ Աստուածաշնչում դրուած է Օրիոն համաստեղութեան տեղ:

Այսպէս ուրեմն, քրմութիւնը, պալատը և ազնուականութիւնը, գողթան երգիչները քրիստոնէութիւնից առաջ, ասորի, յոյն և հայ միսիօնարութիւնը գրերի գիւտից առաջ, մանստանդ միսիօնարական զպրօցներն ու մրցումը միմեանց հետ, ստեղծել էին մի լեզու, որ մեզ հասել է հինգերորդ դարուց և յայտնի է գրաբար անունով: Գրերը գտնելու ժամանակ այդ լեզուն կար արդէն: Վերևը շօշափելի օրինակներով մենք ցոյց տուինք, որ շատ ձևերով նա վերին աստիճանի նրբացած ու մաշուած, կանխել է հէնց ներկայ կենդանի ձևերին հազարաւոր տարիներով, ուրեմն նա մի շինովի, գրի ու կաբինետի լեզու չէ եղել, այլ արդիւնք կենդանի խօսակցութեան: Նա ծլեց ու ծաղկեց սեփական հողի վրայ, խօսողների

*) Խորենացին է «Մնացորդաց» գրքի առաջին թարգմանողը ասորերէնից. «Տարագ» № 10. 1905 թ. Բարդ. եպ. Գէորգեան:

ու մտածողները մի ստուար բազմութեան մէջ. նա ազատ էր այն բոլոր խոչընդոտներից, որոնց պիտի յաղթէր օտար հողի վրայ բուսած մեր ներկայ լեզուն:

Հինգերորդ դարու մեր գրականութիւնն ահագին գլուխներ ունի նուիրած գրերի գիւտի պատմութեան և ոչ մի խօսք, կամ գրեթէ ոչ մի ջանք չենք տեսնում, որ նուիրուած լինէր «լեզուի մշակութեանը»: Լեզուն երևում է կազմ ու պատրաստ մի աղբիւր, որ գրերը գտնելուն պէս ծառայում է այնպիսի հրաշալի թարգմանութիւնների, որպիսին էր Աստուածաշունչը, Ռսկեբեդանի ճառերը և կամ Եզնիկի ու Բուզանդի ինքնուրոյն գործերը: Ներկայի ուսոյթներով Մեսրոպի և նրա անմիջական աշակերտների լեզուն համարւում է աւելի մաքուր, բնական ու գեղեցիկ, քան յետագայ հեղինակներինը, որոնք յունարէնի ազդեցութեան տակ ողորոեցին Մեսրոպեան լեզուի իստակութիւնը: Այդ լեզուն ուրեմն կար և Մեսրոպ-Սահակեան դպրոցը Վաղարշապատում եղաւ այդ լեզուի ոչ թէ ստեղծողը, այլ մշակողն ու զարգացնողը:

Հարց է հիմա. թո՞ւ էր այդ լեզուի գաւառական հիմքը և կամ աւելի ճիշտ՝ ներկայ բարբառներից թո՞ւ է ամենամօտը զրարարին:

Երկու կարծիք կայ. մէկը պնդում է, որ գրաբարի հիմքն Արարատեան բարբառն էր, որովհետեւ Ոստանն այնտեղ էր գտնւում ինչպէս Վահարանը և նա էր բնագաւառն ամբողջ հայութեան: Իսկ միւս կողմը պնդում է, որ Տարօնի բարբառն էր գրաբարի հիմքը, քանի որ Մեսրոպը Տարօնեցի էր:

Ոչ մէջ կողմը ցարդ անհերքելի ապացոյցներ չի բերել: Արարատեան բարբառի համար այն կարելի է ասել, որ դեռ չի ապացուցուած, թէ նա ոստանի լեզուն էր. Գերմանիան այսօր մի քանի տասնեակ ոստան և երկու հատ էլ կայսերական տներ ունի (Վեննա, Բերլին), որոնցից և ոչ մինը տեղական լեզուն չեն գործածում իբրև ոստանի լեզու: Նրանց ներկայ դրական լեզուն ծագում է Սաքսոնիայի դիւանատնից, Լիւտերի թարգմանած Աստուածաշունչի շնորհիւ (Hochdeutsch): Բազրատունի տունը, Արշակունեաց ամենամերձնախարարական տներից մինն էր. հին աւանդութիւններն ու լեզուն անշուշտ նրանք փոխ պիտի առնէին Արշակունիներից և հին ոստանի լեզուն պիտի անցնէր նոր-ոստանին: Յայտնի է սակայն, որ Անիի լեզուն մի արևմտեան բարբառ էր, թէպէտ Անին—Վաղարշապատից հազիւ մէկ օրուայ ճանապարհ է և Շիրակն էլ Արարատեան նահանգի մի գաւառը: Սա մի կողմնակի հերքումն է այն կարծիքի, թէ Արարատեան բարբառը չէր գրաբարի հիմքը. ուղղակի ապացոյց մենք վերևը տեսանք, որ Արարատեան բարբառը չէր կարող գրաբարի հիմքը լինել: Տարօնի բարբառի վերաբերեալ ևս հաստատ փաստ և ապացոյց ոչ ոք չի բերել. թէ նա Մեսրոպի մայրենի լեզուն էր, դա մի իսկական ապացոյց չէ: Ռ. Պատկանեանի մայրենի լեզուն մի արևմտեան բարբառ էր, այն ինչ նա հիմնադիր հղաւ արևելեան լեզուինոյնը կարող էր պատահել և Մեսրոպին: Արարատեան բարբառի կողմնակիցներն էլ Մեսրոպին իրանց կուսակից են համարում ի նկատի ունենալով այն, որ նա թաղաւորի ատենադպիրն էր, ուրեմն Ոստա-

նի լեզուին, հետևաբար և Արարատեան բարբառին քաջածանօթ:

Այս փաստերը զօրաւոր են միմեանց ջնջելու, բայց ոչ ենթադրածը ապացուցանելու համար: Տարօնի կուսակիցները մոռանում են, որ լեզուն մի անհատ, լինի նա մինչև անգամ Մեսրոպ, ստեղծել անկարող է, այն էլ գրաբարի նման մի կոկ ու հարուստ լեզու, չէր կարող մի վայրկեանում կազմ ու սլափափափ գուրս թռչել Մեսրոպի գլխից:

Այսպիսի կասկածելի ենթադրութիւններից միանգամ ընդ միշտ դուրս գալու և հաստատ դիտական հիմերի վրայ կանգնելու համար, լաւագոյնն է համեմատութեան առնել գրաբարը, Տարօնի ու Արարատեան բարբառները: Տարօնի բարբառից չունենալով փոստանիլի և հաւատարիմ բնագիր, մենք առայժմ օգտւում ենք արեւմտեան ձևերով ստեղծարարի, որոնք ընդհանուր և յատուկ են նաև Տարօնին: Ներկայում, երբ այս բարբառների և գրաբարի մէջ 1500 ամեայ մի վրէ կայ. չի էլ կարելի կանգ առնել մասնակի երեւոյթների վրայ, ուստի մենք մատնանիշ պիտի անենք էականն ու հիմնաւորը. համեմատենք օրինակի համար այս երեք լեզուների հոլովմունքը, յատկապէս նրանց սեռական հոլովների վերջոյթները:

Արսէն Բաղդատունին հետեւեալն է տալիս իրեն սեռականի կազմիչ գրաբարում, իր քերականութեան մէջ:

Եզ. Եոզ.

Եզ. Եւզ.

1) ալ ալ

6) ու ուլ

2) ան անց

7) ու ունց

Նգ.	Յոգ.	Նգ.	Յոգ.
3) եր	երց	8) ի	աց
4) ի	ից	9) ին	անց
5) ոյ	ոց	10)ւոյ	եաց

Նգալկի

Յոգնալկի

Արեւմտեան՝ ու. և ի.

ա.

Արեւելեան՝ ի. և ու.

ի.

Գիտենալով, որ ոյ աւելի գիւրութեամբ աւելի
դառնար, քան ի, արեւմտեան հոլովին իբրեւ նախորդ
կունենար, 5, 6, 7, և 10. հոլովումները գրաբարից,
իսկ արեւելեանը միայն 4-րորդը և մասամբ 8, 9 հո-
լովումները: Պարզ է, որ առաջինը աւելի մօտ է գրա-
բարին:

Ինչոր սեռականն է հոլովումների՝ նոյնը կատա-
րեալն է խոնարհման մէջ.

Գրաբար	Արեւմտեան	Արեւելեան
աանջեցայ	տանջուեցայ	տանջուեցի
տանջեցար	տանջուեցար	տանջուեցիր
տանջեցաւ	տանջուեցաւ	տանջուեց

Արեւմտեանը թէպէտ բռնում է գրաբարի և ա-
րեւելեանի միջին տեղը, բայց աւելի մօտ է գրաբա-
րին, քան արեւելեան ձևին. այսպէս և յոգնակի՝

տանջեցանի	տանջուեցանի	տանջուեցինի
տանջեցայի	տանջուեցայի	տանջուեցիի
տանջեցան	տանջուեցան	տանջուեցին

Այսպէս նաեւ անցողական բայերը:

ապրեցուցի ապրեցուցի ապրեցըրեցի ապրեցըրի
ապրեցուցեալ ապրեցուցիւ ապրեցըրեցիւ ապրեցըրիւ
ապրեցոյց ապրեցոց ապրեցըրեց ապրեցըրեց

Կարելի է առարկել, որ այս արեւելեան ձևերն աւելի նոր ժամանակի արդիւնք են, բայց այդ իբրեւ արգումենդ ծառայեցնելու համար հարկաւոր է ապացուցանել սրանց նոր լինելը:

Անկախ այդ ամենից, մենք վերելք հիմնաւոր փաստերով տեսանք, որ Արարատեան կամ որևէ միւսն արեւելեան բարբառներէից չէր կարող լինել զրաբարի հիմքը *):

Այնինչ, շեշտով, հոլովմունքով, խոնարհմունքով, սղոմններով և այլ յատկանիշներով ներկայ արեւմտեան բարբառները հոգեհարազատ զաւակներն են գրաբարի՝ ուրեմն ի բնէ աւելի նրան մօտ ազգակից: Ուստի զուր չէ Այտընեանը կարծում, որ ներկայ բարբառներում (արեւմտեան) չկայ մի ձև, որ կարելի չլինէր հանել գրաբարից. նոյնը սակայն չի կարելի ասել արեւելեան բարբառների մասին:

Այստեղից եզրակացութիւնը պարզ է:

Գրաբարի գոյացման ժամանակ, երբ նա մօտիկ խնամութեան մէջ էր հարաւարեւմտեան բարբառների հետ, գոյութիւն ունէր Արարատեան (նրա հետ միասին և միւս հիւսիսարեւելեան) բարբառներն իր բնորոշ տարրերով և բառականաչափ հեռու գրաբարից: Չի երևում թէ այս բարբառն առանձնապէս ազդած

*) Այդ մասին մենք գրել ենք դեռ 1899-ին «Հանդէս Ամսօրիայում»:

լինի գրաբարի վրայ, բացի գուցե բառերի և ոճերի որոշ պաշար տալուց:

Այս բարբառի զարգացման ընթացքն էլ, ինչպէս կարելի է եզրակացնել նրա նորագոյն հետեանքներից, եղել է ինքնուրոյն և անկախ արեւմտեան բարբառներից:

Բացի այս անհերքելի քերականական ձևերից, նախնեաց ռամկօրէնից մեզ հասած այլ և այլ ձևեր ու ոճեր էլ կան, որոնք մեծ մասամբ արեւմտեան են:

Թէպէտ ներկայում դժուար է ստուգապէս մատնանիշ անել այս կամ այն երևոյթն որպէս արդիւնք այս կամ այն բարբառի, որովհետեւ նրանք մեզ հասած են մեծամեծ ձևափոխութիւններով, ինչպէս որ մի հազար կամ աւելի տարիներ յետոյ, բանասէրի համար դժուար պիտի լինի մեր լեզուի մէջ որոշել այս կամ այն բարբառի տարրերը, որ մենք կատարում ենք այսօր դիւրութեամբ, քանի որ ծանօթ ենք կենդանի բարբառներին:

Նախնեաց ռամկօրէնից մեր ձեռն հասած մի քանի ձևեր միայն պարզապէս կարելի է մատնանիշ անել որպէս արեւմտեան. օրինակ մի վերջադասանհորով. «սոսաւնի մի ալիւր, սրսաւնի մի կոպերտոյ, մատամբ մի, սուտ եղբօր մի, քարի մի, քանի մի», (Այտընեան—քննակ. երես 83),—մի հանգամանք, որ հէնց այսօր էլ արեւմտեան է, բայց ոչ երբէք արեւելեան. երկրորդ՝ շեշտի ազդեցութեամբ սղուած բառերը արեւմտեան բարբառների օրէնքով է ընթացել եկեղեց' պան, տեղ' տարափ. Շատար—Շատ'խոյ. Ամուրըն Ող'կան (Ողական), Զիւնկերտ (Զիւնտկերտ),

Վաղարշկերտ և այլն... Արևելեան շեշտի ազդեցութեամբ սղուփն այլ է, որ մենք ներքեր կտեսնենք:

Արարատիւն ըստ ըստի մի բնորոշ երևոյթն այն է, որ սեռականը զիմօրոշ յօդ չի վերցնում հակառակ տրականի, ուստի նախնեաց ռամկօրէնից մեզ հասած մի քանի օրինակները պարզապէս ցոյց են տալիս արեւմտեան զոյն և ծագումն. «Կամ եղև աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել (պատուել նախնեաց ժամանակի հայր եպիսկոպոսների այս տեղը), Այս խորհուրդ հայոց թագաւորին (հայոց թագաւորի խորհուրդն է)». Մենք յորժամ ի կռուոյն տեղին կամք (կռուի տեղը). յապստամբացն զնդէն եմ. դրանքէն շիխանին (իշխանի). որ և է այլ բարբառով հիթէ թարգմանելու լինենք, այս-ն-զիմօրոշը բաց թողնելու կարիք չի գգացուի:

Այտնեանի հաւաքած ամբողջ ռամկարեւնութիւնն առհասարակ, սկսած Ե. դարուց, այն, ինչ որ ընհանուր չէ՝ բոլոր բարբառներին, կրում է մի անուրանալի կնիք արեւմտեան բարբառների և շեշտի: Կարծես արևելեան հայութիւնը վախեցել, կամ զիտակցօրէն խուսափել է իր բարբառի այս կամ այն բնորոշ զիծը մտցնելու գրականութեան մէջ:

Իրա պատճառն էլ մի քանիս կարող է լինել: Այն, որ արևելեան կամ Արարատեան բարբառը շատ էր խորթ ու հեռու գրաբարից. ուստի նրա այս կամ այն ձևը խիստ անհարազատ պիտի թուար գրաբարում: Ներկայ զօկերէնի պէս, որ ոչ մի կերպ չի համարձակուում գրականութեան մէջ որևէ մասնակ-

ցուծիւն ունենալ: Եւ կամ այն, որ զբարարն արդէն շատ էր հպարտ, կուտուրական և Արարատեան բարբառը շատ ռամիկ ու կոշտ և անարժան գրաբարի մէջ երևան գալու:

Մի բան ակնեքեւ է, որ արեւմտեան բառերն ու ձևերն աւելի հարողատ և ընտանի են զգում իրանց գրաբարի մէջ և խիստ էլ բաղմաթիւ են. միակ ռամիկ ձևը անուրանալի Արարատեան, որ հառել է մեզ Ե դարուց, դա հետեւեալն է. «ընդդէմ ամենայն ընկի, այնը ընկի, փոքր ընկի, յամենայն ընկե, ի տարեր ընկի». և այս ձևի վրայ էլ զարմացած Այտրսեանը բացականչում է. «ոչ հին գրաւորին համաձայն կը հնչէ և ոչ նոր լեզուին» (85 եր. ծանօթ):

Քերականութիւնից Արարատեան բարբառը կարծեմ միակն է, որ մասամբ պահել է գրաբարի պարականը, թէպէտ աննախդիր. ում անովն ընկնեմ (զոյր պարանոցաւ). ոտնետոյն փաթաթուել, գլխով ման տանք (զգլխովդ) և այլն:

Արեւմտեան բարբառների մօտիկութիւնը գրաբարին ցոյց տալուց յետոյ, հարկ է ապացուցանել թէ ո՞րը նրանցից ամենամօտն է գրաբարին: Եթէ մեր ասածները քրմութեան մասին ճիշտ են, ապա գրաբարի հիմքը պիտի լինէր կամ Բագրևանդի (ներկայ Այաշկերտ) և կամ Տարօնի լեզուն: Երկուսն էլ արեւմտեան: Բագրևանդի բարբառի մասին մենք մօտիկ տեղեկութիւն չունինք, ինչ վերաբերում է Տարօնի բարբառին, ներկայում չկայ մէկը, որ աւելի մօտ լինի գրաբարին իր հնչմունքով, համաձայնութիւնով և նախդիրներով, ինչպէս այդ ցոյց է տուել

Հետո Մսերեանը *)։ Հին «Աշտիշատն» կամ «Յաշտից տեղին»—ամեն յարմարութիւն ունէր կազմակերպելու ամենաընտիր լեզու, քանի որ նա հայ հեթանոսութեան ամենամեծ կենտրոնն էր և ամենամեծ դիմադրութիւն ցոյց տուաւ քրիստոնէութեան։

Աշտիշատը զտնուում էր Եփրատի ափին, որ Հայաստանի կուլտուրական ամենամեծ և ամենահին ուղին էր հարաւային-ասորա-բաբելական երկիրներէ հետ կապող։

Կարևորն այն է, որ իբրև քրիստոնէական եկեղեցի, Աշտիշատն համարուում էր «առաջին» և «մայր եկեղեցի», ուր կաթողիկոսներն պարտական էին զնալու և պատարագելու Թաղաւորների, նախարարների, մեծամեծների և աշխարհախումբ բազմութեան ուղեկցութեամբ։

«Զայնու ժամանակաւ երթեալ հասնէր Եսպիսկոպոսապեան Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու... Սա երթեալ կատարէր սնդ, ըստ հանապազ սովորութեան... զպատարազն գոհութեան... Քանզի այնպես իսկ սովոր էին «Եսպիսկոպոսապետքն Հայոց, նանդերմ քաղաւորօքն էս մեծամեծօքն, նախարարօքն էս աշխարհախումբ բազմութեամբ, պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն, և ապա յանուն Աստուածութեանն «սրբեցան և հեւն տուն աղօթից և ուխտից»։ (Փառասոս Բուզանդացի. զպրութիւն Գ. գլուխ Գ.)

Թէ հին Հայաստանի մտաւոր-կուլտուրական

*) Л. Мсеравцъ. «Армянская Диалектология. Мушскій діалектъ».

կենդրոնը Աշտիշատն էր, ապացոյց հէնց մօտիկ անցեալում կատարւող ուխտագնացութիւնները Հայաստանի ամեն կողմերից կարաւաններով ու ահագին խմբերով: Ներկայ հայ աշուղը, արհեստաւորը, լաւախաղացը և առհասարակ ամեն մի հայ հաւատում է, որ «շնորհք ու մուրազ» տուողը Մշու սուլթան մուրազատու ս. Կարապետն է: Ս. Կարապետի կուլտը ամենահինն ու ամենամեծն է Հայաստանում շնորհիւ ի հարկէ, հեթանոս ականդութեան և հեթանոս հաւատալիքների, մինչ այն աստիճան, որ սովորական պասերից դուրս, շատերը ժողովրդից, առանձին «ս. Կարապետի պաս» են պահում կամաւոր, եօթ շաբաթ շարունակ, իրանց «մուրազին» հասնելու համար, որ տեւում է 7—21 տարի: Այդտեղ էր ահա հայ քրմութեան ամենագօրեղ բունը, ուր ամեն յարմարութիւն կար մի ընտիր լեզու մշակելու և զարգացնելու, որը, բաղդի մի զուգադիպութեամբ հարազատ ու ծանօթ էր Մեսրոպին, որպէս մայրենի լեզու:

ԳԼ. XIV

ԿԵՆԴԱՆԻ ԼԵՋՈՒ ԷՐ ԱՐԴԵՅՔ ԳՐԱԳԱՐԸ

Այս ամենն հաստատելու համար պէտք է ապացուցանել, որ գրաբարը մի կաբինետի լեզու չէր, ուրեմն խօսւում էր: Այդ արդէն տեսանք գրաբար, զօկերէն և Արարատեան որոշ ձևեր համեմատելուց: Կան և այլ հանգամանքներ նոյնն ապացուցանող: Այսօր կենդանի լեզուի արդիւնք է այն, որ դ. հնչիւնը բառերի մէջը և վերջը հնչւում է թ. Վարթան, զարթ կարթալ, մարթ և այլն... Եթէ նոյնը մենք ցոյց տալ կարենանք գրաբարում, հաստատած կլինենք այն, որ նա էլ խօսւում էր: Այսպիսի երկու բառ միայն հասել է մեզ հինգերորդ դարուց ա. Վրթանէս: Եթէ ես յունական մասնիկը հեռացնենք, կմնայ Վրթան,—որ Վարդան բառի ամփոփն է, և դ. փոխարինուած թ: Բ. տ.թ. 8—այստեղ բացասող մասնիկ է. տգեղ. տգէտ բառերի նման, որի հեռացնելուց կմնայ. օթ, =օդ:

Ներկայ բարբառներում փաղաքշականի վերջին կ. յաճախ ընկնում է. պապիկ, մամիկ, տատիկ մին-

չև անգամ աղջիկ, դառնում են. պապի, մամի, տատի և աղջի:

Գրաբարում այդպէս կորած է կ. արծուի (կ) մի—մէկ «պատառի (կ) մի հաց». նոյնը և բառի սկզբին. գաւառակ. կեղծ—գրար. ախս: Յատուկ անուններից մի քանիսն էլ յայտնի հետքեր են կրում ընտանի լեզուի. օր. գողթան երգերի Տիգրան ու Վահագն անունները չորրորդ դարուց այսկողմը չեն անցնում, այլ այնուհետեւ երևան են գալիս աւելի ընտանեկան—Տիրան և Վահան ձևերով: —Առասպելական Արմենակ, Արամ և Արա անուններն էլ, լեզուաբանօրէն ներկայացնում են ժամանակի որոշ հետեականութիւն, որովհետեւ դրանք պարզօրէն ծագում են միմեանցից, մանուկ ձևերն աւելի նոր են: Հայկ—նոյն օրէնքով դառել է հայ:

Գաւառական շատ բառերի սկզբում այսօր լսում ենք հ, Արարատեան բարբառում լ՛, և Վանի բարբառում իւ, ուր գրաբարը ոչինչ ունի նրանց տեղակ:

Գրաբ.	Էրգերում.	Արարատ	Վան	Ղարաբ.
ալևոր	հալևոր	—	խալևոր	—
ամոլ	համոլ	—	—	—
արբել	հարբել	—	—	—
ով	—	—	—	հո՛ւ
որս	—	ֆորս	—	հորս
ընկեր	—	հընկեր	—	—
երբ	—	—	—	հի՛բ

Ո՛չ մի հնար չկայ ապացուցանելու, որ գաւառական ձևերի հ, իւ և լ՛, նոր ժամանակներումն է աւելացած և պատճառ էլ չկար այդ աւելացումներին.

(կարելի է միայն ցոյց տալ, որ նախնի ի. գաւառահաններում խտացել է դառնալով Փ և խ) իսկ նոյն հնչիւնների բացակայութիւնը զրաբարում յիշեցնում է ներկայ ֆրանսերէնի խուլ ի որ գրւում է, բայց արդէն դադարել է հնչուելուց: Հետեւեալ ի գաւառահան բառերի սկզբին անհետացած էր զրաբարում դեռ 1500 տարիներ առաջ, որ ապացոյց է զրաբարի կենդանի լինելուն:

Մենք տեսանք, որ նմ մաշուելով դառնում է զ Մնձուր—Մզուր, նախանձ—նախազ և այլն, այդ օրէնքով «իմձ» պիտի դառնար իզ, որ զրաբար յիրաւի դառել է. առ—իս, (զիս): Զ ևս-ի ազդեցութեան առկ խտացել դառել է ս. զիս=զիզ: Մի շատ առօրեայ և գործածական ձև, «ինձ», այսօր աւելի հին է քան զրաբար «զիս», որ նուրբ ու կենդանի շրթունքների արդիւնք է: Ներքեր մենք դարձեալ առիթ կուսենանք նորանոր ապացոյցներ բերելու այս ժամին:

Այդ կարելի է ցոյց տալ և զրաբար ու աշխարհաբար համեմատութիւններով. եթէ մի հազար տարի յետոյ մէկը վերջնի համեմատելու այսպիսի երկու նախադասութիւն աւետարանից.

Գրաբար՝ «զի աւասիկ տապար առ արմին ծառոց դին»

Աշխարհաբար՝ «որովհետեւ ահա կացինը ծառերի արմատների մօտ է արւում»:

Անկասկած, պիտի ասի, որ առաջինը եղել է մի խօսուող, երկրորդը լոկ գրաւոր մի լեզու: Վասնզի դառել է զի. ահա աւասիկ=աւասիկ. արմատին=արմին. դա միմիայն արդիւնք է կենդանի շրթունքների:

Թէպէտ զրաբարը գրի առնուեց 406 թուականից,

ներա հիմքը, քերականութիւնն ու ձևերը չորրորդ, մինչև անգամ անկասկած երրորդ դարու լեզու էր, որովհետև մի լեզուի որոշակի փոփոխութիւնը տարիներով չէ՝ որ կատարուում է, այլ դարերով: Այնպէս որ զրաբարի հնութիւնը անկասկած հասնում է մօտ 2000 տարուայ:

Որպէսզի մի լեզու աճի և զարգանայ, հարկաւոր են կուլտուրական շատ գործօններ, քաղաքական անկախ կեանք, տնտեսական ապահովութիւն և երկարատև խաղաղութիւն: Գրաբարը չունեցաւ այդ պայմաններից գրեթէ ոչ մէկը: Գրերը գտնելուց յետոյ չանցած մի օրէ է 40 տարի, Արշակունեաց թագաւորութիւնն ընկաւ և Հայաստանը դարձաւ մի անընդհատ պատերազմավայր: Քանի որ գրերը գտնուել էին կրօնական դրողմներով, քաղաքական կեանքի անկման հետ ոյժն ու բարոյական տիրապետութիւնն Հայաստանում անցաւ կրօնաւորների ձեռք, նորածիլ զրական լեզուն դարձաւ կրօնի ձեռնասունն ու եկեղեցու գէնքը, որ ծառայում էր մի կողմից ոչնչացնելու հինն և հեթանոսականը, միւս կողմից զարգացնելու նորն ու քրիստոնէականը:—Չնայելով արտաքին ու ներքին աննպաստ հանգամանքներին, զրաբարը մի օրէ է 100 տարուայ ընթացքում հասաւ համեմատաբար բարձր զարգացման, ձևերի ճոխութեան, բառերի հարստութեան և ընտրութեան, առանց սակայն հասնել կարենալու կատարելութեան, որովհետև նախ արտաքին ու ներքին պայմաններն էին աննպաստ, երկրորդ իր ընտրած ասպարէզն էր նեղ ու սահմանափակ: Լինելով նեղ կրօնականների օրգան, նա ոչ միայն չարտադրեց մի օրէ խոշոր աշ-

խարհիկ երկ, այլ և մինչև 12, 13 դարը չխնայեց ոչ մի ճիճ ու ջանք խեղդելու ամեն մի աշխարհիկ արտայայտութիւն լինէր դա մի երգ, մի առակ, մի ռամիկ պատմութեամբ:—Մինչև որ, Ռուբինեանց ժամանակ, արդէն մոռացւած ու հնացած, իբրև դպրոցի և սովորովի լեզու, իրան հետ զուգընթաց, առանց ճանաչելու նրա գոյութեան իրաւունքը, թոյլ պիտի տար երևան գալու մի նոր լեզուի, որ երբէք գրական կոչուելու պատուին չարժանացաւ և ցարդ յայտնի է «մախնեաց ռամկօրէն» անունով: Այդ ռամկօրէնը պարզ ու անպաճոյճ է նիւթով, ձեռով և արտայայտութիւններով. լինելով գրաբարի չափ հին, նա ազատ էր իբրև կենդանի լեզու յեղաշրջուելու, ձեւփոխուելու և պարզուելու, խօսող ժողովրդի պիտոյքների և պահանջների հասեմատ: Ուստի նրա բառարանը հարստացաւ օտար բառերով սեփականի մոռացմամբ, քերականութիւնը պարզուեց, բառերը սղուեցան ու կարճացան լինելով առօրեայ ու սովորական: Այդ ռամկօրէնը չունեցաւ մէկը, որ մշակէր ու զարգացնէր, ընդհակառակը ճանաչուեց որպէս ապօրինի գաւակ և միշտ արհամարհուեց: Մնալով լոկ ռամիկի պահանջներին բաւարարութիւն տուող, այդ լեզուով սկսուեցին գրուել ու թարգմանուիլ բուժարաններ, օրինագրքեր, պետական թղթեր ու զաշնագիրներ և կեանքի առօրեայ պիտոյքներին վերաբերեալ այլ իրողութիւններ: Այդ լեզուով էր, որ ժողովուրդը պատմում էր իր հէքեաթներն ու առակները և աշուղը երգում էր իր սէրն ու նորա զեղեցկութիւնը *):

*) Թէ որքան փափուկ ու գիւրեկան էր այդ լեզուն, ընթերցողը կարող է դատել Քուչակի հետեւալ հատուածից.

Այդ լեզուով մենք մի ամբողջ գրականութիւն ունինք հին ձեռագիրներէ և փոշիներէ մէջ կորած ու անյայտ, որ նոր-նոր երևան գալով, առաջին անգամ աշխարհի ստեղծումից յետոյ, բաց են ա-նում մեր առաջ հայ ժողովրդի սիրտն ու հոգին իր բնական անկեղծութեամբ, նրա սէրը, վիշտը, ուրա-խութիւնն ու տրտմութիւնը, պանդխտի դառն ու վշտաբեկ երգերը ժողովրդի լեզուով, ժողովրդի ար-տայայտութիւններով *):

Այս միջնադարեան աամկօրէնն էր, որ հետզհետէ մաշուելով և աղճատուելով թուրք ազդեցութեան տակ, տասնութերորդ դարուց սկսած՝ նախ Մխի-թարեանների, ապա 19-րդ դարու սկզբին բո-ղոքականների, ի վերջոյ նաև լուսաւորչական հայե-րի ձեռով Պօլիս և Զմիւռնիա դպրոցներում և մա-մուլի մէջ մշակուեց, զարգացաւ, հարստացաւ ու նրբացաւ—դիմելով մեծամեծ փոխառութիւնների շա-րունակ դրաբաբին և դարձաւ մեր ներկայի արեւմը-տահայ լեզուն,—հիմք ունենալով արեւմտեան բար-բառներին ընդհ. մի քերականութիւն և Պօլսի հրնչ-մունքը, շեշտը և համաձայնութիւնը:

«Զուր-գըլգըլալէն կուգաս, գետի թոր ակնէն կուգաս,
«Երթաս այդ ձորհրդ ի վայր, ձայնդ կայ, ու դուն չերևաս,
«Գիտեմ, սիրու տէր ես դուն, ի օտար աշխարհ կու գնաս.
«Երթաս ու սիրուդ հասնիս, գիշերը քուն չի լինաս:

**) Պ. Կ. Կոստանեանի և Զօրանեանի շնորհիւ այդ երգիչներն արդէն ազատուեմ են դարաւոր մոռացումից:

ԳԼ. XV

Հ Ն Ձ Մ Ո Ւ Ն Ք Ն Ի Գ Ի Ր

Մարդկային թոքերի, կոկորդի, կատիկի (kehlkopf) և բերանի միջոցով, օդի արտաշնչմամբ որոշ ձայներ են առաջանում, որոնք հնչիւններ են կոչւում՝ և ծառայում են որպէս տարրեր բանաւոր լեզուի։ Առանձին հնչիւններ լեզուի մէջ շատ հազիւ են պատահում. նրանք սովորաբար երևան են գալիս փոխադարձ կապակցութեամբ — բառերի և նախադասութիւնների մէջ, և հասարակ մարդը, որ վարժ չէ ընթերցանութեան, մեծ դժուարութեամբ պիտի կարողանայ բոլոր վերլուծել հնչիւնների, այն էլ ոչ միշտ աջողութեամբ։

Մարդկային կուլտուրայի մեծագոյն քայլերից մինն էր, գտնել լեզուի այս էական տարրերը, որ զրեթէ հաւասար էր զրերի գիւտին, որովհետեւ այն օրից, երբ մարդը հնչիւնների համար առանձին նշաններ հնարեց, նշանակում է նա տարրալուծել սկսւել բառերը և ճանաչեց նրանց բաղկարար մասունքը։ Այդ պատճառով ահա, մի լեզուի հնչիւնների

և զրեբրի գիւտը համարեա միաժամանակ են ընկնում, առանց սակայն նոյնանալու, որովհետեւ մինը ձայն է, միւսը միայն նրա պայմանական նշանը:

Սակայն, սխալ կրլինէր կարծել, թէ մի որ և է լեզուի գրերը, որքան էլ նրանք կատարեալ լինին, ամբողջովին արտայայտել կամ փոխարինել կարող էին նոյն լեզուի հնչիւններին: Հէնց զրեբրի և հնչիւնների էութիւնը անկարելի է դարձնում այդ հանգամանքը: Հնչիւնը մի ձայն է, օդի տատանում, որ մեզ մատչելի է ականջի միջոցով. նա լսողութեան մտապատկեր է: Այդ հնչիւնը յիշելու համար մենք հնարել ենք մի նշան, որ այլ ևս ականջի հետ գործ չունի, այլ մեզ մատչելի է մեր աչքի միջոցով. լսողութեան մտապատկերը մենք արտայայտել ենք տեսողութեան մտապատկերով. այն՝ ինչ որ պիտի լսէինք՝ հիմա զրեբրի միջոցով տեսնում ենք... Հոգեբանօրէն դա մի անկարելիութիւն է, որովհետեւ չի կարելի երբէք աչքով լսել կամ ականջով տեսնել. աչքը երբէք չի կարող փոխարինել ականջին, ուստի և զրեբրի ու հնչիւնների յարաբերութիւնը, ոչ տրամաբանական ոչ էլ հոգեբանական հիմք ունի: Դա մի արհեստական և պայմանական ընդունելութիւն է, խախտւած և անկայուն իր էութեամբ: Այդ է ահա պատճառը, որ ագէտն ու վայրենին, որ անտեղեակ են կարգալու արուեստին, չեն կարողանում ըմբռնել, թէ ի՞նչպէս բանական մարդը մի որ և է բան է կարողանում հասկանալ անձայն զրից և մանուկը, որ այնքան դժուարութեամբ է ընտելանում հնչիւնը կապել զրի հետ, որոնց մէջ ըստ էութեան, իսկապէս և ոչ մի կապ կայ:

Այդպիսով գիրը և հնչիւնը ըստ էութեան հիմնովին տարբեր երևոյթներ՝ կապուած են միայն արհեստաբար, որ աչքի է ընկնում և բազմաթիւ անյարմարութիւնների առիթ տալիս, երբ այդ երկուսը դիտում ենք իրանց կեանքի և զարգացման ընթացքում, որոնք, բնականօրէն համընթաց չէին կարող լինել, որովհետեւ, մինը կայուն և հաստատուն է, միւսը յարաշարժ և փոփոխական... ուստի՝ գրերը հաստատելուց մի քանի դար յետոյ այդ տարբեր ընթացքներն իսկոյն զգալի են դառնում: Գրերն այլ ևս այն չեն, ինչ որ հնչիւնները. մէկը շարժուել ու փոփոխուել է, միւսը դանդաղել ու յետ մնացել: Այն պայմանական համաձայնութիւնը, որ կայացրել էինք աչքի ու ականջի մէջ, այլ ևս ներդաշնակ չէ:

Մենք պայմանական նշաններ ենք հնարել լեզուին ծառայեցնելու. ժամանակի ընթացքում, լեզուն, հետեւելով իր զարգացման հոսանքին, մաշում է իր տարրերը, կորցնում, այլափոխում, նորերն է աւելացնում, շարժւում է շարունակ: Գիրը չունի կենդանի հնչմունքի այդ շարժոյթը. նա դանդաղ ու պահպանողական է իր էութեամբ, և ահա զալիս է մի ժամանակ, որ նա այլ ևս համապատասխան չէ լեզուի փոփոխուած հնչիւններին: Սակայն, մոռացած իր ծառայական դերը, պահանջներ է դնում մեր առաջ, որոնք ուղղագրական կանոններ են կոչւում... Այս հանգամանքը ծնեցնում է պայքար: Մտածողների այն մասը, որ աւելի իր ականջին է ուղում հաշիւ տալ քան աչքին, պահանջում է փոփոխել գրութիւնը, շարժել, առաջ տանել և դարձեալ համաձայնեցնել լեզուի փոփոխուած ձևերին... Նրանք

մտածում են, որ կենդանի լեզուն ոչ մի կապ, ոչ մի առնչություն չունի զրի և ուղղագրութեան հետ: Նա լիովին անկախ երևոյի է, որ ունի իր օրէնքը, իր ընթացքը և զարգացումը: Կան բազմաթիւ լեզուներ, որոնք զիր ասած բանը իսկի չեն էլ ճանաչում, դիր կայ թէ չկայ, լեզուի գոյութեան համար մի և նոյն է:

Մարդկային կուտուրայի պահանջն է, որ ստեղծել է զիրը և փաթաթել լեզուի վզին, որպէս մի հագուստ, որ չունենալով լեզուի առանձին և շարժուն յատկութիւնները, զուրկ լինելով աճելու, նուազելու և կամ ձևափոխուելու ընդունակութիւններից, ժամանակի ընթացքում, նա կամ փոքր է դուրս գալիս, կամ լայն և կամ անճոռնի կերպով հին ու նեղ, լեզուի վերաբերմամբ: Գրի պաշտօնն է լեզուին ծառայելը և հէնց նրա զարգացման պատմութիւնը ցոյց է տալիս, որ նա շարունակ ձգտել է կարելոյն չափ լիութեամբ կատարել իր դերը: Նախնի պատկերացիրը (երոգլիֆ) դառնում է վանկագիր (սեպագիր), այս վերջինը դառնում է բաղաձայնների զիր (արաբերէն), սա էլ կատարելագործուելով դառնում է հնչիւնագիր: Այստեղ էլ, որքան մի զիր նոր է և լաւ է ձևուած լեզուի վրայ, այնքան էլ նա կատարեալ ու ընտիր է: Այդպիսի դէպքում ուղղագրութիւն ասած բանը չկայ, որովհետեւ զիրն այնքան կատարեալ և այնչափ յարմար է իր պաշտօնին, որ գայթելու տեղ չի մնում: Ինչպէս որ լեզուն է արտասանում, այնպէս էլ գրւում է: Այնտեղ արդէն ամեն բան ուղիղ է ի բնէ, ծուռ գրելու առիթ չկայ, որովհետեւ այդ դէպքում նա համապատասխան չէր լինի բնական

հնչմանը: Այս տեսակէտով՝ այն, ինչ որ մենք և բոլոր ազգերը ուղղագրութիւն ենք կոչում, ողբալի կերպով հակասում է տրամաբանութեանը. օրինակ, մեր ներկայ լեզուի տեսակէտով վարդ, մարդ, վրայ, նորա գրելը ուղիղ չէ, այլ ծուռ-սխալ. հետևաբար, դա ուղղագրութիւն չէ, այլ ծագրութիւն. ուղիղն է վարթ, մարթ, վրա, նորա և այլն, որ այսօր ծուռ կամ սխալ է համարւում:

Այդ իսկ տեսակէտով, այսօրուայ մեր հնչումն ու տառերը շատ ու շատ հեռու են միմեանցից: Այսպէս, մենք բառերի սկզբին այլևս յ չունինք. նրա հնչումը պահուած է Ալեքսանդրօպօլում և Էջմիածնի գաւառում, որ մեզ, գրական մարդկանց համար անմատչելի և անհասկանալի է: Չունինք նոյնպէս ու-ի իսկական հնչումը, քանի որ բառերի մէջ նա օ-է, իսկ բառերի սկիզբը ղօ: Անգառնալի կերպով կորցրել ենք չ, որ այսօր պարզ վ-է: Ոյ երկբարբառն այսօր բառերի մէջ հնչում է ոյ (յձ) իսկ բառերի վերջը որպէս պարզ օ. ապացոյց, որ մենք լիովին կորցրել ենք նախնական հնչումն անգառնալի կերպով: Այդ տառերը Մեսրոպի ժամանակ անշուշտ ունէին որոշ և հաստատ հնչիւններ, որ ժամանակի ընթացքում մաշուելով անյայտացան և այսօր մեծամեծ վէճերի և թիւրիմացոյթների առիթ են լինում մեր տգիտութեան շնորհիւ. քանի որ ոչ մի ցաւելու բան չկայ այդ կորուստը ողբալու, որ լեզուի զարգացման մի պարզ երևոյթ է: Ռուսերէնն էլ որ մեր լեզուի համեմատութեամբ մի մանուկ է, այսօր կորցրել է Җ, Ң, Ҥ ֆրանսերէնը բազմաթիւ հնչիւններ, որոնք թէպէտ գրւում են, բայց չեն կար-

դացւում... Այդ կորուստների փոխանակ մեր լեզուն հարստացել է նոր և հաստատուն հնչիւններով, որոնք առաջ անորոշ և փոփոխական էին. այսպէս ւն. երկբարբառը այսօր դարձել է մի պարզ և հաստատուն օ: Իւ, (ю) զրեթէ նոյնպէս դառել է մի հնչիւն, տարաբաղդաբար դեռ մնում է նախկին երկբարբառի ուղղագրութեամբ: Մի դիւրին, անհրաժեշտ և ընթերցումն հեշտացնող նորմուծութիւն կը լինէր, եթէ այսօրուայ իւ-ի փոխանակ մի տառ միայն հնարէինք, ինչպէս այդ անում ենք եւ-ի նկատմամբ: Նոյնը կարելի էր ասել և ու-ի մասին, որ այսօր մի երկբարբառ չէ այլիս այլ մի պարզ հնչիւն (у): Սակայն, մեր ուղեգները դեռ հասունացած չեն այդ տարրական ճշմարտութիւններն ըմբռնելու... Կորցնելով երեք անհաստատ հնչիւն, մեր ներկայ լեզուն հնի վրայ աւելացրել է օ, իւ և ու, պարզ ու գեղեցիկ ձայնաւորները, որ մեծ հարստութիւն է լեզուի համար: Այնպէս որ ներկայ լեզուի իսկական հնչիւններն են.

Չայնատր. ա, ե, է, ը, ի, օ, ու, իւ.

Նայ. յ բառերի մէջը և միավանկերի վերջը. ր, ու, Նրկըարբառ. եա, եօ, այ, ույ,

Բաղաձայն. բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ց, փ, ք, ֆ.

Այս հնչիւնները արեւելեան հայերէսինն է, որովհետեւ միևնոյն հնչիւնները արեւմտահայն (պօլսեցին) արտասանում է լիովին հակառակը. մեր «պանիր»-ը նրանք հնչում են «բանիր» և ընդհակառակը: Այս էլ մի լաւ աղացոյց է այն բանի, որ զանանցանք է Մեսրոպեան հնչմունքը վերականգ-

նելու ջանքերը: Եթէ այսօր, կենդանի հայութիւնն երկու մաս բաժանուած միևնոյն տառերը հնչում է միմեանց լիովին հակառակ, չկայ որևէ յենակէտ 1500 տարիների վրայից սլանալով Մեսրոպի հնչմունքը գտնելու և ոչ էլ հնարաւոր է, որևէ գտած հնչիւն կենդանացնել, եթէ նա հիմ չունի կենդանի շրթոնքներում: Լեզուների փոփոխութիւնն ու զարգացումը դարէ դար, իրօք արդիւնք է հնչիւնների փոփոխմանն ու զարգացմանը, որովհետև մի որևէ բառ մէկէն չի կարող այլափոխուել, ու նոր ձև ըստանալ, այլ նախ աստիճանաբար, թեթեւանում կամ թուլանում և կամ ընդհակառակը զօրեղանում և ըստ-ւարանում են որոշ հնչիւններ, որոնք անալօգիայով ապա իրանց հետն են տանում նման հնչիւններ նախ նման բառերից, ապա նման հնչիւններ նաև աննման բառերից, որ հետզհետէ դառնում է կանոն, երբեմն ընդհանրանալով մինչև անգամ օրէնք: Այսպէս՝ Մեսրոպեան հին հնչմունքը հետզհետէ արևմտեան հայրենում առաջ բերաւ մի փոփոխմունք, որով բ, գ, դ, ձ, ջ, փոխեցին իրանց դերերը պ, կ, տ, ծ և ճ հնչիւնների հետ, որ լեզուաբանութեան մէջ յայտնի մի օրէնք է, «Laut verschiebung» հնչիւնների թաւալումն անունով:

Դիտելով այս արմատական տարբերութիւնը գրաբար, արևելեան և արևմտահայ հնչիւնների, մնում է զարմանալ, թէ ինչպէս կտրելով մեր կապերը գրաբարից, մենք այնուամենայնիւ, երեքով միասին, տարբեր հնչմունքով ու քերականութեամբ մնացել ենք կաշկանդուած միևնոյն ուղղագրութեամբ. այսպէս, Աստած, Աստծոյ, բարի—բարոյ, սրտ,

պատճառով. այլ ենք հնչում մենք, այլ՝ պոլսեցին, անպայման այլ կը հնչէր նաև Մեսրոպը: Մեր փոփոխուած ու այլազանուած լեզուի մէջ այս տարօրինակ ուղղագրութիւնն է, որ պահել է միատեսակութիւնը միևնոյն ծագումն ունեցող բարբառների մէջ:

Այդ է գուցէ պատճառը, որ շատերի փորձերը, առաջ բերելու նոր ուղղագրութիւն մեր հնչման համեմատ, շարունակ հանդիպել է անաջողութեան, անշուշտ շնորհիւ գրերի այն տարօրինակ յատկութեան, որ նրանք պահպանելով իրանց ձևերն անփոփոխ, շարունակ փոխում են իրանց հնչումը, ինչպէս այդ երևում է մեր վերևի համեմատութիւնից: — Այս աշխատութեան նպատակից դուրս է շօշափել մեր ուղղագրութեան պակասութիւնները: Հետևելով մեր բռնած համեմատական ընթացքին, բերենք մի նախադասութիւն միայն, ցոյց տալու համար, թէ որքան դժուարին մի երևոյթ է ուղղագրութիւն ասած բանը: Մեր հնչումով գրած մի այսպիսի նախադասութիւն, «քաղը պանիրը քերանին, թռալ դէպի Պօլիս, պոլսեցին կհնչէր. պատք քանիրը պերանին, թռալ տէրի Բօլիս»:

Այդ ծանր հետևանքներն են գուցէ պատճառը և գրաբարի անյաղթելի հեղինակութիւնը, որ մենք թօթափել չենք կարողանում հին ուղղագրութեան բեռը մեր լեզուից, գրելիս մենք յարմարուելով նրան, կարգալիս նրան յարմարեցնելով մեզ, առաջ ենք գնում խորտ ու բորտ, այն միամիտ գիտակցութեամբ, թէ հետևում ենք մեր պատուական ապուպապերի հնչմունքին:

ԳԼ. XVI

Լ Ե Չ Ո Ւ Ր Է Ս Տ Ե Տ Ի Ք Ե Ն

Լեզուն մի հոգեբանական երևոյթ է, որ ծառայում է մարդկային մտքի փոխանակութեանը: Զրնայելով որ հոգեկան երևոյթները համամարդկային են, մարդու մտածութեան կերպը ամեն տեղ կատարւում է նոյն օրէնքներով,—տրամաբանութիւնն ամենուրեք նոյնն է. սակայն, տրամաբանօրէն մտածելու արտաքին ձևը, նրա արտայայտութիւնը ձայների միջոցով այնքան տարբեր է, որքան լեզուներ կան աշխարհիս երեսին: Լյդ արտայայտութիւնը տարբեր է ոչ միայն զանազան ազգութիւնների մէջ, այլ և մի և նոյն ազգի, մի և նոյն տէրութեան զանազան գաւառներում, շատ անգամ նաև մի և նոյն քաղաքի մէջ: Տեղը, դիրքը և ցեղը, կլիման ու պարապմունքը, միջավայրը և շրջապատող ազգերը, կրթութիւնն ու դասային յատկանիշները թողնում են իրանց կնիքը լեզուի վրայ մինչ այն աստիճան, որ օրինակ այլ է Թիֆլիզի կրթուած հայերի և այլ ժողովրդի լեզուն: Նոյն երևոյթը նկատելի է համարեա բոլոր մեծ քաղաքներում—Պարիզ, Բերլին, Մոսկուա, ուր ժողո-

վրբի բարձր և ստորին դասերը բոլորովին տարբեր ձևեր են բանեցնում իրանց մտքերը արտայայտելու, այնպէս որ այդ դասակարգերը շատ անգամ իրար դժուարութեամբ են հասկանում: Այդպիսով որքան լեզուն համայնական, ընդհանուր երևոյթ է, որով մարդիկ իրար հետ հաղորդակցում են, իւր մասնաւորութեան մէջ նա նոյնքան նեղ դասային երևոյթ է, որ շատ անգամ սեղմւում հասնում է անհատականութեան... Լեզուի անհատականութիւնը գրականութեան մէջ կոչւում է ոճ. այստեղից Բիւֆֆոնի այն առակաւոր դարձած ասացումս ճշմարտութիւնը՝ թէ ոճը ինքը մարդն է (Le style c'est l'homme même):

Եթէ մի ազգութեան դասակարգերի և անդամների մէջ, որոնք շարունակ հաղորդակցում են միմեանց հետ, կարող է լեզուի այդպիսի տարբերանք գոյութիւն ունենալ, ապա հասկանալի է, որ ազգերի լեզուն այնքան աւելի զանազան է լինելու, որքան նրանք ժամանակով ու տարածութեամբ միմեանցից հեռու են:

Զինարէնն ու հայերէնը, որ ոչ մի հաղորդակցութեան առիթ չեն ունեցել, ծագումով էլ պատկանում են լիովին տարբեր աղբիւրների, բնականօրէն ոչ մի նմանութիւն էլ չեն կարող ունենալ... Սա մի հանրաժանօթ և առօրեայ երևոյթ է. միտքը ամեն տեղ փնտրելով նոյնը, ամենուրեք կառավարւում է նոյնօրէնքներով, սակայն, տարբեր է նրա պատեանը:

Նայելով ազգի ծագմանը, նրա կլիմայական և աշխարհագրական պայմաններին, նրա տեմպերամենտին, պարապմունքին ու կացութեանը, լեզուի այդ

արտաքին պատեանը ունենում է իւր բնորոշ յատկութիւնները:

Ի՞նչ է իսկապէս լեզուն, եթէ ոչ մի քանի տասնեակ ձայների կուտակումն, որոնց փոխադարձ յարաբերութիւններով հազարաւոր և բիւրաւոր մտքեր են արտայայտուում: Եւ նայելով թէ մի լեզուի հնչիւնները որպիսի կապակցութեան մէջ են մտնում, իրանք հնչիւնները որպիսի յատկութիւններ ունին, սուր կամ թեթեւ են, փափուկ կամ ծանր, զիւրին կամ զժուար արտասանելի, ըստ այնմ լեզուին տալիս են մի արտաքին դոյն, որ դուրեկան կամ անդուրեկան, երգուելու կողմից նուազային կամ աննուազային է կոչուում:

Լեզուների տարբերութիւնը հասարակօրէն ասենք, հնչիւնների տարբերանքն է և այդ զանազանութիւնը նոյն իսկ մօտ ցեղական լեզուների մէջ լեզուին տալիս է արտաքին լիովին տարբեր կերպարանք: Անգլերէն բառերի $\frac{2}{3}$ -ը գերմաներէնից է, բայց բաւական է մի երկու անգամ լսել այդ լեզուները, և իսկոյն կը նկատուի, որ դրանց արտայայտութիւնը բոլորովին ջոկ բնաւորութիւն ունի:

Երբ դրանց հետ համեմատում ենք լեզուների առաւել հեռաւոր խմբեր, նրանց միջի տարբերութիւններն էլ աւելի աչքի են զարնում... Մենք գրտնում ենք, որ իտալերէնն ու ֆրանսերէնը աւելի դուրեկան են, քան գերմաներէնը, անգլիերէնը կամ ռուսերէնը:

Այդ երեոյթը աւելի ակներև ու պայծառ կարող ենք դիտել, երբ ոչ միայն խօսակցութիւնն ենք լսում, այլ երգը, այն էլ միաժամանակ, մի և նոյն բեմում,

օպերաների մէջ, ուր զանազան ազգի երգիչներ են մասնակցում իրանց մայրենի լեզուներով:

Այդ պարագաներում թեթեւ փորձառութիւն ունեցող լսողն էլ կը նկատի, որ մինչ խալերէնի կամ ֆրանսերէնի հնչիւնները ձուլուում, միանում և հոգի են տալիս եղանակին, գերման կամ անգլիական լեզուները հակառակը՝ շատ անգամ թուլացնում և նըսեմացնում են եղանակի ոգին ու նրա ազդեցութիւնը, որ անկախօրէն աւելի վսեմ, արատ ու պայծառ պիտի սաւառնէր...

Ուրեմն, բացի խօսելու ժամանակ դուրեկան կամ անդուրեկան լինելը, երգելու համար էլ, ամեն մի լեզու մի և նոյն յարմարութիւնը չունի: Իտալերէնն ու ֆրանսերէնը աւելի յարմար են երգուելու, ուստի դրանք սովորաբար անուանում են *նոտագայիմ* լեզու, իսկ անյարմարները *աննոտագայիմ*:

Արդ՝ ի՞նչու լեզուներից մի քանիսը դուրեկան են և նուագային, իսկ միւսները ոչ դուրեկան, ոչ էլ նուագային:

Դրա բացատրութիւնը մեզ տալիս է ձայնաբանութիւնը և հարմանիայի ուսումը: Ամենօրեայ փորձերից յայտնի է, որ ամեն մի հնչիւն կամ ձայն մի և նոյն տպաւորութիւնը չի թողնում մեր վրայ. շատ բարձր և սուր, շատ ստոր ու բութ հնչիւնները մեր ականջին անդուրեկան են: Այդ տպաւորութիւնները մենք արտայայտում ենք երկու բառով. *ձայն* և *աղմուկ*: Ինչ որ մեզ հաճելի է, նա անուանում ենք ձայն, ինչ որ անհաճելի—աղմուկ (*լսելոց*, *թրխոց*, *վշիշոց*, *սուլոց* և այլն):

Ձայնը առաջանում է ձկուն մարմինների (լար,

թմբուկ, զանգակ, կոկորդ) պարբերական տատանումից, իսկ աղմուկը՝ անպարբեր:

Երբ մենք զանգակի ձայնը ուշադիր լսենք, մանաւանդ առաջին մի հարուածից յետոյ, կը նկատենք, որ նա բաղկացած է բաղմաթիւ նման հընչիւններից, որոնք սակայն տարբեր բարձրութիւն ունին... զանգակի մի հարուածը մի հիմնահնչիւն արձակելուց յետոյ, չի կտրում իւր ձայնը, այլ շարունակ կրկնում է նոյն հնչիւնը, ինչպէս ասում են սովորաբար՝ «ղօղանջում է»: Այդ զօղանջիւնը նախկին հիմնահնչիւնի կրկնութիւնն է, այն տարբերութեամբ, որ եթէ հիմնահնչիւնը մի որոշ ժամանակում կատարում էր մի տատանում, նրա հետևակները մի և նոյն ժամանակում կատարում են 2, 3, 4 և այլն տատանումներ. այսինքն նրանք աւելի բարձր են հիմնահնչիւնից, ուստի կոչւում են վերնահնչիւններ: Ահա այդ նման բայց տարբեր բարձրութիւն ունեցող հընչիւնների փոխադարձ յարաբերութիւնը և տատանումն այնպէս է, որ նրանք ձուլւում, միանում և միատարր ամբողջութիւնն են կազմում. այդ է ահա ամեն մի հարմօնիայի (ներդաշնակութեան) հիմը, որ թուաբանօրէն հետևեալ կերպով է արտայայտուում. 1:2:3:4 և այլն... այսինքն՝ եթէ հիմնահնչիւնը (Grundton) մի որոշ ժամանակում կատարում է մի տատանում, նրա հետ ձուլուող վերնահնչիւնները (Oberton) կատարում են նոյն ժամանակում 2:3:4 և այլն տատանումներ:

Երբ ընդհակառակը հիմնաձայնի և վերնաձայնի տատանումները շեղւում են վերևի յարաբերութիւնից, ուրեմն իրար չեն ծածկում ու միանում, այլ արտայայտւում են խառն ու փնթոր, առաջ է

գալիս անհարմոնի (աններդաշնակութիւն), ինչպէս այդ նկատելի է կոտորած զանգակի հնչիւնից, որովհետեւ կոտորած զանգակն արգէն անընդունակ է հիմնահնչիւնի հետ ձուլուող վերնաձայներ տալու, ուստի և նրա հնչիւնն այլ ևս ձայն չէ, այլ մի անդուրեկան զրնգոց, նուազային լեզուով ասենք, մի անհարմոնի (դիսսոնանս)։ Մետալ դրամների ազնուութիւնն ու կեղծիքը ճանաչելու հիմը դրա մէջն է, ազնիւ դրամի ձայնը միատարր և հնչուն է, կեղծինը խառն և կերկերուն, որ հմուտ ականջը իսկոյն որոշում է...

Այս տեսակէտով ամեն մի լեզուի հնչիւններն էլ կամ ձայներ են և կամ աղմուկ, որ քերականութեան մէջ սովորաբար «ձայնաւոր» ու «բաղաձայն» են կոչւում։

Ձայնաւոր կոչւում են այն հնչիւնները, որ ինքնուրոյն ձայն ունին և այդ ձայնը երգել կարելի է առանց ուրիշի օգնութեան. ա, է, ի, ու և այլն։

Բաղաձայն են այն հնչիւնները, որ միայն վայրկյանաբար հնչել կարելի է, իսկ երգել ոչ. բ, թ, չ, խ, և այլն...

Ձայնաւորները բնականաբար մեզ դուրեկան են, իսկ բաղաձայնները ոչ։ Սրանից հասկանալի է, մի լեզու նոյնքան դուրեկան է լինելու, որքան նա ձայնաւորներ ունի և անդուրեկան՝ որքան հարուստ է բաղաձայններով։

Եւ երբ այս տեսական կանոնը հետազօտում ենք զործնապէս հաստատելու, նկատում ենք, որ իտալերէնը իրօք աւելի շատ ձայնաւորներ է գործածում քան գերմաներէնը կամ ռուսերէնը... իսկ այս վերջինները, ընդհակառակը, աւելի հարուստ են բաղա-

ձայներով, ահա ուրեմն իտալերէնի նուագայնութեան և դուբեկանութեան գաղանիքը:

Եթէ այնուհետև մեր դիտողութիւնն աւելի ընդարձակենք, համեմատենք հէնց ձայնաւորները միմեանց հետ, կը տեսնենք, որ նրանք ամենը հաւասար պայծառութիւն և յարմարութիւն չունին երգուելու, որ նրանց հնչոյթը (звучность) ձայնի բարձրութեան զանազան աստիճաններում տարբեր է: Օրինակ. ու բարձր աստիճաններում բոլորովին կորցնում է իւր ձայնը և լսւում է որպէս մի մթին ը... Երգեցութեան համար նա ուրեմն անյարմար է բարձր նոտերին. այն ինչ ինչ ամենաբարձր նոտերում հընչում է պայծառ ու սիրուն, ուրեմն յարմար է այդ նոտերում երգուելու: Թէ երգիչների ամենօրեայ վարժութիւնները և թէ ֆիզիկայի փորձերը (Հերմոլոց և այլք) ցոյց են տուել, որ ու ամենից յարմար է ստորին ձայներում երգելու. դրանից մի քիչ բարձր լաւ երգւում է օ, միջին ձայներում ամենից լաւ երգւում է ա—դրանից աւելի բարձր՝ ը, ապա է, կամ և. իսկ ամենաբարձր, որպէս ասացինք ի:

Այս ամենի պատճառը նախ մեր կոկորդն է և ապա այդ հնչիւնների բնոյթը. բարձր երգելիս մեր ձայնի գործարանը, կոկորդն իր բոլոր յարակից պարագաներով այնպիսի դիրք է ստանում, որ անհնարին է պարզ և պայծառ ու հնչել. ցածր երգելիս ընդհակառակը, վատ և անորոշ է հնչւում ի. ինչ որ երգելն է, նոյնն է և խօսելը: Ուրեմն քա՜հ՜ երգուելու կամ խօսելու յարմար եմ է, է, ի, իսկ ցածր. օ, ու:

Այստեղից հասկանալի է, մի երգ կամ մի լե-

զուհ, որ շատ ու կամ 0 է պարունակում, անյարմար է բեմական երգեցութեան, որովհետև այդպիսի երգը պահանջում է մի որոշ աստիճանի բարձրություն, որ ընդարձակ թատրոնի ամեն անկիւնում լսելի լինի հանդիսականներին: Աւելի յարմար և պայծառ լսելի կը լինի այն երգը, որ աւելի մեծ քանակութեամբ է և ի է պարունակում. սակայն շարունակ բարձր ձայները, որ այդ հնչիւններն են պահանջում պայծառ արտասանուելու համար, երկուստեք անդուրեկան են, երբ երկար տեհն թէ լսողների և թէ դերասանների համար, որովհետև դրանք լսողների ականջն են յոգնեցնում, իսկ երգիչների կողորդը չափազանց լարում: Ուստի երգեցութեան համար ամենից յարմար ձայնաւորը մնում է ձ-ն, որովհետև նա միացնում է բոլոր մնացեալ ձայնաւորների առաւելութիւնները, առանց նրանց պակասութիւնների, կազմելով մի ոսկի միջակութիւն:

Ա երգելիս բերանը և կոկորդը այնպիսի յարմար դիրք են ստանում, որ մնացեալ ձայնաւորների համար անկարելի է, ուստի նրա երգելը դիւրին է, մանաւանդ նա պահանջում է ոչ չափազանց բարձրութիւն, ոչ էլ ցածրութիւն, այլ միջակութիւն, որի ժամանակ նա հնչում է անասելի պայծառ, վսեմ և ընդարձակ. նա չի նեղացնում երգչին, չի լարում նրա կոկորդը, մի և նոյն ժամանակ հաճելի է լսողներին: Ա-ի այդ գերազանց նուազային յատկութիւնները շատ լաւ յայտնի են հմուտ երգիչներին, ուստի երբ նրանցից մէկը մի որոշ տպաւորութիւն է ուզում թողնել հանդիսականների վրայ, կամ դափնիններ է ուզում քաղել, անպատճառ աշխատում է ձայնի

շնորհը այնպիսի բառերի վրայ ցոյց տալ, ուր ա կայ:

Այդ է պատճառը, որ երգիչներն իրանց երգածի բնագիրը սովորաբար փոփոխութեան են ենթարկում և ձայնաւարն էլ (կոմպոնիստ) միշտ ջանք է թափում բնագիրն այնպէս ընտրել ու խմբագրել, որ յարմար լինի երգեցութեան: Ուստի և մեծ ստեղծագործութիւնները երբէք անմիջապէս նուազի չեն առնուում, այլ ձայնարարը նրանցից վերցնում է միայն նիւթը և այնպէս շարադրում, որ յարմար լինի երգելու:

Այսպէս՝ պայծառ կամ հիմնական ձայնաւորները իրանց նուագայնութեան համեմատ հետեւեալ կերպով են դասաւորուում, առաջին տեղը տալով ա-ին, նրան յաջորդում են դէպի վերե ղ, ե, (և), ի. դէպի ներքև՝ օ, ու (իւ):

Երկբարբառների մէջ ձայնը սովորաբար այն հնչիւնի վրայ է ընկնում որ աւելի նուագային է. օրինակ եա, երգւում է՝ եանան... ե—այդտեղ հնչւում է որպէս մի կարճ բաղաձայն, այ—անանայ, եյ—էէէէյ, օյ—օօօօյ: Պան մի տեսակ ձայնաւորներ, որոնք սովորաբար փափուկ են կոչւում, որից մեր դրական լեզուն համարեա՞ զուրկ է, թէ՛ բարբառներում շատ յաճախ են պատահում. այսպէս ֆրանսիական և գերմանական Ա, ԵԱ, ռուսական Ё, Ю, Ы, հայոց իւ և նօ մի քանի բառերում (եօթ տասնեօթ և այլն): Այդ ձայնաւորները վերին աստիճանի դժուար են երգւում և նսեմացնում են եղանակի պայծառութիւնը, որովհետև արտաբերելու ժամանակ բերանի անցքը սաստիկ նեղ է և բերանի փոսը ամբողջովին այնպիսի դիրք է ստանում, որ ոչ

միայն երգելը, այլ և արտասանելը ահագին դժուարություններին հետ է կապուած, որպէս ռուսաց ԷՔ կամ հայոց ը ձայնաւորը, որ մի և նոյն ժամանակ սաստիկ անդուրեկան են:

Այստեղից հասկանալի է, որ այն լեզուներն են նուագային, որոնք շատ պայծառ ձայնաւորներ ունին, որպէս իտալերէնը, հայերէնը, մանաւանդ՝ որոնք շատ աւելին: Առհասարակ մի լեզուի նուագայնութեան առաջին փորձաքարը աւի առատութիւնն է:

Այդ կողմից հազիւ թէ մի լեզու համեմատուել կարողանայ հայերէնի հետ, որովհետեւ աւն հայերէնի ամենահիմնական հնչիւնն է և նրա կորուստը բաւական է հայերէնի արտաքին ընաւորութիւնը հիմնովին կերպարանափոխ անելու, որպիսին մենք տեսնում ենք մեր բարբառներեց մի քանիսում, ուր աւն մասամբ տեղի է տալիս ը-ին: Հայերէնի մնացեալ կոպիտ կողմերը իր առատութեամբ վարագուրող ու չէզոքացնողը մեր լեզուի այդ հիմնահնչիւնն է:

Ձայնաւորների նուագայնութեան աստիճանն ամեն մինը դիւրութեամբ կարող է ճանաչել, եթէ մատը կոկորդին դնէ և ձայնաւորները հերթով հնչէ. մարդ իսկոյն կը նկատէ, որ կատիկը (Kehikopf) ու հնչելիս ամենից ցածր դիրք է ստանում, օ հնչելիս մի քիչ բարձրանում է, աւելի բարձր, իսկ ե (ե) և յ հնչելիս նաւ ընդունում է ամենաբարձր դիրքը: Ով մի քիչ հմուտ լսողութիւն ունի, կարող է և հետեւեալ կերպով համոզուել վերերը դրած փաստերի ստուգութեանը. մի որ և է եղանակի բառերի տեղ պէտք է հերթով դնել որոշ ձայնաւորներ և երգել, առաջ,

օրինակի համան, ու... յետոյ ա, ապա ի... և համեմատել նրանց թողած տպաւորութիւնը:

Առհասարակ ամեն ոք երբ մի բան է երգում առանց բառերի, հէնց բնագդաբար, առանց տեսական ուսման, միջին ձայներում միշտ գործ է ածում *ա, ա, ա...* կամ *լա, լա, լա*, իսկ վերին աստիճաններում *լէ, լէ, լէ...*

Այստեղից հասկանալի է, որ ամեն մի նուագագէտ ու ձայնարար երգի եղանակն ու նրա ձայնաւորները մի որոշ ներգաշնակութեան մէջ պիտի ջանայ պահել. շատ բարձր ձայները նա պիտի դնէ է կամ ի ձայնաւորների վրայ, միջակները ա և ը-ի վրայ, իսկ ստորին ձայները ու և օ-ի վրայ: Իմ գիտեցած հայերէն երգերից «Հազար երանի քեզ մանուկ» երգի առաջին երկու տողերը այդ կողմից կարելի է օրինակելի համարել. նրա եղանակը և վանկերը (ձայնաւորները) իջնում և բարձրանում են մի զարմանալի հարմոնիայով, որով երգի տպաւորութիւնը կրկնակի զօրանում է: Պատարագի մէջ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ» նոյնպէս եղանակի և ձայնաւորների մի հիմնալի ներգաշնակութիւն ունի: Սովորական երգերում, սակայն, այս կանոնը պահպանել անհնարին է, դա գործադրւում է առաւելապէս օպերաներում:

Հիմա փորձենք գտնելու բաղաձայն հնչիւնների նուագայնութեան աստիճանը:

Սակայն, հնչիւնների այս բաժանումը, որ իբրև առանգ հին քերականներից մեզ է հասել և սովորական դառել, ներկայ հնչիւնաբանութիւնը չի ընդունում: Որովհետև այն հնչիւններից շատերը, որ սո-

վորաբար մենք բաղաձայն ենք համարում, իրանց բնաւորութեամբ աւելի ձայնաւորին են մօտ և շատ անգամ աւելի ձայնաւորի դեր են կատարում, քան բաղաձայնի: Մեր Ի հնչիւնը, օրինակ, կրկին, հետաքրքիր և այլ ուրիշ շատ բառերում աւելի ձայնաւոր է, նոյնպէս էլ ոյժ, գոյժ, աշս, աշղ բառերում յ ձայնաւոր է, թէև մենք սովորաբար այդ երկու հնչիւններն էլ բաղաձայնների մէջ ենք դասում: Այդ հնչիւնները մի քանի հատ են. նրանք բռնում են ձայնաւորների և բաղաձայնների միջին տեղը. ուստի և անուանում են կիսաձայն կամ լնայ հնչիւններ և հետևաւորներն են. յ, ղ, ռ, ր, լն, լն:

Այդ հնչիւնների արաասանութիւնը բերանին և լեզուին այնպիսի դիրք է տալիս, որ վերին աստիճանի նպաստաւոր և յարմար պայմաններ է ներկայացնում երգուելու. նրանց ձայնը փափուկ, ազնիւ ու դուրեկան է: Այդ է պատճառը, որ այնտեղ, ուր երգի բառերը պակասում են կամ բոլորովին չկան, նուագային վարժութիւնների մէջ, օպերական արիաներում և այլն, ձայնաւորները միշտ նայ բաղաձայնների ընկերութեամբ բնագրի տեղն են բռնում ու երգում որպէս, լա, լա, ոա, ոա, ըէ, ըէ, նա, նա և այլն:

Իրը մենք դիտելու լինինք ժողովրդական երգերը, կը նկատենք որ նրանք միշտ վերջանում են նայ նայ, լէ լէ, հայ հայ-ներով. մայքը մանկանը քնացնելիս նա նիկ, նա նա ներ օր, օր, օր է երգում, սիրահարը իր վիշտը արտայայտում է իմալ էնիմ, իմալ էնիմ, (ինչպէս անեմ) բացականշութիւններով. աշուղն իր բառերի պակասը լրացնում է

նէյնիմներով. այսինքն ոչ միայն կիրթ ճաշակի տէր նուագագէտը, այլ և հասարակ ժողովուրդը, ռամիկը, բնագոյաբար, երգելիս՝ երբ նա բառեր չունի, ընտրում է իր լեզուի ամենանուագային տարրերը, ձայնաւորներէց ա, ե, կամ ի, բաղաձայններէց յ, կամ յ, և...

Եթէ ուզենք այդ երևոյթը անձնական փորձով ստուգել, ապա պիտի վարուենք վերևը դրած օրինակի համեմատ, օրինակ, եթէ կամենում ենք իմանալ թէ իրօք յ աւելի նուագային է քան յ կամ յ, բաւական է մի որ և է եղանակ երգել առաջ յա, յա, ապա յաա, յաա կամ յա, յա վանկերով՝ իսկոյն համոզուելու, որ առաջինը անհամեմատ դուրեկան և նախաստաւոր է երգելու, իսկ վերջինները թէ դժուար են երգւում և թէ մանաւանդ անդուրեկան են:

Նոյն համեմատութիւններին ու փորձերին ենք ենթարկում նաև միւս բաղաձայնները և գալիս այն եզրակացութեանը, որ տարբեր հնչիւններ բաւականին տարբեր աստիճանի յարմարութիւն ունին երգուելու, մինչև անգամ խանգարում են եղանակի ներդաշնակութեանն իրանց անդուրեկան սուլոցներով, որպիսի են ժ, Ն, ց, շ, չ, ծ, ճ, ճ, ջ—անյարմար և մանաւանդ անդուրեկան է երգելու և թէ խօսելու կոկորդային յւ. իսկ եթէ ոչ անդուրեկան, գոնէ սաստիկ անյարմար է երգւում նաև Փ՜ն:

Այդ տեսակէտից, մի աւելի կոպիտ, աննուագային ու միևնոյն ժամանակ անդուրեկան հնչիւն, որպիսին է ռուսաց III, անկարելի է երևակայել:

Այդ տարբեր բաղաձայնների համեմատութիւնն էր, որոնց դուրեկան կամ նուագային լինելն ու

չլինելը շատ դժուար չէր համեմատական փորձով որոշել. աւելի դժուար է և մեծ հմտութիւն է պահանջում նման բաղաձայնների նուագայնութեան աստիճանը որոշելիս. օրինակ, ք, պ և փ, կամ գ, կ և ֆ, դ, Տ և ք, ձ, ժ, և ց. թէև դա արդէն կարելութիւնից զուրկ է, որովհետեւ հէնց այդ հնչիւնների ձայնը միշտ հաստատ չէ և յաճախ դժուար է հնչում է Տ կամ ք. (օրինակ գրում ենք վարդ, բայց կարդում վարթ):

Դրանից ք, գ, դ, ձ, ջ, և այլն աւելի յարմար են ստորին աստիճաններում երգուելու, պ, կ, Տ, ժ, ձ, միջին, իսկ փ. ֆ. ք, ց, և այլն բարձր աստիճաններում, որովհետեւ այդ տառերը հնչելիս նախկին մեթոդով մեր մատը եթէ դնենք կոկորդի վրայ, կը նկատենք, որ առաջին կարգը հնչելիս կատիկը ցածր դիրք է ստանում, միջին կարգը արտասանելիս միջակ, իսկ վերջին կարգը հնչելիս,—բարձր:

Ուրեմն միջին կամ փափուկ անուանեալ բաղաձայնները (պ, ֆ, կ, և այլն) աւելի պիտանի են նուագայնութեան քան իրանց զօրեղ կամ չոր հարեւանները:

Այս բացատրութիւնից հասկանալի է դառնում, թէ ինչու մի կարգ թլուատներ չեն կարողանում է, ջ կամ ձ հնչիւնները արտաբերել, որ իրօք բաւական դժուար է, և նրանց տեղ հնչում են ժ, ց և կամ մի այլ համապատասխան առաւել փափուկ տառ, որով մի քանի թլուատների լեզուն աւելի փափուկ ու դուրեկան է, քան ուղիղ խօսողներինը (ծուր-ջուր, ցամից-չամիչ և այլն):

Մանուկներն էլ, որ բնական թլուատներ են,

լեզու սովորելիս առտիճանաբար միայն սկսում են մայրենի լեզուի հնչիւնները արտաբերել, միշտ դիւրինից և փափուկից դէպի բարձն ու դժուարը գնալով. մանկան առաջին հնչիւնները մեծ մասամբ բաղկացած են ձայնաւորներից կամ նայերից, ա, ու, իւ, այա, ալու, աւա, պապա, մամա, դասա և այլն... Մանուկների լեզուն առհասարակ մինչև նրանց 4 – 5 տարեկան դառնալը ամենանուագային տարրերից է բաղկացած: Շատերը, որոնց լեզուի օրգանները կամ համապատասխան ուղեղի կենդրոնները դեռ զարգացած և կազմակերպւած չեն, դեռ շատ ուշ են սովորում մայրենի լեզուի հնչիւնները անարատ հեգել: Ոմանք մինչև իրանց մահը չեն կարողանում մի քանի դժուարութիւններին յաղթել և առ միշտ մնում են թլուտաւ: Այդ տեղից է ահա մանուկների ձգտումը երկար բառերը կարճել, դժուարութիւնները կոկել և մայրերի բնազդը՝ մանուկներին հասկանալի դառնալու և լեզուի սովորեցնելը դիւրացնելու համար, խօսել նրանց հետ փափկացրած և կոտրատած լեզուով:—Այստեղից և այն զարմանալի երևոյթը, որ լեզուն մշակողն ու տաշողը մայրն է և ընտանիքը:

Մինչև հիմա մենք ուսումնասիրեցինք լեզուի հնչիւնները ջոկ-ջոկ, իբրև առանձին մարմիններ, որ իրօք նրանք չեն. այդ հնչիւնները օրգանապէս կապուած են լեզուի բոլոր մնացեալ հնչիւններին և կեանք ունին լոկ նրանց հետ: Հնչիւնների նշանակութիւնը որոշ ու հաշկանալի կը լինի լոկ այն ժամանակ, երբ մենք նրանց կը դիտենք իրենց գերի մէջ, ոչ առանձինն առած, այլ բառերի և նախադասութիւնների մէջ,

այն է, լեզուի ամբողջ հնչունական կազմը և նրա բնոյթը:

Մի լեզուի վայելչութիւնը նրա բառերի դիւրին արտասանելի լինելն է, իսկ դրա փորձաքարը մանուկներն են. ով առիթ է ունեցել դիտելու նոր լեզուի տուող կամ կարգալ սովորող մանուկներին, նա նկատած կը լինի, որ նրանք դիւրութեամբ են արտասանում, կարդում և միտքը պահում այն բառերը, որոնք բաղկացած են փոխ առ փոխ բաղաձայններով և ձայնաւորներով (Արարատ վարդապետ, թագաւոր, բայց ոչ սկզբունք, բժշկուհի կամ verdauung)... Նոյն երեւոյթը նկատելի է այն հասակաւորների վրայ, որոնք մի որ և է իրենց անձանօթ լեզու են սովորում:

Այստեղից հասկանալի է, որ հնչիւնների փոխադարձ յարաբերութիւնը, կամ մի որ և է լեզուի բառերի կազմը անագին նշանակութիւն ունի ոչ միայն նրա նուազայնութեան համար, այլ և մանկավարժական, հասարակական և քաղաքական տեսակէտով: Ֆրանսացի մանուկը աւելի շուտ կը սովորի իր մայրենի լեզուն խօսել և կարդալ, քան գերմանացին. Ֆրանսական լեզուն աւելի շատ հաւանականութիւն ունի միջազգային լեզու մնալու իր հնչիւնական վայելուչ կազմութեան շնորհիւ, քան գերմաներէնը:

Արտասանութեանը դիւրութիւն տուող էական պայմաններից միին է նաև բառերի կարճ և փափուկ լինելը, որ հետեւալ օրինակից կը պարզուի՝ եթէ փորձենք մի մանկան կամ մի օտարականի արտասանել տալ հետեւալ նախադասութիւններն, ապա

ահադին զժուարութիւնների պիտի հանդիպենք, գուցէ և երբէք չաջողուի ուղիղ արտասանել տալը. օր. ծխախոտ ծխողը ծխամորճ է ծխում կամ Общество вспомошествованія нуждающимся учащимся. Դրա պատճառն է. առաջին, բաղաձայնների հարստութիւնը, այն էլ ընկերացած (կուտակուած) (СТВ, ВСП, СТВ). երկրորդ նրանց կոպտութիւնը (III). երրորդ, այդ կարճ պարբերութեան մէջ կոկորդային (խ) և սուլիչ հնչիւնների մեծ առատութիւնը (13 հատ с, ж, III, ы) և չորրորդ, բառերից երկուսի երկարութիւնը: Բառերի երկարութեան դասական օրինակներ գերմաներէնից կարելի է բերել:

Գերմաներէնը, որ ուսեցրէնի նման հարուստ չէ III և ы (չ) հնչիւններով, ունի մի այլ անյարմարութիւն. նրանում շատ առատ են շ, խ և ց (s, sch, ch) հնչիւնները, այն էլ մեծ մասամբ ընկերացած, որ լեզուին տալիս են մի անդուրեկան արտայայտութիւն. մանաւանդ նա ուսեցրէնից աւելի սակաւ է բանեցնում ձայնաւորներ և եղածներն էլ այնպիսի անաջող հիւսուած ունին, որ աւելի դանդաղեցնում են լեզուն մի կողմից և նսեմացնում նուազայնութիւնը միւս կողմից. (Yerdauung, Brauerei):

Ձայնաւորների և բաղաձայնների ներդաշնակ հիւսուած ունեցող դասական լեզուն իտալերէնն է, իսկ բառերի թեթևութեամբ և կարճութեամբ Ֆրանսերէնը:

Այս բացատրութիւններից հասկանալի է, որ այն լեզուներն են փափուկ ու դուբեկան, որոնց բառերը սուլող ու կոպիտ հնչիւններ քիչ ունին. և հարուստ են ձայնաւորներով, նայելով: Ընդհակառակը այն լե-

զուաներն են պիտանի գործածութեան, որոնց բառերը կարճ և ամփոփ են, կազմուած բաղաձայնների ու ձայնաւորների ներդաշնակ խառնուրդով: Եթէ հիմա նորից համեմատենք գերմաներէնն ու ռուսերէնը ֆրանսերէնի և իտալերէնի հետ, կը տեսնենք, որ բոլոր առաւելութիւնները վերջին լեզուների կողմն են, իսկ պակասութիւնները առաջին:

Սակայն, այդ լեզուներին անծանօթ ընթերցողը թող չը կարծէ թէ իտալականը գերծ է ամեն պակասութիւնից, իսկ գերմանականը կամ ռուսերէնը ամեն առաւելութիւններից: Այդ լեզուներն էլ հարկաւ զուրկ չեն փափուկ ու նուազային տարրերից, միայն լեզուի շէնքը և բառերի հարստութիւնը ամբողջովին առած շատ յետ են մնում ուսմանական լեզուներից: Ռոմանական լեզուների մէջ ամենից նուազայինն ու փափուկը համարւում է իսպաներէնը, մասնագէտներն այն գերադասում են նոյն իսկ իտալերէնից. և սակայն, իս հնչիւնը շատ էլ հազուադիւր չէ այդ ազնիւ լեզուի մէջ, որպէս չ հնչիւնը իտալերէնում, այն էլ շատ անգամ երկու հատ չ միմեանց կողքին: Այն ինչ ֆրանսերէնը որ ոչ իս ունի ոչ էլ չ նուազայնութեան կողմից յետ է թէ իսպաներէնից և թէ իտալերէնից: Մի կամ մի քանի հնչիւններն, ուրեմն, եթէ չափաւոր քանակով են երևան դալիս լեզուի մէջ, անկարող են լեզուի ազնւութեանը փասել, որքան և կոպիտ լինին նրանք:

Այլ է մի լեզուի դուրեկանութիւնը, որ արդիւնք է նրա փափկութեան, և այլ նուազայնութիւնը, որովհետև առաջինը մենք նկատում ենք լեզուն խօսելիս և կարգալիս, իսկ երկրորդը երգելիս:

Նուազը կամ եղանակը շատ անգամ արտայայտում է լեզուի այն յատկութիւնները, որոնք խօսակցութեան մէջ աննկատելի են մնում կամ զոհ են գնում նրա միւս պայմաններին: Դա հասկանալի է, քանի որ խօսակցութեան ու երգի պահանջները շատ անգամ միմեանց դիմետրալ հակառակ են: Երգի ժամանակ ձայնի ամբողջ ոյժն ընկնում է ձայնաւորների վրայ, բաղաձայնները հնչւում են միայն վայրկենաբար. այդպիսով առաջին դերը պատկանում է ձայնաւորներին. այն ինչ խօսակցութեան ժամանակ ձայնաւորների հետ հաւասար, մինչև անգամ նրանցից առաւել դեր խաղացողը բաղաձայն հնչիւններն են, որոնց թիւը մի քանի անգամ աւելի է ձայնաւորների թուից: Այն ինչ խօսակցութիւնը պահանջում է կարճութիւն, արագութիւն, որին աւելի բաղաձայններն են համապատասխան: Այդ պատճառով կենդանի լեզուն միշտ ձգտում է բառերը կարճել, մտքին արագ ու յարմար արտայայտութիւն տալու համար, որ շատ անգամ կատարւում է ի ֆուսս լեզուի նուազայնութեան: Ուրեմն խօսուն լեզուի և երգեցութեան պահանջները ոչ միայն իրար չեն ծածկում, այլ շատ անգամ լիովին հակադիր են միմեանց: Դա հասկանալի է, քանի որ խօսելուն պատակը բառերի արտաքին տպաւորութեան անուշութիւնն ու դուրեկանութիւնը չէ, այլ միտքը, մինչ երգեցութեան մէջ բառերի արտաքին ձևերով մի հաճելի տպաւորութիւն պատճառելն արդէն նպատակ է դառնում: Մինի նըպատակն է ազդել բանակութեան, միւսինը՝ զգացումի վրայ:

Քիչ լեզուներ կան, որ զարգանալով չփնասէին

իրանց նուագայնութեանը և միացնէին կենդանի լեզուի թեթևութիւնը նուագի պահանջի հետ միաժամանակ, որպէս օրինակ ֆրանսերէնը, որ զարգացել է ձայնաւորների հետ բազմաթիւ բաղաձայններ կորցնելով, որոնք առանց հնչուելու, իբրև մեռած վկաներ անցեալի, դեռ պահպանւում են ֆրանսական ուղղագրութեան մէջ, առիթ որոնելով իրանց յաջորդող ձայնաւորների հետ երբեմն երևան գալու: Այդ ուղղագրութիւնից պարզ հասկանալի է, որ ներկայի ֆրանսերէնը, երբ առաջին անգամ գրի էր առնւում, երբէք այսօրուայ փափկութիւնը չունէր, որին նա հասել է իր զարգացման աջող պայմանների շնորհիւ, կորցնելով բառավերջի սուլիչ բաղաձայնները: Այդ երևոյթը մենք մասամբ նկատում ենք և հայերէն բարբառներում, ուր բաղաձայնները կորստի են մատնւում. մեզնէ, քեզնէ, ձեզնէ, բարբառներում դարձել է՝ մենէ, քենէ, ձենէ... կորցրել ենք զրաբարի վ-ն հայցական հոլովում: Այստեղ լեզուի զարգացումն ու նուագայնութիւնը առաջ են գնացել ձեռք ձեռքի տուած, սակայն առաւել գերիշխող է հակառակ երևոյթը մեր բարբառներում, ուր շատ անգամ ու դառնում է լի, այ դառնում է է, եւս դառնում է ե, որ լեզուաբանօրէն մի քայլ առաջ է նշանակում, բայց նուագային տեսակէտից մի նոյնալիսի քայլ ետ:

Գերմաներէնը բազմաթիւ բաղաձայններ փափկացնելով որոշ աստիճանի դուբեկանութիւն է պարունակում (ü, eu, ö). նուագային տեսակէտով, սակայն, դա մի կորուստ է, որովհետև այդ ձայնաւորները կորցրել են իրանց նուագայնութեան նախնի վսեմութիւնը:

Առողջանութիւնն ու տրոհութիւնն էլ ահագին դեր են կատարում խօսուին լեզուի մէջ. նրանք են լեզուին գոյն տուողը. երգեցութեան ժամանակ, սակայն, նրանց դերը հասնում է ոչնչութեան: Շեշտը լեզուին տալիս է ել և էջ ու կենդանութիւն, մանաւանդ նստմի զարդ է յանգաւոր ու չափական ոտանաւորներին համար, ուր ձայնի կանոնաւոր ել և էջը ոտանաւորի տպաւորութիւնը զօրացնում է մի աւելորդ հաճոյքով...

Այդ է պատճառը, որ գերմաներէն և ռուսերէն ոտանաւորները աւելի դուրեկան ու հաճելի են քան հայերէն կամ ֆրանսերէն, որովհետեւ առաջին լեզուները շեշտաւոր են, իսկ վերջինները ոչ, չնայելով որ հայերէնն ու ֆրանսերէնը աւելի նուազային են առաջիններից: Սակայն շեշտը նուազի համար մի ծանր բեռ է, որովհետեւ շեշտաւոր լեզուն պահանջում է որ նուազի և լեզուի շեշտը միասին ընկնեն, որով մասամբ կաշկանդում է ձայնաւորի ազատութիւնը, մինչ մի հայերէն կամ ֆրանսերէն բնազիր ձայնազրեւն այդ դժուարութիւնը չունի:

Առողջանութիւնն այն է, որ մի և նոյն բառը կամ նախադասութիւնը տարբեր ազգեր տարբեր կերպով են արտասանում. օրինակ, միայն գերմաներէն խօսելուց կարելի է իմանալ թէ խօսողը հայ, անգլիացի, ռուս կամ լեհ է: Ամեն մի լեզու ունի իր առողջանութիւնը, որ իր ազգեցութիւնը թողնում է նոյն իսկ այն դէպքում, երբ մարդ մի բոլորովին օտար լեզու է խօսում: Այդ հանգամանքի շնորհիւ է, որ ռուսական հրէաները չնայելով որ մի գերմանական ժարգոն են խօսում և փոքրութիւնից ընտել են

Թէ գերմաներէնին և թէ ռուսերէնին, բայց և այնպէս չեն կարողանում ոչ գերմաներէն կարգին արտասանել, ոչ էլ ռուսերէն: Մի լեզուի դուրեկանութեան հարցում, բառերից անկախ, առողջանութիւնն ահագին դեր ունի. նա է լեզուի ֆոնը, նա այն ցանցն է, որի վրայ հիւսւում է լեզուի կանուան հնչիւնների և բառերի միջոցով: Պօլսի լեզուն, օրինակ, աւելի դուրեկան է իր փափուկ առողջանութեան շնորհիւ. զօկերէնը, որ իր նրբութեամբ ֆրանսերէնն է յիշեցնում, պարտական է մասամբ իր նուրբ առողջանութեանը: Հայերէն շատ բարբառներ կամ գաւառաբարբառներ տարբերւում են միմեանցից ոչ այնքան քերականութեամբ, որքան առողջանութեամբ. օրինակ՝ Ախալքալաքի գիւղերի և քաղաքի լեզուները տարբերւում են միմեանցից միայն առողջանութեամբ: Հայերէն բարբառների առողջանութիւնը, որպէս լեռնային ժողովրդի, առհասարակ կոպիտ է: Մեր գրական լեզուի առողջանութիւնը գեռ կազմակերպուած չէ, ուստի նրա մասին մի որ և է կարծիք յայտնելը գեռ վաղ է: Այդ իսկ պատճառով վաղաժամ է այն լեզուի կոչելը:

Կենդանի լեզուի արտաքին գոյնը իսկապէս մարմնանում է առողջանութեան մէջ, որովհետեւ մի լեզուի հնչիւնները, վանկերը և բառերը մարդ ջոկ-ջոկ չի լսում, այլ այդ ամբողջի հիւսուածքը՝ առողջանութեամբ: Մի անծանօթ լեզու լսելիս մարդ անկարող է իսկոյն նրա բառերը ջոկել, վանկել և հնչել... Ուստի առողջանութիւնը լեզուի արտաքին տպաւորութեան հարցում ահագին դեր ունի, մինչ երգեցութեան մէջ նա համարեա կորցնում է իր նշանակութիւնը:

Մի և նոյն բառի վանկերը երբեմն այն աստիճան իրարից հեռու են ընկնում, կամ տարբեր բառերի հարևան վանկերը երբեմն այնքան մօտենում են միմեանց երգեցութեան ժամանակ, ձայնի դադարները՝ կէտ, միջակէտ և վերջակէտ, որոնց շնորհիւ միայն կարելի է լինում բաղմաթիւ բառերի փոխադարձ յարաբերութիւնն ու նոցա արտայայտած մտքերը հասկանալ, այն աստիճան անուշադրութեան են մատնւում երգելիս, որ արդէն անկարելի է նոյն իսկ երգի բառերը հասկանալ:

Այդ պատճառով օպերա գնացողը երբէք յոյս չէ կարող դնել, թէ երգեցութիւնը լսելով կարողանայ նրա բովանդակութիւնը բառ առ բառ հասկանալ, մինչ մի դրամատիք ներկայացում տեսնողը այդ հոգսից ազատ է:

Ուստի մի լեզուի առողջանութիւնը, նրա նուագայնութեան տեսակէտով, վերին աստիճանի երկրորդական տեղ է բռնում, և մի արտաքուստ կոպիտ առողջանութիւն ունեցող լեզու կարող է նուագային լինել:

Պարզ է, որ մի լեզուի խօսելը լսելով շատ դժուար է նրա նուագայնութեան մասին մի դրական կարծիք յայտնել, այն ինչ դուրեկան կամ անդուրեկան լինելը դժուար չէ իսկոյն գուշակել, եթէ մարդ մի քիչ զարգացած ականջ ունի: Եւ այսպիսի գէպքերում օտարականի կարծիքը, եթէ ի հարկէ նա բանիմաց է, առաւել նշանակութիւն ունի, որովհետեւ ծանօթ ականջը լեզուի մէջ չի տեսնում ձայների մի խառնաշփոթ կուտակումն այլ մտքերի մի շարք, մինչ

անծանօթը գործ ունի լեզուի թողած արտաքին տը-
պաւորութեան հետ:

Հայերէնի վերաբերեալ երկու հարց կայ պատաս-
խանելու. որքան նա դուրեկան և որքան նուազա-
յին է:

Առաջին հարցին, ստոյգն ասած, ես ինքս դրա-
կան և հաստատ պատասխան չեմ կարող տալ. այն
հասարակ պատճառով, որ նրա առողջանութիւնը դեռ
կազմակերպուած չէ, չնայելով որ բազմաթիւ օտա-
րականներէից թեր և դէմ կարծիքներ եմ լսել: Ոմանք
հայերէնը շատ փափուկ ու դուրեկան են գտնում
(խապաներէնին հմուտ մի պրոֆէսոր), այլ ոմանք
նմանեցնում են իտալերէնին, յունարէնին, ոմանք
գտնում են չոր բաղաձայնների հարստութիւն (ու-
րեմն անդուրեկան):

Հայերէնի անբաղդութեան պատճառն այն է, որ
նա խօսող չունի. գրական լեզուի կենդրոնը մի օտար
քաղաք է. Թիֆլիզում չի կարող զարգանալ և կազ-
մակերպուիլ մի փափուկ ու նուրբ առողջանութիւն,
որովհետեւ այդտեղ տիրող լեզուն վրացերէնն է, մի
վերին աստիճանի կոպիտ ու կոկորդային լեզու և
ռուսերէնը: Այդ երկուսն էլ, իբրեւ աւելի bon-ton-ի
լեզու ճնշում են հայերէնին: Լեզուն մի նուրբ և ազ-
նիւ ծաղկի է նման, որ զարգանալու, իր փարթամ
գոյներն և անուշահոտն ունենալու համար կարիք
ունի օդի, արեւի և կանոնաւոր անձրեւի: Այդ պայման-
ներն են լեզուի համար ընտանիքը, կիներ և ապա լայն
ու մեծ հասարակութիւնը:

Թիֆլիզում հայերէնը ճնշուած և արհամարհուած
է. նա ոչ մայրենի լեզու է, ոչ սալոնի, ոչ էլ մեծ

հասարակութեան: Թիֆլիզի հայ թատրոնն, ուր պիտի զարգանար ու կազմակերպուէր այդ լեզուի առողջանութիւնն ու նրբութիւնները, մի գերեզման է նրա համար ամեն տեսակէտով...

Միակ տեղն ուր խօսուում և երգուում է հայերէնն այդ խօսքի իսկական իմաստով, ազատ որ և է արտաքին ճնշումից, Ալէքսանդրօպօլն է, որ մի արեւմտեան բարբառ է, այն էլ, կարելի է ասել, ամենակոպիտն և անդուրեկանը բոլոր արեւմտեան բարբառներից:

Հրաշալի է հայերէնը Երևանի հայ ընտանիքներում, նոյն իսկ հասարակ ժողովրդի և արհեստաւորի բերանում, տարաբաղդաբար մեր կրթուած կարծեցեալ ընտանիքներն այնտեղ էլ ջանք են թափում օտար լեզուով կապլանալու քան մայրենի բարբառով հայ մնալու...

Այլ է հայերէնի տպաւորութիւնը, երբ նա երգուում է. այդտեղ արդէն կարծիքների տարբերութիւն չկայ և չի կարող լինել, որովհետեւ երգի ժամանակ առաջ են գալիս հայերէնի բոլոր թագնուած գոնձերը, դնելով նրան առաջնակարգ նուագային լեզուների շարքը: Այդ այն հասարակ պատճառով, որ հայերէնը հարուստ է նուագային ձայնաւորներով, ի մասնաւորի ա, ե և ի իսկ բաղաձայները ընկերանալու ընդունակութիւն չունին *):

*) Այս գլուխը լոյս էր տեսել «Մուրճ»-ի մէջ 1897 թ. № 6-ում: Շատերն հարց ու փորձ եղան ինքնուրոյն է սա իբրեւ աշխատութիւն, թէ մի քաղուածք: Պարտք եմ համարում յայտնելու, որ մինչև 1898 թիւը, գերմաներէն, ֆրանսերէն և կամ ռուսերէն լեզուով այս բովանդակութեամբ որ և է աշխատութեան չեմ հանդիպած և ստուգօրէն չկար

Լեզուի էստետիքայի մէջ մեծ դեր է կատարում մի ազգի բնածին ճաշակը և լեզուն է, որ իբրև մտքի ամենօրեայ շտեմարան, արտացոլում է մի ազգի պատկերը ճաշակի կողմից։ Այդ տեսակէտից չկայ մի ազգ, որ մրցել կարենայ ֆրանսացու հետ և չկայ մի ժողովուրդ, որ աւելի լաւ գիտենայ իր լեզուի նրբութիւններն ու փափկութիւնները քան ֆրանսացին։ Լեզուի բնական զարգացումը ձեռք-ձեռքի տուած մարդկային հոգու գեղասէր պահանջին, գտել են իրանց լաւագոյն արտայայտութիւնը ֆրանսերէնում, որ յիշաւի արժանի է հիացքի ու զարմանքի և ինչ որ պարզ ու թեթեւ չէ նա ֆրանսերէն չէ։

Մի և նոյն հնդեւրոպական մայր լեզուից գերմանացին, ռուսը, ֆրանսացին, հայն և պարսիկը ստեծել են լեզուներ, որոնք կատարելապէս ցոլապատկերն են այդ ազգերի հոգու, մտածելու և ճաշակի։

մի այդպիսի աշխատութիւն, որովհետև բազմիցս դիմած եմ մասնագէտ անձերի և պրոֆէսորների, որոնք միաբերան մերթեւ են այս բովանդակութեամբ մի որ և է երկի գոյութիւնը յիշեալ երեք լեզուներով։ Թէ այնուհետև երևան է եկած, ինձ յայտնի չէ։

ԴԼ. XVII

ԼԵՋՈՒԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՕՐԷՆՔԸ

Մենք տեսանք այն կանոնները, որոնցով ջոկուժ ու զսնագանուժ ենք լեզուի մէջ լաւը վատից, դուրեկանն անդուրեկանից: Բայց դա մի էական և անհրաժեշտ պայման չէ և ոչ էլ պարտադիր կարող է լինել, եթէ դա մի ժողովրդի արեան ու կրթութեան մէջ մտած չէ լիովին:

Արդ՝ որպէս զի մի լեզու լաւ լինի, պէտք է նա գործնական լինի, ուրիշ խօսքով կենդանի լինի:

Լեզուներն ունեն ծնունդ, զարգացում և մահ. որպէս զի մի լեզու երկար ապրի, նա պիտի յարմարուի խօսող մեծամասնութեան պահանջներին: Ի՞նչ է խօսող մեծամասնութեան պահանջը, մտքերն արտայայտել ռոֆան կարելի է կարճ, ռոֆան կարելի է պարզ. ֆիզիքայի օրէնքը, ուժի ու ժամանակը խնայելու մասին լեզուի մէջ աիրող մեծագոյն օրէնքն է, որովհետեւ լեզուն որպէս մի բնաֆիզիոլոգիական երևոյթ, կառավարւում է ճիշտ բնագիտական օրէնքներով:

Գրաբարը մեր նեկայ լեզուների համեմատ ու

Թեամբ համարուում է վերին աստիճանի հարուստ, զարգացած և մտքերը ճիշտ արտայայտելու ընդունակ լեզու, սակայն, ամեն մի լեզուաբան մասնագետ պիտի խոստովանի, որ այսօր շատ բան գրաբարում մենք աւելի գուշակում ենք, քան հասկանում, և այն էլ մի և նոյն նախադասութիւնը զանազան անհատներ այլ կերպ են հասկանում ու մեկնում, որովհետեւ նա մի պարզ և ճիշտ լեզու չէ՝ նրա բարդ քերականութիւնը իր բազմաթիւ բացառութիւններով, նրա բազմաթիւ հոլովմունքն ու խոնարհմունքը, նրա բարդ համաձայնութիւնը չէր կարող երկար ժամանակ կենդանի մնալ, ուստի նրա իսկական կեանքը եօթերորդ դարուց այս կողմը չանցաւ։ Դրա համար էլ դարերի ընթացքում մեր լեզուն կենդանի շրթունքներում կորցրեց գրաբարի 9 հոլովմունքը հասցնելով նրա թիւը 3-ի, իսկ յոգնակի թուի 4 հոլովմունքը հասցրել է գրեթէ մէկ հոլովման, խոնարհման բարդ և դժուար ըմբռնելի ձևերը պարզեց ամփոփեց հասցնելով միատեսակութեան, կորցրեց նախդիրները, վերացրեց քերականական համաձայնութիւնը ածականի և գոյականի մէջ, այնպէս որ գրաբարի բարդ քերականութեան տեղ մենք ունենք համեմատաբար մի շատ պարզ և դիւրին քերականութիւն։ Այդ պարզութեան հետ զուգնթաց էր բառերի սղումը, կարճանալը և հնչման թեթեւանալը։ Այսպէս՝ յուղի արկանել, հետզհետէ դարձել է յուղարկել, ուղարկել, դարկել, դրկել, խռկել։ Վաղարշակերտ, Աղարշակերտ, Ալաշակերտ, Ալաշկերտ. ազադադ, աքադադ, աքլար, աքլօր. մատանի—մատնի. փարատել—փարտել, եղանել—լինել—ընել, այլ—էլ,

հայր—հար—հէր. մայր—մար—մէր. եղբայր—ախ-
պար, ապար, ապէր և այլն:

Այս է ահա հիմնական կանոնը ամեն մի լեզուի
զարգացման և առաջադիմութեան, այս է ամեն մի
լեզուի կենդանութեան յատկանիշը և երբ մենք ու-
զում ենք մեր լեզուն կենդանի պահել, յարմարաւոր
դարձնել զրելու և մանաւանդ խօսելու, պէտք է ի
նկատի ունենանք կենդանի լեզուն և կենդանի բար-
բառը, ջանալով միշտ համընթաց ֆնալ նրան և նրա
մշակած ձևերին ու պահանջներին շարունակ հաղորդա-
կից լինելու Արդ՝ տեսնենք ինչպէս է կոկուռում ու մշակ-
ւում լեզուն ռամիլի բերանում. զրա համար մենք
պէտք է վերցնենք այնպիսի բառեր, որոնք շատ գոր-
ծածական լինելով, շատ էլ ենթակայ են մաշւելու և
զարգանալու. վերցնենք օրինակ անունները, որոնք շատ
երկար, շատ անգամ էլ հնչիւնների աններդաշնակ
դասաւորութեամբ և՛ անյարմար են և՛ կոպիտ արտա-
սանութեան համար, ուստի

Յովհաննէսը աստիճանաբար մաշուելով դառնում է

Օհաննէս, Օնէս, Օհան, Օնէ, Օնիկ.

Հռիփսիմէ, Հօռօմսիմա, Հօռօմ, Հօռօս, Հօրօ, Հօլօս, Հօլօ,
Հօլիկ, Հօլլիկ. Եղիսաբէթ—Սաբէթ—(Զիզի.)

Աւետիք, Աւետիս, Աւէս, Աւէտ, Աւօ

Մկրտիչ, Միկիչ, Մուկուչ, Մրկօ.

Շողակաթ, Շողան, Շողիկ, Կաթօ.

Յարութիւն, Յարօ, Արթէն, Արթին, Արութիկ, Արութ Արօ.

Կարապետ, Կարօ. Առաքել, Առօ. Համայեակ, Համօ.

Մի թուղիկ համեմատական հայեացք այս ձե-
ւերի վրայ՝ բաւական է համոզելու, որ մենք դէպի
ռամիկը և նրա ճաշակը սովորական արհամարհանօք
պիտի չվերաբերենք, այլ շատ բան նրանից պիտի

սովորենք և նրանից պիտի վեր առնենք նրա խօսածը գրաբար դարձնելու և գրական լեզուն նոր-րացնելու համար, քանի որ յիշեալ ռամիկ ձևերը իտալական փափկութեան հետ ունեն և ֆրանսիական թեթևութիւն, մինչ մի Հոխսիսիմէ, մի Մկրտիչ անհնար է արտասանել առանց լեզուն և կովորդը բռնաբարելու: Կեչի, Հօլօ և Ասատուր, ամենայն դիւրութիւն ունեն ընդհանրանալու և գործածւելու:

Եթէ մենք ռամիկ լեզուն լաւ գիտենայինք և նրա նրբաթիւններն ու առաւելութիւնները գնահատելու ճաշակն ունենայինք, այսօր մեր լեզուն շատ կոպտութիւններից ազատ, շատ էլ նրբութիւնների տէր կ' լինէր. ապացոյցի համար մենք վերցնենք թուերը, որ գործածական են ժողովրդի մէջ. տասնըմէկ, տասներկու, տասներեք և այլն-ի փոխանակ ժողովուրդն ասում է.

տա մէկ (11), տա երկու (12), տա երեք (13), տա չորս, տա հինգ, տա վեց, տա եօթ, տա ութ, տա իննր, սա (20), սա մէկ, սա երկու, սա երեք, սա չորս, սա հինգ և այլն. էս (30), էս մէկ, էս երկու, էս երեք և այլն. քառ (40), քառ մէկ, քառ երկու, քառ երեք և այլն մինչև յիսուն:

Գրականը. Տասնից մինչև յիսուն ունի 436 հնչիւն, իւրաքանչիւր վանկին գալիս է մօտ 3 հնչիւն. ընդամենը—154 վանկ: Ես արտասանում եմ 20 վայրկեանում. մի բոպէում երեք անգամ, մի ժամում 180 անգամ: Ժողովրդականն ունի 223 հնչիւն, բաղկացած 104 վանկերից, ամեն մի վանկը $2\frac{1}{3}$ հնչիւն: Ես արտասանում եմ այս բոլորը 13 վայրկեանում. մի բոպէում $4\frac{1}{2}$ անգամ, մի ժամում 290 անգամ:

Տարբերութիւնը կարելի է հսկայական անուանել և առաւելութիւնը ամեն տեսակէտով բարբառի

կողմն է. նա կարճ է, զրելու, կարդալու, արտասանելու, արագ հաշուելու, շարելու կամ տպելու համար: Առևտրական մեծ հաշիւների, զինւորական և մարդական վարժութիւնների ժամանակ բարբառի կարճութիւնը անգնահատելի առաւելութիւններ ունի: Մենք դիտել ենք Ռուսաց, Գերմանացոց և Ֆրանսիացոց զինւորական վարժութիւնները, որքան դժուար ու անհասկանալի են առաջին երկուսինը (նոյնքան) նոյնքան դիւրին և հասկանալի է վերջինը. մինչև двадцатьодинъ, ein und zwanzig կամ քսան և մէկ ասելը. երեք անգամ կարելի է սա մէկ կամ vingt ւն — ասել:

Այդ թեթեւութիւնն ու կարճութիւնն անգնահատելի է մանաւանդ մանկավարժական տեսակէտից: Գրական թւերով մի ժամում կարելի է մօտաւորապէս 180 վարժութիւն անել. բարբառով 290. վեց ամսւայ ընթացքում օրական հաշուով մի ժամ, առաջինը կունենայ 32,400 վարժութիւն, երկրորդը 52,200. այսինքն, հաւասար պայմաններում զաւառականի արդիւնքը երկու անգամ աւելի է գրականից:

Մի ուրիշ փայլուն օրինակ ռամիկ մանուկների գերազանցութեան՝ կարող է տալ հետեւեալ փոքրիկ ոտանաւորը, որ երգում են գիւղական մանուկները անձրևի դիմաց:

«Թօն արա, թաթաւ արա.

«Գարին, հացը բօլ արա:

«Մայրենի լեզուի» հեղինակ Տէր-Ղևոնդեանը կամենալով վարպետել և ազնւացնել մանկան այդ չֆնաղ ոտանաւորը, փոխել է հետեւեալ կերպով.

«Անձրև, անձրև ցած արի».

«Բացուր ցորեն ու գարի».

Ներքին, մտքի կողմից կարելի է ասել նրանք երկուսն էլ մի և նոյն պարունակով թիւնն ունեն. ուրեմն խնդրին պիտի նայենք միայն արտաքին, ձևի կողմից. եթէ գծերով ներկայացնելու լինինք, ձայնաւորը օ, իսկ բաղաձայնը—, ապա մանկան ոտանաւորը կըստանայ հետեւեալ կերպարանքը.

—օ—օ—օ—օ—օ—օ—օ=7+7=14 եօթը ձայնաւոր եօթը բաղաձայն.

—օ—օ—օ—օ—օ—օ—օ=7+7=14 դարձեալ եօթը ձայնաւոր եօթը բաղաձայն.

Տէր-Ղևոնդեանի ոտանաւորների հետեւեալ պատկերը.

011101011101101010=7+11=18 եօթը ձայնաւոր, 11 բաղաձայն.

101101101011010=6+9=15 վեց ձայնաւոր 9 բաղաձայն:

Ձայնաւորների ու բաղաձայնների մի առաւել կատարեալ հիւսուածք, վանկերի մի աւելի թեթև ու նուագային արտայայտութիւն անկարելի է երևակայել քան այդ մանկան ոտանաւորը. կարծես մի հմուտ վարպետի ձեռով շարած մարդարիտներ լինեն դրանք. փոխ առ փոխ 7 ձայնաւոր եօթը բաղաձայն, երկրորդ տողն էլ յար և նման առաջինին:

Որքան կոպիտ, անաջող աններպաշնակ է ընդհակառակը, Տէր-Ղևոնդեանի վարպետածը. կորած է ձայնաւորների և բաղաձայնների ներդաշնակութիւնը. խառն են և կուտակ, 7-ի հետ 11. կորած է վանկերի

թեթևութիւնը, 7-վանկին 18 հնչիւն իսկ երկրորդ տողում 15 հնչիւն, կորած են տողերի փոխադարձ համաչափութիւնը, կորած է ամեն բան: Այլ և, առաջին ոտանաւորի մէջ միայն մի ծանր հնչիւն կայ. ց. իսկ Տէր-Ղևոնդեանի ոտանաւորն ունի այնպիսի 7 հատ. 2 ձ, 3 ց, մի ժ մի ս: Միայն այդ հնչիւնների քանակը այդպիսի կարճ տողերում բաւական է ամբողջովին ոչնչացնելու լեզւի էստետիք ազդեցութիւնը: Առաջին ոտանաւորն ունի 10 ա, 2 օ, 1 ը, 1 ի. վերին աստիճանի նւագային, երկրորդը 5 ա, 3 ե, 2 ի, 2 ու, 1 ո (օ) նոյնպէս անաջող. առաջինի կազմութիւնն այնպէս է, որ առանց դժւարութեան կարելի է սովորեցնել 3—5 տարեկան մանուկներին այն ինչ երկրորդը ուղիղ արտասանել անկարող են շատ անգամ 7—10 տարեկան մանուկները.

...Բոլոր ազգերի մէջ կրթուած դասակարգը ամեն բանով, մանաւանդ ճաշակով բարձր է կանգնած անկիրթ ժողովրդից, այս և ապագայ օրինակներով պիտի տեսնենք, որ մենք ընդհակառակը, մի քանի աստիճան ցած ենք կանգնած ռամիկ ժողովրդից:

Շատ պարզ և տարրական են մեր լեզուի մէջ տիրող օրէնքները, որոնցով ամեն ոք պիտի առաջնորդուի խօսելիս կամ գրելիս: Նախ լեզուի զարգացման ընդհանուր օրէնքը, որ պահանջում է ինչպէս քերականական ձևերի այնպէս և առանձին բառերի կառնութիւն, պարզութիւն, երկրորդ՝ լեզուի էստետիքան, որ պահանջում է նրբութիւն և դուրեկանութիւն, երրորդ շեշտը, ինչպէս յետոյ կը տես-

նենք, որ պահանջում է միջին վանկերի կորուստը: Այս երեքը միասին գործադրուելիս առաջ են բերում լեզուի մեջ փոփոխութիւն զէպի լաւը, որ կոչւում է էւօլիւցիա:

Այս տեսակէտով երբ նայում ենք մեր հոլովումներին, անմիջապէս հասկանալի է դառնում թէ նրբանցից որը կանոնաւոր և պիտանի է, որն անկանոն և անպէտք:

Աղջկերք,	Աղջիկներ,
Աղջկերանց,	Աղջիկների,
Աղջկերանցից,	Աղջիկներից,
Աղջկերանցով,	Աղջիկներով,

ձիւներ,	ձիւներ,	ձիեր,
ձիւների,	ձիւնոնց,	ձիերի,
ձիւներից,	ձիւնոնց,	ձիերից,
ձիւներով,	ձիւնոնցից,	ձիերով,

որդիք,	որդ(կերանք),	որդիներ,
որդոց,	որդկերանց,	որդիների,
որդոցից,	որդկերանցից,	որդիներից,
որդոցով,	որդկերանցով,	որդիներով,

մարդկերք,	մարդիկ,
մարդկերանց,	մարդկանց,
մարդկերանցից,	մարդկանցից,
մարդկերանցով,	մարդկանցով,

տղայք,	տղերք,	տղաներ,
--------	--------	---------

տղայոց, տղերանց, տղաների,
տղաներից, տղերանցից, տղաներից,
տղաներով, տղերանցով, տղաներով,

ժամանակ *), ժամանակ, օր—օրի
ժամանակուայ, ժամանակի, օրուայ—օրի
ժամանակուանից, ժամանակից, օրուանից—օրից
ժամանակով, ժամանակով, օրով—օրով

Այս հոլովումից պարզ երևում է, որ կանոնը խանգարողն ու անկանոնութիւն առաջացնողը անմասնիկն է, որի ծագման պատճառները բացատրեցինք վերևը: Դա երբեմն կրճատուելով դառնում է ն. (ան==ըն==ն) և կրկնւում է չոյականների, դերանունների ու բայերի մէջ:

Յօդաւոր բայերի մէջն էլ երևան է գալիս այդ մասնիկը, երբեմն կորչելու պատրուակով.

Օրինակ.

ուրախ-ան-ալ, ուրախ-ան-ում-եմ, ուրախ-ացայ,
մոռ-ան-ալ, մոռ-ան-ում-եմ, մոռ-ացայ,
(տես-ան-ել), տես-ն-ել, տես-ն-ում-եմ, տես-այ,
(մտ-ան-ել), մտ-ն-ել, մտ-ն-ում-եմ, մտայ, և այլն...

Գոյականների մէջ այդ յօդը զրեթէ ամեն տեղ կարելի է կրճատել: Իսկ բայերի և դերանունների մէջ անկարելի է:

*) Այսպէս և ժամանակ ցոյց տուող բառերից մեծ մասը օր, ամիս, տարի, շաբաթ և այլն:

ԳԼ. XVIII

ՕՐԻՆՆԱԿԱՆ ՈՐԷՆՔԸ

Վերևի համեմատութիւններից մենք տեսանք, որ արեւմտեան բարբառներն իբրեւ հոլովակիրը գերադասել են. ու. մինչ արեւելեանները—ի:

Նրբ պայմանները միատեսակ են, այդ երևոյթը դատում է մի անխախտելի օրենք, որ բացառութիւն չունի. այսպէս յոգնակի թիւը երկու բարբառներումն էլ ունենալով միատեսակ յոգնակիրը եւ կամ ներսեականը իր հետեւորդ հոլովների հետ առանց բացառութեան առաջինումն վերջանում է ու երկրորդում ի:

Այս հանգամանքը չենք կարող վերադրել շեշտին, որովհետեւ «եր-ներ», ինչպէս ասացինք, արեւելեանում միակ վերջաւորութիւնն է, որ շեշտ է առնում. այդ պատճառով էլ փոխառած համարեցինք արեւմտեան բարբառներից, ուրեմն և աւելի մանուկ: Դրա ընդհանրանալն ու գրաբարի ի-ի տեղը բռնելը հագիւ մի հազար տարուայ գործ լինի: Այդ հազար տարին ուրեմն բաւական էր, մի և նոյն ծագումն ունեցող և մի և նոյն պայմաններում ապրող մի լեզուի

մէջ մի խտրոց առաջացնելու, որ անխախտ օրէնքի նշանակութիւն ունի: Բայերի մէջ ևս նկատելի է նոյն երևոյթը: Տեսանք, որ կրաւորական բայը Արեւ-մսեանում վերջանում է.

այ, ար, աւ, անք, արք, ան, (տանջուեցայ)
Արեւելեան՝ ի, իր, — ինք, իք, ին, (տանջուեցի)
Անցողական՝

ցուցի, ցուցիր, ցուց, ցուցինք, ցուցիք, ցուցին.
ցրեցի, ցրեցիր, ցրեց, ցրեցինք, ցրեցիք, ցրեցին.
Ուրեմն՝ Արեւմտեան. ա, ու.

Արեւելեան. և, ի:

Այս երկու դէպքումն էլ իշխողը նոյն օրէնքն է. այն տարբերութեամբ, որ անհնարին էր արեւմտեանում ա-ի ու դառնալը, իսկ արեւելեանն իր օրէնքին հնազանդելու համար կատարել է ուղղակի թոխչք, ձևափոխելով բայի խոնարհման կազմը:

Այս օրէնքը վերջին ծայր միատեսակութեան է հասցրել Ղարաբաղի բարբառը: Այնտեղ բայերի կատարեալը ձանաչում է միայն ի, կերի (կերայ), տեսի (տեսայ), առի (առայ), ուրախացի (ուրախացայ), իմացի (իմացայ) և այլն:

Բառերի մէջ ևս պարզ երևում է այս օրէնքի ազդեցութիւնը, ուր արեւելեան բարբառների մէջ նկատելի է գրեթէ մի հարկադրական ջանք ձգտելու դէպի ի. արեւմտեան բարբառների կողմից գրեթէ նոյնը հասնելու դէպի ու:

Գրաբար. արեւմտեան արեւելեան

քոյր	քոր	քիր
լոյս	լուս	լիս
զրոյց	զրուց	զրից

պտոյտ	պտռտ	պտխտ
թոյլ	թռլ	թխլ
արիւն	արռն	արին
ալիւր	ալռւր	ալիր
հարիւր	հարուր	հարիր
ձիւն	ձռն	ձին

Այսպէս նաև գրաբար տեսանելոյս. արևմտեան տեսանելուս, արեւելեան տեսանելիս և ապա անալոգիայով խմելիս, ասելիս, գրելիս, գալիս, լալիս, տալիս և այլն: Այս երևոյթը կարելի էր վերագրել շեշտին, եթէ միավանկ բառերը չլինէին, որոնք միատեսակ շեշտով հասել են լիովին տարբեր հետեւանքների:

Այս ամենը եթէ ամփոփենք մի կարճ օրէնքի մէջ, մեր արևմտեան լեզուն կարող ենք անուանել ու-ի լեզու, իսկ արեւելեանն ի-ի լեզու:

Ի՞նչն էր այս տարբերութեան պատճառը, ի՞նչու մինն առաւելութիւն ստացաւ և ընդհանուր տիրապետութեան հասաւ հարաւ-արևմուտքում, միւսը՝ ընդհակառակը, գերիշխեց հիւսիս-արեւելեան հասանգներում: Մենք տեսանք այդ հնչիւնների բնոյթը վերևում. նրանցից ու, յարմար է երգուելու ստորին ձայներում, իսկ ի, ընդհակառակը ամենավերին ձայներում:

Այս հանգամանքը գուցէ լոյս փռէր մեր որոնած հարցի վրայ:

Յիբաւի, խօսելն այլ բան չէ, եթէ ոչ երգել, միայն աւելի արագ—ընչիտատիւ: Ռամիկը խօսելիս միշտ ձգում է բառերը, երգում է:

Ուրեմն՝ եթէ մեր այս լեզուներին նայենք եր-

գելու տեսակէտից, արևելեան բարբառներն յայտնի ձգտումն են ունեցել բարձր խօսուելու (կամ երգուելու) իսկ արևմտեաններն՝ ընդհակառակը, գերազասել են միջին, և մանաւանդ ստորին ձայները:

Այս հարցը պարզելուց իսկոյն առաջ է գալիս միւս աւելի կարևոր հարցը:

Ի՞նչից է առաջ եկել այդ զարմանալի ձրգտումը, ի՞նչ կարիք ունէր մէկը բարձր խօսելու միւսը ցածր, մինչդեռ հին լեզուն բռնած էր այդ երկուսի միջին տեղը:

Սովորաբար բարձր են խօսում կողիտ և անտաշ մարդիկ, բայց չեմ կարծում թէ Մշու և Արարատեան դաշտի գիւղացիք կրթութեամբ միմեանցից մեծապէս տարբերուէին:

Կան այլ պատճառներ բարձր խօսելու: Բարձր են խօսում սովորաբար լեռնաբնակները:

Իրաւ, բաւական է մի թուցիկ հայեացք Հայաստանի քարտէզի վրայ, համոզուելու համար, որ Արևելեան Հայաստանն անհամեմատ բարձր է արևմտեանից կամ հարաւայինից: Մեր երկրի դիրքն է ուրեմն, որ մեզ շարունակ ստիպել է բարձր խօսելու, դրա հետ միասին և համապատասխան ձայնաւոր ընտրելու:

Նոյն այդ դիրքն է պատճառը, որ մեր նախա-վերջին շեշտը երկու անգամ ծանր ու ստուար է մանաւանդ Լօռի և Ղարաբաղ վերջավանկ շեշտից:

Շատ է զբաղեցրել մեզ այն հարցը, թէ ի՞նչու լեռներում մարդիկ բարձր են խօսում, որովհետև դա յայտնապէս վրասակար ու վտանգաւոր է նրանց թոքերի և կոկորդի համար, և դրա բացատրութիւնն

էլ գտել ենք մի ֆիզիքական պարզ ու հասարակ պատճառի մէջ:

«Յայտնի է, որ շեններում օդը լոսւր է, իսկ նոսր մարմինների մէջ ձայնն աւելի դժուարութեամբ է տարածում քան խիս մարմինների. ուստի լոսւր օդի մէջ մնացեալ հաւասար պայմաններում, մարդ շտէի լինելու համար ստիպուած է աւելի քարձր խօսելու եւ որքան լեռը քարձր է, այնքան էլ խօսակցութիւնը քարձր պիտի լինի *):

Այս օրէնքը գտնելուց յետոյ միայն հայելու նման պարզութեամբ են մի շարք երևոյթներ մեր լեզուի մէջ առհասարակ և արեւելեան բարբառներում ի մասնաւորի:

Լեռան ազդեցութիւնը միայն ձայնաւորների վրայ չէր, որ պիտի երևան գար, այլ և բաղաձայների, որոնցից հարկաւ կոպիտն ու ստուարը պիտի առաւելութիւն ստանար, դիւրին լսուելու պատճառով:

Այսպէս բացառական հոլովի է կամ էն վերջաւորութիւնը, քանի որ շեշտն էլ իրանից մի վանկ առաջ է, բաւական թոյլ էր կենդանի գործածութեան համար և Արարատեան բարբառն մի բաւական խոշոր թռիչքով այն փոխեց, վերջնելով՝ գրաբար յոգնակի բացառականի ից վերջաւորութիւնը: Թէպէտ դա արեւելեան բարբառներից, յատուկ է միայն Արարատեանին, բայց դիւրութեամբ մտաւ գրականութեան մէջ և ներկայում մեծամեծ նուաճումներ է անում: Ռ. Պատկանեանի հեղինակութիւնն ու ջանքը,

*) Այս մասին մենք առաջին անգամ գրեցինք «Մուրճ» 1897 թ. «Հայերէնի նուագայնութիւնը» յօդուածում:

պատուաստելու մեր լեզուին արևմտեան գեղանի ու փափուկ հ-ն վերջոյթը բացառական հոլովի, ունայն անցաւ, որովհետեւ երկրի դիրքն ու կլիմայական պայմանները նպաստաւոր չէին նրա առաջարկին:

Թէ ստոյգ, լեռն է պատճառը այս երևոյթի, երևում է այն հանգամանքից որ մենք տեսանք վերերև, Արարատեան բարբառում ի-ն այն աստիճանի տիրապետութեան չի հասել, որքան Ղարաբաղ (Սիւնիք) որ մեր ամենաբարձր լեռնագագաւուն է և հայերն էլ այնտեղ բնակուած են ամենաբարձր վայրերում դաշտերն ու ձորերը թողնելով թուրքերին:

Բայերի մէջ Արարատեան բարբառը չի հասել իր բնական օրէնքի ծայրին, որովհետեւ նախ նա դիրքով այնքան բարձր չէ և երկրորդ՝ շարունակ շփման մէջ է եղել արևմտեան բարբառների հետ (Շիրակ և Էջմիածին): Ղարաբաղը դիրքով բարձր, արևմտեան ազդեցութիւնից ազատ, հասել է այն կատարելութեան, որ պահանջում էր իր երկրի դիրքը, (իմացի, կերի, ուրոխացի ստացի,) (առաջին դէմք): Գրաբար մի շարք բայեր (էառ, եբեր, ետ) ձևափոխուելով, արևմտեան լեզւում վերցրին հին ընտիր ու փափուկ մի վերջաւորութիւն. ահ, առաւ, տուաւ, բերաւ... Այնինչ արևելեան բարբառը վերառաւ եց, տուեց, բերեց, առեց, Բաֆֆին գործ է ածում մինչև անգամ առեց: Ուրիշ բացատրութիւն չունենք այս երևոյթի համար էլ բացի օգի նօսրութիւնը, որ բարձր ձայնաւորի հետ առաջ քաշեց կոպիտ ու հաստատուն մի բաղաձայն ց:

Նոյն այդ օրէնքն է անկասկած պատճառը, որ մեր նոյն իսկ լաւագոյն գրողները չեն կարողանում

ձեռք վեր առնել այն-ց-ից, որ քերականորէն սխալ, հնչմամբ կոպիտ, և մի աւելորդ բեռ է մեր ազգանունների վերջին, արեւմտեանում բոլորովին անծանօթ. Աղայեանց, Պոօշեանց, Մարկոսեանց, Թորոսեանց և այլն:

Դեւերիւկը հայերէն լեզուի բազմաթիւ շշոդ բաղաձայնները վերադրում է Կովկասեան լեռնականների հարեանութեանը. դա մասամբ միայն կարելի է ճիշտ համարել, որովհետեւ հէնց այդ լեռնականների լեզուն իսկ կոշտ ու կոպիտ հնչիւններով արդիւնք է նրանց բնական լեռների. միջավայրն է այդ, օդի նօսրութիւնը յատկապէս, որ առաջ է քաշում զօրեղ ու կոպիտ հնչիւններ լեզուի մէջ: Այսպէս, Մշու գաշտում հ-ն երբեք խ, չի դառնում. այն ինչ մի քիչ նրանից բարձր, Վանայ լճի շրջակայքն ու Կորդուաց լեռների կողմերը այդ փափուկ կոկորդային հնչիւնը խտանում ստուարանում է դառնալով խ, հայր, հաց, հայ հոր հետ և նմանօրինակ բառերում հնչելով խէր, խաց, խայ, խոր, խետ և այլն:

ԳԼ. XIX

ՇԵՇՏԻ ԵՒ ԱՃՄԱՆ ՕՐԷՆՔ

Տեսանք, որ գրաբարն իր շեշտի շնորհիւ տեղ-տեղ հասաւ այն հետեանքներին, ինչ որ արեւմտահայ—բարբառները:

Արեւելեան շեշտը սակայն, այլ արդիւնք տուաւ.

Գրաբար Արեւմտեան Արեւելեան *)

Թազաւոր,	Թազւոր,	Թըզաւոր.
հաւատալ,	հաւտալ,	հըւատալ.
վարժապետ,	վաժպետ,	վըրժապետ.
քաղաքացի,	քաղքըցի,	քըղաքացի.

Պալգ է, որ արեւմտեան հայերը լաւ են հնչել մէկ առաջին, մէկ էլ մանաւանդ վերջին վանկը՝ «Թոյլ են հնչել միջինը, որ ժամանակի ընթացքում կորել է: Այն ինչ արեւելահայը սղել է առաջին վանկը և լաւ է պահել վերջին երկուսը, որոնցից մինը շեշտ-

*) Օրինակները վերցնում ենք Ղարաբաղի բարբառից, որովհետեւ արեւելեան բարբառների օրէնքները նրանում աւելի շեշտուած, ծայրայեղ միատեսակութեան են հասած:

ւում է, և գուցէ դրա ազդեցութեան տակ կորստից ապահովում և իր հարեան վանկը:

Շեշտի տարբերութիւնն ուրեմն ի բնէ ծնեցրել և առաջ է տարել լեզուի՝ զարգացման այլ ընթացք:

Օդի նոսրութիւնից յետոյ, սա մեր բարբառների տարբերութեան կարեորագոյն երևոյթն է և ինձ թւում է, այս երկու տարբերի ազդեցութեան արդիւնքն են մեր արեւելեան և արեւմտեան բարբառների հիմնական այլազանութիւնները: Օրինակ յատուկ անուններից ամենատարածուկներն էլ ցոյց են տալիս նոյն հիմնական տարբերութիւնները իրանց բնորոշ սղուծմանքով և ձայնաւորներով:

Գրաբար	Արեւմտեան	Ղաբարադ
Համբարձում,	Համբօ,	Բարձի, Համբի,
Յարութիւն,	Արթին, Արօ,	Թինի,
Հռիփսիմէ,	Հոռօմ, Հօլօ,	Հոլուի,
Աւետիս,	Աւէտ, Աւէս, Աւօ,	Աւիս, Վիտիս,
Մկրտիչ,	Մուկուչ,	Կիչի,
Աստուածատուր, Ասատուր,		Ծատուր.

Այդ կրճատումն ու ամփոփումը շատ բնորոշ ու պարզ է երևում մանաւանդ յատուկ անունների ընտանեկան ձևերից, ուր օդի նոսրութեան: և շեշտի օրէնքները ձեռք ձեռքի տուած ապացուցանում են այս բարբառների հիմնական տարբերութեան պատճառները. մէկը ընտրում է ստորին ձայնաւոր (օ) բառի առաջին և վերջին վանկերի հետ, միւսը, վերջնում է վերջին երկու վանկերը, իր բնորոշ ի ձայնաւորի հետ:

Այս օրէնքը կարևոր է մեր լեզուն սրբազրելու համար, որ պիտի լինի համաձայն նրա շեշտի պահանջներին, «բառերը ամփոփել ու սղել միջին-թոյլ-վանկերում»: Ներքևը մենք բազմաթիւ օրինակներով պիտի տեսնենք, որ մեր լեզուն խառնել է արևելեան և արևմտեան շեշտի այս հիմնական տարբերութիւնը, որից և առաջանում է ամենամեծ խառնակութիւնը:

Լեզուների մէջ կրճատման, սղման և ամփոփման երևոյթը որքան պարզ ու հասկանալի, նոյնքան տարօրինակ է նրա հակադիր ածման երևոյթը, որ ցարդ մնացել է անբացատրելի: Այսպէս՝ առնել, արևմտեան շեշտի տակ ամփոփուելով պիտի տար առնել: Դրա զարգացման բոլոր աստիճանները բարեբաղդաբար հասել են մեզ հետեւեալ ձևով. այրնել, այննել, առնել, եռնել, ըննել. կատարեալ. արարի, արի, երի, ըրի, արևմտեանում: Իսկ արևելեանը կրճատման հետ ցոյց է տալիս և ածման տարօրինակ երևոյթը, աւելացնելով մի ամբողջ վանկ. եց. օր, ար-եց-ի: Սակայն դա դիւրութեամբ բացատրւում է երկու հիմնական պատճառներով. մէկ որ «արի—կարող էր հասկացուիլ «եկ»-ի մտքով կոչական. երկրորդ՝ նախավերջին վանկը, որ պիտի շեշտուէր ու բարձր հնչուէր, այդտեղ թոյլ է. ուստի հարկաւոր էր մի վանկ, որ ունենար մի բարձր հնչուող ձայնաւոր և, և մի պարզ հնչուող բաղաձայն ց. և ահա դուրս է գալիս պարզ ու որոշ

ար-եց-ի	ար-եց-ինք
ար-եց-իր	ար-եց-իք
ար-եց	ար-եց-ին

Այդ մանաւանդ անհրաժեշտ էր այն բայերում,

որոնք սաստիկ զործածական և առօրեայ, ոչ մի յարմարութիւն չունէին շեշտը տեղաւորելու օր.

տըւի, դըրի, տըւիւր, դըրիւր,
տըւինք, դըրինք, տըւիք, դըրին,

ըն ոչ մի անգամ շեշտ չի ստնում, վերջինս վանկն ըստ կանոնի անշեշտ է. իւր տեղաւորել հապաշեշտը. կամայ-ակամայ հարկաւոր էր ստեղծել մի նախավերջին վանկ, որ շեշտուի և ահա դառնում է.

տը-ն'ց-ի, տը-ն'ց-իւր, տըւ-ն'ց
դը-ն'ց-ի, դըւ-ն'ց-իւր, դըւ-ն'ց,
բըւ-ն'ց-ի, բըւ-ն'ց-իւր, բըւ-ն'ց,

Այսպէս նաև բոլոր անցողական բայերը.

վերցըրն'ցի, վերցըրն'ցիւր, վերցըրն'ց,
հարցըրն'ցի, հարցըրն'ցիւր, հարցըրն'ց,
վերջացըրն'ցի, վերջացըրն'ցիւր, վերջացըրն'ց, ևն:

Այստեղ շեշտը և օդի նոսրութեան օրէնքը գուցէն թացաբար են ազդել, առաջ բերելով լեզուի մէջ աճման երևոյթ: Որքան դա բնական և անհրաժեշտ է բարբառում, համապատասխան շեշտի հետ, նոյնքան սխալ և անտեղի զրական լեզուում, որովհետեւ հակառակ է նրա շեշտին և հնչմանը, յիրաւի. արևմտեան բարբառներն մի այդպիսի աճումն չեն ճանաչում:

Անցողական բայերի մէջ ուշադրութեան արժանին այն է, որ նրանք բարդ բայեր են. վերցըրնել—վերց-անել, վեր-առնել. իմացըրնել—իմաց-անել. անցկացըրնել—անցկաց-անել. այստեղից իմաց եմ-անում, անց եմ կաց-անում. իմաց-առի—իմացըրի, անցկաց-

առի—անցկացրրի. եթէ մենք սխալ ենք համարում արեցի, արեցիր և այլն ևս առաւել այդ անտեղի սխալ է բարգուծեան մէջ, ուր միշտ պահանջուած է ձևերի ամփոփումն և կարճութիւն:

Փոխանակ իմացընել, անցկացընել, վերցընել, գերադասելի է գործածել, իմաց-անել, վեր-առնել, անցկաց-անել, տարրալուծուած, որ աւելի թեթև ու շարժուն է:

Քանի որ մեր շեշտը արևմտեանն է, խոնարհման այս ձևերն էլ արևմտեան պիտի լինին:

Ուրեմն.

տուի	տուինք,	թողի	թողինք,
տուիր	տուիք,	թողիր	թողիք,
տուաւ	տուին,	թողաւ	թողին,
սրի	արինք,	ասի	ասինք,
արիր	արիք,	ասիր	ասիք,
արաւ	արին,	ասաւ	ասին.

Եւս առաւել երբ այդ բայերը գործ են ածուում բարդուելով—իբրև օժանդակ թող-տուի, բաց-արի, քաշ տուի, ցած-ղըրի, վէր-բերի, վեր-առայ, բաց-թողի, ցած-ղըրի:

Մի և նոյն աճումը տեսնում ենք և հոլովման մէջ. ես, իմ, ինձ, մենք, մեր, մեզ, բացառականն ու գործիականը կանոնաւոր ընթացքով պիտի լինէին.

ինձ-ից,	մեզ-ից,	քեզ-ից,	ձեզ-ից,
ինձ-ով,	մեզ-ով,	քեզ-ով,	ձեզ-ով:

Շեշտի ազդեցութեան տակ, սակայն մէջ է ընկնում մի ան աւելադիր մասնիկ և դառնում է.

մեզ-ան-ից,	ձեզ-ան-ից,
մեզ-ան-ով,	ձեզ-ան-ով,
նրանց-ան-ից,	նրանց-ան-ով,
ինձ-ան-ից	ինձ-ան-ով,

Կարող են առարկել, որ այս վերջին աճումը նկատելի է և արևմտեան բարբառներում, և մենք կը պատասխանենք: որ դա առաջ է եկել արևելեան բարբառների ազդեցութեան տակ: Նոր-Բայազէտն այսօր արևելեան և արևմտեան բարբառների խառնակ գործածութեան կենդանի վիճակ է, նոյնը, թէ՛ պէտ աւելի փոքր չափերով նկատելի է Շիրակում:

Արևելեանի շեշտը մի կողմից աւերում է բառը, միւս կողմից տւելացնում է ամբողջ վանկեր, երջորդ կողմից դանդաղեցնում է լեզուի զարգացումը, որովհետեւ իբրեւ նախավանկի շեշտ, նա իրանից յետոյ միշտ ենթադրում է մի վերջնութեւր վանկ. ի բնէ ուրեմն նա բացասում է կարճ ու միավանկ բառերը: Այդ մենք տեսանք խոնարհումների և հոլովումների մէջ, ահա մի այլ օրինակ, ուր յայտնապէս երևում է զարգացման դանդաղումը:

Այսպէս՝ գրաբարի վերջին թոյլ վանկը—ըն, սառըն, գառըն, դառըն, եզըն, ձուկըն, մուկըն և այլն, խալաւ կորաւ արևմտեան բարբառներում, մինչ արևելեան բարբառներն ստիպուած էին այդ վանկի կէսը պահելու, շեշտի օրէնքը պահպանած լինելու համար. սառը, գառը, դառը, եզը, ձուկը, մուկը և այլն:

Այնպէս որ առանց խղճի խայթ-զգալու արևելեան հայն ասում է մի գառը, մի ձուկը, մի եզը, մի մուկը, որ աններելի և անտանելի է արևմտեան հա-

յերի համար: Որովհետև նրանց հասկացողութեամբ ըն-
բառերի վերջում առանց որ և է բացատրութեան,
ճանաչում է որպէս դիմորոշյօղ: Մեր գրական լեզուի
մէջ զրանք մուտք են գործել տգիտութեամբ, որով-
հետև յայտնապէս հակառակ են մեր լեզուի շեշտին:

Մի ուրիշ տարօրինակութիւնն արևելեան բար-
բառների այն է, որ նա ձևափոխուելու և զարգանա-
լու յայտնի ձգտումների հետ, զուրկ է նրբութեան և
կոկոթեան զգացումներից:

Այսպէս. մարդիկ արդէն յոգնակի է. անալոգիայի
օրէնքով ասենք, թէ ճշտութեան համար՝ դրա վրայ
առանց կրճատման կամ փոփոխութեան նա աւելաց-
նում է նաև եր. այն էլ ապականոն, որովհետև իբրև
բազմական կնա պահանջում է ներ. զրանով էլ ան-
բաւական այդ երկու յոգնակերտի վրայ աւելացնում
է և գրաբարի հին ու մոռացուած յոգնակերտը. ֆ.
և դուրս է դալիս. մարդ-կ-եր-ք, աղջ-կեր-ք, երեք
հատ յոգնակի մի վանկանի արմատի վրայ:

Դրանցից մի աստիճան աւելի նուրբ ու կանո-
նաւոր են երևում տղ-եր-ք, երեխ-եր-ք, ձի-ան-եր,
իշ-ան-եր. և այլն, երկու յոգնակերտներով բառերը:

ԳԼ. XX

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՁՈՒ

Տեսանք արևելեան լեզուի առաւելութիւններն Այտընեանի վկայութեամբ. նրա շարժունութիւնն ու աշխոյժը, կարող ենք աւելացնել նաև նրա ոյժն ու կորովը, ձևերի առատութիւնն ու ինքնուրունութիւնը համաձայնութեան մէջ, որով նա գերազանցում է արևմտեանին:

Այս համեմատութիւնները, որ մեծ մասամբ վերաբերում են ստուգաբանութեան, ցոյց են տալիս, որ այդ կողմից մեծամեծ առաւելութիւններ ունի արևմտեան լեզուն:

Այսպէս՝ արևմտեան *ա, օ և ու* ի դիմաց՝ արեւելեանն ունի. *ե (է)* կամ *ի*. երբեմն աւելադիր մի ամբողջ վանկ *եց*, բայերի մէջ, կամ *ց*, ազգանունների վերջը և կամ արևմտեան *ն* և *ւ*-ի դիմաց արեւելեանն ունի *ց* բայերի կամ հոլովների վերջը:

Այս հնչիւններն առանձին վերցրած թուում են չնչին և աննշան. բայց բաւական է ի նկատի առնել

միլիոնաւոր շրթունքներ և միլիոնաւոր կրկնումները, երևակայելու համար այն դերն և տպաւորութիւնը, որ կարող է առաջ բերել հէնց մի հնչիւն: Միայն ազգանունների վերջին յ-ն երեք միլիոն հայութեան, եթէ գրուի 3 միլիոն անգամ, կազմում է մի ստուար հաստոր, 3000 երեսներից բաղկացած, հաշուելով ամեն մի երեսը 1000 տառ: Աւելացրէք զրա վրայ բայերի բոլոր դէմքերում կրկնուող աւելորդ եզ-ը, բացառականի ից-ը. բազմապատկեցէք այն միլիոնաւոր շրթունքներում, հազար միլիոնաւոր անգամ կրկնուելիս ամեն օր և ապա միայն կարող էք զաղափար կազմել, թէ ինչ է նշանակում լեզուի մէջ մի աւելորդ հնչիւն, չեմ ասում այլ ևս վրնկ և կոմ բառ:

Ի նկատի ունենալով նուազայնութեան օրէնքը, մեր արևմտեան լեզուն մի փափուկ, ցածր և համեմատաբար արագ խօսելու, հետևաբար սալօնի լեզու է: Մինչ արևելեանը բարձր և կոպիտ խօսելու, ուրեմն մի լեռնային լեզու է: Թէօրիապէս հանած մեր այս եզրակացութիւնը լի ու լի համապատասխանէ կենդանի իրականութեան և ամեն միւնը, որ ականջ ունի, կարող է ստուգել մեր ասածները:

Այս եզրակացութիւնն աւելի խտանում է, երբ ի նկատի ենք առնում արևելեանի շեշտը, որ տրամադրութիւն ունի ուղղակի աւերելու բառերը ձայնաւորների սղումով առաջին վանկերում:

Արևմտեան շեշտն, ընդհակառակը, կորցնում է բառի միջին վանկը, առանց փնտաելու փնացեալ ձայնաւորներին, որով բառը և՛ թեթևանում է և՛ դառնում դիւրահնչիւն:

Այս տեսակէտով մի բարիք է մեր գրական լեզուի համար այն, որ նա հեռանալով իր հիմունքից, ընդունել է արեւմտեանի շեշտը, որի իրաւունքներն ու եզրակացութիւնները, սակայն, նա դեռ լիովին չի ըմբռնել:

Այդ շեշտի իրաւունքներն ու պահանջները կատարելապէս ճանաչելուց յետոյ, մեր լեզուն պահպանելով արեւելեան բարբառների աշխոյժն ու կենդանութիւնը, կենդանի ձևերի, ոճերի և դարձուածների անբաւ հարստութիւնը, մօտ ապագայում սղումներով և ամիրտիւմներով պիտի ընթանայ արեւմտեանի ճանապարհով, մանաւանդ, եթէ մեր բանասէրները մի քիչ փոխ առնեն արեւմտեան հայերի հմտութիւնն ու ճաշակը լեզուի մէջ:

Մեր այս աշխատութեան կէտ նպատակն է եղել ցոյց տալ այդ ճամբան, հիմնուած լեզուի օրէնքների վրայ, որը ճանաչելուց յետոյ, մեր լեզուն, անկասկած, պիտի գերազանցէ արեւմտեանին որպէս բնագոյաւոր, որպէս կենդանի ձևերի և ոճերի լեզու:

Եւրոպական լեզուներից մեզ իդէալ և առաջնորդ պիտի ունենանք ֆրանսերէնը և դրա համար կան շատ բանաւոր պատճառներ:

Հնդեւրոպական ամենահին բառերի մշակումով, հազարաւոր տարիներ և հազարաւոր մղոններ հեռաւորութեամբ, հայերէնն ու ֆրանսերէնը հասել են գրեթէ մի և նոյն հետեանքներին. *soeur*—քոյր, *frère*—ապէր, *père*—հէր, *mère*—մէր:

Եթէ ի նկատի առնենք որ շեշտը լեզուի մէջ ամենամեծ և ամենից ազդեցիկ տարրերից մինն է,

ապա հնդեւրոպական լեզուների մէջ մերին միակ նմանը դարձեալ ֆրանսերէնն է:

Եթէ ժամանակով ու տարածութեամբ այս հեռաւոր քոյրերի մէջ հետեանքները զարմանալիօրէն նոյնն են, ապա կարծելի է, որ նրանց զգալու և արտայայտելու կերպն էլ նոյնը պիտի լինին եղած՝ այն տարբերութեամբ, որ ֆրանսերէնն աճել ու զարգացել է լաւագոյն՝ իսկ հայերէնը վատթարագոյն պայմաններում:

ՔԼ. XXI

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԾԱՆՅՆԵՐ

Լեզուի զարգացման ընթացքին՝ բառերն ամփոփել ու կարճել, արդելք են դառնում նրա միւս ոչ պակաս կարևոր յատկութիւնները. բառերի ածանցելն ու բարդուելը: Հայերէնին հմուտ անձի համար, սակայն, դա մի չարիք չէ, որովհետև հայերէն ածանցներն ու բարդ բառերը ամփոփման աւելի են ենթակայ, քան պարզերը:

Ընդունակ լինելով գրեթէ գերմաներէնի չափ բարդեր կազմելու, հայերէնը բարդելիս անմիջապէս ամփոփում և սեղմում է, որով բառի հնչումը հնաբաւոր է դառնում, մինչ գերմաներէն բարդուող բառերը ոչ միայն չեն սղւում, այլ և նոյն իսկ պահում են իրանց շեշտը. այնպէս որ մի բարդ բառը մի քանի շեշտ է ունենում. Reichstagsbericht.

Հայերէնի այդ անընահատելի յատկութիւնը, կուտուրական ամենանոր գաղափարներն արտայայտել նորակազմ բարդ բառերի միջոցով, մեր տգիտութեան շնորհիւ դառել է լեզուի կոպտութեան և աղաւաղման ամենամեծ աղբիւրներից մինը: Բաժանուրդա-

գրութիւն, ստանձնաշնորհութիւն, հետաքրքրակա-
նութիւն, ներկայացուցչութիւն, մանրամասնու-
թիւններ, սպասումըեցուցիչ, երդմանեցուցչութիւն,
սպելեցուցիչ, ծիսեցուցիչ, նախասրաշտպանողական,
նախագգուչացուցչական, հախանաւարական, հա-
կաաշխոհականութիւն, հախաւականաւա, հախա-
ագղեցութիւն, կառավարչական, թժշկականութիւն
և այլն և այլն... Բառեր են, որոնց կազմողներն,
ինչպէս երեւում է, երբեք հաշիւ չեն տալիս, ար-
դեօք հնարաւոր է այդ ամենն արտասանել կամ
գրել. և արդեօք պարտական է հայերէն լեզուն
ամեն տեսակ բարբարոս նահատակութեան են-
թարկուելու... Այդ ամենը դեռ ներելի կը լինէր,
եթէ դա չընդունէր անտանելի չափեր, քանի որ մեր
լեզուի զարգացման ամենամեծ աղբիւն է այսօր բար-
դութիւնն, ուստի հարկ է դրա վրայ ամենից աւելի
ծանրանալ:

Դիտենք նախ գրաբար և ապա բուն ժողովրդա-
կան բարդութիւնները, որոնց համեմատութեամբ դար-
ձեալ պարզօրէն պիտի երեւայ մեր ճաշակի պակա-
սութիւնը և տգիտութիւնը միանգամայն:

Գ ր ա ղ ա ռ

զլուխ և հատանել	զլխատել
կարճ և հատանել	կարճատել, կրճատել
միջից—հատանելի	միջատ
առաջին—լոյս	արշալոյս
կարաւան և պետ	կարապետ
ճարտար—առան	ճարտառան
գիտութիւն—ունեցող	գիտուն
իմաստութիւն—ունեցող	իմաստուն և այլն.

Փ ո ղ ո Վ Ր Պ ու կ ա ն

Չուր, աղալ և պան	Չաղացպան
գոյնը հատած	գունատ
քուռը հատած	քնատ
կուռը հատած	կռնատ
կէս և հատած	կիսատ
ձու, ան և իւղ	ձուածեղ
ես ի՞նչ գիտեմ	ես ի՞մ
Միածին իջաւ	Էջմիածին և այլն.

Բարդոռած քառերը մեկ, երկու, երրեմն միևեռ չորս փանկով պակաս են իրանց արմատական քառերի գոտարից:

Հարց է, ինչո՞ւ գերմաներէնը բարդութիւն չի կրճատուում, իսկ հայերէնը ընդհակառակը այնպիսի կրճատումներ է անում, որ շատ անգամ բարդ բառը պարզ արմատական բառի ձև է ստանում. ինչպէս օր. տէր, արշալոյս, Կարապետ: Որովհետև գերմաներէն բարդութեան մէջ ամեն մի բառ պահում է իր շեշտը, իսկ հայերէնի մէջ ընդհակառակը, թեթև շեշտում է միայն առաջին, ապա նրանից մի քիչ գորեզ վերջին վանկը:

Բարդոռող քառերը պարզ պիտի լինին, ուրիշ խօսքով, քարդոռոմ են միայն արմատները, թօթափելով և՛ ուծանց և՛ յօդ: Բարդաթեան օրէնքը, ուրեմն. շեշտի օրէնքն է, ինչ գոսարի և՛ ինչ ժողովրդականի համար, Թոթափոռողը, քացի մասնիկներից, միջին—թոշ վանկն է:

Այստեղից եզրակացնելը պարզ է, որ բերուած

գրաբար բարդութիւնները եղել են ժողովրդական, հետևաբար կենդանի և ոչ թէ կարելիեալի հնարուածներ. մի նոր և շատ կարևոր ապացոյց, որ գրաբարը խօսուել է: Ճանաչելով այս օրէնքը, կարելի է իսկոյն ցոյց տալ, թէ ո՞րը բարդուած բառերից ճիշտ է կամ սխալ է նոյն իսկ հնագոյն գրաբարում: Այսպէս՝ գրաբար, գոյ և իցէ—գուցէ. քմքի-ծիծաղ—քմծիծաղ տի, այլ ուհի—տիրուհի, այն ինչ մի քիչ տալակոյս են յարուցանում. մարսարախօս և մարսարապէս, երբ ի նկատի ենք ունենում կարապէս և մարսասան բարդութիւնները:

Այսպէս ազխաութեան արդիւնք են ներկայիս անդամահասեղ, զնահասեղ, վիրահասեղ, փայտահաս և այլն բարդութիւնները. վերջինս ստուգուած է ժողովրդական կենդանի ձևով—փեհաս:

Հին և ընտիր են գրաբարում անասան, անխախան, անյաղք, քազնայաղք. նոր և անաջող են գրաբարում կամ աշխարհաբարում. անյաղքեղի, անպարսեղի, անեռանեղի, անհասանեղի: Կանոնաւոր և ընտիր են, յայնժամ, յորժամ. տարօրինակ է հնչում այժմ—այս-ժամ, որ պիտի դառնար այժմա՛ւ: Երևում է, որ շեշտն առաջին վանկի վրայ է եղել, ուրեմն բարդուել է արևելեան շեշտով և դառել է այժմ: Ունինք կարճահեղ և կրճահեղ, վերջինս անկասկած արևելեան շեշտով, որի հետքերն ինձ թւում է տեսնել նաև Հմայեակ (Համայեակ), Տրդատ (Տիրիդատ), Վրթանէս (Վարդանէս) և Ռստակէս (Սրիստակէս) անունների վրայ:

Այստեղից էլ ապացուցւում է, որ արևելեան շեշտը գոյութիւն ունէր դեռ չորրորդ դարում, ուրեմն նոր ժամանակի բան չէ:

ՆԵՐԿՍՅՈՒ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ՝

Սխալ եւ անսպող եւի. Ուղիղ եւ ւաքող.

աշնանացան	աշնացան
գարնանացան	գարնացան
տաւարաւած	տաւարած
ճանապարհորդութիւն	ճամբորդութիւն
անձեռնմխելի	անձեռնելի և այլնք

Ունինք.	դաշնակահար	հիմնադիր
	ջութակահար	վերագիր
	դիւանար	օրէնսդիր
	կտցահար	կարգադիր

Սխալ է. հարստահարիչ—կարգադիրիչ:

Ուղիղն է. հարստահար:

Ունինք. դաշնամուր, դաշնագիր (աջող):

Անաջող է. դաշնակահար—դաշնահար, ջութահահար—ջութահար:

Ունինք. միաբնակ, երկաբնակ և հակաբնական, դա կարող էր լինել բնահակ—որպէս—հերհակ:

Ձեռն անաջողութեան հետ մեր բարդութիւնները շատ անգամ ցոյց են տալիս և խորին տգիտութեան օրինակներ. գլխագին—գլխի գին, արնեգին—արեան գին, բաժանորդագին—բաժնորդի գին (пѣна подписчика), իսկ подписная пѣна—բաժնեգին. որ և՛ կարճ է, և՛ ուղիղ: Հետևաբար, սխալ է նաև բաժանորդագրութիւն (Դ վանկ), պիտի լինի, բաժնեգիր (Յ վանկ) ըստ օրինակի, ճակատագիր, պայմանագիր, վերնագիր:

Ստրկաբար ռուսերէնին հետեւելով կազմել ենք նախազգուշացուցչական միջոցներ (предупредительная меры) այն ինչ, տրամաբանօրէն մտածողին

պիտի յայտնի լինի, որ զգուշութիւնը միշտ նախ է-
 ժամանակովնա միշտ առաջ է գալիքից. այլապէս
 զգուշութիւնն չէր կոչուի: Ուստի զգոյշ բառի վրայ
 նախ դնելը տրամաբանական անմտութիւն է: Դա եթէ
 մի կողմը դնենք, կը մնայ. զգուշացուցական—խուժ-
 դուժ ածանցեալը. այդ էլ եթէ պարզենք և հայերէն
 դարձնենք, կըստանանք զգուշութեան, զգուշացման,
 զգուշանալու միջոցներ: Կարծես դիտմամբ մենք
 բարդում և փշաքնում ենք այն, ինչ որ ինքնին պարզ,
 ճիշտ ու կանոնաւոր է:

Վարդան—Վարդունի, թագաւոր—թագունի, վար-
 ժապետ—վարժունի, ուսուցիչ—ուսունի, սխալ է ու-
 սուցչունի, որ նշանակում է վարժապետի կին, ու-
 սանոդ ուսանունի, սխալ է ուսանողունի, որ նշա-
 նակում է ուսանողի կին:

Բժիշկ բառի արմատն է բոյժ—բուժ և բարդուե-
 լիս ըստ կանոնի գործ է ածւում միշտ այս արմատը.—
 ատամնա-բոյժ, վիրա-բոյժ, ատամնա-բուժոռնի, վի-
 րա-բուժոռնի, հետեաբար՝ սխալ են, բժշկապետ—
 բժշկունի, պիտի լինին բուժապետ—բուժունի:

«Բժշկունին բժշկում է բժշկարանում». որքան գե-
 դեցիկ և ճիշտ կը լինէր. բուժունին բուժում է բու-
 ժարանում:

Ա. Կ. Ա. Ն. Ա. Ծ. Ա. Ն. Յ. Ը.

Խիստ է շարը գործ դրուող մի մասնիկ է գտուել
 կենդանի բարբառներին սակաւածանօթ այդ ծանր ու
 ձանձրալի ակամ-ը, որ հարստահարւում է օտար լե-
 զոններէ ազդեցութեան տակ:

«Հակա-առողջապահական պայմաններ» — հակառողջ, աւելի սովորական և ճիշտ՝ անառողջ պայմաններ, համեմատելը «անառողջ մարդ»...

«Նախապաշտպանող-անկան միջոցներ» — նախապահիկ, նախապահիչ—միջոցներ. «Ապահովագրական ընկ.» — ապահովման կամ ապահովիկ, ապահովիչ ընկ., «Հրատարակչական ընկ.» հրատարակիկ, հրատարակման, հրատարակիչ ընկ.:

Շատերին անշուշտ խորթ կը թուայ մեր առաջարկածները. սակայն, տասնեակ տարիներ զոյութիւն ունեցող և մի քանի տասնեակ հազար զբօսող հրատարակող հայ-ընկերութեան անունը մի սխալ է եղել, որ երևում է հետեւեալից.

Պատուիրել—պատուիրակ, հրաւիրել—հրաւիրակ, խնդրել—խնդրակ, հրատարակել հրատարակ:

Ծննդական վկայական — ծննդեան վկայական (ծննդական—рожденица): Պէտք է կը ճատել և ուղղել: Բիմիական լաբորատորիա — քիմիայի լաբորատորիա, անատոմիական ինստիտուտ—անատոմիայի, որակական ածական—որակի ածական, քանակական թուական—քանակի թուական, կրաւորական բայ—կրաւոր բայ (համեմատ, դիմաւոր—բայ), բարեգործական ընկ. — բարեգործ ընկ., բարեգործ մարդ, խնայողական արկղ—խնայարկղ, (խնայարան), համեմատելը պոստսրկղ, զուգահեռական գիծ—զուգահեռու գիծ, կատարողական թերթ—կատարման թերթ:

Երկու երրորդական, երեք չորրորդական, հինգ վեցերորդական, սխալ գործադրուող ձևեր են.—պիտի

լինին երկու երրորդ, երեք չորրորդ, հինգ վեցերորդ
և այլն:

Այդ ակաևն իսպառ պիտի վերանայ, երբ բառի վրայ
աւելանում է մի նոր ածանց կամ մասնիկ. օրինակ.

վաւեր(ական)	անվաւեր		
կամայ(ական)	անկամայ		
բանական	անբան		
հաւանական	անհաւան	անաջող են	անհաւանական
օրգանական	անօրգան	»	անօրգանական
բարոյական	անբարոյ	»	անբարոյական
գործնական	գործնապէս	»	գործնականապէս
վերջնական	վերջնապէս	»	վերջնականապէս
վճռական	վճռապէս	»	վճռականապէս
հաւանական	հաւանօրէն	»	հաւանականօրէն

Այսքանով գոհ չեն մեր լեզուաշէնները և ան-
ճոռնին անտանելի դարձնելու համար այդ ծանր
ածանցի վրայ աւելացնում են և մի այլ այնպիսի
ծանրութիւն, ուրիշ մասնիկը, որ այլ ևս բառն ու
արմատը կորչում են և մնում են միայն ածանցների
երկար ու անվերջ շարքը: Այլիչանը «Հայկական-բու-
սաբանութիւնը» շինել է մի կարճ ու ընտիր երեք
վանկանի բառ. «Հայ-բուսակ» — իսկ մինք մեր լեզուն
հարստացնում ենք այսպիսի գոհարներով:

Պահպանողականութիւն. ուր ող, ակաւ եւ-ոսրիւն,
ածանցներ են. հետաքրքրականութիւն, քաղաքակա-
նութիւն, բժշկականութիւն, թո՛ւ արմատի վրայ —
ըշկականութիւն — բուժականութիւն — հրապարակա-
կանութիւն (публичность). մինչև անգամ.

«գերմանական գրականական ազգասիրական ընկ.»
գերման գրական ազգասէր ընկ.

«Սոցիալիստիքական ցեխի (համբար) տակտիկական դիրեկտիւր»։ Ահա ձեզ հայերէն։

Պէտք է ի նկատի ունենալ, որ կենդանի բարբառներում այդ սկզբնոր շատ յաճախ դառնում է նալ, սկ և իկ. վրացական—վրաց(ն)սկ, հայկական—հայնակ-աշխարհական — աշխարհիկ, տոհմական — տոհմիկ, և այլն։ Պէտք է ջանալ օգտուիլ այդ կարճ ու կենդանի ձևերով, եթէ իսպառ անհնար է կրճատելը։

Այս ական մասնիկին համապատասխան և նոյնանիշ է այլի՛ն ածանցը, որ այնքան էլ յաճախ չի գործադրւում, բայց գործ է ածւում ըստ մեծի մասին անտեղի.

գաղնանային եղանակ — գարնան եղանակ
ամարային տապ — ամառուայ տապ
աշնանային ցուրտ — աշնան ցուրտ
ձմեռնային սառնամանիք ձմրան և այլն։

Ո Ղ Մ Ա Ս Ն Ի Կ Ը

Ամփոփման կանոնով դերբայից դուրս եկած ածանցներն ու մակբայները մեծ մասամբ կորցնում են իւր մասնիկը.—տեղողական—տեղական, հետեղողական — հետեղական—հետեիկ, հետեղականօրէն—հետեօրէն, մարսողական — մարսական, հրամայողական—հրամայական, մերժողական — մերժական, վճռողական—վճռական, զննողական—զննական, երգեցողութիւն—երգեցութիւն, խնայողութիւն—խնայութիւն, ըմբռնողութիւն—ըմբռնումն և այլն և այլն...

ՈՒԹԻՒՆ

Տեսանք այս մասնիկի ծանրութիւնը «աւհաւն»-ի հետ միանալիս. առանձին էլ սա վերին աստիճանի երկար ու ծանր է: Այս մասնիկն է, որ գործ է ածւում ոչ թէ կարճ ու ընտիր ձևով, երևոյթ, սովորոյթ, նորոյթ, դայրոյթ, հասոյթ. ձանձրոյթ և այլն. անհրաժեշտ է օգտուել այդ ձևից և ուր հնարաւոր է, գործադրել այն, օրինակ.

առանձնայատկութիւն (7) *) առանձնայատկոյթ

(5) մասնայատկոյթ, (յատկանիշ)

առանձնաշնորհութիւն (7) յատկաշնոր, մենաշնորհ հնարաւորութիւն (6 վանկ), հնարոյթ (3)

վերջաւորութիւն (5), վերջոյթ (2)

բնաւորութիւն (5), բնոյթ (2)

ուսումնասիրութիւն (7) ուսոյթ (2)

հետաքրքրականութիւն (7) հարցասիրոյթ (4)

բժշկականութիւն (6) բուժոյթ (2)

տարօրինակութիւն (6) տարօրինոյթ (4)

տեսակցութիւն (4) տեսոյթ (2)

խօսակցութիւն (4) խօսոյթ (2)

խռովացուցչութիւն (6) խռովոյթ (3)

բուսականութիւն (5) բուսոյթ (2) և այլն:

Այս բառերի թիւը կարելի էր անվերջ բազմացնել: Առաջին շարքը բաղկացած է 80 վանկից երկրորդը 38:

Մեր արևմտեան լեզուն արդէն հասել է ումն և ուրիշ մասնիկները զանազանելու գիտակցութեան,

*) Փակագծի մէջ թուերը վանկերի քանակն են ցոյց տալիս:

այն ինչ, մեզանում զրեթէ ամենքը շփոթում են.
ազատում (спасение) և ազատութիւն (свобода), ծա-
նուցում (замѣтка, bemerkung) և ծանօթութիւն (зна-
комство), մշակում (обрабатывание) և մշակութիւն.
տարածութիւն (пространство) և տարածում (рас-
пространение), այսպէս խառն և սխալ գործ են ած-
ւում:

Ներում և ներողութիւն *)
յարուցում և յարութիւն
նահատակում և նահատակութիւն
աւանդում և աւանդութիւն
ընթերցում և ընթերցութիւն
միացում և միութիւն
բուժում և բժշկութիւն
ընտրում և ընտրութիւն և այլն և այլն...

Այս ուրիշը գործ է ածւում շատ անգամ աւե-
լորդ ու անտեղի. օր. աշխարհախայեցողութիւն—աշ-
խարհայեցութիւն—աշխտրայեացք կամ աշխարհայե-
ցոյթ. ունենք, զլխարկ, ձեռնարկ. հետեւաբար սխալ են.

առաջարկ(ութիւն)
միջարկ(ութիւն)

*) «Կովկասեան փոխարքան ներողութիւն (извинение)
է յայտարարում բոլոր փախտական զինուորներին, որոնք
փախել են ծառայութիւնից»։—Փոխարքան ներումն է յայ-
տարարում այն զինուորներին, որոնք փախել են ծառայու-
թիւնից:

Գրքի մէջ դրած «ծանօթութիւնը»—մի սխալ է, որ
պիտի լինի ծանուցում:

ձայնարկ(ութիւն)

հիմնարկ(ութիւն)։

Ա Յ Ո Ի Յ Ի Չ, Ե Յ Ո Ի Յ Ի Չ

Ածանցները մէջ սա իր երկարութեամբ և սոսկալի հնչմամբ ամենից անտանելին է. զբաբարում սակաւ, կենդանի բարբառներից իսպառ կորած է այս մասնիկը, որովհետեւ հնչելն ու գործադրելը զրեթէ անհնարին, մանաւանդ իբրեւ միջին վանկ, շեշտի օրէնքով պիտի կորչի։ Այսօր, սակայն, լինելով մեր ճաշակի և տգիտութեան արտայայտիչը, սաստիկ բաղմանալու վտանգի մէջն է։ Կենդանի շրթունքներում և զբաղանութեան մէջն էլ դա փոխարինուած է իւր և լարար ձեերով։

համոզեցուցիչ (5 վանկ)	համոզիչ (3)
պարտաւորեցուցիչ (6)	պարտաւորիչ (4)
ուրախացուցիչ (5)	ուրախալի (4)
զրգուցուցիչ (5)	զրգուիչ (3)
նուաստացուցիչ (5)	նուաստիչ (3)
նուազեցուցիչ (5)	նուազիչ (3)
բաւականացուցիչ (6)	բաւարար (3)
սթափեցուցիչ (5)	սթափիչ (3)
զբաղեցուցիչ (5)	զբաղիչ (3)
մերկացուցիչ (5)	մերկարար
հանդարտեցուցիչ (5)	հանդարտիչ (3)
հանգստացուցիչ (5)	հանգստարար (4)
կենդանացուցիչ (5)	կենդանարար (4)
գոհացուցիչ (4)	գոհարար (3)
վհատեցուցիչ (5)	վհատիչ (3)

երդմնեցուցիչ (5)	երդումարար (3)
դարձուրեցուցիչ (5)	դարձուրելի (4)
ձանձրացուցիչ (5)	ձանձրալի (3)
ապշեցուցիչ (4)	ապշելի (3)
քստմնեցուցիչ	քստմնելի

Այս վերջին բառերն արդեն հնչելն անհարին է, այնպես որ մենք կարիք չենք տեսնում զրանք ուղղելու, որ արդեն լեզուաբանի գործ էլ չէ, այլ կոկորդաբոյժի:

Մեր քերականներից մինն ասում է. «Ածանցները, որոնք եօթ տեսակ հոլովներ են կազմում, կոչւում են հոլովացուցիչ... ածանցը նոյն հոլովի անունով կոչւում է. սեռականացուցիչ, տրականացուցիչ, բացառականացուցիչ, գործիականացուցիչ, ներգոյականացուցիչ... բոլոր գոյականները մի և նոյն հոլովացուցիչները չունեն, մի խմբի սեռականացուցիչն է... ներ, եր ածանցը կոչւում է յոգնակիացուցիչ, դաս ցոյց տուող թուականը կոչւում է դասականացուցիչ *) և այլն և այլն...

Երբ քերականութիւն կազմողները լեզուի այսպիսի գոհարներ են տալիս, մնացեալներին տգիտութեան մէջ մեղադրելը դժուար է:

Այս մասնիկն էլ շատ անգամ, տգէտների ձեռքով բարդւում է դարձեալ ակամ և ուրիշ ածանցների հետ.

ներկայացուցիչ, ներկայացուցչական, ներկա-

*) Միւրիք-Թանգեան. «Աշխարհաբարի քերականութիւնը» (ԿԸ. 23 և այլն):

յացուցչութիւն, երգմնեցուցիչ, երգմնացուցչական, երգմնեցուցչութիւն, խռովեցուցիչ, խռովեցուցչական, խռովեցուցչութիւն:

Վերևի բառը Պարոնեանը գործ է ածում. ներկայիչ, հետևաբար ներկայչական և ներկայչոքիչ. (представительство) միւսը, մեր կանոնի համեմատ կը փոխէինք.—խռովարար—խռովարարական, խռռրարարութիւն—խռովոյթ, երդումարար, երդումարարական, երդումարարութիւն, երդումարարոյթ. թէպէտ սա էլ բաւական երկար, բայց գոնէ հնչելն և արասանելը հնարաւոր է...

Ի նկատի պէտք է ունենալ, որ կան այս ձևերի և այլ կրճատումներ, մահացուցիչ—մահացու, այցելիչ—այցելու, իրաւասու և այլն, հետևաբար ներկայացու, որ տարիներ առաջ մեր առաջարկի համեմատ՝ այժմ արդէն գործածական է դառնում:

Ո Տ Ա Ր Բ Ա Ռ Է Ր

Օտար բառերն էլ բարդելիս և ածանցելիս պէտք է ենթարկել մի և նոյն օրէնքներին, այսինքն պէտք է վերցնել նրանց արմատական և կարճ ձևերը.

Գոհհիկ են.

Պիտի լինին.

համիսլամականութիւն—համիսլամոյթ, համիսլամիզմ համասլաւոնականութիւն—համասլաւոյթ, համսլաւիզմ սիստեմատիքաբար—սիստեմաբար տիպիքական—տիպային, տիպիք դրամատիքական—դրամատիք և այլն...

«Հայկական դրամատիքական խմբիներկայացումը արտիստիքական ընկ. դահլիճում»։ – Հայ դրամատիք խմբիներկայացումը արտիստիք ընկ. դահլիճում։

ԲԱՐԴ ԵՒ ԱԾԱՆՅԵԱԼ ԲԱՌԵՐԻ ՅՈԳՆԱԿԻՆ,

Աշխարհաբարի յոգնակիրից աւելի հաստատուն, պարզ և հիմնական կանոն գտնելն անկարելի է. միասնական թառերը յոգնակի վերջանում են եր, բազմասնականները՝ ներ. դա յունի բացառությունն է. միակը—մարդիկ. այն էլ ժողովրդի բերանում շատ անգամ դառնում է մարդիկներ մարդկերանց, մարդկերանցից և այլն...

Մեր նորերով լեզուաշէնները անդիտակ այդ կանոնին՝ հնարել են լրագրեր, լուսամուտեր, շիկահէրեր, խաչքարեր, տանուտէրեր, ջրհորեր, տիրասէրեր և այլն...

Եթէ ուզում ենք որ մեր լեզուն կենդանի բարբառներով առաջնորդուի, պիտի տեսնենք այն բարդերի յոգնակին, որ սովորական է ժողովրդի բերանում. ջաղացներ, ջաջացաններ, ժամկոշներ, ժամհարներ, բուրվառներ, խաչվառներ, հօրքուրներ, մօրքուրներ, ձիթահանքներ, քարհանքներ, տնտեսներ, տնաշէններ, առուտուրներ, հաւկիթներ, տնաքանդներ, վարժապետներ, վարդապետներ, զրազիրներ, երէցփոխներ, աթոռակալներ, տէգերկիններ, գրաշարներ, օրավարներ, զօրավարներ, բանթողներ, քարտաշներ, ձուածեղներ, մեծատուններ, Ասատուրներ և այլն և այլն... Այսպէս են և ածանցները, անխելքներ, անտուններ, անբաղներ, անջուրներ, անմեղներ, անկարգներ, դժբաղներ, տախներ, տգեղ-

ներ, անհամներ, տհասներ, տգէտներ և այլն... Ո՛ր և է այլ վերջաւորութիւն սխալ է և կամայական: Բազմավանկ բառը՝ լինի նա պարզ, բարդ կամ ածանցեալ, յոգնակի վերջանում է ներ, ուստի սխալ էին վերեւի օրինակները. որ պիտի լինին. լրագիրներ, ձեռագիրներ, տանուտէրներ (старшины) գործատէրներ, ջրհորներ, ձեռագործներ, ձեռակերտներ, բնագէտներ, ինքնատէրներ, ծերակոյտներ, անգամալոյծներ, արշալոյսներ, գարեջուրներ, ձայնանիշներ, քաղցրադէմներ, գեղադէմներ, օրինադիրներ, օրէնստուններ, սանահայրներ, կնքահայրներ, սանամայրներ, հօրաքոյրներ, մօրաքոյրներ, հրաբուխներ, դիւահարներ, սեահերներ, քարահաններ, երկրաշարժներ, դեղթափներ, ջլապինգներ, ձկնորսներ, ջրկիրներ, բարեմիտներ, չարամիտներ, վեհափառներ, ձայնանիշներ և այլն...

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Յ Թ

Դիտելով այս ամենը, մենք տեսնում ենք, որ հայերէն բառերն անտանելի են դառնում ան, ող, ալան, ալին, աւոր, ուրիւն, ազ, եզ, իշ, ացուցիչ, եցուցիչ և ցուցիչ մասնիկների շնորհիւ:

Տեսանք, որ դրանք մեծ մասամբ հէնց լեզուի մէջ տիրող օրէնքների շնորհիւ պիտի կորչին կամ կրճատուին, մանաւանդ բարդ բառերում: Ուր անհրաժեշտ է նրանց ներկայութիւնը՝ կան նրանց համապատասխան աւելի կարճ և ընտիր ձևեր, որոնցով պէտք է և փոխարինել.

Օրինակ. ալան=ալ, կամ իկ.

ութիւն, աւորութիւն=ոյթ.

ացուցիչ, եցուցիչ=իշ, ալի կամ ելի.

Էլ աւելի անտանելի են դառնում բառերը երբ այս մասնիկներն աւելանում են միացած, լեզուի կանոնին հակառակ, օր. առողջութիւններ, ողակալութիւններ, ազոգչորիւն, եզոգչորիւն, ազոգչալան, եզոգչալան: Ո՛չ միայն լեզուի զարգացման ընթացքը, որ ֆիզիքայի օրէնքն է ուժի պահպանութեան մասին, այլ և տրամաբանութիւնը, լեզուի շեշտն ու մարդկային հոգու գեղատէր հակումները միացած՝ պահանջում են այդ անտեղի երկարացած մասնիկները կարճել:

Դիտելով այս ամենը հոլովումների, խոնարհումների, բարդութիւնների և ածանցների մէջ, մենք զարմանալով տեսնում ենք մի ցաւալի երևոյթ, որ հայ հեղինակներս կորցրել ենք լեզուի ողին և նրա հիմնական կանոններն ըմբռնելու տարրական զգացումը:

Ժողովուրդը, չը նայելով իր տգիտութեանն ու կրած ահագին օտար աղբեցութիւններին, այսպէս թէ բայնպէս, չի մոռացել լեզուի հիմնական կանոնները, որոնք գրեթէ համապատասխան են պրաբարին, չը նայելով հազար հինգ հարիւրամեայ հսկայական վիհին, որով բաժանուած է նա իր նախահայրերից: Մենք ոչ գրաբարն ենք ճանաչում, ոչ աշխարհաբարին ենք ուզում հետեւել: Լեզուի կանոնները, էստետիքայի ու գեղարուեստի պահանջները բացէ բաց մոռացած՝ մենք մի լեզու ստեղծելու վրայ ենք, որ դեռ կենդանութիւն չառած, մահուան պիտի դատապարտուի, որովհետեւ մի հարաւային ու թեթեւիւս ազգ, մեղ, հոյքերիս համար իսկ՝ անհնարին և անկարելի է հնչել

այն նախադասութիւնները և բառերը, որոնք այսօր
զրուում են մեր լրագիրներում:

Մենք ցոյց տուինք, որ առանց արհեստական
միջոցների գիմեկու, հէնց մեր լեզուի կենդանի ձե-
ւերով կարելի է օգտուել, նրա սլակասութիւնները
դարմանելիս: Հարկաւոր է միայն գիտութիւն, ճա-
շակ և ջանք և ամեն բան հնարաւոր է ուղղել ու
մշակել *):

*) Այս հաստուածը տպւում էր, որ պատահամբ կար-
դացի պ. Ս. Գարբիէլեանի «Հայկական ճգնաժամը և վե-
րածնունդ» գիրքը: Զարմանքով ու հիացքով տեսայ, որ նա
իմ թէօրական առաջարկներից մինը. «Ելք»-ի մասին, դոր-
ժագրել է մի շարք ընտիր բառերի մէջ «յարոյթ (ապստամ-
բութիւն) հաւաքոյթ, հոլովոյթ» (évolution): Եթէ պ. Գար-
բիէլեանն Ամերիկայում, մենք Թիֆլիզում անկախօրէն մի-
մեանցից, հասել ենք միատեսակ եզրակացոյթի, այդ նշանու-
կում է, որ ժամանակները հասունացած են մեր լեզուն մը-
շակելու:

ԳԼ. XXII

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՅ ՍԵՌԸ

Պակաս անկանոն և խառնակ չեն նաև մեր դերանունները.

ներանք, նորանք, նոքա, նրանց, նորանց, նոցա
սրանք, սորանք, սոքա, սրանց, սորանց, սոցա
դրանք, դորանք, դոքա, դրանց, դորանց, դոցա

Մինի տեղ երեք ձև, երեքն էլ դործածական միաժամանակ, խառն ու անկարգ միևնույն երեսում, միևնույն հեղինակի մօտ: Հետևելով մեր կանոնին, մենք պիտի ընտրենք սովորականը, սրանք, դրանք, նրանք, սրանց, դրանց, նրանց և այլն, մոռանալով գրաբարաձև նորանք և գրաբար նոքա: Սակայն, կայ մի հանգամանք, որ անհրաժեշտ է դարձնում այդ ձևերի պահպանությունն էլ՝ դա դերանունների անունն է:

Սեռը ամեն մի լեզուի կարևոր տարրերից միսն է. վատահօրէն կարելի է ասել, որ չկայ լեզու առանց սեռի: Ամեն մի լեզու առսակաւը երկու սեռ պիտի ունենայ, այլապէս անկարելի կը լինէր սեռ որոշելը:

Պան սակայն, տաանեակ և աւելի սեռ ունեցող լեզուներ *):

Հայերէնը այն սակաւթիւ լեզուներից է, որ հասել է քննական սեռը ճանաչելու գիտակցութեան, որ երեք է. արական իգական և չէզոք:

Հայերէն՝ բառն առարկայի անուան հետ արտայայտում է և սեռը. կին, հարս, զոքանչ, ոչխար, կով, իգական են, այր, փեսայ, աներ, խոյ, եղ,—արական. քար, փայտ, աթոռ—չէզոք են:

Ածականներից պառաւ, միայն իգական է. ծեր կամ ալեւոր միայն արական.

Շատ անուններ, սակայն, մի հաստատ սեռ չեն որոշում. դառ, մարդ, ձի, շուն, և՛ արական են և՛ իգական: Լեզուն այդ անորոշութեան առաջն առնելու համար դիմում է օժանդակ բառերի. մասնակ ձի, որձ ձի, էգ կամ որձ դառ, քած կամ որձ շուն, վառիկ կամ որձազ, կալմուած են միմիայն սեռը որոշելու համար: Էգ, մատակ, քած, իգականի համար են. որձ, արու,—արականի: Տղւ-մարդ, կնիկ-արմատ, վանշ-տղայ, աղջիկ-տղայ, աղջիկ-պարոն, տան՝ Տիկին, երեցիկն, քեռակին, ուսնամայր, հօրախոյր և այլն բարդուած են միմիայն սեռը որոշելու համար:

Գրաբարը օտար փոխառութիւնների էլ է գիմել. Գայանէ, Հռիփսիմէ, Հերովդիա, Յուլիանէ. իգական ձևեր են. Հերովդէս, Յուլիանոս—արական,—յունաքէնից առած:

Սոսրովիրոս, Սանդրոս առնուած է նոյն նշանակով պարսկերէնից (զուխտ—զուստր): Կայ նաև

*) Friedrich Müller Grundriss der Sprach Wissenschaft.

Սիրանոյշ, Հայկանուշ, Սմբատանուշ և այլն... Այդ բառերից և մասնիկներից ոչ մինչև, սակայն, տիրապետութեան և ընդհանուր գործածութեան հասաւ։ Որքան միջոցները շատ, նոյնքան էլ նրանք անյարմար էին կիրառութեան և լեզուի այդ կարիքը, որ զգացուում էր դարեր շարունակ, լուծուեց մի պարզ մասնիկով, որ անկասկած հին հայկական է և աւելանալով արական ձևերի վրայ, դարձնում է իգական. վարժոռնի, դիցռնի, թագ-ուհի, սրբ-ուհի, դերասան-ուհի, սպաս-ուհի, աշակերտ-ուհի, ֆրանս-ուհի, իտալան-ուհի, բժշկ-ուհի և այլն... Առանց այդ մասնիկի մենք ստիպուած պիտի լինէինք կիև թագաւոր, կամ թագաւորի կին, սուրբ կին, կին դերասան ասելու, որ մեզ այսօր խորթ ու անաջող է թւում։

Դա ապացոյց է, որ ունի-մասնիկը վերին աստիճանի անհրաժեշտ է և աջող։

Ուրեմն, ուր սետը որոշելոյն կարիք գգացուում, կենդանի բարբառներն ու գրաբարը, ինչպէս ևս մեր զոյգ գրական շեզոռները դիմում են ևս մասնաւոր-օժանդակ բառերի, ևս բարդութիւնների ևս օտար փոխառութիւնների, լինի դա յոյն կամ պարսիկ։

Հարցն այն է, թէ ինչպէս են որոշում դերանունների սեռը։

«Ժամի դռնում. զողողալով կանգնած էր մի աղքատ կին, նորա հանդերձ պատառ-պատառ, չունէր շապիկ իւր հագին...»

«Առաւօտը մեր աղջիկը հայլից չի հեռանում,

«Նորա ծնողք այն օր ճաշի гвардеи են սպասում».

Ի՞նչ սեռ ունին այստեղ. նորա, իւր, նա, դե-
րանունները. դպրոցական աշակերտն էլ պիտի պա-
տասխանէ.— իզակյան, որովհետեւ գործ են անում
կնոջ և աղջկայ տեղ:

«Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր...»

«Ունէր նա երկու մատաղահաս աղջիկ.

«Մեծ ծով էր պատել նրա աշխարհը»

Այստեղ դերանունը առական է, որովհետեւ գործ
է անում քաղաքի տեղ: Անշունչ առարկայի տեղ
դրուած դերանունն էլ անշունչ է:

Հայերէն դերանուններն էլ, ուրեմն, անունների
նման ունին երեք սեռ, որ մենք ճանաչում ենք
գործածութեան համեմատ: Ով կատկածում է, թող
շնորհ անէ մի որեւէ հատուած հայերէնից մի որեւէ
եւրոպական լեզուի, մանաւանդ անգլիերէնի թարգ-
մանել, որ այս դէպքում իր քնակյան սեռով ամենա-
մօտն է մեր լեզուին: Ով աւանդաբար սովորածով չի
բաւանդում, այլ լեզուի կենդանի տարրերն ուսումնա-
սիրում է կենդանի շրթունքներից, պիտի ճանաչի,
որ ժողովուրդը ոչ միայն չի խորշում իրական ձեւ-
երից, այլ նոյն իսկ անհրաժեշտ է համարել ստեղծե-
լու առանձին կոչական դերանուններ, յատկապէս
կիսն ու տղամարդը միմեկանցից զանազանեղոս հա-
մար, որոնք երբեք չեն խառնուում, ոչ էլ շփոթուում
են... կնոջը կանչելիս ժողովուրդն ասում է. *բա՛* *ա՛-*
բա՛,... իսկ տղամարդուն դիմելիս. *սո՛*, *ձո՛*, *հա՛ծ*:
Սրանք դերանուններ են, որոնք զանազանում են
ոչ միայն նշանակութեամբ, այլև ձևով: Սրանք մուտք
են գործել գրականութեան մէջ, բայց ոչ արժանա-
ւորապէս գնահատուած են, ոչ էլ ճանաչուած:

Ի՞նչ է ուրեմն մեր որոնածը.— Այն, որ շատ անգամ, դերանուենների սեուր չի ճանաչոււմ. «Առաջ եմ գնում անյոյս, անընկեր, քամի ու գիշեր. Ա՛խ եթէ յանկարծ յոյսս շողշողար. նա ինձ երևա՛ր»... Ո՞վ է այդ նա-ն. մի կի՞ն է, թէ մի պարոն, անորոշ է, որովհետեւ գոյական անունը չի յիշուած:

Մի այլ շատ սիրուած ժողովրդական երգ առւում է.

«Գնաց, սիրելիս գնաց, մի որոնէք, մի փնտռէք.
Ախ նրան ռձ էր ճանաչոււմ, նորա քաղցր ձայն
Ո՞վ էր միշտ լսում: Հիանալի էր նա, գեղեցիկ էր նա,
Նորա պէս սիրելի էլ ռձ կունենայ»:

Այստեղ էլ, պէտք է միայն գուշակել, կի՞ն է արդեօք թէ պարոն. նա, նրա, նորա:

«Մարկոսը կնոջ հետ հեռացաւ՝ որովհետեւ ծնողները չէին սիրում նրան»: Ո՛ւմ, Մարկոսին թէ կնոջը,—անորոշ է: Որպէսզի նախադասութեան միտքը պարզուի, պիտի դիմենք անտեղի կրկնումների:

Այդ պակասութիւնն զգալի է մանաւանդ թարգմանութիւնների ժամանակ. այսպիսի մի տարրական արտայայտութիւն՝ онъ, она, er և sie, il և elle և կամ ihr, ей. մենք անկարող ենք հայերէն ասել:

Այսպէս՝ Die Geschichte War nicht lange zu ende, als die Jungfer Pfarrerin mit dem Herrn Schmidt durch den Garten herkam, sie bewillkommte Lotten mit herzlicher Wärme, und ich muss sagen, sie gefiel mir nicht übel.» (Goethe, Werther).—Պատմութիւնը նոր էր վերջացած, որ պատուրի աղջիկը պ. Շմիտի հետ այգու միջից եկաւ. նա սրամանց բարեկեց Լոտտին, և պիտի

խոստովանիմ, ճա ինձ դուք եկաւ.—սի, պ. Շմիտը,
թէ պաստորի աղջիկը:

Nanine. Qui n'aime qu' elle, comme elle n'aime et
n'a jamais aimé que lui, et qui l'épousera, c'est moi qui
vous le dis (Dumas fils.—La dame aux camélias).

Այս հատուածը և սրա նման բազմաթիւ հա-
տուածներ չի կարելի թարգմանել հայերէն, մեր դե-
րանունների պակասութեան պատճառով: Մի պակա-
սութիւն, որ նկատուած է շատ վաղուց: Դեռ գրա-
բարը, ապա մեր արեւմտեան լեզուն, շարունակ զգա-
ցել են այդ կարիքը: Մեզանում նոյնպէս զգացել
ցել են այդ կարիքը և գործ են ածել *) մի գերա-
նուն, որ հնարելի էր դեռ Դաւիթ անյաղթը Ն. դո-
րում, կազմելով նե, նէրա, ինէրանէ և այլն...

Դրա շնորհիւ է, որ Դուրեանի պէս բանաստեղծն
իր գլուխ գործոցի մէջ երգում է... «Թոյլ տըւին,
որ միշտ ըզմե երազեմ»: Այստեղ շփոթման
տեղիք չկայ, այն ինչ, տեսանք, որ մեր աւելի նո-
րագոյն բանաստեղծները դեռ չեն հասել իրանց միտ-
քը ճիշտ ու զիտակցօրէն արտայայտելու կատարե-
լութեանը:

Այդ ձևերը, սակայն, ընդունելութիւն չը գտան
ոչ զրաբարում, ոչ էլ արեւմտեան լեզուում: Ի նկատի
ունենալով որ ամեն մի արհեստական նորմուծում
լեզուի մէջ կենսունակութիւն առնել անկարող է, քի-
միւրա կը լինէր, եթէ աշխատէինք նոր ոյժ տալ այդ
ձևերին:

Արդեօք լեզուն չունի՞ մի որ և է միջոց, որ սո-

*) Ս. Մալխասեան և Մ. Աբեղեան:

վորական, առօրեայ լինելով հանդերձ, կարողանար մեր նպատակին ծառայել, առանց խորթ երեւալու և հիմնուած լինէր լեզուի մէջ տիրող օրէնքների վրայ:

Այսպէս, մենք ամեն օր նորանոր գաղափարներ ենք յայտնում, բառի տարբեր ձեւերին տալով զանազան նշանակութիւն, դա ամեն մի զարգացող լեզուի կարեւորագոյն աղբիւրն է. արմատական բառերի թիւն ամեն լեզուի մէջ վերին աստիճանի ռահմանափակ է, որոնք ծառի նման ճիւղաւորուելով, լեզուին շարունակ մատակարարում են նորանոր բառեր. օր. զիր արմատից դուրս են եկել. գրող, գրիչ, գրութիւն, գրագիր, վերնագիր, հեռագիր, որոնք բարդութիւնների միջոցով արտայայտում են հազարաւոր գաղափարներ: Մի տասը տարի հազիւ կայ, որ ունեն սկսեցին տարբերել գիտնական և գիտական, արհեստ և արուեստ, կայան և կայարան, քաղաքային և քաղաքական, հիմք և հիմունք, զգայական և զգայարանական, որոնք այսօր մեծամասնութիւնից ճանաչուած են որպէս տարբեր մտապատկերների արտայայտիչներ:

Նոյն այդ օրէնքի վրայ Ռիմոնուած է սեռերի տարբերանքը եւրոպական շեզոռներում. մի և նոյն արմատին երբ առեղացնում ենք մի որ ն է ձայնաւոր, արականը դառնում է իգական կամ չեզոք:

Ամբողջ ինդիքը մի կամ երկու տառի տարբերութիւնն է. ein ein-e, un un-e, одинъ одна, le-la, bon bon-ne, онъ он-a, el elle, мама, nana, և այլն: Իբրեւ հնդեւրոպական լեզու, անհնարին է, որ հայերէնը պահած չունենար նոյն սկզբունքը, թէև մերոնք

ամեն ջանք թափել են կենդանի փաստերն ուրանալու և ահա մեր ընտանիքի ամենասիրելի և ամենասովորական բառերը.

պապի և տատի,
կ-այր և մ-այր,
աղբի և աղի
ուստր և դ-ուստր,
հաւ և հան-ի *)
այր և այր-ի

Այդպիսի մի-մի տառերով է որ տարբերում են, միմիայն սեռը ցոյց տալու համար: Չէ՞ որ նոյն այդ սկզբունքն է, երբ մենք արական արմատի վրայ աւելացնում ենք ունի մասնիկը իգական դարձնելու համար և ահա. թագ-ունի, սրբ-ունի, կոմս-ունի, վարժ-ունի, տիր-ունի և այլն...

Քանի որ սեռը որոշելու համար հայերէնն ունի առանձին դերանուն, թէպէտ ոչ զարգացած ու բացայայտ՝ եւրոպական մտքով, ունի առանձին բազմաթիւ բառեր, ունի մինչև անգամ որոշ տառեր եւրոպականի նման, և մի ինքնուրոյն, բացայայտ սեռի յօդ, զարմանալի չէ՞ ուրեմն մեր ազիտութիւնն ու ջանքը ուրանալու այն, ինչ որ գոյութիւն ունի յար և նման հնդեւրոպական լեզուների օրէնքին:

Հայերէն դերանուններն ունենալով բազմաթիւ ձևեր, որոնք ծառայում են միայն անկանոնութեան, չունին ձևեր սեռը որոշակի արտայայտող:

Եթէ մենք յատկացնենք արականին միայն նրա,

*) Հաւ մեծ-հայր, հանի մեծ-մայր:

Նրանից, նրանով և իր ձևը, իսկ իզականին նորա, նորանից, նորանով, իւր, ոչ միայն մեղանշած չենք լինի լեզուի դէմ որ և է նորմութեամբ, այլ բանաստեղծի անգլիտարար գործադրածը կը դարձնենք մի գիտակցական կանոն.

«Խնդրում էի *նորանից*» (մօրից).

«Բազուկներս արձակել» (Նալբանդ).

«Նորա (ազջկայ) ծնողը այն օր ճաշի, *гвардеецъ* են սպասում»: (Ռ. Պատկանեան):

Այս կանոնով այնուհետեւ եթէ փորձենք թարգմանել այն հատուածները, որոնք մեզ անթարգմանելի երևեցան, պիտի չը հանդիպենք ոչ մի արգելքի:

Ահա մի հատուած:

«Մեր հարևանուհիք քնեցան. Լոտտէն (օրիորդ) ինձ հարցրեց թէ արդեօք ես էլ չէի՞ ուզի *նորանց* ընկերանալ. նա չէր ուզում, որ ես յառ մասին անհանգիստ լինէի.—Քանի որ ես այս աչքերը բաց եմ տեսնում, ասացի ես և պինդ նայեցի *նորան*, քնելու վտանգ չկայ: Եւ մենք երկուսով չքնեցանք մինչև *նորա* տունը, երբ աղախինը դուռը բաց անելով, *նորա* հարցին պատասխանեց և այն... Ես կուղէի որ դու տեսնէիր այն ահույի կերպարանքը, որ ես ստանում եմ, երբ հասարակութեան մէջ *նորա* մասին խօսք է լինում, մանաւանդ երբ հարցնում են. *նա* ինձ արդեօք դուր է գալիս».— (Գէօթէ, Վէրթեր)

Այս նամակը հայերէն անկարելի էր թարգմանել առանց իզական դերանուան, քանի որ անունը ոչ մի տեղ չի յիշուում: Նոյն աջողութեամբ թարգմանում է և՛ ֆրանսերէն հատուածը, որ մինչև հիմա անկարելի էր թուում:

Նանին. «Որը միայն նորումն է սիրում, ինչպէս որ նա էլ բացի նրանից երբէք ոչոքին չէ՝ սիրել և որը նորումն հետ կամուսնանայ»:

Ժողովրդական երգն էլ, իսկոյն դառնում է որոշ և հասկանալի. «Ախ նորումն ո՞վ էր ճանաչում, նորում քաղցր ձայն ո՞վ էր միշտ լսում, հիանալի էր նա, գեղեցիկ էր նա» և այլն...

Միւս յիշած նախադասութիւնն էլ պարզում և կոկիւում է. «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետեւ ծնողները չէին սիրում նորումն». ընդհակառակը պիտի հասկացուի, եթէ զրենք. «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետեւ ծնողները չէին սիրում նրան»:

Մեր առաջարկի կարեորութիւնն այն է, որ մեր դերանուծների բազմաթիւ ձևերին տալիս է մի պատշաճ և վերին աստիճանի անհրաժեշտ պաշտօն. Սուսսանի խառնակութիւնից և ծառայել լեզուի կատարելութեանը, առանց մի նոր բան մտցնելու լեզուի մէջ և առանց ընտելանալու որ և է խորթութեան:

Հետևելով հին հայերէնին ու եւրոպական լեզուներին, ուր երկար ձևերը իգական են, իսկ կարճերը արական. սո, իլ, սոս, elle, онъ-она, ուստր—դուստր, տէր—տիրուհի, հաւ—հանի, մեր գերանուծներն էլ մենք բաժանում ենք. կարճն արական, երկարն իգական:

Ա. ր ա կ ա ն.

ինքը, սա, դա նա,
իրենք, սրանք, դրանք, նրանք
իր, սրա, դրա, նրա,
իրենց, սրանց, դրանց, նրանց

իրեն, սրան, դրան, նրան,
 իրենց, սրանց, դրանց, նրանց,
 երենից, սրանից, դրանից, նրանից,
 իրենցից, սրանցից, դրանցից, նրանցից
 իրենով, սրանով, դրանով, նրանով,
 երենցով, սրանցով, դրանցով, նրանցով

երկարը՝— Ի գ ա կ ա ն

ինքը, սա, (սէ) դա, նա (նէ) ունի,
 իրանք, սորանք, դորանք, նորանք,
 իւր, սորա, դորա, նորա (ուհու),
 իրանց, սորանց, դորանց, նորանց,
 իրան, սորան, դորան, նորան (ուհուն)

» » » »

իրանից, սորանից, դորանից, նորանից,
 իրանցից, սորանցից, դորանցից և այլն
 իրանով, սորանով, դորանով, նորանով

» » » »

Այս ցանկն այն պակասութիւնն ունի, որ եզակի սուտըին դէմքի համար առանձին ձև չկայ։ Նոր հնարելը դէմ կը լինէր լեզուի ոգուն, կարիքը պահանջած դէպքում, Դաւիթ Անյաղթի նման մենք պէտք է գործածենք սէ, դէ, նէ. կամ սա, դա, նա, միայն տակը գծած, ինչպէս այդ արել է Հայնէի Թարգմանիչը։

Եթէ վերջապէս դժուար է ընտելանալ այս ամենին, կարիք զգացած դէպքում պէտք գործածել այն մասնիկը, որ արդէն սովորական է շարունակ և կապակածի ու տարակոյսի տեղիք բոլորովին չի թողնում ունի։ Ոչ յաճախ, բայց նուրբ և ճիշտ խօսող շրբ-

թուներն երում արդէն գործ է ածւում դա ժողովրդին էլ հեռը, որպէս մի նորութիւն: Դա ունի արդէն բոլոր հոլովներն ու բոլոր նրբութիւնները. իզական է ի բնէ և կարծեմ խորթ էլ չի թուայ, եթէ տեսնք. ունին եկաւ, ունին գնաց, ունին գեղեցիկ է, ունուն սիրում եմ, ունին երբ գեղեցիկ են, ունին երբ եկան և այլն... Եղակի ուղղական հոլովը դռնէ միշտ կարելի է զբանով լրացնել, միաքը ճիշտ և ուղիղ արտայայտելու համար...

Կայ և մի երրորդ ձև, որ մենք բոլորովին չը յիշեցինք. սոքա, դոքա, նոքա, սոյա, դոյա, նոյա, որ մի ժամանակ, գլխաւորի ազդեցութեան տակ ահագին կիրառութիւն ունէր, այսօր սակայն զրեթէ բոլորովին տեղի է տուել կենդանի ձևերի առաջ: Գուցէ այդ ձևը կարելի լինէր գործածել չէզոք անունների տեղ, բայց մեր լեզուն առայժմ այդ կարիքը չի զգում և այդ դերանուններն էլ պակասաւոր են, բոլորովին զուրկ լինելով եզակի ձևերից: Եթէ մի անգամ ընդ միշտ ուզում ենք կանոնի հետեւել. լաւ կը լինէր, որ արական ձևերը գործ ածէինք նաև չէզոք անունների համար *):

*) Պ. Մ. Արեղեանը («Նոր-Դար» 1897. № 160—61) աշխատում է ցոյց տալ, որ հայերէն դերանունների անորոշութեան շնորհիւ մենք շփոթում ենք անշունչ և շնչաւոր առարկաները: Այդ պակասը նա առաջարկում է լրացնել տրեման գերանունների ձևերով: Մի ժամանակ ինքը և պ. Ս. Մանդինեանն սկսեցին գործածել «Փայտերը բերէք, աղուկը ժեզ հարկաւոր են. տունը ցուրտ է, անոթ մէջ ես չեմ բնակւում. այս հացից չեմ ուտում, անոթից տուր»: Սակայն մեր հերթումից յետոյ դադարեցին այդ սխալ գործածութիւնից: Տես մեր յօդուածը «Մուրճ» 1899 թ. «Նա և այլն» դերանունների մասին:

Մեր ատելիքը կարելի է ամփոփել հետևեալ կահոնի մէջ. ոռը կարիք կայ եւ դերանոռնը երկու ձեռ ոռնի, կարձը յատկացնել արահանին (և չէզոքին) խալ երկարը իզակահին *)։—Ում համար խորթ և դժուար է այդ անելը, պիտի գործածէ ի բնէ իզական «ռոհի» մասնիկն իբրև դերանուն։

Ոմանք մեր այս առաջարկը աջողութեամբ սկսել են արդէն դործածել մտցնելով լեզուի մէջ նրբութիւն և ճշտութիւն, մենք կարող ենք այդ կողմից մասնաւորապէս յանձնարարել պ. Լ. Մանուէլեանի վերջին տարիներս զրած պիեաները։




*) Մեր այս առաջարկը լոյս տեսաւ «Մուրճ» 1898 թ. № 10–11. Դրանից ուղիղ երկու տարի յետոյ «Անահիտի» մէջ պարսն Չորանեանը արծարծելով միևնոյն մտքերն, առաջարկեց իզական դերանունների համար գործածել. էն—էնոր, էնոնք, էնոնց արեւմտեան լեզուով։ Իմ առաջարկի մասին պ. Չորանեանը չէ մի յիշատակութիւն չի արել, սակայն, ի պատասխան իմ նամակին, գրում է. «Կարծեմ յիշած պիտի ըլլամ և ձեր տեսութիւնը դերանունների մասին»։

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

	Երես	Սխալ	Ուղղիչ
40	Վերջին տող	Ըստամբօլ	Ըստամբօլ
58	Երրորդ տող	շրջեցուցանէր	շրջեցուցնէր
81	Երկրորդը ներքևից	ժողոքներով	ժողովներով
146	Առաջին տող	մէջ	մէկ
151	Տասնվեցերորդ տող ներքևից	շխանին	իշխանին
200		0111010 և այլն	o---o-o-o---
204	Չորրորդ տող	հոլովակիրը	հոլովակերտը
204	Իններորդ տող	յոգնակիրը	յոգնակերտը
214	Իններորդ տող	տը-եցի	տը-եց-ի
		տը-եց-ի	տը-եց-ի

ԳՐԻԳՈՐ ՎԸՆՑԵԸՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ



Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ

1906

(34)

Дозволено Цензурою 22 Ноября 1905 года г. Тифлисъ

Ա Ջ Պ

Այս ձեռնարկը կազմուած է յատկապէս պետական եւ մեր ծխական դպրոցներէ համար; ի նկատի է առած վերջին ծրագիրը:

Ուսուցիչների եւ միջնակարգ դպրոցներէ բարձր դասարաններէ համար, սրա հետ լոյս կ'սեսնի «Արեւելահայ լեզուի պատմա-ֆննական հետազոտութիւնը», որից եւ ցանկացողը կարող է աւելի ընդարձակ տեղեկութիւններ ստանալ մեր լեզուի հետազոտութեան մասին:

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅԵԱՆ

Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«Մայր Արարսի ափերով քայլամուտը դնում եմ»...

«Մեզինից շատ թուաջ կար մի թագաւոր»... «Ունէր 'նա երկու մասադահաւաղի»... Սրանցից ամեն մինը բառերով արտայայտուած միտք է և կոչւում է խօսք կամ նախադասութիւն:

Նախադասութիւնը բաղկանում է մի, կամ մի քանի բառերից, օրինակ. «լուսադաւ», «լուսից, ամպերը եկան ծածկեցին երկինք, ու լուսին աչքէս խլեցին» — Այս բառերը կոչւում են նախադասութեան անդամներ, որ լինում են երկու տեսակ՝ գլխաւոր ու երկրորդական: Գլխաւորն այն առարկան է, առանց որին նախադասութիւն չի կարելի կազմել և մէկ էլ այն, ինչ որ խօսուում կամ ասուում է այդ առարկայի մասին. օրինակ թաջ Վարդանն ընկաւ Աւարայրի պատերազմում: Գարող ենք կարճ ասել. «Վարդանն ընկաւ» և դարձեալ միտք կալ. այն ինչ եթէ թայ թողնենք Վարդան կամ ընկաւ բառերը, այլևս նախադասութիւն չի մնում, այլ միայն բառեր:

Առարկան, որի մասին խօսուում է նախադասութեան մէջ, կոչւում է ննթակայ. Վարդանն՝ այն ինչ որ խօսւում է ննթակայի մասին, ստորագետլ ընկում:

Ննթական գտնելու համար պիտի հարցնենք ո՞ւր, ի՞նչ, ո՞վ ընկաւ. Վարդանը, ի՞նչը կորաւ, մատանին: Խոյ ստորագետլը, որ ցոյց է տալիս առարկայի գործողութիւնը կամ զրուծիւնը, պատասխանում է հետեւեալ հարցերին. ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է, ի՞նչպիսի է. օրինակ. ի՞նչ է անում Վարդանը — սլատերազմում է. ի՞նչպիսի է Վարդանը — քաջ է. ի՞նչ է, ինձօրենին. — ծառ է. սլատերազմում է, քաջ է, ծառ է, — ստորագետլներ են:

Քացի այդ գլխաւոր անդամներից՝ նախադասութեան

միտքը լրացնելու և ընդարձակելու համար լինում են և այլ բառեր, որոնք կոչւում են *երկրորդական անդամներ*։ օր. Վարդան սպարապետի բաջ զօրքը Ասարայր գաշտում կուում է անձնախրութեամբ.—Այտեղ Վարդան սպարապետ, քաջ, Ասարայր, անձնուիրութեամբ. նախադասութեան երկրորդական անդամներ են, որոնցից մեծեր վերաբերում են առարկային և որոշում ու պարզում են նրան, ոմանք վերաբերում են գործողութեանը։ Մեծացեալն էլ ուղղակի վերաբերում է ու պարզում հէնց երկրորդական անդամներին։

Առարկային վերաբերուող բառերը կոչւում են *որոշող բառեր*, ինչպիսի զօրք.—քաջ զօրք. քաջ որոշող է, իսկ զօրքը—որոշեալ. մւմ զօրքը, Վարդանի, Վարդան նոյնպէս որոշում է զօրքին։ Հարկաւոր է նոյնպէս իմանալ թէ մի էր ինքը վարդանը.—նա սպարապետ էր, սպարապետ որոշիչ է Վարդանին, իսկ Վարդան որոշեալ է սպարապետի։ Որոշող բառերից իմանում ենք թէ քանի՞ հատ է առարկան, քանի՞ երրորդն է, մահ է, մրն է, ինչպիսի է։

Այն բառերը, որոնք լրացնում են ստորոգեալի միտքը, կոչւում են *լրացուցիչ*։ Ամպիրը եկան, ծածկեցին լուսին (լուսնին). գիւղացիք խոտը հարում են գերանդով։ Հայր ծեծի Վարդանին, թուրքը ծեծի Վարդանին։ Զուռն չուտով դէմքը ծածկէ.—Այտեղ լուսին, խոտը, գերանդով Վարդանին, լրացուցիչներ են, որովհետեւ լրացնում են նախադասութեան միտքը, ցոյց տալով, թէ ստորոգեալի ոյժը որի վրայ, կամ ո՞րի միջով է անցնում։ Լրացուցիչն իմանում ենք հետեւեալ հարցերով. մւմ, ինչ, ինչին, ումից, ինչից, ումով, ինչով։

Այն երկրորդական անդամները, որոնք նոյնպէս վերաբերում են ստորոգեալին և ցոյց են տալիս գործողութեան

զանազան հանգամանքները, կոչում են սլաքազայի բառեր. գորրը Աւարայր գաշտում կուում էր անձնութեամբ. սրտից էր կուում, Աւարայր դաշտում. ինչպէս էր կուում, անձնութեամբ: Գարոց ենթ աւելացնել. Թրք էր կուում, 451 թուին, ինչու էր կուում, հայրենի կրօնի համար. սրանք բոլորը պարագայի կամ հանգամանքի բառեր են. դաշտում՝ ցոյց է տալիս գործողութեան տեղը, անձնութեամբ, ցոյց է տալիս ձեռք կամ եղանակը, 451-ին ցոյց է տալիս ժամանակը, կրօնի համար ցոյց է տալիս նպատակը:

Ուրեմն պարագայի բառերը ցոյց են տալիս գործողութեան ժամանակը, տեղը, ձեռք, չափը, նպատակը: Նրանք պատասխանում են հետևեալ հարցերին. *Մերը, ո՞րտեղ, ինչպէս, ինչքան, ինչու:*

Բացի գլխաւոր ու երկրորդական առարկաներից, նախադասութեան մէջ լինում են գէպեր, երբ գիմում կամ կանչում ենք. օր, Հայր մեր երկնատը, հայր ամեն մարդե, դու մեկ ամէն օր տաս հազար բարի: Ժիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ: Սրանք բոլորը գիմումն են ցոյց տալիս և ասում են կոչական բառ:

ՆԱԽԵԳԼՍՈՒԹԵԸՆ ՏԵՍԵԿՆԵՐԸ

Երբ նախադասութիւնը բաղկացած է միայն ենթակայից և ստորոգեալից, կոչում է համարօտ նախադասութիւն օր. Վարդանը մեռաւ. հաւր խօսեցաւ, օրը բացուեցաւ:

Երբ նախադասութեան մէջ կան նաև երկրորդական անգամներ, կոչում է ընդարձակ նախադասութիւն. օր. գլխացին վարում է արտը. Վարդանն իր բաջերի հետ ընկաւ Աւարայր գաշտում:

Գան նախադասութիւններ, որ մի միտք են յայտնում, կան և այնպիսիները, որ մի բանի միտք են յայտնում. օր. *Արամը քաջ էր. սա մի նախադասութիւն է և մի միտք է պարունակում: Արամը, որ քաջ էր, յաղթեց անորի՝ Եղիշը:* սա նոյնպէս մի նախադասութիւն է, բայց պարունակում է երկու միտք:

Այն նախադասութիւնը, որ մի միտք է պարունակում, կոչւում է *պարզ*, իսկ նա որ երկու կամ ավելի միտք է պարունակում, կոչւում է *ըստաղքեալ*, «բառացի» մի պարզ նախադասութիւն է. «ամպերը եկան, ծածկեցին լուսին», մի բոլորակալ նախադասութիւն է:

Բազմաբաղադրական մէջ մի միտքը լինում է գլխաւոր, իսկ միւսները երկրորդական, գրանից կախում ունեցող. օր. «Արամն յաղթեց անորի՝ Նիւբարին» — գլխաւոր է, «որ քաջ էր», երկրորդական:

Մտքի համառոտութեան համար, շատ անգամ, միևնոյն ենթական միացնում է մի բանի ստորոգեալ և կամ, միևնոյն ստորոգեալն ունենում է մի քանի ենթակայ. այդպիսի նախադասութիւնները կոչւում են միաւորեալ. օր. Գամառ-Քաթիկան բանաստեղծ էր. Ք.-Քաթիկան ուսուցիչ էր. Ք.-Ք. հեղինակ էր, — կործ կ'ատենր Ք.-Քաթիկան ուսուցիչ, բանաստեղծ և հեղինակ էր: Նալբանդեանը հայ բանաստեղծ էր, Գուրեանը հայ բանաստեղծ էր, Ալիշանը հայ բանաստեղծ էր. Նալբանդեանը, Գուրեանը և Ալիշանը հայ բանաստեղծների էին:

Երբեմն նախադասութեան միտքը պարզելու համար մէջ են բերում այլ նախադասութիւններ, որոնք կարող չեն և կարող են բաց թողնել, առանց մտքին վնասելու. այդպիսի նախադասութիւնները կոչւում են *միջնակեալ*. «Ինչպէս ևրեւում է, Վասակն ուրացել էր սրտանց». —

«Պատմում» մին, որ նա դառածանեց հայերի միաբանութեանը: «Շատ էլ տեսն, էշն ի՞նչ գիտէ նուէն ի՞նչ է»:

Երբ պատմելիս մենք մէջ ենք բերում մի հրրորդ անձի խօսքերը, դա կոչւում է յաւելիալ նախադասութիւն և գրւում է շակերտների մէջ. Յիսուսն ասում էր, «Տէր, ներիր, որովհետեւ չ'գիտեն ի՞նչ են անում»:

Բոլոր նախադասութիւններն ս:քեմն բաժանւում են հինգ մասի.

Պարզ $\left\{ \begin{array}{l} \text{Համառօտ} \\ \text{Բնդարձակ} \end{array} \right.$

Բաղադրեալ $\left\{ \begin{array}{l} \text{Գլխաւոր} \\ \text{Երկրորդական} \end{array} \right.$

Միջանկեալ

Միաւորեալ

Յաւելիալ:

Կ Է Տ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Խօսքի զանազան մասերը միմեանցից բաժանելու համար գործ են ածւում նշաններ, որոնք կէտնը են կոչւում, գրանք են.

- | | |
|-------------------|--------------------|
| 1) Բաւթ (‘) | 8) Ապաթարց (‘) |
| 2) Ստորակէտ (,) | 9) Զակերտ » » |
| 3) Միջակէտ (.) | 10) Փակադիծ (.) |
| 4) Վերջակէտ (:) : | 11) Բաղմակէտ ... |
| 5) Ընշա (‘) | 12) Միութեան գիծ — |
| 6) Երկար (‘) | 13) Բաժանման գիծ - |
| 7) Հարցական (°) | |

Երբ նախադասութեան մէջ մի բան բայ է լծուած կամ յաջորդ բառը չի վերաբերում նախորդին՝ գրւում է բուլթ նախորդի վրայ. օր. «Ծոյն արժանի է պատմի, իսկ ջանասէրը՝ պարզի»։ «Բաժակները լի էր գինով, գրականները՝ փոփով, սրտերն՝ ուրախութեամբ»։

Երբ նախադասութեան մի սրի է անդամը, ստորուցեալ, բայ կամ լրացուցիչ կրկնւում է, բաժանւում է միւսներից ստորակէտով. օր. «Իսկ, ձոր, քար և անտառ կանաչել էին։ Զունը կերաւ, խմեց, բնեց»։

Երկու կամ աւելի նախադասութիւններ, որ մօտիկ կապ ունին, նոյնպէս բաժանւում են ստորակէտով. «Ժողով ծաղկեց, ծիծառն երգեց, գարունը ժպտաց, և բնութիւնը կենդանացաւ»։ Որտեղ կամ, ու, և, շարակապ կայ, այնտեղ ստորակէտ չի գրւում, օր. Վարդանն ու Վահանը դժբաղանքներ էին։ Ղիտուն կամ տղէտ՝ հաւասար են օրէնքի առաջ։

Միջանկեալ նախագասուծիւնը կամ խօսքը ստորակէտով է բաժանուում գլխաւոր նախագասուծիւնից: Պոչական բառերը միշտ բաժանուում են ստորակէտով թէ՛ նախորդ և թէ՛ յետորդ բառերից. «ծիժեռնակ, ծիժեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ»:

Միջակէտ գրուում է յաւելեալ նախագասուծիւնների առաջը. «Հայրն ասաց որդոյ. սիրելիք, աշխատեցէք, որ մարդ գտանար»: Յազմուծիւնից յետոյ Պետար մի այտպիսի նամակ գրեց. «եկայ, տեսայ, յաղթեցի»:

Վերջակէտ գրուում է այնտեղ, ուր միտքը վեջանում է:

Ճիշտը գնում ենք կոշական և հրամայական բառերի վրայ. «Աստուած, պահիր զաւակներիս»: «Արամ, գնա և պտտերդ սովորի»:

Ազատարդ գնում ենք բայ թողած տառի տեղ. չը տնիմ=չ'ունիմ. կը գնամ=կ'գնամ:

Չակերտը գնում ենք օտարից բերած բառերի առաջն աւ վերջը. «Հայրնիկ», ասաց գուստրը հօրը,— «Կապոյտ երկերի վրայ»...:

2. ԲՆՈՒ, ՎԸՆԿ, ՀՆԶԻՒՆ

Եթէ վերջնենք մի սրե է միտք, օր, աշակերտը սովորում է դասը, և բաժանենք, կտոր-կտոր անենք, կ'տեսնենք որ նա երեք մասերից է բաղկացած. աշակերտը, դասը, ևս սովորում է, սրտն առանձնակի մի միտք չէն յայտնում, բայց ամէն մինը մի նշանակութիւն ունի: Խօսքի այդ մասերը, որոնք առանձին վերցրած մի գաղափար են յայտնում կամ մի նշանակութիւն ունին, կոչւում են ջտտեր. հաց, շուն, պանիր, քար, գրիչ, կարգալ, գրիկ...

Բոտերն էլ, լինում են կարճ կամ երկար. ևս, ու,

վաճառական, աշակերտ, մ'ազ, ուսումնարան, ուստի մի-
ատենակ չեն հնչում կամ արտաբերում:

Վ Ը Ն Կ

Բառի այն մասը, որ հնչում է մի անդամից, կոչ-
ւում է *վանկ*. օր. վա-ճա-ռա-կան, ու-սում-նա-րան. ուս-
տի և այն բառը, որ մի վանկ ունի կոչւում է *վրաւանկ*.
մազ, հաց, տուր, բեր, միրգ, երգ: Իսկ այն բառը որ ու-
նի երկու կամ ավելի վանկ, կոչւում է բազմավանկ. սե-
ղան, լծանար, մատիտ, թանաքաման:

Հնչիւն, ՏԵՌ ԿԵՐ ԳԻՐ

Վանկն էլ հնչելիս կարելի է ուղածին չափ երկարա-
յնել, կրգել, հաաաց, օօգ, Է...չ, և այլ ժամանակ
ջոկ-ջոկ լսում ենք առանձին ձայներ, որոնք կոչւում են
հնչիւններ: Երբ հնչիւնը գրում ենք թղթի վրայ, նրա նը-
շանը կոչւում է *գիր* կամ *տառ*:

Վանկը երգելիս հնչիւններից մի բանիւք երկար են
հնչւում, երգւում են. օր. ա, ի, օ, ու և այլն... գրանք կոչ-
ւում են *ձայնատը* և ինքը հատ են. ա, ե, է, լ, ո,
օ, ու, իւ: Այլ հնչիւններ արտասանւում են միանգամից և
չեն երգւում, անհար է նրանց ձայնը երկարել. օր. բ, գ,
չ, ջ, խ, հ, և այլն, գրանք կոչւում են բաղաձայն:

ձայերին գրեն են, ա, բ, գ, դ, ե, զ, է, լ, ժ, ժ,
ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, դ, ճ, մ, յ, ն, շ, ս, չ, պ, ջ, ա,
ս, վ, տ, բ, ց, ւ, փ, բ, և, օ, ֆ:

Բացի գրանից, ս և ւ, միանալով տալիս են *ու*, ի և ւ,
միանալով տալիս են իւ, ս և յ=*ոյ*, ա և յ=*այ*:

Այս հնչիւններն էլ, նայելով իբանց հնչման եղանակին,

բաժանում են մի բանի տեսակի: Կան սր հնչում են լեզուի միջոցով և կոչում են.

Լեզուային. օր, ու, ու, դ, տ, թ. շրթունքի միջոցով հնչույր կոչում է:

Շրթնային. բ, պ, փ, մ, ն:

Ատամնային. ժ, շ, զ, չ, ջ, ծ, լ, ճ:

Կոկորդային, խ, պ, հ:

Քմային. գ, կ, ք:

Հնչման եղանակին նույնիսկ, ամենից հեշտ են հնչում և դուրեկան են ձայնաւորները, ապա լեզուային և շրթնային հնչիւնները: Ամենից դժուար են հնչում և անդուրեկան են ատամնային և կոկորդային հնչիւնները: Ուստի դժուար է հնչելը. բժիշկ, Մկրտիչ, խնձոր, բմժիժապ, բժշկութիւն. ընդհանրապէս, հեշտ է, հաւ, նո, բարի, առաքինի, մարգարէ. առհասարակ ան բառերը, որոնց մէջ ամեն մի բաղաձայնին յաջորդում է մի ձայնաւոր:

Եթէ բառը երկար է և պրիկիս կարիք կայ կէսն անցկացնել միւս տողը, բառը պիտի բաժանենք վանկերի և թողնենք կամ հաւացնենք վանկերից մի կամ մի քանիսը. օր. վարժապետ, թա-դա-ւոր. շին կարելի կիսել վարժապետ, կամ վարժապետ:

ՊԱՐՋ, ԲԱՐԴ և ԱԾԱՆՅԵԱԼ ԲԱՌԵՐ

Բառերը իրանց նշանակութեան համեմատ լինում են երեք տեսակ, պարզ բարդ և ամացեալ:

Երբ բառը մի պարզ գաղափար է յայտնում և չունի սրի է մասնիկ, կոչում է պարզ օր. մարդ, հոգի, բազմ, շուն և այլն:

Երբ արկղիտի բառերի վրայ աւելանում է սրի է մաս-

հիկ. գա կոչումն է ամանցեալ. ամարդ, մարդ-կային, չհա-կան, ղժ-գոյն, ան-հոգի, ան-բաղդ, բաղդ-ատու:

Երբեմն երկու պարզ բառեր միանում և արտաբայ-
տում են մի նոր գաղափար, դրանք կոչւում են քաղղ բա-
ռեր։ քաղար-ա-վարի, կառ-ա-վար, սեղան-ա-տուն, տան-ու-
տէր, Վարդ-աշէն, հիւր-մեկալ, հոգե-չահէ։

Այն տառերը, որ կապում են մի բառը մյուսի հետ բարդուելիս կամ ամանցուելիս, կոչւում են յօդակապ և են. ա, ն, ու։ Երբեմն բառերը բարդւում են առանց յօդակապի, որ աւելի լաւ է, օր. մարդ-օրոտ, մատն-քաշ, արագ-ընթաց, սուտ-մոտ, գունդ-ա-գունդ և գունդ-գունդ, խմբ-երգ, բան-բեր, բանտ-արկու, բան-թող, հանդ-մէջ, հայ-թուխ, ջր-կիր, փռչ-կապ։

ԽՕՍՔԻ ՄԱՍԵՐԸ ԿԷՄ ՄԱՍՈՒՆՔ ԲԸՆԻ

Խօսքի մասերը բառերն են, որ ալլ կերպ կոչւում են մատունք ըանի: Բառերն իրանց բովանդակութեանը նայելով, մի ըանի տեսակ են լինում, օրինակ, կան, որ ցոյց են տալիս մի առարկայի անուն, բար, փայտ, երկինք, գետին, հաց, կան, որ ցոյց են տալիս գործողութիւն. կերաւ, խմեց, գրեց, վազում է, նայում է և այլն... և կամ յատկութիւն. սուրբ մարդ, մարութ թուզիմ, սիրուն գետ և այլն:

Քանի կամ խօսքի մասերը տասն են:

ա. Գոյական անուն
բ. Ածական անուն
գ. Թուական անուն
դ. Դերանուն

դ. Բայ
Է. Դերբայ
Բ. Մակբայ
ԼԺ. Չաղկաղ
Ժ. Մխչարիկ կամ Հայնարիկ:

Գ Ո Յ Ը Կ Ը Ն Ը Ն Ո Ւ Ն

Ամէն ինչ որ կայ, կոչւում է առարկայ: Առարկաները լինում են նիւթական կամ վերացական, շնչաւոր կամ անշունչ:

Նիւթական կոչւում է այն առարկան, որ մենք կարող ենք շօշափել. քար, փայտ, հաց, գինի:

Վերացական կոչւում է այն առարկան, որ շօշափել չենք կարող, այլ իմանում ենք մտքով: Աստուած, հոգի, հրեշտակ, բարութիւն, չարութիւն:

Ջնչաւոր կոչւում է այն առարկան, որ կենդանի է և շնչում է. մարդ, սշխար, ձի, կով:

Անշունչ կոչւում է այն առարկան, որ կենդանի չէ և չի կարող շնչել. ջուր, գիրք, մատիտ:

Ամէն մի առարկայի անուն կոչւում է գոյական անուն. գիրք, թուղթ, թանաք:

Գոյական անունները լինում են հրեք տեսակ. յատուկ հասարակ և հաւաքական:

Երբ առարկան մէկ հատ է, նրա անունը կոչւում է յատուկ. Մոսիս, Թիֆլիս, Կուր, Վարդան, Թորոս: Յատուկ անունները գրւում են մեծ տառով:

Երբ միևնոյն անունը շատ առարկաների է պատկանում, կոչւում է հաւաքական. գիրք, մատիտ, մարդ, ծառ, անասուն:

Երբ բազմաթիւ միատեսակ առարկաներ խմբովին մի անուն ունին՝ դա կոչւում է հաւաքական անուն. օր, անտառ, զօրք, ջուր, ալիւր, ջուր, հրամ:

Թ Ի Ի

Երբ առարկան մէկ հատ է, ասում ենք հզակի թիւ. գիրք, գրիչ... Երբ առարկայի թիւը շատ է, ասում ենք

յոգնակի թիւ, (շատ) զրբեր, զրիշներ, մատիտներ:

Յոգնակին կազմում ենք հզակի թուից վրան աւելացնելով *եր, կամ ներ, եր, ներ* մասնիկը կոչւում է *յոգնակերտ*:

Եր աւելացնում ենք միավանկ բառերի վերջը, օր, տէր-եր, մայր-եր, բոյր-եր, սար-եր:

Յագնակի գառնալիս միավանկ բառերի մէջ *ը* կամ *ու* ձայնաւորը կորչում է. սիրտ, գիրք, շուն, — սրտեր, գրքեր, շներ:

Ներ, աւելացնում ենք բազմավանկ անունների վերջը, օր. մատիտ-ներ, զրիշ-ներ, զըպիր-ներ, աշակերտ-ներ: Բազմավանկ բառերի վերջը եղած *յ*, *տառը*, *յոգնակիւում* կորչում է. *բահանայ*, — *բահանաներ*, *աւարկայ*, — *աւարկաներ*:

Բացառաբար մի քանի բառեր *յոգնակի* այլ վերջաւորութիւն ունին. *Տիկնայք*, *կանայք*, *մարդիկ*, *որդիք*:

Ս Ե Ռ

Ս հոգ երեք է. *արական*, — *տղամարդ*, *հզ*, *խոյ*: *Իգական*. *կին*, *ազջիկ*, *հարս*, *կով*, *հաւ*. — *Իգականը* կազմւում է *նաե ունի* մասնիկով, երբ աւելացնում ենք *առարկայի* վրայ, *վարժ-ունի*, *թագ-ունի*, *գերատան-ունի*:

Անունն առարկաները սեռ շունին և կոչւում են *չէզրք*:

Հ Ո Լ Ո Վ — Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

Անունները շատ անգամ փոփոխում են իրանց վերջաւորութիւնը, օր. *աշակերտը*, *աշակերտից*, *աշակերտով*,

աշակերտներին, աշակերտները և այլն... անուան վերջառութիւնն ալ յայլափոխութիւնը, կոչուած է *հոլովում*, իսկ ամեն մի փոփոխութիւնը առանձին կոչուած է *հոլով*: Հայերէնը *նոթ* հայով ունի:

1) *Ուղղական*, որ ցոյց է տալիս բառի սկիզբը. եթէ առարկան շնչուոր է, պատասխանում է *ո՞վ* հարցին. իսկ եթէ անշունչ է, *ինչ* հարցին. — նախադասութեան մէջ ենթակայ է, երբեմն էլ էական բայերի հետ ստորագեայ: — *Ժիճունակը* բուն էր շինում. էլ չխօսեց *Արաքսը*. *Աշտու* հայց թաղաւոր էր, *Ներսէսը* կաթնուղիկու...:

2) *Հայցական*, երբ առարկան ենթարկւում է մի դործողութեան, հայցական հոլով է. չունը կերաւ *հաց*, աշակերտը դրում է *գիր*, որսորդը գնաց *դաշտ*: Պատասխանում է, *ո՞ւմ*, *ինչ* ու *ո՞ր* հարցերին: — նախադասութեան մէջ բուն լրացեող է: Երբ առարկան անշունչ է, նման է *ուղղականին*, երբ շնչուոր է և որոշեալ, նման է *արականին*:

3) *Սեռականը*, ցոյց է տալիս թէ առարկան ումն է պատկանում և պատասխանում է *ո՞ւմ*, *ինչ*ը, *վարդի* թփեր թող բսնեն... *գլխի* թուզի՞ր պատռած է: *Աշակերտի* մատիտը կորաւ:

Նախադասութեան մէջ որոշող բառ է, որ կոչուած է *յատկացուցիչ*:

4) *Տրական*, ցոյց է տալիս թէ մի առարկայ *նմա* ենթադրաբար, *ինչն* կամ *ում* ենթադրուած կամ մօտեցնում: Հարցերն են, *ո՞ւմ*, *ինչ*ը, *ե՞րբ* *նրանք*: Վարժապետը դաս տուաւ *աշակերտին*, տան *կտուրին* թռչուն է երգում. փողոցով անցնելիս՝ *ծառի* գիւղայ, *մարդու* հանդիպեցայ. *Մայիսին* բացւում է վարդը, *Ապրիլին* կապուտ մանուշակ:

Տրականը նման է սեռականին: Երկրորդ լրացուցիչ է կամ տեղն ու ժամանակը ցույց տուող պարագայի բառ:

5) *Բացասականը* ցույց է տալիս թե մի բան *ինչեւից, ումնից, կամ ո՞րտեղից* է հեռանում: Հայրը հեռացաւ *տանից, զբքից* մի թուզիմ է պակաս. *երկնքից* անձրև է պալիս:—Նախադասութեան մէջ երկրորդական, իսկ կրտսերական բայերի մօտ զլեռուոր լրացուցիչ է. երբեմն էլ տեղ ցույց տուող պարագայի բառ:

6) *Գործիականը* ցույց է տալիս գործողութիւնը *նա՞ն* և *ի՞նչ* բանի միջոցով, *ե՞րբ* և *ո՞րտեղ* *ո՞ւմ* նով, *ի՞նչով*, *որտեղով*, *ե՞րբ* է կատարւում: Նախադասութեան մէջ երկրորդ լրացնողն է կամ տեղը, ժամանակը, ձին ու ուղղութիւնը ցույց տուող պարագայ. օր փայտը կտրւում են *կացնով*, կտրւում են *սղոցով*, փողոցով անց ու գարձ են անում մարդիկ: «Մայր Արարոյի ափերով բայլամօրս զնում եմ»: Ճամբու երկարութեամբ պատ է բաշած. պատի ուղղութեամբ ծառեր են տնկած: Սիրով և համբերութեամբ խեցէր:

7) *Ենթակականը* ցույց է տալիս գործողութեան կատարուելու տեղը. հարցն է՝—*որտեղ*: Տեղ ցույց տուող պարագայի բառ է: Պարտիզում թռչուն է երգում. զըքում՝ սիրուն պատմութիւն կայ: Տանը նստած են մարդիկ:

ԳՈՅԱԿԱՆ ԷՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ

Գոյական անունները երեք հարկում ունին, որ իմանում ենք *եզակի սեռականի վերջին ճայնատուրից*:

Ելք ձայնաւորները հրեք են. I *ի*, II *ու*, III *ա* կամ *եա*, օր. I. քար-*ի*, II. մատան-*ու*, III. ձկ-*ա*-ն, ար-*եա*-ն:

Եյտ հարկումներն իսկապէս զանազանւում են միայն

եղակի սեռականում և մասամբ բացառականում: Մ'նայեալ հոյովների վերջաւորումները միատեսակ են:

Այն մասնիկը, որ աւելանալով արմատին կաղմում է հոյով, կոչւում է հոյովակերտ. օր. հոյ-եց, կայն-ով, գլխ-ում. ից, ուլ, ում, հոյովակերտ են:

Ը Ռ Ը Զ Ի Ն Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ն

եղակի	Յոգնակի
ՈՒՂՂ. ՀԱՅՅ. քար	քար-եր
ՄԵՌ. ՏՐ. քար-ի	քար-եր-ի
ԲԸՅ. քար-ից	քար-եր-ից
ՔՈՐԾ. քար-ով	քար-եր-ով
ՆԵՐՔ. քար-ում	քար-եր-ում:

Այսպէս են հոյովում հայերէն բառերի գրեթէ $\frac{9}{10}$ -ը եզակի թւում, իսկ յոգնակի գրեթէ ընդոր բառերը, մի երեք չորս բացառութեամբ, որ կ'տեսնինք բացառութիւնների և զարտուղիների մէջ:

Հոյովելու համար ուրեմն պէտք է լի նկատի ունենանք ուղղականը և սեռականը, ուղղական արմատի վրայ աւելացնում ենք սեռականի հոյովակերտը և ստանում սեռական, որի նման է և տրականը. որան էլ նման է, երբ առարկան շնչաւոր է և որոշ՝ հայցականը:

Սեռականին երբ աւելացնենք *ց*, զառնում է բացառական. գործիական ստանում ենք երբ ուղղական արմատին աւելացնում ենք ուլ հոյովակերտը:

Ներգոյականը դուրս է գալիս նոյնպէս ուղղականից աւելացնելով ում՝ հոյովակերտը:

Միննոյն այս հսկողներունը երբ աւերացնում ենք արմատի և յոգնակերտի վրայ, ստանում ենք յոգնակի համապատասխան հոլովները:

Ե Ր Վ Ր Ո Ր Դ Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ

Եզակի	Յոգնակի
ՈՒՂ. Հ. մատան-ի	մատանի-նէր
Ս. Տ. մատան-ու	մատանի-նէր-ի
Բ. մատան-ուց	մատանի-նէր-ից
Գ. մատան-ով	մատանի-նէր-ով
Ն. մատան-ում	մատանի-նէր-ում:

Այսպէս են հսկովում ի վերջացող բառերը: Միամանկ բառերում ի-ն չի կորչում. օր. թի, ձի, թիւ, ձիւ:

Այսպէս են հոլովում Աստուած, մարդ. (վերջինս յոգնակի այլ կերպ է հսկովում) և բառերի անորոշ դերբայը. ուտել—ուտելու, գրել—գրելու, կտրղալ—ու և այլն:

Ե Ր Ր Ո Ր Գ Ն Ո Ղ Ո Վ Ո Ի Մ

	Եղակի	Յոգնակի
1) ՈԻՂ, Ն.	ձուկ	ձկ-հեր
ՈԵՌ, Տ.	ձկան	ձկն-եր-ի
ԲԱՑ.	ձկն-ից	ձկն-եր-ից
ԳՈՐԾ.	ձկն-ով	ձկն-եր-ով
ՆԵՐԳ.	ձկն-ում	ձկն-եր-ում

Եղակի	Յոգնակի
2) Լաւու[ծիւն—հեր	
լաւու[ծիւն—հեր-ի	
լաւու[ծիւն-ից—հեր-ից	
լաւու[ծիւն-ով ¹⁾ —հեր-ով	
լաւու[ծիւն-ում—հեր-ում	

Այսպէս են հոլովում բոլոր ու[ծիւն, ում, ումն (ու-
սում, ուսուցումն) վերջացող բառերը:

Բացառու[ծիւն. Յարու[ծիւն և Համբարձում յատուկ
անունները հոլովում են երկրորդ հոլովմամբ:

ԹԵՐԱԿԱՆՈՆ ՀՈՂՈՎՈՒՆՔ

Երեք կանոնաւոր հոլովումից զուրս, հայերէնը ունի
3 հատ էլ լծերականն հոլովում. Ա. ձայնաւոր է օ. Բ. ո.
Գ. ու, ա. մայր,—մօր, քոյր—քրոջ, տարի—տարուայ. յու-
նակի լծում սրանք նման են կանոնաւոր հոլովման. տար-
բերու[ծիւնը միայն եղակի լծումն է, զրա համար էլ նր-
բանք կոչւում են լծերակաւորն:

¹⁾ Ըստ անգամ այս հոլովը վերջանում է եւա՛ր, որ սեռականի նման առ-
նշտա՛ծ է գրաբարից, լաւութեամբ, բարութեամբ, շարութեամբ, սրովհետեւ սա ա-
ւելի կարճ է, քան վերջինը:

ԱԶԳԵԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՅՅ ՏՈՒՈՂ ԲԸՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա.

	Եղակի	Յոգնակի
ՈՒ.	մայր	մայրեր
Ո. Տ. Հ.	մօր	մայր-եր-ի
Բ.	մօրից	մայր-եր-ից
Գ.	մօրով	մայր-եր-ով
Ն.	մօր մէջ	մայր-եր-ի մէջ:

Այսպէս են հոլովուած հայր, եղբայր, մայր և սրանից
դուրս եկած բարդ բառերը, առնամայր, հօրեղբայր, կնրա-
հայր և այլն...

Բ.

Եղակի	Յոգնակի
ըոյր	ըոյր-եր
ըրոջ	ըոյր-եր-ի
ըրոջից	ըոյր-եր-ից
ըրոջով	ըոյր-եր-ով
ըրոջ մէջ	ըոյր-եր-ի մէջ:

Այսպէս են հոլովուած կին, տէր, ընկեր, աներ, տալ,
և սրանց բարդութիւնները. տիկին, հօրաբոյր, տան-տիկին
և այլն...

Գ.

Փամանակ ցոյց տուող բառերի մի մասը կանոնաւոր
հոլովումից դուրս, հոլովուած է նաև այլ կերպ. ա. սե-

առականի վրայ վերցնում է մի ա (յ)։

ՌԵՂ. Ն.	տարի	ամառ
Ս. Տ.	տար-ու-ւայ	ամառ-ու-այ
Բ.	տար-ու-ան-ից	ամառ-ու-ան-ից

Այսպէս են հոլովում ամիս, շաբաթ, ձմեռ, և այլն...

ԸՆԿԸՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՈՂ ԲԸՌԵՐ

Կին և մարդ, յոգնակի հոլովում են կանայք, մարդիկ, կանանց, մարդկանց, կանանցից, մարդկանցից։

Աստուած և սէր, Աստուծոյ և սիրոյ, Աստուծով և սիրով, Աստուծոց սիրոց, կայսր, դուստր—կայսեր, դստեր, կայսրից, դստերից։ Ծնողք, որդիք, երեխայք, տղայք, ծընողաց, որդոց, երեխայոց, տղայոց։

Այսպէս են հոլովում նաև մի քանի ազգերի անունները. հայոց, ռուսաց, յունաց, հրէից, Մամբրիոնեանք—Մամբրիոնեանց, Քաղքատունիք—Քաղքատունեաց։

Հոլովման ժամանակ է դառնում է ի. էշ.իշու, սէր.սիրոյ, հանգէս-հանդիսի, պարտէզ-պարտիզի։

Ո Ր Ո Ջ Մ Ա Ն Յ Օ Պ

Երբեմն անունների առաջը կամ յետը աւելանում է մի յող, և ընդհանուր նշանակութիւնը մասնաւորում է. օրինակ ես կերայ խնձոր, նշանակում է ես կերայ մի պըտուկ, որ առհասարակ խնձոր է կոչւում և յայտնի չէ՛ որ խնձորը և քանի՛ խնձոր կերայ։ Եթէ ասեմ ես կերայ քո

խնձորը, ապա յայտնի է դառնում և սրտչում է իմ կերածը, որ քո տուածն էր. և կամ եթէ ասեմ. հո կերայ մի խնձոր, թէպէտ անորոշ, բայց դարձեալ մասնաւորում է խնձոր դադարարը: Մ'ը կամ մէկ, կտչում է անորոշ յօդ, իսկ ը կամ ն սրտչեալ:

Երբ բառը վերջանում է բաղաձայնով, սրտչեալ յօդը, լինում է ը. քարը, փայտը, ծառը, իսկ երբ ձայնաւորով, լինում է ն, քանի որ ձայնաւորի մօտ ը չի կարող հնչել. օր. այգին, ձին, մատանին և այլն...

Երբ հետեւեալ բառը ձայնաւոր է, սրտչեալ յօդը գառնում է ն, մարդն-ասաւ, որ հայն ուտեն և քնեն. արեւընկաւ քարձր օտքին:

Երբ առարկան յայտնի է և ծանօթ, այն ժամանակ է դրւում սրտչեալ յօդ, անծանօթ առարկան սրտչեալ յօդ չի կարող վերցնել:

Երբ առարկայի ուղղական հսկովը որոշ է, ապա բոլոր հօլովներն էլ վերցնում են սրտչեալ յօդ. բայց սեռականից, եղակի թէ յողնակի:

Ո Ր Ո Զ Ե Ա Լ Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ Ն

Եղակի Յողնակի
ՈՒ. Հ. հայց-ը—հացերը
Ս.—հայց-ի—հացերի
Տ.—հայց-ի-ն—հացերի-ն
Բ.—հայց-ից-ը—հացերից-ը
Ք.—հաց-ով-ը—հացերով-ը
Ն.—հաց-ում-ը—հացերում-ը:

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՎԵՐՋԵՆՈՐՈՒԹՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԸՂԻԽՍԱԿ

	Եղակի			Յոգնակի
ՈՒՂ. Հ.	I	II	III	հր. ներ
ՍԵՌ. ՏՐ.	ի, ու,	նուն, ին		» » ի
ԲԱՅ.	ի-ց, ուց,	ան, (հան)		» » ից
ԳՈՐԾ.	ով	ան, (համբ)		» » ով
ՆԵՐԳ.	ում			» » ում.

Ո Ր Ո Ջ Ե Ա Լ Յ Օ Դ Ո Վ

	Եղակի	Յոգնակի
ՈՒՂ.	ըն, ն.	հրը, ները.
ՍԵՌ.	ի, ու, ան (հան)	» » ի
ՏՐ. **	ին, ուն, անը, (հանը)	» » ին
ԲԱՅ.	իցը, ուցը,	» » իցը
ԳՈՐԾ.	ովը.	» » ովը
ՆԵՐԳ.	ում—ը.	» » ումը

Ա Ծ Ա Յ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

Պան բառեր, որոնք ցոյց են տալիս առարկաների որպիսութիւնը կամ յատկութիւնը. օր. *կարմիր* խնձոր, *անուշ* տանձ, *չար* կամ *ըարի* մարդ, *քարէ* տուն, *փայտէ* սեղան: Գրանք կոչուում են *ածական անուն* և պատասխանում են. *Ո՞րպիսի, ի՞նչպիսի հարցերին:*

**) Հայցականը, երբ առարկան անշունչ է նման է ուղղականին, երբ շնչաւոր է, նման է արականին:

Եթէ ածականը զոյց է առարկայի բնական որակաւորութիւնը (յաւ, վատ, մեծ փոքր) անկախ ուրիշ նրել առարկայից, գա կոչւում է *որակի* ածական: Իսկ եթէ առարկայի որակաւորութիւնը կախումն ունի մի ուրիշ առարկայից, կոչւում է *յարաբերական*. օր. փայտէ սեղան: Այստեղ սեղանի յատկութիւնը կապ ունի փայտ առարկայի հետ, ոսկէ մատանի (ոսկի և մատանի) քարէ տուն (քար և տուն): *Որակն* կարող է մի առարկայի մէջ շատ կամ քիչ, մեծ կամ փոքր չափով լինել, օր. սեւ, ւառլի սեւ և ամենաւառլ թանաք, կարմիր, ւառլի կարմիր և ամենաւառլիր խնձոր: Սրանք կոչւում են ածականի համեմատութեան աստիճաններ և երեք են:

Ա. Երբ ածականը զոյց է տալիս մի յատկութիւն առանց որոշելու աւելին կամ պակասը, կոչւում է *զրական* աստիճան, սպիտակ, կարմիր, լաւ, վատ:

Բ. Եթէ մինի յատկութիւնն աւելի է քան մի քանիսինը՝ կոչւում է *ըսողական* աստիճան. աւելի սեւ, աւելի վատ, լաւագոյն, վատթարագոյն:

Գ. Իսկ եթէ մի առարկայի որակաւորութիւնը գերազանցում է մնացեալ բոլոր առարկաներին, գա կոչւում է *գերըսողական* աստիճան. ամենակարմիր, ամենալաւ, ամենասեւ ամենավատ և այլն: Գերադրական աստիճանը որոտայտուում է նաեւ ամենից, բոլորից, շատ շափաքանց բաճերով, շափաքանց լաւ, ամենից վատ, շափաքանց սեւ:

Յարարկական ածականը չունի համեմատութեան աստիճաններ, որովհետեւ չի կարելի ասել աւելի փայտ, սեղան, ամենասկի ժամացոյց:

Ածական անունը երբ գոյականի հետ է, չի հոլովում կամ փոփոխւում. օր. սուրը մարդ, սուրը մարդու, սուրը մարդուց, սուրը մարդիկ, սուրը մարդկանց: Նրա ինչ հո-

լով կամ թիւ լինելն իմանում ենք հարեան գոյականից, ետևիցն երբ գոյականը չ'կայ, ածականը հոլովում է գոյականների տէս:

Եղակի	Քազիակի
ՈՒ. Հ.—վատ-(ը)	վատեր (ը)
Մ.—վատի	վատերի
Տ.—վատի-(ն)	վատերի-(ն)
Ք.—վատից-(ը)	վատերից-(ը)
Գ.—վատով-(ը)	վատերով-(ը)
Ն.—վատում-(ը)	վատերում-(ը)

Թ Ո Ի Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ի Ն

Թուական անունը ցոյց է տալիս առարկաների քանակը կամ կարգը. օր. Տինգ, վեց, եօթ, քանական են. եօթներորդ, ութերորդ, իններորդ, ցոյց են տալիս դասը, ուստի կոչւում են դասական:

Առաջինը պատասխանում է քանի՞ իօկ երկրորդը, քանիներորդ հարցերին:

Քանակը ցոյց տուող թուականներին եթէ աւելացնենք ըստէ (երկ-րորդ, եր-րորդ, չոր-րորդ կամ ճրորդ (Տինգ-երորդ, վեց-երորդ) մասնիկը, ոտանում ենք դասական թուական: Բացառութիւն է առաջին բառը:

Քանակի թուականներին են վերաբերում նոյնպէս մասնական թուականները, կէս, բաւորդ, մէկ չորրորդ, վեց-եօթերորդ (⁶/₇) տասը տասնըՏինգերորդ (¹⁰/₁₅) և այլն:

Քանակի մէջ կարգ ցոյց տուող թուերը կարգացւում են, միա-ւոր, տասն-ա-ւոր, հարիւրաւոր, հազարաւոր...

Թուական անունը միշտ գրուած է գոյականից առաջ և չի հոլովուած:— Թուական անուան հետ գոյականը սովորաբար եզակի է գրուած. հինգ աշակերտ, տասը մատիտ, բոան զրիչ:

Թուական անունները երբ առանց գոյականի են, հոլովուած են. չորս-չորսի, չորսից, չորսով. վեցերորդ, վեցերորդի, վեցերորդից, վեցերորդով:

Նըկու, հոլովուելիս առնուած է ս. երկու-սի, երկու-սից, երկու-սով:

Մի առնուած է ն. միւ-ի, միւ-ից միւ-ով:

Եօթը և ութը կարգնուած են-ը. եօթի, ութի, եօթից, ութից, եօթով, ութով:

Ինը և տասը, առնուած են-ն ըննի, տասնի, ըննից, տասնից ըննով, տասնով:

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

Գոյականը կամ ածականը չը կրկնելու համար գործ ենք անում նրանց տեղը մի բառ, որ կոչուած է *դերանուն* օր. «Իմ ազգականից գիծ Քուռը, [ԺԼԿ այբի ինձ նման»:
«Երբ տեսնես դու նորան ինձնից շատ բարի արած», իմ, ինձ, դու, նորան, դերանուններ են:

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր Ի Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը

Գերանունները ութ տեսակ են.

1. Անճաղկան, որ անձի ով լինելի է ցոյց տալիս ես, դու, նա, ինքը, մենք, դուք, նրանք, իրանք:

2. Յուշական, երբ գերանունը ցոյց է տալիս մի ո-

բոշ տառերիայ, *սա, դա, նա*: Յուշականը միշտ երբորդ գէմքն է ցոյց տալիս, միայն սրոշում է գիրբը, *սա՝ ցոյց է տալիս մօտիկը, դա՝ մերձաւորը, իսկ նա՝ հեռուն*: Սոյն, կոյն, նոյն, այս, այդ, այն, նոյնպէս ցուցական են, միայն ածականն է չեն հոլովում, որովհետեւ առանձին չեն զործադրում:

3. Հարցականն են կոչւում այն դերանունները, որոնցով հարցնում ենք. *ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ*: Ո՞րպիսի, ի՞նչպիսի, հարցական ածական դերանուններ են. *ի՞նչպիսի գիրբ—լաւ գիրբ, ո՞րպիսի մարդ—լաւ մարդ*:

4. Յարաբերական դերանունը ցոյց է տալիս յարաբերութիւնը, *որ*:

5. Բանականները ցոյց է տալիս քանակը. *որքան, որչափ, նոյնքան, նոյնչափ, այսքան այսչափ*:

6. Ստացականը ցոյց է տալիս առաւելալի ում պատկանիլը. *իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանց*:

Ասորոշ, *ոմն, ոմանք, ոչորք, ոչինչ, միւս, ուրիշ, մի քանի*:

8. Որոշեալ. *իւրաքանչիւր, ըստի, ամեն, ամենայն, ըստընքեան, ամեն մէկը*:

Դերանունը որովհետեւ փոխարինում է անուան, վերցնում է անուան լիւր, հոլովը և սեռը. բացի գրանից *նա* ցոյց է տալիս *դէմքն ու երբեմն էլ դիրքը*: *Դէմքը* երեք է. *առաջին, ով որ խօսում է, ես, ինքս*: *Երկրորդ, ում հետ որ խօսում է, դու, ինքդ*: *Երրորդ, նա, ինքը, որի մասին խօսւում է*:

Դիրքը նոյնպէս երեք է, *մօտիկ սա, այս, սոյն*:

Մերձատըր, դա, այդ, դոյն և *հեռուն. նա, այն, նոյն*:

Սրանք բոլորը երբորդ գէմք ունին:

ՍՏՆՅԱԿԱՆ ԿԸՄ ԴԻՄՈՐՈՋ ՅՕԴ

Ստացական գերանուների տեղ, որ ցույց է տալիս թե՛ առարկան ում է պատկանում, մենք սննինք հրեր տառեր, որ դուրս են հիկի այս, այդ, այն գերանուներից և հն. *ս*, *ը*, *ն*, դրանք կոչւում են *ընժողոշ* կամ *ստացական* յօդ. օր. փոխանակ ասելու իմ գիրքը, ասում ենք *գիրքս*, *քո* մատիտը=*մատիտդ*, *ներա* փայտը=*փայտը* (*ն*). *ս*. առաջին գէմբի համար *լ*, *ը*=*երկրորդն*, իսկ *ն*=*երրորդ*:

Այս յօդը ուղղականից անցնում է և միւս հորմֆներին, օր. *գիրքս*, *գիրքիս*, *գիրքիցս*, *գրքովս*, *գրքերս*, *գրքերիս*, *գրքերիցս*, և այլն...

ԳԵՐԸՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՄԸ

Դերանունների մէջ հայցականի հոլովը նման է Տրականին

ԱՆՁՆԵԿԱՆ ԳԵՐԸՆՈՒՆՆԵՐ

	Եղակի	Յոգնակի
ՈՒ.	ես—դու	մենք—դուք
Ս.	իմ—քո	մեր—ձեր
Հ. Տ.	ինձ—քեզ	մեզ—ձեզ
Բ.	ինձանից—քեզանից ¹⁾	մեզանից—ձեզանից
Գ.	ինձանով—քեզանով	մեզանով—ձեզանով
Ն.	ինձանում—քեզանում	մեզանում—ձեզանում:

Երբեմն գործ է ածւում աւելի կարճ. *ինձնից, ինձնով, ինձնում, քեզնից, քեզնով:*

Անձնական գերանունը չափ անգամ աւելի շեշտելու և կարևորութիւն տալու համար, գործ է ածւում ինքը գերանունն հետ. *ես-ինքս ասացի, դու-ինքդ կատարեցիր. նա ինքը հրամայեց: Երբեմն գերանունն ուղղակի կրկնում է. ես ու ես, ինքն-իրան, ինքն-իրանից, ինքն-իրանով, քեզ ու քեզ, ձեզ ու ձեզ, մեզ ու մեզ. խօսում էինք ու մտածում:*

¹⁾ Եյն ան. յօդը, որ տեսանք անկանոն հոլովման մէջ, որտեղ երբեմն կը բաժանուի է դառնալով ն. քեզ-ն-ից, քեզ-ն-ով, քեզ-ն-ում, ձեզ-ն-ից, ձեզ-ն-ով:

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ելակի	Յուկակի	
ՈՒ. սա	սրանք—սորանք	(սորա)
Ս. սրա—սորա	սրանց—սորանց	(սոցա)
Հ. Տ. սրան—սորան	սրանց—սորանց	(սոցա)
Բ. սրանից—սորանից	սրանցից—սորանցից	(սոցանից)
Գ. սրանով—սորանով	սրանցով—սորանցով	(սոցանով)
Ն. սրանում—սորանում	սրանցում—սորանցում	(սոցանում)

Այսպիս են հորվում դա և նա ցուցականները:

ՍՏԷՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Ստացական գերանունները ածականի պէս ելժէ գոյականի հետ են, չեն հորվում, իսկ ելժէ առանձին են, հորվում են ա հորվմամբ, յօդերով կամ առանց յօդերի:

Ելակի

ՈՒ. իմ—քոնք
Ս. իմի—քոնի
Հ. Տ. իմին—քոնին
Բ. իմից—քոնից
Գ. իմով—քոնով
Ն. իմում—քոնում

Յուկակի

իմերը	(իմոնք—քոնոնք)	քոները
իմերի	(իմոնց—քոնոնց)	քոների
իմերին	(իմոնց—քոնոնց)	քոներին
իմերից	(իմոնցից—քոնոնցից)	քոներից
իմերով	(իմոնցով—քոնոնցով)	քոներով
իմերում	(իմոնցում—քոնոնցում)	քոներում:

	Եզակիի	Յոգնակիի
ՈՒ.	մեր—ձեր	մերոնք—ձերոնք
Ս.	մերի—ձերի	մերոնց—ձերոնց
Հ. Տ.	մերին—ձերին	մերոնց—ձերոնց
Բ.	մերինից—ձերինից	մերոնցից—ձերոնցից
Փ.	մերինով—ձերինով	մերոնցով—ձերոնցով
Ն.	մերինում—ձերինում	մերոնցում—ձերոնցում:

Այսպէս են հորովում սորանք, գորանք:

Հ Ա Ր Յ Ա Կ Ա Ն

	Եզակիի	Յոգնակիի
ՈՒ.	սի—ինչ	սիրէր—ինչէր
Ս.	սւմ—ինչի	ինչերի
Տ.	սւմ—ինչի	ինչերի
Ն.	սւմ—ինչ	ինչեր
Բ.	սւմից—ինչից	ինչերից
Փ.	սւմով—ինչով	ինչերով
Ն.	սւմնում—ինչում	ինչերում:

Յ Ա Ր Ե Ե Ր Ա Կ Ա Ն

Գերանունը ոչ հորովում է այսպէս.

	Եզակիի	Յոգնակիի
ՈՒ.	արը	արանք
Ս.	արի	արոնց
Տ. Հ.	արի (ն)	արոնց
Բ.	արից (ը)	արոնցից
Փ.	արով (ը)	արոնցով
Ն.	արում (ը)	արոնցում:

Անորոշ գերանուններից ոչ-ոք, ոչինչ յագնակի չունին և հոլովում են ա հոլովմամբ, ոչօք, ոչօքի, ոչօքից, ոչինչ, ոչինչի, ոչինչից... Ումն—եղակի չի հոլովում, իսկ յագնակի հոլովում է. ումնք, ումնց, ումնցից...:

Մի քանի, ընդունելով ս հոլովում է. մի քանիսի, մի քանիսից, մի քանիսով... յագնակի ունի:

Միս, ուրիշ, ամեն, իւրաքանչիւր, հոլովում են ա հոլովմամբ, միայն վերջինը յագնակի չ'ունի:

Իրար, մէկգմէկ, հոլովում են ք հոլովման պէս. իրարու, մէկգմէկու, իրարուց, մէկգմէկուց, իրարով, մէկգմէկով:

Ածական գերանուններից, այսպիսի, այդպիսի, եղակի չեն հոլովում, իսկ յագնակի ա հոլովման պէս. այսպիսիների, այդպիսիներից:

Բ Ա Յ

Բայը յայց է առիտ առարկայի գործողութիւնը կամ գրութիւնը. ևս ուսումն եմ՝ հայց. սա մի գործողութիւն է: Ես քնած եմ, սա մի գրութիւն է:

Երբ գործողութիւնը գլխաւոր առարկայից անցնում է երկրորդականի վրայ, այդպիսին կոչւում է ներգործող բայ, կամ ներգործական. օր. ուսելու գործողութիւնն ինձանից անցնում է հացի վրայ, երկրորդական առարկան այդ գէպքում լինում է հացական հոլովով բուն լրացուցիչ: Աշակերտը գրում է գիր, լսում է ջութ:

Երբ՝ ընդհակառակը, գործողութիւնը անցնում է գէպի գլխաւոր առարկան, բառը կոչւում է կրատրական. փայտը կտրուեց սղոյով: Գետը կազմուեալ է առուններից.

Նա՛մակը *գրուեց* իմ ձեռքով: Գրաւորական բայի բուն լրացուցիչը լինում է *ըստպատահան* կամ *գործիական* հոլով:

Այն բայը, որ ցույց է տալիս առարկայի գրութիւնը կամ այնպիսի գործողութիւն, որ չի անցնում ուրիշին, այլ մնում է գործող առարկայի մէջ, կոչւում է *չէզոք*, երեւոյն խաղում է, մարդն *ուրախ* է, կիներ *ծիծաղում* է:

Գործողութեան այս երեք տեսակը կոչւում է *սեռ*. հայերէն բայերն ունին ուրեմն երեք *սեռ*՝ ներգործական, կրատարական և *չէզոք*:

Գարգան, կարգում եմ, կարգացինք, պիտի կարգայի, թէ՛ որ կարգանք:

Գիտելով այս գործողութիւնները, մենք տեսնում ենք, որ նրանց կատարուը կամ մէկն է և կամ շատ. ուրեմն, բայն ունի, 1) թիւ, եզակի և յոգնակի. օր. գում եմ, գում ենք. կարգաց, կարգացին. 2) գործողութիւնը կատարուած է զանազան *ժամանակում*, ուրեմն *բայն ունի ժամանակ*, որ երեք է. ա. *ներկայ*, որ ցույց է տալիս՝ թէ՛ գործողութիւնը կատարուում է *հիմա*, գում եմ, երգում ենք. բ. *անցեալ*, որ ցույց է տալիս թէ՛ գործողութիւնը կատարուել է, բայց կատարուելուց յետոյ վերջացել է արդեօք, թէ՛ կիսատ է մնացել, վաղ է կատարուել թէ՛ նորերս, այդ ցույց է տալիս անցեալի զանազան ժամանակները, որ լինում է *անցեալ*:

Անկատար. գրում էի, կարգում էի:

Կատարեալ. գրեցի, կարգացիր:

Վաղակատար. գրել եմ, կարգացել եմ:

Դերակատար. գրած եմ եղել, կարգացած եմ եղել:

Յարակատար. գրած էի եղել, կարգացած էի եղել:

Պայիտնական. կ'գրէի, կ'կարգայի. և կամ,

գ. երբ մարդ մտադիր է մի զորք կատարելու, եթէ

յարմարութիւն ունենալ, ուստի գործողութիւնը լինում է.

Ստորդաստեղան, եթէ որ գրէի, եթէ որ կարգայի:

Ապառանի, որ ցոյց է տալիս՝ թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի, եւ երկու տեսակ է.

I. Սահմանափակ, կ'գրեմ, պիտի կարգամ:

II. Ստորադաս, եթէ, գրեմ, որ կարգամ:

3) Գ Է Մ Ք

Քայն ունի երկր գէմբ, առաջին, որ խօսում է. նը-
ղըրըղ, որի հետ խօսում է. նըրըրը, որի մասին խօսում
է. ես ուտում եմ, դու ուտում ես, նա ուտում է:

4) Ե Ղ Ա Ն Է Կ

Գործողութեան կատարուելու կերպը կոչւում է նղա-
նակ եւ հինգ հատ է.

I. Անորոշ, որ բայի սկիզբն է ցոյց տալիս եւ վերջա-
նում է ալ. (կարգալ, խաղալ), անալ (հասկանալ, իմա-
նալ), ել, (գր-ել, տսել):

Քացառարար մի քանի բայեր անորոշ կգանակում
վերջանում են իլ, յոգնիլ, նստիլ, ապրիլ:

II. Սահմանափակ կամ որոշեալ նղանակ, որ անո-
րոշի հակառակ սահմանում է գործողութեան ժամանակը,
թիւր եւ գէմբը, պատմելով թէ ով է կատարողը եւ երբ է
կատարում, ես կարգում եմ, վարժապետը պատմում էր,
թռչունը թռաւ:

III. Հրամայական կգանակը ցոյց է տալիս. որ գոր-
ծողութիւնը հրամանով է կատարում, կաղուն, որ մարդ
դառնառ:

IV. *Պայմանականը* ցոյց է տալիս, որ գործողութիւնը պայմանով է կատարւում. օր. պիտի ուտէի, կ'ուտէի, եթէ կերակուրը լաւ լինէր:

V. *Ստորադասականը* ցոյց է տալիս, որ գործողութիւնը կատարմանի տակ է, կարող է կատարուել կամ ոչ.—[թէ որ ուտեմ, [թէ որ ասեմ, ինձ պատժիր. [թէ որ ասած լինէի, ազատուած կ'լինէի:

Այսպիսով *ըսյը* ունի երեք սեռ, երեք ժամանակ, հինգ եղանակ, երկու թիւ, երեք դէմք:

Գ Ե Ր Բ Ա Յ

Բայը չ'կրկնելու համար նրա տեղ գործ ենք անում բառեր, որ կոչւում են *ընթաց*, օր. նա, որ գրում է, պիտի և կարգայ=*գրողը* պիտի կարգայ, ով որ կարդում է, նա խելօք է=*կարդացողը* խելօք է:

Դերըսյը չորս տեսակ է:

I. *Անորոշ*, որ բայի սկիզբն է ցոյց տալիս, որ անոնց սրռնելու [թիւ, գէմբ կամ ժամանակ:

Անորոշ գերբայն հոլովում է ը հոլովման պէս, կարգայ, կարգայիս, կարգայուց, կարգայով.—խզնակի չ'ունի:

II, *Ներկայ*, անորոշի վրայ աւելանալով իս կամ ով մասնիկը, գառնում է *Ներկայ*, ուտել-իս, խաղալ-իս, ուտել-ով, գրել-ով, խաղալ-ով. և կամ արմատի վրայ աւելանում է *ող* և գառնում է *նեքկայ*, *գր-ող*, *կարգաց-ող*, *վիճ-ող*: Սա հոլովում է Ա. հոլովման պէս:

III. *Անցեալ* *ընթաց*ը կազմւում է երբ բայի արմատին աւելացնում ենք *ած*, *ել*, *գր-ած*, *կարգաց-ած*, *կարգաց-ել*, *վերջացր-ած*, *վերջացր-ել*: Սրա օգնութեամբ են

կազմում բայի բարդ ժամանակները, վտարկատար, լարա-
կատար, պայմանական և ոտարպատական:

Հոլովում է Ա. հոլովման պէս, գրածի, գրածից, գրա-
ծով, գրածներ, գրածների և այլն:

ԼՎՔ. Աղառնի գերբայը կազմում է երբ ոնորոշին
աւելացնում ենք ու, պատմել-ու, գրել-ու, կարգալ-ու:

Ս,ա օգնութեամբ է կազմում ապառնի հատառու-
կանը, կարդալու նմ, ապառնի պայմանականը, կարդա-
լու էի: Ստորագրականի ապառնին, թէ որ կարգալու
լինիմ և անկատարը, թէ որ կարգալու լինէի:

Բ Ը Յ Ե Ր Ի Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ Ը

Բայի փոփոխումը եզանակով, ժամանակով, թուով ու
գէմքով, կոչում է խոնարհում:

Բայերն ունին երեք խոնարհում, որ իմանում ենք
անորոշ գերբայից եւ եզակի կատարեալ առաջին դէմ-
քից. օրին

- | | | |
|-----------|-------------|----------------|
| 1) գը-ել, | 2) կարգ-ալ, | 3) ուրախան-ալ. |
| գրե-ցի, | կարդա-ցի, | ուրախացալ: |

Կան բայեր, որոնք ըստ ժամանակները չունին, գը-
բանք կոչում են սլակատատը և լրանում են ուրիշի օգնու-
թեամբ, օր. նմ և կամ բայերն ունին միայն ոտանա-
կանի ներկան և անկատարը, նրանք լրանում են լինել բա-
յի օգնութեամբ, այս վերջինն էլ լրանում է նղանիլ բայով:

Բ Ը Յ Ե Ր Ի Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ Ը

Շմ կամ լինել բայերը կոչում են էտկան, երբ ցոյց

են տալիս տուարկայի էտիմիոնը, կամ լինելը, հո եմ, դու կաս, նա լինում է. նայն բառերը օգնում են միւս բայերին խոնարհուելիս և այդ դէպքում կոչւում են օժանդակ կամ օգնական:

ՕԺԱՆԴԱԿ ԲԱՑԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՆ

Սահմանական եղանակ

Ն ե ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ

Եզակի. հմ, հո, է. (կամ, կաս, կայ).

Յոգնակի. ենք, էք, են. (կանք, կաք, կան):

Ա ն կ ա տ ա ր

Եզակի. էի, էիր, էր. (կայի, կայիր, կար).

Յոգնակի. էինք, էիր, էին. (կայինք, կայիք, կային):

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ

Եզակի. լինում հմ, լինում հո, լինում է.

Յոգնակի. » ենք, » էք, » են:

Ա ն կ ա տ ա ր

Եզակի. լինում էի, լինում էիր, լինում էր.

Յոգնակի. » էինք, » էիր, » էին:

Կ ա տ ա ը ե ա լ

Նշակի. հղայ, հղար, հղաւ,
Յոգնակի. հղանք հղար, հղան:

Ա պ ա ռ ն ի

Նշակի. կը, պիտի, լինիմ, լինիտ, լինի,
Յոգնակի. կը, պիտի, լինինք, լինիր, լինին:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ը կ ա յ

Նշակի. կը, պիտի, լինի, լինելիր, լինել,
Յոգնակի. » » լինելնք, լինելիր, լինելին:

Ա ն ց ե ա լ

Նշակի. հղած կ'լինէի, հղած կ'լինէիր, հղած կ'լինէր.
Յոգնակի. » » լինէինք, » » լինէիր, » » լինէին:

ՍՏՈՐԱԴԱՍԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ն ե ը կ ա յ

Նշակի. թէ, որ, լինիմ, լինիտ, լինի.
Յոգնակի. » » լինինք, լինիր, լինին:

Ա ն կ ա տ ա ը

Նշակի. թէ որ, լինի լինելիր, լինել.
Յոգնակի. » » լինելնք, լինելիր, լինելին:

Հ ր ա մ ա յ ա լ ա ն

հղիք, հղիք,
թող լինի, թող լինին:

Դ ե լ ը ա յ

Ենթոշ—լինել.
Ներկայ—հղույ, լինելիս, լինելով.
Որոշեալ—հղած, լինույ, հղի.
Եղաւոր—լինելու.

ԱՌԱՋԻՆ ԴՈՆԱՐՀՈՒՄ

Գ ը-ե լ, Գ ը-ե ց ի

Մ ա հ մ ա ն ա լ ա ն հ ղ ա ն ա լ

Ն ե ը լ ա յ

Եղակի, գրում եմ, գրում ես, գրում է.
Յոգնակի, » ենք, » էք, » են:

Ա ն լ ա ա ա ը

Եղակի, գրում էի, գրում էիր, գրում էր.
Յոգնակի, » էինք, » էիր, » էին:

Կ ա տ ա ք ե ա լ

Եղակի, գրեցի, գրեցիր, գրեց.
Յոգնակի, գրեցինք, գրեցիր, գրեցին.

Վաղաճատաւը. ես գրել եմ, դու գրել ես, նա գրել է.

մենք » ենք, դուք » էք, նրանք » են.

Գերաճատաւը. ես » էի, դու » էիր, նա » էր.

մենք » էինք, դուք » էիք, նրանք » էին.

Յարաճատաւը, ես, դու, նա,

գրած եմ հղիլ, գրած
ես հղիլ, գրած է՝ ե-
ղիլ:

մենք դուք, նրանք

գրած ենք հղիլ, գրած
էք հղիլ, գրած են ե-
ղիլ:

Ապառնի կը, ալիալ գրեմ, գրես, գրէ.

» » գրենք, գրէք, գրեն.

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն

Ն ե ր է ա յ

Եզակի. կը գրէի, կը գրէիր, կը գրէր.

Յոգնակի. կը գրէինք, կը գրէիք, կը գրէին:

Ա ն է կ ա տ տ ր

Եզակի. գրած կ'լինէի, գրած կը լինէիր, գրած կ'լինէր.

Յոգնակի. » կ'լինէինք, » կը լինէիր, » կ'լինէին:

Ս ա ո ր ա դ ա ս կ ա ն

Ներկայ. թէ ուր գրեմ, գրես, գրէ, գրենք, գրէք, գրեն.

Անճատաւը. թէ ուր գրէի, գրէիր, գրէր, գրէինք, գրէիք, գրէին.

թէ որ գրած լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիր,
լինին:

թէ որ գրած լինեի, լինելիր, լինեք, լինելինք, լի-
նեիր, լինելին:

ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գրիր, գրեցէք.
թող գրի, թող գրեն:

Գ Ե Ր Բ Է Յ

Անորոշ. գրի.
Ներկայ. գրող, գրելիտ, գրելով.
Անցեալ. գրած.
Ապագան. գրելու:

ԵՐԿՈՐԴ ԽՈՆԸՐՀՈՒՄ

կարդ-ալ կարդա-ացի

Սահմանական ճղանակ

Ներկայ. ես կարդում եմ, դու կարդում ես, նա կարդում է,
մենք » ենք, գուր » էք, նրանք » են:
Անկատար. ես » էի, դու » էիր, նա » էր.
մենք » էինք, գուր » էիր, նրանք » էին.
Գատաղեալ. ես կարդացի, դու կարդացիր, նա կարդաց,
մենք կարդացինք, գուր կարդացիր, նրանք
կարդացին:

Վաղակատար. ես կարգացել եմ. դու կարգացել ես, նա
կարգացել է.
մենք կարգացել ենք, դուք կարգացել էք,
նրանք կարգացել են:
Գեղակատար. ես կարգացել էի, դու կարգացել էիր, նա
կարգացել էր.
մենք կարգացել էինք, դուք կարգացել էիք,
նրանք կարգացել էին:

Յարակատար. ես, դու, նա.

կարգացած եմ եղել, կար-
գացած ես եղել, կարգա-
ցած է եղել.

մենք, դուք, նրանք.

կարգացած ենք եղել, կար-
գացած էք եղել, կարգա-
ցած են եղել:

Ապստին. կը, պիտի կարգամ, կը, պիտի կարգաս, կը
պիտի կարգայ,
կը, պիտի կարգանք, կը, պիտի կարգաք, կը,
պիտի կարգան:

Պ Ը Յ Մ Ը Ն Ա Կ Ը Ն

Ներկայ. կը, պիտի կարգայի, կը, պիտի, կարգայիր, կը,
պիտի կարգար,
» » կարգայինք, » » կարգայիր, կը,
պիտի կարգային:
Անկատար. կարգացած կ'լինէի, կարգացած կ'լինէիր, կար-
գացած կ'լինէր:
կարգացած կ'լինէինք, կարգացած կ'լինէիք,
կարգացած կ'լինէին:

Ս Տ Ո Ր Ը Դ Ը Ս Ը Կ Ը Ն

Ներկայ. թէ որ կարդամ, թէ որ կարդաս, թէ որ կարդայ.
» » կարդանք, » » կարդաք, » » կարդան.
Անկատար» « կարդայի, » » կարդայիր, » » կարդար.
» » » ինք, » » » իք, » » » յին:

Հ Ր Ը Մ Ը Յ Ը Կ Ը Ն

կարդան, կարդացէք,
թող կարդան, թող կարդան:

Դ Ե Ր Բ Ը Յ

Անորոշ. կարդայ
Ներկայ. կարդացող. կարդալիս, կարդալով.
Անցեալ. կարդացած.
Անդամներ. կարդալու:

ԵՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ (յօդատը)

ուրախ-ամալ, ուրախ-ացայ

Սահմանական հզանակ

Ներկայ. հո ուրախանում հմ. դու ուրախանում ես, նա
ուրախանում է.
մենք ուրախանում ենք, դուք ուրախանում էք,
նրանք ուրախանում են:
Անկատար. հո ուրախանում էի, դու ուրախանում էիր,
նա ուրախանում էր.

մենք ուրախանում էինք, դուք ուրախանում
էիք, նրանք ուրախանում էին:
Կատարեալ, ես ուրախացայ, դու ուրախացար, նա ուրա-
խացաւ.

մենք ուրախացանք, դուք ուրախացար, նրանք
ուրախացան:
Վաղարկատար, ես ուրախացել եմ, դու ուրախացել ես,
նա ուրախացել է.

մենք ուրախացել ենք, դուք ուրախացել
էք, նրանք ուրախացել են:
Գերակատար, ես ուրախացել էի, դու ուրախացել էիր,
նա ուրախացել էր.

մենք ուրախացել էինք, դուք ուրախացել
էիք, նրանք ուրախացել էին:

Յարակատար

Ես	ուրախացած	եմ	եղել.
Դու	»	»	եղել,
Նա	»	»	է, եղել,
Մենք	»	»	ենք եղել.
Դուք	»	»	էք եղել,
Նրանք	»	»	են եղել.

Աստուծոյ. կը, պիտի ուրախանամ, կը, պիտի ուրախանաս,
կը, պիտի ուրախանայ.
» » ուրախանանք, կը, պիտի ուրախա-
նար, կը, պիտի ուրախանան:

Պ Ը Յ Մ Ը Ն Ա Կ Ը Ն

Ներկայ. կը, պիտի ուրախանայի, կը, պիտի ուրախանա-

յիւր, կը, պիտի ուրախանար:
կը, պիտի ուրախանայինք, կը, պիտի ուրա-
խանայիր, կը, պիտի ուրախանային:
Անկատար, ուրախացած կ'լինէի, ուրախացած կ'լինէիր, ու-
րախացած կ'լինէր, ուրախացած կ'լինէինք, ու-
րախացած կ'լինէիր, ուրախացած կ'լինէին:

Ս Տ Ո Ր Ա Դ Ե Ս Ա Կ Ա Ն

Ներկայ, թէ որ ուրախանամ, թէ որ ուրախանաս, թէ որ
ուրախանայ թէ որ ուրախանանք, թէ որ ու-
րախանար, թէ որ ուրախանան
Անկատար, թէ որ ուրախանայի, թէ որ ուրախանայիր թէ
որ ուրախանար, թէ որ ուրախանայինք, թէ
որ ուրախայի, թէ որ ուրախանային:

Հ Ր Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն

ուրախացիր, ուրախացէր.
թող ուրախանայ, թող ուրախանան:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ, ուրախանայ.
Ներկայ, ուրախացող, ուրախանալիս, ուրախանալով.
Անցեալ, ուրախացած.
Ապրանի, ուրախանալու:

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բացասաբար խոնարհուելիս, օժանդակ բայն առաջ է
ընկնում և իր վերայ է առնում չը մասնիկը, օրինակ.

չեմ ուրախանում, չես ուրախանում, չի ուրախանում.
չենք ուրախանում, չէք ուրախանում, չեն ուրախանում.
չէի ուրախանում, չէիր ուրախանում, չէր ուրախանում.
չէինք ուրախանում, չէիր ուրախանում, չէին ուրախանում:
չուրախացայ, չուրախացար, չուրախացաւ.
չուրախացանք, չուրախացար, չուրախացան. չեմ ուրախացել,
չէի ուրախացել, ուրախացած չեմ եղել և այլն... և
կամ ուրախացած չեմ, ուրախացած չէի, չեմ եղել ուրախացած,
չունիմ ուրախած, ուրախանալու չեմ և այլն:

Կ Ր Ա Ի Ո Ր Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ի Ո՞

Քոյսը ներգործական բայերը կրաւորական են դառնում,
երբ արմատի և լծարդի մէջ ընդունում են մի ուր.
գրուել, ջրուել, ծածուել, բռնուել և այլն...

II և III խոնարհման բայերը կրաւորական են դառնում,
կատարեալ երրորդ գեմքից կորցնելով վերջաւորութիւնը
ի կամ այ, և առնելով ըստ նախորդ կանոնի ուշ.
ոյ. օր. հասկաց-այ, կարգաց-ել, հառկաց-ուել, կարգաց-ուել:

Այսպէս կազմուելուց յետոյ, նրանք խոնարհւում են,
առաջին խոնարհման պէս օրինակ.

գրւում եմ, կարգացւում եմ.

գրւում էի, կարգացւում էի.

գրուեցի, կարգացուեցի.

կը գրուեմ, կը կարգացուեմ.

պիտի գրուէի, պիտի կարգացուէի:

I. ԱՆԿԱՆՈՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝

Ա Ն Ա Լ

Ն երկայ. եղ. անում եմ, անում ես, անում է.

յուզ. անում ենք, անում էք, անում են:

Ա՛ն կ ա տ ա ր, *Ազ.* անու՛մ է՛ր, անու՛մ է՛ր, անու՛մ է՛ր.

յոզ. անու՛մ է՛րնք, անու՛մ է՛րք, անու՛մ է՛րն:

Կ ա տ ա ր հ ա յ, *Ազ.* արի՛, արի՛ր, արա՛ւ.

յոզ. արի՛նք, արի՛ք, արի՛ն.

Վ լ յ ա ղ ա լ յ ա տ, *Ազ.* արի՛ կ հմ, արի՛ կ էի, արա՛ծ հմ, արա՛ծ
հմ հղե՛լ:

Հ ր ա մ ա յ ա կ ա՛ն, արա՛ն, արէ՛ք, մի՛ անի, մի՛ անէ՛ք:

Այսպէս է խոնարհու՛մ և գնի՛կ, գրի՛, գրի՛ր, գրա՛ւ,
գրի՛ք, թոգնե՛կ, թողի՛, թոգնե՛ք, թողա՛ւ, թոգնե՛ք:

Անի՛, գնի՛կ, թոգնե՛կ, տա՛լ, բայե՛րք շատ անգամ աւե-
լանալով բայ արմատների վրայ, գործ են ածու՛մ որպէս
օժանդակ, բաց-անի՛կ, իմաց-անի՛կ, վրջ-գնե՛կ, ցած-գնե՛կ,
թոգնե՛կ-տա՛լ իմաց-տա՛լ, բաց թոգնե՛կ, կարգացնի՛կ-տա՛լ, թոգ-
տա՛լ: Երբ այսպիսի բարդումներով նրանք ցոյց են տալիս
գործսգոյթիան կատարուի՛ն ուրիշի՛ ձեռով, կոչու՛մ են
անցողական բայեր, օրինակ, իմաց-անի՛կ-տա՛լ, վերջաց-լնե՛կ-
տա՛լ և այլն...

Անի՛կ բայն այդպիսի գէպրում շատ անգամ մնում է
անկալի, իմաց-անի՛կ, բաց-անի՛կ, անց-կաց-անի՛կ, երբեմն էլ
ողուելով, միանում է բայ արմատին. վերջաց-անի՛կ, վեր-
ջացընե՛կ, անցկացընե՛կ, յիմարացընե՛կ և այլն:

Գրանք խոնարհու՛մ են ինչպէս *անել* բայը, որից և
և գուրս են եկած, օր. իմաց-անի՛կ, իմաց հմ անու՛մ, իմաց-
արա՛ն, բաց-անի՛կ, բաց հմ անու՛մ, բաց արի՛, բաց-արա՛ն,
վերջացընե՛կ, վերջացընում հմ, վերջացընի՛, վերջացրո՛ւ ¹⁾:

Այսպէս են խոնարհու՛մ բոլոր անցողական բայերը.
առանց ողման կամ սղումով. կարգացնի՛կ, յիմարացնի՛կ,
ծիծաղացնի՛կ, բուսցնի՛կ, գալարեցնի՛կ, հուստատցնի՛կ և այլն:

¹⁾ Դասաւակտնք պահել է սրտ ուղիղ ձեւը. վերջացըն, կարգացըն և այլն:

II. ՅՕԴԱՎՈՐՈՅՍ ԲԱՅԵՐ

Այլ չարք բայեր կան, որոնք խոնարհուելիս կորցնում են ի կամ չ յօդերը, որոնք կոչում են յօդազուրկս բայեր, օրինակ.

ընկնել, ընկայ, ընկիր, ընկել, ընկած.
 հաղնել, հաղայ, հաղիր, հաղել, հաղած.
 մտնել, մտայ, մտիր, մտել, մտած.
 տեսնել, տեսայ, տես, տեսել, տեսած.
 բուռնել, բուռայ, բուռիր, բուռել, բուռած.
 հնծնել, հնծայ, հնծիր, հնծել, հնծած.
 մեռնել, մեռայ, մեռիր, մեռել, մեռած.
 հասնել, հասայ, հասիր, հասել, հասած.
 անցնել, անցայ, անցիր, անցել, անցած.
 իջնել, իջայ, իջիր, իջել, իջած.
 տանել, տարայ, տան, տարել, տարած.
 գտնել, գտայ, գտիր, գտել, գտած.
 դառնալ, դարձայ, դարձիր, դարձել, դարձած.
 փախչել, փախայ, փախիր, փախել, փախած.
 լծաչել, լծայ, լծիր, լծել, լծած.
 փլչել, փլայ, փլիր, փլել, փլած.
 կորչել, կորայ, կորիր, կորել, կորած.
 կաշել, կաշայ, կաշիր, կաշել, կաշած.
 հանդչիլ, հանդայ, հանդիր, հանդել, հանդած:

[1]. Պ Ը Կ Ը Ո Ը Ի Ո Ր

Պակտասուր բայեր կոչում են նրանք, որ լրանում են ուրիշի արմատներով և կամ բայերովին չեն լրանում. օր.

Դառլ, գալիս եմ, գալիս էի, եկայ, եկ, (արի), եկել եմ, եկաք, եկած:

լաւ, լալիս եմ, լալիս էի, լաց-եղայ, լաց եմ եղել,
լաց լինող, լաց եղած, լաց լինելու:

Տալ. տալիս եմ, տալիս էի, տուի, (տուիր, տուա),
տուել եմ, տուող, տուած:

Այսպէս է խոնարհուում տալ բայը: Ժէպէտ նա պակա-
սաւոր չէ:

Ուտել. ուտում եմ, ուտում էի, կերայ, կեր, կերել եմ,
ուտող, կերած:

Կամ. եղակի կամ, կաս, կայ, կայի, կայիր, կար—
մնացեալ ժամանակները չունի. յոգնակի. կանր, կար, կան,
կայինր, կայիր, կային:

Ունենալ. եղ. ունիմ, ունիս, ունի, ունէի, ունէիր, ունէր:
յոգ. ունինր, ունիր, ունին, ունէինր, ունէիր, ունէին:

Գիտենալ. եղ. գիտեմ, գիտես, գիտ, գիտէի, գիտէ-
իր, գիտէր, իմացայ, իմացար,
յոգ. գիտենր, գիտէր, գիտեն, գիտէինր, գի-
տէիր, գիտէին, իմացանր, իմացար:

ԴԻՄԸՊԸԿԸՍ ԲԸՅՆՐ

Մի քանի բայեր գործ են ածուում միայն երրորդ գէժ-
քում, առաջին և երկրորդը չ'ունին, դրանք կոչուում են
դիմադական բայեր. պէտքէ, հարկէ, պուցի, ամօթէ, 'ի-
հարկէ. լուսացաւ, ամպեց, միմեց, անձրիում է, սրտտում
է և այլն:

Մ Ը Կ Բ Ը Յ

Եյն բառը որ ցոյց է տալիս գործողութեան հանգա-
մանըր. կոչուում է մ ա կ բ ա յ:

Մակրայիները ցոյց են տալիս,

Ա. Ժամանակը. այսօր, երեկ, հերոս, վաղուց, հնուց,
երբ, այժմ, երբեմն, երէք, յետոյ, միշտ, ընդմիշտ և այլն:

Բ. Տեղը. սրահ, սր, մօտիկ, հեռու, վերև, ներքև,
տակը, վրան, ներսը, դուրսը և այլն:

Գ. Որակը. ինչպէս, այսպէս, այդպէս, այնպէս,
սաստիկ, ուժգին, սիրով:

Դ. Քանակը. սրբան, ինչքան, այնքան, այդքան,
նայնքան, նայնչափ, բիշ, չատ, սակաւ, հազիւ:

ՆԱԽԱԳԻՐ և ՅԵՏԱԳԻՐ

Այն բառը, որ ցոյց է տալիս առարկաների յարաբե-
րութիւնը կոչուում է նախադիր. եթէ գրուած է հոլովա-
ռու բառից առաջ կամ յետադիր, եթէ գրուած է հոլո-
վառու բառից յետոյ. օր. «ինձ համար չէ գտնան գտ-
լը»—«համար», վերաբերում է ինձ-ին գրուած է յետոյ, ուս-
տի յետադրութիւն է: Առանց քեզ գործը գլուխ չի գայ:
«Առանց» նախադիր է:

Նախադիրներ են. առանց, գէպի, մինչև, բացի:

Յետադիրներ են. հակառակ, համեմատ, մօտ. տակ,
վրայ, հետ և այլն:

Որպէսզի յետադիրն ու նախադիրը ջոկենը մակրայից,
պիտի տեսնենք, թէ գոյականին է վերաբերում, նախա-
դիր է կամ յետադիր, իսկ եթէ բային է վերաբերում,
մակ-բայէ մօտ արիւմտակրայ է. ինձ մօտ խնձոր կա:
յետադիր է:

Չ Ա Ղ Կ Ա Պ

Այն բառը, որ կապում, միացնում է խօսքից և

Նախապատույթ հան անգամներ, կոչուում են շաղկապ:

Արամն ու աշխէիւ խաղում են, իսկ Տիգրանն ու Վահանը կամ խաղում են, կամ՝ պարապում: Ու, կամ, իսկ, ըսյց, էլ, եւ, թէ, եթէ, թէպէտ, ուրեմն, սակայն, մահաւանգ, արդեօր, որովհետեւ, գէթ, գոնէ, թէեւ, թէպէտեւ, միայն, քան թէ, նոյն իսկ, զօրինակ եւ այլն չաղկապներ են:

ՄԻՋԱՐԿ ԿԱՄ ՉԱՅՆԱՐԿ

Այն բացականչումը, որ արտայայտում է մեր զգացմունքն ու կիրքը, վախը կամ ուրախութիւնը, ցաւը կամ խնդումը, կոչուում է միջարկ կամ ձայնարկ. օր. ան, վախ, անհ, ուհ, օհ, ափսոս, աւանգ, վահ, ան, հէյ, հա, հո՛ւսարկո, կիցցե՛ս, միջարկներ են:

Դան միջարկներ, որ արտայայտում են զանազան առարկաների ձայներ, թրրըխի, չըրըխի, զընդ-զընդ, ծըլ-ըլըլ, միւսու, համ-համ եւ այլն:

Միջարկների գլխին դրուած է երկար (փ) իսկ յետինն արդարակէտ:

Վերջ

Պ Բ Ե Պ Ը Կ Ն Ե Բ

Երև			Սխալ	Ուղիւղ
263	ներք.	8 առդ	չաղկապ	չաղկապ
268	վեր.	2 *	վերացկան	վերացական
	"	10	առարկան	առարկան
	"	14	լինում	լինում
269	"	8	զիրք	զիրք
	"	12	տաւր	տաւր
	"	9	տալիս	տալիս թէ
271	"	10	մրտեղ ումնով	մրտեղ. ումնով
273	ներք.	1	զրիւտ	զրիւտ
275	վեր.	8	առնամար	առնամար
279	"	6	առարկայի	առարկայի
	ներք.	8	չատ չափազանց	չատ. չափազանց
280	վեր.	2	հարսում	հարսում
	"	12	բանական	բանական
283	"	7	երկրորդն	երկրորդ
284	ծանօթ.		այն ան յոց	այս ան յոցն է
	"		որտեղ	որք
290	ներք.	12	որ առանց	առանց

Գ. ՎԱՆՑԵԱՆ

Գ Ր Պ Ա Ն Ի

ՈՒՂՂՄԻՐՈՒԹԻՒՆ

Բաբեփոխած

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ ր ա տ ա ր ա կ հ ց Մ.

Թ Ի Է Լ Ի Ս

Տպարան «ԷՊՈԽՍ» Մոսկվայի փող., № 8,
1914

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Մի սխալ մեթոսի շնորհիւ ցարդ տանջուել են թէ ուսուցիչները և թէ աշակերտները, ստիպուած լինելով անգիր իմանալու բոլոր հայերէն բառերի ուղղագրութիւնը: Մինչդեռ, եթէ մենք անգիր գիտենք, կամ ձեռքի տակ ունենք փոքրաթիւ բառերի քանակը, որոնք սխալ են պատճառում, այլեւս կարիք չունենք բոլոր բառերի ուղղագրութիւնն անգիր իմանալու: Այդ նպատակով է կազմած ահա այս գրքոյկը, որ ամեն մի աշակերտ պէտք է ձեռին ունենայ սխալներից խուսափելու, և ուղղագրութեանը շարունակ ընտելանալու:—Որքան աւելի աչքը դիտէ, և ձեռքը կրկնէ այս փոքրիկ բառարանը, այնքան թէ մեծը և թէ փոքրը ապահով է սխալներից:—

Այս հրատարակութեան աւելացնելով ամբողջ վեց նոր հրէս և բաղմաթիւ նոր բառեր, գինը թողնում ենք նոյնը:

Յօրինող:

ՄԵԾԱՏԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1) Մեծատառով է սկսւում ամեն մի գրութիւն:

2) Վերջակէտից յետոյ միշտ գրւում է մեծատառ:

3) Ոտանաւորի ամեն մի տողն սկսւում է մեծատառով:

4) Յատուկ անունները (մարդկանց, զանազան տեղերի, քաղաքների, գետերի, լեռների անունները) գրւում են մեծ տառով:

—

Հայերէնի սխալներն առաջ են գալիս գլխաւորապէս է և ե, ո և օ, յ և չ, լ և լ, ը և ռ տառերի մէջ: Ներկայ գրքոյկը պարունակում է գրեթէ բոլոր արմատական բառերը, որոնք պահանջում են է, օ, յ, կամ ռ: Այն բառը, որ այստեղ չըկայ, կընշանակէ այս տառերով գրելը սխալ է:

ԻՆԻ ԿԱՆՈՆ

1) Է Գործ է ածուած երեք անգամ բիշ քան եւ Կասկածելի դէպքում, ուրեմն, պէտք է գրել եւ

2) Բայերի մէջ անկատարի, ապառնիւի և պայմանականի բոլոր դէմքերը գլուած են է-ով. էի, էիր, էր, էինք, էիք, էին. կասէի, կասէիր, կասէր, կասէինք, կասէիք, կասէին. պիտի ասէի, պիտի ասէիր, պիտի ասէր. պիտի գրէի, պիտի գրէիր, պիտի գրէր, և այլն...

3) Հրամայականի յոգնակին. գըրեցէք, ասացէք, բերէք, տարէք. մի ասէք, մի գրէք, մի բերէք...

4) Նղէն՝ վերջոյթը. ոսկեղէն, հըրեղէն, բարեղէն, կանաչեղէն...

5) Խէտ. յաւէտ, խոտաւէտ, ծաղկաւէտ, գինեւէտ:

6) Երէն. հայերէն, ռուսերէն,
թուրքերէն, վրացերէն:

7) Էն. այժմէն, արդէն, քաղքէն,
գեղէն, տնէն, ձեզնէն, նկարէն...

8) Յատուկ անունները, որոնք
վերջանում են էլ, էն, էս. Գարրիէլ,
Միքայէլ, Ռափայէլ, Աշխէն, Գուրգէն,
Զաւէն, Սուրէն, Խորէն, Կայէն, Շա-
հէն, Ռուբէն, Արիստակէս, Ներսէս,
Վրթանէս. Օհաննէս, Հանէս.

9) Է շատ անգամ դառնում է ի,
տէր-տիրել, սէր-սիրել, էշ-իշու...

10) Է երբեք չի գրւում ք, ծ, դ,
ո, վ, ց, լ, փ, տառերից առաջ:

Ալէխան

Այդպէս

Ալէկոծ

Այժմէն

Աղէտ

Այնպէս

Աղէտալի

Այսպէս

Աղէկ

Ամէն (амин)

Անգէտ	Արժէք
Աստէն	Աւէտ (յաւէտ)
Անդէն	
Անդէպ	Բազէ
Անդէն	Բազմագէտ
Անէծք	Բազմաշէն
Անէութիւն	Բազմանուէր
Անէակ	Բազմավէպ
Անձնասէր	
Անպէտ	Գէթ
Անտէր	Գէլ (գալլ)
Աշխէն	Գէջ (թաց)
Աշխէտ (գոյն)	Գէշ (լէշ)
Ապակեղէն	Գէս(մազ)
Ապակէգործ	Գէր (չաղ)
Ապաւէն	Գօտէ (մարտ)
Առէչ (ք)	
Առէջ	Դէդ
Ասպարէզ	Դէզաղէզ
Արդէն	Դէմ (ուղէմ)
Արեակէզ	Դէմք
Արեաղէմ	Դէն
Արժէ	Դէս

Դէս	Թէպէտ
Դէպք	
Դէտ	Իսկզբանէ
Դռնաբացէք	Իբրեւթէ
	Իցէ թէ
Եթէ	
Ել և էջ	Խայտաբղէտ
Եղեգն	Խէթ
Երբէք	Խէժ
Երգ	Խէնէշ
Երէց	Խէչ
	Խէչօ
Զէն	Խէլ
Զէնք	Խլէզ
	Խորէն
էրէ	
Ընդդէմ	Ծէս
Թէ	Ծուէն
Թէև	Կէս
Թէժ	Կէզ (կիղեւ)
Թէյ	Կէտ
Թէոր	Կռճղէզ

Կրկէս

Հանդէս

Հանդէս

Հէր (հայր)

Հետզհետէ

Հէգ, հէք

Հէնց

Հրաւէր

Հրէայ

Հրէութիւն

Հրէշ

Հրէս

Ձէթ

Մէգ

Մէգ

Մէկ

Մէն

Մէնաւոր

Մէջ

Մէջք

Մէտ

Մէր (մայր)

Մողէս

Յաւէտ

Յաւերժ (ահարս)

Ներսէս

Նէր (նիրոջ)

Նէ (опа)

Նէրա (նորա)

Նուէր

Շահէն

Շէկ

Շէն

Շէջ (անշէջ)

Պասէք

Պատուէր

Պատնէշ

Պատճէն

Պարէն

Պարէտ	Վրէժ
Պարտէզ	Վրէժխնդիր
Պէս, այսպէս	Վէճ (վիճել)
այդպէս	Վէժ
այնպէս	Վէպ
նոյնպէս	Վէս
վերջապէս	Վէտ-վետ
Պէս-պէս	Վէր-վէրք
Պէտք	Վէր (վայր)
Պէտ	(վէր ընկաւ)
	Վրէպ (վրիպակ)
Ջրվէժ	
Ջրօրհնէք	Տէգ
	Տէր
Սերովրէ	Տէրուհի
Սէ (սա)	Տէրութիւն
Սէրա (սորա)	Տէրունական
Սէգ	Տնօրէն
Սէգ	Տնօրհնէք
Սէր (любовь)	
Ստէպ	Րոպէ
Վէգ	Փէշ

Փէշակ
Փոխարէն

Գէն
Բարտէզ

Քերովբէ

Օրէնք
Օրէնսդիր
Օրէնսդէտ



Օ . Ի Կ Ա Ն Ո Ն

Թէ ամառ է, տօթ խորշակն է պինդ փշում
 Թէ աշուն է, տերևներն է թօթափում,
 Կանգնած է նա ժամի դռնում աղօթում,
 Հնց է խնդրում, սոված է նա անօթի,
 Զեռ է պարզում առանց սոսկման ամօթի,
 Նա դիմում է անծանօթի, ծանօթի:

Օ. Հայերէնում երեք անգամ քիչ է
 գործածւում ո-ից. կասկածելի դէպքե-
 րում, ուրեմն, լաւ է գրել ո, քան օ:
 Միայն 70 արմատական բառ օ ով են
 գրւում, այն էլ մեծ մասամբ լեզուա-
 ատամնային տառերից առաջ, օրինակ,
 տ, թ, ր, ն, ս, շ, (54 բառ.—)

Ակօս	Աղօն (աղուն)
Աղօթք	Աղօտ
Աղօթասէր	Աղօրիք
Աղօթարան	Ամօթ

Ամօթխած	Արդեօք
Այս-օր	Արտօնութիւն
Անզգօն	Արտօսր
Անձանօթ	Արօս (թռչուն)
Անկարօտ	Արօտ
Անկրօն	Արօտատեղ
Անյօդ	Արօր
Անյօժար	Աքլօր
Անօգնական	
Անօգուտ	Բագմօգուտ
Անաղօթ	Բարեխօս
Անամօթ	Բարեպաշտօն
Անզօր	Բարձրայօն (ունք)
Անօթ (աման)	Բարոյախօս
Անօթի (նօթի)	Բօթ
Անօսր	Բօթաբեր
Անօրէն	Բօթալից
Անօրինակ	
Ապարօշ	Գօս (չորահած)
Առաջօք	Գօսանալ
Առաւօտ	Գօսացած
Առօք փառօք	Գօտի
Ատօք	Գօտեորել

Գօտէմարտ	Թօթափել
Գործօն	Թօն (անձրև)
	Թօշնիլ
Դրօշ	
Դրօշակ	Իրօք
Դրօշել	
	Լօշ (լաւաշ)
Եօթ	
Եօթանասուն	Խօսք
Եղբօր	Խելօք
	Խօսել
Զբօսանք	Խօսնակ
Զբօսնել	Խօսող
Զգօն	Խէչօ
Զօդ (կապ)	
Զօդել	Մանօթ
Զօր	Մղօտ
Զօրք	Մնօտ
Զօրութիւն	Մօ
Զօրավար	
Զօրեղ	Վարժեօք
	Կարճառօտ
Թնդանօթ	Վարօտ

Կտրօն	Մօտալուտ
Կրօն	Մօտենալ
Կոշկակար	Մօտաւորապէս
	Մօր
Համառօտ	Մօրաքոյր
Հօր	Մօրուք
Հօտ	Մրայօն
Հօտաղ	
Հօր	Յօդ
Հօրական	Յօդուած
Հօրաքոյր	Յօժար
Հօրոտ մօրոտ	Յօժարութիւն
	Յոնք (ոնք)
Ջօն	Յօշոտել
	Յօրանջել
Հօղանջել	Յօրինած
Հօղանջ	Յօրինել
	Յօրինող
Ճօճ	
Ճօճալ	Նախօրօք
Ճօճանակ	Նարօտ
	Նօթի
Մօտ	Նօսր

Նօսրամազ	Տօթ
Նօտար	Տօթակէզ
Նօտր-գիր	Տօմար
	Տօն
Շատախօս	Տօնական
Շօշափել	Տօնավաճառ
Շօշափելիք	Տօսալս (ծառ)
	Յօղ
Ոսկեզօծ	Յօղուն
	Օգնել
Պաշտօն	Օգնութիւն
Պաշտօնեայ	Օգտակար
Պռօշ	Օգտաւէտ
Պօղոս	Օգոստոս
	Օգուտ
Սօս	Օդ
Սօսիւն	Օդադնաց
Սօսանուէր	Օդապարիկ
Սօսափիւն	Օդեղէն
Սօսի	Օթեակ
	Օթեան
Վաղօրօք	Օթոց
Վառօդ	

Օժանդակ	Օտար
Օժիտ	Օտարագգի
Օծել	Օտարոտի
Օձ	Օր
Օձաձուկ	Օրըստօրէ
Օձիք	Օրէնք
Օղ	Օրինակ
Օղի	Օրիորդ
Օճառ	Օրհաս
Օշարակ	Օրհնել

Օ Տ. Օ Ր

ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ.

Գլորնան առաւօտ,
 Անտառների մօտ,
 Դաշտ, հովիտ, արօտ
 Կապելեն լզին հօրօտ ու մօրօտ,
 Ինչպէս մի նարօտ:
 Ոչխարների մօտ,
 Պառների կարօտ,
 Որոնք անդադար
 Կըծում են ծղօտ,

Կանգնած է հօտաղ,
 Չեռը ծնօտին,
 Աչքն իւր հօտին,
 Երգում է նա տաղ:
 Մօրն է յիշում նա աղօտ
 Նորա անուշիկ օրօր,
 Հօրն է յիշում նա հզօր
 Եւ եղբօրը մեծագօր,
 Արտում վարելիս արօր,
 Աշխատելիս ամեն օր:

Յ-ի Կ Ա Ն Ո Ն

Յ.ն բառերի առաջ շատ անգամ
 կորչում է. Ակոր, Արութիւն, Օսէփ,
 Օհանէս, Ետոյ, Ետե, արգոյ, արգ, ա-
 ռաջ, առաջաբան:—Լաւ է այսպէս
 գրել այդ բառերը, քան յ-ով:—Հն եր-
 բէք չի կորչում բառերի առաջից:

Յ. բառերի սկզբին երեք անգամ
 քիչ է գործածւում քան հ. իսկ բա-
 ռերի վերջին ընդհանրապէս: Ա. և ռ-ից
 յետոյ, բառերի վերջը, միշտ գրւում

է յ: Բազմավանկ բառերի վերջը յ չի հնչւում:

Դերանունները և հրամայականի վերջը յ չի գրւում. օր. սա, դա, նա, սրա, դրա, նրա: Ասան, գնան, արա, կարդան, թող փնան. թող բանան:

Յարէթ (անուն)	յամբաքայլ
Յագենալ	յամառութիւն
յագեցուցիչ	յայնժամ
յագուրդ	յայնկոյս
յախճապակի	յայսկոյս
յախուռն	յայսմաւորք
յածել (պտտել)	յայտնի
յակինթ	յայտնութիւն
յաղագս	յայտնապէս
յաղթել	յանգաւոր
յաղթահասակ	յանգէտս
յաղթական	յանդուգն
յաղթահարել	յանդիման
յաղթանակ	յանդիմանութիւն
յաճախակի	յանկարծ
յաճախապատում	յանձնարարութիւն
յաճախել	յանձնել

յանձնարարել	յարդարել (արդա-
յանձնապատան	յարութիւն ըել)
յանցանք	յարուցանել
յանցաւոր	յարձակումն
յապաղել	յարձակ ուել
յաջող	յարմար- (իլ)
յաջողակ	յարմարութիւն
յաջորդ	յաւակնիլ
յառաջ (աբան)	յաւելուած
յառել (աչքերը)	յաւէտ
Յասմիկ	յեղափոխել
յաւէրժահարս	յեղափոխումն
յաւիտեան	յեղյեղուկ
յափշտակել	յենարան
յատակ	յենակէտ
յատկացուցիչ	յենել
յար և նման)	յետ (ետև)
յարաշարժ	յետին (ետին)
յարատև (ել)	յետնորդ
յարգիւի	յետոյ (ետոյ)
յարգելի,-ի	յիմար
յարգոյ	յիշատակ

յիշել	յորջորջել
յիշողութիւն	յուշարար
յիսուն	յուշարձան
Յիսուս	յուշիկ
յոբելեան	յուռութ
յոգն-ակի	յուսահատ
յոյժ	յստակ
յուզմունք	յօդ
յուզուիլ	յօդացաւ
յոյն	յօժար
յոյս	յօնք
յոռի	յօրինել
յորդ	յօրինուած
յորդորել	յօդակապ
յորձանք	

Յատուկ անուններից յոյ սկըսւում են. Յակոբ, Յարութիւն, Յիսուս, Յովսէփ, Յովհաննէս, Յուդա, Յուլիանոս:

Ա-Ի Կ Ա Ն Ո Ն

Ռ, վեց-եօթ անգամ քիչ է գործ-
ածուում քան ը. կասկածելի դէպքում
սկէտք է գրել ը:

Ագուաւ

Աթոռ

Աթոռակալ

Ախոռ

Ականակուռ

Ամառ

Ամբառնալ

Անառակ

Անառիկ

Անբարբառ

Անթառամ

Անտառ

Անպատկառ

Անաչառ

Աչառու

Ապառաժ

Ապառնի

Առանց

Առանցք

Առաջ (ին)

Առաջարկ

Առաջնորդ

Առասպել

Առաստաղ

Առատ (աձեռն)

Առարկայ

Առարկել

Առաւել

Առաւօտ

Առաքել

Առ և ապուռ

Առ և տուր

Առաջաստ

Առած

Առակ	Բառաչ
Առանձին	Բառացի
Առնել	Բառնալ
Առոյգ	Բարբառ
Առու (ակ)	Բացառական
Առտնին	Բացառութիւն
Առաքինի	Բեռ (նակիր)
Առեղծուած	Բեկեռ
Առէջք	Բռնաբարել
Առժամանակ	Բռնակալ
Առիթ	Բռնանալ
Առիւծ	Բռնի
Առիք	Բոռ
Առձեռն	Բուռ
Առնական	
Առնաբար	Գառ
Առողանել	Գաւառ
Առողջ	Գաւառապետ
Առուակ	Գոռալ
Աստառ	Գոռոզ
Բառ	Գռեհիկ
Բառարան	Գոռուզ
Բառ գիրք	Դրզուել

Դառն	Թշուառ (ական)
Դառնալ	Թոռն
Դեռ	Թրթռալ
Դուռ	Թռչիլ, թռիչք
	Թռչուն
Եռալ	
Եռանդ (ուն)	Ժառանգ
Եռանկիւնի	Ժեռ
Եռոտանի	
	Հեառ (լեռ)
Զառամել	Հեռնային
Զառիվայր	Հուռ (լոկ)
Զեռուն	Հօռի (լօռեցի)
Զեփիւռ	
Զմուռս	Խայտառակ
	Խառն (ի խուռն)
Հմբռնել	Խառնիճաղանճ
	Խոժոռ
Թառ	Խոռոչ
Թառամել	Խոռվ (իլ)
Թափառել	Խոռվարար
Թափառական	Խռալոտ
Թիթեռ	

Ծառ	Համառօտ
Ծառայ (ել)	Համբառնալ
Ծառզարդար	Հառաչ (անք)
Ծիծառ	Հեռու
Ծիծեռնակ	Հեռագիր
Ծուռ	Հեռաւոր
Ծուել	Հռետոր
	Հոռմայեցի
Կայտառ	Հռչակ (աւոր)
Կաշառ	
Կառավար (ութիւն)	Ձեռք
Կառուցանել	Ձեռագործ
Կեն	
Կենաս (ենի)	Ճառ (ախօս)
Կիրառութիւն	Ճառագայթ
Կշիռ	Ճշգուռ
Կշեռք	
Կռապաշտ	Ջառան
Կռիւ	Մեռնել
Կոնակ	Մեռոն
Կռուարար	Մոռանալ
	Մոայլ
Հակառակ (իլ)	Մոմալ

Յաժառ	Պաստառ
Նուռ	Պատառ
Շառագոյն	Պատառաքաղ
Շառաչիւն	Պատառել
Շառաւիղ	Պատկառանք
Շուրջ-առ	Պատճառ
Շոայլ	Պտռել
Ոռոգել	Ջերմեռանդ
Ոռնալ	Ռեհան
Ոսկեհոռ	Ռամիկ
Ուղղափառ	Ռնգեղջիւր
Ուռ (ի, ենի)	Ռոճիկ
Ուռկան	Ռազմ (իկ)
Ուռչիլ	Ռահվիրայ
Ուռոյց	Ռետին
Պայծառ	Ռշտունի
Պառակտել	Ռումբ
Պառաւ (իլ)	Ռունգ

Սառ	Տառանդորք
Սառոյց (սառչիլ)	Տօնավաճառ
Սեռ	
Սիսեռ	Յանցառ
Սպառնալ	
Սառնամանիք	Փառ (ք)
Սարսուռ	Փառասէր
Սեռական	Փառք Աստծու
Սպառազէն	Փառաւոր
Սրտառուչ	Փռել
Սփռել	Փռշտալ
Վաճառական	Քառ
Վառել (իք)	Քառաթիւ
Վառ (եկ)	Քառանկիւն
Վճիռ	Քառասուն
	Քառորդ
Տառ	Քառեակ
Տառելիս	Քեռի
Տուրևառ	

Ի, Վ, ԵՆ ՈՒՒ ԿԱՆՈՆ

Բառերի սկզբին երբէք չի գրուում ւն, այլ բառերի մէջ և վերջը. ա, ի, ե տառերից յետոյ եթէ լսենք վ, պիտի գրենք միշտ ւ. օր, հաւ, կաւ, հաւատ, անիւ, արծիւ, տիւ, թիւ, արև, տերև, բարև և այլն: Բացառութիւն են հետևեալ բառերը.

Գրավաճառ—գիր և վաճառ
Տօնավաճառ—տօն և վաճառ
Թիավար—թի և վարել
Կառավար—կառք և վարել
Օրավար—օր և վարել
Կառավարութիւն և այլն...

Բաղաձայներից յետոյ, ձայնաւորից առաջ, գրուում է ու, կարդացուում է ինչպէս վ. օր. Աստուած, բացուած, կցուած. գրուել, գժուել, ծծուել, տանջուել և այլն:

«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

Երկրորդ բարեփոխումն է՝ հարստացրած տպագրութիւն. դասագիրք ծխական եւ պետական դպրոցների համար. մեր բոլոր յայտնի հեղինակների եւ քարգմանիչների կենսագրութեամբ. թոյլատրւած Կովկասեան Հոգաբարձուից, Գինն է 1 րութիւն

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ «ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ»
ՄԱՍԻՆ

«Շեշտում եմ, որ պ. Վանցեանի «Հայ հեղինակները» գնահատելի և դասատուներին յանձնարարելի աշխատութիւն է: Թող յօրինողի այս առաջին փորձը» փորձն ուսումնարանները և տեսնեն թէ այս գիրքը իր քան հարցասիրութիւն առաջացրեց աշակերտների մէջ դէպի հայ հեղինակներն ու նրանց երկերը: «Մուրճ» 1905 № 4 Թ. Յ. Տէր Միրաքեան:

«Պարոն Վանցեանի այս աշխատութիւնը գալիս է լրացնելու դպրոցական ձեռնարկների մէջ մի շատ խոշոր բաց: Մինչև այժմ կազմուած այդ տեսակի ընտիր հատուածների ժողովածուներից և ոչ

մէկը չի համապատասխանում իւր նշանակութեանը. կազմողները մեծ մասամբ եղել են կամ հայ դրականութեան ոչ բաւակաւնաչափ ծանօթ անձինք, կամ, անճաշակ, կամ միակողմանի և կուսակցական հայեացքների տէր:

Պ. Վանցեանն աշխատել է լինել բաղմակողմանի և անկախ իրէն բռնազբօսիկ տենդենցիայից և այս կարելի է ասել յաջողուել է նրան: Նրա գիրքը, որ բաղկացած է 320 մեծադիր էջերից. պարունակում է հատուածներ ուսասիայ գրեթէ բոլոր հայ հեղինակներից, սկսած ամենայայտնիներից մինչև անյայտները: Կան հատուածներ և տաճկահայ գրողների գրածքներից: Շիրվանզադէ:

«Եւումայ» մարտի № 1. 1905:

Մեր առաջին է պ. Վանցեանի 320 երեսներ բռնող «Հայ հեղինակներ»-ի ըստւար հատորը, որը պարունակում է իր մէջ հայ ընտիր հեղինակների ընտիր գրածքներ: Դրանք ուսասիայ 15 սիրելի հեղինակների և 7 թուրքահայ մեր յայտնի գրող-

ների մի սիրուն, համով, հոտով կազմուած գրական ծաղկափունջ է, որը ոչ միայն որպէս ձեռնարկ՝ մեր միջնակարգ դպրոցների աշակերտների համար, նոյն իսկ հայ-ընտանիքներում որպէս ընթերցանութեան նիւթ հետաքրքրական է, և մանաւանդ որ, կազմողը տուել է նմուշների հետ միասին զբաղնց հեղինակների համառօտ, բայց էական կենսագրութիւնն ու գրական գէմքը՝ Թէ հատուածների ընտրութիւնը և Թէ նիւթերի դասաւորութիւնը արուած է խնամքով և, հէնց դրանով պէտք է բացատրել մեր գրական աշխարհում բաւական հազուադիւս այն երևոյթը, սր վեց ամսում պ. Վանցեանի «Հայ հեղինակները» ունեցել է երկրորդ տպագրութիւն: Դա դրքի համար ամենալաւ վկայականն է, ուստի և ցանկալի է, որ «Հայ հեղինակները» տարածուին նաև հայ դպրոցների պատերից դուրս հայ ընտանիքներում, ուր «Հայ-հեղինակների» իսկական երկերը շատ էլ ընդունուած չեն:

«Աշխատանք» № 12

Издание хрестоматии, какъ учебнаго пособия, требуетъ отъ составителя умѣнія систематизировать литературный матеріаль такъ, чтобы ученикъ по избраннымъ образцамъ изящной литературы могъ легко ознакомиться съ характеромъ творчества авторовъ и вмѣстѣ съ тѣмъ усвоить литературное званіе языка. Этому требованію въ достаточной степени удовлетворяетъ вышедшій вторымъ изданіемъ сборникъ Гр. Ванцяна «Армянскіе авторы», въ которомъ нашли мѣсто отрывки изъ произведеній корифеевъ армянской литературы съ краткимъ біографическимъ очеркомъ послѣднихъ, что такъ необходимо для полноты званія ученика жизни и дѣятельности изучаемыхъ авторовъ.

Сборникъ г. Ванцяна можетъ служить для учениковъ армянъ полезнымъ учебнымъ пособиемъ по классу армянскаго языка и словесности, который до послѣдняго времени у насъ не существовалъ.

Т. Л. № 47. 1906 г.,

Привѣтствуя появленіе въ свѣтъ подобнаго руководства, въ которомъ чувствуется крайняя необходимость какъ въ правительственныхъ учебныхъ заведеніяхъ, такъ и въ арм. школахъ при преподаваніи родного языка, мы не можемъ не указать на тѣ достоинства, благодаря которымъ учебникъ этотъ получилъ такое широкое распространеніе, что пришлось издать его черезъ нѣсколько мѣсяцевъ 2-мъ изданіемъ. Учебникъ этотъ содержитъ богатый матеріалъ для чтенія и изученія произведеній лучшихъ арм. писателей, а также для характеристики литературной дѣятельности послѣднихъ, чему много способствуютъ также составленные г. Ванцянѣмъ кратко и популярно біографическіе очерки писателей. Подборъ же статей и стихотворѣній какъ по языку, такъ и по содержанию вполне удовлетворительный, что дѣлаетъ этотъ учебникъ цѣннымъ вкладомъ въ арм. педагог. литературу.

«Новое Обозрѣніе» № 33. 1906 г.

Գ. Վ. Ն. Յ. Ե. Ա. Ն.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԷՏՐՈՂԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ ՊՈԼԻՑ. 7.

1908



Նուէր Թիֆլիզի Առևտրական և Մանթաշևի վաճառային դպրոցների իմ աշակերտներին:

Դուք, սիրելի աշակերտներ, որ սովորում էք Նգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Մարաստանի, Հրէաների, Պարսից և այլ բազմաթիւ ազգերի պատմութիւնները, շատ անգամ դիմել էք ինձ հարցերով.—վարժապետ, ի՞նչու չենք սովորում հայոց պատմութիւն, ե՞րբ պիտի սովորենք մեր սեփական պատմութիւնը:—

Ակամայ լռութիւնից յետոյ, այս գիրքն է ահա, որ պիտի պատասխանէ ձեր հարցերին, ուր համառօտ ու կարճ, պիտի գտնէք Ձեր Նախնեաց գործերի պատմութիւնը:




Ո Ւ Ս Ո Ւ Յ Ի Չ Ն Ե Ր Ի Ն

Նիւթը աւելի կենդանի և բնական դարձնելու լաւագոյն միջոցը կ'լինէր, դիմել բուն պատմական աղբիւրներին և երբեմն ամենահարցասիրական հատուածները կարգալ դասատանը ականատեսների գեղեցիկ պատմածներից։ Այդ հնարաւոր չէ, որովհետև մեր պատմիչներից մի քանիսը միայն թարգմանուած են աշխարհաբար, մեծ մասը զրաբար և անմատչելի են։ Այդ պակասը լրացնելու համար խորհուրդ ենք տալիս դիմելու մեր «Հայ-Հեղինակներ» զրբին, ուր գետեղուած են մեր լաւագոյն հեղինակների զրչին պատկանող պատմական յօդուածներ։ Այս զրբում, ծանուցումների մէջ ցոյց են տրուած համապատասխան տեղերը, որոնք կարող են կարգացուել յիշեալ զրբից։

Գիրքս կազմելիս, բացի բուն աղբիւրներից, օգտուել և հետեւել եմ մեծ մասամբ Պալասանեանին։





ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդկութիւնը բաժանուում է երեք մեծ ցեղերի. սպիտակ, դեղին և սև: Կենսակրթութեան (կուլտուրա) մէջ առաջ են գնացել և մեծ դեր են կատարել առաջին երկուսը: Սև ցեղը ոչ բարձր կուլտուրայի է հասել ոչ էլ պատմութիւն ունի: Պատմութիւն ունեցող ազգերը պատկանում են դեղին կամ սպիտակ ցեղին: Դեղին ցեղի մէջ ամենից կուլտուրական ազգերն են Չինացիք և Ճապոնացիք: Շատ հին և պատկառելի է Չինաստանի կուլտուրան, միայն նա սահմանափակուած ինքն իր մէջ մեծ տարածութիւն չ'գտաւ և ազդեցութիւն չ'ունեցաւ. մարդկութեան մնացեալ մասերի վրայ: Դրա հակառակ լսյն ծաւալ ստացաւ և այսօր ձգտում է գրեթէ տիրապետելու ամբողջ աշխարհին սպիտակ ցեղի ստեղծած կուլտուրան:

Սպիտակ ցեղը բաժանուում է երկու մեծ ընտանիքների. Սեմիտներ և Արիներ կամ Նոգերոպացիներ: Սեմիտներն ապրում էին միջագետքում, Սիրիայում, Արաբիայում, Փիւնիկեում և Պալեստինում: Այդ երկիրներում էլ աճեց ու ծաղկեց նրանց կուլտուրան (կենսակրթութիւնը):

Շուտով կուլտուրայի դեկը Սեմիտներից անցնում է արիական ցեղի անդամներին կամ Հնդերոպացիներին: Այդ ցեղը որպէս իր մարմնի գեղեցկութեամբ, նոյնպէս իր մտաւոր բարձր ընդունակութիւններով առաջին տեղն է բռնում մարդկութեան մէջ:

Այդ ցեղն է, որ ստեղծագործել է մարդկային ամե-

նաբարձր կուլտուրան և գիտութեան ու արուեստի մէջ գրեթէ չունի իր մրցակիցը: Այդ ցեղի բնավայրն է Ներոպան, Փոքր և Միջին Ասիան մինչև Հնդկաստան: Այսօր, սակայն, գրեթէ ամբողջ աշխարհը գտնուում է այդ ցեղի ձեռքին:

Այդ ցեղին էին պատկանում հնումը յոյները, հռոմայեցիք, նոյն այդ ցեղի մի մի ընտանիք են կազմում այսօրուայ ամենակենսակիրթ ազգերը. անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, իտալացիք, լեհերը, ռուսները, պարսիկները և Հնդկաստանում արիական ծագում ունեցող որոշ ցեղեր:

Այդ ցեղին են պատկանում և հայերը, որոնք հէնց օտարազբի գիտնականների և ճամբորդների վկայութեամբ ամենաընդունակ ազգերից մինն են համարուում, առաջինն էին որ ընդունեցին քրիստոնէութիւն, և հազարաւոր տարիներ շարունակ կռուեցան վայրենի ու բարբարոս ցեղերի հետ, պահպանելու համար իրանց լեզուն, հայրենիքը և կրօնը: Հայերը երոպական լաւագոյն զաղափարների ընդունողն ու տարածողն են Ասիայում:—

Հայաստանը, ուր ապրում են հայերը, գտնուում է Ասիայի, Ներոպայի և Աֆրիկայի մէջ տեղը և այդ երեք մայր ցամաքները կապող անցքն է: Հնուց հետ է նա մի կամուրջ է եղել, միակ ճանապարհը, որի վրայով անցել են զանազան ազգեր. Ասիայից Ներոպա կամ Աֆրիկա և ընդհակառակը: Բոլոր մեծ արշաւներն ու պատերազմները այս երեք մայր ցամաքների մէջ, ինչպէս օրինակ. ազգերի մեծ գաղթը, Պարսիկների արշաւները, Հռոմի կռիւները Պարթևների հետ, Արաբաց յարձակումները պարսից կամ յունաց վրայ, խաչակրաց արշաւանքները, Սելճուկների կամ Օսմանցոց շարժումները, ռուսաց ձգտումը դէպի հարաւ կամ արեւելք, կատարուել է Հայաստանի վրայով: Ապրելով այսպիսի երկրում,

հայ ազգը մի հանգիստ օր չէ ունեցել իր ընդունակութիւնները գործադրելու կամ զարգացնելու. այնու ամենայնիւ «մեր երկրումն էլ կատարուել են քաջութեան և արիութեան մեծ գործեր», ինչպէս գեղեցիկ ասել է մեր պատմահայր Խորենացին, որոնք արժանի են ամեն մի կրթուած հայի ուշադրութեանը: Մեր ազգը դեռ հինգերորդ դարուց մշակել ու զարգացրել է մի գեղեցիկ և հարուստ լեզու, մի հարուստ և հիանալի գրականութեան հետ: Ճարտարապետութեան մէջ ստեղծել է Անի քաղաքի նման մի հրաշակերտ, որի աւերակների մնացորդն անգամ, հէնց այսօր, ամեն մի եւրոպացու և ամեն մի ճամբորդի հիացն ու զարմանքն է շարժում: Հինգհարիւրամեայ խաւարից և մտաւոր ու քաղաքական անկումից յետոյ այդ ազգը այսօր նորից զարթելով ստեղծել է երկու լեզու. արեւմտեան և արեւելեան հայերէն և նորից ուզում է ուսումնասիրել մի կողմից իր անցեալ փառքի նսեմ մնացորդները, միւս կողմից ընդունելով երոպական կուլտուրա, տարածել այն հարեան ազգերի մէջ: Այս ազգի պատմութիւնն է ահա, որ մենք պիտի սովորենք այս փոքրիկ գրքոյկից:

Սիրենք և սովորենք, մեր ազգի պատմութիւնը, սիրելի մանուկներ...:

ՀԱՅ-ԱԶԳԻ ԾԱԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Ինչպէս ամեն ազգը, այնպէս էլ մեր հին պատմութիւնը զարդարուած է գեղեցիկ աւանդութիւններով, որտեղ երբեմն իրական ու ճշմարիտ հերոսները երեւան են գալիս որպէս դիւցապն և ուր ճշմարտութիւնը խառն է լինում աւանդական առասպելների հետ: Հայկը մի ճշմարիտ ազգային հերոս էր, մի քաջ նետաձիգ որսորդ: Հետեւելով Աստուածաշունչին, մեր նախնիք մի գեղեցիկ

պատմութիւն են յօրինել, ուր Հայկը դուրս է գալիս որպէս հակառակորդ Բէլի: Սհա այդ անանդական պատմութիւնը Հայկի և Բէլի մասին ըստ Խորենացու:

Բաբելոնի աշտարակաշինութիւնից յետոյ Բէլ կամ Նեբբոլթ անունով մի հսկայ սկսաւ բռնանալ ժողովրդի վրայ: Հայկ անունով մի քաջ որսորդ չուգեց հնազանդիլ



ՀԱՅԿ և ԱՀԱՊԵՏ.

Նրան և առնելով իր որդիքն ու թոռները, թուով 300 հոգի, հեռացաւ Բաբելոնից դէպի հիւսիս: Նա բնակութիւն հաստատեց Արարատեան երկրի մի լեռնադաշտի վրայ. շինեց մի գիւղ և անունը դրեց Հայկաշէն. իսկ գաւառը կոչուեցաւ հարք: Այդ երկրի հին բնակիչներն էլ միանալով Հայկի որդոց, հնազանդեցան նրան:

Այս բանը դուր չեկաւ Բէլին: Նա պատգամ ուղարկեց Հայկին տակելով. «Գնացիր բնակուեցար ցուրտ սառնամանիքի մէջ, լաւ կանես, որ քո սառն հպարտութիւնը մեղմես և գաս, հնազանդելով ինձ, հանգիստ ապրես իմ տէրութեան մէջ ուր էլ կամենաս»:

Հայկը խիստ պատասխանով յետ դարձրեց Բէլի պատգամաւորներին: Բէլը գայրացաւ և ահագին բանակով եկաւ Հայկի վրայ՝ պատերազմելու: Հայկը լսելով Բէլի գալուստը, հաւաքեց իր ցեղից բոլոր ռազմիկներին և Վանայ ծովի մօտ մի զաշտավայրում հանդիպեց թշնամուն:

Բէլը մի խումբ քաջերով առաջ էր ընկած. Հայկը յարձակուեցաւ նրա վրայ: Երկու կողմից էլ բազմաթիւ հսկաներ ու քաջեր ընկան, բայց երկու կողմն էլ մնացին անպարտ: Բէլը մտածեց յետ փախչել և միանալ գլխաւոր բանակին, բայց Հայկը նրան ժամանակ չտուաւ, նրա դուռը նետը ցցուեց Բէլի կրծքին և բռնաւոր հսկան զետին տապալուեց: Բէլի անտէր մնացած զօրքը ցիր ու ցան եղաւ: Հայկը տարաւ յաղթութիւնը:

Պատերազմի տեղը Հայկը մի գաստակերտ շինեց և անուանեց Հայք: Բէլի Բնկած տեղը կոչուեցաւ Գերեզմանք: Հայկը իր ժամանակի հսկաների մէջ ամենաքաջն էր և նշանաւոր. նա հաստաբազուկ էր, զեղեցիկ, գանգուր մագերով՝ խաժ աչքերով, զեղապատշաճ և անձնեայ: Նրա անունով է, որ մեն կոչւում ենք Հայ, իսկ մեր երկիրը Հայաստան:---

ՀԱՅԿԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՁԵՒ ԱՐԱՄ.

Հայկի յաջորդն էր Արմենակ: Սա իր Մանաւազ ու Պոռ եղբայրներին թողնելով հարք զաւառը, ինքը գնաց դէպը հիւսիս և բնակութիւն հաստատեց մի բարձր լեռան մօտ, որ Արմենակի անունով կոչուեց Արագած իսկ գաւառը Արագածոտն:

Մանաւակի որդի Բազը բնակուեց աղի ծովի արևմտահիւսիսային կողմերը, որի անունով էլ ծովը կոչուեց Բզնունեաց ծով (այժմ Վանայ)։

Արմենակին յաջորդեց Արամայիս, որ Արարատեան դաշտում, Գեհոն (Երասխ) գետի ափին մի քաղաք շինեց. դա հիմնողի անունով կոչուեցաւ Արմաւիր և վերջը Հայկազանց մայրաքաղաքը դարձաւ։ Նա մի որդի ունէր, անունը Շարայ։ Դա սաստիկ շատակեր ու բազմածին էր, դրա համար ստացաւ մի արգաւանդ դաշտ, որ Շարայի անունով կոչուեց Շիրակ։—Իրա շատակերութիւնն առակ էր դարձել Ժողովրդի մէջ, որ ասում էին ամեն մի որկըրամովի. «Թէ քոնը Շարայի որկորն է, մերը Շիրակի անբարքը չենս»։

Արամայիսին յաջորդեց Ամասեա, որի անունով էլ կոչուեցաւ հայաստանի ամենամեծ լեռը—Մասիս։ Նա ունեցաւ երեք որդի. Գեղամ, Ժիր Փառոս և Կայտառ Յուլակ։—Դրանց համար նա շինեց երկու աւան մինը Փառոսա, միւսը Յուլակերա։

Մի քանի ժամանակից յետոյ Գեղամը թողնելով իր որդի Հարմային Արմաւիր՝ ինքը գնում է արևելահիւսիս մի ծովակի մօտ։ Այդտեղ նա հիմնում է մի աւան, որ կոչւում է Գեղարքունի, ծովն էլ Գեղամայ ծով (այժմ Սևան)։ Այս երկրները մինչև Արաքս գետը Գեղամը տուիս է իւրեւ ժառանգութիւն իր Միսակ որդուն։

Այսպէս Հայկի որդիքն ու թոռները հետզհետէ բազմանալով ցրուեցին ու տիրեցին ամբողջ Հայաստանին։

Կազմուեցան փոքրիկ ցեղեր իրանց նահապետներով. սակայն միութիւն և կապ չկար նրանց մէջ և թշնամիւնները նրանց զիւրութեամբ նեղում էին։ Այդ միութիւնն ու կապ հաստատողն եղաւ քաջն Արամ։

Ա Ր Ա Մ Ն Ա Հ Ա Պ Ե Տ

Արամը վերին աստիճանի քաջ և հայրենասէր մարդ էր. նա լաւ էր համարում մեռնել՝ քան տեսնել այն նեղութիւնները, որ օտարները տալիս էին հայերին: Նա միացնում է հայ ցեղասպաններին, 50000 քաջ ու ընտիր զօրք հաւաքում և նրանց գլուխն անցնելով, յարձակում է Նիւքար Մադէսի վրայ, որ նեղացնում էր Հայաստանի արեւելեան կողմը:

Անսպասելի յարձակումով՝ դեռ արեւ չծագած, Արամը կոտորում է Նիւքարի զօրքը և նրան էլ զերի առնելով, բերում է Արմաւիր:

Այնտեղ աշտարակի ծայրին մեխում են նրան ճակատից ի տեսիլ անցորդներին:

Նինուէի թաղաւոր Նինոսը թէպետ մտածում էր իր նախահօր— Բէլի վրէժն առնել Արամից, բայց տեսնելով նրա քաջ պատերազմները, մարդարեայ վարսակալ ուղարկեց նրան ընծայ և իր երկրորդը կարգեց Արամին:

Մադէսի երկիրներին տիրելուց յետոյ, Արամը զէնքն ուղղեց հարաւ, ասորի Բարշամի դէմ, որ Հայաստանի հարաւը կատարեալ անառիտ էր դարձրել:

Արամ նրան էլ յաղթելով զօրքը ցրուեց մինչև Կորդուաց լեռները և Բարշամի երկիրը հարկատու արաւ: Բարշամն էլ պատերազմի մէջ մեռաւ: Սա այն Բարշամն էր, որին քաջութեան համար ասորիներն իբրև աստուած էին պաշտում:— Արեւելեան և հարաւային կողմերը թշնամուց ապահովելով, Արամ իր ուշքը դարձրեց դէպի արեւմուտք:

Պոնտոսի (Սև ծով) և Միջերկրականի մէջ գտնուած երկրի վրայ այդ ժամանակ իշխում էր Պալապիս Քաղեսյ անունով մէկը, որ զօրք հաւաքեց Արամի դէմ դուրս գալու: Մեր Արամը 40,000 հետեակ և 2,000 հեծելազօրքով

յարձակուեց Պայապիսի վրայ, ջարդեց նրան և փախցրեց մինչև Միջերկրականի կղզիներից մէկը:

Պայապիսի երկիրներին տիրեց Արամ և բնակիչներին հրամայեց, որ հայերէն սովորեն ու խօսին. ինքը դառնալով Հայաստան, այնտեղ թողեց Մշակ անունով մէկին 10,000 զօրքով: Մշակն այնտեղ մի աւան հիմնեց իր անունով, որ տեղացիք անուանում էին Մամաք և վերջը կոչուեցաւ Կեսարեա: Այս երկիրներից էր, որ կաղմուեցաւ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ հալք դաւառները, որ միասին կոչուեցան Փոքր—հալք:

Արամի նշանակութիւնը շատ մեծ է մեր պատմութեան մէջ. նա էր որ ըստ հայ ցեղերին միացրեց և դարձրեց մի ազգ. թշնամիներին վանելով՝ նա հիմք դրեց մի մեծ և ընդարձակ տէրութեան, ամեն տեղ բնակիչներով լցրեց և հայ անունը պատկառելի դարձրեց ամենի առաջ: Նրա անունը այնքան ազդու և հռչակաւոր էր, որ օտար ազգերը մեզ և մեր երկիրը ճանաչում և կոչում են նրա անունով ԱՐՄԷՆ, ԷՐՄԷՆԻ, (Արամեան) և մեր երկիրն էլ ԱՐՄԵՆԻԱ:—

Ա Ր Ա Գ Ե Ղ Ե Յ Ի Կ.

Արամին յաջորդեց նրա որդին՝ Գեղեցիկ Արան:

Նինոսի մահից յետոյ Ասորեստանի թագն անցաւ նրա կնոջ, Շամիրամին: Սա լսելով Արայի ղեղեցկութեան մասին, ուղեց ամուսնանալ նրա հետ: Մարդիկ ուղարկեց բնօրինակով և խնդրեց, որ Արան գնա Նինուէ, դառնայ Ասորոց թագաւոր և կամ, եթէ կամենում է, հորից լեռ դառնայ հայաստան:—Արա ղեղեցիկը չհամաձայնեց, որովհետեւ ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ: Շամիրամը բարկանալով զօրք հաւաքեց, եկաւ հայաստան և զէնքի ուժով կամենում էր տիրել հայաստանին և Արային:

Պատերազմիկիս նա հրամայեց իր զօրքին, որ խնայեն Արային և ողջ-առողջ գերի բռնեն: Պատերազմի մէջ քաջ Արան սպանուեց: Շամիրամը որոնել տուաւ նրա զիակը և դրեց իր պալատի վերնատանը, որ աստուածները լիզեն և կենդանացնեն նրան:

Հայերն իրանց իշխանի մահուան վրէժը հանելու համար նորից ապստամբեցան և պատերազմի զուրս եկան: Շամիրամն իր մարդկանցից մէկին հաղցնելով Արայի շորերը, ցոյց տուաւ հայերին և հանդստացրեց, ասելով, որ աստուածները լիզեցին նրա վերքերը և առողջացրին նրան: Այն ինչ Արայի մարմինը հոտել էր արդէն և Շամիրամը ստիպուած էր մի փոս փորել տալ և թաղել*):

Շամիրամը տեսնելով հայաստանի հիանալի օղը, անուշ և սառն աղբիւրները, գեղեցիկ, ձխնապատ լեռները, կապուտ ու սիրուն լճերը, որոշեց ամառները անցկացնել Հայաստանում. Դրա համար Ասորեստանից բերաւ բազմաթիւ արհեստավորներ ու բանւորներ, շինել տուաւ մի քաղաք, և կոչեց Շամիրամադէրտ, որ հիմա կոչւում է Վան:

Արայի մահից յետոյ Շամիրամը Հայաստանի իշխանութիւնը Կարդոսին յանձնեց: Սա մեռաւ պատերազմի դաշտում, Շամիրամի հետ Նինուասի դէմ կռուելիս:

Կարդոսն ունէր մի որդի, խելացի և հանճարաւոր Անուշաւանը: Սա նուիրուած էր Արմաւիրի մօտ գլտնուած Սօսեաց անտառին, ուստի և կոչւում էր Սօս կամ Սօսանբէլը: Այս անտառի սօսաւիւնից հին հայերը զուշակութիւններ էին անում:

Հօր մահից յետոյ Անուշաւանը գերի է ընկնում ասորիներին ձեռքը, բայց շտնելով Նինուասի սիրտը, նախ ստա-

*) Այս Արայի մօտին եղած տառապելը պատմում է և Պլատոն յոյն փիլիսոփան, այն տարրերութեամբ, որ վիրաւոր մնալուց յետոյ, Պլատոնի ասելով, Արան առողջանում է:

նուժ է հայաստանի մի մասը կառավարելու, ապա նաև ամբողջ Հայաստանը։—

Սրանից յետոյ հայերը բազմաթիւ իշխաններ ունեցան, որոնք լինելով Ասորոց գերիշխանութեան տակ, չկարողացան անուանի գործեր կատարել. մինչև որ եօթերորդ դարու սկիզբն իշխանութեան գլուխ անցաւ Պարոյրը՝

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ.

Ասորեստանն արդէն թուլացել էր։ Մարաց Կիաքսար Ա. և մեր Պարոյրը միացան Բաբելացոց Նաբուպոլասար թագաւորի հետ և յարձակուեցան Նինուէի վրայ։ Քաղաքը կործանեցին, իսկ Ասորեստանի վերջին թագաւորը թշնամու ձեռքը չընկնելու համար այրուեցաւ իր կանանց հետ, պալատի մէջ։

Այս պատերազմից յետոյ Պարոյրն ստացաւ թագ և եղաւ առաջին պսակակիր թագաւոր։ Նրանից առաջ եղած հայ իշխանները նահապետներ էին։—

Հ Ր Ա Ձ Ե Ա Յ.

Պարոյրին յաջորդեց չրաչեայ. Սա օգնեց Բաբելացոց Նաբուգոդոնոսոր արքային չրէաստան պատերազմի գնալիս։ Սրա ժամանակ չրէայ գերիներէից Շամբատ անունով մի իշխան բնակութիւն հաստատեց հայաստան, որից առաջ եկաւ Բագրատունի նախարարական տոհմը։—

Չրաչեային յաջորդում են ութ թագաւորներ, մինչև Տիգրան Ա. որոնց մասին պատմութիւնը մեզ ոչինչ չի ասանդում։—

Մինչև այստեղ ինչ որ պատմեցինք, հարորդի է մեզ Մովսէս Խորենացի հայ պատմիչը, Հայոց պատմութեան հնագոյն

չըջանի մասին նա գրաւոր տեղեկութիւններ չէր կարող ունենալ: Այս ամենը նա հաւաքել ու կազմել է ազգային աւանդութիւններից, երգերից, զրոյցներից և առասպելներից:

Հայկ և Արա անունով ազգային հերոսներ անկասկած եղել են, որոնց անուան շուրջը ժողովուրդը խտացրել է իր դարաւոր կռիւները Ասորեստանի հետ:

Մեր պատմութեան այս մասը, որ կազմուած է միմիայն աւանդութիւններից, պէտք է կոչել աւանդական: Բուն, իրական պատմութիւնն սկսում է այսուհետև:

Ներկայ դիտութիւնն ապացուցել է, որ հայերը պատկանում են Հնդեւրոպական ցեղին: Թէ ռը է եղել Հնդեւրոպական ցեղի բնակութեան հին տեղը, հաստատ յայտնի չէ: Ամենից հաւանական և ներկայում տարածուած կարծիքն այն է, որ այդ ցեղի բնակութեան հին տեղն է հարաւային Ռուսաստանը, որտեղից նրա անդամները տարածուեցան արեւմուտք, դէպի Եւրոպա և արեւելք, դէպի միջին Ասիա, Հնդկաստան և Պարսկաստան:

Հայերի մասին յոյն պատմիչ Հերոդոտը պատմում է, որ դուրս են եկել Բաբելոնի թերակղզուց, Թրակեայից, և անցնելով Փոքր Ասիան, եկել հաստատուել են Հայաստանում: Հայերն ուրեմն եկուորներ են: Ո՞վ և ինչ ազգութիւն էր բնակւում Հայաստանում հայերից առաջ:

Ներկայում անհերքելի փաստերով ապացուցուած է, որ Քրիստոսից մօտ երկու հազար տարի առաջ Հայաստանում ապրում էր մի քաջ, պատերազմասէր և կենսակիր թագութիւն. Աւարտացիներ կամ Խալդեր: Այդ ազգի ծագումն ու լեզուն անյայտ է. դա ոչ սեմիտ էր, ոչ հնդեւրոպացի:

Դարեր շարունակ նա պատերազմում էր Ասորեստանի հետ. ունէր մեծ ու պարսպաւոր քաղաքներ, անց էր կացրել երկրի մէջ գեղեցիկ ջրանցքներ. ունէր գիր և հաւանօրէն գրականութիւն: Այդ գրերը նման էին սեպերի (մեխերի) դրա համար էլ գրանք կոչուում են սեպագիր արձանադրութիւններ: Այդ արձանագրութիւններից մօտ հարիւրի չափ այսօր դանդում են Հայաստանի զանազան մասերում, սկսած Սեանայ լճից մինչև Վան, ուր ամենից շատ կան այդպիսի գրեր: Ինչպէս երևում է, Վանը եղել է նրանց զինաւոր քաղաքներից մինը: Այդ արձանագրութիւններն այսօր կարդացուած են և պատմում են ուրարտացիների պատերազմական արշաւանքներն ու քաջութիւնները:

Զնայելով այդպիսի կենդանի փաստերին, այսօր Հայաստանում հետքն անգամ չի մնացել Ուրարտացիների:

Ուր կորաւ, ի՞նչպէս անյայտացու մի այդպիսի քաղաքակիրթ և պատերազմասէր ազգութիւն, մնում է մինչև օրս անյայտ. և ահա, Քրիստոսից մօտ 700 տարի առաջ, անյայտացած Ուրարտացիների տեղը մենք տեսնում ենք Արմէններին կամ Հայերին: Մի բոլորովին նոր ժողովուրդ որ ծագում է այլ ցեղից և խօսում է հայերէն: Թէ ինչպէս Արմէնները կամ Հայերը Հայաստան հկան, Ուրարտացիներին յաղթեցին, մեզ անյայտ է: Անկասկած տեղի պիտի ունեցած լինի երկարատե կռիւ. Ուրարտացիները մի մասը գերի գնացած և խառնուած հայերի հետ, միւս մասն էլ երեւի տեղահան եղած և Հայաստանից գաղթած:

Այնուհետև Ուրարտացիներից Հայաստանում մնացին նրանց թողած սեպագիր արձանագրութիւնները, որ մինչև հիմա էլ կան, մէկ էլ բաղմաթիւ աշխարհագրական անուններ: Արարատ, նրանց երկրի անունից է, որ Մասիսի մօտ դառնում զաշտավայրը կոչւում է Այրարատ, կամ Արարատ. Եւրոպացիք այդ անունը սխալմամբ տալիս են Մոսիս լեռան: Հայաստանի հին տեղային անունները. Մուշ, Հանծիթ, Վան, Տուսպ, Արածանի, Ախուրիան, Սիւնիք, Արծրունիք, Ուշտունիք, Երևան, Գառնի, Ուրծ ևայլն, որոնք Հայերէն չեն և հայ լեզուով չեն բացատրուում, մի՞նչ մասամբ մնացորդ են Ուրարտերէնի:

Այս է ահա մնացել նախնի Ուրարտացիներից մեկ ժառանգութիւն: Արմէնները եօթհարիւր տարի Քրիստոսից առաջ հաստատուելով Հայաստանում, բնաջինջ արին և հաստատեցին սեփական Հայ լեզուաւորութիւն:

Առաջին Հայ թագաւորը, որի մասին մեզ ստույգ պատմական տեղեկութիւն է հասել, Երուանդեան Տիգրանն էր:

ՏԻԳՐԱՆ Ա. ԵՐՈՒԱՆԴԵԱՆ.

Տիգրանը մեր ամենանշանաւոր թագաւորներից մինն էր: Նա իմպատուն, քաջ, աշխարհակալ և ժողովրդասէր էր: Ազգային երգիչները բամբիւռ նուաղելով գովում էին նրա շէկ ու գանգուր մաղերը, անուշ աչքերը, բարձր հասակը, լալն թիկունքը, գեղեցիկ ոտները:

Կերակրի մէջ նա չափաւոր էր, կերուխումի մէջ օրինաւոր, իմաստուն, վեհանձն և մարդկային բոլոր արժանիքներով լի։ Արդարադատ էր նա, և ամեն բանի մէջ հաւասարասէր. ոչ լաւերին էր նախանձում և ոչ թույլերին էր արհամարհում, այլ ամենքին առհասարակ խնամք էր տանում։

Մեր երկիրը նա բարձրացրեց, քաջերի դուռն անցնելով, քաջութիւններ ցոյց տուաւ և բազմաթիւ ազգեր հարկատու և հպատակ դարձրեց մեզ։

Երկիրը հարստացրեց ազնիւ մետաղներով ու թանկագին քարերով։ Ժողովուրդն այն աստիճան հարստացաւ, որ նրա ժամանակ մարդ ու կին հաղնւում էին թանկագին հագուստներ։—

Տիգրան առանձին ուշք դարձրեց զօրքի վրայ, հետեւողները դարձրեց հեծելազօրք. սլաքասուրին տուաւ նետ ու աղեղ, և բոլոր մնացեալին գինեց տէգով, նիզակով և վահանով, այնպէս որ, միայն նրանց գէնքի շառաչն ու լիայլը բաւական էր թշնամուն վտիեցնելու և հալածելու։

Տեսնելով Տիգրանի աջողութիւնները, Պարսից թագաւոր Կիւրոսը դաշն կապեց Տիգրանի հետ, որ միասին պատերազմեն Մարտց Աթղահակ թագաւորի դէմ։—

Ըստ տւանդութեան Աթղահակը մի երազ է տեսնում և պատմում իր պայտաւհաններին. «Հայաստանի մի ձիւնապատ լեռան վրայ, ասում է նա, տեսայ մի գեղեցիկ կին, որ յանկարծ երեք կտրիճ ծնաւ. առաջինը առիւծի վրայ հստած սլացաւ դէպի արեւմուտք. երկրորդը ընծի վրայ հստած զնաց դէպի հիւսիս. իսկ երրորդը մի ամենի վիշապ սանձելով յարձակուեց իմ տէրութեան վրայ այն ժամանակ, երբ ես զոհ էի մատուցանում կուռքերին։ Նա կամեցաւ կործանել կուռքերը, և միջամտեցի, բայց յաղթուելով սպանուեցայ»։

Պալատականները բացատրեցին, որ Տիգրանի կողմից

վտանգ է սպառնում Աժդահակին և խորհուրդ տուին բարեկամութեամբ այդ վտանգի առաջն առնել:

Աժդահակը մարդ է ուղարկում Տիգրանի մօտ և նրա քրոջը, Տիգրանուհուն, կին ուզում: Տիգրանը մեծ պատուով և ընձաներով ուղարկում է Տիգրանուհուն կնութեան: Աժդահակը Տիգրանուհու սիրտը գրաւելուց յետոյ սկսաւ նրա նախանձը շարժել և գրգռել, թէ Տիգրանն իր կնոջ Զարուհու գրգմամբ կամենում է զրտել Մարաց թագաւորութիւնը, որ ինքը Զարունին լինի տիկնանց տիկին և քեզանից ըարձր:—

Տիգրանուհին հասկանում է իր մարդու խորամանկութիւնը և հաւատարիմ մարդու ձեռքով իմաց տալիս եղբորը: Երբ Տիգրանը հրաւէր ստացաւ Աժդահակից տեսութեան գալու սահմանի վրայ՝ նա զօրքով ընդառաջ ելաւ Աժդահակին, և պատերազմն սկսաւ այն ժամանակ, երբ գեղեցիկ Տիգրանուհին փախչելով ազատուէլ էր Աժդահակի ձեռքից: Պատերազմի մէջ Տիգրանը նիդակն այնպէս է խրում Աժդահակի կուրծքը, որ յետ քաշելիս թոքերի կէսն էլ հետն է հանում, և յաղթութեամբ վերջ է դնում կրոււին, որ երկու կողմից տեսել էր բաւական երկար:—

Պատերազմի ժամանակ Տիգրանին դաշնակից էր պարսից Կիւրոս թագաւորը, որ և տիրեց Մարաստանին. իսկ մեր Տիգրանը 10,000 զերի բերեց Հայաստան Աժդահակի կնոջ Անուշի հետ՝ և բնակեցրեց Մասիսի արեւելեան կողմը, որոնցից առաջացաւ Վիշապագուն կամ Մուրացան ցեղը:—

ՏԻԳՐԱՆԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ.

Տիգրանի յաջորդներից նշանաւորն էր նրա կրտսեր որդին, Վահագնը, որ սաստիկ քաջութեան համար Վիշապաքաղ կոչուեցաւ: Սա այնպիսի գործեր կատարեց, որ

Ժողովուրդը նրան Աստուածների կարգը դասեց. իսկ Վրացիք նրան արձան կանգնեցին և պաշտում էին:

Գողթան երզնիները նրա մարդկային ծնունդը մոռացան և այսպէս էին երգում. «ցաւի մէջ էին երկինքը, երկիրը և ծիրանի ծովը: Մի կարմիր եղեգնիկ, որ ծիրանի ծովի մէջն էր, ծուխ ու բոց էր արձակում. այդ բոցի մէջ մի պատանեակ էր վազում. նրա մաղերը հուր էին, նրա մօրուքը բոցեղէն էր և աչքերը մէկ-մէկ արեգակ»*) — Սա Վահագն էր:—

Տիգրանի յաջորդներից էր և Վահէ, որ 30,000 հետեակ և 7000 հեծելազօրով օդնութեան գնաց Դարէհ թագաւորին ընդդէմ Ալեքսանդր Մակեդոնացու: Վահէն մեռաւ պատերազմում և 330 թուին Հայաստանն ընկաւ Մակեդոնացի աշխարհակալի ձեռք:—

ՄԱԿԵԴՈՆԵԱՆ.—ՍԵԼԵՒԿԵԱՆ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.

(330—150 Դր. ա.)

Ալեքսանդր Մակեդոնացին տիրեց Հայաստանի հարաւային և արեւմտեան նահանգներին միայն: Հիւսիսային Հայաստանը, Կուր և Արաքս գետերի մէջ, ինչպէս Լերիում է, մնաց անկախ հայ իշխանների ձեռքին, որոնց պատմութիւնը մեզ չի հասել:

Հարաւարեւմտեան Հայաստանն էլ շարունակ պատերազմների մէջ էր. նախ իշխեց Միհրան, ապա Հարասիրտ Նէպաղոմէոս, որին հալածելով Արդուարդ հայ իշխանը, տիրեց Հայաստանին: Վերջը 301 թ. հայաստանն ընկաւ Սելևկեան թագաւորների ձեռքը: Դրանք մեր երկիրը կառավարում էին հայ իշխանների միջոցով, որոնցից նշանաւոր եղաւ Արտաշէս: Նա պաշտպանեց և զարգացրեց արհեստներ, վաճառականութիւն և Լրկրադործութիւնը:

*) Կարդալ. «Գողթան երգեր», «Հայ հիշմաններ» երես 226:

Արտաշէս օգտուեց Սելեկացոց թուլութիւնից և Հայաստանը ազատեց նրանց լծի տակից, դառնալով հայոց ինքնիշխան թագաւոր: Սրա ժամանակ էր, որ Կարթագենացի հանճարեղ զօրավար Աննիբալը փախաւ Հայաստան: Արտաշէսը նրան սիրով ընդունեց և Արաքսի ձախ ափին նրա խորհուրդով հիմնեց Արտաշատ քաղաքը (189 թ. Ք. ա.):

Արտաշէսին յաջորդեց Արտաւազդ: Հայերը ձանձրանալով նրա թուլութիւնից դիմեցին պարթևներին, որ եկան և Հայաստանին տէր դարձան:—



ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԱՐՇԱԿՈՒՆԻԹ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (150 թ. Ք. ա.)

Պարթևները մի փոքրիկ ազգ էին, որ ապրում էին Կասպից ծովի հարաւարեւելեան ափերի մօտ, լեռնաստանում: Նրանք թափառական էին, բայց քաջ աղեղնաւոր ու ձիավար: Սելեկացոց ժամանակ Արշակ անուանով մի պարթև և ապստամբեց և հետզհետէ սկսաւ իր երկիրն ընդարձակել: Նոյն ընթացքին հետեւեցան և նրա յաջորդները: մինչև որ Արշակ Մեծն իր սահմանները տարածեց մինչև Վնդկաստանի Ինդոս և Հայաստանի Նիքատ գետերը: Սրա ժամանակ էր, որ հայերը խնդրեցին Պարթևաց պաշտպանութիւնը և Արշակ Մեծն իր եղբօր Վաղարշակին ուղարկեց Հայաստան իբրև թագաւոր և Հայաստանում 150 թ. հաստատուեց Արշակունեաց հարստութիւնը, որ ամենափառաւորն եղաւ մեր պատմութեան մէջ:

Արշակ Հայաստանին միացրեց Ատրպատականն ու Միջագետքը, հիւսիսից էլ Սև ու Կասպից ծովի մէջ զբաղւած երկիրները մինչև Կովկասեան լեռները և զբաղւած

կազմեց մի ահագին Հայ-պարթև տէրութիւն, որ պիտի դիմադրէր Սելեկեանների յարձակումներին:

Արշակ Հայաստանի թագը դնելով իր ևղբօր Վաղարշակի գլուխը, դարձրեց նրան մի ինքնագլուխ թագաւոր, պատուիրելով կառավարել և ընդարձակել իր երկիրները. «զի՛ս ահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հասանէ, այնքան ունի» (քաջերի սահմանը իրանց պէնքն է. որքան կտրէ, այնքան կը տիրէ):

Սելեկեան հպատակները սիրով չուզեցան հնազանդիլ Վաղարշակին, այլ միանալով, կապաղովկիայի իշխան Մորփիւիկէսի առաջնորդութեամբ դուրս եկան Վաղարշակի դէմ պատերազմի:

Պատերազմը տեղի ունեցաւ Փոքր-Հայքում: Մորփիւիկէսը, որ մի քաջ մարդ էր, մի խուճմբ թիկնապահների հետ ճանապարհը մաքրելով հասաւ մինչև Վաղարշակի ամրացած տեղը: Սակայն Հայ իշխանները փրկեցին իրենց թագաւորի կեանքը սպանելով Մորփիւիկէսին և հալածեցին նրա զօրքը:

ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՍՏԱՏԱՃ ԿԱՐԳԵՐԸ

Վաղարշակ իր աթոռը հաստատեց Մծբին և այնուհետև ծանօթանալ ուղեց հայոց անցեալին: Նա Հայաստանի մէջ մեր պատմութեան մասին ոչ մի ստույգ գրուածք չգտաւ: Գիտնական Մար-Աբասին, որ ազգով ասորի էր, Վաղարշակ ուղարկեց իր ևղբօր մօտ նամակով և խնդրեց, որ թոյլ տալ Նինուէի գրատան ձեռագիրները քննելու: Մար-Աբաս այդտեղ մի գիրք գտաւ հայոց պատմութեան մասին, և արտադրելով, բերաւ Հայաստան: Վաղարշակը հրամայեց այդ գիրքը պահել իր դանձատանը և նրանից զանազան կտորներ փորել տուաւ որձանների վրայ:

Ծանօթանալով հայերի անցեալին, Վաղարշակն սկսաւ

կարգաւորել Հայաստանը հետեւելով նրա հին սովորութիւններին և կամ շատ բան էլ փոխ առնելով աւելի կըրթուած ազգերից:

Հայաստանի սահմանների վրայ նա նշանակեց կուսակալներ, սահմանապահներ և բռնիչներ: Քաղաքներում և աւաններում նշանակեց գատաւորներ (իրաւարար): Բազմաթիւ իշխանին թագաւորներին թագ ղնելու և զօրքին հրամանատար լինելու իրաւունքը տուաւ, ուստի Բագրատունիք կոչուեցան «թագադիր—ասպետ»: Աժդահակից առաջ եկած նախարարութեան, որ Մուրացան էր կոչուած՝ նշանակեց թագաւորի երկրորդը: Սորիսօռունեաց յանձնեց իր անձի պաշտպանութիւնն ու թիկնապահութիւնը:

Վարաժնունեաց ցեղին տուաւ որսերի: Վերականգնութիւնը, Ածրունիք-որսի ժամանակ արծիւները պիտի տանէին թագաւորի առաջ, Գնթունիք ստացան հանդերձ պահելու և հագցնելու պաշտօն, Վահագնի ցեղին տալիս է քրմապետութեան իրաւունք: Արմաւիր քաղաքում կանգնում է արևի, լուսնի և իր նախնիների արձանները, որոնց պաշտում էին իբրև Աստուած:

Իր անձի համար էլ Վաղարշակ նշանակեց երկու յուշարարներ, որոնք զրով պիտի յիշեցնէին նրան, մինը բարի գործերը, միւսը պատիժները: Բարի յուշարարին նա հրամայում է յիշեցնել իրան արդարն և իրաւացին, եթէ ինքը բարկացած լինի:

Արքունի տան մէջ էլ նա մտքեց կարգ ու կանոն, որովհետև շատ որդի ունէր, կարգադրեց, որ միայն անդրանիկը-թագաժառանգը մնայ իր մօտ, իսկ մնացեալները պիտի սպրէին Հաշտենից գաւառում:

Վաղարշակը մեռաւ Մծբին քաղաքում 22 տարի թագաւորելուց յետոյ:

Վաղարշակին յաջորդեց Արշակ Ա., որ թագաւորեց 13 տարի, սա խաղաղութեամբ շարունակում էր հօր գործերը,

երբ ստիպուած եղաւ պատերազմի դուրս գալու Պոնտացոց դէմ: Արշակ նրանց յաղթեց և Սև ծովի եզերքը մի քարէ արձան կանգնեց իբրև յաղթութեան նշան, որ Պոնտացիք սկսան պաշտել իբրև Աստուած:

Ա Ր Տ Ա Շ Է Ս Ա.

Արշակին յաջորդեց քաջ ու սրտերագութաւոր Արտաշէսը: Մինչև սրա թագաւորելը Պարսից թագաւորն հա-



Ա Ր Տ Ա Շ Է Ս Ա.

մարում էր առաջին, իսկ հայոց թագաւորը նրա երկրորդը: Արտաշէսն ստիպեց պարսից Արշական թագաւորին և իւրեց նրանից առաջնութիւնը, և նրան դարձրեց

իր երկրորդը: Իր արքունիքն էլ հաստատեց Պարսկաստան և դրամ կտրել տուաւ այնտեղ, իր պատկերով: Այլ իրաւունքն էլ առաջ միայն պարթեաց թագաւորին էր յատուկ:

Նա հետզհետէ կարգաւորեց և շատացրեց իր զօրքը ալեքան, որ նրանց քցած քարերից բլուրներ էին կազմուած. նրանց արձակած նետերը արևի լոյսը խաւարեցնում էին:

Պոնտոսի թագաւոր Մինրգատին տուաւ իր աղջիկ Արտաշաման և դաշնաւորեց իր հետ: Իր որդի Տիգրանին յանձնեց Հայաստանի թագը հէնց իր իշխանութեան ժամանակ, անցաւ մեծ զօրքով, յարձակում գործեց Պոնտոսի և Միջերկրանի մէջ գտնուած թագաւորութիւնների վրայ և բոլորին նուաճեց:

Այնուհետև անցաւ Թրակիա, սպառնաց Յունաստանին և բաղմաթիւ ոսկի ու թանկագին արձաններ ուղարկեց Հայաստան:

Հռոմէացիք այդ ժամանակ զբաղուած էին ներքին կռիւներով և պատերազմի դուրս չեկան մեր Արտաշէսի դէմ, որ նուաճել էր ամբողջ Փոքր—Ասիան: Նրանք խորամանկութեամբ կաշառեցին Արտաշէսի ղօրավարներին, որոնք դաւաճանօրէն սպանեցին իրենց թագաւորին Փոքր — Ասիայում (89 թ.):

Տ Ի Գ Ր Ա Ն Բ.

Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի փառքն հասաւ իր ամենաբարձր աստիճանին: Նոր գահի հետ նա ժառանգել էր նրա գոռոզութիւնն ու փառասիրութիւնը: Նոր մահը լսելուն պէս նա անցաւ զօրքի ղլուխը և գնաց Յունաց վրայ, որոնք արդէն ռաք էին կոխել Հայաստանի սահմանները: Նրանց յաղթելուց յետոյ Տիգրան Կապադովկիան յանձնեց իր փեսայ Մինրգատին կառավարելու:

Պարսից Արշական թագաւորը լսելով Արտաշէսի մահը կամեցաւ իր վրէժն անել Տիգրանից և աւագութիւնը կրկին յետ խելէ՝ Պատերազմը տեղի ունեցաւ Արաքսի ափերի մօտ. Արշական թագաւորն ընկաւ Տիգրանի զինուորների ձեռով և Ստրալի զերիշխանութիւնը մնաց Տիգրանին։

Այդ ժամանակները Ասորոց թագաւոր Անտիոքոսը իր եղբօր հետ կռուի մէջ էր թագի համար. ժողովուրդը



Տ Ի Գ Ր Ա Ն Բ.

ձանձրացած արդ կռիւներից դիմեց Տիգրանին։ Սա էլ առանց պատեկազմների տիրեց Ասորիքին, քշեց անտեղից Անտիոքին և 22 տարի շարունակ կառավարեց նրա երկիրները։

Ասորիքից յետոյ Տիգրան տիրեց Փիւնիկիէին և ապա գնաց նստաճելու Պալէստինը։ Երուսաղէմի Ալեքսանդրոս

Թագուհին մեծ ընծաներով դուրս եկաւ Տիգրանի առաջ։ Տիգրան հայաստան զարձաւ բազմաթիւ հրէա գերլիններով։

Տիգրան իր գերլիշխանութիւնը տարածեց ամբողջ արևմտեան Ասիայի վրայ և ամենքը նրան ճանաչեցին իբրև Թագաւորներ թագաւոր։

Մարք, Արաբացիք, Ատրպատականը, Վրաստանը, Աղուանք, Բաբելոնացիք, Կիլիկիան, Կապադովկիան և Միջագետքը հարկ էին տալիս մեր Տիգրանին։

Պլուտարքը պատմում է, որ Թագից զրկուած չորս արքայ ծագայում էին նրան. ուրիշ չորսն էլ թիկնապահի պաշտօն էին վարում և երբ Տիգրանը ձի էր հեծնում, երկու կողմից զնում էին ոտով։

Տիգրանի փեսայ Միհրդատը, որ Սրատշէսի մահով բուռական թուլացել էր, Տիգրանի օգնութեամբ նորից զօրացաւ և պատերազմ հրատարակեց Հռոմայեցոց դէմ։ Նա տիրեց Փոքր-Ասիայի մանր տէրութիւններին և զօրք մոցնելով Յունաստան, ամբողջ Յունաստանն արքայաժողովի հռոմի դէմ։ Սակայն Հռոմայեցիք նրա վրայ ուղարկեցին Սիլլա զօրավարին, որ Միհրդատից ետ խեց նրա նուաճած երկիրներից մեծ մասը և նրան ստիպեց մի ամօթալի հաշտութիւն կապել (86 թ.) ստանալով պատերազմի բոլոր ծախսերը։

Սակայն, Միհրդատը նորից զօրք հաւաքեց և կրկին պատերազմել սկսաւ Հռոմայեցոց դէմ. Տիգրանն էլ նրան օգնելու համար յարձակուեցաւ Կապադովկիայի վրայ և 20,000 զերի բերաւ հայաստան։

Հռոմայեցիք ալս անգամ Միհրդատի և Տիգրանի դէմ ուղարկեցին Լուկուլլոս զօրավարին։

Մի քանի ճակատամարտից յետոյ Միհրդատը Ամիսոսի մօտ սաստիկ պարտութիւն կրեց և փախաւ Հայաստան Տիգրանի մօտ (70)։ Տիգրանը զայրացած նրա երեսն անգամ հուզեց տեսնել, ալ միայն ազատեց նրան թշնա-

մու ձեռքից: Լուկուլլոսի մարդիկն եկան և Տիգրանից պահանջեցին, որ Միհրդատին իրենց յանձնի: Տիգրանը մերժեց այդ և պատրաստուեց ղէնքով դուրս գալու հռոմայեցոց դէմ:

Լուկուլլոսն արդէն մտել էր Միջագետք և պաշարել էր Տիգրանակերտն, ուր պահուած էին Տիգրանի զանձերը: Տիգրանի հրամանով 6,000 ձիաւոր Լուկուլլոսի բանակը ձեղքելով մտան Տիգրանակերտ և ազատեցին Տիգրանի հարստութեան մի մասը:

Տիգրան անեղ բանակով (200,000 հոգի) եկաւ և կանգնեց Լուկուլլոսի դէմ. տեսնելով նրա ստիպաւթիւ պօրքը, նա ասաց. «ովքե՛ր են սրանք. եթէ ղեկավաններ են, սաստիկ շտտ են, իսկ եթէ պատերազմողներ, քիչ են»:- Այսպէս հպարտացած, նա անհող բանակ կրաւ: Լուկուլլոսը նկատելով Տիգրանի սնհոգութիւնը, յանկարծ վրայ տուաւ հայոց և աֆրոլիսի շփով պցեց բանակի մէջ, որ Տիգրանը ժամանակ չունեցաւ իր ցրուած բանակը կարգի բերելու: Ժամանակ չկորցնելով, Լուկուլլոս պաշարեց Տիգրանակերտը և քաղաքի մէջ գտնուած լոյների մատնութեամբ քաղաքն առաւ:

Մի տարուց յետոյ պատերազմը նորոգուեց Հայաստանում, Արածոնի ափին, Արտաշատ մայրաքաղաքի մօտ: Պատերազմը երկու կողմից էլ կատաղի էր և այս անգամ Լուկուլլոս ստիպուած էր յետ քաշուելու. ղէպի միջագետք, ուր նա պաշարեց Մծբին քաղաքը: Տիգրան ժամանակ դաւաւ և նորից նուաճեց իր կորցրած երկիրները: Միհրդատն էլ մի քանի յաղթութիւններով նորից կրկին յետ իլեց իր կորցրածը:

Այդ ժամանակ հռոմը Տիգրանի դէմ ուղարկեց Պոմպէոս պորավարին: Նա մի սարսափելի ջարդ տուաւ Միհրդատին Եփրատի ափերի մօտ. Միհրդատն հաղիւ ազատուեց ղերի ընկնելուց: Այնուհետև նրան դաւաճանեց իր հարազատ որդին և նա ինքնասպան եղաւ:

Պոմպէոսն այնուհետեւ իր զէնքերն ուղղեց Տիգրանի դէմ: Հայաստանում նրա հետ միացաւ Տիգրանի հարազատ որդին, Փոքր Տիգրանը, որ հօրը դաւաճանելով միաբանել էր Պարթևաց թագաւորի հետ, ընդդէմ Տիգրան Մեծի:

Տիգրան պաշարուած արտաքին ու ներքին թշնամիներին, սիրտը կոտրուած հարազատ որդու ամօթալի դաւաճանութեամբ, խոհեմութիւն համարեց հաշտութեամբ վերջացնել բանը և զուր արիւնհեղութեան տեղիք չտալ: Նա անձամբ զնաց Հռոմայեցոց բանակը: Այնտեղ նրան ընդունեցին արժանաւոր պատիւներով:

Պոմպէոսի հետ կապած հաշտութեամբ Տիգրանի ձեռքից ելան Փոքր Ասիայում նուաճած երկիրները և նրան մնաց Բուն Հայաստանը Միջագետքի հետ: Փոքր Տիգրանը, որ կամենում էր խել թագը հարազատ հօր գլխից և դառնալ Հայաստանի թագաւոր, անբաւական մնաց այս դաշինքից: Պոմպէոսն էլ իմանալով որ նա գաղտնի յարաբերութիւններ ձեռք էր բերում Պարթևաց թագաւորի հետ, շղթայակապ պահեց նրան իր մօտ իբրև յաղթանակի զարդ:

Դաւաճան որդին հայոց թագի փոխարէն ստացաւ հռոմի շղթաները:

Պոմպէոսի հեռանալուց յետոյ Տիգրանը մտածեց կրկին չետ դարձնել կորցրած երկիրները, ուստի դաշն կապեց Պարթևաց հետ, նրանց թագաւորին վերադարձնելով նախագահութեան պատիւը: Այդ ժամանակ եռապետները բաժանել էին հռոմի նուաճած երկիրները և Ասիան ընկել էր Կրասոսին: Պարսից և հայոց զօրքին առաջնորդում էր Սուրէն Պարթև ասպետը, որ Սառանի մօտ Կրասոսի զօրքին մի սարսափելի ջարդ տուաւ և փախցրեց կռուի զաշտից:

Երբ Կրասոսը Սուրէնի հրաւերով գալիս էր նրա մօտ հաշտութիւն կայացնելու, ճանապարհին խռովութիւն պատահեց և Պարթև պատգամաւորները սպանեցին Կրասոսին:

Հռոմայեցի զօրքը անտէր քնալով, ցիր ու ցան եղաւ մեծամեծ կորուստներ տալով: Այդ ժամանակ Պարթևաց թագաւորի որդին, Բակուրն, ամուսնանում էր Տիգրանի դստեր հետ և Սուրենը հարուստ աւարների հետ իբրև լաղթանակի ընծայ հայոց արքունիքն ուղարկեց սպանուած Կրասոսի գլուխը:

Կրասոսի տեղ շուտով Տիգրանի դէմ դուրս եկաւ Կասիոս: Տիգրան արդէն ծելացել էր և պարսից օգնական բանակն լանձնեց Բարդափրան Ռշտունի նախարարին: Սա աջողութեամբ առաջ գնաց և Անտիոքի մէջ պաշարեց Կասիոսին, որն ազատուեց միայն Կիլիկիայի հիւսիս-տոս Յիցերոնի օգնութեամբ: Երկար կռիւներէց չեսոյ մի վերջնական պատերազմում՝ հայ սպարապետը լաղթելով, կրկին նուաճեց Ասորիքն ու Փիւնիկէն: Բարդափրան այնուհետև Պալեստին ղնաց՝ Գնէլ Գնունի զօրավարի ձեռքով Երուսաղէմին տիրեց և բազմաթիւ գերիներով ու աւարով վերադարձաւ հայաստան, զօրքի հրամանատարութիւնը տալով Բակուրին:

Հռոմայեցիք նորից շարունակեցին իրենց կռիւնները միացեալ հայերի և պարթիւնների դէմ, սակայն Տիգրանը, որ այս պատերազմները կազմակերպողն ու կառավարողն էր, արդէն ուժասպառ ու ծերացած 53 տարուայ թագաւորութիւնից՝ մեռաւ (36 թ.) իր թագը թողնելով Արտաւազդ որդուն*):

Ա Ր Տ Ա Ի Ա Զ Դ

Արտաւազդը ոչ հօր փառասիրութիւնն ունէր, ոչ էլ նրա քաջութիւնը, այլ զբոսասէր և որկրամոլի մէկն

*) Կարդալ. «Հոյսոգործութիւնը և անտուրը Հայոց մէջ». «Հայ հեղինակներ» ք. տպ. կր. 176.

էր: Հռոմէացի Անտոնիոս զօրավարին նա հաշտութիւն խօսեց և խոստացաւ օղնել նրան ընդդէմ Պարթևաց: Ստեփաննոս իր խոստումը չկատարեց և խաբէութեամբ ման ածեց Հռոմի լէգէոնները անծանօթ ճամբաներով, մինչև որ մի լարմար ըոպէի հեռացաւ Անտոնիոսից: Արաքս գետն անցնելիս նա արդէն կորցրել էր 24,000 մարդ և հազիւ իր բանակի մնացորդով Միջագետք հասաւ, մտածելով յընթացք մի այլ անգամի թողնել:

Հայ զօրքի ստիպմամբ թուլամորթ Արտաւազդը Կոնկասեան ազգերից զօրք հաւաքեց և Միջագետքից դուրս քշեց Հռոմայեցիներին:

Անտոնիոս այս բանից աւելի ևս գայլաղած Արտաւազդի վրայ եկաւ մեծ զօրքով և չողթեց նրան: Հայերը յետ քաշուեցան: Անտոնիոս ամեն հնար զործ դրեց Արտաւազդին իր բանակը բերելու, բայց հայ թագուորը նրան չէր հաւատում: Վերջը, երբ Անտոնիոս մտաւ Հայաստան, Արտաւազդ խտրուած նրա խոստումներից, գնաց Անտոնիոսի մօտ: Անտոնիոս Արտաւազդին ման ածեց հայոց բերդերը, նրանց գանձերը խլելու համար, բայց հայերը չէին խաբւում:

Անտոնիոսն Արտաւազդին սակի շղթաներով կապեց և տարաւ Ալեքսանդրիա, Կլէոպատրա թագուհուն որպէս պարգև: Վերջինս զլխատել տուաւ Արտաւազդին (31 թ.):

Արտաւազդից յետոյ, ինչպէս երևում է, Հայաստանն ասպարէզ է դառնում անընդհատ պատերազմների: Մի կողմից Հռոմի լէգէոնները, միւս կողմից Պարթև զօրքերը շարունակ ասպատակում էին Հայաստանը: Նրանցից ամեն միւսն աշխատում էր իր կուսակից մարդուն յանձնել Հայաստանի թագը, իր երկրի սահմանները թշնամուց ապահովելու համար:

Այդ պատերազմներն էին երևի պատճառը, որ մի շարք թագաւորներ յիշում են հիւսիսային Հայաստանում,

գլխաւորապէս արտաքին պատմիչների կողմից. մի ալլ շարք էլ հարաւային Հայաստանում, — Միջագետքում, որոնց մանրամասն պատմութիւնը մեզ աւանդում են աղբայրին պատմիչները:

Այսպէս, Արտաւազդից յետոյ, Պարթևները օգնութեամբ հիւսիսային Հայաստանում թագաւորեցնրա որպիսի, Արտաշէս: Իսկ Միջագետքում, Մծբին քաղաքում, թագաւոր հասեց Արտաւազդի Հօրեղբօր որդին, Արշամ (33—3) Քր. ա.): Սա սկսեց հալածել Բագրատունի իշխաններին, ստիպելով թողնել հրէից կրօնը և դաւնալ հեթանոս: Արշամ հարկատու էր հռոմին:

Հրէաստանի հերովդէս թագաւորը բանուորներ պահանջեց Արշամից Անտիոք քաղաքում աշխատելու: Արշամ մերժեց նրա պահանջը և դանդառ ուղարկեց հռոմ, Օգոստոս կայսեր: Կայսրը, սակայն, հերովդէսի կողմը ընդեց և Արշամ ստիպուած էր վերջինիս պահանջը կատարել:

Ա Բ Գ Ա Ր

Արշամին յաջորդեց Արգար (3 թ. Քրիստ. առաջ): Սրա ժամանակ հռոմի դորձակալները Օգոստոս կայսեր պատկերը բերին և դրին հայոց մեհեաններում: հերովդէսը պահանջեց, որ իր պատկերն էլ կայսեր պատկերի հետ դրուի: Արգարը մերժեց այս պահանջը, հերովդէս մի բանակ ուղարկեց նրա վրայ, որը սաստիկ պարտութիւն կրեց: Բարեբաղդաբար հերովդէս մեռաւ և չկարողացաւ վրէժ առնել Արգարից:

հռոմում չէին մոռացել այս դէպքը և վրէժ առան Արգարի դեսպաններին անպատուելով:

Արգարն էլ պատրաստութիւն էր տեսնում ապստամբելու և հռոմի լուծից ազատուելու: Ուստի նա իր մայրաքաղաքը Մծբինից տեղափոխեց Եդեսիա և սկսեց այս

քաղաքն ամրացնել: Մտադիր լինելով Պարթևաց հետ՝ միանալու, նա գնաց Պարսկաստան և հաշտեցրեց Արշաւիր թագաւորի որդոց, որոնք կռոււմ էին Կահի համար, բայց ապստամբութեան զործը զլուխ չեկաւ:

Աբգարը Պարսկաստանից վերադարձաւ ծանր հիւանդ: Այդ ճամբորդութիւնը կասկածի մէջ գցեց հոգմայեցոց: Աբգարը դեսպաններ ուղարկեց Հռոմի գործակալ Մարինոսի մօտ, որը դեսպաններին ընդունեց մեծ պատուով:

Երուսաղէմից անցնելով, Աբգարի դեսպանները տեսան այն հրաշքները, որ գործում էր Յիսուս, և պատմեցին թագաւորին:

Աբգարն իր Անանէ սուրհանդակի ձեռքով նամակ ուղարկեց և խնդրեց Յիսուսին, որ գալ և իր հիւանդութիւնը բուժէ: Յիսուս Թոմա առաքեալի ձեռքով պատասխանեց, թէ նա չի կարող գնալ Աբգարի մօտ, այլ համբաւանալուց յետոյ կուղարկէ իր աշակերտներից մինին, որ կբուժէ Աբգարին:

Իրաւ, Քրիստոսի Համբարձումից յետոյ Թագէոս առաքեալը եկաւ Միջագետք, բուժեց Աբգարի հիւանդութիւնը և մկրտեց նրան իր պալատականների հետ: Այնուհետեւ Ադգէ պալատականին ձեռնադրեց եպիսկոպոս և թողնելով իր տեղը, գնաց Հայաստան, քարեղելու Քրիստոնէութիւնը:

Այսպիսով Աբգար տոաջին թագաւորն էր, որ ընդունեց Քրիստոնէութիւն: Այնուհետեւ նա նամակ գրեց Տիբերիոս կայսեր, պարսից թագաւոր Արտաշէսին և Ասորեստանի թագաւոր Ներսէհին, յորդորելով նրանց, որ քրիստոնեաներին չհալածեն և Քրիստոսի հաւատն ընդունեն:

Նա մեռաւ այս նամակների պատասխանը չստացած
35 թ. Քրիստ. յետոյ:



Ա Ն Ա Ն Ո Ւ Ն (35 բ.)

Անանուն թագն ստանալուն պէս հալածանք սկսեց քրիստոնէութեան դէմ. մեհեանները բաց արու և պահանջեց Ագգէից, որ քրիստոնէութիւնը թողնէ և սկսէ առաջնայ նման թագ պատրաստել թագաւորի համար: Երբ Ագգէն մերժեց թագաւորի պահանջը և քարոզում էր ժողովրդին, սպանուեց արքայական զինակրի ձեռքով:

Հայաստանի նաւարշան զաւառի կառավարիչ էր Սանատրուկը, Աբգարի բրոջ որդին: Սա աւելի կատաղի թրշնամի դուրս եկաւ ընդդէմ քրիստոնէութեան, քան Անանունը: Սանատրուկ նահատակել տուաւ թագէոս առաքեալին և Սանդուխտ կոյսին, որ իր հարապատ դուստրն էր: Սանատրուկը Արշամից ամբաստանելով իրեն թագաւոր հրատարակեց հիւսիսային Հայաստանում և ապա զօրքով դիմեց Անանունի վրայ: Այս վերջինն իր պալատը նորդելիս մի սիւն ընկաւ վրան և ջախջախեց նրա ոտները: Եղեապիք մարդ ուղարկեցին և խոստացան Սանատրուկին յանձնել քաղաքը, միայն նա ձեռ չտալ նրանց կրօնին:

Սանատրուկ խոստացաւ, բայց խոտուումը չկատարեց: Կստորել տուաւ Աբգարի ցեղը բացի աղջիկներից և հեղինէ թագուհուց: Վերջինս երուստղէմ գնաց և իր ամբողջ գանձը բաժանեց աղքատներին սովի ժամանակ:

Ե Ր Ո Ւ Ա Ն Դ

Հիւսիսային Հայաստանի կառավարութիւնը Սանատրուկ յանձնել էր Երուսնդ իշխանին, որ մօր կողմից Արշակունի էր: Երբ որսի ժամանակ Սանատրուկ պատահմամբ սպանուեց, Երուսնդը գրաւեց նրա թագը, բայց Բագրատունի իշխաններից ոչ մինր յանձնառու չեղաւ նրա գլխին թագ դնելու:

Երուանդ իր թագն ապահովելու համար կոտորել տուաւ Սանատրուկի ցեղը: Ազատուեցաւ միայն Արտաշէս մանուկը. նրան պահում էր Սմբատ Բագրատունին, հովիւների մօտ, որ Սանատրուկի ձեռք չընկնի, մինչև որ առիթ գտաւ անցնելու Պարսից սահմանը:

Պարթևաց Դարէն թագաւորը սիրով ընդունեց Արտաշէսին և պատուով պահում էր իր պալատում:

Երուանդ ղեկավարներին ձեռքով աշխատում էր հաւատացնել Պարսից թագաւորին, որ Արտաշէսը հովուի որդի է և ոչ թէ Սանատրուկի:

Բայց նրա բոլոր փորձերը զուր անցան: Սմբատից վրէժ առնելու համար կոտորել տուաւ նրա թողած պահապաններին և բանդարկեց նրա երկու աղջկանը:

Հոռմի հետ դաշն կապեց Երուանդ և Միջագետքը յանձնելով նրանց, Մալրաքաղաքը տեղափոխեց Արմաւիր:

Որովհետև Արմաւիրն անտարիպ էր, երասխի ափին հիմնեց Երուանդաշատ քաղաքը, պարիսպով պատեց, շինեց ամուր միջնաբերդ, այնտեղ էլ բնակութիւն հաստատեց:

Ա Ր Տ Ա Շ Է Ս Բ.

Սմբատ Բագրատունին հաւատարիմ ծառայութեամբ ղրաւեց Դարէն թագաւորի սիրար աջնպէս, որ երբ Արտաշէս մանուկը բաւական մեծացաւ, Դարէն զօրք տուաւ Սմբատին, որ գնայ Արտաշէսի գահը յետ խլէ:

Երուանդը պատրաստուեց և հայ ու վրացի զօրքերով դուրս եկաւ Սմբատի դէմ: Նախարարներին էլ մեծամեծ պարգևներ տուաւ Երուանդ, որ իր կողմը պահեն, բայց իզուր. հէնց որ Սմբատն ու Արտաշէսը Հայաստան մտան, նախարարներին մեծ մասն անցաւ նրա կողմը:

Հակառակորդներն իրար հանդիպեցան Ախուրկան գետի մօտ: Որպէս զի յաղթութիւնն ապահով լինի, Ար-

տաշէս մարդ ուղարկեց Մուրացան նախարարի մօտ, և խոստացաւ թաղաւորից յետոյ երկրորդը լինելու պատիւը նրան թողնել, եթէ նա անցնի իր կողմը:

Արգամը յանձն տուաւ, և պատերազմը սկսուելուն պէս մի կողմ քաշուեցաւ, թողնելով երուանդին մենակ: Այս տեսնելով Երուանդին զաւաճանեցին ֆնացեալ հայ նախարարներն էյ: Երուանդը ֆնաց միայն Վրացի վարձու զօրքով, որոնք թէպէտ քաջութեամբ կռիւ մղեցին, բայց Սմբատի յարձակման դիմանալ չկարացին: Մի քանի քաջեր Երուանդի կողմից յարձակուեցան Արտաշէսի վրայ և կամենում իին նրան սպանել, բայց Արտաշէսի կաթնեղբայրը, Դիսակ, ապառեց նրան կօրցնելով իր դէմքի կէտը:

Երուանդը վախաւ և ամբացաւ Երուանդաշատ քաղաքում: Սմբատ հետեեց նրան մինչև քաղաքի դռները: Հետեալ օրը հասաւ Արտաշէս զլիսաւոր բանակի հետ: Զորքը, Արտաշէսի հրամանով գտնում էր, «Մար ամատ», այսինքն «Մարն (հովիւր) եկաւ», յիշեցնելու համար Երուանդի սուտը, թէ Արտաշէս հալուի որդի է: Թեթիւ յարձակումից յետոյ քաղաքն անձնատուր եղաւ և Երուանդ սպանուեց մի գինուորի ձեռքով:—

Արտաշէս վեհանձն վարուեց իր թշնամու զիակի հետ: պտտուով թաղել տուաւ, և վրան արձան կանդնեց, իբրև Արշակունու:

Սմբատ Երուանդի դանձտաւան մէջ դնելով Սանատրուկի թաղը, հանդիսաւոր կերպով դրեց Արտաշէսի գրիւին (85 թ.) և պսակեց հայոց թաղաւոր:

Արտաշէս հօր դահին տիրանալով, մատուցելով լարեկաններին վարձատրել: Պարթև զօրքին առատ պարգևներ տալով, վերադարձրեց իրանց երկիրը: Արգամին թաղաւորի երկրորդը շինելուց յետոյ, իրաւունք տուաւ երկու ականջին օղեր, մի սալին կարմիր կօշիկ կրելու և ոսկէ զղալ ու պտտաբաքողով ճաշելու:

Սմբատին յանձնեց ամբողջ զօրքի սպարապետութիւնը և երկրի վերակացութիւնը: Գիսակի որդուն նախարարներէ կարգը մտցրեց և Դիմաքսեան անուանեց, հօր քաջագործութեան համար: Դարէն թագաւորին էլ մեծամեծ ընծաներ ուղարկեց Սմբատի ձեռքով: Արտաշէս իրեն մայրաքաղաք ընտրեց Արտաշատ քաղաքը, որ նորոգեց և բազմաթիւ շինութիւններով հարստացրեց:

Հոռմալեցիք, որ երուանդին ոչ մի օգնութիւն չը հասցրին, նրա անկումից յետոյ Արտաշէսից պահանջեցին հարկը, որ պատերազմից խուսափելով, տուաւ: Հաղիւ Հըռոմի զօրքերը յետ քլշուեցան հայաստանի սահմաններից, Ալանները միացան Կովկասեան լեւնականների հետ, արշաւեցին հայաստան: Արտաշէսը նրանց մի լաւ ջարդեց, գերի առաւ նրանց թագաւորի որդուն և հալածեց մինչև Կուրի ձախ ափը: Ալաններն առաջարկեցին մշտական դաշն կապել հայոց հետ և Հայաստանն այլևս չտապաւտակել, եթէ իրենց թագաւորի որդուն յետ ստանան: Երբ Արտաշէս չհամաձայնեց, գետի ափը դուրս եկաւ Ալանաց թագաւորի աղջիկը, Սաթենիկ, թարգմանի բերանով սկսեց խօսել Արտաշէսի հետ, համոզելով յետ տալու իր եղբորը:

Արտաշէս շատ հաւանեց Սաթենիկին և ինչպէս երգում էին Գողթան երգիչները, «հեծաւ իր սև ձին, և արծուի նման սրանալով գետի մէջ, առաւ ոսկէօղ շիկափով պարանը և այն քցելով օրիորդի փափուկ մէջքը, փախցրեց նրան գետի այս ափը, հարսանիք սարքեց և ամուսնացաւ Սաթենիկի հետ»:

Արտաշէսն իր երկարատե թագաւորութեան ընթացքում աշխատում էր երկիրը խաղաղ պահել և արուեստներն ու առևտուրը ծաղկեցնել: Հայաստանի անբնակ տեղերը նա բնակեցրեց զրսից բերած գաղթականներով: Երբ Սաթենիկի մայրը մեռաւ և երկրի մէջ խռովութիւն ծագեց, Արտաշէս Սմբատին զօրքով ուղարկեց Ալանաց երկիրը, որ



Ս Ա Թ Ե Ն Ի Կ.

Ֆանդարտացրեց և թշնամիներից շատ գերի բերեց Հայաստան: Այդ գերիներին Արտաշէս բնակեցրեց Շաւարշան գաւառում, որ յետոյ Արտաշ կոչուեցաւ գաղթականների երկրի անունով:

Կասպիական երկիրներից էլ Սմբատ բազմաթիւ գերի բերաւ, որնոնպէս բնակեցրեց Հայաստանի տմայի տեղերում:

Երկրի դանազան մասերը Արտաշէս սահմաններով բաժանեց միմեանցից, սահմանների վրայ բառակուսի քարեր դնելով:

Կամուրջներ շինեց, գետերն ու ծովերը ճանապարհի դարձրեց, ամեն կերպ նպաստեց երկրի մշակելուն և արհեստների տարածելուն:

Արտաշէսի ժամանակ հայերը ընտելացան գրի դորժա-
ծութեան և օրերը, շաբաթներն, ամիսներն ու տարիները
հաշուելուն:

Սյս ամենի համար ժողովուրդը սաստիկ սիրեց իր
թագաւորին և անմահացրեց նրան իր երգերի մէջ, գովե-
լով, որ Արտաշէսի ժամանակ մի կտոր հող անգամ ան-
մշակ չէր մնացել հայաստանում և պարապ ու անգործ
մարդ չկար իսկի:

Անբաղդ էր Արտաշէսը միայն ընտանեկան կողմից:
Նրա աւագ որդին, չար ու նախանձոտ Արտաւազդը դա-
դար չէր տալիս հօրը:

Նա գանգատուեց Արդամից և խեց նրանից երկրոր-
դական զահի իրաւունքը:

Մի անգամ Արտաշէս ճաշի էր հրաւիրուած Արգամի
մօտ. արքայորդիք աղմուկ բարձրացրին թէ նա ուզում է
Արտաշէսին սպանել և ծերունի Արգամի մագերնն ու մօ-
րուքը քաշեցին: Վրդովուած թագաւորը Մաթան որդուն
ուղարկեց գօրքով Արգամի վրայ, որ նրա ցեղը ջնջէ: Ար-
տաւազդը խեց Արգամից Նախիջևան քաղաքը և Արաքսի
հիւսիսն ընկած կալուածները: Արգամի որդին հակառա-
կեց և Արտաւազդ ընաջինջ արաւ Արգամի ցեղը բոլորո-
վին, գրաւելով նրա կայքն ու կալուածները:

Արգամից յետոյ Արտաւազդի նախանձի առարկան
Սմբատ Բաղրատունին դարձաւ, որին նա ուզում էր սպա-
նել: Սմբատ վեհանձնօրէն հեռացաւ Տմորիք, գօրքի սպա-
րապետութիւնն էլ թողեց Արտաւազդին:

Որովհետեւ Արտաշէսի միւս որդիքը նախանձում էին
Արտաւազդին, Արտաշէս Վրոյր որդուն ռքքունիքի հաղա-
րապետ, իսկ Մաթանին քրմապետ կարգեց:

Բոլոր զօրքն հին սովորութեամբ չորս մասի բաժա-
նեց, արևելեանն յանձնեց Արտաւազդին, արևմտեանը Տի-
րանին, հիւսիսայինը Զարէհին և հարաւայինը Սմբատ

Բազրատունուն: Որովհետև Արտաշէս պայմանած հարկը չտուաւ, պատերազմ ծագեց Հռոմայեցիների հետ: Սկզբում հայերն աջողութիւն ունեցան և յաղթութիւն տա-
րան Սմբատի շնորհիւ, բայց երբ Տրայանոս Կայսր դա-
ռաւ և եկաւ Պալեստինը նստածեց, Արտաշէս հաշտութիւն
խնդրեց, վճարելով պահած հարկերը ամբողջովին և այ-
նուհետև շարունակ դաշնակից մնաց Հռոմին:

Ազրիանոս կայսեր առաջարկութեամբ Արտաշէս գը-
նում էր Պարթևաց երկիրը դաշն կապելու, որ ճանապար-
հին հիւանդացաւ Բակուրակերտ անտնում: Մարդ ուղար-
կեցին Երիզաւ ասանը, որ Անահիտ գիցուհուց կեանք և
բուժումն խնդրէ: Մինչև նրա գալուստը Արտաշէս մեռ-
նում է: Գեղեցիկ է նկարագրում նրա թագսմը Արիստոն
Փելլացին, որ ճամբորդում էր Արտաշէսի հետ իրրե քա-
տուղար: Շատերը նրա սիրելիներից, պատմում է նա,
հարճերից և ծառաներից զրկեցին իրենց կեանքից:

Ժողովուրդը մեծ պատիւներ տուաւ սիրելի թագա-
ւորի զիակին: Դուզալը ոսկեղէն էր, զահոյկը և անկողի-
նը բեհեզ, պատմութեանը ոսկեթիկ, գլխին թաղ էր դրած,
ոսկեպատ զէնքն առաջին, զահի շորս կոպու՝ որդիք և ազ-
գականներն էին կանգնած և ապա զինուորական պաշտո-
նեաները, նահապետները, նախարարները և զինուորական
զնւերը կազմ ու պատրաստ, որպէս թէ պատերազմ էին
գնում:

Առաջիկայ պղնձեայ փողեր էին նուապում, իսկ յե-
տևից շնում էին երգող կոյսերի խումբը սև հագած,
դրանց յետևից էլ ժողովրդի բազմութիւնը: Այսպիսի հան-
դիսով տարան ու թաղեցին սիրելի թագաւորին, որի ժա-
մանակ շատերն ինքնասպանութեամբ վերջ զրին իրենց
կեանքին (131 թ.):

Արտաշէսին յաջորդեց նրա փառասէր ու նախանձոտ
որդին, Արտաւազդ: Սա իր բոլոր եղբայրներին քշեց Այ-



ԱՐՏԱԽԱՆԳԻ (131 թ.)

բարատ գաւառից Աղիովիտ և Առերան գաւառները, պահելով իր մօտ միայն Տիրանին, իբրև յաջորդ:

Սա կարճ ժամանակ թագաւորելուց յետոյ, որսի յետևից երկվարը քշելով ընկնում է մի խորխորատ և մեռնում:

Սրա մասին է, որ գողթան երզնիները առասպելաբանել են. թէ հօր մահուան ժամին, երբ ժողովրդից շատերն իրենց կոտորել են, Արտաւսդը գանգատուել է ասելով:

«Դու գնացիր և ամբողջ երկիրը հետդ տարար, ես աւերակներին մնաց թագաւորեմ».—Որի համար Սրտաշէսնրան աշխիժում է. «եթէ դու որսի գնաս ազատ Մասիսի վրայ, քեզ թող բռնեն քաջերը, տանեն Ազատ Մասիսը, այնտեղ մնաս, ու էլ լոյս չտեսնես»:^{*)}

^{*)} Կարդալ. «Գողթան երգեր»՝ Հայ-Հեղինակներ, ք. տպ. եր. 226, և «Նաւասարդի տօները». եր. 259.

Պատմում են, որ նա մինչև այսօր պահուած է Մասիսի մէջ, մի այրում, երկու շները շարունակ կրծում են նրա շղթաները որ ազատեն տիրոջը, բայց երբ ուրբաթ օրը դարբինները ծեծում են սայր մուրճով, նրա շղթաները ամրանում են:

Արտաւազգին յաջորդեցին իր եղբայրները, նախ Տիրան Ա. (131—151) ապա Տիգրան դ. (151—193): Արան էլ յաջորդեց իր որդին, Վաղարշ (193 թ.) որ հիմնեց Վաղարշաւան քաղաքը Մուրցի և Երասխի խաւնուելու տեղը: Վարդգէսի աւանն էլ պատեց ամուր պարիսպներով և անւանեց Վաղարշապատ: Արա ժամանակ հիւսիսային վայրենի ազգերը, Սապիւրները և Բասիլները յարձակուեցան Հաղաստանի վրայ. Վաղարշ քաջութեամբ հալածեց նրանց, բայց զոհ դնաց թշնամու նեախն:

Հօր մահուան վրէժն առաւ Սոսրով Ա. (213), որ ցօրքի գլուխն անցնելով, անցաւ Կովկասը, յարձակուեց լեռնականների վրայ, յաղթեց նրանց, մի արձան կանգնեց ի նշան այդ յաղթութեան և յետ դարձաւ հետը բերելով բազմաթիւ պատանդ:

Արա ժամանակ էր, որ Պարսկաստանում Պարթև իշխանութիւնը թուլացաւ և թագն անցաւ Սասանեան Արտաշրի ձեռքը (226), որը հիմք դրեց Սասանեան իշխանութեան Պարսկաստանում: Սոսրով Ա. շտապեց իր ազգականին օգնութիւն հասցնելու, բայց որդէն ուշ էր: Արտաւան Արշակունին սպանուել էր:

Սոսրով այնուհետև հռոմայեցոյ օգնութեամբ պատերազմեց Արտաշրի հետ, յաղթութեամբ հառաւ Տիգրոն և Արտաշրին փախցրեց մինչև Հնդկաստան:

Արտաշիր խորամանկութեան զիմեց: Նրա խորհրդով Անակ Պահլաւունի իշխանը որպէս փախուտական և հալածուած Արտաշրից, իր ընտանիքով տալսինեց Սոսրովի մօտ: Սոսրով սիրով ընդունեց նրան որպէս իր ազգականին, Ուտի դաւառում:

Գարնանը, որսի ժամանակ, Անակը մի կողմ կանչեց Սոսրովին և մահացու վերք տուաւ նրան:

Նախարարները հասան նրա յետևից և Արտաշատի կամուրջի վրայ բռնելով, գետը նետեցին և նրա ցեղն էլ սրի անցրին մեռնող թագաւորի հրամանով (261):

Ազատուեցաւ միայն Գրիգոր անունով մի արու գաւաի իր ստնտուի ձեռքով:

Սոսրովի մահից յետոյ հայ նախարարները Փռիւպացի զօրքերի օգնութեամբ փորձ արին ղիմադրելու Արտաշի յարձակման, բայց պարտութեամբ ցրուեցան և արտաշի տիրեց Հայաստանին: Ապտուեց Տրդատ թագաւորապնը, որին Արտաւազդ Մանգաղունին փախցրեց Հոռմ: Իսկ Օտա Ամատունի իշխանն ազատեց Սոսրովի դուխտ արքայադուտեր, որին արքայական գանձերի հետ պահում էր Անի ամրոցում:

Այսպիսով հայաստանը դարձաւ պարսից մի նահանգ:

Տրդատը մեծանում և աճում էր Հոռմում, ուր նա քաջութեան և ուժի մեծ համբաւ հանեց: Մի անգամ վայրենի ցուլի պոգերից բռնելով դուրս պոկեց և վիզը ոլորելով սպանեց: Մի ալ անգամ հակառակորդն առաջ անցնելու համար նրան ցած նետեց կառքից. Տրդատ բարկացած աչնալէս պինդ բռնեց նրա կառքի լետևից, որ ձիերին կանգնեցրեց:

Պատերազմների մէջ էլ նա մեծամեծ քաջութիւններով զարմանք էր պատճառում հոռմայեցոյ: Մինչ Հոռմայեցի կատաղած զօրքը սովից յարձակուեց և սպանեց Պրորոս կայսեր, Տրդատ մենակ կանգնած իր բարեկամ Լիկիանոսի զրան առաջ, թոյլ չտուաւ, որ նրան որևէ փասս հասնի:

Պարսից պատերազմում երբ կայսրը յաղթուեց և լէգէոնները փախան, Տրդատ լեռ ֆնաց, որովհետև իր ձին վիրաւորուել էր: Եփրատին հասնելով իր հագուստն ու

ձիու սարքը մէջքին՝ լող տալով անցաւ Եփրատ գետը։
 Գօթաց հօշէ թագաւորի հետ էլ մենամարտեց, և
 յաղթելով գերի բերաւ նրան Դիոկղետիանոս կայսեր մօտ։

Այս քաջութիւնների համար նա սիրելի էր դարձել
 Գէոկղետիանոս կայսեր, որ կամենալով կրկին Հայաստանը
 նուաճել, զօրք տուաւ Տրդատին պարսից զէմ պատերազ-
 մելու։

Փախստական նախարարներէից շատերն ուրախութեամբ
 դիմաւորեցին Տրդատին Կեսարիա և միացան նրա հետ։
 Ստա Ամատունին նրա առաջ բերեց Խոսրովի դուխտ քը-
 րոջը և թագաւորական Կանձերը։ Տրդատ նրան նշանա-
 կեց տէրութեան հազարապետ, իսկ Արտաւադդ Մանգա-
 կունուն յանձնեց զօրքի սպարապետութիւնը։

Հայ և Հռոմէացի զօրքերով Տրդատ ջարդեց ու հա-
 լածեց պարսիկներին, կրկին տիրելով իր հայրենի թաղին
 և մեծ ուրախութիւն պատճառելով հայ ժողովրդին։

Նետեալ տարին նա արշաւեց Պարսկաստան և իր
 անձնական քաջութեամբ սարսափ ազդեց թշնամիներին։
 Մի անգամ թշնամիները շրջապատեցին նրան և նետերով
 բազմաթիւ վէրք հասցրին ձիուն։ Ջին գետին գլորուելով,
 ցած քցեց արքային։ Տրդատ աներկիւղ վեր թռչելով, հե-
 տիոտն սկսեց հալածել թշնամիներին և խլելով նրանցից
 մինի ձին, հեծաւ ու սկսեց կոտորել նրանց։

Հայաստանը թշնամիներից մաքրելուց յետոյ, Տրդատ
 կամեցաւ ամուսնանալ և Աշխատար իշխանի դուստր Աշ-
 խենին, որ գեղանի և բարձրահասակ էր Տրդատի պէս,
 կին ուղեց։ Նորան զրեւով Արշակունի, Տրդատ նորա գրւ-
 թին թագ դրեց և կարգեց հայոց թագունի։

ՀԵԹԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿՐՕՆԸ

Նախագանց ժամանակ հայերը մի պարզ ու բնական
 կրօն ունէին, արեւն էր նրանց պաշտամունքի գլխաւոր

առարկան, որ համարվում էր կեանքի հիմքը, մարդու և բնութեան կեանք տուողը.— «Արևելս վկայ, քու արևն, նրա արևը խաւարեց» մինչև այսօր պահուած ու սովորական են ժողովրդի բերանում: Լոյսը համարում էին բաղդ ու բերկրութիւն.— «աչքդ լոյս, աչքի լուսով մնաս», ասում են այսօր, երբ մի ուրախալի անցք է պատահում: Ընդհակառակը խաւարը համարվում էր անբաղդութիւն: «Նրա օրը խաւարեց, նրա օրը սեպցաւ», անբաղդութեան նշաններ են հէնց այսօր:

— Ուրեմն յոյսը—բաղդ էր. խաւարն—անբաղդութիւն, արևը կեանք:

Հին հայերը անտառների սօսաւիւնից գուշակութիւններ էին անում: Սօսեաց անտառին էր նուիրուած Անուշաւանը, որ այդ պատճառով Սօս կոչուեցաւ: Մի տեսակ աստուածներ էլ կային, որոնք Արլէզ էին կոչւում և լիւզում էին պատերազմում ընկած վիրաւոր քաջերին և առողջացնում նրանց:

Այս պարզ ու նախնական կրօնը բաւական ճշտացաւ հարեան պարսիկների, ասորիների և ապա յոյների ազդեցութեան տակ, այնպէս որ բնութեան լուսաւորների հետ, հայերին աճեցնեալ տեսնում ենք երկրպագելիս և կուռքերի ու արձաններին:

Աստուածների հայրն համարւում էր «արին Արամաղղը», որի արձանը գտնւում էր Անի ամրոցում: Երկրպայում գտնւում էր Անահիտ դիցուհու արձանը, որ կոչւում էր «ոսկրամայր, ոսկրածին, և համարւում էր կեանք ու կեցուցիչ հայոց աշխարհի»: Սա Արամաղղի դուստրն էր:

Արամաղղի միւս դստեր անունն Աստղիկ էր, որ գեղեցկութեան աստուածուհի էր: Սորա արձանը գտնւում էր Տարօն գաւառի Աշտիշատ աւանում: Այստեղ էր և Վահագնի արձանը: Վահագն համարւում էր քաջութեան աստուած և կոչւում էր Վիշապաքաղ: Սա Աստղիկի ամուսինն էր:



ԵՐՐՈՐԴ ԶՐԶԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ:

ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ

Աբգարն առաջին թագաւորն էր հայոց մէջ, որ քրիստոնէութիւն ընդունեց: Թէև, ինչպէս տեսանք, նրա յաջորդները հալածանք բարձրացրին քրիստոնէութեան դէմ, բայց և այնպէս բազմաթիւ քրիստոնեաներ կային հայաստանում, որոնք յայտնի կամ ծածուկ դաւանում էին երկնային Փրկչի կրօնը: Խոսքով Ա.-ի օրով, ինչպէս և Տրդատի ժամանակ այնքան շատ էր նրանց թիւը, որ թէ հալըր և թէ որդին մահուան պատիժներով, հալածանքներով ու նրովարտակներով բռնանում և հալածում էին քրիստոնեաներին: Այս հալածանքը տեւեց մինչև Տրդատի քրիստոնեայ դառնալը լուսաւորչի ձեռքով:

Գրիգորն Անակ իշխանի որդին էր. նա ծնաւ Վաղարշապատ 257-ին. երեք տարեկան էր, որ դաւաճան հօր ընտանիքը սրի տնցրին, որից ազատուեց միայն Գրիգորը, իր ստնտուի հետ, Սոփիա անունով: Գրիգորին տարան Կեսարիա, ուր նրան մկրտեցին և մեծացրին իբրև քրիստոնեայ: Նա ուսաւ յոյն և ասորի դպրութիւն: Երբ հա-

փահաս դաշձաւ, ամուսնացաւ մի յոյն աղջկայ հետ, որից երկու զաւակ ունեցաւ. Արիստակէս և Վրթանէս: Երեք տարուց յետոյ նրանք սիրով բաժանուեցան միմեանցից, որ ծառայեն Աստծուն. Գրիգորը Արիստակէսին յանձնեց դայեակների և ինքը դնաց Տրդատ թագաւորի մօտ, որ հաւատարիմ ծառայութեամբ քաւէ իր հօր, Անակի դործած մեղքը:

Իսկ Գրիգորի կին Մարիամն, առնելով փոքր որդուն, Վրթանէսին, մտաւ կուսանոց:

Երբ Տրդատ Հայաստան գալով զոհ էր մատուցանում Անահիտ դիցունուն, հրամայեց, որ Գրիգորն էլ պըսակներ մատուցանէ նոյն դիցունուն: Գրիգորն ընդդիմացաւ: Այնուհետև ոչ Տրդատի պատուէրն ու պատիժը, ոչ տուած տանջանքն ու շարշարանքները չկարողացան ըստիպել Գրիգորին, որ նա թողնէ բրիստոնէութիւնը: Այդ ժամանակ Տրդատին յայտնեցին, որ Գրիգորը Անակի որդին է: Տրդատ բարկացած հրամայեց, որ նրան տանեն քցեն Պրտաշատի Խոր-Վիրապը: Այնտեղ Լուսաւորիչը մընաց ամբողջ 15 տարի, Գրիգորն ազատուեց շնորհիւ մի բարեպաշտ կնոջ, որ ամեն օր հաց էր քցում Գրիգորի համար և սովամահից ազատում:

Այդ ժամանակները Դիոկղետիանոս կայսեր հալածանքից փախչելով Հայաստան եկան մի խումբ բրիստոնէայ կոյսեր, որոնք ապրում էին Վաղարշապատի հնձաններում: Նորանց մէջ էր Հովփսիմէ անունով մի կոյս, արքայազն, որին կամենում էր կին առնել Դիոկղետիանոս: Կայսեր թղթի վրայ Տրդատ գտաւ այդ կոյսերին և ինքը կամեցաւ կին առնել Հովփսիմէին:

Սակայն Հովփսիմէն փախաւ Տրդատի ձեռքից: Սրա վրայ բարկացած Տրդատը կոտորել տուաւ բոլոր կոյսերին թուով 37 հոգի:

Այս անմեղ կոյսերի արիւնը գուր չանցաւ: Թագա-

ւորի խիղճն սկսեց տանջել նրան ահա սաստիճան, որ հա-
խելագարուած գազանի նման սկսեց թափառել սար ու
ձոր:

Խոսքովի դուխտը մի երազ տեսաւ, ուր նորան մի լու-
սեղէն հրեշտակ ասում էր. թէ միայն Գրիգորը կարող է
բուժել Տրդատի հիւանդութիւնը: Ոչ որ չհաւատաց այդ
երազին, որովհետեւ չէին կարծում թէ Գրիգորը կարող էր
կենդանի լինել: Երազը կրկնուեց. այն ժամանակ Ստա-
Ամատունին գնաց Արտաշատ և գտնելով Գրիգորին կեն-
դանի, հանեց Խոր-Վիրապից և բերեց Վաղարշապատ: Ճա-
նապարհին նրա առաջ դուրս եկաւ հիւանդ թագաւորն իր
իշխաններին հետ. Գրիգորը ծուռի չոքած աղօթից նրանց
համար և նրանց ցաւերը թեթեացան:

Գրիգորն հաւաքեց նահապետի կոյսերի մարմինները և
ամենքին էլ թաղեց իրենց նահապետութեան տեղերում:

Հետեւեալ օրը բարազելով թագաւորին և պալատա-
կաններին Քրիստոսի հասար, նրանց մկրտեց քրիստոնեայ
301 թուին: Այսպիսով, Արգաթից յետոյ Տրդատը դարձեալ
ստալինն էր բոլոր Հեթանոս թագաւորներին մէջ, որ ըն-
դունեց քրիստոնէութիւն: Գրա հետեւ քան աղզը ստալին
և ամենահին քրիստոնեայ ազգն է ամբողջ աշխարհում:
Գրիգորն էր, որ լուսաւորեց մեր ազգը քրիստոնէու-
թեամբ, դրա համար հա կոչւում է Լուսաւորիչ:

Այնուհետեւ Լուսաւորիչ կոյսերի նահապետութեան
տեղը եկեղեցիներ շինեց, Հոփփիմէի, Գայանէի և Շո-
ղակաթի անուններով, որ մինչև հիմա էլ կան:

Լուսաւորիչ երազում տեսաւ, որ փրկիչ ցած եկաւ
երկնքից և կոանով խփեց դետնին. այդտեղ էլ հա հիմնեց
հայոց Մայր-Տաճարը՝ որ Լճմիւսիմ կոչուեցաւ:

Մաքսիմանոս կայսեր դուր չէկաւ Տրդատի քրիստո-
նեայ դառնալը, ուստի պատերազմ ծաղկեց հայոց և հոռ-
մախեցոյ մէջ: Բարեբաղդաբար շուտով կայսր դարձաւ Կոս-

տանդիանոս, որ ընդունեց քրիստոնէութիւն և բարեկամացաւ մեր Տրդատի հետ: Տրդատ Գրիգոր Լուսաւորչի, Արիստակէսի և բազմաթիւ հայ իշխանների ու զօրքի հետ այցելութեան գնաց կայսեր, մեծամեծ պատիւներով ու հանդէսներով ընդունուեց հռոմում ինչպէս ինքը, այնպէս և Գրիգոր Լուսաւորիչը:

Պարսից թագաւորը օգտուելով Տրդատի բացակայութիւնից, ուզեց խոռովութիւն առաջացնել Հայաստանում, նրա զրդմամբ Սլուկ իշխանն աբստամբեց Տրդատից և սպանելով իր փեսայ Ստա իշխանին, գրաւեց նրա Ողկան ամրոցը Տարսնում: Սկիւթական աղգերն էլ Շապուհից գրգռուած արշաւեցին Հայաստան: Սակայն, շուտով հասաւ Սէգն Տրդատ և Գարգարացոց դաշտում մի սարսափելի ջարդ տուաւ սկիւթացոց բանակին: Բաւլաց թագաւոր Գեղըհոնը կամենում էր թոկով բռնել Տրդատին, երբ Տրդատի սուրը նրան երկու կէս արաւ, ձիու գլուխն էլ հետը կտրելով:

Հայաստան դառնալիս, Տրդատ Սլուկ իշխանին էլ ըսպանուած գտաւ Մամդուն Ճենացու ձեռքով, որին ընծայեց Տրդատ Սլկունի կալուածները Տարսն դաւառում:

Այս Մամդունին Տրդատ նախարարութիւն տուաւ, որից առաջացաւ Մամիկոնեան ցեղը:

Երբ 325 թուին կայացաւ առաջին տիեզերական ժողովը Նիկիայում, Տրդատ և Լուսաւորիչ ուղարկեցին իրանց փոխանակ Արիստակէսին, որ այնտեղից բերեց մեր հաւատի հանգանակը:

Գրիգոր Լուսաւորիչ հայրապետական աթոռը լանձնեց Արիստակէսին, իսկ ինքը մեկուսացաւ Սեղուն լեռան Մանիայ ալրի մէջ, ուր և վաղճանեցաւ 332 թ.: Հովիւները դտան նրա մարմինը և թաղեցին:

Գրիգորից յետոյ Տրդատ թագաւորն սմեն կերպ աշխատում էր քրիստոնէական վարք ու բարք մտցնել

Հայաստանում: Ղերշը ծերացած ու յոգնած թողեց թագաւորութիւնը և քաշուեցաւ Մանիա այլը ձգնելու: Նախարարները խնդրեցին, որ յետ գայ և կրկին շարունակէ թագաւորելը: Տրդատ մերժեց: Ապերախտ նախարարները ծածուկ թունաւորելով զրկեցին նրան կեանքից 342 թ.: Տրդատին մեծ հանգիստով թաղեցին Թորդան գիւղում, ուր մի քանի տարուց յետոյ տեղափոխեցին և նրա սիրելի Գրիգոր Լուսաւորչի մարմինը:

ՏՐԴԱՏԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Հայերի քրիստոնեայ դառնալով կտրուեցաւ այն կապը, որ կար հեթանոս Հայաստանի և Պարսկաստանի մէջ: Առանց այն էլ Արշակունիներին թշնամի Սասանեան տոհմը ամեն կերպ աշխատում էր ձեռք բերել Հայաստանը և բնաջինջ անել քրիստոնէութիւնը, որ կապում էր հայերին յոյների հետ:—Տրդատի յաջորդները թող ու մեղկ մարգիկ էին, զբաղուած որսով ու կերուխումով. դրա համար Հայաստանն ասպարէզ դարձաւ անվերջ պատերազմների, մի կողմից հռոմի ու Պարսից մէջ, միւս կողմից էլ ապստամբ և անպարտաւան նախարարներին, զրանք կամ միմեանց դէմ էին պատերազմում թուլացնելով ևրկրի ներքին ուժերը, և կամ թագաւորի դէմ, միանալով արտաքին թշնամիների հետ:

Այսպէս Տրդատից յետոյ մինը միւսին յաջորդեցին Խոսրով Բ. որ զահր փոխադրեց Դուին և ապա Տիրան Բ. (353 թ.) որին զահրնկեց անելով Շապուհ, աչքերը կուրացրեց և աքսորեց: Սակայն հայերի սիրտը գրաւելու համար նրա որդուն, Արշակ Բ.-ին, կարգեց Հայաստանի թագաւոր (364):

Շատ խախուտ էր այս թագաւորի դրութիւնը, ինչպէս և իր նախորդներինը. հէնց որ պարսից հետ էր բարեկա-

մանում, յուռնաց կայսրն էր ասպատակում սրա երկիրը, հարկ պահանջելով սրանից. կատարում էր յուռնաց կամքը, պարսից թագաւորն էր վրէժխնդիր լինում անագին պատերազմով: Այս արտաքին թշնամիների վրայ աւելացան և ներքին խռովութիւններ: Արշակ խեղդել տուաւ իր կոյր հօրը և սպանեց իր եղբօր որդուն, Գնէլին, ու խլեց նրա կինը:

Արշակ մի քաղաք հիմնեց Մասսի ստորոտում և անւանեց Արշակաւան: Որպէսզի քաղաքը շուտով բազմամարդ դառնայ, նա հրաման տուաւ այնտեղ անպատիժ ընդունելու ամեն տեսակ յանցաւորներին: Շուտով քաղաքը լցուեց գողերով ու աւազակներով, որոնք նախարարների երկիրներից փախչելով, ապաստանեցին այնտեղ: Նախարարները բողոքեցին: Արշակ անուշադիր թողեց դրանց բողոքը. ուստի ամենքին զայրացրեց ու թշնամացրեց: Նախարարները դիմեցին Շապուհի օգնութեան, որի զօրքերն եկան տիրեցին Անի ամրոցին և կողոպտեցին թագաւորների ոսկորները: Հայ իշխանները կործանեցին Արշակաւանը և բնակիչներին կոտորեցին: Հաղիւ վրայ հասաւ Ներսէս Կաթողիկոսը և աղատեց ծծիկեր երեսաներին: Արշակ վերադարձաւ Վրաստանից և պատերազմով գնաց նախարարների վրայ, սակայն Ներսէսի միջնորդութեամբ նա հաշտուեց առանց պատերազմելու, թէև վերջը զրժելով իր խոստումը, չարաչար հայածեց ու կոտորեց հալառակորդ նախարարներին, ընաջինջ անելով նրանցից մի քանիսի ցեղն ամբողջովին:

Շուտով նախարարների զրդմամբ եկաւ պարսից Ալանոյան իշխանը և զերի տարաւ Արշակին Պարսկաստան:

Երբ Շապուհ պահանջեց թագուհի Փառանձեմի հետ բոլոր ֆուսցեալ նախարարների կանանց էլ պարսից Դուռը տանել, նախարարները միացած կոտորեցին պարսից զօրքը և հալածեցին: Շապուհ բարկացած լանտարիկել տուաւ:

Արշակին Անյուշ բերդը, ուր նա, լսելով իր կնոջ գերի ընկնելն ու մահը, և Հայաստանի ոտնակոխ լինելը, ինքնասպան եղաւ 382-ին, Անյուշ բերդում:

Արշակի մահից յետոյ Շապուհ իւր քոյր Ուրմզդուխտին կնութեան տուաւ Մենրուժան Արծրունի ուրացեալ նախարարին, որ նրա ձեռքով ջնջէ քրիստոնէութիւնը հայաստանում, և հայոց թագաւորութիւնը վերջացնելով, միացնէ իր երկրին:—Մենրուժան բազմաթիւ շարագործութիւններ արաւ Հայաստանում. քրիստոնեայ հոգևորականներին հալածեց, և նախարարների կտանաց գերի առնելով, զանազան բերդերում բանդարկեց:

Ներսէս ալփ ժամանակ Բիւզանդիա էր. ինդրեց Թէոդոս կայսրից, որ Արշակի սրդուն, Պապին, թագաւորեցնէ հայաստանի վրայ: Կայսրը յարգեց Ներսէսի ինդիրը և յոյն զօրքերով Պապին ուղարկեց Հայաստան, որին միացան փախստական հայ նախարարները:

Նպատ լերան մօտ Մենրուժանը պալտիկ զօրքով գուրո եկաւ քրիստոնեայ զօրքի ղէմ: Լերան զլինն քրիստոնեաների աջողութեան համար բազկոտարած աղօթում էր Ներսէս կաթողիկոսը: Պատերազմը կատաղի էր, բայց վերջի վերջոյ յաղթութիւնը մնաց հայոց կողմը: Մենրուժան փախաւ, բայց Սմբատ Բագրատունին համնելով նրա յետեից, հովիւներից տռաւ ստաքացրած շամփուրը, դրեց Մենրուժանի զլինն, իբրեւ թագաւորի և ստաց: «Պատկում եմ քեզ ո՞վ Մենրուժան, որովհետեւ ցանկանում էիր հայոց թագաւոր դառնալ, և ես, իբրեւ թագադիր ասպետ, կատարում եմ պաշտօնս»:

Այսպէս խախտուակ եղաւ դաւաճանի մահը, իսկ նրա օգնական Վաճան Մամիկոնեանին դաւաճանութեան համար սպանեց հարազատ զաւակը, Սամուէլ:

Պապի թագաւորութեան ժամանակ Ներսէս բազմաթիւ վանքեր հիմնեց, նոյնպէս հիւանդանոցներ, որբանոց-

ներ, և այլ բաղմատեսակ քրիստոնէական հիմնարկութիւններ: Պապ Թադաւորը, որ անառակ կեանք էր վարում, ձանձրացած նրա խրատներէց, թունաւորեց մեծ հալրապետին:—Յոյներէց էլ ձանձրացած, նա կամեցաւ պարսից կողմն անցնել, բայց յոյն զօրավար Տերինտիանոս, որ զօրքով գտնւում էր Հայաստանում Պապի վրայ հսկելու համար, գերի տարաւ նրան Բուզանդիա, ուր կալսքը նրան պիտտել տուաւ (388):

Պապին յաջորդեց իր եղբայր Վարապդատը, ապա իր երկու որդիքը. Արշակ Գ. և Վաղարշակ Բ. (394), նոյն տարին մեռաւ Վաղարշակ և թաղը քնաց ամբողջովին Արշակ Գ-ին:

Այդ ժամանակ յոյներն ու պարսիկները Հայաստանն ու Միջագետքը բաժանեցին միմեանց մէջ: Հայաստանի մեծ մասն ընկաւ պարսից ձեռքը: Արշակ չըկամենալով հեթանոս իշխանի երկրում մնալ, բաղմաթիւ նախարարներ հետ անցաւ Յունաց բաժինը: Շապուհն իր մասում թադաւոր կարգեց Սոսրով Գ. Արշակունի իշխանին, որ Արշակի մահից յետոյ թադաւորեց նաև յունաց բաժին ընկած Հայաստանին: Այս բանի վրայ կասկածելով Արտաշիւր, Սոսրովին կանչեց Տիգրան և աքսորեց Անյուշ բերդը:

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻԻՏԸ

Սոսրովին յաջորդեց նրա եղբայրը, Վռամշապուհ (400—421), որ խելօք ու հեռատես քաղաքականութեամբ կառավարեց Հայաստանը 21 տարի շարունակ, գրաւելով թէ պարսից և թէ յունաց հաւատն ու վստահութիւնը: Անպէս որ, երբ Միջագետքում յունաց և պարսից մէջ խռովութիւն ծագեց, Վռամշապուհ երկու կողմերի հրաւերով գնաց Միջագետք և տեղն ու տեղը վէճերը քննեց ու կարգադրեց արդարութեամբ:

Վրաստանի թագաւորութեան ժամանակ էր, որ նրա քարտուղարը, Մեսրոպ-Մաշտոց, գտաւ հայոց տաւերը 406 թուին: Հայերը թէպէտ քրիստոնէութիւն էին ընդունել հարիւր տարի առաջ, բայց չունենալով զիր ու զբարութիւն, աւետարանը եկեղեցիներում կտրուեցաւ: Եր յունարէն կամ ասորերէն և ժամերգութիւնն էլ կատարուեց էր այդ լեզուներով: Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, ուստի մնում էր խաւար և հեթանոս սովորոյթներով:

Մեսրոպը Տարօնի (Մուշ) հացիկ զէւդիցն էր. մանկութիւնից ուսաւ յունարէն, ասորերէն և պարսկերէն, աշակերտելով ներսէս Մեծին: Վերջը նա դիւանապետ էր պալատում, որից ձանձրանալով, հրաժարուեց աշխարհից և գնաց Գողթան զաւտուր ձգնելու և աւետարանը բարոյցելու ժողովրդին: Այդ քարոզութիւնները ժամանակ նա տեսաւ, որ ժողովուրդը չի հասկանում աւետարանի լեզուն, ուստի մտածեց հայերէն առաքել զանել, որ Ս. զիրքը թարգմանի հայերէն: Այս նպատակով նա ղրմեց Սահակ Կաթուղիկոսին և յայտնեց իր խորհուրդը: Կաթուղիկոսը Վաղարշապատում ժողով գումարեց այդ մասին: Ներկայ էր և Վրաստանի թագաւորը: Արքան ժողովում յայտնեց, որ Ասորիքում, մի Դանիէլ անունով եպիսկոպոսի մօտ հայերէն տաւեր է տեսել:

Մարդ ուղարկեցին և բերել տունն այդ տաւերը: Սահակ և Մեսրոպ աշակերտներ հաւաքեցին և փորձեցին այդ տաւերը սովորեցնել, բայց տեսան, որ զրանք պակասաւոր էին, և հայերէնի բոլոր հնչիւնները չունէին:

Այնուհետեւ Մեսրոպ շատերին ղրմելուց ձեռնունայն, ապաւինեցաւ աղօթքի և Աստուծոյ օգնութեամբ գտաւ հայերէն տաւերը 406-ին:

Այնուհետեւ Սահակ ու Մեսրոպ անմիջապէս սկսեցին թարգմանել Ս. զիրքն իրենց աշակերտների օգնու-

թեամբ: Բաղմաթիւ զպրոցներ բացուեցան հայաստանի պանաղան մասերում:

Ընդունակ և խելօք աշակերտներին ուղարկում էին աւելի լուսաւոր քաղաքները ուսում ստանալու, որոնց միջից յետոյ զուրս եկան մեր եկեղեցունշանաւոր հայրերն, հայ նշանաւոր պատմագիրներն և մատենագիրները: Այսպէս Սահակի և Մեսրոպի աշակերտներէից էին. Ղևոնդ Երէցը, Եգնիկ Կողբացին, Կորիւնը, որ զրեց իւր ուսուցչի, Մեսրոպի կեանքը. Մովսէս Խորենացին, որ զրեց հայոց պատմութիւնը, Դաւիթ Անյայթ փիլիսոփան, Եղիշէն, Վարդանանց պատմութեան հեղինակը, Ղազար Փարպեցին, որ զրեց Վարդանանց և Վահանանց պատմութիւնը և այլն:

Մեսրոպի, Սահակի և նրանց աշակերտների շնորհիւ հայոց գրականութիւնն ու լեզուն անյուշա ծաղկեց ու զարգացաւ և. դարձաւ, որ նա իրօք կոչուեցաւ մեր գրականութեան ոսկէ պարը:

Շատ մեծ է Մեսրոպի նշանակութիւնը, որովհետեւ նրա զտած տառերի շնորհիւ ծաղկեց ու զարգացաւ հայ գրականութիւնը և մի տնգամ ձեռք բերած բրիտանէութիւնը զարձաւ. ընդմիջտ ազգային կրօն:

ՎԻՍՄՇԱՊՈՒՀԻ ՅԱՋՈՐԴԵՆՐԸ

Վռամշապուհի մահից յետոյ պարսիկները փորձեցին վերջ տալ Սրշակունի թագաւորութեան, բայց աջողութիւն չունեցան, մինչև որ 4—5 տարի իտանակութիւնից յետոյ, Վռամ, պարսից արքան, հայաստանի թագը յանձնեց Վռամշապուհի որդուն, Արտաշէսին:

Սա իր անկարգ կեանքով ատելի եղաւ նախարարներին, որոնք միաբանած զիմեցին Սահակ Կաթուղիկոսին, կամենալով զահընկեց անել թագաւորին և նրա տեղը պարսիկ իշխան հրաւիրել:

«Քաւ լիցի, ասում էր ծերունի կաթուղիկոսը, իմ հիւանդոտ ոչխարը առողջ դադանի հետ փոխել, որի առողջութիւնը մեզ փաստակար է»։ Նախարարները չլսեցին Ս. Սահակին, այլ գնալով Վռամի մօտ, գանգատուեցին թէ թագաւորից և թէ կաթուղիկոսից։ Վռամ առանց լըսելու Արտաշէսին և Սահակին, կանչեց նրանց Պարսկաստան և այնտեղ պահեց, զրկելով մինին թաղից, միւսին կաթուղիկոսութիւնից 432-ին։

Այսպիսով վերջացաւ Արշակունի թագաւորութիւնը հայաստանում, և կաթուղիկոսութիւնը Լուսաւորչի ցեղից։

Այնուհետև հայաստանը կառավարում էին պարսից մարզպանները, իրա՝ թագաւորի հրամանների համեմատ։

ԱՌԱՋԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Արշակունի հարստութիւնը վերջացնելուց չետով, պարսիկների նպատակն էր ջնջել քրիստոնէութիւնը հայաստանում և այդ հարուստ երկիրն ընդմիշտ միացնել Պարսկաստանին։ Այդպէս էլ մտածում էր Յազկերտ Բ. բայց վախ էր զգում նախ յոյներից, որ իբրև քրիստոնեայ կարող էին օգնել հայերին, և երկրորդ, հալ նախարարներից, որոնք դեռ զօրեղ ու խրոխտ, կարող էին խանգարել Յազկերտի մտազրութիւնը։ Ուստի նա մտածեց առաջ իր հաշիւը վերջացնել յոյների, ապա հալ նախարարների հետ։

Յարձակուեցաւ Յոնայ Միջագետքի վրայ, աւերեց ու կոտորեց, հասաւ մինչև Մծբին և Թէոդոս կայսրին ստիպեց ընդունել իր առաջարկած պայմանները։ Այնուհետև Հոնայ արշաւանքին մասնակցելու համար հրաւիրւեցան հայ, վրացի և Աղուանից ազգի նախարարներն ու զօրքը, որ մի կողմից երկիրն անպաշտպան մնայ, միւս կողմից թուլանայ։

Եւթը տարի տևեց Հոնայ պատերազմը, ուր հալ իշ-

խաններն ու զօրքը մեծամեծ քաջութիւններով ապահովեցին Պարսից յաղթութիւնն և աջողութիւնը:

Պատերազմի ժամանակ էլ Պարսից թագաւորն աշխատում էր համոզելու, որ հայ իշխանները թողնեն իրենց կրօնը և դառնան կրակապաշտ: Այդ անում էր նա առաջ մեղմութեամբ, տալա, մինչև անգամ բռնութեամբ. Պարսկաստան գնացող զօրքին այլևս յետ չէր թողնում հայրենիք դառնալու և պատերազմի թունդ տեղերն ուղարկելով, աշխատում էր նրանց հետզհետէ կոտորել տալ:

Մինչդեռ զօրքն ու իշխանները հեռու էին հայրենիքից, Հայաստան է գալիս Դենշապուհ իշխանը աշխարհադիր անելու:

Նա հարկի տակ զրեց վանքերն ու եկեղեցիները, որ մինչ այն ազատ էին որևէ տուրքից: Ժողովրդին էլ ծանրը հարկերով ճնշեց ու աղքատացրեց, հոգևորականներին սկսեց հալածել և նախարարներին մէջ խռովութիւն ձգեց: — Երկրի հաղարապետին, որ Վահան Ամատունին էր, պաշտօնից հեռացրեց և նրա տեղը կարգեց մի պարսիկ: Մի մոգաբանի էլ նշանակեց զատուոր:

Երբ ժողովուրդը բաւական աղքատացած էր ու թույլ, Միհրններսէն մի թուղթ ուղարկեց Հայաստան, որ պախարակում էր քրիստոնէութիւնը և գովում Զրադաշտային կրօնը: Նա պահանջում էր, որ կամ իր գրածին կէտ առ կէտ պատասխանեն և կամ բնութենէն պարսից կրօնը:

Հայ ազգի իշխաններն ու հոգևորականներն անմիջապէս հաւաքուեցան Արտաշատ և Յովսէփ կաթողիկոսի նախադաճութեամբ ժողով գումարելով, մի շատ խիստ ու համարձակ սրտասխան գրեցին պարսից թագաւորին:

Պատասխանը վերջանում էր այսպէս: «Այս հաւատից մեզ ոչ ոք կարող է շարժել. ոչ մարդիկ, ոչ հուրը և ոչ սուրբ: Մեր բոլոր հարստութիւնը քո ձեռին է, մարմիններս էլ քո առաջ. արա, ինչ որ կամենաս. քեզանից



Վ Ա Ր Դ Ա Ն

առանջանք, մեզանից համբերութիւն, քո սուրբ և մեր պարանոցը»:

Յազկերտ զարմացած ու բարկացած այս պատասխանի վրայ, նախարարներին պարսից դուռը կանչեց: Նախարարները, որոնց մէջ էր Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան, զնացին Պարսկաստան և սովորականին հակառակ խիստ վառ ընդունելութիւն գտան:

Յազկերտ առանց խօսք լսելու ստիպում էր, որ ընդունեն պարսից կրօնը և տեսնելով նախարարների հակառակութիւնը, բանտարկել տուաւ նրանց: Նախարարները երկար խորհրդակցելուց յետոյ որոշեցին երեսանց կատարել թագաւորի հրամանը, որպէսզի ազատուելով մի հնար գտնեն նրա չար մտադրութիւնը խորտակելու:

Թագաւորն անշափ ուրախացաւ լսելով նախարարներ ի ուրանալը: Մեծամեծ պարզկներ ու պատիւներ տուաւ նրանց և 700 մոգեր և մոգպետներ ու մի գունդ զօրք հետները ղնելով, ուղարկեց Հայաստան, որ այնտեղ էլ բրիստոնէութիւնը ջնջելով տարածեն ու քարոզեն պարսից կրօնը (450):

Ապահովութեան համար Յազկերտը պատանդ պահեց Վասակի, որ այդ ժամանակ Հայաստանի մարգպանն էր, երկու որդոցը:

Երբ նախարարների ուրացութեան լուրը Հայաստան հասաւ, ամբողջ երկիրը սուգի մէջ մտաւ:

Հոգեւորականները ցրուեցան երկրի զանազան կողմերը ժողովրդին պատրաստելու, որ զէնքով զիմադրեն և իրենց հաւատը կեանքի գնով պաշտպանեն: Որոշեցին ու երգուեցան, որ հայրը որդուն պիտի չխնայէր, եղբայրը եղբորը, սրդին հօրը, կինը ամուսնուն, եթէ ուրացել էր հաւատը:

Նախարարները Հայաստանի սահմանը մտնելով, բանակ դրին Անգղ գիւղում: Կիրակի օրը, պատարագի ժամանակ, մոգպետը զօրքերի հետ մտաւ եկեղեցին, որ ժամերգութիւնը դադարեցնէ: Դևոնդ երէցը, որ պատարագիչ էր, ժողովրդի գլուխն անցած, փայտերով ու բրերով ձեծեց մոգերի գլուխը և հալածեց եկեղեցուց:

Յուսահատուած մոգպետը կամենում էր թագաւորին դրել ալօ մասին: «Եթէ իրանք աստուածներն էլ օգնութեան գան, անկարելի է մեր օրէնքը հաստատել Հայաստանում», ասում էր նա, բայց դաւաճան Վասակը համոզեց նրան մի քիչ էլ համբերել, մինչև որ խարելով ու խարդախելով սրան կամ նրան զրաւէ իրենց կողմը:

Այդ ժամանակ ուրացեալ նախարարները Շահապիվանում ժողով գումարեցին և ամենը երգուելով աւետարանի վրայ հաստատեցին, որ կեղծ էին ուրացել. իրենց

մատանիներով կնքեցին աւետարանը, ի նշան իրենց հաւատարմութեան քրիստոնեայ եկեղեցուն: Վասակն էլ միաբանեցաւ և իր մատանիով կնքեց աւետարանը: Դրանից յետոյ հայերը կոտորեցին մոզերին և պարսից գրաւած բերդերն առնելով, կրակատունները քարուքանդ արին:

Այդ ժամանակ գութկան եկաւ Աղուանից աշխարհից, խնդրելով օգնութեան հասնել նրանց, որովհետեւ պարսից զօրքը երկիրը մտնելով մոզերի հետ, աշխատում էր ջնջել քրիստոնէութիւնը:

Վարդան սպարապետը հայոց զօրքը երեք մասի բաժանեց, առաջինը տալով Ներշապուհ Արծրունուն, ուղարկեց Ատրպատական, Պարսից սահմանը. երկրորդ զունդն առնելով Վարդան, գնաց Աղուանից աշխարհին օգնութեան, իսկ երրորդ զունդն առաւ ինքը Վասակ, որպէս թէ հայաստանի կենդրոնը պաշտպանելու, այն ինչ նա մարդ ուղարկեց պարսիկներին իմաց տալու, թէ տեսէք, ահա հայոց ոյժը թուլացրի, մաս-մաս բաժանելով նրանց:

Վարդանը Աղուանից երկրում, Կուրի ափին, սոսկալի ջարդ տալով, հալածեց պարսիկներին յետ առնելով նրանց տիրած բերդերն ու աւերած հարստութիւնը, կոտորելով մոզերին և կործանելով կրակարանները, հասաւ մինչև Ճորայ զուռը և դաշն կապեց հոնաց հետ (450):

Սակայն, դուժկան հասաւ Վարդանին Հայաստանից, որ պատմեց Վասակի շարագործութիւնները, թէ ինչպէս նա շատ քաղաքներ ու գիւղեր այրեց, շատ եկեղեցիներ կործանեց և ուխտապահ նախարարների որդոց գերելով, Սիւնեաց բերդերում փակեց:

Վարդան ճանապարհուեց Հայաստան. ձմեռը վրայ հասաւ և երկու կողմից էլ մարդիկ զբաղուեցան իրենց կուսակիցները շատացնելով: Գարունը բացուելուն պէս Մուշկան Նիւսաբաւուրտ զօրավարը ահագին զօրքով բանակ դրեց Հեր և Զարեանդ գաւառներում: Վարդանն էլ հա-

ւաքեց իր զօրքերը թուով 66,000 հոգի և դուրս եկաւ թշնամու դէմ, Արտագ զաւառի Աւարայր դաշտում, Տրդմուտ գետի ափին: Բանակուեալ էին Յովսէփ կաթողիկոսն ու Ղևոնդ Երէցը, որ մի ոգևորուած ճառով խրախուսեց զօրքին: Հետեւեալ առաւօտ վաղ, պատարագից յետոյ, սկսուեց պատերազմը նետերով: Պարսից զօրքը երեք անգամ աւելի էր հայերից և բազմաթիւ պատերազմական փոյերով շրջապատուած:

Չնայելով դրան, նրանք վախեցան գետն անցնել, հայերն էին, որ անվախ գետն անցնելով, յարձակուեցան պարսից աջ թևի վրայ, Վարդանի առաջնորդութեամբ և շփոթութիւն քցեցին նրանց զօրքի մէջ: Սակայն, հայոց զօրքի մի մասն այդ ժամանակ թուլանալով, տեղի տուաւ և պարսիկները սիրտ առան: Պատերազմը տևեց մի ամբողջ օր. Պարսից զօրավարը օգտուելով հայոց քշուածիւնից, պահեստի փոյերը մօտ բերեց և շրջապատեց Վարդանին: Վարդան ընկաւ նահատակի մահով, շատ թանկ ծախելուց յետոյ իր կեանքը պարսիկներին (451). նրա հետ ընկան բազմաթիւ այլ քաջեր հայոց բանակից, զինուորների հետ միասին 1036 հոգի իսկ պարսից կողմից 3544 հոգի և իննը զօրավար:

Վարդանանց պատերազմի յիշատակը մենք տօնում ենք բարեկենդանի վերջին հինգշաբթի օրը:

Հայերը քաշուելով իրենց լեռները և ամուր տեղերը, փոքրիկ յարձակումներով մեծամեծ փնտսներ էին տալիս Պարսիկներին: Յազկերտը տեսնելով իր զօրքի կրած ահադին փնտսները, զղշաց: Վասակին կանչեց Պարսկաստան և նրա տեղը պարսիկ մարզպան նշանակեց: Հրաման տուաւ, որ եկեղեցիները նորից բացուին և կրօնի ազատութիւն յայտարարեց:

Միայն Յովսէփ կաթողիկոսին և Ղևոնդ Երէցին մի

քանի այլ ապստամբ նախարարների հետ Պարսից Դուռը կանչեց, շղթայակալ*)։

ՎԱՍՍԱԿԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մի հանդիսաւոր օր թագաւորը պալատ կանչեց Վասակին։ Նա հաղաւ իր թանկագին շորերը, գլխին ոսկեղէն խոյր ունէր, մէջքին մարգարտապարդ գօտի, ականջին ոսկէ օղեր, և ուսին արքայական սամույր։ Միայն թագն էր պակաս և նա կարծում էր, որ թագաւորը նրան կտայ Հայաստանի թագը։

Պալատումն էին և շղթայակալ հայ քահանաներն ու նախարարները, որոնք բաց արին Վասակի խարդախութիւններն ու դաւաճանութիւնը, որ մի կողմից հայերին էր խաբում, միւս կողմից պարսիկներին։ Վասակի ազգականներն անգամ պարսիկ մոգերի հետ հաստատեցին, որ երկրի աւերման և պատերազմի պատճառը Վասակն էր։

Թագաւորն հրամայեց զրկել Վասակին բոլոր ունեցածից և բանտարկել նրան։ Իսկոյն հանեցին նրա բոլոր զարդերն ու զգեստները և մահապարտի հագուստ հագցրնելով, նրա ձեռք ու ոտքը կապած նստեցրին մատակ ձի և բանդ տարան։ Այնտեղ նա երկար տանջուելուց և ծանրոր հիւանդանալուց յետոյ մեռաւ խորին աղքատութեան մէջ։ Գերեզմանի տեղ չգտաւ իր հայրենիքում այն մարդը, որ Հայաստանի թագաւոր էր ուզում դառնալ դաւաճանութեամբ։

Շղթայակալ քահանաներն էլ նահատակուեցան մի քանի տարի բանտարկուելուց յետոյ, իսկ նախարարները 12 տարի բանդ և նեղութիւն կրելուց յետոյ, կրկին ազատուեցան և վերադարձան Հայաստան։

*) Կարգալ, Ն. դարու հայ կանայք. «Հայ հեղինակներ», և «Բլրուլն-Աւարայրի», Երես 265.

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Վարդանանց պատերազմից յետոյ պարսիկները թէպէտ բռնութեան չէին դիմում, բայց ուրիշ ամեն միջոցներով դաւաճաններին և հաւատուեցներին առաջ էին քաշում իսկ ազնիւ ու կարգին հայ իշխաններին հալածում: Դժգոհութիւնը շատ մեծ էր հայոց մէջ և այս անգամ էլ զժգոհների և ապստամբների գլուխ կանգնեց Մամիկոնեան տոհմի աւագը, Վահանը, որ Վարդանի եղբոր որդին էր: Սա չորս տարի շարունակ հայաստանի գանազան մասերում շարունակ կռուի էր բռնութեամբ պարսիկների հետ, քաջութեամբ պատերազմում էր և նրանց կոտորում ու հալածում: Շատ հեռատես ու խելօք էր Վահանը, ինչպէս և քաջ ու մեծահոգի:

Պարսիկները տեսան, որ պատերազմով չեն կարող Վահանին ընկճել, համաձայնեցան նրա առաջարկած պայմաններն ընդունել և հաշտութիւն կայացնել: Այդ պայմանով քրիստոնէութիւնը ճանաչուեց որպէս հայոց կրօն, որին ոչ ոք իրաւունք չունէր այնուհետեւ ձեռք տալու: Դաւաճանները պատուի պիտի չարժանանային և ազնիւ ու հաւատարիմ մարդիկ չհալածուէին:

Պարսիկները տեսնելով Վահանի ազնւութիւնն ու խոհեմութիւնը, նրան յանձնեցին թէ երկրի կառավարութիւնը—մարզպանութիւնը և թէ սպարապետութիւնը: Յովհան կաթողիկոսն ուրախացած մեծ հանդէս կատարեց այդ առթիւ էջմիածնում և մի գեղեցիկ ճառ ասաց (485 թ.):

Վարդանանց և Վահանանց պատերազմներից յետոյ հայաստանի արեւելեան մասը դարձեալ մնաց Պարսից իշխանութեան հպատակ մինչև Սասանեանց անկումը և արաբաց արշաւանքները: Պարսիկները երբ իրենց զօրաւոր էին զգում, իսկոյն մոռանում էին իրենց խոստումը, նշա-




Գ Ա Յ Լ Վ Ա Հ Ա Ն


նակում էին պարսիկ մարգպաններ և նեղելով ու ճնշելով հայերին, կամենում էին հայերին իրենց կրօնին դարձնել։

Հայերն էլ շարունակ ապստամբում ու կոտորում էին Պարսից զորքը կամ յունաց օգնութեամբ կամ մեռնակ, հաւատարիմ մնայով իրենց կրօնին։ Այս պատերազմների մէջ մեծ անուն հանեց և նշանաւոր դեր խաղաց Վահանը, Մամիկոնեան տոհմից, որ իր անօրինակ քաջութեան համար Գայլ էր կոչւում։ Երբ Միհրան պարսից զորավարը 30,000 զորքով յարձակուեց Տարօնի վրայ, Գայլ Վահանը խորամանկութեամբ զնաց և բարեկամ ձեւացաւ Միհրանին, այն ինչ զաղտնի առանձին զնդերով 4000 հոգի պարսիկ մէկ ջարդել տուաւ, 2000 մէկ,

1000 մէկ, մի 1000 էլ մէկ. Այսպէս Պարսից զօրութիւնը խորտակելուց յետոյ Միհրանին էլ սպանեց 604 թ. և Տարօնն ազատեց թշնամու ձեռքից:

Պարսից թագաւորը նորէն զօրք ուղարկեց Տարօնը պաշարելու: Գայլ Վահանը լուռ նստած խորամանկութեամբ սպասում էր թշնամու գալուն, որոնցից 4000 հոգի մէկ ջարդեց, 5000 մէկ: Այդ ժամանակ ծերութիւնից մեռաւ Վահանը և պարսից զօրավարը վստահացած, 10,000 զօրքով յարձակուեց նրա որդու, Սմբատի վրայ: Սմբատ չարաչար կոտորեց պարսից զօրքը, սպանեց նրանց զօրավար Վախտանգին և նրա կնոջն ու որդոցը գերի տարաւ: 20 տարի յետոյ պարսիկները նորէն արշաւեցին Տարօն, բայց նորէն սարսափելի ջարդ կրելով տեղի տուին:





ՉՈՐՈՐԴ ԾՐՋԱՆ



ԱՐԱԲԱՑ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

(640—1080)

Սառանեան թագաւորութիւնը կործանեցին արաբները, տիրեցին Պարսկաստանին, տարածեցին այնտեղ Մանմեղի կրօնը և այնուհետև աշխատեցան տիրել Հայաստանին և տարածել հայոց մէջ մանմեղականութիւնը։ Ամբողջ յիսուն տարի կռուելով յունաց հետ, արաբները Հայաստանը արեան, արևելքի և կրակի ասպարէզ դարձրին, մինչև բոլորովին տիրելը եօթերորդ դարու վերջերին։ Առաջին անգամ Հայաստան եկաւ Աբդրահման 18000 զօրքով, 640-ին և մտաւ Տարօն։ Գայլ վահանի թոռնորդին, Տիրան, դուրս եկաւ նրա դէմ 8000 զօրքով։ Մնացեալ հայ իշխանները չուղեցան օղնել նրան և Սահուռ Անձեացին էլ պատերազմի ժամանակ դաւաճանեց նրան անցնելով արաբաց կողմը։ Տիրան զոհ դնաց և արաբացիք հասան մինչև Դուին, տանելով 35,000 գերի։—Այնուհետև արաբացիք մի բանի անգամ յարձակումներ ունեցան Հայաստանի վրայ փոխ առ փոխ։ Երբ արաբացիք հեռանում էին, զալիս էին կրօնամոլ և հայատեաց յոյները, սրանց դէմ էլ իսկոյն կռուելու էին դուրս գալիս

արաբները. և հայաստանը կռուականձոր դառած այս երկու երկիրների մէջ, արիւնաքամ էր լինում:

Երբ արաբները յետ քաշուեցան, յոյները կրկին երեւացին իրենց դերում և կայսրը Կիւրապաղատ նշանակեց նախ Վարազտիրոց, ապա նրա որդի Սմբատ Բագրատունուն: Սպարապետութիւնն էլ յանձնեց Թէոդորոս Ռշտունի իշխանին: Արաբաց արշաւանքի ժամանակ այս իշխանը միակն էր, որ աշխատում էր միացնել հայ նախարարներին թշնամիներին դիմադրելու համար, բայց սրա ջանքերը զուր անցան:

Արաբացիք նորէն ահապին դօրութեամբ հայաստան մտան և մի քանի գաւառների տիրեցին: Հայերը յոյս չունենալով յունաց օգնութեան վրայ, դիմեցին ամիրապետին և հնազանդութիւն յայտնեցին նրան: Կոստանդ կայսրը, որ օգնութիւնը զլացել էր, կատաղութեամբ արշաւեց Հայաստան՝ կամենալով բնաջինջ անել բոլոր հայերին:

Ներսէս կաթողիկոս Տայեցին դուրս եկաւ նրա առաջը, ամօրեց նրա բարկութիւնը և կայսրը պահապան զօրք թողնելով, հեռացաւ: Հազիւ կայսրը հեռացել էր և ահա արաբները կրկին արշաւեցին Հայաստան, յունաց զօրքին դուրս քշեցին, երկիրը ծանր հարկերի տակ դրին և բազմաթիւ պատանդներ վերցնելով իշխանական տներից, յետ դարձան: Տուրքն այնքան ծանր էր, որ հայ նախարարները կրկին կայսեր դիմեցին և նա էլ Համազասպ Մամիկոնեանին կարգեց կիւրապաղատ: Հայերի այս վարմունքի համար ամիրապետն էլ կոտորել տուաւ մօտ 2000 հայ պատանդները, որոնք զտնւում էին Արաբիայում:

Երբ Մաւիէ ամիրապետը պատրաստութիւն տեսաւ Հայաստան արշաւելու, հայերը կրկին հպատակութիւն յայտնեցին նրան: Համազասպի տեղ, նրա մահից յետոյ ամիրապետը կառավարիչ կարգեց Գրիգոր Մամիկոնեա-

նին, որ երկիրը բարեկարգեց և խաղաղութեամբ պահպանեց 25 տարի: Գրիգորը մեռաւ Սազրաց զէմ պատերազմելիս:

Յուստիանոս կայսրն անձամբ եկաւ Հայաստան, թշնամիներին հալածեց և երկիրն ամբողջովին նուաճեց: Այնուհետեւ Ներսէս Կամսարականին կարգեց պատրիկ և 30,000 զինուոր թողնելով, ինքը վերադարձաւ Բիւզանդիա: Մի տարի չանցած չուսաց զօրքը բոլորովին հեռացաւ Հայաստանից և մեր երկիրն ամբողջովին մնաց արաբների ձեռքը, եօթերորդ դարու վերջին (693):

Արաբացիք Հայաստանը կառավարում էին ոստիկանների կամ ամիրանների ձեռքով, որոնք ծանր հարկերով կեղեքում էին երկիրը: Նրանք իշխաններին և մեծամեծներին կամ գերի էին տանում կամ պատանդ էին վերցնում, իսկ ժողովրդին էլ ծանր հարկի տակ էին պահում, որ չկարողանան ապստամբել: Չնայելով այդ ճնշումներին, հայերը մի քանի անգամ ապստամբեցան և կոտորելով ոչնչացրին արաբ զօրքը:

Այսպէս Սմբատ Բիւրատեան Բագրատունին գերութիւնից փախչելով լոյներից օգնութիւն ստացաւ և Վարդանակերտի մօտ աջնալիսի ջարդ տուաւ արաբաց, որ Աբդլլահ ոստիկանն հազիւ իր գլուխն ազատեց:

Հայերից վրէժ առնելու եկաւ Մոհմատ զօրավարը և անարդել հասաւ մինչև Վանանդ: Այստեղ Սմբատ Բագրատունին և Ներսէս և Կամսարականը մի սարսափելի ջարդ տուին նրան և փախցրին:

Մոհմատ աւելի մեծ զօրք հաւաքելով, կրկին եկաւ Հայոց վրայ, բայց նրա զէմ դուրս եկաւ ծերունի Սահակ կաթողիկոսը, որ նրա բարկութիւնը մեղմէ: Ճանապարհին կաթողիկոսը մեռաւ, բայց մեռնելուց առաջ մի

թուղթ գրեց Մոհմատին, խնդրելով չկոտորել իր հօտին*)։

Աւանդութիւնը պատմում է, որ երբ Մոհմատը մօտենում է կաթուղիկոսի դադաղին, հանգուցեայի ձեռքը բարձրանում է և թուղթը տալիս է ոստիկանին։ Այս թուղթը կարդալով, Մոհմատը սչ մի փնաս չհասցրեց հայերին։

Մոհմատից յետոյ Հայաստան եկաւ Կաշմ ոստիկանը. (740 թ.) որպէսզի նոր ապստամբութեան առաջն առնէ, այս արիւնարբու գազանը հայ իշխաններին հրաւիրեց Նախիջևանի եկեղեցին և բոլորին միասին այլեց, իսկ նրանց երկիրները սրի և աւարի մատնեց։

Այդ ոստիկաններից բարի անուն թողեց Հայաստանում միայն Մրուան։ Սա շատ սիրեց Աշոտ Բագրատունուն և երբ Արարիայում խռովութիւն ծագեց, Մրուան Հայաստանի ոստիկանութիւնն յանձնեց Աշոտին և անուանեց նրան իշխանաց-իշխան։ Ինքը գնաց Արարիա և դարձաւ ամիրապետ։

Մրուանից յետոյ Հայաստան եկաւ Եղիդ, որ ծանր հարկերով կեղեքեց ու ճնշեց երկիրը. հայ իշխանները կամեցան ապստամբել. նրանց խորհրդին հակառակ էր Աշոտ Բագրատունին, ուստի նա կուրացաւ Մամիկոնեանների ձեռքով։

Աւելի անողոք և ճնշող էր Պէքիր և Հասան ոստիկանների կառավարութիւնը։ Հայերը կրկին ապստամբեցան և Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ ամիրային քչեցին Դուխնից։ Արաբացիք նոր ղօրքով կրկին յարձակուեցան հայերի վրայ, յաղթեցին հայերին և սպանեցին Մուշեղին։ Հարուն-ալ-Ռաշիդի օրով Հայաստանը կրկին նուաճուեց Եգիպտոսի ոստիկանի ձեռքով 786 թ.։

*) Կարդալ «Սահակ կաթուղիկոս»—«Հայ Հեղինակներ» րոտպ. Կր., 262.

Հայերը կրկին ապստամբեցան արաբաց դէմ Բաբան Պարսիկ իշխանի դաշնակցութեամբ:

Բաղրատ Բագրատունի պատրիկը և Բաբան պարսիկը կենդրոնացան Սիւնիք: Նրանց վրայ գնաց արաբ Աֆշին զօրապետը, սրի հետ միաբանել էր և Սմբատ Բագրատունին: Բաբան յաղթուեցաւ: Սմբատի որդին՝ նրան զերի բռնեց և յանձնեց ոստիկանին: Այնուհետև Բաղրատ Բագրատունու վրայ եկաւ Աբուսէթ ոստիկանը և Տարօնում նրան բռնելով, շղթայակալ ուղարկեց ամիրապետին: Սասունցիք, լսելով իրենց սիրելի իշխանի շղթայուելը, Յոնան անունով մի լեռնեցու հետ ցած իջան Մշու դաշտը, Աբուսէթին սպանեցին և զօրքը կոտորեցին (849)*:

Այս ամենքի վրէժն առաւ Բուղան, որ ինչպէս մի գիշակեր դադան երկիրը մտանեց աւերի, սրածութեան, հրդէհի և կոտորածի: Նա բազմաթիւ գերի տարաւ. Արաբիա, մեծ մասամբ իշխանական տներից, որոնցից շատերը նահատակուեցան, ուրիշներն էլ հաւատուրաց եղան:

Այնուհետև հայերը նորից ապստամբեցան ու կոտորեցին և նորից նուաճուեցան ու կոտորուեցին արաբներից, մինչև որ Մեծ Հայաստանին թաղաւոր դարձան Բաղրատունիք:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ, ԱՇՈՏ Ա. ԹԱԳԱԽՈՐ

Աշոտ Բագրատունին իր բարի և ազնիւ, խելօք ու շինարար բնավորութեամբ գրաւել էր թէ հայ իշխաններին և թէ արաբ ոստիկանի սիրտը: Բուղայ ոստիկանի աւերածութիւններից յետոյ անտէր ու աւերակ Հայաստանը շունչ և հոգի առաւ Աշոտի շնորհիւ, որ իր ահա-

*) Այս անցքն է, որ ժողովրդական վէպի նիւթ է դառել և յայտնի է «Սասունցի Դաւիթ» անունով: Կարգալ «Հայ Հեղինակներ» «Սասունցի Դաւիթ»:

զին հարստութիւնը չխնայեց երկիրը վերաշինելու և թշուառ ժողովրդին օգնելու: Նրա խնդիրքով դերի նախարարներն ազատուեցան բանտից և վերադարձան Հայաստան:

Այդ ժամանակ Զահապ պարսիկը 80,000 զօրքով մըտաւ Հայաստան. Աշոտը նրա դէմ ուղարկեց իր Աբաս երբօրը, որ Արաքսի ափին չարաչար կոտորեց պարսիկներին:

Այս յաղթութեան և խելօք ու բարի ընոյթի շնորհիւ Աշոտ ընդհանուրին սիրելի էր եղել այն աստիճան, որ հայ իշխանները խնդրեցին ամիրապետից, որ Աշոտին կարգէ հայոց թագաւոր: Ամիրապետը չարդեց հայոց խնդիրը և թագ ու ծիրանի ուղարկեց Աշոտին: Գէորգ կաթողիկոսը մեծ հանդիսով օծեց նրան թագաւոր Անի քաղաքում 885 թ.:

Նոյն տարին յունաց Վասիլ թագաւորն էլ, որ Արշակունի էր, թագ և բազմաթիւ ընծաներ ուղարկելով, շնորհաւորեց Աշոտի թագաւոր դառնալը:

Աշոտ նորոգեց Արշակունի թագաւորութեան կարգերն ու պաշտօնները:—Աբասի և իր որդի Սմբատի ձեռքով նուաճեց ասպտամբ Վանանդն ու Գուգարքը և շրջակայ իշխանների հետ խաղաղութեան դաշն կապեց:

Աշոտ մեռաւ Շիրակում, երբ վերադառնում էր Պօլսից, Լեոն կայսեր այցելութիւնից յետոյ:

Ս Մ Բ Ա Տ Ա. (892)

Աշոտին յաջորդեց իր որդին, Սմբատ Ա. որ մեծ սուգ կատարեց հօր մահուան վրայ: Հաղիւ նա թագաւոր էր դարձել, որ ասպտամբեցաւ Աբաս սպարապետը, բայց յաղթուելով, անձնատուր եղաւ: Սմբատ նորոգեց իր հօր կապած դաշինքը Լեոն կայսեր հետ: Պաշարեց Դուին քա-

ղաքը և գերի առաւ նրա մահմեդական իշխանին: Այս ամենը չէր կարող դուր գալ Աֆշին ոստիկանին, որ Ատրպատականից ահագին զօրքով մոտաւ Հալաստան և բանակեց Դուինի առաջ: Սմբատ թէպէտ անպատրաստ, Դողս գիւղի մօտ դուրս եկաւ ոստիկանի դէմ և յաղթելով քշեց նրան Հալաստանի սահմաններից:

Աֆշին ոստիկանն այնուհետեւ մտածեց նենգութեամբ փնասել Սմբատին: Նրա դրդմամբ Սմբատի դէմ ապստամբեց Աշոտ Արծրունի իշխանը, բայց ընտուեց և բանտարկուեց Գագիկ իշխանի ձեռքով: Նոյն ալդ Գագիկը դաւաճանութեամբ անցաւ թշնամու կողմը և մեծ փնաս հասցրեց Սմբատին, երբ սա պատերազմում էր Միջագետքի Ահմատ ոստիկանի հետ, Տարօնում:—Աֆշին նորէն մի քանի անգամ եկաւ Սմբատի վրայ, բայց չկարողանալով ոչ նրան բռնել, ոչ էլ մեծ աջողութիւն ունենալ, պատանդներ առնելով հառացաւ: Բազբատունիք հարկն ուղարկում էին Բաղդատ Ատրպատականի ոստիկանների ձեռքով:

Երբ Աֆշինին լաջորդեց նրա եղբայր Իւսուֆը, Սմբատին աջողուեց ազատուել նրա Գերիշխանութիւնից և հարկն անմիջապէս ուղարկել Բաղդատ: Սակայն, շուտով Իւսուֆը կրկին ձեռք բերաւ իր իրաւունքները և Սմբատից սաստիկ հարկեր պահանջեց:

Նախարարները նեղացած ալդ հարկերից, ապստամբեցան, բայց Սմբատ յաղթելով խեղդեց այդ ապստամբութիւնը:

Ալդ ժամանակն էր, որ Գագիկ Արծրունին թագստանալով Ատրպատականի ոստիկանից, թագաւորեց Վասպուրականում, միացաւ ոստիկանի հետ, եկաւ դաւաճանութեամբ տակն ու վրայ արաւ հալաստան: Սմբատի զօրքը շարդուեց և նրա Մուշեղ որդին գերի ընկաւ: Անպաշտպան մնացած ժողովուրդը մասամբ կոտորուեց, մա-

սամբ ապաստանեց լեռները: Սմբատ մի խումբ քաջերի հետ ապաւինեց Կապոյտ բերդը: Նրա քաջ զօրականները մի քանի անգամ յետ մղեցին ոստիկանի բանակը: Բայց Սմբատ հրկար պաշարումից և սովից նեղացած անձնատուր եղաւ ասն պայմանով, որ իր հետ բոլոր պաշարւածներին ձեռ չտան (913): Իւսուֆ խոստացաւ, բայց մի ամբողջ տարի բանտարկելուց յետոյ, սպանել տուաւ Սմբատին:

Ա Շ Ո Տ Ե Ր Կ Ա Թ (915—928)

Սմբատի անձնատուր լինելով գրեթէ ամբողջ Հայաստանն ընկաւ Իւսուֆի ձեռքը: Սմբատի որդին, Աշոտը, հօր մահուան վրէժն առնելու համար իր սակաւաթիւ զօրքերով յարձակուեց Իւսուֆի զօրքերի վրայ և ամեն տեղ յաղթելով հետզհետէ յետ գրաւեց իր հօր կալուածները: Նախարարները տեսնելով նրա աջողութիւնները, դուրս եկան իշենց բերդերից և Աշոտին թագաւոր նստեցրին (915):

Իւսուֆը նորանոր զօրքերով ու ասպատակներով սկսեց աւերել Աշոտի երկիրները: Նախարարները փոխադարձ կռիւներով ու դաւաճանութեամբ զբաղուած, չէին միանում թագաւորի հետ, որ ընդհանուր թշնամուհ դուրս քշէին երկրից: Երկիրը շարունակ պատերազմների և աւերածութիւնների պատճառով մնաց անմշակ, որին հետևեց մի սարսափելի սով. այն աստիճան, որ ծնողները մի պատառ հացի համար ծախում էին իրենց գաւակներին:

Յունաց կայսրը վերջապէս յիշեց իր քրիստոնէական պարտքը և Աշոտին Բիւզանդիա հրաւիրելով, նրան մի դունդ օգնական զօրք տուաւ:

Իւսուֆը, Աշոտի տան մէջ երկպառակտում քցելու համար, նրա հօրեղբօր որդուն, Աշոտ անունով, թագ տրւաւ և Հայաստանի թագաւոր կարգեց: Պատերազմն ան-

խուսափելի էր և երկու ազգական Աշոտներն անվերջ կռիւներով արիւնաքամ եղան, մինչև որ Յովհաննէս կաթողիկոսի երեք-չորս միջնորդութիւնից չետոյ հաշտութիւն կայացաւ Դըլինում մեծ հանդէսներով:

Գուգարաց Վասակ, Ուտէացոց Մովսէս և այլ մեծ ու փոքր իշխաններ, փորձեր արին ապստամբելու և ինքնագլուխ թագաւոր լինելու: Շատ ջանաց մանաւանդ թագաւորի եղբայր Աւստը, որ կամենում էր հարադատ եղբօրը սպանել, բայց բոլոր այս փորձերն և ապստամբութիւններն Աշոտ խեղդում էր հէնց բնում, արժանաւոր պատիժը տալով դաւաճաններին: Այս անվերջ պատերազմների և լւնասելի արութեան համար Աշոտ կոչուեցաւ *երկալով*:

Աշոտ իր թաղաւորութեան վերջին տարիները կրկին պատերազմի բռնուեց Բէշիր ոստիկանի հետ, որի ղօրքը Աշոտի և Գէորգ Մարգալտունու առաջնորդութեամբ հաւածուեց Հալաստանից. Աշոտ մեռաւ 928 թ.:

ԱՔԱՍ. ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱՅ, ՍՄՐԱՏ Բ. ԳԱԳԻԿ Ա.

Աշոտ մեռաւ անժառանգ. նրան յաջորդեց իր եղբայր Աբասը (928—951), որ աշխատեց խաղաղութեամբ կառավարել երկիրը. հաշտութիւն կապեց Դուինի և Ատրբպատականի ոստիկանների հետ, գերի հայերին աղատեց արաբների ձեռքից և բազմաթիւ աւեր գիւղ ու քաղաքներ նորոգեց: Երկիրն սկսաւ հանգստանալ և արհեստներն ու երկրադործութիւնն աճել ու զարգանալ:

Աբասի աթոռանիստը Կարս քաղաքն էր, ուր նա մի հոյակապ եկեղեցի հիմնեց (որ այժմ ռուսաց ձեռին մայր եկեղեցի է): Աբխազների Բեր թագաւորը ծաղրով իմաց տուաւ Աբասին, որ գալիս է նրա շինած եկեղեցին յոյն ծէսով օծել տալու: Աբաս Գէորգ Մարգալտունու հետ,

Կուրի ափին, ջարդեց Բեր թագաւորի զօրքը և գերի վերցրեց նրան: Աբաս իր շինած եկեղեցին ցոյց տալուց յետոյ, հրամայեց կուրացնել Բեր թագաւորին:

Աբասին յաջորդեց իր որդին, Աշոտ Գ. (952—977). Նա Շիրակը թշնամիներից մաքրելուց յետոյ թագաւոր օծուեց Անի քաղաքում, որ աֆոսեմէս դարձաւ Բագրատունեաց մայրաքաղաքը:

Աշոտի եղբայր Մուշեղը փառասիրութիւնից զրգուած իրեն թագաւոր հրատարակեց Կարսի (968): Հեռատես Աշոտը դժգոհութեան ոչ մի նշան ցոյց չտուաւ այս առթիւ, որով ազգամիջեան կռուի առաջն առաւ:

Աշոտ մեծ ուշադրութիւն դարձրեց երկրի ամրութեան վրայ, բերդեր շինեց և զօրքի թիւը հասցրեց 20,000 հոգու: Այս զօրքով նա զնաց Համտուն գօրայեւորի վրայ, որ ամիրապետից ապստամբելով, սպառնում էր Հայաստանի հարաւային սահմաններին: Աշոտ յաղթեց նրան և գերի առնելով, գլխատել տուաւ:

Յունաց Չմշկիկ կայսրը արաբաց դէմ գնալիս բանակեց Տարօն և սպառնում էր Հայաստանին: Աշոտ միացեալ հայ զօրքերով դուրս եկաւ նրա դէմ: Կայսրը տեսնելով նրա տհազին զօրքը, օգնութիւն խնդրեց Աշոտից և սուս ու փուս հեռացաւ Հայաստանից:

Այս արտաքին յաղթութիւններից աւելի, Աշոտ յայտնի դարձաւ իր ներքին բարեգործութիւններով. հիմնեց շատ եկեղեցիներ ու վանքեր, բաց արաւ բազմաթիւ հիւանդանոցներ և անկեղանոցներ, որոնց ապահովեց հարուստ հասոյթներով: Նա առանց աղքատների ու տնանկների սեղան չէր նստում, ուստի կոչուեցաւ Աշոտ Ողորմած:

Աշոտ Ողորմածին յաջորդեց իր որդին՝ Սմբատ Բ., որ իր 13 տարուայ թագաւորութեան ընթացքում մի անգամ միայն պատերազմեց իր հօրեղբօր, Մուշեղ թագա-

ւորի հետ: Մնացեալ ժամանակ նա խաղաղութեամբ շարունակում էր հօր շինարար գործերը, մանաւանդ զարգարելով ու մեծացնելով Անին:

Սմբատին յաջորդեց իր եղբայր, Գագիկ Ա.: Բազրատունեաց տունը սրա ժամանակ հասաւ իր փառքի գագաթնակէտին: Խոհեմ ու հմուտ, Գագիկի ջանքն եղաւ հեռու մնալ պատերազմներից և նուիրուել երկրի բարելաւութեանը: Նա իշխեց 30 տարի առանց պատերազմի, մի բան, որ կարելի է ասել չի տեսնուած մեր պատմութեան մէջ և այդ երեսուն տարիների ընթացքում հաշազն հանգիստ վայելելով, նուիրուեց շինարարութեան, և արուեստների:

Առևտուրը զարգացաւ, երկրագործութիւնն աճեց, քաղաքները մեծացան և հարստացան, զիւղերն ու աւանները շէնացան: Գագիկ հետեւելով իր պապերին, բազմացրեց զպրոցներն ու բարեգործական հիմնարկութիւնները: Նա մեռաւ 1020-ին:

Ա Ն Ի

Մի ժողովրդական առած կալ թէ՛ «ղիւնյա եխրլսա, Անի ետիար, Անի եխրլսա, զիւնյա ետիմազ»։ այսինքն, աշխարհն աւերուի՝ Անին կը շինի,—Անին աւերուի, աշխարհը չի շինի»։ Այնքան մեծ ու նշանաւոր է եղել մի ժամանակ Անին, որ կործանումից 500 տարի յետոյ ժողովուրդը չի մոռացել նրա փառահեղութիւնը, որ հէնց այսօր իր շինութիւնների նրբութեամբ և արուեստի գեղեցկութեամբ զարմանք է պատճառում կրոպացի ճամբորդներին:

Անին իր փառքի գագաթնակէտին հասաւ Սմբատ Բ.-ի և Գագիկի թագաւորութեան ժամանակ, որոնք օգտուելով երկրի խաղաղութիւնից, ամեն ջանք գործ դրին



ԱՆԻԻ ՊԱՐԻՍՊԵՐԸ

շէնացնելու և զարդարելու իրենց մայրաքաղաքը: Մինչև այսօր կանգուն են Անիի երկու կարգ զեղեցիկ և ամուր պարիսպները, և ներքին շինութիւններից Մայր-տաճարը: Ինչպէս Անիի մեծ մասը, այնպէս էլ այս տաճարի շինութիւնն սկսաւ Սմբատ և վերջացրեց Կատրամիտէ թագունին, Գագիկի կինը: Ամենանշանաւոր շէնքերն Անիում Տրդատ ճարտարապետի գործերն են:

Խիստ շատ էին Անիի մէջ եկեղեցիները, այնքան շատ, որ ժողովուրդը նրանց թիւը կարծում էր հազար և մէկ:

Բագրատունիք երբ Անին գնեցին Կամսարականներից, մի փոքրիկ բերդ էր միայն: Նա մայրաքաղաք դարձաւ Աշոտ Ողորմածի օրով 952-ին, իսկ Գագիկի մահուան տարին, 1020 թուին, արդէն պատրաստ էին նրա բոլոր գլխաւոր շէնքերը*):

*) Կարդաւ. «Հայ Հեղինակներ» եր. 203. «Դէպի Անի»:



ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Պրոֆեսսոր Մառի ջանքերի շնորհիւ այսօր բացուած են Գաղիկ թագաւորի արձանը, նրա շինել տուած եկեղեցին, Բագրատունեաց պալատը միջնաբերդում և ուրիշ այլ նշանաւոր հնութիւններ: Այս պեղումներից երևում է, որ ճաշակը, նրբութիւնը և հարստութիւնը Անիում հասած էր բարձր աստիճանի: Անիի նշանաւոր շէնքերի մեծ մասը դեռ հողի տակ է և ապագայ, պեղումներից յետոյ միայն պիտի պարզուի այդ հրաշալի քաղաքի անցեալ կեանքի մանրամասները:

ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՍՄԲԱՏ ԵՒ ԱՇՈՏ

Գաղիկ Ա.-ին յաջորդեց նրա աւագ որդին, Յովհաննէս Սմբատ, որ մի թուլասիրտ և դանդաղոտ մարդ էր: Նրա Աշոտ եղբայրը, ընդհակառակը, քաջ էր և ռազմասէր: Նա զօրք հաւաքեց, օգնութիւն ստացաւ Վասպուրականի

Թագաւորից և յարձակուեց իր եղբօր վրայ: Թագաւորի զօրքը պարտութիւն կրեց: Պետրոս կաթողիկոսի և նախարարների միջնորդութեամբ երկու եղբայրներն հաշտուեցան: Պարսից և Վրաց սահմանները լանձնուեցան Աշոտին, իսկ Անին իր շրջակայքով ֆնաց Թագաւորի իշխանութեան տակ այն պայմանով, որ նրա մահից յետոյ Թագաւոր պիտի դառնար Աշոտը: Սրանից էլ անբաւական, Աշոտ մի քանի անգամ թակարդներ լարեց եղբօր դէմ նրանից թագը խլելու համար, բայց անաջող:

Այդ ժամանակն էր, որ սկսուեցին Սելճուկեան թուրքերի յարձակումները Հայաստան, Տուղրիլ Բէկի առաջնորդութեամբ: Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը չարաչար չաղթուելուց յետոյ անկարող էր երկրորդ անգամ դուրս գալ Տուղրիլ-Բէկի դէմ, ուստի իր բոլոր երկիրները յունաց Թագաւորին տալով, փոխարէնն ստացաւ Սեբաստիա քաղաքը և տնով տեղով հաստատուեցաւ այնտեղ (1021):

Յունաց Վասիլ կայսրը Վրաստանը նուաճելուց յետոյ 1023 թ. մօտենում էր Հայաստանի սահմաններին: Վախկոտ և թուլամորթ Յովհաննէս-Սմբատը, որ ծածուկ օգնել էր վրաց Թագաւորին, վախեցաւ յոյներից և Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ձեռքով երդման թուղթ ուղարկեց, որ լանձն է առնում իր մահից յետոյ Անին կայսեր թողնել:

Վասիլին շուտով յաջորդեց Կոստանդին: Սա լինելով բարի մարդ, մահից առաջ լանձնում է Յովհաննէս-Սմբատի նամակը հայ Կիրակոս քահանային ասելով. «Տար տուր այս նամակը քո Թագաւորին և ասա, որ չեմ ուզում ուրիշի սեփականութիւնը չափշտակել»:

Դաւաճան քահանան չկատարեց կայսեր կամքը, այլ նամակը մօտը պահելով, թանգ քնով ծախեց նրա յաջորդ Միքայէլ կայսեր (1034-ին):

Գ Ա Գ Ի Կ Բ.

Շուտով մեռան Յովհաննէս-Սմբատ և իր եղբայրն Աշոտ: Ժառանգ մնաց Աշոտի փոքրահասակ որդին, Գագիկ: Երկիրը մնաց անտէր և դարձաւ նախարարների ու արտաքին թշնամիների կռուի ասպարէզ: Շուտով հասան և կայսեր զեսպանները, որոնք պահանջում էին Անին յանձնել յունաց:

Միացեալ նախարարները մերժեցին այս պահանջը: Յոյները երեք անգամ հայաստան մտան, առանց իրենց նպատակին հասնել կարենալու: Չորրորդ անգամ 100,000 հողով նրանք պաշարեցին Անին: Դրութիւնը վտանգաւոր էր, բայց Վահրամ Պահլաւունի սպարապետը 30,000 զօրքով յարձակուեց յոյների վրայ. որոնք 20,000 մեռած ու վիրաւոր թողնելով, սարսափահար յետ փախան:

Անի մայրաքաղաքում այդ ժամանակ միմեանց հետ կռուի մէջ էին երկու կուսակցութիւն. մինի գլուխն էր Վեստ-Սարգիս-Սիւնի իշխանը, որ տէրութեան խնամակալն էր և շատ բերդեր ու գանձեր գլուխուց յետոյ, կամենում էր ինքը թագաւոր դառնալ և կամ հայոց թագը յունաց յանձնել: Միւս կուսակցութեան գլխաւորն էր Վահրամ Պահլաւունի սպարապետը, որ կամենում էր թագը յանձնել Աշոտի որդուն, իսկալսն թագաժառանգին: Այս յաղթութիւնից յետոյ Վահրամ իշխանը բերել տուաւ Գագիկին Անի և Պետրոս Գեառգարձ կաթողիկոսը օծեց նրան թագաւոր (1042):

Վեստ Սարգիս ամրացաւ Անիի Միջնաբերդում: Երիտասարդ թագաւորն առանց թիկնապահի, մենակ, դնաց նրա մօտ և համոզեց հեռանալու: Ապա տեսնելով նրա հարագործութիւնները, բռնեց նրան և բանտարկեց Անիում: Սակայն Վեստ Սարգիս քաղցր ու կեղծաւոր լեզուով գրաւեց երիտասարդ թագաւորի սիրտը և նրա իսկա-

կան բարեկամներին հեռացրեց ու թշնամացրեց թագաւորին, միւս կողմից էլ յոյներին դըդեց, որ շարունակեն իրենց պահանջները:

Սակայն Գագիկը երկու անգամ չարաչար կոտորելով Մոնոմախոս կալսեր զօրքը, յետ դարձրեց ձեռնունան:

Կայսրը դիմեց խորամանկութեան: Նա Գագիկին հրաւիրեց Կ.-Պօլիս մշտական դաշն կապելու համար, դեսպանների ներկայութեամբ իրաչի ու աւետարանի վրայ երգւեց, մնաս չտալ նրան: Գագիկ չէր վստահանում, բայց Վեստ Սագսի կուսակիցներն ու Պետրոս կաթողիկոսը համոզեցին Գագիկին երթալու և նրան ապահովելու համար երգման թուղթ գրեցին: Գագիկ չլսեց Պահլաւունիներին և դնաց Պօլիս: Կայսրը նրան մեծ պատուով ընդունեց բայց երբ Գագիկ յանձն չառաւ Անին նրան տալու, Գագիկին քսոտեց Ոսփորի կղզիներից մինը:

Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, որին Գագիկ յանձնել էր Անիի բանալիները, բանակցութեան մէջ մտաւ կալսեր հետ և մեծ վարձատրութիւն ստանալով, Անիի քառասուն բալանիներն ուղարկեց կալսեր:

Գագիկ յուսահատուած թուղթ ստորագրեց, որ հրաժարուում է իր թագաւորութիւնից և փոխարէն ստացաւ Կապադովկիոյ Բիզու քաղաքը (1045 թ.):

Յոյն զօրքերն եկան Անին տիրելու, բայց դռները փակ գտան: Հայ զօրքը քաղաքացիների հետ միացած յարձակուեց յունաց վրայ, ջարդեց և հալածեց նրանց: Սակայն շուտով բոթը հասաւ, որ Գագիկ հրաժարուել է թագաւորութիւնից: Անին սուգ մտաւ և յոյները յետ կանչուեցան քաղաքին տիրելու:

Հայ իշխաններն իրենց անմիաբանութեան պտուղը չարաչար վայելեցին: Յոյները նախ աշխատեցան ցրուել հայ զօրքը և տիրել նշանաւոր բերդերին: Այնուհետեւ նւրանք ծանր հարկերով սկսան քամել ժողովրդի արիւնը:

Որպէս զի ապստամբելու առաջն առնեն, նրանք մի կողմից հալածոււմ ու կոտորոււմ էին հայ իշխաններին, միւս կողմից թունաւորոււմ կամ բանտարկոււմ: Պետրոս Գետադարձ կաթողիկոսին էլ բռնեցին և Պօլիս ուղարկեցին:

Միւս կողմից Տուղրիլ Բէգը, տեսնելով Հայաստանի անտէր մնալը. յարձակուեց Հայաստան, առաւ Սմբատաբերդը, և բնակիչներին սրի քաշեց: Տիրեց Արծն բաղաւթին, որ 150,000 բնակիչ ունէր և կոտորեց ու թալանեց բոլորին: Տիրեց այնուհետև Արծկէ քաղաքին և սրի անցկացրեց բնակիչներին: Տուղրիլի զազանութիւններից ազատ մնաց Մանազկերտը, որ պաշտպանուեց մի քահանայի և մի ֆրանկ քիմիկոսի հնարքով, որոնք թուլացնում և այրում էին թշնամու բաբանները (սլաշարման գործիքներ):

Տուղրիլի զազանութիւնները շարունակեց նրա եղբայր Ալիասլան, որ Անին առաւ շնորհիւ հայ իշխանների թուլասրտութեան և կործանեց (1064):

Ալիասլան դեսպան ուղարկեց Կարս, Գազիի թագաւորին, որ դայ և հպատակի: Գազիկը սուգի շորերով և ողբալով բնդունեց դեսպաններին, ասելով, որ սգում է իր բարեկամ Տուղրիլի մահը: Այս բանը շարժեց Ալիասլանի զութը և նա անմիաձ թողեց Գազիկին: Սակայն, Գազիկն էլ, միւս հայ իշխանների նման իր երկիրն յունաց ասլով, փոխարէնն ստացաւ Փոքր-Հայոց Ծմբաւ բերդը:

Շուտով Ալիասլան տիրեց ամբողջ Հայաստանին և սկսաւ սպառնալ Յունաստանի սահմաններին:

Այսպիսով յայնքը ոչ միայն չկարողացան Հայաստանն իրենց ձեռում պահել, այլ հայերի փոխանակ, իրենց դէմ ստեղծեցին մի կատաղի և վտանգաւոր թշնամի:



ՄԱԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Բազրատունեաց թագաւորութեան վերջին շրջանում, ԺԱ. դարու վերջերը, հայաստանում՝ հայ ժողովրդի, ինչպէս և իշխանների կացութիւնն անտանկի էր: Արաբների, յոյների և սելճուկ թուրքերի յարձակումները միաժամանակ, հայ մանր թագաւորների և նախարարների անմիաբանութիւնը, փոխադարձ նախանձն ու կռիւներն այն աստիճանի հասան, որ այլևս անկարելի էր բնիկ հայաստանում մնալը: Ուստի՝ ինչպէս տեսանք, շատերը հայ իշխաններից և թագաւորներից թողնելով իրենց բնիկ երկիրները յոյներին, տեղափոխուում էին դէպի արևմուտք, Փոքր-Ասիայի խորքեր, որոնքով բնակութեան տեղի ապահով տեղեր: Այդ երկիրների մէջ ամենից նպաստաւորն իր զիրքով Կիլիկիան էր, Միջերկրականի ափին տարածուող լեռնաշղթան: Կիլիկիան բաժանւում է երկու մասի. ծովափնեայ կամ դաշտային, որ վերին աստիճանի տաք ծովային կլիմա ունի և պտղաբեր մի երկիր է, և քարային կամ լեռնային, որ բարձր ու ապահով զիրք ունի և իշխում է դաշտային Կիլիկիայի վրայ, թէպէտ ցուրտ է և անբերրի: Այդ լեռնային Կիլիկիայում զարեից ի վեր ապաստանել էին հայ գաղթականներ, որոնց թիւը հետզհետէ աճելով, 10-11 դարերում գրեթէ յոյներին և ասորիներին հաւասար վանքեր ունէին:—

Ի նկատի ունենալով այդ երկրի վերին աստիճանի ապահով զիրքը, հայ իշխաններից ոմանք բնակութիւն էին հաստատել և հետզհետէ բնդարձակում էին իրենց երկիր-

հերն ի հաշիւ յունաց: Այդտեղ հաստատուեց Գաղիկ Բ.-ի ազգական Ռուբէն իշխանը, 1080-ին, բարձր բերդի մօտերը, Գոռմոզով գիւղի մէջ: Շնորհիւ իր խելքի և քաջութեան՝ նրա մօտ խմբուեցան բաւականաչափ հայեր, որոնց օգնութեամբ նա տիրեց շրջակայքին և մաքրեց յոյներէից: Ռուբէնի ջանքն եղաւ անուհետեւ մի կողմից հայ ժողովրդով բնակեցնել իր լեռնոտ երկիրը, միւս կողմից իր դիրքն ամրացնել շրջակայ հայ իշխանների աջակցութեամբ և բարեկամութեամբ: *Կոստանդինը. (1095)* Ռուբէնի որդին և յաջորդը՝ հօր երկիրներն ընդարձակեց նոր պատերազմներով և իր աթոռն հաստատեց Վանկայ բերդում:

Սրա ժամանակ էր, որ արեւմտեան քրիստոնեայ ազգերը (կրօպացիք) մեծ բազմութեամբ յարձակուեցան Եգիպտոսի մահմեդական իշխանների վրայ, նրանց ձեռից Նրուսաղէմն աղատելու նպատակով: Այդ պատերազմներն լպտնի են խաչակրաց արշաւանք անունով: Կոստանդինը ուղղակի յարաբերութեան մէջ մտաւ նրանց հետ և ամեն տեսակ օգնութիւն ցոյց տուաւ խաչակիրներին պաշարով ու զօրքով: Խաչակիրներն էլ գնահատելով Կոստանդինի ծառայութիւնը, Մարկիպի տիտղոսը տուին նրան:

Թ Ռ Ր Ո Ս Ա.

Կոստանդին (1100) մեռնելով, իշխանութիւնը թողեց իր Թորոս որդուն: Սա պատերազմի բռնուեցաւ յունաց կայսեր հետ և Անարգաբայ բաղաքն իր գաւառով խից յոյներէից: Սելճուկեան թուրքմէններն երկու անգամ անագին բազմութեամբ յարձակուեցան և թալանեցին Թորոսի տիրած երկիրները: Գող-Վասիլ կոչուած իշխանը, Թորոսի եղբայր Լեոնի հետ երկու անգամին էլ դուրս քշեց ասպատակներին իր երկրի սահմաններից:

Թորոս անուհետե սկսաւ իր սահմաններն ընդարձակել գնալով դէպի հիւսիս, մինչև Կապադովկիա: Այնտեղ Կիլիկիոյ բերդում դեռ իշխում էին յոյն Մանգալեան եղբայրները, որ սպանել էին Բագրատունի վեջին թագաւոր Գագիկին: Մանգալեան եղբայրներն ընձաներով դուրս եկան Թորոսին ընդառաջ, բայց Թորոս յետ դարձրեց ներանց ընձաները և պաշարելով, տիրեց բերդին:

Երբ բերդի գանձարանից դուրս եկան Գագիկ թագաւորի սուրն ու հաղուստը, հայերն ամենքը լաց եղան: Թորոս Մանգալեան եղբայրներից մինին սպանել տուաւ իսկ միւսին գերի տարաւ, լուծելով սպանուած թագաւորի վրէժը:

Թորոս մեռաւ անզաւակ, ուստի նրան յաջորդեց իր եղբայր, Լեւոն Ա. 1123-ին: Սա շարունակեց իր նախորդների նուաճումները. յոյներից իլեց Մամեստիան և տիրեց Տարսոն մայրաքաղաքին, որով գրեթէ տէր դարձաւ ամբողջ Կիլիկիային: Լեւոն դաշն կապելով թուրքերի հետ, գնաց Անտիոքի վրայ: Մի քանի տարի յետոյ, Անտիոքի իշխանը, Բոհեմոնտ, խորամանկութեամբ Լեւոնին ղերի բռնեց: Գերութիւնից ազատուելու համար Լեւոն Բոհեմոնտին տուաւ Ատանա և Մամեստիա քաղաքները, 60,000 դահեկան փրկանք և մի ուղին իբրև պատանդ:

Սակայն, պատերազմով յետ խլեց թէ տուած քաղաքները և թէ պատանդը:

Լեւոնը շուտով պատերազմի բռնուեց Յովհաննէս Կոմնենոս կայսեր հետ, կամենալով պաշտպանել արդէն դաշնակից Անտիոքին: Կայսրն Անտիոքը թողնելով մտաւ Կիլիկիա, հետզհետէ նուաճեց ամբողջ Կիլիկիան և պաշարեց Վանկան, Լեւոնի աթոռանիստը: Կայսրը նրան երկու ուղիով հետ՝ Ռուբէնի և Թորոսի, շղթայակապ ուղարկեց Կ. Պօլիս: Յոյները նախ կուրացրին Ռուբէնին, ապա սպանեցին: Որդու այս տանջանքների վրայ սրտի ցաւից մեռաւ Լեւոն բանդի մէջ շղթայակապ:

Թ Ո Ր Ո Ս Բ. և Կիլիկիայի կրկին նուաճումը:

Լևոնի գերի փնտլուց չեսոյ Կիլիկիան ընկաւ յունաց ձեռքը, որոնք չարաչար կողոպտեցին թէ՛ ժողովրդին և թէ՛ նրա վանքերն ու սրբութիւնները: Միւս կողմից թուրքերն ու լատին իշխաններն սկսան տիրել Թորոսի երկիրներին: Կոմնենոս կայսրը կրկին արշաւեց Կիլիկիա, ուր նա սպանուեց պատերազմելիս: Կայսեր հետ Կիլիկիա էր եկել և՛ Թորոսը, Լևոնի որդին, որ հօր մահից չեսոյ ծառայում էր կայսերական բանակում: Օգտուելով կայսեր մահից, նա հեռացաւ բանակից և մի հայ քահանայի օգնութեամբ իր չորս կողմն սկսեց հաւաքել հայերին, որոնք սաստիկ զոռեւել էին յոյներից: Շուտով Կիլիկիա եկան Թորոսի եղբայրները, Ստեփան ու Մլէհ և Թորոսի զօրքի թիւն հասաւ 10,000 հոգու (1145): Թորոս ամենից առաջ տիրեց հայրենի Վանկա բերդին, ապա միւս լեռնային ամրութիւններին: Այնուհետեւ իջաւ գաշտ և սկսաւ հետզհետէ զբաւել Ատանա, Անարգարա, Մամեստիա և այլ նշանաւոր քաղաքներ ու ամրոցներ:

Կիւմանուէլ կայսրը իր ազգական Անդրոնիկոսին ուղարկեց Թորոսի դէմ: Սա մը քանի հայ իշխանների հետ միասին պաշարեց Մամեստիան, ուր ամրացած էր Թորոսը: Թորոս հաշտութիւն խնդրեց, խոստանալով ճանաչել կայսեր ղերիշխանութիւնը, սակայն Անդրոնիկոս պահանջում էր անձնատուր լինել, որպէսզի Թորոսին կապեն իր հօր շղթաներով: Մի մութ և անձրևային գիշեր Թորոս պատուելով պարիսպը, անցաւ թշնամու յետևը, սարսափելի ջարդ տուաւ և փախցրեց թշնամուն: Հասարակ գերիներին նա ազատ արձակեց իսկ անուանի յոյներից մեծ փրկանք սուաւ և բաժանեց իր զինուորներին: Գերիների մէջ էր և Լամբրոն բերդի տէր հայ իշխան Օշինը, որ փրկանքի կէսը տուաւ, մէկ էլ իր հեթում որդուն իբրեւ պատանդ:

Լամբրոնի իշխանները թէպէտ սկզբում օգնեցին Ռուբինեաններին, բայց վերջերը շարունակ հակառակ էին նրանց:

Թորոսը մեծացնելով հեթումին իր պալատում, շատ սիրեց նրան և իր աղջիկը տուաւ նրան կնուեցան՝ ապա երկուսին էլ ուղարկեց Լամբրոն: Սշինի ֆնացած պարտքն էլ նա հաշուեց իբրեւ օժիտ իր աղջկանը, այլևս չպահանջեց կամենալով նրան բարեկամացնել իր տան հետ:

Իկոնիայի սուլթան Մադսուտը երկու անգամ յարձակուեց Թորոսի վրայ, Մանուէլ կայսեր դրդմամբ, բայց երկու անգամին էլ յետ դարձաւ ձեռնոռնայն: Վերջին անգամը նրա զօրքերը սարսափելի ջարդ կրեցին ժանտախտից և Թորոսի եղբայր Ստեփանէից թիւ ամբոյցի մօտ: Թորոսի զօրքերն անպատիժ չթողնելու համար մտել և ասպատակել էին Սուլթանի երկիրները (1154):

Մանուէլ կայսրն էլի չհանգստացաւ խաղաւանքից. նախ Թորոսի ղէմ լարեց Անտիոքի ինամակալ Շառիլիօնին, ապա, ուղարկեց իր սեփական զօրքերը, որոնք չառաջարկաթուեցան Տարսոնի մօտ, դերի տալով իրենց զօրավարին:

Այս անաջողութիւններից յետոյ կայսրը խորամանկութեան դիմեց. լուր տարածելով թէ թուրքերի ղէմ պատերազմի է գնում, իջաւ Կիլիկիա և եկաւ Տարսոնի վրայ:

Մի լատին ուխտաւոր իմաց տուաւ Թորոսին յունաց դաւաճան վարմունքը և անպատրաստ Թորոսն ապաստանեց հայրենի լեռները: Կայսրը գրաւեց երկրի նշանաւոր քաղաքները: Այդ ժամանակ նրան անցի եկաւ Երուսողէմի Բալտուին Գ. թագաւորը: Սա հաշտեցրեց Թորոսին և կայսեր: Անապարքաւ և Մամեստիա քաղաքները մնացին կայսեր, իսկ Թորոս հաստատուելով իր իշխանութեան մէջ, ստացաւ Պանսեպաստոս տիտղոսը:

Թորոս շարունակ օգնում էր երոպացի խաչակիրներին ընդդէմ մահմետական սուլթաններին. նրա եղբայր

Ստեփանէն Իկոնիայի և Սերաստիայի սուլթաններէից հոգեր զրաւելով Սև լերան կողմը մի փոքրիկ իշխանութիւն հաստատեց: Կայսեր յոյն տեղակալը, որ նստում էր Մամեստիա, նախանձելով, ճաշի հրաւիրեց Ստեփանէին և եռացրած կաթսայի մէջ քցելով՝ կենդանի խաշեց նրան:

Այս դադառաբարոյ վարմունքը զայրացրեց Թորոսին ու Մլէհին, որոնք վրէժ լուծելու համար 10,000 յոյն կոտորեցին: Անդրոնիկոսը կայսեր հրամանով զարձեալ Կիլիկիա եկաւ, բայց Թորոս նրան ջարդելով փախցրեց: Նրա յաջորդ Կոստանդին Կատամանոս գերի ընկաւ Թորոսի ձեռքը իայտատակ պարտութիւնից յետոյ: Այս պատերազմների շնորհիւ Կիլիկիան ընդմիշտ գուբս եկաւ կայսեր ձեռից և զարձաւ մի անկախ հալիական իշխանութիւն:

Թորոսի որդին, Ռուբէնը, ղեռ անչափահաս էր. ուստի Թորոսը մահից առաջ (1168) իր աներոջ Թոմասին նշանակեց իր իշխանութեան Պայլ-խնամակալ:

Մ 1, Է, Հ (1170—1175)

Յօր գելութեան պատճառով Մլէհ մեծացաւ անխնամ և անկիրթ. նախ նա քաջութեամբ օգնեց իր եղբոր բարձրանալուն. ապա մտնելով տաճարական ասպետների կարգն, ընդունեց կաթողիկոսութիւն, այնուհետև ղառնալով մահմեդական անցաւ թափառական թիւրքմէնների զլուխը և կամենում էր սպանել հարազատ եղբորը: Թորոս նրան ներեց և Մլէհ այնուհետև ապրում էր Նուրէդդին սուլթանի մօտ:

Թորոսի մահից յետոյ Նուրէդդինի օգնութեամբ Մլէհ տիրեց Կիլիկիային և իր գազանաբարոյ վարմունքով ահ ու սարսափ տարածեց ամեն կողմ: Կողոպտեց իր հակառակորդներին և հոգևորականներին:

Թոմաս պալլը Ռուբէնին փախցրեց Անտիոք, այնտե-

ղից էլ ուղարկեց Ներսէս Շնորհալու մօտ, Հռոմկլայ, ուր և մեռաւ Ռուբէնը: Մլէհ Կիլիկիայից դուրս քշեց բոլոր տաճարականներին և նրանց կալքը գրաւեց. Երուսաղէմի թագաւորների դեսպաններին կողոպտեց, որոնք գնում էին կալսեր մօտ: Որքան թշնամի, հալառակորդ և հալածող էր քրիստոնեայ խաչակիրներին, այնքան Մլէհ բարեկամ էր մահմետականներին, մասնաւորապէս Նուրէ դդին սուլթանին: Հայ իշխանները զգուած ու ձանձրացած նրա վարմունքից, սպանեցին նրան Սիւ քաղաքում 1175-ին:

Իշխանների ցանկութեամբ Մլէհին յաջորդեց Ստեփանէի որդին, Ռուբէն Բ.: Սա իր հեզ ու խելօք բնաւորութեամբ մոռանալ տուաւ Մլէհի չարագործութիւնները և գրաւեց ժողովրդի սէրն ու յարգանքը:

Սրա ժամանակ Լամբրոնի իշխան Հեթումը կրկին գլուխ բարձրացրեց, որ Թորոսի մահից յետոյ ասելութիւնից հեռացրել էր իր կնոջը: Ռուբէն պաշարեց Լամբրոնը: Հեթում դիմեց Անտիոքի իշխան Բոհեմոնդի օգնութեան: Սա խալէութեամբ հրաւիրեց Ռուբէնին Անտիոք, բանաւորեց նրան և ուզում էր Կիլիկիային տիրել: Սաղայն Լևոն, Ռուբէնի եղբայրը, դուրս եկաւ նրա դէմ, Բոհեմոնդի առաջն առաւ, Հեթումին ստիպեց հաշտութիւն խնդրել և ազատել տուաւ եղբօրը գերութիւնից: Քիչ ժամանակից Ռուբէն վանք քաշուելով կառավարութիւնն շանձնեց իր եղբօրը, Լևոնին:

ԼԵՒՈՆ Բ. ԹԱԳԱՒՈՐ 1185—1219

Հազիւ կառավարութիւնն իր ձեռն էր առել Լևոն, որ ստիպուած եղաւ Իկոնիայի Ռուստէմ սուլթանի դէմ դուրս գալու: Լևոն Պատերազմից յաղթող դուրս եկաւ իսկ Ռուստէմը մեռաւ: Լևոնի վրայ եկան Հալէպի և Դամասկոսի սուլթանները միաբան, որոնց նոյնպէս ջարդեց

և յետ դարձրեց Լեւոնը ձեռնուհանդէս (1187):

Այս յաղթութիւններէց յետոյ Լեւոն ամրացնելով երկրի սահմանները, նուիրուեց երկրի տնտեսական և բարոյական բարդաւաճումին. հիմնեց բազմաթիւ վանքեր, ուր այն ժամանակ տրուում էր ուսում ու կրթութիւն. հաստատեց որբանոցներ ու հիւանդանոցներ: Ամեն կերպ նպաստեց առևտրի,



Լ Ե Ն Ո Ն Բ.

երկրագործութեան և արուեստների զարգացմանը, որով թէ՛ իր ժողովրդի դրութիւնը բարւոքեց և թէ՛ օտարների առաջ պատկառելի դարձաւ: Լեւոնի երկիրներն ընդարձակ էին, հարուստ և ամեն կողմից ապահոված. մի թաղաւորական թագ էր պակաս նրան, այդ էլ նա շուտով ստացաւ:

Այդ ժամանակ Եգիպտոսի սուլթան Սալահզզին Երուսաղէմը խլել էր խաչակիրների ձեռքից: Գերմանացի կայսր Ֆրիդրիկոս բարբարոսան (շիկամօրուս) նոր արշաւանք կազմակերպեց և եկաւ հասաւ Իսաւրիա: Լսելով Լեւոնի համբաւը, կայսրը նրանից օգնութիւն խնդրեց, փոխարէնը խոստանալով թագ: Լեւոն իր նախորդների պէս մեծ պաշար ուղարկեց կայսեր զօրքերի համար. խոստա-

ցաւ ամեն կերպ օգնել նրան և Գրիգոր կաթողիկոսի ու ներսէս Լամբրոնացու հետ ընդառաջ զնաց կայսեր զիմամաւորելու: Սակայն, Կայսրը լողանալիս խեղդուեց Կալիկատնոս գետում և Լեոնի փափազը մնաց առժամանակ անկատար: Կայսեր յաջորդը, պապի հետ միասին, մի քանի տարի յետոյ թագ և առիւծանշան դրօշ ուղարկեցին Լեոնին: Տարսօնում, 1198 թ. Լեոն ձեռնադրուեց թագաւոր Գրիգոր Զ. կաթողիկոսի ձեռքով: Ամեն կողմից մեծամեծ ընծաներով շնորհաւորեցին Լեոնի թագաւոր օծւիլը. նոյն իսկ յունաց կայսրը թագ ուղարկեց Լեոնին, որով ձանաչեց նրա իշխանութիւնը Կլիկիայի վրայ:

Լեոն մայրաքաղաքը տեղափոխեց Սիս*) աւելի տպահովութեան համար: Այնուհետև աշխատեց ևրոպական կարգ ու կանոն մտցնել ինչպէս պալատում, այնպէս և երկրի մէջ: Հիմնեց դպրոցներ, դատարաններ, առևտուրը զարգացնելու համար Վենետիկոց ու Ջենովացոց տուաւ հրովարտականք, որ մինչև այժմ պահուած են: Լեոն մօտիկ յարաբերութիւն և բարեկամութիւն հաստատելով Ներոսպոցոց հետ, իր երկիրն ապահովեց յոյներից: Սակայն, Ներոսպոցիք էլ աշխատում էին կաթողիկոսութիւն տարածել և երկպառակտել հայ ազգը: Ոմանք հայերից յարեցան կաթողիկոսեան, բայց արևելեան հայերը կատարի կռիւ սկսեցին դրա դէմ և հայ եկեղեցին ազատեցին կաթողիկոսեան գիրկն ընկնելուց:

Եւ լեւոն թագաւոր էս ց

*) Կարդալ. «Հայ Հեղինակներ» «Զրօրհնէքը Լեոնի օրով»:

Անտիոքի ժառանգութեան համար Լևոն 12 տարի պատերազմ ունեցաւ, որից դուրս եկաւ յաղթութեամբ: Անտիոքի ժառանգն էր Լևոնի եղբոր թոռը, Ալիզա աղջկանից, Ռուբէնը: Սակայն նրան հակառակորդ դուրս եկաւ և դաւաճանութեամբ իշխանութիւնը խլեց իր հօրեղբայրը, Բոհեմոնտ: Լևոն Անտիոքին տիրելով կրկին իշխան կարգեց իր աղագականին: Կրկին նրա հօրեղբայրը հալածեց Ռուբէնին Անտիոքից և Իկոնիայի սուլթանին Լևոնի վրայ ուղարկեց: Լևոն սրան էլ ջարդեց և գործը խաղաղութեամբ վերջացնելու համար հռոմի պապին յանձնեց: Պապի կողմից գործը քննելու եկան երկու կարդինալներ, որոնցից մինը կաշառուած հակառակորդից, Լևոնի դէմ նշուիք ու բանադրանք հրատարակեց: Զայրացած Լևոնն առանց սպասելու դատի վախճանին, նորից յարձակմամբ տիրեց Անտիոքին: Նա մեծ հանդիսով Ռուբէնին հաստատեց իր տեղում և այսպիսով վերջ տուաւ 12 տարուայ արիւնհեղութեան:

Լևոնի երկրորդ կինը Կիպրոսի իշխան Լուսինեաններից էր: Երբ Լևոն այցելութեան գնաց իր աղագականներին և միամիտ յետ էր դառնում, թշնամիներն յարձակուեցան նրա վրայ: Լևոն ազատուեց նրանց ձեռից, ապա նոր պատրաստութեամբ յարձակուելով՝ նրանց նաւերը ոչնչացրեց իսկ զօրքը կոտորել տուաւ ու ցրուեց: Լամբրոնի տէր Հեթումն էլ օգտուելով Լևոնի բացակայութիւնից ապստամբել էր: Լևոն նրան էլ բռնել տուաւ և բանտարկեց:

Շատ ժամանակ չանցած՝ Հալէպի սուլթանը Լևոնից պահանջեց հաբկ և հպատակութիւն, սա առանց ժամանակ կորցնելու յարձակուեց նրա վրայ, ջարդեց սուլթանա զօրքը և ստիպեց նրան իր պահանջած հարկից աւելի տուգանք վճարել:

Լևոնը թագաւորեց 34 տարի Ռուբինեան փոքրիկ իշխանութիւնը դարձնելով թագաւորութիւն և հասցնելով

իր փառքի գազաթնակէտին, մեռաւ 1219-ին: Մարմինը թաղուեց Սիս մալրաքաղաքում:

ԶԱՊԷԼ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍ. ՀԵԹՈՒՄ Ա. ԼԵՒՈՆ Գ.

Լևոն արու զաւակ չունենալով ժառանգ էր նշանակել իր Զապէլ աղջկանը Աղամ Պայլի և Կոստանդին պարոնի խնամակալութեամբ: Ռուբէն-Ռալմոնդը, Լևոնի ազգականը, կամենալով թագը իրել Զապէլից, Ուշակիրների օգնութեամբ տիրեց Տարսոնին և թագաժառանգ հրատարակեց իրեն: Կոստանդին պարոնը թագաւորական զօրքով յաղթեց նրան և գերի առնելով բանտարկեց: Նալ իշխանների խորհրդով նա Զապէլին ամուսնացրեց Անտիոքի իշխան Բոնեմոնտ Միսկանի որդու Փիլիպպոսի հետ այն պայմանով, որ հայ եկեղեցու կարգերն ընդունէ և պահպանէ (1232): Փիլիպպոսը հաւատարիմ չմնաց իր խոստման և հայերին արհամարհելով միտքը դրեց գանձերն Անտիոք ուղարկելուց յետոյ ինքն էլ փախչել կնոջ հետ: Կոստանդին վրայ հասաւ, բռնեց նրան ճամբին և բանտարկեց, ուր և նա մեռաւ:

Այնուհետև Կոստանդինը կաթողիկոսի և հայ մեծամեծների համաձայնութեամբ Զապէլին ամուսնացրեց իր որդու Հեթումի հետ, որի օծումը տեղի ունեցաւ 1236-ին: Այսպիսով Կիլիկիայի Ռուբինեան տոհմը խնամիրացաւ Պապեռօսի Հեթումեանների հետ և իշխանութիւնն անցաւ այս վերջինին:

Տէրութիւնը կառավարում էր Հեթումի խելօք ու փորձառու հայրը. զօրքի գլուխն կանգնած էր Հեթումի եղբայր Սմբատը:

Հեթումի ժամանակ արդէն սկսուել էին թաթարական արշաւանքները, որոնք եկան հասան Իկոնիա և յարձակուելով Սուլթան Այասէդդինի վրայ, յաղթեցին նրան:

Ղայասէղդինն ասպանութեան համար իր ընտանիքն ուղարկել էր Հեթումի մօտ:

Հեթումը տեսնելով թաթարներէ աջողութիւնը, Բաշու զօրավարի հետ դաշն կապեց մահմետականների դէմ: Դաշնադրութիւնը կայացաւ այն պայմանով, որ Հեթումը պիտի Բաշուին յանձնէր Ղայասէղդինի ընտանիքը:

Ղայասէղդին վրէժ լուծելու համար Լամբրոնի Կոստանդին իշխանի հետ յարձակուեց Հեթումի վրայ: Հեթում յաղթեց թշնամիներին, սուլթանն սպանուեց, իսկ Լամբրոնի իշխանն ստիպուեց խոնարհուել թաղաւորի առաջ:

Թաթարաց հետ կապած դաշը հաստատուն անելու համար Հեթում թաթարստան ուղարկեց նախ իր եղբօրը, ապա գնաց ինքն անձամբ, Մանդոյ խանին տեսութեան (1253): Խանը նրան մեծ պատուով ընդունեց և մշտական դաշն կապեց: Հեթումի ճամբորդութիւնը երեք ու կէս տարի տևեց: Հեթումի հետ եկաւ Մանգոյ խանի եղբայր Հուլաղուն, որ զնաց ասորոց կողմերը, իսկ Հեթումն յարձակուեց Սուլթան Ազէղդինի վրայ, որը տիրել էր Հեթումի մի քանի քաղաքներին, յաղթեց նրան և Իսաւրիան գրաւեց ամբողջովին:

Այնուհետև Հեթում 40,000 հետևակ և 12,000 հեծեալ զօրքով Հուլաղուն օգնութեան գնաց Վալէպի սուլթանի դէմ: Քաղաքն առնելով, սուլթանին գերեցին և երկիրները բաժանեցին:

Այդ ժամանակ Հուլաղուն Մանդոյ խանի մահուան բօթն առնելով շտապեց Պարսկաստան: Ֆնախտար Եգիպտոսի սուլթանն այս դէպքից օգտուելով թաթարներին յաղթեց և Հեթումից հարկ պահանջեց: Հեթում շտապեց թաթարստան օգնութիւն խնդրելու, իսկ զօրքը յանձնեց իր Թորոս և Լևոն որդիներին:

Թորոս մեռաւ սլաւերազմում իսկ Լևոն գերի ընկաւ:

Եգիպտացի Մամեկուքները բար քարի վրայ չթողին Կիրիկիայում. մինչև անգամ թագաւորների ոսկորներն հանեցին և այրեցին: Հեթումը վերադարձին միայն սուգ ու աւերած դտաւ, մեծ վիշտ պատճառեց նրան մանաւանդ մի որդու մահը և միւսի գերութիւն:

Որդուն գերութիւնից ազատեց տալով Հալէպը^{*)}. ապա ծերացած ու ձանձրացած աշխարհից, նա կառավարութիւնն յանձնեց Լեոնին և քաջութեամբ վանք: Հեթում մեռաւ 44 տարի թագաւորելուց յետոյ 1270:

Լ Ե Ի Ո Ն Գ. (1270—1289)

Հօր մահն աչնբան ծանր ազդեց Լեոնի վրայ, որ նա երեք ամիս հիւանդ պառկեց: Կազդուրուելով, թագաւոր օծուեց Տարսոնում և այդ առթիւ ներում շնորհեց բազալական յանցաւորներին, իսկ աղքատներին առատ ողորմութիւն տուաւ:

Հայ իշխանները դաւ լարեցին Լեոնի կեանքի դէմ, բայց դաւը բացուեց և Լեոն նրանց կալուածներն արքունիս գրաւեց:

Ֆնտխտար նորից Լեոնի վրայ եկաւ բազմաթիւ զօրքով: Լեոն չկարողացաւ դիմադրել, որովհետեւ իշխանները չմիաբանեցան նրա հետ և նա քաջութեամբ իր երկրի ամուր տեղերը: Տարսոնն անձնատուր եղաւ և աւարի ու կոտորածի մատնուեց: Սիսը քաջութեամբ լեռ մղեց թշնամու բանակը:—

Թշնամու հեռանալուց յետոյ Լեոն ջանք թափեց ամրեւելու թշուառ ժողովրդի վիճակը: Շուտով նորանոր դժբաղդութիւններ եկան թագաւորի գլխին. նախ կորցրեց երկու զաւակներին, ինքը ծանր հիւանդացաւ, յետոյ ժանտախտն ու սովը սոսկալի կոտորած պատճառեցին ժողովրդին:

*) Կարդալ. «Հայ Հեղինակներ» «Ի Լեոն որդի Հեթում», հր. 228.

Մամեկուքները նորից յարձակուեցան Կիլիկիայի վրայ։ Այս անգամ Լևոն միաբան իշխանների հետ սոսկալի ջարդ տուաւ Եգիպտացոց։ Սուլթանը վերաւոր հազիւ հասաւ Դամասկոս, ուր մեռաւ։ Լևոնի զաշնակից Աբաղա խանը դեսպանների ձեռքով շնորհաւորեց այս յաղթութիւնը և առաջարկեց Միջագետքը միացնել Կիլիկիային, բայց Լևոն մերժեց այս առաջարկը, որովհետեւ մի այլպիսի ընդարձակ և հեռաւոր երկիր կառավարելու ուժ չունէր։

Շուտով Լևոն ստիպուած էր Ասորիք զնալու իր զաշնակիցներին օգնութեան, որոնք կրկին պատերազմի էին դուրս եկել Եգիպտացոց դէմ։ Մինչ Լևոնն ու Աւմախ թաթար զօրապետը Մամեկուքներին լաղթելով քշեցին, թաթարաց գլխաւոր հրամանատար Մանգու-թամուրը դաւաճանութեամբ յետ մնաց և զաշնակից զօրքերի քամակը թողեց անպաշտպան։ Լևոն ստիպուած էր յետ դառնալու մեծ կորուստներով, որովհետեւ զօրքը պաշար չունէր։

Աբաղա խանը միւս դաւաճան զօրավարներին հետ իր հարազատ եղբօրը— Մանգու-թամուրին գլխատել տուաւ։

Իր թագաւորութեան վերջին տարիները Լևոն նուիրւեց երկրի բարեկեցութեանն ու բարգաւաճմանը. հիմնեց իր նախորդների նման գալուցներ, հիւանդանոցներ և հոգ տարաւ ժողովրդի ուսմանն ու կրթութեանը։ Այն ժամանակ տպարան չլինելով շատ դժուար էր գիրք ձեռք բերելը. Լևոն բազմաթիւ օրինակներով արտադրել տուաւ հին հայ ձեռագիրները և տարածեց ամեն կողմ ուսումնականների համար։ Առանց այդ խնամքին, շատերը մեր հին մատենագիրներից կարող էին մեզ համար անգարձ կորած լինել։

ՅԵԹՈՒՄ Բ. ԼԵՒՈՆ Դ. ՈՇԻՆ, ԼԵՒՈՆ Ե.

Լևոնին յաջորդեց չեթում Բ. (1289)։ Մեկիք-Սըլաֆ նրա ժամանակ արշաւեց Կիլիկիա և սլաշարեց Հոռմկլան,

ուր նստում էր հայոց կաթողիկոսը: Երկար պաշարումից յետոյ Աշրաֆը տիրեց քաղաքին, Կողոպտեց քաղաքն ու տաճարները և կաթողիկոսին գերի տարաւ Լուսաւորչայ աջի հետ: Հեթում մի քանի քաղաքներ տալով հաշտուեց Սուլթանի հետ և ազատեց թէ կաթողիկոսին և թէ Լուսաւորչի աջը:

Հեթումի քոյրերից մինը յունաց արքայորդու կինն էր, միւսը Կիպրոսի թագաւորի եղբօր: Կամենալով նորանց այցելութեան գնալ, նա իշխանութիւնն յանձնեց Սմբատ եղբորը: Սա իշխանների և կաթողիկոսի համաձայնութեամբ թագաւոր օծուեց Սիւս քաղաքում և երբ Հեթում ու Թորոս եղբայրները վերադարձան Կիլիկիա, դուրս արաւ նրանց: Վերջը բռնել տուաւ նրանց և բանտարկեց: Թորոսը մեռաւ իսկ Հեթումը բանտի մէջ կուրացաւ:

Հեթումի չորրորդ եղբայր Կոստանդինն այս անօրինութիւնից գալրացած՝ զօրքի օգնութեամբ բանտարկել տուաւ Սմբատին, ազատեց Հեթումին և կամենում էր ինքն իշխել: Սակայն շուտով Հեթումի աչքերը առողջացան և ժողովրդի ու տաճարական տապեաների օգնութեամբ կրկին դա՛ ընդունեցաւ: Քանի որ Ղազան խանը կենդանի էր, Հեթում նրա դաշնակցութեամբ մի քանի անգամ յաղթութիւններ տարաւ թշնամիների վրայ: Բայց երբ Ղազան-խանին յաջորդեց Ղարեղանդ և ընդունեց մահմետականութիւն, աշուհեաւ հայոց և թաթարաց բարեկամութիւնը վերջացաւ և յիսուսից թշնամութեան: Այնուհետեւ թաթարները, թուրքերը և մամելուքները երեսառած սկսեցին ամեն կողմից նեղել ու աւերել Կիլիկիան: Հեթում մի անգամ աջողութեամբ ջարդեց մամելուքներից մօտ 7000 հոգի և առժամանակ երկրին պարզեց խաղաղութիւն:

Հեթում Բ.-ի ժամանակ շրջակայ մանր քրիստոնեայ

տէրութիւններն արդէն կործանուել և նրանց երկիրներն անցել էին մահմետականների ձեռքը: Եզրիպտոսի Մամե-լուքները, որ տիրել էին Ասորիքին ու Պալեստինին, ամբողջ ուժով ընկնում էին Կիլիկիայի վրայ, որ միակ քրիստոնեայ իշխանութիւնն էր մնացել: Թաթարները, որ հայերի դժբեղ դաշնակիցն էին, ներքին կռիւներից թուլացած էին արդէն և հարկաւոր օգնութիւնը չէին կարող տալ Հեթումին: Հեթումի միակ յոյսն և ապաւէնը այնուհետև մնում էր Հոռմը: Բայց հոռմի սիրտը շահելու համար հարկաւոր էր նրան որոշ կրօնական զինուորներ անել: Այդ ժամանակ Հեթում՝ երկրորդ անգամ՝ հրաժարուելով, գահն յանձնել էր իր եղբօր որդի Լևոն Դ.-ին: Սա Հեթումի համաձայնութեամբ Սիս քաղաքում մի ժողով գումարեց, ուր որոշեցին մի քանի կաթօլիկ ծէսեր ընդունել հալ եկեղեցու մէջ:

Այդ կատարուել էր թագաւորի ստիպմամբ: Երբ հայ եկեղեցականներն իրենց տեղերը ջըր-ւեցին, հակառակուեցան այդ որոշումներին և արդելք եղան նրանց ընդունելուն: Սիս քաղաքի ժողովուրդն էլ գժգո՞տ այդ նորմուծումներից գանդատուեց թաթար զօրավար Բիլարդուն,



Կիլիկեցի ազնուական:

որը Լևոն Դ.-ին և հետևորդներն հրաւիրելով իր մօտ, սպանել տուաւ Անարգաբա քաղաքում:

Օ Շ Ի Ն (1308—1320)

Լևոն Դ.-ին յաջորդեց իր եղբայրն—Օշին, որ Բիւլարդուն զուրա քչեց Կիլիկիայից (1308): Բազմաթիւ բերդեր և եկեղեցիներ շինել տուաւ Օշին, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում Տարսոնի պարիսպը:

Սրա ժամանակ տրեւելեան հայաստանում ռաբսափելի երկրաշարժ տեղի ունեցաւ, մասնաւորապէս փապուեցին Այրարատ գաւառը և Անին: Ուստի Անի քաղաքից բազմաթիւ դադթակահներ հեռանալով գնացին Խրիմ, Լեհաստան, Պարսկաստան և Թաթարստան:

Օշինին յաջորդեց Լևոն Ն. Պալ Օշինի խնամակալութեամբ: Սրա ժամանակ մամեյուքները, թաթարներն ու թուրքմէնները միացած մինը միւսի յետևից յարձակւեցան Կիլիկիայի վրայ և երկիրը տակն ու վրայ արին աւարի ու սրի մատնելով:

Կիլիկիան, որ ներքին կռիւների և հայ ու լատին կուսակցութիւնների ձեռին ուժասպառ էր եղել, անկարող էր մենակ այս անհամար թշնամիների դէմ դուրս գալ: Հայ երիտասարդները միայն, մի կողմ թողնելով կրօնական վէճերը, միացան և մի քանի խումբ կազմելով դարսնամուտ եղան երկրի ամուր տեղերը և մի քանի անգամ թշնամուն սոսկալի փնա հասցրին: Եղիպտոսի սուլթան Մէլիք-Նազարն ստիպուած էր հաշտուել և 15 տարուայ զինադադար տալ:

Հազիւ թշնամին հեռացել էր երկրից, որ կրկին ծագեցան ներքին խռովոյթներ: Լևոնը հայ իշխաններին հեռացրեց տաշտօնից և նրանց կալուածները լսելով ար-

ւաւ իր լատին ազգականներին: Հայերի կողմն էր տէրութեան խնամակալ Օշին Պայլը:

Թագաւորը նրան ղրկեց խնամակալութիւնից և սպանել տուաւ իր աղջկայ հետ, որ թագունի էր: Դրանից յետոյ Լեոն կրկին ամուսնացաւ: Այս վարժունքի պատճառով Լեոն իր դէմ գրգռեց ժողովրդին և անպաշտպան երկիրը կրկին աւարի մասնուեց եղբայրացոց կողմից: Լեոն դիմեց Եւրոպայի օգնութեան: Փրանսիայի թագաւոր Փիլիպպոս 2- խոստացաւ նորից խաչակրաց արշաւանք կազմել՝ ըստ իր խոստումը հկարողացաւ ի կասարածել: Այս բանից կատաղած Մելիք-Նազար-Մահմուտ, ե-

ղիպոտոսի սուլթանը, որոշեց բնաջինջ անել Կիլիկիան: Լեոն փախաւ լեռները, և ստիպուած էր խաչի ու աւետարանի վրայ երդուել, որ այլևս Եւրոպացիների օգնութեանը չի դիմի և նրանց հետ յարաբերութիւն չի ունենայ:

Լեոն մեռաւ 1341-ին, անզաւակ: Նրանով վերջացաւ Ռուբինեան ցեղը Կիլիկիայում:

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ

Լեոնի մահից յետոյ Կիլիկիայի գահը բարձրացաւ Կոստանդին Գ. Լուսինեանը: Մա ծագում



Կիլիկիացի կին.

էր Կիպրոսի իշխաններից, որ խնամիացած ու ազգական էին Հեթում թագաւորի հետ: Կոստանդինը մոռանալով Լեւոնի երգումը՝ դարձեալ սկսաւ յարաբերութիւն ունենալ հռոմի հետ: Կաթողիկ Ունիթորները նրա ժամանակ սկսան զօրանալ ու նախատել Լուսաւորչականներին: Հայերն ապստամբեցան և Կոստանդինի եղբայր Գուրգոնը բարձրացաւ գահ: Սա էլ հետեւեց իր եղբօր ընթացքին: Առաջ էր քաշում լատիններին և հայածում հայ իշխաններին: Եզիպտացիք կրկին արշաւեցին Կիլիկիա, աւերեցին և մի տարի չեւոյ կրկին նորոգեցին արշաւանքը:

Այս անգամ Պապն օգնեց Գուրգոնին, ուղարկելով 1000 ձիաւոր և 1000 դահեկան փոդ:

Երբ Գուրգոն չ'լսելով հայ իշխաններին, նրանց կալւածները խլելով տուաւ լատիններին, հայերը միացան և սպանեցին նրան 1345-ին:

Գուրգոնին յաջորդեց Կոստանդին Դ.: Սա աշխատեց կրօնական բաժանութիւնների և կոթողների առաջն առնել և հուրիւսել երկրի ապահովութեանը: Եզիպտոսի սուլթանը նորէն արշաւեց Կիլիկիա, բայց Կոստանդին մի երկու դաշնակիցների հետ աջողութեամբ յետ մղեց մամլուքներին: Երբ Կոստանդին դեսպան ուղարկեց Եւրոպայից օգնութիւն խնդրելու, Պապն հաղորդեց, որ հայերն օգնութիւն կուտանան այն ժամանակ, երբ կաթողիկոսիւն իրենց ունենա: Մենակ միացած թագաւորը չյուսահատուեց, այլ մամլուքների ձեռից խլեց Սլեքսանդրիտա հաւահանդիստը, խաղաղութիւնը վերականգնեց, որ տեւեց մինչև նրա մահը (1362):

Լ Ե Ի Ո Ն Զ.

Կոստանդին մեռաւ տնտառանդ. այդ պատճառով հայիւ երկու տարուց չեւոյ թագաւոր նստաւ Լեոն Զ. Լու-

աինեան իշխանը: Եզրպտացիք կրկին արշաւեցին Կիլիկիա-
 Լեոն չնայելով իր քաջութեանը, յաղթուեցաւ թշնամուց,
 որ թուով անհամեմատ շատ էր: 1371-ին Եզրպտացիք
 նորոգեցին արշաւանքը. Լեոն վիրաւորուած ծածուկ վա-
 խաւ լեռները:

Թաղուհին կտրծելով որ Լեոնը մեռել է, այս մասին
 իմաց տուաւ իր կրօպացի ազգականներին, որոնք կամե-
 նում էին նորան ամուսնացնել մի Գերմոնացի իշխանի
 հետ: Բայց Լեոն յանկարծ երեաց և այս մտադրութիւնը
 ֆնաց անկատար:

Եզրպտոսի սուլթանը մի Երրորդ ու վերջին հարուս-
 ծով կամեցաւ ոչնչացնել Կիլիկիայի հայ իշխանութիւնը և
 նրա երկիրներին տիրանալ: Յորձակումն սկսուեց 1374-ին.
 Լեոնի ինդիրըը, օգնութեան դալու, Եւրոպացի իշխան-
 ները թողին անկատար:

Մամլուլուքները հետզհետէ տիրեցին դաշտային և ա-
 պա լեռնային Կիլիկիոյի բազաքներն ու աւտոնները սրի
 ու կրակի մատնելով ամեն ինչ: Նրանք որոշել էին բնու-
 ջինջ անել հայերին, ուստի մեծերին կոտորում էին անու-
 սելի անգլթութեամբ, և կամ բոնի մահմետական դարձ-
 նում, իսկ մանուկներին կամ գերում էին կամ վաճա-
 ուում: Լեոն ամրացել էր Կապան բերդում. ինն ամիս զի-
 մադրելուց յետոյ սոփլ ստիպեց նրան անձնատուր լինե-
 լու: Թշնամին, իր խոստման հաւաւով, Լեոնին շղթայեց
 և թաղաւորի հարստութիւնը կողոպտեց: Նրան իր կնոջ
 և դստեր հետ բանտարկեց Կոյիբէում:

Մէլիք-Աշրաֆ Սուլթանը խոստացաւ Լեոնին ընտա-
 նիքի հետ բանտից ազատել, եթէ նրանք հուստն ուրա-
 նան, բայց նրանք յանձն չառան:

Լեոնը իր ընտանիքի հետ բանտից ազատուեց Խսպա-
 նիայի Յովհաննէս և Արազոնի Պետրոս թաղաւորների
 միջնորդութեամբ 1382-ին:

Լևոն ալնուհետև անցաւ Հոռոմ, Պապին ալցելելու և յորդորելու, որ մի նոր խաչակրաց արշաւանք կազմեն Երուսաղէմը մահմետականներից ազատելու համար: Ապա գնաց Իսպանիա, շնորհակալութիւն յայտնելու իր ազատչին: Յովհաննէս թագաւորը նրան մինչև մահ թոշակ նշանակեց և նրան յանձնեց երեք քաղաքների իշխանութիւնը. Երեք տարուց յետոյ Լևոն եկաւ Ֆրանսիա, ուր մեծ պատուով ընդունուեց: Նա աշխատեց հաշտեցնել Ֆրանսիան Անգլիայի հետ, որոնք այդ ժամանակ շարունակ պատերազմում էին, որպէս զի յետոյ նրանց օգնութեամբ իր գահը յետ խլէ Մամելուքներից: Կարճ զինադադարից յետոյ այդ երկու ազգերը դարձեալ շարունակեցին իրենց պատերազմը և Լևոն յուսահատուելով քաշւեցաւ վանք, ուր և մեռաւ 1393-ին, Փարիզում: Մինչև այսօր պահուած է այդ անբաղդ թագաւորի շիրիմը Սէն-Դրնի թագաւորական գերեզմանատանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԱՆԿՈՒՄԻՅ ՅԵՏՈՅ:

Բագրատունեաց կործանումից յետոյ, ինչպէս տեսանք, Յոյները թէպէտ տիրեցին հայաստանին, բայց պահպանել չ'կարողացան և շուտով հայաստանի տէր դարձան Տուրքիւ և Ալիասլան: Հայ ժողովուրդը մի քիչ հանդիսատառաւ միայն Ալիասլանի որդի Մելիք շահի ժամանակ, որ խաղաղ և բարի մարդ էր: Այնուհետև հայաստանը պատառ-պատառ է լինում բազմաթիւ հայ և օտարազգի իշխանների մէջ, որոնք շարունակ պատերազմ ունենալով միմեանց հետ, ժողովրդին դադար չէին տալիս:

Թշնամիների յարձակումներին անընդհատ ենթակայ էր մանաւանդ Անին, որ նշանաւոր էր իր հարստութեամբ և բնակիչների բազմութեամբ:

Մահմետական իշխաններից ազատուելու համար Անեցիք դիմեցին Վրաց Դավիթ թագաւորին, որ եկաւ, հայոց օգնութեամբ պարսիկներին հալածեց և հիւսիսային Հայաստանի հետ Անի քաղաքին էլ տիրեց (1124):

Վրաց իշխանութիւնը հայաստանում ընդարձակուեց և զօրացաւ թամար թագուհու ժամանակ, որ հայկական նահանգները կառավարում էր երկու եղբայր, Զաքարէ Սպասալար և Իւանէ Աթաբէգի ձեռքով: Սրանք ազգով հայ էին և սրանց մեծագործութեան հետքերը, նշանաւոր վանքեր ու եկեղեցիներ, մինչև այսօր էլ դեռ կանգուն են: Այդ շէնքերից նշանաւոր են մանաւանդ հաղբատ և Սանահին վանքերը Լոռում:

ԹԱԹԱՐԱՅ ԱՐԱՇԱՒԱՆՔԸ

Թաթարաց պետութեան հիմքը դրեց Չինգիզ-խանը: Սա միացրեց Սիբիրի և Չինաստանի սահմաններում ապրող ռաղմասէր և աւազակաբարոյ թաթարներին, տիրեց Չինաստանին, Միջին Ասիային, Հնդկաստանին և հաստատեց մի լայնածաւալ պետութիւն: Ոորագմի թագաւորի որդին, Միջին Ասիայից, Ջալալէդդէն, թաթարներից յաղթուելով, իր զօրքի հետ փախաւ հայաստան և սկսաւ տակն ու վրայ անել երկիրը: Գառնի աւանի մօտ նրա դէմ դուրս եկաւ Իւանէ Աթաբէկը, հայ և վրացի զօրքերով, բայց յաղթուեց: Ջալալէդդին աջնուհետև անցաւ հարաւային հայաստան և ապա Փոքր-հայք, ուր հասաւ մինչև Կիլիկիայի և Իկոնիոյ սահմանները: Այստեղ նրա դէմ դուրս եկաւ մեր հեթում թագաւորը հարեան իշխանների դաշնակցութեամբ և ջարդելով փախցրեց Քրդաստան, ուր մեռաւ Ջալալէդդինը:

1136-ին էր, որ թաթարները մեծ բազմութեամբ արշաւեցին հայաստան: Նրանց առաջնորդում էր Զարմաղան

խանը—արևունարու գաղանը: Հիւսիսային Հայաստանին տիրելուց յետոյ Չարմաղանը մարդ ուղարկեց և պահանջեց, որ Անին անձնատուր լինի: Այդ ժամանակ Անի էին հաւաքուած նաև շրջակայքի բնակիչները: Անեցիք սպանեցին Չարմաղանի գեւապաններին, բայց չարաչար տուժեցին, որովհետև Անիին տիրելուց յետոյ նրա հարստութիւնը կողոպտուեց, բնակիչների մեծ մասը սրի մատնուեց իսկ մանուկները գերի տարուեցան: Նոյն վիճակին ենթարկուեց նաև Կարսը, թէպէտ անձնատուր էր եղել կամովին (1239):

Թաթարներն առհասարակ խտիր չէին դնում ոչ հասակի, ոչ գիրքի և ոչ էլ աստիճանի մէջ, այլ դերում ու կոտորում էին բոլորին բացի ջահէլ աղջիկներից, որոնց յափշտակում էին:

Բերգերը կամ քաղաքներն առնելուց յետոյ թաթարները կոտորում էին բնակիչներին, կողոպտում հարստութիւններն ու եկեղեցիները և կենդանի մնացածներին ծանր հարկերի տակ դնում:

Չարմաղանից յետոյ Հայաստանի մնացեալ մասին նոյն անդթութեամբ ու կոտորածներով տիրեց Բաշու զօրավարը: 1254-ին արդէն ամբողջ Հայաստանը գտնուում էր թաթարների ձեռին և հուլաղու եկաւ երկիրը աշխարհագիր անելու:

Այնուհետև կոտորածները թէպէտ դադար առան, բայց հարկերն այն աստիճան ծանր էին, որ շատերից հարկի տեղ որդոցն էին վերցնում իբրև տուգանք, իսկ հարկերից փախչողներին բռնում և սպանում էին:

Թաթարաց իշխանութիւնը Հայաստանում տեեց մօտ հարիւր տարի և բացի աւերումից ու կործանումից ոչ մի օգուտ չ'տուաւ երկրին:

Անին, Բագրատունեաց գեղեցիկ, հարուստ և պաշտա-

ռաշէն քաղաքն աւերակ դարձաւ. բնակիչները ցան ու ցրիւ. եղան դիմելով Խրիմ, Լեհաստան ու Մոլդաւիա:

Երբ թաթարաց իշխանութիւնը թուլացաւ, հայաստանն էլ բաժին դարձաւ զանազան աշխարհակալների. Հարաւին տիրեցին քրդերը, արեւմուտքն ընկաւ Օսմանցիները, ձեռքը իսկ արեւելեան հայաստանը հպատակուեց Պարսկաստանին, մինչև որ այս ամենին կ'աւերէր Լէնկթէմուրը:

Լ Է Ն Կ Թ Լ Մ Ո Ւ Ր

Լէնկթէմուրը նախ նուաճեց հնդկաստանը և սպանւած մարդկանց գլուխներից բլուրներ կազմել տուաւ, որ այսպիսով սարսափ ազդէ ժողովուրդներին ու ազգերին: Պարսկաստանն ու Միջագետքը արեւոյն հեղեղ դարձնելուց չետոյ այս հրէշը մտաւ Հայաստան (1387): Շատերը նրա գալուց առաջ արդէն թողել լիախել էին: Հայաստանի մահմետական իշխանները բոլորն էլ հպատակեցան Լէնկթէմուրին, ոմանք կամովին, ուրիշները գէնքի զօրով: Լէնկթէմուրի զօրքերը չէին խնայում ոչոքի, ոչ ծերի և ոչ մանուկի: Վան քաղաքին տիրելուց չետոյ, երիտասարդներին զերի տարաւ իսկ քնացեալ րազմութիւնը պարիսպներից ցած գլորել տուաւ: Բազմութիւնն ալքան շատ էր, որ նրանց դիակները մինչև պարիսպները հասան: Լէնկթէմուրի զօրքերի ձեռքը չընկնելու համար մի հալկին սպանեց իր Լօթնամեալ որդուն և ապա ինքն էլ ժայռից ներքև ընկնելով մեռաւ:

Լէնկթէմուրի արշաւանքին յաջորդեց մի սոսկալի և չտեսնուած սով, որովհետեւ երկիրը քնացել էր անմշակ: Ականատես պատմիչների ասելով, երբ բոլոր կենդանիներից չետոյ շներն ու կատուներն էլ մորթուեցան, այնուհետև մայրը որդուն, հղբայրը քրոջը և մարդը կնոջը խորովելով կերան (1393):

Սեբաստիա քաղաքին տիրելուց յետոյ, այս զազանը կողոպտել տուաւ քաղաքը, իշխաններին կոտորեց, կանանց ձիաների պոչին կապելով բաց թողեց դաշտը. փոքրիկ մանուկներին ձիերի ոտների տակ կոխոտել տալով ջարդեց և չորս հազար հալ զինուորս ողջ-ողջ թաղել տուաւ: Լէնկթէմուրի մահից յետոյ (1405) նրա տէրութիւնը կործանուեց: Հայաստանի հարաւին տիրեց Ղարա-իւսուֆ քուրդ իշխանը, նրան յաջորդեց իր որդին Իսկէնդէր, որ Լէնկթէմուրի որդու զէմ երկար ժամանակ պատերազմեց Հայաստանի տիրապետութեան համար և կոչւեց Շահ-Սրմէն: Այս պատերազմների պատճառով Հայաստանի քաղաքները կործանուեցան, իսկ երկիրն անմշակ մնալով կրկին մի սարսափելի սով ընկաւ և թշնամու պակաս թողածը լրացրեց:

ՕՍՄԱՆՅԻՔ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օսմանցիք մոնղոլ ծագում ունին. նրանք հայաստան եկան թաթարաց արշաւանքների ժամանակ և բնակութիւն հաստատեցին Փոքր-Ասիայում: Երբ Սելջուկեանների տէրութիւնը կործանուեց, Օսմանն իրեն յայտարարեց թաղաւոր և իր աթոռանիստ մայրաքաղաք դարձրեց Ենիշէհար (1300 թ.): Սրա անունով ահա այդ փոքրիկ իշխանութիւնը կոչուեց Օսմանեան պետութիւն: Օսմանն յաջորդները հեռացեալ սկսեցին ընդարձակել իրենց երկրի սահմանները մինչև որ Մահամմէդ Բ. 1453-ին տիրեց Կոստանդինուպոլսին և դարձրեց Օսմանեանների մայրաքաղաք: Բիւզանդական կայսրութիւնն ընկաւ և նրա տեղ բռնեց Օսմանեանը:

Օսմանցոյ արեւմտեան սահմաններն ընկնում էին հայաստանում: Այդ սահմաններն ընդարձակելու համար նրանք երկար ու դարաւոր կռիւներ մղեցին պարսիկե-

րի հետ, որը վերջնապէս ուժասպառ արաւ և կործանեց հայ ժողովրդին:

Առաջին անգամ Օսմանցոյ վրայ յարձակուեց Ուզուն-Հասանը, որ չարաչար յաղթուեց Դերջանի մօտերը:

Ուզուն-Հասանի արշաւանքները շարունակել կամեցաւ Շահ-Իսմայիլը (1500 թ.): Նրա դէմ դուրս եկաւ Սուլթան-Սէլիմը և Խոյի մօտ յաղթելով Իսմայիլին՝ հասաւ և տիրեց Թաւրիզին: Այսպիսով հայաստանի հարաւ-արեւմտեան մասն ամբողջովին ընկաւ Օսմանցոյ ձեռք (1514):

Սրանից անմիջապէս յետոյ կրկին ու կրկին նորոգւեց արշաւանքը մէկ Պարսից կողմից, մէկէլ Օսմանցոյ: Նրանցից ամեն մինը սուր-կրակ և աւերած էր թողնում իր յետեից:

Սուլթան Սուլէյմանն այս անգամ մտաւ հիւսիսային Հայաստան. աւերեց Նախիջևանն ու Երևանը, մտաւ Ղարաբաղ և ամեն ինչ հողի հաւասարացրեց: Դրա վրէժն առնելու համար Թահմասպ շահր աւերեց ու ասպատակեց արտաւոյին Հայաստանը:

Երբ թահմասպ մեռաւ, Սուլթան Մուրադը կրկին յարձակուեց պարսից վրայ և նորէն Հայաստանն ասպարէզ դարձաւ աւերմունքի ու սրածուլեան: Այս պատերազմները տեկցին մի քանի տարի: Պատերազմի մէջ մեռաւ Համզա, պարսից արգայորդին. նրան յաջորդեց Շահ-Սքաս, որ հաշտութիւն խնդրեց Օսմանցիներին թողնելով ամբողջ հայաստանը, Վրաստանը, Ատրպատականը և Բաղդատը (1585 թ.):

ՇԱՀ-ԱԲԱՍԻ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԸ

Օսմանցիք հայաստանին տիրելուց յետոյ սկսեցին սաստիկ հարստահարել ժողովրդին, ուստի առաջ եկաւ գաղթ: Հայ իշխաններից շատերը Մելիքսեդէկ կաթողիկոսի հետ

անցան պարսից սահմանը: Շահ-Աբաս նրանց բոլորին սիրով ընդունեց, որոնցից մանրամասն տեղեկություններ առաւ Օսմանցոց մասին: Օսմանցիներից դժգոհ էին և քիւրդ բէկերը, որոնք նոյնպէս Շահ-Աբասի կողմն անցան երբ նա 1603-ին արշաւեց դէպի Հայաստան: Տիրեց նախ Ատրպատականին, ապա առաւ Նախիջևանը, Երևանը և հասաւ մինջև Կարս: Այդտեղ Շահն իմացաւ որ Սինան փաշան իր դէմն է գալիս մեծ զօրքով:

Որովհետեւ յոյս չունէր թէ Օսմանցիներին պատերազմով կարող է յաղթել, Շահ-Աբասը Դիմեց մի ստոր և տմարդի միջոցի. որոշեց ամբողջ արևելեան Հայաստանը դարձնել անմարդաբնակ, որպէս զի թշնամին պաշար և օգնութիւն չ'դոնի, միւս կողմից նա ցանկանում էր զերի տարած հայերին բնակեցնել Պարսկաստան, որոնց միջոցով նա ուզում էր ծաղկեցնել իր երկրի առևտուրն ու արուեստները:

Ամիրզոռնա խանը պիտի դուրս բերէր Շահի այս հրամանը. նրա հրամանով ժողովուրդն սկսեց տուն ու տեղը թողած հաւաքուել Արարատեան դաշտը: Ով հակառակուում էր, կոտորում էին. լեռներն ու այրերն ապաստանածներն անգամ բռնի տարւում էին կամ սպանւում: Բնակությունները, գիւղ, բաղաք, աւան, իրենց պահեստներով կրակի էին մատնւում:

Այսպէս հաւաքուած ժողովուրդը կազմեց մի ահագին բանակ, որին առաջ քշելով գալիս էր պարսից բանակը դէպի Ատրպատական, իսկ պարսից բանակին հետևում էր Օսմանականը:

Ժողովուրդն հասաւ Արաքսի ափը. բայց այդ ահագին բազմութիւնն անցնելու հնար չկար: Փայտից տփեր ու նաւակներ բերին, որոք խիստ սակաւ էին: Շահը վախենում էր, որ Օսմանցիք կարող են վրաջ հասնել և գերիներին խլել, ուստի հրամայեց բոլորին գետը թափել,

որ լողալով անցնին: Գետը սրնթաց էր ու խորը և անաչորս կողմը բռնեց մի սարսափելի սուգ ու վախճառուն. ծեր, պառաւ, կին, երեխայ թափուեցան գետը. հայրն իր աչքով էր տեսնում որդու խեղդուելը, կինը մարդուն, մարդը կնոջը, հարազատը հարազատին անկարող էր օգնել, որովհետեւ մի կողմից պարսից սուրն էր սպառնում, միւս կողմից Սրաքսի կատաղի ջուրը: Գետը ծածկուեց դիակներով. փոքր երեխաների և մահուկների մեծ մասը խեղդուեց:

Ժողովրդի փոքր մասը միայն ապատուեց, այն էլ դժուար ճանապարհներով քշեցին Պարսկաստան: Քաղաքացոյ տեղաւորեցին Սպահան քաղաքում, իոկ դիւղացոյ շրջակայ գիւղերում: Այդ դերինների մէջ էին և Ջուղայեցիք, հարուստ ու վաճառաշահ աւանից, որոնք առետուր ունէին հեռաւոր Եւրոպայի և Տօլլանդիայի հետ: Շահ-Աբասը նրանց տեղաւորեց Սպահանի մօտ, անուանելով Նուր-Ջուղայ, որի քնակիչները շուտով ձեռք առան Հնդկաստանի և Պարսկաստանի առևտուրը Եւրոպայի հետ՝ և հասան մեծ հարստութեան ու պայծառութեան:

Հայերի կրած անասելի վրէժներն ու միասնները Շահ-Աբասն աշխատում էր ամօրել քաղցր վարմունքով և դանազան ուրածութիւններով: Կրօնի լիակատար ապատութիւն տուաւ և շատ անգամ ինքը ներկայ էր լինում հայ եկեղեցու հանդէսներին: Հայի և Պարսկի մէջ դատ պատահած դէպքում աշխատում էր միշտ հայերի կողմը բռնել, սսելով, որ հայերի կեանքը շատ թանգ է նստել Շահի վրայ, մինչև բերել հասցրել է Պարսկաստան: Կամենալով հայերին բնդմիշտ կապել Պարսկաստանի հետ, Շահ-Աբասը մտածեց Էջմիածինը քանդել և մի նոր էջմիածին շինել Նուր-Ջուղայում, սակայն, հայերի խնդրքով չետ կանգնեց այս մտադրութիւնից:

Սամանեան հայաստանն այդ ժամանակ շարունակ

խռովութեան մէջ էր, որովհետեւ երկրի կուսակալներն ապստամբելով սուլթանների դէմ, ասպատակում էին երկիրը, որի հետեանքը մի մեծ սով եղաւ:

Հայերից շատերը թողին ու գաղթեցին օտար երկիրներ:

Այդ խռովութիւններից օգտուելով Շահ Աբասը կորկին ու կրկին արշաւեց Հայաստան, որովհետեւ բաղդի փոփոխակի աջոգութեամբ սա մէկ պարսից ձեռն էր ընկնում, մէկ Օսմանցոց: Վերջապէս (1639 թ.) մի հաշտութեամբ Կուրի և Արաքսի մէջ գտնուած երկիրները մնացին Պարսից ձեռք: Այս հաշտութիւնը երկարատեւ և բարեբեր եղաւ. Հայաստանի համար, որովհետեւ տեկոսուն տարի:

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՎԵՐՍՏԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՅ

Կիլիկիայում հայոց թագաւորութիւնը թէպէտ վերջացել էր, բայց կաթողիկոսները դեռ շարունակում էին մնալ Սիս քաղաքում, ուր նրանք ենթակայ էին սարսափելի հալածանքների: Հայաստանից հեռու լինելով, հայրապետական ընտրութիւն չէր կատարւում և եկեղեցու մէջ էլ մտել էին կաթողիկոս թողով գանազան ծէսեր:

Այս ամենին վերջ տալու համար 1441-ին Էջմիածնում մի ժողով գումարուեց, ուր կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Վիրապեցուն: Սաի կաթողիկոսը չէր մասնակցել այս ժողովին, ուստի հայերն այնուհետեւ ունեցան երեք կաթողիկոս, որ նստում են Էջմիածին, Սիս և Աղթամար: Ընդհանուր հայոց կաթողիկոս ճանաչուած է Էջմիածին նստող հայրապետը, սրին ընտրւում է ամբողջ ազգը, իսկ միւսները մասնաւոր տեղական կաթողիկոսներ են և ճանաչում են Էջմիածնի գերիշխանութիւնը:



Ս. Լիժմիածին:

Լիժմիածնում հայրապետի վերստին հաստատուելը հայ եկեղեցուն չ'փրկեց հալածանքներից: Անվերջ պատերազմներն ու աւերածութիւնը Լիժմիածնին քցել էին ծանր պարտքերի տակ. կաթողիկոսները շատ անգամ շղթայակիր թափառում էին հեռուոր հայերի զաղթավայրերում փող հաւաքելու, որ պարտքերը վճարել կարողանան: Շատ անգամ էլ մի քանի կաթողիկոս էին նստում միաժամանակ, որ պարտքն իրենց մէջ բաժանելով թեթևացնեն: Այս վիճակը շարունակուեց մինչև Մովսէս Գ. կաթողիկոսը, որ մեծ ջանքերով Լիժմիածինն ազատեց պարտքերից և հարկատուութիւնից: Արան յաջորդեց Փրկիպոս Աղբաղեցի (1633—1655) շինարար հայրապետը:

Սա նորոգեց Լիժմիածինը և շինել տուաւ գեղեցիկ

զանգակատուն, որ հիմա էլ կանգուն է և հիմնեց էջմիածնում ուսումնարան, որտեղից դուրս պիտի գային ուսեալ հոգևորականներ: Այնուհետև գնալով Երուսաղէմ, մի ժողով կազմեց, ուր կարգաւորեց Սսի և էջմիածնի յարաբերոյթները: Վերադարձին նա Կ.-Պօլսոյում նոր պատրիարք ընտրել տալով հանդստացրեց ժողովրդին, որ խռովութեան միջ էր պատրիարքների ընտրութեան առթիւ:

Փրիլպպոս Կաթուղիկոսի շնորհիւ էջմիածինը վերստին պայծառացաւ ու վերականգնեց իր նախնի հեղինակութիւնն ու կապը ցրուեալ հայերի վրայ:

ՂԱՐԱՖԱՂԻ ՄԷԼԻՔՆԵՐԸ ԵՒ ԴԱԻԹ ԲԷԳ

Սիւնեաց լեռնոտ երկիրը Պարսից խաների իշխանութեան տակ դեռ պահպանել էր մի փոքր ինքնուրոյնութիւն. հայ տանուտէրեր կային, որոնք կոչւում էին Մելիքներ. դրանք աւանդական իշխաններ էին, որոնց իշխանութիւնն անցնում էր հօրից որդի. նրանք կառավարում էին իրենց ժողովուրդն աւանդական սովորոյթով. հարկը հաւաքում և տալիս էին պարսիկ խաներին. ունէին իրենց բերդերն ու ամրոցները և հարկ եղած դէպքում կարող էին հանել փոքրաթիւ զօրք: Ազատութեան ոգին այս լեռնականների մէջ զեռ իսպառ չէր մարած և 17-րդ դարու վերջերին նրանք միաբան ուղարկեցին իրենց հայրենակից Օրիին ևրդական արքունիքները, խնդրելով, որ իրենց օգնութեան գան և միասին պատերազմելով ազատեն մահմետական լծից:

Տասն և ութերորդ դարու սկզբին օգտուելով Պարսկաստանում տիրող խռովայթից, Կովկասեան լեռնականները յարձակուեցան հիւսիսային հայաստանի վրայ և աւարի տալով հասան մինչև Սևան: Հայերը Ուտիացի իշխան Յովհաննիսի առաջնորդութեամբ լեռնականներին դուրս քշեցին հայաստանից:

Այս արշաւանքից յետոյ երկիրը տակն ու վրայ եղաւ. հայ մելիքները կամենալով իրանց երկիրն ապահովել աւերածից, Վրաստանից հրաւիրեցին Դաւիթ բէգին: Դա ծնունդով զորաբաղցի էր, մեծ անուն էր հանել Վրաստանում և հասել զօրապետի աստիճանի: Դաւիթ բէգն անցաւ շարժման գլուխը և 1721-ին 400 հոգով մի քանի յաղթութիւններ տարաւ թուրք հովիւ գիւղերի վրայ:

Շուտով Դաւիթին միացան Տէր-Աւետիք քաջահան, Մխիթար սպարապետը, Չափազուրի Թորոս իշխանը. Գեհուկազի Ստեփաննոս Շահումեան իշխանը և Դաւիթ բէգի զօրքերի թիւն հասաւ 7000 հոգու: Դաւիթը երկիրը մաքրելով թշնամիներից մի ամուր բերդ շինեց հալիձորում և ամրացաւ այնտեղ:

Դաւիթի մարդկանց պատերազմներից անաջող անցան միայն Թորոս իշխանի կռիւը Փաթալի խանի հետ, որովհետև Թորոսին դաւաճանեց Երիցվանից Մելիք-Ֆրանգիւլը: Սակայն հայերը դրա վրէժն առան Մեղրիի մօտ, ուր կոտորեցին մօտ 10000 թուրք:

Ծանր էին Դաւիթի կռիւները Օսմանցոց հետ. երբ Հաջի-Մուստաֆա զօրավարը մեծ զօրքով Սիւնիք եկաւ, հայերից շատերը դաւաճանութեամբ անցան թրշնամու կողմը: Դաւիթը 450 զօրքով պաշարուեց Հալիձորում: Սակայն Մխիթար և Տէր-Աւետիք զօրավարները գիշերով դուրս եկան բերդից և սաստիկ կոտորածու փախցրին թշնամուն գերի առնելով 148 գրօշակ: Մուստաֆան նոր զօրքով կրկին պաշարեց հալիձորը: Դաւիթ այս անգամ մի երամակ էգ ձի բաց թողեց թշնամու բանակը. բանակի ձիաները կատաղած սկսեցին այս ու այ կողմը վազել. Դաւիթն էլ այդ ժամանակ յարձակուելով թշնամու վրայ մեծ կոտորածով հալածեց երկրից:

Պարսից Թահմազ շահը լսելով Դաւիթի քաջ գործերը, ընծաներով իշխանաց իշխանի Տիտղոսը տուաւ նրա

և հաստատեց որպէս Սիւնեաց տէր: Սակայն կարճատև եղաւ այդ իշխանութիւնը, որովհետև Դաւիթ բէգը մեռաւ 1728 թ. վեց տարի իշխելուց յետոյ: Զօրքի և իշխանների ցանկութեամբ Դաւթին յաջորդեց Մխիթարը: Օսմանցիք կրկին յարձակուեցան Հալիձորի վրայ: Պաշարածները դաւաճանօրէն անձնատուր եղան և կոտորւեցան:

Մխիթարը փախչելով բերդից նորից մի քանի աւանների տիրեց, բայց հայերը Խնձորեսք բերդում դառով գլխատեցին իրանց զօրավարին: Երբ գլուխը թաւրիզի փաշային տարան, թուրք փաշան ցուելով քաջի մահուան վրայ, գլխատել տուաւ դաւաճաններին:

Այսպիսով ամբողջ Հայաստանը նորից ընկաւ Օսմանցոց ձեռք:

Երբ Թահմազ Շահը զօրացաւ և հալածեց թշնամիներին, կրկին պատերազմ հրատարակեց թուրքաց, բայց կրկին ամօթալի պարտութեամբ ետ դարձաւ: Նադր Ալին, Թահմազի քաջ զօրավարներից մինը, այս առթիւ հեռացրեց գահից իր թագաւորին և նորից պատերազմ՝ հրատարակելով, սաստիկ ջարդ տուեց Օսմանցիներին: արաբաղի մեղիքներն էլ. օգտուելով այդ հանգամանքից, իշերով ոչնչացրին իրանց երկրի Օսմանցիներին:

Յաջորդ տարին գլխաւոր ճակատամարտը տեղի ուեցաւ Արփաչայի (Ախուրեան) ափերին, ուր Նադր-Ալին ընթէ ոչնչացրեց օսմանեան բանակը 1736-ին: Այս սղթութիւնից ետոյ Նադր-Ալին իրան հրատարակեց արսից Շահ: Դա տեղի ունեցաւ Մուղանի անապատում, ըաքսի ափին:

Այդ հանդիսին հրաւիրուած էին նաև Աբրահամ Կրեացի կաթողիկոսն ու հայ մեղիքները: Շահը մեղիքներէն հաստատեց իրանց ժառանգական իշխանութեան մէջ իրաւունք տուաւ իրանց երկիրները կառավարել ան-

կախօրէն, վճարելով մի որոշեալ տուրք պարսից Շահին: Աբրահամ կաթողիկոսը նորահաստատ թագաւորի սուրն օրհնելով կապեց նրա մէջքին: Նա այնքան զրաւեց շահի սիրտը, որ էջմիածինն ազատել տուաւ հարկերից և ետ ստացաւ իր կալուածները:

Նադիր-Շահը դարձեալ մի երկու պատերազմ ունեցաւ օսմանցիների հետ, մինչև որ Շահի մի փառաւոր յաղթութիւնից յետոյ, 1746-ին, երկու տէրութիւնները հաշտուեցին. Արեւելեան Հայաստանը Երեւանի ու Նախիջևանի հետ մնաց պարսից, իսկ արեւմտեան և հարաւային Հայաստանը մնաց Օսմանցոց:

Ն Ա Յ Ե Ր Ի Գ Ա Ղ Թ Ը

Թաթարաց արշաւանքներից յետոյ երկու հարիւրամեայ պատերազմները օսմանցիների և պարսից մէջ հայաստանը հասցրին վերջին ծալը աղքատութեան. երկիրը դարձել էր գրեթէ անտալատ. շէն ու հոյակապ քաղաքները կործանուած, մշակուած դաշտերը խոպան, գիւղերն ու աւաններն աւերակ, բնակիչների մի մասը կոտորուած, միւսը դաղթած օտար երկիրներ. իսկ մնացեալը աղքատ ու թշուառ, ուժասպառ էր և դաժ հիմնովին: Այլևս հնար չ'կար հայրենի օջախը վառ պահելու. պէտք էր թողնել տուն, տեղ, հայրենիք և օտար աշխարհներում, օտար երկնի տակ ապաստան որոնել. ուստի սկսոււմ են մի շարք դաղթեր, կամ բռնի և կամ ինքնակամ:

Որովհետև օտարութեան մէջ հեշտ չէր հող ձեռք բերել և երկրագործութեամբ ապրել, ապրուստի միակ դիւրին միջոցը առևտուրն էր, և ահա հայերն իրանց նուիրում են առևտրի, հանդիսանում են ճարպիկ միջնորդներ արևելքի և արեւմուտքի մէջ:

Գաղթն հայաստանից սկսոււմ է շատ վաղ ժամանակներից. դեռ Սասանեան արքաները հայերին գաղթե-

ցնում էին Միջին Ասիա, երկու նպատակներով. նախ մի զորեղ պատուար կազմելու համար իրանց թշնամիների դեմ և երկրորդը հայերի ուժը հայրենիքում թաւաղանելու համար: Նոյն պօլիտիկային էին հետևում և արաբներն ու յոյները: Բիւզանդիան (Պօլսը) միշտ ահագին թուով հայ բնակիչներ է ունեցել, որոնցից շատերը յախնի են եղել պատմութեան մէջ որպէս խոշոր պետական անձեր:

Բիւզանդական կայսրների մէջ մի տասնեակից աւելի թագակիրներ հայ էին ծագմամբ և կառավարեցին երկիրը 200 տարի շարունակ: Այդ կայսրների իշխանութիւնը հորձանիչ էր հայերի համար, որովհետեւ նրանք բաղմամբ և հայեր գաղթեցրին Բալկանեան թերակղզին կամ թշնամու դէմ կռուելու և կամ անմարդի տեղերը բնա-
ի դարձնելու համար:

Գաղթային մի մեծ հոսանք էլ սկսուեց Կիլիկիայից Ռուբինեան թագաւորութեան վերջնալուց յետոյ, հայերը նախ անցան մօտակալ Կիպրոս, Հոդոս և Կրետէ կղզիները, իսկ այնտեղից դէպի Իտալիայի շահաստան քաղաքները. Պիզա, Ջենովա, Վենետիկ և այլ տեղեր. խիստ բաղմամարդ և հարուստ էին հայերը Վենետիկում. կաթօլիկ հոգևորականների հալածանքից նրանք բոլորը խառնուեցան և կորան իտալացոց մէջ:

Գաղթային մի խոշոր հոսանք էլ Կասպից ծովի վերայով անցաւ դէպի Թաթարաստան (Ղազան և Աշտարխան) Վօլգայի ափերը. հայերը թաթարաց բանակում առևտրականներ էին զէնքը ձեռին. պատերազմի ժամանակ նրանք զինուած օգնում էին թաթարներին, իսկ խաղաղ ժամանակ զբաղուած էին առևտրով: Կիսաբարբարոս թաթարների բռնութիւններից դժգոհ հայերը դաշըն կապեցին Ջենովացիների հետ, որոնց ձեռին էր գրանւում այդ ժամանակ Սրիմը: հայերը զէնքով ճանապարհ բաց արին իրանց համար և եկան հաստատուեցան Սրի-

մի թերակղզում, ուր շուտով բազմացան ու հարստացան: Այնուհետև Նըրիմի թերակղզին փախստական հայերի սիրած գաղթավայրերից մինը դարձավ: Սակայն հայերի աստղը շուտով թեքուեց, երբ մի կողմից թաթարները, միևս կողմից Օսմանյիք սկսեցին սպառնալ և տիրել Նըրիմին:

Այնուհետև 100,000 հայերից մի մասն ստիպուած գաղթեց Լեհաստան, միևս մասը կոտորուեց, երրորդ մասն էլ անցավ Մուլդովալաքիա (Ռումանիա): Նըրիմում հայերի թիւն ալսօր հաղիւ 10,000 հոգու է հասնում. որոնց մի մասը հայ կաթողիկ է: Ռումինիայի հայերի թիւը մօտ 14,000 է, որոնք խիստ հարուստ և բարեկեցիկ կեանք ունին, պարապում են մեծ մասամբ գիւղատնտեսական գանաղան ձիւղերով և մեծ կալուածատէրեր են:

Մուլդաւիայից հայերն անցան Տրանսիլվանիա և հիմնեցին Հայաքաղաք, Գերլա և Պաշպալով քաղաքները: Նրանք իրաւունք ստացան ներքին ինքնավարութեան և քաղաքի բոլոր գործերը. դատավարութիւն, և ոստիկանութիւն կառավարուում էր հայ ծերակոյտի ձեռքով: Սրանք բոլորը կաթողիկ են և լեզուն մոռացած, միայն եկեղեցական ծէսը կատարում է հայերէն: Սրանք բոլորն էլ հարուստ են ու մեծափարթամ, ոմանք նշանաւոր գիրքի և աստիճանի հասած՝ ազգեցութիւն ունին նոյն իսկ ունգարական պարլամենտում:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Հայերը Լեհաստան գաղթեցին Բազրատունեաց անկումից յետոյ, Ալփասլանի ժամանակ և Նըրիմից, երբ նրան տիրեցին Օսմանյիք: Մի ժամանակ հայ գաղթականների թիւն հասավ 200,000 հոգու Լեհաստանում: Հայերի բնակութեան գլխաւոր վայրերն էին. Իլվով կամ Լեմբերգ և Կամենեց: Հիմա զուտ հայ բնակչութեամբ քաղաք է

Կուտի քաղաքը, ուր ապրում են մօտ 4000 հայ և ղեռ խօսում են հայերէն 1)։

Լեհ թագաւորները կամենալով ծագկեցնել առևտուրն իրանց երկրում, սիրով էին ընդունում հայերին և արտօնութիւններ տուին նրանց։

Կամենեցի և Իլլովի հայերն իրաւունք ստացան ներքին ինքնավարութան, որ կոչւում էր Վոյթ։ Վոյթը բաղկանում էր 12 հայերից, որոնք ընտրովի էին և կառավարում էին հայոց գործերը ազգային սովորոյթով և Մխիթար-գօշի Դատաստանադրքով։ Դատավարութիւնը հայերէն էր. Անիի բարբառով, սակայն երբ թաթարստանի հայերն եկան Լեհաստան, զարծեան սկսեցին վարել նաև թաթարերէն, որովհետև նրանք մայրենի լեզուն մոռացել էին։ Շուտով հայերն իրանց ձեռն առնելով երկրի հարստութիւնը, հասան բարձր դիրքի և ազգեցութեան. հիմնեցին մեծամեծ եկեղեցիներ ու վանքեր. մինչև անգամ տպաւան։ Սակայն հայերի հանդիսը շուտով վրդովուեց։ Պարսից հալածանքներից փախչելով, Լեհաստան էր եկել Մեքիսեդեկ կաթողիկոսը։ Սա հակառակ ժողովրդի ցանկութեան ծածուկ նիկոլ Թորոսովիչ անունով մի անբարոյական մարդու ձեռնադրեց եպիսկոպոս և հրամայեց ժողովրդին, որ հնազանդին Նիկոլին իրրև առաջնորդի։ Այս առաջնորդը անպատուելով դուրս արաւ եկեղեցուց կաթողիկոսի նուիրակներին. ժողովուրդը զայթակղած ուզեց դատի կանչել Նիկոլին. իսկ սա կառավարութեան առաջ յայտարարեց. որ կաթողիկոսի նուիրակը մի թուրք լրտես է և եկել է Լեհաստանը լրտեսելու։ Այսպիսով Նիկոլն ազատուեց դատից և այնուհետև իր հարազատ ժողովրդին հալածելու համար դիմեց եզուիտների օգնու-

1) Կարգա. «Այց Լեմբերգի հայերին», «Հայ-հեղինակներ», Երև 194.

թեան, որոնք այն ժամանակ մեծ դեր էին խաղում Լեհաստանում: Նիկոլը եզուիտներին խոստացաւ ուրանալ իր հաւատը և ճանաչել պապի իշխանութիւնը: Այնուհետեւ եզուիտները պահանջեցին, որ եկեղեցին բաց անեն և յանձնեն Նիկոլին. երբ հայերը մերժեցին, նրանք զինուորներով միջոցով կոտորեցին եկեղեցու դռները և եկեղեցին յանձնեցին Ն. կոլին:

Նիկոլը գրաւեց և հայոց միւս եկեղեցիներն ու նրանց կալուածները. փակեց բոլորը և ժողովրդին միանգամայն պրկեց հոգեւոր պիտոյքից: Հայերը դիմեցին կաթողիկոսին. սրա միջնորդութեամբ Վլադիսլաւ Թագաւորը և Իլժովի կաթողիկ եպիսկոպոսը խղճացին հայերին և հրամայեցին, որ Նիկոլը եկեղեցիները ժողովրդին տայ: Երբ եզուիտները մերժեցին այս հրամանը, Թագաւորը ինքը գնաց եկեղեցի, որ ժողովրդին յանձնէ: Խորամանկ Նիկոլը եզուիտների խորհրդով դուրս եկաւ Թագաւորի դիմաց եկեղեցական զգեստով և հալոյրդութեան սկիհը ձեռին: Թագաւորը չհամարձակուեց նրան ձեռ տալ: Յուսահատ հայերը գիմեցին հոռւ, բայց այնտեղ էլ եզուիտների միջոցով յաղթութիւն տարաւ Նիկոլը:

Կռիւն ստացել էր խիստ ծանր կերպարանք: Նորածին մանուկները ֆնացել էին անկնունք. հարսներն անպսակ, մեռելներն անթաղ:

Շատերն իրանց հոգեւոր պէտքերը լրացնելու համար գնում էին ուրիշ քաղաք. երբ վերադառնում էին, Նիկոլը նրանց ենթարկում էր սուղանքի: Մի բան էր պահանջում հաւատուրացը. «ուրացէ՛ք հայրենի կրօնը»:

Այս հալածանքի պատճառով Լեմբերգի 50,000 հայերի մեծ մասը գաղթելով ցրուեցան զանազան տեղեր և տեղում հազիւ-ճնաց 5000 հոգի:

Երբ այսպէս կործանեց ու ոչնչացրեց իր հօտը, նոր

խելքի եկաւ անօրէնը և կամեցաւ բանը հաշտութեամբ վերջացնել: Դիմեց Փիլիպոս կաթողիկոսին, որ այդ ժամանակ Պօլիս էր գտնուում և մեղայ եկաւ. կաթողիկոսը նրան ներեց և դրաւոր խոստում առաւ, որ իր հօտը Էջմիածնից չի բաժանի և հայ ծէսը կ'մնայ. Իլվովցիք չ'ը հաւատացին Նիկոլին, բայց զիջելով կաթողիկոսի նուիրակին, հաշտուեցան Նիկոլի հետ: Վերջինս մեծերից յայսր կտրելով, աշխատեց մանուկ սերունդը կրթել կաթոլիկ հոգով և Իլվովում բաց արաւ մի դպրոց:

Նիկոլի սկսածը շարունակեց և իր նպատակին հասցրեց նրա աշակերտ Վարդան Յունանեան կրօնաւորը: Նա Իլվովի հայ ժողովրդին իսպառ բաժանեց մայրենի եկեղեցուց և միութիւն հրատարակեց Հռոմի հետ (1689 թ.):

Այդ օրուանից Լեհաստանի հարուստ ու փառահեղ զաղթականութիւնն հետզհետէ նուազելով, այսօր հազիւ 5000 հայ են մնացել:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՅԵՐԸ

Հայերն Ննդկաստան անցան Պարսկաստանից, զլիաւորապէս Նոր-Ջուղայից և այստեղ էլ տեղական իշխաններից մեծամեծ արտօնութիւններ ստանալով, մեծ հարրստութիւն դիպեցին և սկսեցին դեր խաղալ որպէս զինուորական ու քաղաքական խոշոր պաշտօնեաներ: Ննդկաստանում հայոց թիւը 10,000-ից աւելի չէ եղել, այն էլ ցրուած այդ ահադին թերակողու զանազան քաղաքներում. Սուրատ, Մադրաս, Կալկաթա, Զիլլա և Բոմբէյ:

Երբ Անգլիացիք աչք դրին ձեռք բերելու Ննդկաստանը, հայերը պատուաւոր միջնորդի դեր կատարեցին: Արևելեան Ննդկաստանի ընկերութեան անդամներից էին և մի քանի նշանաւոր ու ազդեցիկ հայեր:

Հայ զաղթականների մէջ Ննդկաստանի հայերը բռնում են առաջին տեղը նրանով, որ նրանք մեծ հոգ

տարան ուսուցն ու կրթութիւնը տարածելու թէ իրանց մէջ և թէ բնիկ հայրենիքում:

Նրանք իրանց առասպելական հարստութեան հետ մի քանի անգամ ծրագիրներ յղացան հայտատանը փողով ազատելու և դրա համար գրադրութեան մէջ մտան Ռուսաց կայսրների հետ:

Քաղաքական այդ ծրագիրները թէպէտ վիժեցին, բայց մեր մտաւոր կեանքում նրանք պատուաւոր տեղ են ընդունում: Առաջին հայ թերթի լոյս տեսաւ Մազրաս քաղաքում 1793 թ. «Ազգարար» անունով: Ամենահին քրիստոնեայ եկեղեցին Հնդկաստանում, Չիչրայի հայոց եկեղեցին է, հիմնուած 1695-ին:

Նշանաւոր է և Կալկաթայի հայոց եկեղեցին իր գեղեցիկ գոնդակաձևով և «հայոց հիւրանոցով» ուր ամեն մի պանդուխտ հայ իրաւունք ունի 3 ամիս ձրի ապրելու:

Կալկաթայում 1840 թուականներից սկսաւ իր դործունէութիւնը «Արարատեան ընկերութիւնը», որ հիմնեց «Մարդասիրական ճեմարան», մամուլ և ապարտն: Այդ ընկերութեան աջակցութեամբ և Մեորոպ Թաղեադեանի խմբագրութեամբ երկար ժամանակ լոյս էր տեսնում «Ազգասէր» լրագիրը: Դա անդրանիկ լրագիրն էր, որ զործ էր ածում մեր արևելեան աշխարհաբար լեզուն: Կալկաթայի պէս հայերն ունէին եկեղեցի, դպրոց, հիւրանոց ու տպարան նաև Մազրասում:

Մազրասայի հարուստ Սամուէլ Մուրատը մի մեծ գումար թողեց Մխիթարեաններին, որով բացուեց Մուրատեան դպրոցը: Մի ուրիշ մեծահարուստ, Ռափայէլ Դարամանեան, նոյնպէս բաց արաւ Վենետիկում Ռափայէլեան դպրոցը. 1870-ին այս երկու դպրոցները միացան Մուրատ-Ռափայէլեան անունով և դոյութիւն ունին ցարդ Վենետիկում Մխիթարեանների հսկողութեան տակ:

Նոյն Հնդկաստանի հայերն էին որ մի քանի հարուստ

1) Կարդա «Մխիթարեանների յօդուածը».

«Հայ Հեղինակներ». Բ. տպ.

կտակ թողին նոր-նախիջևանի հայոց անուանով դպրոց բանալու: 1)

Անդլիացոց տիրապետելուց յետոյ Հնդկաստանի հայերը չ'զիմանալով մրցման, կորցրին իրանց նշանակութիւնը և ցրուեցան Հնդիկ արխիպելագոսի զանազան կղզիները զլխաւորապէս Զաւա, այնտեղից էլ անցան մինչև Զինաստանի ափերը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ:

1659-ին Պարսկաստանի հայ առևտրական մի ընկերութիւն կամենալով Ռուսաստանում առևտրի արտօնութիւն ստանալ, մի թանկագին ընծայ ուղարկեց Ալէքսէյ Միխայլովիչ թագաւորին: Դա թանկագին մի դահ էր, զարդարուած ականդէններով, որ շինել էին հայ արհեստաւորները: Կազմուեցաւ մի առևտրական դաշինք, որով Հնդկաստանի և Պարսկաստանի ապրանքները Կասպից ծովով հայերը տանում էին Ռուսաստան, իսկ այնտեղից դուրս էին տանում թանկագին մորթիներ ու մետաքներ:

Պետրոս մեծն էլ ի նկատի ունենալով իր երկրի բարգաւաճումը, ամեն կերպ աջնաւորում էր հայերին գրաւել Ռուսաստան: Առաջին թիթենին տնկողը և մետաքսի առաջին գործարան հիմնողը Ռուսաստանում հայերն էին:

Պետրոս մեծի հետ էր, որ Ղարաբաղի հայ մելիքներն սկսեցին իրանց քաղաքական յարաբերութիւնները:

Տասնութերորդ դարում Ղարաբաղը բաժանուած էր հինգ մելիքութիւնների, որոնք կոչւում էին Խամսայի մելիքներ (հինգ մելիքներ), Ջրաբերդ, Գիւլիստան, Վա-

1) Կարդա՛, «Հայ-հնդինական», Միքայէլ Նալբանդեանի կենսագրութիւնը, երես 41, «Հնդկաստանի հայերը», եր. 205. և Թաղեաղեանի կենսագրութիւնը.

բանդա, խաչէն և Տիգրակ: Բնակիչները թիւը մօտ 300,000 էր, որոնց երկու երրորդը հայ, մի երրորդը մահմեդական էր:

Այդ ժամանակները Եւրոպայից Ղարաբաղ, իր հայրենիքը, վերադարձաւ Իսրայէլ Օրին. նա Լըկար ժամանակ ապրելով Ֆրանսայում և Բաւարիայում, նմտացել էր զինուորական արուեստին, գրաւել էր Պֆալցի իշխանի սիրտը և նրա հաւանութիւնն ստնելով, կամենում էր բաւարական զօրքերի և Ղարաբաղի մելիքների օգնութեամբ ազատել արևելեան Հայաստանը: 1699 թ. մելիքները գաղտնի ժողով կազմեցին Օրիի դեկավարութեամբ և աղերսական թղթեր ուղարկեցին Պետրոս մեծին, Բաւարիայի իշխանին և Հռոմի պապին:

Այդ թղթերն յանձնուեցան Օրին և Մինաս վարդապետ Տիգրանեանին:—

Պետրոս մեծը հանձարեյ հեռատեսութեամբ հասկոցաւ այս պատգամաւորութեան նշանակութիւնը և անմիջապէս Օրին դեսպանութեամբ ուղարկեց Պարսկաստան, որի նպատակն էր լրտեսել թշնամու Երկիրը և ոտքի կանգնեցնել հայերին: Օրին աջողութեամբ կատարելով դեսպանութիւնը, յայտնեց կայսրին, որ հայերն ամեն ըոպկ պատրաստ են կայսրին օգնելու:

Երբ Պետրոս-մեծը տիրեց Դերբենդին ու Բազուին, հայ մելիքները Վրաց Վախթանգ թագաւորի հետ ղորքով ընդ առաջ ղնացին դէպի Կասպից ծովը, բայց ուռանալը յանկարծ թողին գրաւած Երկիրները և հեռացան: Հայերի այս վարմունքը վայրացրեց Օսմանցիներին, որոնք յաւձակուեցան և գրաւեցին Ղարաբաղը. այդ ժամանակ էր ահա, որ տեղի ունեցան Դաւիթ բէգի կոիւնները: Վերջի վերջոյ մելիքները Ռուսաստանից յուսախաբ, ճանաչեցին Նաղիր Շահի գերիշխանութիւնը:

Անուհետև Խամսայի մելիքութեան մէջ սկսուեց

ներքին կռիւ: Մեղիք Շահնազարն սպանելով իր աւագ եղբօրը, խլեց նրանից Վարանդայի իշխանութիւնը: Նրա այս վարմունքը պատժել կամեցան Ջրաբերդի Մելիք Ազամը և Գիւլիստանի Մելիք Ուսուփը: Մեղիք Շահնազարն իր աղջիկն ու Շուշու Բերդը տալով Փանահ-խանին, դուրս եկաւ հայ մելիքների դէմ: Տասներկու տարուայ անըզհատ կռիւներից յետոյ Մելիք Ազամն ու Մելիք Ուսուփը լաղթուած՝ փախան Վրաստան և նրանց երկիրներին տիրեց Փանահ-խանը. նրանք կրկին տէր դարձան իրանց երկիրներին Փանահի իշխանութիւնը ճանաչելուց յետոյ:

Հայոց լարաբերութիւնները Ռուս-արքունիքի հետ վերստին նորոգուեցան եկատերինէ Բ. կայսրուհու օրով: Այժմ Հայոց գործերը վարողը Յովսէփ եպիսկոպոս Արղութեան երկախաբաղուկն էր, որ վերջն ընտրուեց կաթողիկոս:

Պարսկաստանի խռովութիւններից օգտուելով ռուս զօրերը գրաւեցին Կասպից ծովափնեայ քաղաքները, և հասան ու տիրեցին Շամախի քաղաքին: Մելիք Ազամի և Ուսուփի որդիքը, Մէջլում և Աբով, մելիք Բախտամի հետ (Տիզակի Մելիք) կրկին հաւատարմութեան թուղթ տուին ռուսներին: Այս թուղթը խիստ թանկ նստեց հայերին, որովհետեւ Փանահ-խանի որդին Իբրայիմ, տակն ու վրայ արաւ մելիքների երկիրը և ժողովրդից մի ահագին հատուած ստիպուած գաղթեց Վրաստան, Ղլար և Աժտարխան:

Իբրահիմ խանը չէր ուզում ճանաչել Մամադ խանի գերիշխանութիւնն, ուստի 1795-ին Աղա-Մամադ խանն չարձակուեց Ղարաբաղի վրայ և պաշարեց Շուշին: Իբրահիմի հետ այս անգամ միացել էին և հայ մելիքները՝ բացի մելիք Մէջլումից: Շուշին չառած շահն ուղևորուեց Վրաստան և թեթեւ պաշարումից յետոյ տիրեց Թիֆլիզին:

Աւերն ու կոտորածը Թիֆլիզում տեւեց երեք օր ու գիշեր, 12,000 հայ և 4,000 վրացի մահուկ և աղջիկ դէրի տարուեցան: Յաջորդ տարին Շուշին արդէն առնուած էր. բայց հայ մէլիքներն ազատուեցան պատժից, որովհետեւ Շահի սենեկապետը սպանեց իր իշխանաւորին քնած ժամանակ և պարսից զօրքերը հեռացան Շուշուց (1697): Շուտով Ղարաբաղին տիրեց Պօտեօմէին զօրավարը:

ՊԱՐՍԻՅ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Պատժալի շահի որդին՝ Աբաս Միրզան կամենալով նորէն ետ առնել ռուսաց զրաւած երկիրները՝ կրկին պատերազմ հրատարակեց: Կոխը տեւեց մի քանի տարի. ռուսները ստիւաւաթիւ էին, բայց նրանց մեծ օգնութիւն էին հասցնում հայերը ղէնքով, կամաւոր զօրքով և պաշարով, մինչև որ Աբաս Միրզան ստիպուեց հաշտութիւն խնդրել: Գիւլիստանի պայմանով 1813-ին Ղարաբաղը մնաց ռուսներին:

1826-ին Աբաս Միրզան կրկին անցաւ սահմանը և 80,000 զօրքով Շուշին պաշարեց: Զնայելով ռուս զօրքի թիւը իրստ բիշ էր ընդդում և պաշարը ստիւաւ, բայց հայ բնակիչներին անձնուէր քաջութեամբ պաշարեալներն աջողութեամբ դիմադրում էին թշնամուն: Աբաս Միրզայի առաջն առնելու դուրս եկաւ իշխան Մատաթեանը, Թիֆլիզից: Շամքորի մօտ հաջարդեց պարսից առաջապահ գունդը և խլելով նրանց ռազմաթեքը շտապեց դէպի Գանձակ, ուր տեղի ունեցաւ գլխաւոր ճակատամարտը: Աբաս Միրզան յաղթուեց ու հալածուեց:

Այնուհետեւ Մատաթեանը անցաւ պարսից սահմանը, մտաւ Ղարաբաղ և տիրեց Ահար քաղաքին:

Միւս կողմից դէպի պարսից սահմաններն առաջացաւ գլխաւոր հրամանատար Պասկեիչը. նրան ընկերա-

ցած էր ներսէս եպիսկոպոսը, որ առաջնորդում էր հայկամաւորներին խմբին: Շուտով առնուեց էջմիածինը. Սարգարաքաղը, Նախիջևանը, Երեւանը և ամբողջ Պարսկահայաստանն անցաւ ռուսաց ձեռը:

Այնուհետեւ ռուսները մտան բուն Պարսկաստան, տիրեցին Ատրպատականին, Ուրմիային և հասան մինչև Թաւրիզ: Այստեղ պարսիկներն հաշտութիւն խօսեցին և Թուրքմէնշայի գաշնադրութեամբ Արաքսը ճանաչուեց սահմանադիմ երկու տէրութիւններին:

Այս հաշտութիւնից յետոյ ռուսաց առաջնորդութեամբ 40,000 հայ թողին իրանց տուն ու տեղը և գաղթեցին դէպի Ռուսահայաստան:

Նոյն տարին Պասկևիչն ստիպուած էր իր ղէնքն ուղղել տաճկաց դէմ: Նա շտապով տիրեց Կարսին, առնուեց Ախալցխան ու Արտահանը և զօրքը հետզհետէ կենդրոնացաւ էրզրումի մօտերքը, ուր երկու ճակատամարտումն Օսմանցիք չարաչար յաղթուեցան:

Էրզրումը, չընայելով իր ռազմական ամրութիւններին, շուտով անձնատուր եղաւ: Ռուսաց բանակը հասել էր մինչև Ադրիանոպոլիս: Այդտեղ էլ կայացաւ հաշտութիւնը, որով Ռուսաստանին մնաց Ախալցխան, Ախալքալսքը, Անապան և Փոթին: Այդ պատերազմի ժամանակ էլ մօտ 90,000 հայ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ Տաճկաստանից գաղթեցին դէպի ռուսաց սահմանները և հաստատուեցան Ալեքսանդրօպոլի, Ախալքալսքի և Ախալցխայի գաւառներում:

ՊՕԼՕԺԵՆԻԷ, ԴՊՐՈՅՆԵՐ, ՄԱՄՈՒԼ.

Էջմիածնին տիրելով, Ռուսաստանը տէր դառաւ գրեթէ ամբողջ հայութեան սրտին: Հարկաւոր էր որոշել էջմիածնում նստող կաթողիկոսներին իրաւասութեան սահմանը և ահա 1836 թ. Յովհաննէս Կարբեցի կաթող-

ղիկոսի օրով կազմուեցաւ մի կանոնադրութիւն, որ կոչուում է պօրժենիկ: Այս օրէնքով հայ եկեղեցու գլուխ և պետ ճանաչուում է հայ-ընդհանրական կաթողիկոսը: Նրա ընտրութեան մասնակցում են համայն հայերն էջմիածնի տաճարում, իրանց պատգամաւորների միջոցով: Ընտրուածը հաստատուում է ռուսաց կայսեր ձեռքով:

Կաթողիկոսին օգնում է Սինոդը, որ ունի ութ անգամներ: Անդամներին ընտրում է կաթողիկոսը և հաստատում կայսրը: Սինոդի ատեանապետը վեհափառ հայրապետն է: Սինոդի հսկողութեան տակ են գտնուում ռուսա-հայոց գրեթէ բոլոր հոգևոր գործերը: Սինոդի իրաւասութիւնը արտասահմանի հայութեան վրայ չի տարածուում:

Սինոդը գտնւում է Ներքին գործոց նախարարութեան հսկողութեան տակ: Տէրութեան կողմից սինոդում շարունակ մասնակցում է մի պաշտօնեայ, որ կոչւում է պրօկուրօր:

Նա հսկում է, որ պետական օրէնքներին հակառակ որևէ գործ չկատարուի Սինոդում:

Ռուսաստանի հայութիւնը բաժանւում է հինգ թեմերի. Երևանի, Թիֆլիզի կամ Վրաստանի, և Իմերեթի, Շուշու, Շամախու, Բեսսարաբիայի և Աստրախանի: Թեմերը կառավարում են առաջնորդներն իրանց ստորագրեալ կոնսիստորիաներով և հոգևոր ատեաններով: Սրանք բոլորը ենթակայ են սինոդին: Հոգևոր պիտոյքներին բաւարարութիւն տալու և կրթութեամբ հոգևորականներ պատրաստելու համար ամեն մի թեմում օրէնքով պիտի լինի մի-մի հոգևոր միջնակարգ դպրոց:

Այդպիսի դպրոցներից ամենահինն ու յայտնին Ներսիսեան դպրոցն է, Թիֆլիզում, որ հիմնեց Ներսէս եպիսկոպոսը (ապա կաթողիկոս) 1825 թ. Այս դպրոցի դերը ռուսահայ լուսաւորութեան գործում շատ մեծ ու նշանա-

ւոր է: Սա առաջինն էր, որ տարէց տարի ստուար բողմաթիւ կրթուած սերունդներ տուաւ Կովկասեան հայութեան, որոնք կեանքի ամեն ասպարիզում սկսան մեծ գեր խաղալ: Այս դպրոցում հիմնուեց ու զարգացաւ ներկա աշխարհարար լեզուն, սրա սաներն ու ուսուցիչներն էին առաջին հայթերթի և հայթատրոնի հիմնողները Կովկասում: Առաջին տպագրական մամուլը Թիֆլիզում, նոյնպէս այս դպրոցին էր պատկանում: Մալքեանի լեզուն մոռացած հայութեան մեջ հայերէն նորէն տարածողը այս դպրոցի սաներն և դան: Գաւառական դպրոցների ուսուցիչները ստուար բազմութիւնը միշտ եղել են այս դպրոցի սաները, ինչպէս նաև քիչ թէ շատ կրթուած քահանաներն ու վարդապետներն ամբողջ Կովկասում:

Հայերի լուսաւորութեան գործին նպաստեց նաև Լազարեան ճեմարանը Մոսկուայում, որ հիմնել էր Յովակիմ Լազարեանը 1815 թ.: Այդ դպրոցից էլ դուրս եկան նշանաւոր հայ ուսեալներ ու հեղինակներ և այդ դպրոցի շուրջն էին խմբուած մի ժամանակ հայ մամուլի ներկայացուցիչներ:

Լազարեան տոհմը բացի այդ դպրոցից երկու դար շարունակ ահագին ծառայութիւններ է մատուցել հայադղին իր հեռատես գործունէութեամբ:

Լազարեանները Հին Զուղայից էին, որոնք Շահ-Աբասի ստիպմամբ դադթեցին և հաստատուեցան Սպահան: այնտեղ նրանք հայոց ազգապետ էին ճանաչուած և պարսից գանձարանի տեսուչ էին:

Պարսկաստանի խռովոյթիւնների ժամանակ նրանք գադթեցին Ռուսաստան և բնակութիւն հաստատեցին Մոսկուա: Այնտեղ նրանք հիմնեցին մետաքսի գործարան, որով արժանացան Եկատերինէ կայսրուհու ուշադրութեանը և ստացան ազնուականութիւն:

Լազարեաններն այնուհետև մօտիկ յարաբերութեան

մէջ էին ռուս արքունիքի հետ և շարունակ բարեխօս ու միջնորդ էին հաջողգի եւ ռուս արքունիքի յարաբերութիւնների ժամանակ:

Նրանք իրանց ծախքով կառուցին Մոսկուայի և Պետերբուրգի հայ եկեղեցիները և առատ ու հաստատուն եկամուտներով ապահովեցին: Նրանց շնորհիւ Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի և Նոր-Նախիջևանի հայերը բաւական խոշոր արտօնութիւններ և աջակցութիւն ստացան կառավարութիւնից:

Ռուսաց տիրապետութեան և հին-հայտատանի սահմանները կրկին գաղթեցրած հայերի շնորհիւ Կովկասը մի նոր կեանք առաւ, երկու կողմի համար էլ շահաւէտ: Հայերն ռուսաց հովանաւորութեան տակ վերջապէս հասան իրանց դարերով կորցրած ու որոնած նպատակին. կեանքի, դոյքի, կրօնի ու լեզուի ազատութեան և այնպէս հետեւ նուիրութեան իրանց սովորական պարապմունքներին. երկրագործութեան, արհեստների, ուսման և առետրի: Ռուսաց համար էլ դա շահաւէտ էր, որովհետեւ նոր տիրած կիսաւեր ու վայրենացած երկրում նրանք ի դէմս հայերի գտան մի ժիր, հաւատարիմ, ընդունակ ու աշխատասէր ժողովուրդ, շինարար և լաւ հարկատու, որ գիտէր երկիրը մշակել և արդիւնաբերութիւնը ծաղկեցնել: Կեանքի և գոյքի ապահովութիւնը բարւոքեց հայերի տրնտեսական դրութիւնը, նրանք այնուհետեւ մտածեցին նաեւ ուսման և կրթութեան մասին. մի մասը մտաւ պետական դպրոցները, միւս մասը հաջ ծխական կամ միջնակարգ դպրոցները, որոնք հետզհետէ սկսան աճել ու տարածուիլ:

Սկսան դպրոցներ բացուել նաեւ աղջկանց համար, որոնցից անուն հանեցին մանաւանդ Գայիանեան և Յովնանեան ուսումնարանները Թիֆլիզում:

Պարբերական մամուլն էլ առաջինն սկսուեց Թիֆլիզում

Կովկաս թերթին էր, որ հրատարակուել սկսուեց փոխար-
քայ Վօրօնցովի նախաձեռնութեամբ Ռուսերէն և հայերէն
1847 թ.: Դրա խմբագիրները Ներսիսեան դպրոցի ուսու-
ցիչներն էին: Կովկասը դադարելուց յետոյ 1850-ին ըս-
կսուեց «Արարատ» աշխարհաբար թերթը Գաբրիէլ քահ.
Պատկանեանի խմբագրութեամբ: Պարբերական մամուլի
մէջ ամենից մեծ դեր կատարողն ու մեծ ազդեցութիւն
էր ունեւորը եղաւ «Տիւսիսափայլ» ամսաթերթը, որ հիմնե-
ւեց Մոսկուայում 1858-ին Ս. Նազարեանի խմբագրու-
թեամբ և Միքայէլ Նալբանդեանի աշխատակցութեամբ:
Այնուհետև հայ մամուլն աճեց ու բարգաւաճեց զխառ-
նապէս Ռիֆլիգում գարկ տալով հայ կեանքի բազմակող-
մանի քննադատութեան և զարգացման: Այդ կողմից առաջ
նութեան և տեսականութեան դափնին ստատկանում է Գ.
Արծրունու հիմնած «Մշակ» լրագրին:

Միայն պարբերական մամուլը չէր բարգաւաճողը.
առաջ եկան տաղանդաւոր ու բեղմնաւոր գիտնականներ,
բանաստեղծներ, վիպասաններ, թատրերգուներ, դերա-
սաններ, երաժիշտներ, նկարիչներ, ու ճարտարապետներ:
Հայ-ազգը ցոյց տուաւ, որ ընդունակ է ըմբռնելու եւրո-
պական կուլտուրայի բազմազան ճիւղերը, իւրացնելու
այն և պատուաստելու իր մանուկ սերնդին:

Աբովեանը, Գամառ-Քաթիբեան, Պուշեանը,¹⁾ Բաֆ-
ֆին, Սունդուկեանը, դերասան Ամերիկեանն ու Զմէկ-
եանը, Միքայէլ Նալբանդեանն ու Շահ-Ազիզը ցոյց տու-
ին, որ Խորենացիները և Եղիշէները տաղանտը դեռ մե-
ռած չէ հայ ազգի մէջ:

Հիմնուեցան աշխուհետև մարդասիրական և բարե-
դործական ընկերութիւններ կրթական կամ բարեգոր-
ծական նպատակներով: Թիֆլիգում հիմնուեց զրքեր

1) Սրանց բոլորի մասին կարգաւ «Հայ-հեղինակներ»:

Ֆրատարակելու մի ընկերութիւն: Գաւառներում ծխական դպրոցների կողքին բաց արին էժանադին գրադարաններ ու ընթերցարաններ, ուր հայերէնի հաւասար երբեքն նաև աւելի ստացւում ու կարգացւում էին ռուսերէն թերթեր ու գրքեր:

ՀԱՅԵՐԸ ԹԻԻՐՔԻՍՅՈՒՄ:

Ոչ մի ազգի տիրապետութիւնը հայերի համար այնքան ծանր, երկարատև ու կորստաբեր չէ եղել, ինչպէս թուրքերին: Թուրքերի քաղաքականութիւնն էր ջնջել տիրած ազգի ազնուական ցեղերին, որոնք այս կամ այն կերպ դեռ կարող էին ձգտում ունենալ ազատութեան: Թուրքերի հասկացողութեամբ հպատակը ուղյա-ստրուկ է, որի ինչքը և գոյքը պատկանում է Սուլթանին: Նըրանք սովորութիւն ունէին ժողովելու հպատակ ազգերի մանուկներին, թլփատում էին և մեծացնում իբրև մահմետական. գրանցից էր կազմւում ենիչլերի կոչուած արիւնարբու զօրքը: Հարկը հաւաքում էին կապալառուների միջոցով. ուստի հարկահանութիւնը կատարւում էր ծայրայեղ անխիղճ կերպով: Այս ամենը պիտի կրէր օսմանեան հպատակ հայը, զրա համար էլ Հայաստանի տւերածութիւնն ու աղքատութիւնը, ժողովրդի ագիտութիւնը ու կուլտուրական անկումը հասաւ ծայր-աստիճանի: Հայը իրաւունք չունէր զէնք կրելու և հագնելու այն հագուստը, որ որոշուած էր մահմետականի համար:

Այսպիսի ճնշումների տակ աղքատացած ժողովուրդն ստիպուած էր պանդխտելու ծովափնեայ քաղաքներն ու Պոլիս, ուր նա սկսում էր պարապել արհեստներով և առևտրով: Որովհետև քաղաքներում, Եւրոպայի ազդեցութեան տակ, քիչ թէ շատ կեանքի ապահովութիւն կար, հայերը վաճառականութեան և արհեստների շնորհիւ ձեռք

բերին բաւական մեծ հարստութիւն և իրանց ձեռք կենդրոնացրին առևտրի խոշոր ճիւղերը: Հարստութեան մի այլ աղբիւր էլ տէրութեան կապալներն էին որ վերցնում էին հայ վաճառականները:

Այսպէս հարստացած հայերից մեծամեծները կոչւում էին ամիրա և շնորհիւ իրանց վայելած դիրքի կառավարութեան առաջ, մեծ ազդեցութիւն ունէին հայերի ներքին գործերի վրայ:

Օսմանեան կառավարութիւնը հայոց ներքին կեանքին շատ չէր խառնուում, թողնելով կառավարութիւնը գլխաւորապէս հայ հողկորականներին, որոնց գլուխ ճանաչւած է հայոց պատրիարքը Կ. Պօլսում: Առաջինը Յովակիմ եպիսկոպոս Բրուսայի առաջնորդն էր, որ 1461-ին հաստատուեց հայոց պատրիարք և նրան յանձնուեց աշխարհիկ և հողեւոր գործերի վարումը:

Պատրիարքներն ընտրւում և տապալւում էին մեծ մասամբ նշանաւոր ամիրաների կամքով. նրանց խորհրդով էլ պատրիարքը կառավարում էր հայ ազգի գործերը: Պատրիարքն իր հաստատութեան համար տէրութեան մի որոշ տուրք պիտի տար, սա մի չարիք դարձաւ և անարժան հողկորականներն այս տուրքը բարձրացնելով միմիանց ձեռից խլում էին իշխանութիւնը և ապա աշխատում նոյնը կրկնակի հանել ժողովրդից: Այս ամենին վերջ տուաւ Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցին, որ 26 տարի պատրիարք մնալով, բարձրացրեց պատրիարքի դիրքն ու պատիւը: Երուսաղեմի պատրիարքութիւնը նա յանձնեց իր ընկեր Գրիգոր վարդապետին: Այս երկուսը միասին աշխատեցան և պայծառացրին Երուսաղեմի վանքը: Գրիգոր պատրիարքը ութ տարի վիզը շղթայ քցած շրջեց, փող հաւաքեց և պարտքից ազատեց Երուսաղեմի հայոց վանքը, զբաւ համար էլ կոչուեց շղթայակիր:

ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Մինչդեռ հայ պատրիարքները կաշառներով աշխատում էին իշխանութեան գլուխ անցնել և մինը միւսին տապալել, կաթողիկ հոգևորականները, մասնաւորապէս եղուիտները ըսուն էին զրել Կարին, Դերձան, Կարս, Կ. Պօլիս և սկսել էին քիչ-քիչ իրանց որողայթները մէջ քրցել հայերին:

Կաթողիկ հայերը բացարձակ ջոկնուել և առանձին եկեղեցի հիմնել անկարող էին, որովհետև թուրք կառավարութիւնը վախենալով ևւրոպական միջամտութիւնից, այդ թույլ չէր տալիս և բոլոր հայերի համար պատասխանատու էր ճանաչում միայն հայ պատրիարքին:

Երբ թուրք կառավարութիւնը տեղեկացաւ որ հայ կաթողիկներ կան, առաջարկեց Պօղոս պատրիարքին, որ բաժանմանը վերջ տալ: Նրամանը յայտնուեց հայ կաթողիկներին և գործը խղաղութեամբ վերջացնելու համար որոշեցին ժողով գումարել և փոխադարձ համաձայնութեան գալ: Ժողովի համաձայնութեան թուղթը կարգացուեց մայր եկեղեցում և ստորագրուեց երկու կողմից:

Ժողովըղի մէջ, սակայն, դժգոհներ կային. դժգոհ էին մանաւանդ լատին հոգևորականները: Նրանց դրդմամբ մի հայ կաթողիկ լուսաւորչականի շուրեր հագած սկսեց գրգռել արհեստաւոր հայերին, թէ պատրիարքը ուրացել է Լուսաւորչին և Պապին է ճանաչում եկեղեցու գլուխ: Գրգռուած ժողովուրդը հաւաքուեց մայր-եկեղեցի և սկսաւ պատրիարքից բացատրութիւն պահանջել: Պատրիարքն ապաստանեց մի թուրքի տուն. ժողովուրդը ջարդելով պատրիարքարանի դռները ոչոքի չգտաւ այնտեղ:

Հարկ եղաւ գորքի միջամտութեան. շատերին ձեր-

բակալեցին և բտնտարկեցին ու մի քանիսին էլ կախեցին:

Այս խռովոյթին վերջ տալու համար Պեղձեան Յարութիւն ամիրայի խորհրդով որոշեցին մի կաթոլիկ վարդապետ ճանաչել հալ կաթոլիկների դուլն և պատրիարքի փոխանորդ ու նրա միջոցով տէրութեան կարգադրութիւնները յայտնել կաթոլիկ հայերին:

Այս հանգամանքից կաթոլիկներն օգտուելով մատնութեամբ կամեցան բաժանուել հայերից և ունենալ անկախ պատրիարք: Սակայն Սուլթանը բաւականացաւ հայ պատրիարքի երաշխաւորութեամբ: Այդ ժամանակ սկսուել էր լուսական ապստամբութիւնը և Նաւարինի առաջ միացեալ երոպացիների ձեռքով այրուեց Օսմանեան նաւատորմը: Օսմանեան կառավարութիւնը կասկածելով հայ կաթոլիկների վրայ, որ յարաբերութիւն ունին Եւրոպացոց հետ, անասելի բռնութեամբ աքսորել տուաւ Պօլսից մօտ 12,000 հոգի. ձմեռուայ ցրտի ու քաղցի պատճառով բազմաթիւ երեխաներ կոտորուեցան:

Պատերազմը վերջանալուց յետոյ աքսորուած հայկաթոլիկները վերադարձան և իրաւունք ստացան անկախ եկեղեցական համայնք կազմելու. սեփական պատրիարքի իշխանութեան տակ:

Այս անցքերի մէջ մեծ դեր խաղացողը Յարութիւն ամիրա Պեղձեանն էր, հասարակ ծնողների ղաւակ, անսահման բարի, առատաձեռն և պետական մեծ տաղանտի տէր, նա բարձրացաւ իր տոհմատի շնորհիւ և դարձաւ արքունի դրամահատութեան գլխաւոր:

Նա վայելուած էր սուլթանի անսահման հաւատը և իր զիրքն ու ազդեցութիւնը գործ էր դնում անխտիր բոլոր ազգերի բարեկեցութեանը նպաստելու:

Նա իր ծախսով շինել տուաւ հայոց և լուսաց եկեղեցիներ, հիմնեց ուսումնարաններ: Շինեց Ս. Փրկչի վանքը և հիմնեց ազգային հիւանդանոցը: Հիմնեց մոմարան և

իրաւունք ստացաւ մոմավաճառութեան, որից մինչև այն ժամանակ զուրկ էին քրիստոնեաները: Պեղծեանը մեռաւ 1834-ին. բոլորն առանց ազգի և կրօնի խտրութեան ողբացին նրա մահը:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՆԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ.

Հայ կաթողիկոսները հարցը նոր էր վերջացել, որ առաջ եկաւ հայ-բողոքականների խնդիրը: 1830 թուականներից ամերիկացի բողոքական միսիօնարները հաստատուելով Իզմիր և Պօլիս, բաց արին զպրօցներ, ուր հայ աղքատ երեխաներին սովորեցնում էին ձրի, կերակրում և միևնույն ժամանակ կրթում աւետարանական ոգով: Մեծերի համար էլ բաց էին արել կիրակնօրեայ զպրօցներ: Նրանք Ա. դիրքը թարգմանեցին աշխարհարար և սկսեցին ձրի տարածել ժողովրդի մէջ: Հիմնեցին նոյնպէս աշխարհաբար լրագիր և այսպիսով զբաւեցին բաւականաչափ հետևողներ: Յակոբ պատրիարքն սկսեց հռահդով ընդմանալ բողոքականներին և շատերին աքսորել տուտա Փոքր-Ասիա: Տեսնելով որ դրանով բանն առաջ չի գնում, սկսաւ ուշ դարձնել ուսման և կրթութեան վրայ, որի միջոցով միայն կարելի էր կուռիլ միսիօնարների հետ: Ուսման գլխաւոր կենդրոնը Իւսկիւտարի ձեմարանն էր հիմնուած 1838-ին, որ դրամական մեծ նեղութեան մէջ էր:

Պատրիարքի խորհրդով որոշուեցաւ ժողովրդից որչա՛տուրք առնել ազգային հիմնարկութիւններն ապահովելու համար: Այդ տուրքի զանձերը յանձնուեց ժողովրդից ընտրուած 24 հոգու, տակայն տարածայնութիւն առաջ եկաւ, որովհետեւ ամիրաներն իրանց կողմից այդ ժողովին չուզեցին մասնակցել, անպատուութիւն համարելով հասարակ ժողովրդի հետ գործելը: Ժողովրդի ընտրեալները չկարողացան առանց ամիրաների աջակցութեան գործը վարել. նրանք հարկաւոր դրամը չգտան և հրաժարուեցան գործից: Դպրոցն սկսեց կադալ: Վերջը երկար կռիւ-

ներից յետոյ կառավարութիւնը լսեց ժողովրդի ձայնը և իրաւունք տուաւ ազգային գործերը վարելու 27 հոգուց բաղկացած մի մարմնի, որը պատրիարքից և ամիրաներից անկախ էր (1841 թ.) ամիրաններն ու ժողովուրդը հաշուելով միաբան սկսան գործել արն ժամանակ երբ պատրիարք ընտրուեց Մատթէոսը:

Ռուս թուրքական սլատերադմների պատճառով տաճկահայոց կապը կարուել էր Էջմիածնից և կառավարութեան հրամանով տաճկահայ եկեղեցիներում հայ կաթողիկոսի անունը չէր լիշոււմ: Մատթէոս պատրիարքը վերըստին հաստատեց այդ կապը և որոշուեց այնուհետև Պօլսի պատրիարքին ճանաչել կաթողիկոսի փոխանորդ, ուստի պատրիարքն էլ անպատճառ պիտի լինէր Էջմիածնում ձեռնադրուած եպիսկոպոս: Մատթէոս կաթողիկոսի օրով տաճկահայերն էլ պատգամաւորի միջոցով մասնակցեցին Ներսէս Ե-ի ընտրութեան (1843 թ.):

Ազգային սահմանադրովիւն:

Մատթէոսի օրով հայոց մտաւոր կեանքը մեծ դարկ ստացաւ Պօլսում: Հիմնուեցան բազմաթիւ թաղական դպրոցներ, բացուեցան ընթերցարաններ, ինքը պատրիարքը հիմնեց «Հայաստան» անունով մի լրագիր: Նա սպասեցին գործերը վարում էր ժողովրդի աջակցութեամբ: Այս բանն ամիրաններին դուր չէր գալիս:

Պատրիարքի ինքնիշխանութիւնը սահմանափակելու համար ամիրաները մի հրովարտակ ձեռք բերին, որի զօրութեամբ պատրիարքարանում երկու ժողով պիտի գումարուէր, կրօնական և քաղաքական: Այդ ժողովներին պիտի նախագահէր պատրիարքը և առանց ժողովների որոշմանը ոչ մի գործ պիտի չկատարէր (1847):

Կրօնական ժողովը բաղկանում էր 14 հոգուց և իրաւունք ունէր կառավարելու ազգի հոգևոր գործերը,

հոգալ ժողովրդի պիտոյքը, պաշտպանել նրան փառանքի և այլագղիների ճնշումներից, առաջնորդներ նշանակել և վեճերը քննել:

Քաղաքական կամ ղեկավար ժողովը բաղկանում էր 20 աշխարհիկ անձերից, զրա պարտականությունն էր հոգալ ուսման, հիւանդանոցների, որբանոցների և այլ այս տեսակ հիմնարկությունների կարիքը: Այդ ժողովների անդամները փոխառւմ էին երկու տարին մի անգամ ընտրութեամբ: Այսպիսով ամիրաններն իրանց ձեռքով հիմը դրին ժողովրդական և ընտրական սկզբունքին՝ տաճկահայոց մէջ:

Մի տասը տարի անցնելուց յետոյ այս ժողովները կեանք ու կենդանութիւն ստացան մի խումբ երիտասարդների շնորհիւ, որոնք Պարիզում կրթուած և ֆրանսական ազատութիւնը վաշելած, ուղեցան նոյն կարգերը մտցնել և Պօլսի հայոց մէջ: Որոշուեցաւ մշակել մի մամուլամաս կանսեագրութիւն, որով ժողովրդի իրաւունքները լայնացան և ընտրական սկզբունքը հիմք դարձաւ վարչական գործերի: Այսպիսով 1860-ին հաստատուեցաւ «Ազգային Սահմանադրութիւնը», որի գլխաւոր կազմակերպողներն էին Պալեան Նիկողայոս, Գրիգոր Օտեան, Ռուսինեան և ուրիշները:

Ազգային սահմանադրութեամբ հաստատոււմ էր մի երեսփոխանական ժողով, ընտրուած ազգից: Արա անդամներ թիւը 140 էր որից 20 եկեղեցական, 40-ը դաւառից ընտրուած աշխարհականներ էին, մնացեալ 80-ը Պօլսի թաղերից էին ընտրուում: Սա կոչոււմ էր Ազգային ընդհանուր ժողով, որը և վարում էր ազգի ընդհանուր գործերը:

Այս ազգային ժողովին էին ենթարկուում կրօնական և քաղաքական ժողովները, առաջինը բաղկանում է 14

հոգևորականներից, երկրորդը 20 աշխարականներից, որոնք և վարում էին ազգի սովորական գործերը:

Նոյնտեսակ ժողովներ կային և գաւառներում, որոնք վարում էին գաւառական գործերը առաջնորդի նախադասութեամբ:

Սահմանադրութիւնն իր գէժ գիւնեց խաւար ու ժերին և առիթ դարձաւ կուսակցական կռիւների: Տէրութիւնը միջամտեց և տահմանադրութիւնն առժամանակ դադարեց: Վերջը, ժողովրդի արտունջին ու բողոքներին բաւականութիւն տալով՝ կառավարութիւնը նորից հաստատեց սահմանադրութիւնը 1869 թ. որի շնորհիւ պատրիարք ընտրուեց ժողովրդից խիստ սիրուած խրիմեան Հայրիկը:

Սա էր որ առաջին անգամ տպարան հիմնեց Հայաստանում, Վարապայ վանքում, բաց սրաւ գիշերօթիկ դրպրոց և սկսաւ հրատարակել «Արժիւ Վասպուրականի»-թերթը:

Սրա օրով Ազգային ժողովը առանձին ուշ դարձրեց գաւառական հարստահարութիւնների վրայ, որին ենթակայ էր ժողովուրդը հայ վաշխառուների և մանաւանդ քուրդ աւաղակների կողմից: Կազմուեց մ'ի ընդարձակ եւ ըսանիրուն ղեկուցագիր եւ մատուցուեց կառավարութեան: Կառավարութիւնը խոստացաւ քարտքել հայերի լըրութիւնը: Այս գեկուցագրով իսկապէս հիմք էր դրում հայոց խընդըին Տաճկաստանում, որի հետեանքները մենք յետոյ կ'տեսնենք:

Խրիմեանը հրաժարուեց 1873-ին և յաջորդ տարին պատրիարք ընտրուեց Ներսէս Վարժապետեանը:

1840 Թուականներից կաթողիկ հայերից կրթուածներն սկսան հետզհետէ մօտենալ իրանց լուսաւորչական եղբայրների և կաղմեցին Համագգեայ անունով մի ընկերու-

թիւն, որի նպատակներ դպրոցներ բանալ և կրթութիւնը տարածել ժողովրդի մէջ: Այդ կաթողիկոսներից ոմանք վերջը անցան մայրենի եկեղեցու դիրկը:

Հայոց հարցը

Ծանր հարկերից ճնշուած քրիստոնեաները Բալկանեան թերակղզում աստատմբեցան թուրքաց դէմ. նրանց օգնութեան հասան Զերնօգօրեան և Սերբեան: Եւրոպական պետութիւններն առաջարկեցին Աբդուլ Համիտ Բ.-ին բարենորոգումներ մտցնել Բալկանեան քրիստոնեաների համար:

Սուլթանը դրան պատասխանեց մերժումով և կոտորածով: Այն ժամանակ Բալկանեան պուլսնների համար դէնք վեր առաւ Ռուսաստանը և 1877-ին սկսուեց պատերազմը երկու կողմից. Բալկանեան թերակղզում և Կովկասում: Չնայելով Օսմանեան զօրքի քաջ դիմադրութեան, ռուսները մեծ կորուստներ տալով յաղթեցին և առաջ գնացին, մի կողմից հասնելով Կ. Պօլսին միւս կողմից առնելով Բաթումը, Կարսը և Էրզերումը:

Տասն ամսից յետոյ Ռուսաց զխառուր բանակը կանգ առաւ Պօլսի մօտ, Այա Ստեֆանօ գիւղում և կնքուեցաւ դաշինք: Ներսէս պատրիարքի խնդրանքը Մեծ իշխան Նիկողայոսը այդ դաշինքի մէջ մտցնել տուաւ 16-երորդ յօդւածը, հեանեալ բովանդակութեամբ. «Որովհետեւ Ռուսաց զօրքերը Հայաստանի մէջ գրաւած երկիրներից հեռանալուց յետոյ չիշեալ տեղերում կարող են անկարգութիւններ տնդիլ ունենալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները կարող են խանգարել, Բարձր Դուռը յանձն է առնում տնյապաղ իրացնել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց բնակած նահանգներում, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի ու չերքեզների դէմ»:

Այո՛ դաշնադրութեան պայմանները խանգարելու

համար Անգլիան դուռն է բերեց մի նոր վեհաժողով: Այդ ժողովը կապացու բերլինում, 1878-ին, վեց մեծ պետություններին՝ ներկայացուցնելից և մի նոր դաշինք մշակեց, որով Ռուսաստանն ստացավ պատերազմական տուգանք և գրաված երկիրներից Կարսի ու Բաթումի շրջանը, Բալկանեան մասը իշխանությունների անկախ լինելը ճանաչուեց և Բոլգարեան դարձավ Օսմանեան վասալ իշխանություն:

Տաճկահայոց համար Բերլին լարելիս օսելու զնացին երկու եպիսկոպոս. Մկրտիչ Խրիմեանը և Խորէն նարպէյ, որոնք անցնելով երոպական արքունիքները՝ միացան Բերլինում և մի յիշատակաւոր ներկայացրին Վեհաժողովին, հայերի համար խնդրելով ներքին ինքնավարութիւն քրիստոնեայ պաշտօնեաներով:

Վեհաժողովը հայերին նուիրեց 61-երորդ յօդուածը որ հետեւեալն է: «Բարձր Դուռը յանձն է առնում անյառաջ իւրացնել այն բարոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց ընտանիքի հասանդներին մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքեզների և քրդերի դէմ: Բ. Դուռը ապա նպատակի համար ձեռք առնուած միջոցները պարզապէս պիտի ծանօթացնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ»:

Հայաստանն իր անկախութիւնը կորցնելուց յետոյ ապա առաջին անգամն է, որ միջազգային դաշնագրի նիւթ էր դառնում: Այս վերջին յօդուածով հայերի վիճակի տեսնէն դառնում էին լուսաւորեալ եւրոպայի վեց մեծ պետությունները, այն ինչ առաջին յօդուածով միայն Ռուսաստանն էր պահանջում հայոց վիճակի բարոքումը:

Այս յօդուածը ցնցեց ամբողջ հայութիւնը. ամենքը կարծում էին, որ բազմաշարժար հայ ժողովուրդը վերջապէս հանգիստ պիտի գտնի եւրոպայի հովանաւորութեամբ:

Յայտնի է սակայն, որ երկու ծծմայր ունեցող որրը միշտ սոված է ֆնուժ. նոյնը պատահեց և հայերին, որոնք մէկի փոխարէն վեց ծծմայր ստացան: Ռուսաստանը, որ հայոց հարցի սաեղծողն էր, Բերլինի դաշինքից լատոյ յայտնապէս սկսաւ թշնամանալ հայերի հետ. Գերմանիան կամենալով շահել Թուրքիային, նոյնպէս հակառակորդ էր հայոց հարցին: Այսպիսով երկու մեծ և զօրեղ տէրութիւններ ներքուստ հակառակ էին մեր հարցին: Անգլիան բարեկամ էր ձեռնուում մեզ, որպէսզի հայերին կանգնացնի ռուսաց դէմ: Տարաբախտաբար Կիպրոսի դաշինքով հայոց հարցի պաշտպանը դարձաւ Անգլիան, որով աւելի զրգոնց ուսններին մեր դէմ:

Թուրքիան 61 յօդուածը չիրազործելու համար հին հալ վելայէթներն այնպէս բաժտեց, որ ոչ մի վիլայէթում հայերը մեծամասնութիւն չէին կազմում. քիւրդերին զինելով կազմակերպեց համիդէի զօրքը, որով նրանք աւելի վտանգաւոր և սպառնալի դարձան հայերի համար: Հարստահարութիւնները շատացան. հարկերը աւելի բարդւեցան և ժողովրդի դրութիւնը, որ պատերազմի ժամանակ վտանգուած էր աւերմունքից ու սովից, աւելի անտանելի դարձաւ:

Սուլթան Համիդը որոշել էր հայոց հարցը ջնջել հայերին ոչնչացնելով: Քաղաքականութեան անձանութ, բայց հայրենասէր ու ազատասէր հայ երիտասարդութիւնը բռնած չէր: Տեսնելով Բուլկանեան սպիւնի տղատութիւնը և ինկատի ունենալով Եւրոպայի երաշխիքը 61. յօդուածով, հալ երիտասարդութիւնն սկսաւ աշխատել խօսքով ու գործով: Կովկասեան հայերն իրանց ներքին լարւոքումները թողած, մտածում էին միայն տաճկահայոց ազատութեան մասին: Այդ զգացումներն ու մտածումներն առաջ բերին մի ամբողջ գրականութիւն. Բաֆֆին իր վառ-

վռնն և ազդու վէպերով սկսաւ նկարագրել տաճկահայի անտանելի դրութիւնը և ծրագիրներ մշակել նրա ազատութեան: Մանուկ սերունդը հիպնոզած էր այդ վէպերով ու ծրագիրներով մի առիթ էր պէտք որ նա զինավառ օգնութեան հասնէր իր եղբայրներին:

Բնիկ երկրում այս ամենն զգացւում էր աւելի խիտ ու խիստ զոյնքերով:

Այնտեղ միայն Բաֆֆու գրքերից չէին սովորում ճանաչել իրանց կեանքի դառնութիւնը այլ քար և սարսափելի իրականութիւնից: Եւ անա, Փորթուգալեանը Մարսելում հիմնում է առաջին լեզվախիական թերթը. «Արմենիա» անուանով:

Կովկասից սկսւում են փոքրիկ, խմբական խումբումներ ղէպի Տաճկա-Հայաստան:

Ռուսաստանի վերաբերմունքը դէպի հպտտակ ազդերը և մասնաւորապէս դէպի հայերը փոխուել էր Ալէքսանդր III-ի թաղաւորելուց յետոյ 1881-ից: Դրա օրով իշխում էր յետադէմ ոռու կուսակցութիւնը, որի նշանաբանն էր. «Ռուսաստանը ռուսների համար», ուստի սկսւում է մի սարսափելի հալածանք օտարազգիների դէմ, որոնց առաջին շարքերում ճանաչուած էին լեհերը, հայերը, հրէաները և ֆինները: 1884-ին փակուեցան հայոց դպրոցները, բայց նորէն բացուեցան երբ կաթողիկոս ընտրուեց Մակարը. Սա խոհեմ և հեռատես քաղաքականութեամբ գրաւել էր կառավարութեան համակրանքը, թէպէտ ժողովուրդը նրան չէր սիրում: Սրա ժամանակ սկսուեց հայ զինուորագրութիւնը Կովկասում:

Մակարի մահից յետոյ միաձայն կաթողիկոս ընտրուեց Խրիմեան հայրիկը և Կովկաս մտաւ չտեսնուած թափօրներով

Շատ շանցած Կովկասեան կառավարիչ նշանակուեց իշխան Գօլիցին և ինչպէս Տաճկա-Հայաստանում, այնպէս

էլ Կովկասում տիրեց միատեսակ քաղաքականութիւն. ջըն-ջել ու ոչնչացնել հայութիւնը սահմանների երկու կողմում միաժամանակ և գրեթէ միատեսակ: Հայաստանի կառավարիչ Ջէքի փաշան և Գօլիցինը կարծես մի ինձոր լինէին երկու կէս արած:

ՍՍՍՌԻՆԻ ԶՍԻԴԸ ԵՒ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Սասունը լեռնոտ և կիսով չափ անկախ մի դաւառակ է. 1890 թուականներից Սասնոյ լեռներում բուն էր դըրել մի յեղափոխական խմբակ. 1894-ին երբ քուրդ աշխրէթները ներս են խուժում Սասունը կողոպտելու, տեղացի հայերը նրանց յաղթելով ետ են մղում: Կառավարութիւնն հայերի այդ յանգեցումիւնը պատմեց կանոնաւոր զօրքերով, ուր 600-ից աւելի հայեր կոտորուեցան և Սասնի գիւղերն այրուեցան ու հիմնադատակ եղան: Անդլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից մի յանձնաժողով կազմուեց, որ ներկայ պիտի լինէր այս ջարդի քննութեանը:

Քննութիւնից երևաց, որ հայերն ապստամբ չեն, այլ ինքնապաշտպանութեան համար էին պէնք վեր առել: Այս քննութեան առթիւ, Անդլիայի ձեռներէցութեամբ կազմուեց բարենորոգումների ծրագիր. հայոց բնակած վեց հահանգների համար. Վան, Բիթլիզ, Սվազ, Պարքերզ, Տիարպերի և Էրզրում և 1885-ին ներկայացուեց սուլթան համիդին: Այս ծրագրի իրագործման թէպէտ միացել էր Ռուսիան, բայց ներքուստ հակառակ էր սրիէ ճընշում գործ դնելու թուրքաց վրայ: Սուլթանն էլ լաւ հասկանալով իրերի դրութիւնն սկսեց ձգձգել համաձայնութիւն տալը: Հայերը ձանձրացած երկար սպասելուց, Պօյ-

սում կազմակերպեցին Պապը-Ալիի ցոյցը և (1895 թ. հոկտեմբերին) կառավարութիւնից խուսափելով փակ-
ւեցան եկեղեցիներում: Վերջապէս հոկտ. 16-ին Սուլթանն
ընդունեց բարենորոգումների ծրագիրը: Սակայն ծրագրի
ոչ մի կէտը չ'կատարուած, սկսուեց ի կատար ածուել
մի այլ զեփեային ծրագիր. սկսուեցին կանոնաւոր և կազ-
մակերպուած ջարդերն ամեն հայաբնակ տեղերում: Մի
տարուայ ընթացքում աչդ ջարդերին զոհ գնացին մօտ
150 հազար հոգի, մեծ մասամբ տղամարդիկ:

Այս կոտորածների շնորհիւ բազմաթիւ հայեր դուրս
գալով երկրից, գաղթեցին Կովկաս, Պարսկաստան, հարա-
ւային Ռուսաստան, Բօլգարիա, Նգլիպոս, Եւրոպա և Ա-
մերիկա: Երկիրն սկսուեց աւերուիլ և կոտորածներին
յաջորդող սովը, աղքատութիւնը և հիւանդութիւնները որ
տեսում են մինչև այսօր, լրացնում են պակասը:

Այս ամենի վրայ Եւրոպայի ուշադրութիւնը դարձ-
նելու համար մի խումբ դաշնակցական երիտասարդներ
կազմակերպեցին բանկ Օտտօմանի առումը 1896-ի. օ-
գոստոսին: Ռումբի պայթումին զոհ գնաց նրանց առաջ-
նորդ Բաբգէնը, մնացեալներն աղատուեցան ուսուաց դես-
պանատան միջնորդութեամբ՝ իսկ Պօլսում այդ առթիւ
կոտորուեցան 10,000 հայ. մեծ մասամբ դաւաճացի մը-
շակներ: Այսպիսով 61 յօդուածը և 1895-ի բարենորոգման
ծրագիրը, մշակուած դեսպանների ձեռքով, փոխանակ
բարիքի, հիմք դարձան հայ ազգի կրած ամենառասպալի
կոտորածներին:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՅՔԵՐԸ

Ռումբինեան թագաւորութեան անկումից յետոյ էլ
Կիլիկիայի անառիկ լեռներում դեռ մնացել էին տեղեր, ուր

հայերը քաջութեամբ դիմադրելով թշնամիներին պահպանել էին կէս անկախ մի գիւղը: Այսպիսի տեղերից էին **Զէյթունն** ու **Հաճինը**, որ բաղկացած է 10 գիւղերից, վեցը զուտ հայաբնակ, իսկ չորսը խառը թուրքմեններէ հետ: Այս ժողովուրդը կառավարւում է չորս հայ իշխաններով: Սրանք իրանց ներքին գործերի մէջ անկախ, մի փոքրիկ հարկ են վճարում միայն թուրք կառավարութեան: 1862-ին կռիւ ծագեց **Զէյթունում** Ալաբաշ հայ գիւղի և թրքաբնակ ֆէթման գիւղի միջ: Այս առթիւ Մարաշի Ագիզ փաշան 30,000 զօրքով չարձակուեց հայերի վրայ, կամենալով նուաճել **Զէյթունը**, Ալաբաշն առան և հիմնադրեց արին: Թուրքերը յետոյ գնացին **Զէյթունի** վրայ, բայց **Զէյթունցիք** յաղթութիւնը տարան և մեծ աւար խլեցին թշնամուց: Կառավարութիւնը պահանջեց, որ չորս հայ իշխանները Մարաշ գան: Հայերը հասկանալով նրանց միտքը, մերժեցին և անմիջապէս պատգամաւորներ ուղարկեցին Պարզոյ Նապօլէօն Գ. կայսեր՝ միջնորդութիւնը խնդրելու: Ֆրանսիայի միջնորդութեամբ **զէյթունցի** բանտարկուած հայերն ազատուեցան և սուլթանի հրովարտակով **Զէյթունի** վարչութիւնը, դատաւարութիւնը և ոստիկանութիւնը յանձնուեցաւ տեղացիներին: —

Նշանաւոր էր և մեծ տպաւորութիւն թողեց Եւրոպայում **Զէյթունի** բնդհարումը 1895-ին. մինչդեռ տմբողջ Տաճկահայաստանում հայերը կոտորւում էին առանց բնդդիմութեան, **Զէյթունցիք** դերի վերցըլն զաւթաբաւին իր սպաներով և 600 զինուորներով: **Զէյթունի** վրայ գնաց **Բէմզի** փաշան 10,000 զօրքով և պարտութիւն կրեց: Հաշտութիւնը կապցաւ Եւրոպայի Դեսպանների միջնորդութեամբ, փոխադարձ զիջումներով: Այնուհետև **Զէյթունի** գալմագումը քրիստոնեայ է նշանակուում: —

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՆՑՔԵՐ:

Տաճկահայերի զրկանքները չէին կարող առանց արձագանքի ֆուլ. Կովկասեան հայերը, Հնչակեան, եւ Դաշնակցական կուսակցութիւններ ի միջոցով խումբեր էին կազմակերպում և սահմանն անցնելով՝ աշխատում էին օգնել իրանց տառապեալ եղբայրներին: Դաժան էր Գօլիցինի վարչութեան վարմունքն այդպիսի խմբերի հետ: Նրանց բռնելով բանտարկում և դատապարտում էին ինչպէս աւագակներ, միջդեռ ինքը, ռուս կառավարութիւնն ու ազգը զարեբով կոխներ է մղել քրիստոնեայ ժողովրդների ազատութեան համար և 16 ու 61 յօդուածներով ճանաչել հայերի իրաւունքը. Գօլիցինի ժամանակ ղէպերը տեղի ունեցան, սը ռուս կօղակները անցնելով սահմանը, հալածեցին ու կոտորեցին հայ յեղափոխականներին, որոնք երկու կրակի մէջ, թուրքաց և ռուսաց միաժամանակ, հաստատկուեցան հերոսաբար: Կովկասում, Գօլիցինի հրամանով կրկին փակուեցան հայ դպրոցները, հետզհետէ փակուեցան բարեգործական, մարդասիրական և հրատարակչական ընկերութիւնները. արքունիս զրաւուեցան դպրոցական շէնքերն ու կալուածները. փակուեցան հայ գրագարան-ընթերցարանները, և գրաւուեցան հայ-եկեղեցական կալուածները:

Կալուածների գրաւումը տեղի ունեցաւ 1903 թ. յունիսին: Ժողովրդի համբերութիւնն հատել էր արդէն. և նա սկսեց բողոքել: Բողոքի առաջին կաղմակերպողը Ղարաքիլիսան և ապա Ալեքսանդրօպօլն էր, որ կաթողիկոսից պահանջեց կալուածները չ'տալ և բողոքել կոյսեր: Այնուհետեւ ամբողջ Կովկասում երևան եկաւ մի կանոնաւոր, միատեսակ և հաստատուն պատասխան. ամեն տեղ մերժում էին կալուածներն յանձնել կառավարութեան կամովին. տեղ-տեղ մինչև անգամ նշաններ երեացին զինեալ զիմադրութեան.

խաղաղ ժողովրդական ցույցեր տեղի ունեցան գրեթե ամեն տեղ: Արան յաջորդեց բանտարկութիւն և աքսոր. մօտ չորս հարիւր հոգի, նշանաւոր հոգեւորականների հետ Գօլիցինի ձեռքով արսորուեցան Ռուսաստանի զանազան հայ հանգները: Իր ունեցած ատելութիւնը դէպի հայերը, Գօլիցինը ներշնչուով էր նաև հարեան վրացի և թուրք ազգերին մամուլի և պաշտօնեաների միջոցով: Այդ էր պատճառը, որ երբ փորձ արին սպանելու Գօլիցինին, թուրք պառլամենտները ցաւակցութիւն յայտնելով, թոյլտուութիւն էին լնդրել որ հայոց հետ հաշիւը իրանք վերջացնեն:

Առիթը շուտով ներկայացու: Գօլիցինը թէպէտ հեռացել էր Կովկասից, բայց նրա ցանած սերմերը դեռ կենդանի էին: 1905 թ. հատկանշական յաղթութիւնները ցնցեցին ամբողջ Ռուսաստանը և նախկին փոքրիկ բանուորական շարժումներն ստացան հսկայական ծաւալ: Կովկասում այդ շարժման առաջն առնելու համար ծրագրուած էր միմեանց դէմ հանել ազգութիւններին: Լապուէն զբա համար լաւագոյն տեղն էր, իբրև բանուորական շարժման բուն:

Մի թուրքի սպանութիւնը բաւական էր որ վաղօրօք նիւթած փոխադարձ դժգոհութիւնը արխնարբու կերպարանք ստանար. թուրք խաժամուժը գէնքը ձեռին սկսեց մի կանոնաւոր և կատաղի կոտորած: Զօրքը և ստիկանութիւնը լոկ սկանառես Լր: Պօլսի կոտորածի շարունակութիւնն էր դա, փոխադրուած արևելեան քրիստոնեաների սպառազան ճանաչուած մի պետութեան սահմանները: Կոտորածի երբորդ օրը միայն մի խումբ հայ երիտասարդներ դուրս եկան սանձելու պապանացած հարեանի յաղուղը: Երբ թուրքերից էլ բաւական զոհեր էին ընկել և ջարդը փոխուել էր պատերազմի, հնչեց հաշտութեան զանգը և եկեղեցական թափօրով հայերն ու թուրքերը հաշտուեցան:

Կռիւն այնուհետեւ սկսուեց Նախջևան, Շուշի, Թիֆլիզ, Գանձակ, Երևան և գաւառները: Յաղթող զուրս եկան մեծ մասամբ հայերը, թէպէտ մեծամեծ նիւթական կորուստներով: Թուրքերը շատ կորուստ ունեցան մարդկանցով:

Այս կռիւները վերջացան Հայ-թուրքական համազու-մարի շնորհիւ, որ տեղի ունեցաւ նոր փոխարքայ Վօրճնյով-Դաշկովի հրաւերով, Թիֆլիզում: Այս փոխարքան նշա-նակուեց Գօլիցկինի տեղ 1905 թ. և անսայով կոթողիկոսի խնդիրքին. միջնորդեց կայսեր առաջ և բռնութեամբ խլուած կալուածները նորից ետ չանձնեց հայ ժողովրդին, իսկ փակ զպրօցները նորից բացուեցան հին-ընդարձակ ծրագրով:—

Հայոց թիւր և պարսպմննալը ներկայում:

Բնիկ երկրում, Հայաստանում, հայերը պարսպում են ըստ մեծի մասին հոլագործութեամբ և անասնապահու-թեամբ: Քաղաքներում նրանք մեծ մասամբ զբաղուած են արհեստներով և վաճառականութեամբ: Հեռու դաղթա-վայրերում միայն նրանց պարսպմունքի առարկան է զըր-խաւորապէս առեւտուրը:

Ուր էլ դնան, հայերը քիչ թէ շատ ապահովուելուց չե-տայ ձեռք են դաբնում կուլտուրական զործերի: Ամեն մի դաղթավայրում հայ պարսպին ու մամուլը անսպալա է, սկսուած հեռուոր Ամերիկայից մինչև Եգիպտոս, Բուլ-ղարիտ և Շվեյցարիա: Յաւալի է, որ որակը համապա-տասխան չէ այդ մամուլի մէջ քանակի շատութեան: Ներ-կայում հայերը բնակուած են գլխաւորապէս իրանց նախ-նի երկրում. Տաճկահայաստանում նրանց թիւը հասնում է մօտ 600,000 հոգու. Մնացեալ Ասիական Թուրքիայում նոյնպէս 600,000 հոգի. Եւրոպական Թուրքիա. 200,000 Տաճկա-հայաստանում հայերն ամենից խիտ բնակուած են

Մշոյ գաւառը և Վանայ նահանգում, ուր կազմում են ազգաբնակչութեան մօտ 30⁰/₀-ը:

Կովկասում հայոց թիւը հասնում է 1,200,000 հոգու. Հայերը Կովկասում կենդրոնացած են գլխաւորապէս Երևանի նահանգում, ուր հայերը բնակութեան կէսից աւելի են և Գանձակի նահանգում, ուր կազմում են բնակչութեան մէկ երրորդը:

Ռուսաստանում հայերի թիւը հասնում է մօտ 100,000 հոգու, որոնք բնակուած են Բեսարաբիա, Ուրիմ, Նոր-Նախջևան, Նիւսիսային Կովկաս և Աստրախան: Գաղթային մի մեծ հոսանք էլ այժմ նկատելի է դէպի Անդրկասպեան երկիրները, ուր հայոց թիւը հասնում է մօտ 10,000 հոգու:

Ամերիկայում հայոց թիւը 30,000 է.

Աֆրիկա, Եգիպտոս 15,000

Աւստրիա, Բուլղարիա և Ռումանիա 20,000

Պարսկաստան 50,000

Բոլոր հայոց թիւն է ուրեմն մօտ՝ 3,000,000:



Republishing Summary Publishing Information

Որոշ է դարձեալ ու դրաբարի ցանկապատէն դուրս
ոստորները առաջին անգամ Տաճկահայք եղան, որոնք ան-
միջապէս շփուելով յառին ազգերու հետ, առին անոցմէ
դրական ճաշակը, դադափարներու շնորհաձև արդուզարգեր,
վերջապէս ձեցին աշխարհաբարը անոնց կադապարի վրայ:
Ընդհակառակն Կովկասահայք, աւելի ուշ իմացան

«որ ժամանակ է թօթափելու գրարարի ծանր ու կաշկանդիչ կապերը» և տալա շփուելով գերման ցեղին հետ, ինչպէս դիտուած է լաճախ, ստացան անոնցմէ աշխատանքի տոկունութիւնը: Բայց դերման լեզուն նշանաւոր չէ փափկութեամբ, ինչպէս իր գրագէտները՝ ճաշակով: Ռուսահայք ալ գրկուեցան անոնցմէ շատ տարիներ:

«Ի նկատի ունենալով նուագայնութեան օրէնքը, մեր արեւմտեան լեզուն մի փափուկ, ցածր և համեմեմատաբար արագ խօսելու, հետեաբար սալօնի լեզու է: Մինչ արեւելեանը բարձր և կոպիտ խօսելու, ուրեմն լեռնային լեզու է»:

Բայց Ռուսահայք ծանօթանալով արեւմտեան հայերէնի, ու նաև ուղղակի, ֆրանսական ձգիչ մատենագրութեան հետ, սկսան նորանալ նաև ճաշակի մէջ: Այսպէս ուրեմն հայութեան երկու մեծ գանգուածները տարբեր ճամբաներու հետեւելով, յարեցան լատին և սլաւ կամ գերման ցեղերու, բնականաբար առանց գերծ մնալու կլլիմային անխուսափելի ազդեցութենէն:

Արեւմտեան հայք, նախ և առաջ, դեռ բուն գրական դործին ձեռք չի գտրկած, սկսան լեզուական օրէնքով աւանդել և անոնց համեմատ հայացնել օտարազգի գլուխ դործոցներ:

Կովկասահայք ընդհակառակն, անմիջապէս և բուն եռանդեամբ դործնականին մէջ մտան, գրարարի կաշկանդիչ կապերէն ազատուելու համար, ինչպէս կ'ըսէ Վանցեան: Բարեբախտաբար շնորհիւ տաղանդաւոր անձինքներու չկասեցան ծանր գործը առաջ տանելէ, և յաջողեցան հաստատուն ուղղութիւն մը տալու լեզուին և մատենագրութեան:

Պր. Վանցեանի երկը շահեկան է ոչ միայն արեւելեան լեզուի, այլ և գրաբարի պատմութեամբ հետաքրքրւողներուն. նա կը ջանայ ցուցնել գրաբարէն ալ հին հայերէն մը՝ մեր արդի գաւառաբարբառներուն մէջ:

Գր. Վանցյանի հետ կը շրջինք ոչ միայն մերձաւոր անցեալին, այլ և խորագոյն հնութեան մէջ: Իր գիրքը կը թուի ինչ մ'է և գրասիր: հաճոյական է ինչպէս գաւառապետ զաշտի մը մէջ հետխօսական պեղում մը:

«Բազմավէպ» 1967 թ. յունիս

Григорий Ванцянъ. „Армянские авторы“. Второе издание дополненное. Тифлисъ, 1906 года.

Издание христоматии, какъ учебнаго пособия, требуетъ отъ составителя умѣнія систематизировать литературный матеріалъ такъ, чтобы ученикъ по избраннымъ образцамъ изящной литературы могъ легко ознакомиться съ характеромъ творчества авторовъ и вмѣстѣ съ тѣмъ усвоить литературное знаніе языка. Этому требованію въ достаточной степени удовлетворяетъ вышедшій вторымъ изданіемъ сборникъ Гр. Ванцянъ «Армянскіе авторы», въ которомъ нашли мѣсто отрывки изъ произведеній корифеевъ армянской литературы съ краткимъ біографическимъ очеркомъ послѣднихъ, что такъ необходимо для полноты знанія ученика жизни и дѣятельности изучаемыхъ авторовъ.

Сборникъ г. Ванцянъ можетъ служить для учениковъ армянъ полезнымъ учебнымъ пособиемъ по классу армянскаго языка и словесности, который до послѣдняго времени у насъ не существовалъ.


„Тифл. Листокъ“

ՁԵՌԱԳՐԻ ԻՐԱԽՈՒՆՔՈՎ

ՀԱՅ-ԼԵԶՈՒ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԵՆԱՐԱՆ

Ա. ՏԱՐԻ



Կազմեց Գ. ՎԱՆՅԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵՏՐԱԶԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑԵՅԱԿԱՅԱ 7.

1907

(58)

Այս գիրքը տպագրուում է ձեռագրի իրաւունքով՝ մինչև անսահման մեթօդիկայի հրատարակելը:

Այս հանգամանքը չի խանգարում, որ մեր բարեկամները և ընկեր ուսուցիչները հաղորդեն նամակներով այն, որ ցանկալի են համարում փոփոխուած կամ աւելացրած տեմներ սրա հետեւեալ հրատարակութեան մէջ:


Առ այժմ, այս գրքի մէջ սխտեմաբար գործադրուած լեզուի և այն սկզբունքների մասին որ հիմք պիտի կազմեն հրեայի փաստագրի լեզուին, յանձնարարում ենք ուսուցիչներին ի նկատի ունենալ երկու գլուխ մեր «Պատմական քերականութիւններ» «Լեզուի էստետիքան և լիզուի զարգացման հիմնական օրէնքը»:—

Յօրինող.




է շ

է . շ . շէ . շէշ . էշ է .



մ ա տ մ . ա . տ .

շատ, տամ, տաշտ, էշ, շամ, շաշ, շէմ, մամ,
մա-շա, շա-մամ, ա-տամ, մատ է, շատ է, էշ է:



ս ա ր ^{ս. ր.}

շար. մար. տար. շատ. մաս. մէր. սէր. տէր.
Ա-րամ, ասա՛. սա մատ է. սա էշ է. սա սար է.
մարտ. մար-մար. Արամ, Ա-րա. տէր-տէր.



շ ի շ ^{ի.}

էի, էիր, էր. մի շիշ. մի մատ. միս. միշտ.
սիրտ. միտ. մա-տիտ. է-միր. Ա-րամ, արի
մա-տիտ տամ, տար. Մա-րի-ամ, ասա՛ մա-
տիտ: Արամ, սա մի շիշ է:



ՈԼԼ ^{ՈԼ. Լ.}

ՈԼԶ. ՈԼՄ. ՈԼՐ. մՈԼՐ. սՈԼՐ. տՈԼՐ. ԼՈԼ.
 ԼՈԼԱ. ալ. Լալ. շալ. մալ. շիլ. սալ. տալ.
 Լար. Լէշ: Արամ, սա մի ՈԼԼ է. ասա՛, ՈԼԼ է:
 ասա՛, Լոլ: Մի Լոլ. մի էշ. մի մատ. մի
 մա-տիտ: Ալի. Ար-տաշ. Շոլ-շի.



ՇՈԼՆ ^{Ն.}

տՈԼՆ. տան. շան. նան. նա-նի. ա-նոլն, Շոլ-
 շան. Ան-նա. Նոլ-նէ. Նոլ-նոլշ. Ա-նոլշ.

Անուշն ունի մի շուն. շունն ուտում է
միս. շան անունն է Նուհուշ: Սա Անուշի
շունն է:



մ ու կ ի Կ. Ը.

կուտ, տակ, տիկ, լակ, շէկ, մէկ, կէտ, կա-
տու, կա-տակ, մա-տակ, կա-տիկ, մէ-նակ,
մա-նուկ, սա-նիկ: Կու-տը, տի-կը, լա-կը-

Ար-միկ, Ար-շակ, Մա-կար, Շու-շա-նիկ,
Մա-նու-շակ, Ա-բամ, Ար-միկ, Ա-բա-բառ:

Ա-ՐԱ-ՄԻ ԿԱ-ՏՈՒՆ.

Ա-բա-մը մի կա-տու ունի. Ա-բա-մի կա-տուն
ուտում է մուկ. նա ունի սուր-սուր առամ:

Սա Աբամի կատուն է, անունը Մուշիկ.

է, շ, մ, ա, տ, ս, բ, ի, ու, ք, ն, կ, ք,
է, Շ, Մ, Ա, Տ, Ս, Ր, Ի, ՈՒ, Լ, Ն, Կ, Ը,



բ ու Ը

Սա բու է: Բակ. բաշ. բալ. բան. բու-բու
բամ-բակ. բա-բակ. բա-լի. ալ-ու-բա-լի. բա-
նալի. լի-ու-լի:

ԱՂԻՆ ՈՒ ԱՐԱՄԸ.

Ալին ունի բալի: Արամը շատ է սիրում
բալի: Նա ասում է. Ալի, տուր բալի, ուտեմ
լիուլի:



ե գ Է զ.

Եզը. ուլ. շուն. մազ. հազ. նազ. սազ. Նա-

զիկ. Զա-նի. Զա-նան. զա-լակ. հա-զար. Նա-
զար. բա-զար.

Եզ. Եզ-ներ. հալ. հալ-եր.
շուն. շներ. մագ. մա-գեր
ուլ. ուլ-եր. էշ. էշ-եր.

Հաւը, շունը, էշը, կատուն ըն-տա-նի
են: Շունն ու կատուն միս են ուտում. իսկ
հաւը կուտ է ուտում:

Ար-սէնն ունի երկու եզ: Նրա եզ-ները
շատ բան են շի-նում:




սագ Գ.

Գէր. գին. ան-գին. գի-նի. գա-րի. գա-
րուն. գալ. Գա-լուստ. Սար-գիս. Գը-րի-գոր.
Գա-րե-գին. հա-գուստ. հա-րուստ. հագ-
ներ:

Ի Մ Ս Ա Գ Ը.

Սա իմ սագն է: Նա ուտում է գարի.
Շուշիկ, արի, իմ սագին կուտ տուր ուտի:
Իմ սագի անունն է Սիբուհիկ: Սիբուհիկը
կերաւ: Նա հիմա կուշտ է:




ՀԱՄԼ հ. ւ.

Նաւ, կաւ, լաւ, նաւը, կաւը, հաւը.
լաւը, շահը, մահը, բահը, հաւատ, ան-
հաւատ, բաւաւկան, անբաւ:

Մեր տանը կար մի հաւ, մի սագ: Հաւն
ու սագը մի-ա-սին կուտ էին ուտում:
Հաւը սիրում էր սագին:

ա. մ. լ. ու. տ. կ. շ. ն. է. ս. ր. ի. ը.
գ. ե. զ. բ. ք. թ.

Ա, Մ, Լ, ՈՒ, Տ, Կ, Շ, Ն, Ե, Ս, Բ,
Ի, Ը, Գ, Ե, Զ, Բ, Ք, Թ.



բաղ Դ.

Դաս. դար. տուր. դուրս. դա-գար. ար-գար.
կար-գն. մարդ. բարդ. զարդ. դա-հակ. զար-
բին.

Ի Մ Դ Ս Ս Ը

Ես գիտեմ իմ դա-սը: Իմ դա-սն է բա-
ղը: Մարդիկ ու-տում են բա-ղի միտը:



բիթ Բ. Թ.

Քիթ, քիմ, քուրք, քուրդ, թուրք, թաթ,
թարս, թան, թուր, թի, թի-ակ, թու-թուն,
երկաթ, գա-ւաթ, գու-թան, գիրք, միրք, մի-
րուք:

ԱՆՈՒՇԻ ԳԻՐՔԸ.

Անուշը մի գիրք ունի, տալիս է նու-նէ-ին
և ա-սում է, կար-գան, նու-նիկը կար-դում է,
գիրք, միրք, հաւ, կաւ, նաւ, Ա-նուշի գիրքը
մեր գր-րի նման է:



ձուկ և ձի

ձու, ձուն, ձիգ, ձագ, ձա-դուկ, կա-տու,
գանձ, սանձ, հունձ, ինձ, սինձ, քինձ: Հաւը
տալիս է ձու: Զուն ու-տում են մար-դիկ:

Ա Ր Ա Մ Ի Հ Ա Ի Ը:

Ա-րամբ մի հաւ ունի, անուանը հաւելի
մա-րիկ. նա ձու է տալիս: Զատ-կին Արամբ
նրա ձուն ներ-կում է կար-միր:



ն ա ն.

Ոստ, ոս-տիկ, նոր, քոր, բոր, լոր, սա-լոր,
մո-լոր, մո-րի մո-շի.

ՆՈՐ-ՏԱՐՈՒ ԵՐԳ.

Ա-հա հա-սաւ նոր տա-րի,
Հե-տը բե-րաւ նոր բա-րի,
Նոր-տա-րի, նոր բա-րի
Կար-միր տա-րի, նոր տա-րի:



պապ պ.

պաս. պա-նիր. պա-պիկ
Տատն ու պապը պանիր են ուտում:

Պատի տակին մեր պապի.
Քունն անուշ կը տանի.
Նուշ-նուշ անուշ կը տանի.
Մուշ-մուշ անուշ կը տանի

Թան, Թան, Թթու Թան.
Պապն ուտէ երթա գութան:

ՊԱՊՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Պապը քնել է պատի տակին: Պէտիկը.
Շուշիկը և Նազիկը ասում են միասին.

—Պապի, պապի, մի՛ քնի.
Անուշ հէ-քիաթ-ներ պատ-մի:
Պապը զարթ-նում և պատ-մում է.
—Հէ-քեաթ, հէ-քեաթ, պապս,
Պար-կով գաթան շա-լակս,
Սիրուն հարսը գաւակս,
Երթամ, հասնեմ Երևան,
Գաթան ուտեմ գիրանամ...



Կով

Հով. բով. սով. վար, վարդ, վարք, վա-
րար, վար-դան. վար-դե-նի. վարագ. վա-հան,
վար-դու-հի, վար-սե-նիկ: Կովը կաթ է տա-
լիս: Մեր կովն ունի հորթ. կովի հորթուկը
սիրուն է:

Հով արէք սարեր, հով արէք.
Հով արէք ձորեր, հով արէք.
Իմ գարդին գարման արէք:



խաչ ^{խ. չ.} խոզ

խաղ, խաշ, խալ, խուլ, մուխ, խոտ, ոչ
չար, չաշ, չոր, խէ-չօ, խա-չիկ, խա-չօ. ոչ-
խար, ոչ-ինչ, խա-ւար խա-րա-զան:

Ձին խոտ է՝ ուտում: Ոչ-խարը տալիս է
կաթ: Եզները խոտ են ուտում:

ԱՆՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ

Անուշը նա-մակ է գրում մա-մին. Սիրե-
լի մամ, ես հիմա կար-գում եմ ու գրում:
Շու-շիկին ասան որ ինձ նամակ գրի: Իմ
դասն է մի նոր գիր. խ. կար-գում եմ մեր
խա-չի-կի ա-նու-նը. խաչիկ, խա-չիկ, տուր
ինձ պաչիկ:

դ, ս, գ, ե, զ, Բ, Ք, Ը, Բ, Ի, Է, Ն, Ղ, Կ,
տ, ու, Լ, մ, ա.



Ժառ ժ. ռ.

Ծռռռ, ռռռռ, ռռռռ-լի, Ռռռ-բէն. ծի-ծառ
ծի-ծեռ-նաղ. թառ. թի-թեռ, թռչուն:

Ջռկը բռնեմ, ձռկ ուտեմ,

Մռկը բռնեմ, ձռկ ուտեմ:

Ծիտը ծառին ծըլ-ւը-լում է

ծիւ, ծիւ, ծիւ, ծիւ...

Բաղէն գլխին պը-տըտ-ւում է

վւ, վւ, վւ, վւ.

Ծիտը թռաւ, ծիտը թռաւ

Ինչ լաւ էլաւ, հւ, հւ, հւ...

Կ Ռ Ո Ի Ն Կ.

Կըռ, կըռ, կըռ-կըռ-ռան

Կըռ-ռռնկ-ները—հւ թըռան.

Կըռ-ռռնկ-ների թեի տակ

Եկաւ ամառ մեր դռան:



Ա յ ծ .

Այս, այդ, այն, հայ, վայ, բայ, այծ, կայծ,
հէյ, թէյ, գայլ, սայլ, լոյս, բոյս, կոյս, յոյս,
ծոյլ, թոյլ, բոյլ, սոյլ, բարի լոյս.

ծա-ռայ, գա-թայ, սա-տա-նայ, քա-
հա-նայ, գը-նայ, մը-նայ, բա-նայ, գայ:

ԱՐԱՄՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Ծիծառը նստել էր ծառի վրայ: Արամն
ուզում էր նրան բռնել: Ծիծեռնակը թռաւ:
Ծիծեռնակը շատ արագ է թռչում. Արամն
այդ մասին մի երգ գիտէ. Նա երգում է.

Ծիծեռ-նակ, ծիծեռ-նակ,
Դու դարձան սիրուն թռչնակ,
Դէպի ռւբ, ինձ ասան,
Թռչում ես այդպէս արագ:



ցորեն

Հաց. բաց. թաց. կաց. ցաւ. ցեց. ցին,
ցանց. ցանկ. ցան-ցառ. ցան-կա-հալ:

Լուսա-ցաւ, լուսա-ցաւ,
Լոյսն է բարին, ծիտն է ծառին,
Հաւն է թառին:
Աշխատաւոր, վեր կաց, բանի,
Ծոյլ տղայի քունը կը տանի:
Երկնքի դռները բաց է.
Ոսկէ աթոռ դրած է.
Քրիստոս վրէն նստած է.
Լուսաւորիչը կանգնած է.
Մեծ ու պատիկ գրում են.
Արդար-ները խաղում են,
Մեղաւոր-ները լալիս են:



արջ և շուլթակ

Ջուր, արջ, ջան, շուլթակ, ջերմ, ջերմոսկի: Արագի շուրը վարար է:

ԾՈՅԼԸ ԵՒ ԶՈՒՐԸ

Ծոյլը հարցնում է ջրին.— շուր, թե ես վազում, դադար չես առնում:

Ջուրն ասում է. Գնում եմ արտ, անտառ ջրեմ, կանաչի, ծոյլը տեսնի, ամաչի:

— Ինչո՞ւ պիտի ամաչի ծոյլը:

ԱՐԱՄՆ ՈՒ ՍՈՒՐԷՆԸ

Արամը հարցնում է Սուրենին. քանի՞ գիր գիտես. Սուրենը թէև սովորել էր, բայց անգիր չգիտէր. նա բաց արաւ գրքի առաջին երեսը և հաշուեց.— Իմացէ՛ք, քանի՞ գիր գիտէր Սուրենը և քանի՞ գիր գիտէր դուք:

Սոււ-ըէնի իմա-ցած գրերը.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ի. լ. խ. ծ. կ. հ.
ձ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ. տ. ը. ց. ւ. ք.



մ ա դ ր


կադ, տադ, ադ, սադ. խադ, ա-ղալ, խա-
ղալ, ջա-ղաց, հա-ղող, հող, տող, կող, սոխ.
սո-խակ:



Ա.ՔԱՂԱՂ

Դու ինձ ասա ա-քա-ղադ,
Ոսկէ կա-տա-րիդ մա-տադ

Խնչո՞ւ ես դու շուտ զարթ-նում,
Բարձր, բարձր երգ ասում,
Քաղցր քունս խան-գա-րում:



օ օ՝ օ.

Օր. օղ. օղ. օ-ղակ. օ-գում, հօր. մօր.
մօտ. ա-րօտ. կա-րօտ. նարօտ. հոտ. հօտ.
հո-ղոտ. բո-րոտ. քա-րոտ:

ՕՁՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի մարդ տեսաւ, որ օձը ցրտից սառել
էր. վեր առաւ, դրեց կրակի մօտ, որ տաքա-
նայ: Օձը տաքացաւ թէ չէ, վրայ վազեց,
որ կծէ մարդուն: Այն մարդը սպանեց օձին:



Ժամ՝ ժ.

Ժա-մա-նակ, ժա-մա-ցոյց, ժը-պիտ, ժա-
ռանգ, ժիր, խա-ժակ, խէժ, ժո-ղո-վուրդ,
դժոխք, ժա-նիք, ժանգ, ժան-գոտ.




ճանճ, ճիճու, ճ.

ճաշ, ճահիճ, ճենճ, ճա-շակ, նա-խա-ճաշ,
շնա-ճանճ, ճա-խա-րակ, ճամ-բայ, ճամ-բորդ,
ճա-նա-պարհ, ճա-նանչ, ճա-նա-շէլ:

ՃԱ-ԽԱ-ՐԱԿ.

Ճը՛ռ, ճը՛ռ, ճա-խա-րակ,
Ես հաստ մանեմ դու բարակ.

Ես մեղր ուտեմ, դու կարագ,
Իմ տակին եօրդան, դօշակ.
Քու տակին՝ փունջ մանուշակ.



փիղ փ.

փոքր, փոր, փոս, փխ, փաս, փառք, փոր-
սող, ափ, ծափ, տափ, քափ, թեփ, կանեփ,
փը-լաւ, փե-սայ, փա-շայ, փուշ.
Փիղն ունի երկար կնճիթ.

Փիղն ուի ԲՈՒԹՈՒԹԸ.

Փողոցով մի փիղ էր անց-կենում: Փոք-
րիկ քոթոթը վրայ վազեց և սկսեց հաչել:
Փիղը նրա հաչոցը բանի տեղ չէր դնում:—
—Ի՞նչու ես հաչում, հարցրեց նրան մի
մեծ շուն:

Թող տեսնեն, որ ես քաջ եմ, ասաց քո-
թոթը:

Փ ֆ.

Ֆէս, ֆայ-տոն, ֆուրգոն, ֆիլ, ֆալ, աֆալ, քէֆ, մաֆրաշ, մոլֆտա, մոլֆթի, ֆունտ, ֆանտ.

Եա, եակ, հո-դեակ, որ-դեակ, սա-րեակ, աղաւնեակ, Վահա-նեան, Օհանեան, Տէր-եան, Մի-նա-սեան, Արա-մեան, Հա-նէ-սեան.

Շ-եօթ, տաս-նը-եօթ, քսանը-եօթ, ար-դեօք, կար-ծեօք.

Ի կարդացւում է Վ.

Անիւ, արծիւ, թիւ, կռիւ, հաշիւ, պատիւ, ծիւ, ծիւ.

Իի, իւ, հիւր, բիւր, հար-իւր, հինգ-հարիւր, իւր, իւ-րա-քան-չիւր, սրբութիւն, չարութիւն, Յարութիւն.

Ոի-կարդացւում է Վ.

Նուէր, պատուէր, աղուէս, Աստուած, լեզուի, մեղուի, ձուի, բուի, ծեծուած.

Ե+ւ=և, արև, տերև, բարև, ձև, պարգև, ետև, ձևել, պարգևել, հետևել, խև, հև, հևալ, տևել, բարևել.

յ. կիսածայն ի.

հայ, վայ, չայ, փայ, նոյ, ծայր, վայր, հայր, մայր, գայլ, սայլ, փայլ, այլ, այծ, կայծ, բայց, յոյս, լոյս, բոյս, կոյս, քոյր.

յ կարգացուում է հ բառի սկիզբը
յոյս. յարգ. յարգ. յարկ. յիշեւ. յիշատակ.
յատակ. յանկարծ. յատուկ. յայտնի. յունիս.
յունուար. յուլիս. յիսուն. յաջորդ. յաճախ.
յօժար. Յիսուս. Յակոբ. Յովսէփ. Յուդա.
Յարութիւն.

յ չի հնչուում երկար բառերի վերջը.


Տղայ. երեխայ. աբեղայ, հսկայ. ընծայ.
արքայ. ճամբայ. քահանայ. սատանայ. օրուայ.
տարուայ. ամառուայ. ձմեռուայ. պիտի լայ.
պիտի գայ. պիտի մոռանայ.


ԱՅԲԲՆՆ

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. լւ. ծ. կ.
հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ. տ.
ր. ց. լ. փ. ք. հ. օ. ֆ.

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Լւ. Ծ.
Կ. Զ. Գ. Դ. Ծ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Զ. Պ. Զ. Ռ.
Ս. Վ. Տ. Ր. Յ. Ի. Փ. Ք. Օ. Ֆ.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. լւ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ.
մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ. տ. ր. ց. լ. փ. ք. հ. օ. ֆ.





ԱՔԼԱՐՆ ՈՒ ՀԱԻԸ

—Կու-կու-լի կ՞ո՛ւ սանամէ՛ր,
էն մէկ հաւ կար, ո՞ւր գնաց՝
—Ծարաւ աղբիւր կուլ գնաց:
—Ի՞նչ կար կտուց:
—Զիւր ու չամիչ:
—Ո՞ւր էր տանում:
—Հարս ու փեսին
—Ո՞ւր էր հարսը:
—Ոսկէ թախտին
—Ո՞ւր էր փեսան:
—Հարսի կողքին:
—Ի՞նչ էր եփուս:
—Համով կորկոս:
—Ո՞վ էր բերել,
—Քաջալ Ակոր:
—Ո՞վ էր տարել:
—Աղա Սուլթան:
—Ո՞ւր էր դրել:
—Բաց պատուհան:
—Ո՞վ է կերել,
—Կարա-փիշիկ.¹⁾

1) Սև փիսիկ:

Սովորութիւն կայ, որ նորաստնադրեալներն եփած հաւ են բնօտուած, բերանը չիւր ու չամիչ: Քաջալ Ակորը բնօտուած է բերուած մի աղբալիսի հաւ: Դնուած են բաց պատուհան սև կատուն գողանուած և ուտուած է, —այս է երգի բովանդակութիւնը:

—Վայ կարա-փիշիկ, վայ կարա փիշիկ,
քո մէջն ուտի քո թշիկ:

ԴԱՍԱՏՈՂՆ

Օրապահ էի. վաղ գնացի ուսումնարան:
Զանգը տալուց յետոյ ես աղօթեցի: Առաջին
դասը հայերէն էր: Մենք անգիր պիտի ասէ-
ինք. «Աքլարն ու հաւը»: Արամը լաւ ասաց.
Տիգրանն էլ. Մի քանի հոգի միայն լաւ չէին
սովորել:

Վաղուայ մեր դասն է. երկու ծոյլ:

Ինչպէս անցաւ ձեր դասը:

ԵՐԿՈՒ ԾՈՅԼ.

Արամն ասում է թորոսին.

—Թորոս, էդ ի՞նչ ես անում:

—Ոչինչ, պատասխանում է թորոսը:

—Դու ի՞նչու եկար, հարցնում է թորոսը:

—Որ քեզ օգնեմ, պատասխանեց Արամը:

Ինչպէս պիտի օգնէր Արամը թորոսին:

ԱՔԼՕՐ.

Ինչո՞ւ աքլօրը կանգնած է բակում

Պինդ, պինդ կանչում է իր կուկուլիկուն.

Էնդուր որ վաղուց արեն է ծագել,
խաղ ծոյլ երեխան քնից չի դարձնել: Դեռ
չի վերկացել, աղօթքն արել, դպրոցի դասը
դեռ չի սովորել:

Կանչում է արջօրն իր կուկուլիկուն, աղա-
յոց դասը միտներն է քցում:

Աշոտն ու Վարդանը

Վարդան, տանձ առ, ոււտենք, տոտմ է
Աշոտը,

— Հը, պատասխանեց Վարդանը չ'լսելու
դնելով:

Տանձ առնեմ կուտե՞ս, տոտմ է ար-
անդամ Աշոտը:

— Ինչո՞ւ չէ, վրայ բերեց խոխոյն Վարդանը:



ՄՈՒԿՆ ՈՒ ՋԻՆ

Ջին պատտահեց միանը և սկսեց ծաղրել

ներան: —Ի՞նչ փոքրիկ և ողորմելի կենդանի
ես դու, ո՛չ մի բանի պէտքը չես:

—«Եկ վազենք, ասաց մուկը, և պիտի
տեսնես, որ ես քեզանից անաջ կանցնեմ:»
Ձին համաձայնեց: Հազիւ նա տեղից շար-
ժուել էր, մուկը թռաւ, ամբասցաւ ձիու պո-
չին:

Հէնց որ տեղ հասան, մուկը ցած թռաւ,
վազեց ձիու առաջն ու դռաց, «Ո՛րտեղ
էիր, այս քանի ժամ է քեզ եմ սպասում:» —
Ձին մնացել էր շուտրած:

Արտուտիկ, արտուտիկ,
Փետուրներդ խառտուտիկ.
Թեւերովդ թը՛ռ-թը՛ռ, թը՛ռ,
Ձայնդ աշխարհ ճը՛ռ, ճը՛ռ, ճը՛ռ:

ԱՐԵՒ

Արե, արե, եկ, եկ,
Ձիդի քարին վէր եկ.
Սև սև ամպեր հեռացէք,
Արևին ճամբայ տուէք.
Թողէք դա գայ մեզ մօտ,
Դրա լոյսին ենք կալօտ:

Կարմիր արև եկ, եկ,
Նախշուն քարին վէր եկ:
Արևն յաղթեց ամպերին,
Շողքը ձգեց սարերին:
Զիզի քարը տես, տես,
Պլպլում է ոսկու պէս:

ՀԱՐՍԻ ՀԱՇԻԻԸ

Երկուշաբթի հաց կը թխեմ.
Երեքշաբթի լոջ կը թըրջեմ.
չորեքշաբթի լուացք կանեմ,
հինգշաբթի կար կը կարեմ.
ուրբաթ օրը պաս կը պահեմ.
շաբաթ օրը ժամ կը գնամ.
լոյս կիրակի փռանց-փռանց:¹⁾
կը զարդարուեմ, կերթամ հօրանց:

ԾՈՅԼ ԱՂԶԻԿ.

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է.
Բամբակը կորիզոտ է.
Մետաքս պիտի, որ մանեմ,
Մաստակ պիտի, որ ծամեմ.
Կտուրը տիտիկ անեմ,
Անցնողին մտիկ անեմ,
Ուտեմ, խմեմ, մթնի քնեմ:

¹⁾ Փռանց — փրանալ:

ՄԱՍՆ Բ. ԸՆԹԵՐՑԱՐԱՆ




ԲԱՐԻ ՇՈՒՆ.

Շունը պահպանում էր տիրոջ տունը։ Նա տեսաւ մի աղքատ մարդու և սկսեց նրա վրայ հաչել։

Այ շուն, խղճա՛ ինձ, ասաց աղքատը, քանի օրէ ոչինչ չեմ կերել։—Ես էլ նրա համար եմ հաշում, որ մարդիկ ձայնս լսեն և քեզ կերակրեն, պատասխանեց շունը։

Դէ որ այդպէս է, ըռեխդ դէպի տունը դարձրու և այնպէս հաչէ, ասաց աղքատը, որովհետեւ շան ասածին չէր հաւատում։—



Մ Ա Տ Ն Ե Ր .

Մի օր ճկու-
թըն ասաց. —

«մատանու
մատ, սոված
եմ, հաց եմ ու-
զում»:

—Ո՞րտեղից ճարեմ, պատասխանեց մա-
տանու մատը:

—Աստուած կրտայ, աւելացրեց երկար
ու լէնսիրտ միջամատը:

—Բա որ չը տայ, վրայ բերաւ ցուցա-
մատը:

— Կը գողանանք, ասաց հաստ ուկարճ
բուծը:

Աստուած այս որ որ լսեց, խփեց ու
բաժանեց բուծ մատը միւս եղբայրներից:

Դրա համար չորսը մնացին միասին, իսկ
բուծը մենակ, ծառայում է չորսին: *)

*) Բացառել բուծ մատի նշանակութիւնը, ստանց որի օչ
մի դորժ չի կարելի կատարել:

ՆՈՒՐԻՆ (անձրևաբեր)

Նուրին նուրին եկել է.
Նախշուն հուրին եկել է.
Շիլա շապիկ հագել է.
Կարմիր գօտին կապել է:
Եղ բերէք, վարար քսենք,
Ձու բերէք, բուռը դնենք,
Ձուր բերէք, գլխին ածենք,
Մեր նուրինի փայլ տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

ԶԳԱՅԱՐԱՆՔ,

Ես աչքով տեսնում եմ, աղանջով լսում,
Քիթով հոտ եմ անում, լեզուով ճաշակում,
Իսկ ցուրտն ու տաքը, մարմնով եմ զգում,
Կոշտն ու կակուղը ձեռով շօշափում:

ԽԵԼՕՔ ԳԼՈՒԽԸ

Բերանն առաւ. ես ամեն ինչ կուտեմ,
Կը խմեմ:

Գլուխն առաւ.—հը՛մ:

Ձեռն ասաւ,—ես ամեն ինչ կը շինեմ, կը
քանդեմ:

Գլուխն ասաւ,—հը՛մ:

Լեզուն ասաւ,—ես ինչ ուզեմ, կասեմ,
կը պատմեմ:

Գլուխն ասաւ,—հըմ:

Ոտն ասաւ, ես ամեն տեղ կերթամ, ման
կուգամ:

Գլուխն ասաւ,—հըմ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը ա-
սացին գլխին.—Ինչո՞ւ ես հըմ անում:

Գլուխն ասաւ.—Ինչ անէք չանէք, առաջ
ինձ պիտի հարցնէք:

Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կրմկրմա-
լով ասաց.—Հա, ըզըզորդ, ըզըզորդ է ասում
գըզըլուխը...

Ոտով ման եմ գալիս,

Ձեռով աշխատում,

Աչքով ես տեսնում եմ,

Ականջով լսում.

Իսկ իմ չարն ու բարին,

Իմ լաւն ու վատը,

Ո՛վ է իմանում,

—Խելօք գլուխս:

ՄՏԱԽՕՄ ՀՈՎԻԻԸ

Մի հովիւ հանաքով շարունակ խաբում էր իր ընկերներին. „Գայլը եկաւ, օգնեցէք“, կանչում էր նա: Հովիւները գալիս տեսնում էին, որ գայլ չը կայ:

Իսկ ստախօսը ծիծաղում էր նրանց վրայ:

Մի օր էլ, իրաւ, գայլն ընկաւ նրա հօտի մէջ: Նա լեղապատառ օգնութիւն կանչեց. „Գայլն եկաւ, հասէք, օգնեցէք“:

Ընկերները լսեցին, բայց ոչոք օգնութեան չեկաւ:

Գայլը պատառոտեց նրա ոչխարներին:

Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չը հաւատաց:— Ինչո՞ւ:



ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Լինում է չի լինում մի այծ: Այս այծն

անտառում մի տուն է շինում և իր փոքրիկ ուղերի հետ բնակւում է նրա մէջը: Ամեն օր այժը դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Որդիք, դռները փակեցէք. եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»:

Ասում է ու գնում: Դաշտում լաւ արածում, կուրծք կաթնով լցնում, ու տուն գալիս: Տան դռները փակ են: Նա պոզերով դուռը ծեծում ու կանչում է.

«Չալիկ, մալիկ ուլիկներ,
«Չալ պըտուրիկ այծիկներ,
«Ելէք, բացէք տան դուռը,
«Պատրաստ է ձեր ապուրը:

Ուլերը բաց են անում դուռը, մայրը ծիծ է տալիս և էլի գնում արածելու:

Մի օր, երբ այժը դուրսն է լինում, գալիս է գայլը, ուզում է նրանց ուտի: Նա կամաց-կամաց մօտ է գալիս, թաթով դռանը խփում ու կանչում է հաստ ձայնով:

«Չալիկ-մալիկ ուլիկներ
«Չալ պըտուրիկ այծիկներ,
«Ելէք, բացէք տան դուռը,
«Պատրաստ է ձեր ապուրը:

Ուլերն ականջ են դնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողն իրանց մայրը չէ:

Նրանք պատասխանում են . «Դու մեր մայրը
չես, կորի՛ր, հեռացի՛ր այստեղից: Մեր մայրը
բարակ ձայնով է մըկըկում, դուռն էլ պո-
ղերով է թակում: Ասում են ու դուռը բաց
չեն անում:

Գալլը թողնում հեռանում է: Փոքր ժա-
մանակից ետոյ գալիս է այժը, ծիծ է տա-
լիս ձագերին և գովում է նրանց, որ դուռը
բաց չեն արել:

— Ի՜նչ կը պատահեր, եթէ ուլիկները մօր խօսքը չը լսե-
լով, դուռը բաց անէին:



ԹԻԹԵՌԻ

Մանուկ.

— Սիրուն թիթեռ, ինձ ասա,
թէ ինչո՞վ ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ինչպէս է, որ չես յոգնում:
ԹԻԹԵՌԻ

— Սիրուն, կանաչ դաշտերում
ես ապրում եմ համարձակ.

Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրն է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է.
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղիր ով մանուկ.
Խնայիր ինձ. ձեռ մի տար:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԸ.

Ինչ բաղդաւոր արարած ես, ասում է
ճանճը մեղուին: Մարդիկ քեզ առօք փառօք
պահում, պահ-պանում են. քեզ համար փե-
թակ են շինում. բայց հէնց որ քեզ մօտե-
նում են, խայթում ես նրանց, քիչ է մնում
աչքերը հանես: Ես մարդկանց ոչ մի վնաս
չեմ տալիս, ոչ էլ կծում եմ, բայց ինձ հան-
գիստ չեն տալիս, դեղեր են ածում և մեզ
կոտորում են:

— Ես մեղր եմ շինում մարդկանց հա-
մար, պատասխանեց մեղուն:

— Մի՞թէ դու ես մեղր շինողը, զարմացած
հարցրեց ճանճը: Շատ համով բան է, շատ եմ
կերել: Չի՞ կարելի իմանալ, էդ ո՞նց ես շինում:

Ամեն առաւօտ վաղ դաշտ եմ գնում, ծա-
ղիկներից հիւթ եմ հաւաքում և մեղր եմ
պատրաստում, ասաց մեղուն:

Ես որ քո տեղը լինէի, մեղրը մարդկանց

չէի տայ, մենակ ինքս կուտէի:

— Զէնց դրա համար էլ մարդիկ քեզ հա-
լածում են և ատում: Դու նրանց զահլէն
տանում ես. չես թողնում մի բան ուտեն,
մէջ ես ընկնում և ամեն բան կեղտոտում ես:
Ձեռ թողնում քնելու, քթերն ես մտնում, ո՛չ
մէկին մի օգուտ չես տալիս, հէնց մենակ
քո փորի մասին ես մտածում, դրա համար
էլ մարդիկ քեզ ատում են:

Էլ ինչ օգտակար միջատներ գիտէք:— Շերամի որթը, հա-
մեմատեցէք Շերամի որթը մեղուի հետ. լո՛ւնչից է պատրաստում
շերամը և լո՛ւնչից մեղրը:



ՊԱՌԱԻԻ ԱՅԾԸ

Կար չկար երբեմն, աղքատ մի պառիկ.
Ունէր մեր պառաւը կաթնատու այծիկ.

Ձալիկ մալիկ.

Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը այծիկին պահեց

Իր բերնի պատառը նըրա հետ կիսեց.

Սիրով, յօժար,
Նրա հետ կիսեց:
Երբ ձիւնը հալուեցաւ, բուսականաչ խոտ,
Պառաւն այծիկին դուրս տարաւ արօտ:
Ուրախ, գուարթ.
Դուրս տարաւ արօտ:
Յանկարծ փչեց քամին, մի՞թէ երկինքը.
Թանձր մառախուղը պատեց գետինքը.
Վա՛յ-վա՛յ, վա՛յ-վա՛յ.
Պատեց գետինքը:
Պառաւը լաց եղաւ, իսկ գայլը օռնաց:
Մոլորուած այծիկը բարձր մկրկաց:
Գայլն իսկոյն մօտեցաւ, այծին պատառեց.
Պառաւը ետեից բարձ-րաձայն գոչեց:
Հա՛յ-հայ, վա՛յ-վա՛յ,
Բարձրաձայն գոչեց:
Խեղճը մնաց կանգնած մի փունջ խոտ ձեռին,
Անմխիթար ձայնով կանչելով այծին.
Եկ-եկ, եկ-եկ,
Կանչում էր այծին:

Կ Ա Ր Գ

Օնիկը դաս էր սովորում: Երբ գործը
պրծաւ, թողեց գրքերն ու տետրակները սե-
ղանի վրայ և դուրս գնաց խաղալու:

Օնիկ, սիրելի, կանչեց նրան մայրը, ա-
ռաջ հաւաքիր գլխերդ և ապա խաղ արա:

Էհ, բան չունես, մայրիկ. ետոյ կը հա-
ւաքեմ, պատասխանեց Օնիկը և դուրս գնաց:
Նրա փոքրիկ եղբայրն էլ հէնց այդ էր ու-
զում. մօտեցաւ սեղանին որ պատկեր տես-
նի Օնիկի գրքում. յանկարծ ձեռը դիպաւ
բաց թանաքամանին և ամբողջ տետրակը
թանաքով մէկ արաւ: Օնիկը լալով գանգատ
գնաց մօր մօտ:

Ի՞նչ կասէր մայրն Օնիկին:



Ն Ա Պ Ա Ս Տ Ա Կ

Մի վազիր այդ չափ արագ,
Իմ սիրունիկ նապաստակ.
Շատ պստիկ ես տակաւին
Թաթիկներդ կը յոգնին:
Քեզ կը բերեմ կաթ ու հաց,

Շաքարաջրով եփած,
Ուտես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չը մնաս:
Ծանր-ծանր կը քայլես,
Սիրտս վեր-վեր կը հանես.
Կարձակեմ՝ քեզ երբ ուզես,
Կերթաս ազատ կարածես,
Կըզաս հանգիստ կը պառկես:

ՇԱՆ ՊԱՌԱԽԵԼՈՐ ՊԱՏՃԱՌԸ

Այ շուն ինչո՞ւ այգպէս շուտ պառաւեցիր,
հարցնում է տէրը:

Էհ, կատուի դարգից:

Ինչո՞ւ,

— Էլ ո՞նց թէ ինչու. ցուրտ թէ տաք օրերին ես դուրսը չարչարուեմ, տիրոջս տուն ու տեղը պահպանեմ, իսկ կատուն տանը տիրոջս գրկում. կամ բուխարու կողքին նրստի ու տաքանայ: Էլ ես չը պառաւիմ ո՞վ պառաւի՝

Ո՞րն է օգտակար. շունը թէ կատուն:

Կ Ա Տ Ո Ի

Կատուն եկաւ փիսիկ, փիսիկ,
Հազար նազով ինչպէս հարսիկ,

Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց չանչիկներով:
Կատու, կատու, Էր ես տրտում:
— Մեծ մուկն այսօր արթուն է,
Ինդուր կատուն տրտում է:



ՁԻՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Լօռու անտառներում գայլը մի ձիու պատահեց և ուզում էր նրան ուտել:

— Գայլ, ասաց նրան ձին. մի խնդիրք ունիմ քեզանից. ետևի ոտիս մի մեխ կայ. դա ինձ հանգիստ չի տալիս. հան հանգստանամ, ետոյ զիտեմ, ուտելու ես, կեր ինձ:

Լաւ, գլխիս վրայ, պատասխանում է գայլը և մօտենում է ձիու ետևի ոտին, մեխը հանելու:

Ձին էլ հէնց այդ էր ուզում:

Բարձրացնում է ետևի ոտները, քացի է տալիս գայլի մուկթին և փախչում ազատում է:



ԱՐՋԻ ԹԱԹԸ

Գիւղացիք մի արջ բռնեցին և նրա թաթը կտրեցին: Երեք ոտանի արջը կաղալով փախաւ, հեռացաւ: Մի խեղճ պառաւ խնդրեց, որ արջի թաթն իրան տան: Խուզեց նրա մազը և կաշին քերթեց: Պառաւը միսը կրակին դրեց եփելու, ինքն էլ նստեց կաշու վրայ և սկսեց մանեղ նրա մազը:

Մանեց-մանեց մինչև կէս գիշեր: Մէկ էլ տեսնեաւ, մի ձայն է զալիս: Մի բան լուսամուտի տակ թըմ-թըմ-փայցնում է:

Պառաւը պատուհանից դուրս է նայում և ի՞նչ է տեսնում:— Թաթը կտրած արջը կաղալով մօտենում է տնակին:

Պառաւր սարսափեց, նա կենում էր մէն
մենակ, գիւղի ծայրին: Ինչ անէր, ինչպէս
աղատուէր արջի ճանկերից:

Էլ ուրիշ հնար չկար, պառաւր թոնրի
բերանը բաց արաւ, ճրագը հանգցրեց, իսկ
ինքը բարձրացաւ ամբարի գլուխը:

Արջը դուռը գտաւ, բաց արաւ, ներս
մտաւ և սկսեց պտոյտ-պտոյտ գալ, ու մըրթ-
մըրթալ:

Մին էլ թըրըմփ, ընկաւ թոնրի մէջ:—

Պառաւր սիրտը հանգստացաւ, նա ցած
եկաւ, ծածկեց թոնրի բերանը և գնաց հա-
րկաններին կանչելու: Հարկաններն եկան և
արջին սպանեցին:

Շ Ո Ւ Տ - Ս Ս Ե Լ Ո Ւ Կ.

Կարօն ասում է՝ Վահանին, ապա շուտ-շուտ
ասան, ձուկը բռնեմ՝ ձուկ ուտեմ,

մուկը բռնեմ, ձուկ ուտեմ:


Վահանը կրկնեց. ձուկը բռնեմ ձուկ ուտեմ,
մուկը բռնեմ, մուկ ուտեմ:

Հա, հա, հա, ծիծաղեց Կարօն, էդ հօ
մուկը կերար:

Կարօն ամօթից կարմրեց, կրկնեց և էլի
սխալուեց: Վահանն այս անգամ նրան սովոր-

ցրեց: Առաջ ասա ծանր ու հանդարտ, մուկը բռնեմ ձուկ ուտեմ, մի քանի անգամ կրկնի: Կարօն կրկնեց ու սովորեց:

Տեսար, էլ մուկ չես ուտում, ասաց Վահանը, այլ միշտ ձուկն ես ուտում:



Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր Ի Վ Է Ճ Ը .

Եզր, կովը և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տէրն ամենից շատ ունի է սիրում:

Ի հարկէ, մեր տէրն ամենից շատ ինձ է սիրում, ասում էր եզր. չէ որ ես եմ նրա արտը վարում, անտառից փայտ բերում: Նա ինձ լծում է սայլին և ցորենը ջաղաց տանում, այնտեղ ալիւր շինում: Յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր ալիւրը ծախում և տան համար բաներ է առնում:

Ես որ չլինէի, նա ի՞նչպէս կ'ապրէր:


Ճիշտ ես ասում, վրայ բերեց կովը. բայց մեր տէրն ամենից աւելի ինձ է սիրում, որովհետեւ ես եմ քեզ պէս եզնուկին պահել մեծացրել. նրա ամբողջ ընտանիքը ես եմ պահում ու կերակրում կաթով.

Այն մաժուհին ու թանը, այն սերն ու կարագը,

իւզն ու պանիրը որ նա ուտում է, համ տուածն է, եթէ ես չը լինեմ, բոլորը սոված կը կոտորուեն:

— Ոչ, ոչ, ամենիցդ շատ ինձ է սիրում մեր տէրը, ասաց շունը: Գիշերը, ցերեկ ես եմ անդադար հաշում, գողերին վախցնում և նրա ունեցած շունեցածը պահպանում...

Տէրը լսեց նրանց վէճը և ասաց. բաւական է վիճէք. դուք չգիտէք, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել: Այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:



ԾԵԾՈՒԱԾ ԳԱՌՆԻԿ.

— Ինչո՞ւ կուլաս դու գառնիկ,
— Խիստ ծեծ կերայ ես մայրիկ,

Քեզ հով ծեծեց արեւիկ,
= Մէկ չար պառաւ, իմ մայրիկ.
— Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ,
= Անմեղ տեղս, իմ մայրիկ.
— Ինչով ծեծեց նազանի,
= Հաստ ճիւղտով, իմ նանի.
— Որտեղիդ զարկեց, անուշիկ,
= Ոտիկներիս, իմ մայրիկ.
— Ինչպէս լացիր անմեղիկ,
= Մէ, մէ, մէ, իմ մայրիկ:



ԱՂՈՒՔՍՆ ՈՒ ՄԱԾՈՒՆԸ



Գիւղացիին հանդուժ
հունձ էր անում: Ճաշի
համար նա տարել էր մի
քիլա մածուն և պահել էր
խուրձերի տակ:

Աղուէսը մածնի հոտն
առել էր. կամաց մօտե-
ցաւ, գլուխը կոխեց ամա-

նի մէջ և սկսեց մածունն ուտել: Կերաւ, պրծաւ,
բայց էլ չկարողացաւ գլուխը դուրս հանել, որով-
հետեւ ամանի բերանը նեղ էր:

Ինչ անէր, գլուխն ի՞նչպէս ազատէր: Աղուէսը
գլուխը տուաւ քարերին, քիլէն կոտրուեց և խորա-
մանկը ազատեց իր գլուխը փորձանքից: Բայց ամա-
նի բուկը մնաց նրա վզին որպէս օղակ. ինչքան
աշխատեց, ազատուել չկարաց:

Երբ գայլը պատահեց աղուէսին, նա զարմա-
ցած հարցրեց. այդ ի՞նչ ունիս վզիդ:

Քաջութեան համար թագաւորն ինձ նշան է
տուել վզիցս կախելու. ասաց աղուէսը պարծենալով:

ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ.

Մարտը տալիս է ձնծաղիկ.

Ապրիլը կապոյտ մանուշակ,

Մայիսին բացւում է վարդը,

Սոխակը երգում անուշակ:

Յունիսը մեզ խոտ է տալիս.

Իսկ յուլիսը առատ ցորեն.

Օգոստոսը տանձ ու խնձոր,

Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
 Հաղողի բոլոր տեսակը,
 Հոկտեմբերը կարմիր գինին,
 Նոյեմբերը բողկն ու տակը:
 Դեկտեմբերին ձիւն է գալիս.
 Յունուարին ծածկում սար ու ձոր.
 Փետրուարին սկսւում է,
 Փոփոխակի ցուրտ ու տաք օր:
 Ահա այսպէս բոլոր տարին
 Թաւալւում է չորս շրջանում.
 Այս պատճառով չորս ժամանակ,
 Չորս եղանակ է մեզ բերում:

Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ.

Պեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգստանում,
 այլ միշտ թռչելով, դէս ու դէն ընկնելով, նիւթ է
 հաւաքում: Պոտ, կաւ է կրում, իր բունը շինում,
 բմբուլով լցնում, լաւ փափկացնում ու մէջը նըս-
 տում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում, և երեք շա-
 բաթ վրան թուխս նստում, ձագուկներ հանում:

Փափրիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը
 թռչում է, դէս ու դէն ընկնում, մօեղներ բերում,
 նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն
 ձագերը թևառւում են, բնից դուրս թռչում և ի-
 բրանց մօր հետ ճանապարհ ընկնում:

Լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ
 անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վը-
 բայով անցնում, հեռու տեղ գնում:

Զմեռն անցնում է, գարունը հասնում, մեր

ծիծեռնակը էլի գալիս է, իր բունը գտնում, ճշում,
ծըլւըլում, քանդուածը շտկում, կարկատում, շի-
նում, նոր ձուեր ածում, նոր ձագեր հանում, պա-
հում, մեծացնում, աշնան ժամանակ, առաջուայ
նման ճանապարհ ընկնում, լայն լայն դաշտերի,
խոր խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարե-
րի կապոյտ ծովերի վրայով անցնում, գնում, հե-
ռանում...

Էլ ինչ թռչուններ գիտէք, որ ձմեռը հեռանում են մեզից:

Ն Ա Մ Ա Կ.

Նոր տարու տօներն էին. աշակերտներին ար-
ձակեցին թէ չէ, Օսիկը տուն վազեց և մի նամակ
գրեց մայրիկին.

Սիրելի Մայրիկ,

Ես արդէն կարգալ գրելը սովորեցայ և իմ ձեռ-
քով եմ գրում այս նամակը: Այսօր մեզ արձակեցին.
15 օր շարունակ պիտի խաղանք և ուրախանանք:

Այս կէս տարուայ համար ես ստացայ լաւ
թուանշաններ քոյր առարկաներից:

Համբուրում եմ քեզ, հայրիկիս, Աշխէնին և
և փոքրիկ Արամին:

Քո որդիդ. Օսիկ.

1907 թ. 25 դեկտ. Թիֆլիզ.

գրեցէք մի-մի նամակ ձեր ծնողներին:

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Օհանն ու Վանին հանելուկներ էին ասում. ինչ որ մէկը ասում էր, միւսը գտնում էր:

Վերջը Օհանն ասաց.

— Այն ի՞նչ է, տակը քար է, քար չէ. վրան քար է, բար չէ. խոտ կուտի, կո՛վ չէ, ձու կ'ածի, հաւ չէ:

Վանին շատ մտածեց, շատ բանի անուն տըլաւ, չեղաւ, չը գտաւ: Ետոյ ասաց. չեմ գտնում, ասա տեսնեմ ի՞նչն է:

— Դէ մի քաղաք տուր, ասեմ:

— Երևանը քեզ:

— Ձեմ ուզում երևանը:

— Շուշին քեզ:

— Շուշին էլ չեմ ուզում:

— Ալեքսանդրօպօլ, Նուխի, Բաքու, Նախիջևան...

— Ձեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում:

— Բա ո՞րը կուզես, Օհան:

— Թիֆլիզը.

— Է՛հ քեզ լինի, դէհ ասա:

— Դեռ ահանջ դիր ասեմ:

Ուտեմ, խմեմ Թիֆլիզ, հագնեմ, մաշեմ Թիֆլիզ. ես մի քաշլան ձի նստեմ, դու մի լղար ջորի: Ես ուտեմ մածուն ու կաթ, դու ուտես բորբոսնած ձաթ:

— Ասեմ այն է, որ վրան կանգնում ենք ու ասում. Կօրա, կօրա, Պապոնց տուն.

— Հա իմացայ, կրիան է:

Հիմա դուք ասացէք. ինչ հանելուկներ գիտէք:

Կ Ո Ր Ա Մ Հ Ո Ր Թ

Ձիւնն էր գալիս փաթիլ փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ կաթիլ,
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:
Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծ ու ծծեր կաթով լիքը,
«Հորթուկս ո՛ւր է նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացացրեց»:
Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով.
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն:
Կովը վազեց բառանչելով,
Պառաւը գնաց տնքտնքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ:
Ծծեց բոլոր կաթն ու տուգեց.
Տանտիկնոջը բան չը թողեց,
Բայց պառաւն այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:



Վ Ս Խ Կ Ո Տ Ս Ո Ի Ր Է Ն Ը.

Սուրէնը շատ վախկոտ էր. մի անգամ նա մըթնով ներս մտաւ սենեակը և վախից քարացաւ. երկու փայլուն կէտեր զոյգ աչքերի նման պէծին էին տալիս մթնում:— Դե է, մտածեց Սուրէնը և շտապով շուռ եկաւ, որ փախչի. ոտը դիպաւ կրակի խառնիչին և նա վայր ընկաւ: Վա՛յ, գոռաց նա, դեբն ինձ բռնել են, օգնեցէք:—

Հազիւ վեր կացաւ և ուզում էր դուրս փախչել, տրեխի կապը մնաց դռան տակ: Նա կարծեց թէ հիմա իրան բռնել են և սկսեց աւելի բարձր գոռալ:

Մայրը լսեց նրա ձայնը և օգնութեան հասաւ: Լամպը վառեցին և տեսան, որ դէր փոքրիկ կատուն էր, նստած միան էր սպասում:

Կատուի աչքերը ինչո՞ւ են փայլում մթնումը. էլ ի՞նչ կենդանիներ դիտէք, որ մթնում լաւ են տեսնում:

Մ Ս Յ Ր Ի Կ.

Օնիկը փողոցում կորցրեց մօրը. նա լաց էր լինում և կանչում էր. մայրիկ, մայրիկ ջան, բայց մայրը չկար:

Մարդիկ հաւաքուեցան և հարցնում են ո՞վ է բո մայրը:

— Միթէ չգիտէ՞ք, իմ մայրիկը ամենքից լաւն է: Ինչ է նորա անունը, հարցնում են մարդիկ.

-- Մայրիկ, մայրիկ է նորա անունը պատասխանում էր Օնիկը լաց լինելով:

Ձ Ի Ն Ե Ի Է Շ Ը.

Ձին և էշը բեռնած ճամբալ էին գնում: Իշու բեռը ծանր էր: Նա դիմեց ձիուն. «ձի եղբայր, մի քիչ օգնիր ինձ, բեռս ծանր է, չեմ կարող տեղ հասցնել»: Ձին չուղեց օգնել: Էշը յոգնութիւնից վայր ընկաւ և սաստկեց: Տէրը իշու բեռն և նրա մորթին բարձեց ձիու վրա:— Վա՛յ ինձ մտածեց ձին, չուղեցի մի վոքը օգնել իշուն, հիմա համ ամբողջ բեռը, համ նրա կաշին պիտի տանեմ»:



Ա Գ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն.

Առիւծն ու արջը մի գառ որսացին: Բաժանելու ժամանակ նրանք սաստիկ կռուեցան: Արջն ուզում էր մեծ բաժին ստանալ, առիւծը նոյնպէս: Երկար կռուելուց նրանք չոգնեցան և պառկեցին հանգստանալու:

Աղուէան այս տեսնելով, միան ատաւ ու վախաւ:

Ինչ վայրի կենդանի գիտե՛ք:



Գ Ո Ղ, Ս Ի Ր Տ Ը Դ Ո Ղ.

Մայրը սալոր առաւ, հաշուեց և պահեց: Արամը մի հաս ծածուկ դողացաւ և կերաւ: Ճաշից յետոյ մայրը ուզեց բաժանել սալորը, բայց մէկը պակաս էր: Որդիք, սփէ կերել սալորը, հարցրեց մայրը: Ամենքը միաբերան կրկնեցին, որ սալոր չեն կերել: Արամն էլ ասաց, որ խնքը սալորի համը չի տեսել:

Մի մեծ բան չէ սալորը, ասաց մայրը ցաւելով: միայն նրա կորիզը թունաւոր է, ով նրա կորիզն ուտի, մի օրից յետոյ կը մեռնի: Այս որ լսեց Արամը, գոյնը թռաւ և հա ասաց, կորիզը չեմ կուլ տուել, կորիզը դէն եմ քցել: Ամենքն սկսան ծիծաղել. իսկ Արամը լաց եղաւ:

Գող, սիրտը դող:

ԱՐՁԸ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Այն, ինչոր պատմում եմ, իմ աչքով եմ տեսել: անցեալ տարի էր: Ներքեր, պանդոկում նստած էր արջ-պար-ածողը և ընթրիք էր ուտում: Արջը պառկած էր դուրսը, կապած փայտէ սիւնին: Մի խեղճ արջ էր դա. ոչ որին վնաս չէր տալիս. թէև սարսափելի տեսք ունէր:

Մի քիչ այն կողմը, սենեակսւմ խաղում էին երեք երեխայ. Սուրէնը, Վահանը և փոքրիկ Կարէնէն: Նրանցից ամենամեծը շատ-շատ վեց տարեկան լինէր:

Թրախկ, թրրոճիկ, մէկը սկսաւ ներս մտնել սենեակը: Ո՛վ պիտի լինէր: Դուռը լայն բացուեց և ներս մտաւ արջը. ահագին, բրդոտ արջը:

Մենակ մնալուց բեզարել էր հա և գնաց երեխաների մօտ, որ մի քիչ ուրախանայ:

Մանուկները սարսափեցին և ամեն մի՛նը մտաւ մի անկիւն: Արջը նրանց երեքին էլ գտաւ. հոտոտեց և ոչինչ չարաւ:

Ի հարկէ, սա մի մեծ շուն է ասացին նրանք և սկսեցին նրան շոյել: Արջը պառկեց. փոքրիկ Վահանը բարձրացաւ նրա վրայ և սկսեց նրա հետ խաղալ:

Մուրէնը բերեց դափը և սկսեց զարնել. արջը վեր կացաւ, կանգնեց ետեւի ոտներէի վրայ և սկսեց պար-գալ: Մէկ ուրախութիւն էր որ.. մանուկները մի հիանալի ընկեր էին գտել:

Հէնց այդ ժամանակ ներս եկաւ մայրիկը. նրա գոյնը թուաւ, լեզուն կապ ընկաւ և սարսափից ըիջ մնաց ուշքը գնար:

Փոքրիկ Կարինէն վազեց դէպի մայրն և ասում էր. Տես, մայր ջան, ինչ լաւ շուն է. ինչ լաւ պար է գալիս և կանգնում է ետի ոտներէի վրայ:

Հէնց այդ ժամանակ ներս եկաւ արջ պար-ածողը: Նա հանգստացրեց մայրիկին. «ընտանի արջ է սա և ոչ ոքին վնաս չի տալիս». ասաց նա: Նոր իմացան մանուկները, որ իրանց խաղ-ընկերը արջ էր և ոչ թէ շուն:

ՊՍՏԻԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Մի օր Մարիամը մօտեցաւ մայրիկին, սևիկ աչքերը խոնարհեց և ասաց անհամարձակ:

— Մայր ջան, չէ՞ որ դու պատիկ պատմութիւն շատ ես սիրում:

— Այո, սիրելիս:

— Ուզում ես՝ պատմեմ մի այդպիսի պատիկ պատմութիւն:

— Ի հարկէ, միայն ճշմարիտ լինի:

— Լիովին ճշմարիտ. ես ինքս այս յուպէիս դահ-

լիճում լսեցի:

= Որ այդպէս է, պատմիր:

— Բայց կը հաւանեմ, մայրիկ ջան:

= Աշխատիր որ հաւանեմ, իսկ եթէ հաւանեցի,

այդ կարմիր պռօշներդ պիտի պահեմ:

— Բայց շատ պստիկ պատմութիւն է:

= Ոչինչ, աւելի լաւ որ պստիկ է:

— Կար չը կար. սեղանի վրայ մի կաւէ շնիկ

կար:

= Շատ լաւ, յետո՞յ, Մարիամիկ:

— Եւ, և, հէնց այս բոլակէիս ես այդ շնիկը փրշ-
րեցի. բայց էլ չեմ անի:

Հաւանեց արդեօք մայրը, այս պստիկ պատմութեանը,
և արդեօք համբուրեց Մարիամին:

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ.

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

Ձատիկն արեւուսով,

Ջրօրհնէքը ճրագալուսով.

Թէ քնած էք, վեր զարթեցէք,

Թէ զարթուն էք, լաւ լսեցէք.

Մարիամ եկաւ լալով-լալով,

Հալով-լալով մըղկրտալով.

Լուսաթաթախ մանուկ ծնեց

Ծով ու ցամաք լուսով պատեց:

Ձեր տունն է՛ չորեք սիւնի,

Ձոր սիւներից հըն է սալի:

Սալը չարակամի սրտին,
 Ապրի բարեկամի որդին:
 Տունը շէն, տունը շէն,
 Ձեր տղայոց անունն ի՞նչ է,
 Պօղոս-Պետրոս,
 Դըրանք նստեն մէկ սեղանի,
 Գինի խմեն նախշուանի.
 Ձեր թշնամուն գետը տանի.
 Գայլ ագռաւը աչքը հանի.
 Մի պոչատ հաւ, մի գդալ իւղ
 Տուէք արէլուիան տանի:

ՈՍԿԻՆ ՈՒ ԵՐԿԱԹԸ.

Մն անգամ ոսկին ու երկաթը վիճում
 էին միմեանց հետ:

— Ես ամենից լաւ մետաղն եմ,—ասում
 էր ոսկին,—ամենքը սիրում են ինձ և լաւ
 պատիւ են տալիս: Մարդկանց համար ես
 փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից, ինչ
 ասես, շինում են՝ սիրուն շղթաներ, թանկա-
 զին մանեակներ, մատանիներ, օղեր. էհ, էլ
 ինչ երկարացնեմ, եթէ ուզենամ, ամբողջ աշ-
 խարհը կըգնեմ:

— Շատ ես պարծենում, ոսկի աղա,—

պատասխանեց երկաթը.— ճշմարիտ է, մարդիկ քեզ շատ երես են տալիս, բայց մենակ դու չես աշխարհիս տէրը: Եթէ մարդ ուզում է ապահով ապրել, նրան երկաթ էլ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններին պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Եթէ դու, ոսկի աղա, կարող ես աշխարհը գնել, ես էլ, լավ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել:

ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Ձիւնը հալւում է, խոտը կանաչում, ծառերը, ծաղկում, օրը երկարում: Այս երբ է լինում:

Ամիսներ անցան. օրերը տաքացան, ամպերը բարձրացան, անձրև թափեցին: Արտերըն հասել են, հնձող են կանչում: Այս երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է մաղում և մութ գիշերը

չորս կողմից բռնուում: Այս երբ է լինում:

Դաշտ ու ձոր անա՛ն ձիւնով ծածկուեցան,
ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մար-
դիկ քաշուեցան իրանց տները, իսկ գազան-
ները իրանց բները: Դուրսը ցուրտ քամին
փչում է, փչում և ձիւնի թեփով աչքերդ
լցնում: Այս երբ է լինում:



ՄԵՂՈՒՆ ՈՒ ԱՂԱԽԻՆ.

Մեղուն ծարաւ էր: Նա մօտեցաւ առուակին որ ջուր խմէ: Յանկարծ նա գալթեց, ընկաւ ջուրը և քիչ էր մնում խեղդուի: Առուակի վրայով մի աղանի էր թռչում: Նա տեսաւ խեղդուող մեղուն, ծառից մի տերև պռկեց և քցեց առուակի մէջ, մեղուի առաջ: Մեղուն բարձրացաւ տերևի վրայ և խեղդուելուց ազատուեց:

Անցաւ մի քանի ժամանակ. մեղուն դաշտում նիւթ էր հաւաքում ծաղիկներից, իսկ նրա ծանօթ աղանին ննջում էր ծառի վրայ: Հէնց այն ժամին մօտեցաւ մի որսորդ. և հրացանը սւղղեց, որ սպանէ՞ աղանուն: Մեղուն կայծակի նման վրայ թռաւ և այնպէս խայթեց որսորդի ձեռք, որ նա վեր թռաւ, և հրացանը տրաքեց, բայց նշանին չ'առաւ և խեղճ աղանին թռաւ ազատուեց:



ՀԱՅՐ-ՄԵՐ.

Հայր մեր, որ երկնքումն ես, սուբբ լինի քո անուանը, գոյ քո թագաւորութիւնը. քո կամքը լինի երկրիս վրայ էլ, ինչպէս երկընքումն է: Մեր ամեն օրուայ հացը ախօր էլ մեզ տուր: Ների՛ր մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում հնք մեր պարտապաններին: Մեզ փորձանքի մէջ չքցես, այլ փրկի՛ր մեզ չարից, որովհետեւ քոնն է արքայութիւնը, զօրութիւնը և յաւիտենական փառքը Ամէն:

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂ()ԹՔ.

Հայր մեր, որ յերկինս ես, սուբբ եղիցի անուն քո. եկեսցէ Արքայութիւն քո. եղիցին կամք քո սրպէս յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազօրգ տուր մեզ ախօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանի՛ր զմեզ ի փորձութիւն, ալ փրկես զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտենան ամէն:

ՎԱՃԱՍԽԻՈՒՄ ԵՆ ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵԻՆԱԼ
ԳՐԲԵՐԸ

Հայ հեղինակներ, բ. տարադր.	.	.	.	1 ռ.
Դպրոցական բերականություն թիւն բ. տարադր.	.	.	.	25 է.
Դպրոցական բերականություն թիւն ա. տարադր.	.	.	.	15 է.
Պատմական բերականություն	.	.	.	75 է.
Հայաց պատմություն, պատկերադարձ	.	.	.	40 է.
Գրականի ուղղադրություն	.	.	.	5 է.
Հայ լեզու, Ա. տարի	.	.	.	20 է.
Պատկերադարձ ուղղանարան	.	.	.	10 է.

Պատրաստ եմ տպագրություն համար

Հայ հեղինակներ, բ. և գ. հատորները
 Պատմական բերականություն թիւն բ. հատորը
 Հայաց պատմություն թիւն բ. հատորը
 Հայ լեզուի բ. և գ. հատորները
 Հայ բռնաներ
 Սօցիալական սովորություններ հայ համայնքի

Դիմել թիֆլիզ՝ Коммерч. училище, Ванцианъ
 դամարով տոնոգներին - 20⁰/₀ պղծ.

ՀԱՎԵԼՎԱԾ*

**Գրիոր Վանցեան, «Դպրոցական քերականութիւն»,
Թիֆլիզ, ա.թ., էջ 61-63**

ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ԳԲ. ՎԱՆՅԵԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

«Շեշտում եմ, որ պ. Վանցեանի «Հայ հեղինակները» գնահատելի և դասատուներին յանձնարարելի աշխատութիւն է: Թող յօրինողի այս «առաջին փորձը» փորձեն ուսումնարանները և տեսնեն թէ այս գիրքը ո՞րքան հարցասիրութիւն առաջացրեց աշակերտների մէջ դէպի հայ հեղինակներն ու նրանց երկերը»:

«Մուրճ», 1905, N 4 ք., Յ. Տէր-Միրաքեան

«Պարոն Վանցեանի այս աշխատութիւնը գալիս է լրացնելու դպրոցական ձեռնարկների մէջ մի շատ խոշոր բաց: Մինչև այժմ կազմուած այդ տեսակի ընտիր հատուածների ժողովածուներից և ո՛չ մէկը չի համապատասխանում իւր նշանակութեանը. կազմողները մեծ մասամբ եղել են կամ հայ գրականութեան ոչ բաւականաչափ ծանօթ անձինք, կամ անճաշակ, կամ միակողմանի և կուսակցական հայեացքների տէր:

Պ. Վանցեանն աշխատել է լինել բազմակողմանի և անկախ որևէ բռնազբօսիկ տենդենցիայից և այս կարելի է ասել յաջողուել է նրան: Նրա գիրքը, որ բաղկացած է 320 մեծադիր էջերից, պարունակում է հատուածներ ռուսահայ գրեթէ բոլոր հայ հեղինակներից, սկսած ամենայայտնիներից մինչև անյայտները: Կան հատուածներ և տաճկահայ գրողների գրուածքներից»:

«Լումայ», N 1, մարտ, 1905

* Սույն հավելվածում բերված են Գ. Վանցյանի «Դպրոցական քերականութիւն» և «Գրականի ուղղագրութիւն» գրքերի՝ սույն ժողովածուում չներառված զանազան տպագրութիւնների հավելվածները, որոնք չկան նշյալ գրքերի՝ մեր կողմից վերահրատարակված տարբերակներում: Գ. Վանցյանի գրքերի մասին ժամանակի մամուլում տպագրված այս մատենախոսութիւնները, որոնց մասին մենք խոսեցինք վերևում, գետեղվել են հեղինակի համապատասխան գրքերի վերջնամասերում:

«Մեր առաջին է պ. Վանցեանի 320 երեսներ բռնող «Հայ հեղինակներ»-ի ստուար հատորը, որը պարունակում է իր մէջ հայ ընտիր հեղինակների ընտիր գրուածքներ: Դրանք ռուսահայ 15 սիրելի հեղինակների և 7 բուրքահայ մեր յայտնի գրողների մի սիրուն, համով, հոտով կազմուած գրական ծաղկափունջ է, որը ոչ միայն որպէս ձեռնարկ, մեր միջնակարգ դպրոցների աշակերտների համար՝ նոյն իսկ հայ ընտանիքներում՝ որպէս ընթերցանութեան նիւթ հետաքրքրական է, և մանաւանդ որ, կազմողը տուել է նմուշների հետ միասին դրանց հեղինակների համառօտ, բայց էական կենսագրութիւնն ու գրական դէմքը: Թէ հատուածների ընտրութիւնը և թէ նիւթերի դասաւորութիւնը արուած է խնամքով և, հէնց դրանով պէտք է բացատրել մեր գրական աշխարհում բաւական հագուագիտ այն երևոյթը, որ վեց ամսում պ. Վանցեանի «Հայ հեղինակները» ունեցել է երկրորդ տպագրութիւն: Դա գրքի համար ամենալաւ վկայականն է, ուստի և ցանկալի է, որ «Հայ հեղինակները» տարածուին նաև հայ դպրոցների պատերից դուրս՝ հայ ընտանիքներում, ուր «Հայ հեղինակների» իսկական երկերը շատ էլ ընդունուած չեն»:

«Աշխատանք», N 12

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԼԵՁՈՒԻ

«Գրիգոր Վանցեանի այս երկը ոչ միայն յստակ գաղափար մը կընծայէ ռուսահայ լեզուի, կազմութեան, քերականութեան, շեշտերուն, այլ և կը պարունակէ հետաքրքիր և նոր տեսութիւններ հայ լեզուի կենսական խնդիրներու վրայ. ըստ հեղինակին՝ Ջօկերէնը և Այրարատեան գաւառաբարբառը աւելի հին են, քան գրաբարը. ի մէջ բերած բառերը համոզիչ օրինակներ են»:

«Բազմավէպ», 1907, մարտ

«Մեր այն ուսուցիչները, որոնք ուզում են հայոց քերականութիւն աւանդելիս ունենալ պատմական-փիլիսոփայական որոշ նախապատրաստութիւն մեր նոր լեզուի մասին - մենք օգուտ կստանան Պր. Գր. Վանցեանի այս աշխատութիւնից, որի մասնագիտական քննադատութիւնը մեր նպատակներից դուրս է: Մենք միայն յանձնարարում ենք մեր ուսուցիչների ուշադրութեան այդ գիրքը, որի մէջ ի մի են ամփոփուած շատ նիւթեր արևելահայ լեզուի մասին և որոշ սիւստեմի են վերածուած»:

«Մուրճ», 1906, N 9

ԳՐԱԴԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գրիգոր Վանցեանը մի շատ սրամիտ միջոց է գտել մեր անգրագետ գրականագետներին մի փոքր ի շատե ուղիղ հայերէն գրելու դիւրութիւններ տալու: Ո՞վ չ'գիտէ, որ մեր գրականագետներից մանաւանդ պարբերական մամուլի մէջ գրողներից մեծ մասը հայերէն գրելու մէջ սաստիկ բոքիկ է... «Գրպանի ուղղագրութիւնը» բաւական մեծ ծառայութիւն կարող է մատուցանել ու դիւրութիւն տալ փոքր ի շատե անսխալ գրելու: Դա մի փոքրիկ բառգիրք է, որի մէջ ամփոփուած են այն բոլոր արմատական բառերը, որոնց ուղղագրութիւնը ամենից շատ դժուարութիւն է ներկայացնում մեր գրողների համար: Եւ այդ բառերը շատ հեշտութեամբ գտնուած են պ. Վանցեանի գրքոյի մէջ: Իսկ գրողը մի քանի անգամ միևնոյն բառը փնտռելուց ու գրելուց յետոյ, շատ աւելի շուտ կարող է նրա ուղղագրութեան հետ ընտելանալ, քան եթէ նա վերցնի և երկար ու ձիգ քերականական կանոններ անգիր սովորի»:

«Մշակ», 1906 թ., N 193

Գրիգոր Վանցեան, «Գրպանի ուղղագրութիւն», Բ. տպագրութիւն, Թիֆլիզ, ա.թ., էջ 33

Նոյն հեղինակի

ՀԱՄԱՌՕՏ «ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ». կազմուած է վերջերս մշակուած ծրագրի համեմատ, յատկապէս ծխական և պետական դպրոցների համար. գինն է 25 կ.:

Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի,


Թիֆլիզ, 1906 թ.

Գ. ՎԱՆՑԵԱՆԻ. գինն է 75 կոպ.

Մեր այն ուսուցիչները, որոնք ուզում են հայոց քերականութիւն աւանդելիս ունենալ պատմական-փիլիսոփայական որոշ նախապատրաստութիւն մեր նոր լեզուի մասին - մեծ օգուտ կստանան Պր. Գր. Վանցեանի այս աշխատութիւնից, որի մասնագիտական քննադատութիւնը մեր նպատակներից դուրս է: Մենք միայն յանձնարարում ենք մեր ուսուցիչների ուշադրութեան այդ գիրքը, որի մէջ ի մի են ամփոփուած շատ նիւթեր արևելահայ լեզուի մասին և որոշ սիստեմի են վերածուած:

«Մուրճ», 1906, N 9

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ



ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Եղիկ, Լազար Փարպեյի, Բաբայ, Մայիս-Նովա, Մկրտչ Քաղիտյանի, Արտիման, Ս. Նազարյանի, Ալիան, Պելլիքաշյան, Դուրան, Գարեգինան, Մերեյ, Խաչատրյան, Գուրա-Բաբիսյան, Գուրան, Սուրենյան, Բաճիկ, Շամադյի, Մադադյան Արսեն, Արփիսյան, Գալստամյան, Երկանգյան, Մալազյան, Լ.Է. Սիլի, Անարտիման, Ռ. Յովաննիսյան, Քալանյան, Մատարյան, Խոս-
տակյան, Լամբ, Կաղարկյան և այլն:

ኒዮሊቲክ/ቦቦን- ስግጥም/የበተለይነት

Հրահանգներով և թվերով՝



Ք Ր Ա Լ Ի Ո
Քաղաքում չկ' Պ Օ Խ Ու Մ հագվելով, օգնք. Ն. Տ.
1913

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

հոխի, Դաւթ Գարեգին, Տաւակ, Յայաթ-Խոյն, Մկրտչ Թադևոսեան, Արամեան, Ա. Նազարեան, Ուրբեհ, Քեչիկաշեան, Դուրեան, Գարեան, Սեփեան, Կարամեան, Դաւթ Գալաթ, Գրիգորեան, Ստեփանեան, Ռոմիկ, Շահաթի, Մարտիրոս, Աղայան, Արվիլաբեան, Պալաուսեան, Երրանդաշ, Առաքաւան Առ Մարի, Արսլանեան, Ռ. Շեփեանեան, Թաւանեան, Մատթեան, Թաւ-Նախեան, Զանթ, Կարպիմեան և այլն:

ՀԱՅԵՐԱՐԴ ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

[illegible]

12345678910111213141516171819202122232425262728293031323334353637383940414243444546474849505152535455565758596061626364656667686970717273747576777879808182838485868788899091929394959697989910010110210310410510610710810911011111211311411511611711811912012112212312412512612712812913013113213313413513613713813914014114214314414514614714814915015115215315415515615715815916016116216316416516616716816917017117217317417517617717817918018118218318418518618718818919019119219319419519619719819920020120220320420520620720820921021121221321421521621721821922022122222322422522622722822923023123223323423523623723823924024124224324424524624724824925025125225325425525625725825926026126226326426526626726826927027127227327427527627727827928028128228328428528628728828929029129229329429529629729829930030130230330430530630730830931031131231331431531631731831932032132232332432532632732832933033133233333433533633733833934034134234334434534634734834935035135235335435535635735835936036136236336436536636736836937037137237337437537637737837938038138238338438538638738838939039139239339439539639739839940040140240340440540640740840941041141241341441541641741841942042142242342442542642742842943043143243343443543643743843944044144244344444544644744844945045145245345445545645745845946046146246346446546646746846947047147247347447547647747847948048148248348448548648748848949049149249349449549649749849950050150250350450550650750850951051151251351451551651751851952052152252352452552652752852953053153253353453553653753853954054154254354454554654754854955055155255355455555655755855956056156256356456556656756856957057157257357457557657757857958058158258358458558658758858959059159259359459559659759859960060160260360460560660760860961061161261361461561661761861962062162262362462562662762862963063163263363463563663763863964064164264364464564664764864965065165265365465565665765865966066166266366466566666766866967067167267367467567667767867968068168268368468568668768868969069169269369469569669769869970070170270370470570670770870971071171271371471571671771871972072172272372472572672772872973073173273373473573673773873974074174274374474574674774874975075175275375475575675775875976076176276376476576676776876977077177277377477577677777877978078178278378478578678778878979079179279379479579679779879980080180280380480580680780880981081181281381481581681781881982082182282382482582682782882983083183283383483583683783883984084184284384484584684784884985085185285385485585685785885986086186286386486586686786886987087187287387487587687787887988088188288388488588688788888989089189289389489589689789889990090190290390490590690790890991091191291391491591691791891992092192292392492592692792892993093193293393493593693793893994094194294394494594694794894995095195295395495595695795895996096196296396496596696796896997097197297397497597697797897998098198298398498598698798898999099199299399499599699799899910001001100210031004100510061007100810091010101110121013101410151016101710181019102010211022102310241025102610271028102910301031103210331034103510361037103810391040104110421043104410451046104710481049105010511052105310541055105610571058105910601061106210631064106510661067106810691070107110721073107410751076107710781079108010811082108310841085108610871088108910901091109210931094109510961097109810991100110111021103110411051106110711081109111011111112111311141115111611171118111911201121112211231124112511261127112811291130113111321133113411351136113711381139114011411142114311441145114611471148114911501151115211531154115511561157115811591160116111621163116411651166116711681169117011711172117311741175117611771178117911801181118211831184118511861187118811891190119111921193119411951196119711981199120012011202120312041205120612071208120912101211121212131214121512161217121812191220122112221223122412251226122712281229123012311232123312341235123612371238123912401241124212431244124512461247124812491250125112521253125412551256125712581259126012611262126312641265126612671268126912701271127212731274127512761277127812791280128112821283128412851286128712881289129012911292129312941295129612971298129913001

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԵԼԸՆՏ ԼԵԶՈՒԻ

Dejavnostni število: 415,8015.

Nichts zeigt deutlicher, dass ein Volk in eine Schöpfungsperiode eintritt und etwas Ursprüngliches zu leisten vermag, als der Umstand, dass es seine Sprache reformiert.

Ոչ մի բան այնպես դժուար չէ ցույց տա-
լիս, թե մի մարդու արդյունավետությունը
չբխում է մտածումից մի հիմնական բան պետի-
ստեպանությունից, բան այն, որ նա սխալում է իր
լիզակ մեջ:

Hörsen Hörsterne

19 10 3 1 1 11

Յգ. Ծ. Ղարապետյնի Դան, փ. № 3 ՝ Կոն. Մ. Երզնկայի Կոն. ղտ. № 3
1906

ԳՊՐՈՑԱԿԱՆ
ՔԵՐԸ ԿԸՆՈՒԹԻՒՆ



1906


ԳՐԱԳՈՐ ՎԱՆՏԵԱՆ

ԳՊՐՈՅԱԳԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բարեփոխած՝ ներդրող աղագրություն



ԹԻՖԼԻՍԻ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՈՐ
Ս. Մ. Բաղդասարյան



Գ. ՎԱՆՏԵԱՆ

ԳՐԱԳՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ԹԻՖԼԻՍԻ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՈՐ
Ս. Մ. Բաղդասարյան

Գ. ՎԱՆՏԵԱՆ

ԳՐԱԳՐՈՒ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՈՐ
Ս. Մ. Բաղդասարյան

ԳՐԱԳՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեփոխած
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՈՐ



ԹԻՖԼԻՍԻ
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՈՐ
Ս. Մ. Բաղդասարյան

Գ. ՎԱՆՏԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ԴԻՄԻՏՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ
1906

Գ. ՎԱՆՈՒՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



Թ Ի Յ Լ Ի Ս
ԻԼԼՈՒՄՈՒՄ ԺՈՒՐՆԱԿ ԲՐ. Ա. ՄԱՆԱՍԻՐՈՒ ՊՈՒՆԵ Դ.
1908 (75)

ԳՐԱԳՐԱՐ ՎԱՆՈՒՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՐՐՈՐԴ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հրատարակութիւն տիկին Մ. ՎԱՆՈՒՆԵԱՆԻ



Թ Ի Յ Լ Ի Ս
Երկրորդ. տպարան ՎԵՐՈՒՆԱՆ Գրատարակարան փող. Դ. Զ.
1909

ԳՐԱԳՐԱՐ ՎԱՆՈՒՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(սկզբեց մինչև մեր օրերը)



ԳՐԱՆ Ե ՄՈ ՎՊԳ.

ԱՐՐՈՐԴ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հրատարակութիւն տիկին Մ. ՎԱՆՈՒՆԵԱՆԻ

ՀԱՅՈՑԻ ԻՐԱՆՈՒՆԵՐՈՒ

ՀԱՅ-ԼԵԶՈՒ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԵՆԱՐԱՆ

Ա. ՏԱՄԻ



Կազմեց Գ. ՎԱՆՈՒՆԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս
ԻԼԼՈՒՄՈՒՄ ԺՈՒՐՆԱԿ ԲՐ. Ա. ՄԱՆԱՍԻՐՈՒ ՊՈՒՆԵ Դ.
1907 (74)

**ГРИГОР ВАНЦЯН:
(1870-1908)
ЖИЗНЬ И ТВОРЧЕСКИЙ ПУТЬ**

Резюме

Известный в свое время лингвист, литературный критик, учитель армянского языка и истории Григор Ванцян (1870 г., Ахалкалакский уезд, село Бежано - 1908 г., Тифлис, кладбище Ходживанк) учился в школе Нерсисян. В годы учебы у него сложились близкие отношения с великим поэтом Ов. Туманяном, которые продолжились в последующие годы. Г. Ванцян учительствовал в Джавахке, учился в Берлине, преподавал в Торговой школе Тифлиса. Он оставил богатое научно-лингвистическое, критическое, переводческое и публицистическое наследие.

**GRIGOR VANTSYAN:
(1870-1908)
LIFE AND CREATIVE DEVELOPMENT**

Summary

The article is devoted to the investigation of the life and creative development of Grigor Vantsyan (1870, Akhalkalaki province, village Bezhan - 1908, Tiflis, Khojivanq Armenian Pantheon): an outstanding linguist, literary critic, teacher of the Armenian language and history. The article elucidates Grigor Vantsyan's young years at Nersisyan School in Tiflis, as well as the intimate relationships between the linguist and distinguished poet Hovhannes Tumanyan. The author has also presented details about the teaching years of Gr. Vantsyan in his native Javakhk and at Tiflis Commercial school, the student years in Berlin. In the research chronologically is presented Gr. Vantsyan's scientific-linguistic, literary, critical, translation and publicistic entire heritage, created during his short life.

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԼԵԶՈՒԻ.....	7
Առաջաբանի տեղ.....	9
Գլ. I. Մարդկային լեզուի ծագումը.....	11
Գլ. II. Հնդեվրոպական լեզուներ և նախահայերէն.....	21
Գլ. III. Արևելահայ բարբառների ծագումը.....	36
Գլ. IV. Արարատեան բարբառի մի քանի յատկանիշները, հնչյուններ.....	47
Գլ. V. Արեւելահայ լեզուի պատմութիւնը.....	51
Գլ. VI. Ներսիսեան դպրոց.....	55
Գլ. VII. Մամուլ.....	84
Գլ. VIII. Լազարեան ճեմարան.....	88
Գլ. IX. Դրսպատ.....	95
Գլ. X. Նամակներ.....	108
Գլ. XI. Աշուղներ.....	114
Գլ. XII. Կրօնական հրատարակութիւններ.....	120
Եզրակացութիւն.....	128
Գլ. XIII. Գրաբարի ծագումը.....	132
Գլ. XIV. Կենդանի լեզու էր արդեօք գրաբարը.....	155
Գլ. XV. Հնչմունք եւ գիր.....	161
Գլ. XVI. Լեզուի էստետիքան.....	169
Գլ. XVII. Լեզուի զարգացման օրէնքը.....	195
Գլ. XVIII. Օղի նուսրութեան օրէնքը.....	204
Գլ. XIX. Շեշտի եւ աճման օրէնք.....	211
Գլ. XX. Արեւմտեան եւ արևելեան լեզու.....	218
Գլ. XXI. Բարդութիւններ եւ աժանցներ.....	222
Գլ. XXII. Դերանուններ եւ նրանց սեռը.....	240
 ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.....	255
Նախադասութիւն.....	258
Նախադասութեան տեսակները.....	260
Կէտադրութիւն.....	263
Բառ, վանկ, հնչիւն.....	264

Պարզ, բարդ և ամանցեալ բառեր.....	266
Խօսքի մասերը կամ մասունք բանի.....	267
Գոյական անուն.....	268
Թիւ.....	268
Սեռ.....	269
Հոլով-հոլովում.....	269
Որոշման յօդ.....	276
Ածական անուն.....	278
Թուական անուն.....	280
Դերանուն.....	281
Դերանունների հոլովումը.....	284
Բայ.....	287
Դերբայ.....	290
Մակբայ.....	304
Շաղկապ.....	305
Միջարկ կամ ձայնարկ.....	306

ԳԲՊԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ.....307

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....339

Ուսուցիչներին.....	341
Հայերի ծագումը.....	343
Հայ-ազգի ծագումն ըստ աւանդութեան.....	345
Հայկի յաջորդները մինչեւ Արամ.....	347
Արամ Նահապետ.....	349
Արա Գեղեցիկ.....	350
Պարոյր Հայկազն.....	352
Հրաչեայ.....	352
Տիգրան Ա. Երուանդեան.....	354
Տիգրանի յաջորդները.....	356
Մակեդոնեան-Սելեւկեան իշխանութիւն.....	357

Երկրորդ շրջան

Արշակունիք Հայաստանում.....	358
Վաղարշակի հաստատած կարգերը.....	359
Արտաշէս Ա.....	361

Տիգրան Բ.....	362
Արտաւազդ.....	367
Աբգար.....	369
Անանուն.....	371
Երուանդ.....	371
Արտաշէս Բ.....	372
Հեթանոս հայոց կրօնը.....	381
Երրորդ շրջան. Քրիստոնէութեան մուտքն Հայաստան	
Տրդատ եւ Ս.Գրիգոր Լուսաւորիչ.....	383
Տրդատի յաջորդները.....	387
Վռամշապուհ եւ տառերի գիտը.....	390
Վռամշապուհի յաջորդները.....	392
Առաջին կրօնական պատերազմ.....	393
Վասակի դատաստանը.....	399
Վահան Մամիկոնեան.....	400
Չորրորդ շրջան	
Արաբաց արշաւանքները եւ Բագրատունիք.....	403
Բագրատունիք, Աշոտ Ա. Թագաւոր.....	407
Սմբատ Ա.....	408
Աշոտ Երկաթ.....	410
Աբաս,Աշոտ Գ.Ռդորմաձ, Սմբատ Բ., Գագիկ Ա.	411
Անի.....	413
Յովհաննէս-Սմբատ եւ Աշոտ.....	415
Գագիկ Բ.	417
Մասն երկրորդ	
Ռուբինեան իշխանութիւն.....	420
Թորոս Ա.	421
Թորոս Բ.	423
Սլէի.....	425
Լեւոն Բ. Թագաւոր.....	426
Զապէլ եւ Փիլիպպոս, Հեթում Ա., Լեւոն Գ.	430
Լեւոն Գ.	432
Հեթում Բ., Լեւոն Դ. Օշին, Լեւոն Ե.	433
Օշին.....	436
Լուսինեան թագաւորներ.....	437

Լեւոն Չ.....	437
Հայաստանի դրութիւնը Բագրատունեաց անկումից յետոյ.....	440
Թաթարաց արշաւանքը.....	441
Լէնկթէմուր.....	443
Օսմանցիք եւ պարսիկները Հայաստանում.....	444
Շահ-Աբասի արշաւանքները.....	445
Էջմիածինը վերստին հայրապետանոց.....	448
Ղարաբաղի մէլիքները եւ Դաւիթ Բէգ.....	450
Հայերի գաղթը.....	453
Լեհաստանի հայերը.....	455
Հնդկաստանի հայերը.....	458
Ռուսաստանի հայերը.....	460
Պարսից նոր յարձակումները.....	463
Պօլօժենիէ, դպրոցներ, մամուլ.....	464
Հայերը Թիւրքիայում.....	469
Կաթոլիկ հայերի խնդիրը.....	471
Բողոքական հայերի խնդիրը.....	473
Սասունի ջարդը եւ քննիչ յանձնաժողովը.....	481
Զէյթունի անցքերը.....	482
Կովկասեան անցքեր.....	484
Մամուլի կարծիքը	
Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի.....	488
 ՀԱՅ-ԼԵՉՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԵՆԱՐԱՆ.....	491
 Հավելված.....	556
Գրիգոր Վանցյանի հրատարակած գրքերը.....	559

ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՎԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

II

ՀԱՏՈՐ

ГРИГОР ХАЧАТУРОВИЧ ВАНЦЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

В ДВУХ ТОМАХ

II

ТОМ

На армянском языке
Ереван “Айастан” 2016


**Հրատ. խմբագիր՝ Վահագն Մարգարյան,
Համակարգչային մակետը՝ Տաթևիկ Գրիգորյանի
Կազմի համակարգչային ձևավորումը՝ Սոնա Մադաթյանի**

**Հաղորդների կազմերի վրա
Գրիգոր Վանցյանի դիմանկարը՝
Արմեն Վանցյանի**

Տպագրությունը՝ «Եգեա» տպագրատան



**Մտորագրված է տպագրության՝ 22.01.2016թ.:
Ծավալը՝ 45.5 տպ. մամուլ: Չափսը՝ 60X84 1/16:
Տպաքանակը՝ 400:
Գինը՝ պայմանագրային:
«Հայաստան» հրատարակչություն. Երևան, Խաչատրյան 28:**



Վանցեանը գրականութեան մշակ է դարձել ...

Հովհ. Թումանեան, 1892

Պր. Վանցեանի երկը շահեկան է

ոչ միայն արեւելեան լեզուի,

այլև գրաբարի պատմութեամբ հետաքրքրուողներուն.

նա կը ջանայ ցուցնել գրաբարէն ալ հին հայերէն մը՝

մեր արդի գաւառաբարբառներուն մէջ...

«Բազմավէպ», 1910

Վանցեանի յիշատակը կապուած պիտի մնայ

այսուիետեւ իր Պատմական քերականութեան հետ.

ուրեմն մահարձանի չի կարօտիր...

Հ. Բ. Չրաքեան, 1910